



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼՅԱՆ

Ը Ն Տ Ր Ա Ն Ի

Կազմեց և ծանոթագրեց
ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2005

Ժողովածուն տպագրվել է Համագգային հայ
կրթական և մշակութային միության
մեկենասությամբ

Երկու խոսք

Աղբալյան Նիկոլ

Ա 475 Ընտրանի - Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, 362 էջ:

«Ընտրանին» Հայաստանում առաջին հրատարակությունն է: Նյութերը ընտրվել են Ն. Աղբալյան գործչի, գիտնականի, մարդու կերպարը հնարավորինս ամբողջական ներկայացնելու մտահոգությամբ:

ԳՄԳ 83.37

ISBN 5-8084-0701-x

© Կազմողի համար, 2005 թ.

Ն. Աղբալյանի երկերի ժողովածու Հայրենիքում առաջին անգամ է լույս տեսնում: Բայց սա բնավ էլ առաջին փորձը չէ: Ճանաչված հրատարակիչ Մ. Էփրիկյանը 1920-ի վերջերին հրատարակության էր պատրաստել նշանավոր քննադատի «Գրադատականների» (սա Աղբալյանի առաջարկած վերնագիրն էր) առաջին հատորը: Սակայն վերահաս իրադարձությունները տպարանի փոշիներում թաղեցին գրեթե պատրաստի գործը: Գորբաչովյան վերակառուցման տարիներին «Սովետական գրողը» պլանավորեց երկերի եռահատոր հրատարակություն: Սակայն սրան էլ վիճակված չէր իրականություն դառնալու. հրատարակության պատրաստ ձեռագրերը այս անգամ Աղբալյանի կուսակցության նկատմամբ «շարժման» ղեկավարների անթաքույց թշնամանքը մատնեց մոռացության ...

«Ընտրանին» փորձ է հայրենաբնակ ընթերցողին ընդհանուր պատկերացում տալու գրականագետի ու լեզվաբանի, մանկավարժի ու մշակութաբանի, հրապարակախոսի ու պետական - քաղաքական գործչի բազմաբնույթ գործունեության մասին: Ծավալի պատճառով որոշ հոդվածներ, որ առաջին հերթին պետք է զետեղվեին այստեղ («Երգ ու վերք», «Երագ և մեկուսացում», «Մտածումներ Հ. Հ. Դաշնակցության մասին» և այլն), դուրս մնացին ժողովածուից: «Պատմություն հայոց գրականության», «Սայաթ-Նովայի հետ», «Դիտողություններ հայոց լեզվի մասին», «Տեսություն ծուլ բաղաձայների» և այլ մեմագրական աշխատություններից ընտրվել են ընդհանուր սկզբունքները և դրանց

կոնկրետ կիրառությունները ներկայացնող գլուխներ ու հատվածներ: Մեկ-երկու հոդված, թեկուզ սևագիր կամ Աղբալյանի ոճին ոչ շատ հարազատ («Մի քանի խոսք Թ. Յ. Շ. Ը. մասին», «Անգլիական կապիտանը չգիտե...»), որ ելույթների արձանագրային-լրագրային հրապարակումներ են, ընդգրկվել են արժարժած հարցերի կարևորությունը նկատի ունենալով: Որոշ նյութեր էլ դուրս մնացին մեր գրադարաններում համապատասխան պարբերականների բացակայության պատճառով: Ձգտումը եղել է հնարավորինս համակողմանի ներկայացնել հարկադիր մոռացությունից վերադարձողի կերպարը:

Հոդվածների հերթականությունը որոշ բաժիններում ըստ քննվող շրջանների ու հեղինակների ժամանակագրության, այլ դեպքերում՝ ըստ գրվելու ժամանակի:

Նյութերի զգալի մասը մամուլի էջերից, մեկ-երկուսն էլ արխիվներից ժողովածու են փոխադրվում առաջին անգամ: Անընթեռնելի, դժվար ընթեռնելի բառերը և կազմողի նշանակած վերնագիրները առնվել են սուր անկյունների մեջ: Կատարվել են ուղղագրական աննշան և որոշ կետադրական ուղղումներ:

Հոդվածի վերջում նշվում է աղբյուրը, որտեղից քաղված է: Մի քանի հապավումներ. ԳԱԹ - Գրականության և արվեստի թանգարան, ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ, ՀՀԿՄՍ - Համազգային հայ կրթական և մշակութային միություն:

Հառաջաբան

Այնքան շատ ջուր է հոսել այն լավ օրերից, երբ գրում էի այս հավաքածուն, որ կարող եմ խոսել իմ մասին ինչպես մի օտար: Փորձեր են բոլորը, ուրվագծեր, տպավորություններ, կարծիքներ.- մտքեր՝ ցան ու ցիր, թերատ, խոստում ավելի, քան թե կատարում: Բոլորը գրված են մոռանալու համար կյանքի բրտությունը և օրվան հացի գարշելի բռնադատումը: Չկա մեկը սրանց մեջ, ինչպես չի լինի և հետագա հատորներում, որ գրած լինեմ իբր հեղինակ, իբր գրական մարդ, որ ունի գիրք ու սեղան, առանձնություն և մտքի անդորր:

Ինչպես միշտ, այնպես էլ այն օրերին, ազատ գրիչը չէր պահում մարդուն, որ աշխատանքը դառնար ապրուստ ու ներքին վայելք: Հացի աշխատանքը անուր էր վզիս ու շղթա ոտքիս, հոգուս աշխատանքը - տառապանք: Ձարհուրելի է՝ ներքին ուժ զգալ և կարողություն՝ և չկարենալ հասունացնել և իրագործել մի լայն մտածում, մի թովիչ տենչանք, մի հմայիչ գեղեցկություն. ընդհատել, երբ կուզեիր աշխատել, գնալ անհրապույր մի աշխատանքի, երբ կուզեիր հորինել ու ձևակերպել. վատնել ուժերն այդ անհավասար ու անդադրում ոգորման մեջ՝ անկարող վերջապես մոռանալու պայծառ բարձունքը, սակարկելով անսակարկելին...

Ինչ որ գրել եմ, խուլ արձագանքն են այս տևական և անվախճան ոգորման. դադարի և մոռացման պահեր, ըմբոստացումներ բարոյական ինքնազգացումի, որ ծիգ է անում վեր պահելու գլուխը կյանքի տիղմերից:

Այս հոդվածները չեն կազմում կայուն միություն.

հարափոփոխ մտքիս ու զգացումիս շոշափելի և հավատարիմ հետքերն են սրանք, որոնց ներքին միությունը իմ անձն է միայն: Արտաքուստ անկապ խոսքեր են սրանք մի գործող անձի և նշանում են (սկզբնապես եղել է՝ մատնանշում են, հետո ջնջել է - Գ. Ա.) բարոյական ու մտավոր մի ընթացք, որ չի վերջացած ...

Կարող եմ վկայել, որ ամեն մի տող գրված է շիտակ մտքով, սրտանց ու սրտաբաց, ինչպես մտերմական մի նամակ: Ստորակետս անգամ ազատ է ամեն կողմնակի նկատումներից: Առաջին իսկ օրվանից ձգտել եմ հավատարիմ թարգմանը լինել մտածումիս ու զգացումիս: Մի ջերմ հավատ է նշմարվում այս հողվածներում դեպի ազնիվն ու գեղեցիկը, արդարն ու ճշմարիտը, որ դեռ ապրում է իմ մեջ, թեև «այսօր» այնքան տեղին չեն համարում նրանց մարմնացումը, ինչպես քսան և չորս տարի սրանից առաջ...

Համաձայնեցի, որ հավաքվեն ու մի անգամ ևս լույս ընծայվին իմ ցաք ու ցրիվ գրությունները: Գիտեմ՝ թերատ են, շատերը սակավարժեք ու բոլորը անկատար: Բայց ինձ թվաց, թե անօգուտ չէր լինի սրանց ընթերցումը դեռատիներին: Ու եթե իրոք երազում ու դեռատի գլուխներ երբեմն հակվին այս էջերի վրա՝ հաճույք զգալով նրանց ընթերցումից, եթե կարենան այս անկատար ու <տրտում> ճիգերն իմ մտքի և զգացումի ազնիվ հույզեր հարուցանել նրանց անփորձ ու անամպ հոգում՝ մղելով դեպի ազնիվ ապրումներ-չափտի զղջամ, որ այս էջերն ազատվեցին ամսագրական փոշիներից:

Երկար տարիներ դատել եմ անձեր ու գործեր. այսօր հերթն իմն է, որ դատեն: Կցանկայի, որ այս էջերին վերաբերվին նույնքան շիտակ, սրտանց ու սրտաբաց, որքան ինքս եղած եմ ուրիշների հանդեպ:

1920, 20 ապրիլ, Երևան

Ն. ԱՐՄԱՆՅԱՆ

ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, գ. 2644

Հայ գրականության պատմություն

Գրականության պատմություն

Ամեն ինչ տևում է հորինելու ժամանակ և ուրեմն ունի մի ընթացք: Այդ տևանքը պետք է մտովին ընդհատենք ու զատենք, որ կարենանք ընդգրկել: Գործնական կյանքի պահանջն ստիպում է երևույթներ հորինել և տալ նրանց սկիզբ, միջոց ու վախճան: Իսկությունը մի անկտուր տևանք է, որ ունի անսահման անցյալ և անհնարին վախճան: Մարդկային մտածումներն անժիր մտորումներ կդառնան, եթե տևանքը չմասնատենք և դրանով իսկ առարկաներ ու երևույթներ չհորինենք:

Ինչ որ տևում է՝ հորինում է պատմություն, այսինքն հաջորդական փուլերի մի շարան: Պատմությունը տարանջատ երևույթների կենսագրությունն է, այսինքն նրանց երևումը, տևումն ու չքացումը իբր մի տարանջատ երևելիք: Այս հաշվով գրականության պատմությունը նրա կենսագրությունն է: Այս ըմբռնումը իբր հիմք ունի մի որոշ վերացում: Համազույքի միջոց մարդկային միտքը դատում, անջատում է մարդկային մի խմբակցություն, որ ունի ընդհանուր լեզու և այդ խմբակցությունը համարում է ազգ: Այդ ազգի բազմազան կյանքից նույն մարդկային մտածումը զատում և անջատում է նրա հոգեկան կյանքի գրավոր արտահայտությունը և համարում է գրականություն: Այս տարանջատ մոր գոյակը, որ մի վերացում է ինքնին, դիտում ենք իր ընթացքի մեջ, արձանագրում ենք նրա հաջորդական փուլերը և հորինում ենք նրա կենսագրությունը:

Ինչպես մանուկը մտածում, զգում ու կամենում է մինչև խորին ծերություն, այնպես և ամեն ազգ իր ծագման օրից, այսինքն այն վայրկյանից, երբ իրան զգում ու գիտակցում է իբր ուրույն հավաքական գոյակ, մինչև իր վախճանը, երբ դադարում է իրան իբր ուրույն ազգ զգալ ու գիտակցել՝ նա մտածում, զգում և կամենում է. և որքան իր ոգեկան կյանքը գրավոր արտահայտություն ունի իր լեզվով, այնքան տևում է նրա գրականությունը: Ազգ ու գրականություն մեռնում են այն ժամանակ, երբ դադարում են իրենց լեզուն խոսել և այդ լեզվով գրավոր արտահայ-

տել իրենց ներաշխարհը: Այս հաշվով Հայոց գրականության պատմությունը այդ գրականության կենսագրությունն է: Տարբերե՛նք. ո՛չ ազգի, այլ գրականության կենսագրությունը, որովհետև ազգերը շատ ավելի հին են, քան իրենց գրականությունը:

Հեղինակների կյանքը, գործերն ու ապրած միջավայրերը մենք թողինք գրական պատմության. այդ՝ ի՞նչն է ուրեմն, որ պետք է կազմե գրականության պատմության բովանդակությունը: Քանի որ գրականության պատմությունը նրա կենսագրությունն է, ինքնին պարզ է, որ այդ պատմությունը պետք է ընդգրկե գրականության **բովանդակ** կյանքը իր երևումից մինչև իր ընթացիկ ներկան, որ նույն է թե պետք է հեղինակները, նրանց գործերն ու ապրած միջավայրերը ներկայացնե **ժամանակի** կարգով: Այլևս ո՛չ թե **մի մի** հեղինակ և իրենց գործերը, այլ **բոլոր** հեղինակներն ու իրենց գործերը, որ իրենց ներքին հատկությամբ գրականության կալվածի մեջ են ընկնում: Այսպիսով մենք գտնում ենք առաջին տարբերությունը երկու գիտությունների. մինչդեռ գրական պատմությունը հետազոտում ու ներկայացնում է զատ զատ հեղինակներ և անջատ կարգով, գրականության պատմությունը խոսում է բոլոր հեղինակների մասին և ժամանակի կարգով: Այս հաշվով գրական պատմությունը մի պատրաստություն է գրականության պատմության, ուստի մասնակի թերին անդրադառնում է հանրականի վրա, ուր նախապես չի հետազոտված մի հեղինակ, մի միջավայր, մի երկ՝ այդ թերին պիտի երևա գրականության պատմության մեջ:

Բայց հեղինակներն ու գործերը շարել ժամանակի կարգով դեռ չի նշանակում գրականության պատմություն հորինել. դա ավելի կլինեք քան մի պարզ գրացանկ և անվանացանկ, բայց պակաս կլինեք քան մի պատմություն: Գրականության հետազոտության արդյունքների համագումար ցուցադրությունը գրականության պատմությունն է. դա մատենագրական պատմություն է գրապատմական հետազոտությանց, որ զատ առումով շատ կարևոր է ու օգտակար: Դա կարող է մի տարրը կազմել գրականության պատմության, սրա մի հատվածը կամ գլուխը: Գրականության պատմությունը մի նոր և ուրույն կառուցում է գրապատմական հետազոտությանց հիման վրա: Ի՞նչ է նպատակը այս նոր կառուցման: Հեղինակներն իրենց երկերով ցուցադրում են կարողություններ և իրենց երկերն արտացի արդյունքն ու վկաներն են այդ կարողությանց: Հեղինակները միաժամանակ իմացական կյանքով ապրող ան-

դամներն են որևէ ազգի և նրանց կարողությամբ է չափվում այդ ազգի կարողությանց սահմանը իմացական մարզի մեջ: Մինչև ուր հասած են հեղինակները՝ մինչև այնտեղ հասած է ազգը: Ի՞նչ որ մտածած, զգացած ու կամեցած են նրանք՝ այդ է կազմում ազգի հոգեկան կյանքը: Բազմազան ապրումներ կարող են ունեցած լինել ազգի անդամները, բայց պատմության համար այն գոյություն ունի, որ հետք է թողած: Այդ հետքն է միայն ազգի կարողությանց և մտայնությանց նկատելի և շոշափելի սահմանը. մնացածը ենթադրություն է, չիք իրականությանց մտային վերակառուցում:

Գրականության պատմագրի դիտակետն ավելի վեր է, քան գրական պատմագրի տեսակետը: Սա տեսնում է մի հեղինակ իր սահմանափակ շրջանակի մեջ, իսկ նա տեսնում է հեղինակների շարանը ժամանակի հոսանքների մեջ: Մեկը հեղինակի երկերով նրա կարողությունն է չափում և բնութագրում, մյուսը հեղինակի երկերով չափում է ազգի կարողությանց սահմանը, որին հասած է դարերի ընթացքին: Երկերը բնորոշում են հեղինակին, հեղինակները՝ ազգին: Գրականության պատմությունը պետք է ազգերի հոգեկան կյանքի հոլովությո՞ց ցուցադրե դարերի ընթացքին և այդ կյանքի սահմանները գծե: Ասած են. քաջերի սահմանն իրենց զենքն է: Իմացական կյանքն իբր զենք կիրարկելով՝ մինչև ու՞ր հասած են որևէ ազգի քաջերը իմացական մարզի մեջ, ու՞ր են նրանց սահմանները և ի՞նչ են աշխարհակալած. այս է, որ պետք է ցուցադրե գրականության պատմագիրը, մի նոր ու վերին տեսակետից նայելով հեղինակների և նրանց երկերի վրա:

Տեսանք, թե գրական պատմագիրը ուսումնասիրում է մի վիպասան, մի թատերագիր, մի բանաստեղծ, մի վարքագիր և այլն, իսկ գրականության պատմագիրը նկատի ունի ամենքին: Մեկը չափում է այս վիպասանի կամ բանաստեղծի շահածն իր մարզի մեջ, մյուսը բովանդակ ազգի գրականության շահածը բոլոր մարզերի մեջ: Այսպիսով, գրականության պատմագիրը անջատ երկերից մեկնելով՝ հասնում է գրական տեսակներին: Ո՛չ թե այս ինչի վեպը և այն ինչի թատերակը, այլ վեպն ու թատերակն ազգի գրականության մեջ: Մենք այսպիսով գտնում ենք մի նյութ, որ միմիայն գրականության պատմության է հատուկ: Այդ նյութը գրական տեսակների պատմությունն է կամ որ նույնն է՝ նրանց հոլովությո՞ք: Գրական միատեսակ վաստակների համեմատական ուսումնասիրությամբ պետք է զատորոշվեն այն երկերը, որ մի որոշ դարաշրջանում նույն այդ գրական տեսակի հորինման և արտահայտության բարձրագույն կետն են ներկայացնում: Բարձրագույն կետը պետք է ցուցադրվի

կարկառուն, իսկ գրական տեսակի հոլովույթը բոլորվի նրա շուրջ իբր մթնոլորտ: Գրական տեսակը պետք է երևա իբր մի լեռնագոտի, որ երկարում է տարածության մեջ. պետք է որոշապես բնութագրել նրա ելևէջները և կենդանագրել բարձրագույն գագաթները, որ խոյանում են վեր. պետք է այնպիսի դիտակետ ընտրել, որ համայնապատկերի մեջ պայծառորեն երևա, թե ինչպես նվազ կարկառուն սարերն իրար ուս հեծած՝ բարձր պահում են վես գագաթները, որ իշխում են նրանց վրա և հորիզոնին:

Գրականության պատմության համար գրական տեսակների հոլովույթը առաջնակարգ արժեք ունի: Գրական տեսակը նույն է ազգային հոգեկան կյանքի համար, ինչ որ անհատի համար իր հոգեկան կյանքի բանավոր արտահայտության տարբեր եղանակները: Անհատական հոգեբանության այս ու այն կողմի ցուցադրությունն են գրական տեսակները: Քնարական զեղումը, կծու ծաղրը, համոզվեր խոսքը, գրավիչ պատումը, սուր վեճն ու մեկին բացատրությունը, ցայտուն բնութագծումը, հանդարտ խրատն ու ներընթաց հորդորը և սրանց նման բազմաթիվ հոգեկան գործառնություններ հատուկ են ամենքին այս ու այն չափով, բայց հեղինակների մեջ նրանք հասնում են գերազանց չափերի և հաճախ դառնում են մասնական, անձնահատուկ: Եվ ինչպես անհատը երբեմն համոզում է, երբեմն խրատում, երբեմն ծաղրում է, երբեմն գովում. երբեմն դատում է, երբեմն հուզվում, այնպես և հավաքական անձը, որ ազգն է՝ երբեմն իր հույզերն է հայտնում Պ. Դուրյանի և Վ. Տերյանի երկերով, երբեմն ծաղրում է Զ. Պարոնյանի և Ե. Օտյանի երկերի մեջ, երբեմն պատմում է Զ. Մ. Չամչյանի կամ Զ. Զ. Գաթրճյանի գործերով, երբեմն վիպում է Շիրվանզադեի կամ Գ. Ջոհրապի բերնով, երբեմն հետազոտում է իբր Զ. Զ. Տաշյան, երբեմն աղոթում իբր Գ. Նարեկացի և քարոզում կամ վիճաբանում իբր Գ. Տաթևացի: Մարդկային իմացական կարողությանց մասնացումն ու ցայտումն են հեղինակները. դասավորելով նրանց երկերը ժամանակի կարգով՝ կարելի է ցուցադրել այն հուները, որոնց միջով ընթացած է ազգի իմացական կյանքը: Այսպիսով գրականության պատմությունը մի շատ գորավոր միջոց է ազգային ինքնաճանաչության: Ինչպես անհատն ինքնագիտակցության գալու համար պետք է քննության առնե իր միտումները, հակումները, ապրումները, իր գործերն ու վերաբերումները, իր կարողություններն ու նրանց սահմանը, այնպես և ազգն այդ ամենին դառնում է հասու և հեղինակների անձի և գործի մեջ նկատելով հեղինակներն իբր իմացական տիպարներ և նրանց գործերն իբր հասողության կետեր: Այսպիսով գրականության

պատմությունը դառնում է ազգի ոգեկան կյանքի պատկերն իր հաջորդական փուլերով: Ի՞նչ են մտածած, զգացած ու կամեցած նախորդ սերունդները-սա բովանդակությունն է. ի՞նչպես են մտածած, զգացած ու կամեցած-սա ձևն է: Ձևն ու բովանդակությունը պետք է ցուցադրվին գրականության պատմության մեջ իրենց հաջորդական փուլերով: Դրանով կորոշվի ազգի հասողության սահմանը իմացական մարզի մեջ:

Ցուցադրությունը մի պատկեր է, որ կարող է և պետք է լինի կենդանի և թելադրական, սակայն բավական չէ մի երևույթ և իր հոլովույթը կենդանագրել. պետք է նաև մեկնել: Այսպիսով գրական երևույթների հաջորդական փուլերի ցուցադրությունը և նրանց հոլովույթի մեկնությունն է գրականության պատմության նյութն ու բովանդակությունը: Գրական պատմությունը խոսում է մի հեղինակի մասին և նրա անձով և ապրած միջավայրով մեկնում է նրա երկերը. գրականության պատմագիրը հեղինակների երկերն առնում է իբր գրական տեսակներ-իբր վեպ, քերթված, թատերակ, պատմագրություն, գիտություն, իմաստասիրություն - և նրանց երևումն ու ընթացքը մեկնում: Գրական պատմագրի հետազոտությունը դառնում է նյութ մի նոր ուսումնասիրության. երկն իբր մասնավոր երևույթ դառնում է նմուշ մի գրական տեսակի և մի տարր համադրության: Գրականության պատմագրի աշխատանքը մի գումարում չէ անջատ եզրակացությանց և ընդարձակ հետազոտությանց, այլ մի նոր կառուցում, որ ցուցադրում է ոչ թե զատ գործեր, այլ գրական տեսակներ և նրանց հոլովույթը պատճառական մեկնությամբ: Մեր հին գրականությունն ունի հարյուրավոր սրբոց վարքեր ինքնուրույն և թարգմանական. դրանք մեր հին գրականության վիպագրությունն են և կենսագրական հորինվածքները: Գրական մի ուրույն տեսակ է դա, որ արմատ բռնած է մեր հին գրականության մեջ առաջին օրից և շատ երկար ժամանակ տևած է իբր իմացական բուն, որով ընթացած է մեր գրական ստեղծագործությունը: Արդ՝ ոչ բոլոր վարքերն իրար նման են իբր գրական գործ, իբր հորինվածք և բովանդակություն: Ամենելով դրանցից մեկն իբր հետազոտության նյութ՝ գրական պատմագիրը պետք է ջանա գտնել նրա հեղինակը, երկի երևման ժամանակը, իր կախումը նույնաման հայ և օտար գործերից, իր ներքին բնույթը և արժեքը, իր ազդեցությունը հետագա նույնաման գործերի վրա: Գրականության պատմագիրը սակայն պետք է քննության առնե ոչ թե մի վարք, այլ վարքագրական բովանդակ գրականությունն իբր հատուկ գրական տեսակ. պետք է ցուցադրե նրա հոլովույթը դարերի ընթացքին, գատորոշե հորինման տարբեր ձևերը, հեղինակների մտայնությանց տարբերությունները և

մատնանշե այն պատճառները, որ ծնունդ տված են գրական այդ տեսակին, ստեղծած են նրա հոլովույթը և մտայնությանը տարբերությունները:

Մեծ փորձության մեջ է այստեղ գրականության պատմագիրը: Ամեն գրական գործ կյանքի արտահայտություն է. բայց ոչ թե կյանքն է գրականության պատմագրի հետազոտության առարկան, այլ գրական գործերն իբրև տեսակ և սրա հոլովույթը դարերի ընթացքին: Հաճախ պատահում է, որ փոխանակ գրական երկերն իբրև գրական գործեր ուսումնասիրելու և գրական տեսակներն իբրև իմացական հուներ՝ գրականության պատմագիրը ցուցադրում է այն կյանքի հոլովույթը, որի արդյունքն են գրական գործերը. փոխանակ նիշերը քննելու, որ իր բուն գործն է, նրանց նիշածն է քննում, որ ազգի պատմության է վերաբերում: Պայծառությունն առաջին պայմանն է ցուցադրության, իսկ պայծառությունը նշանակում է զատորոշում: Գրականությունն, ասած են՝ կյանքի հայելին է, բայց կյանքը շատ ավելի ընդարձակ է, քան կարող է արտացոլել այդ հայելին: Ոչ թե կյանքի հետազոտությունն է գրականության պատմագրի գործը, այլ այդ կյանքի ցուրը գրականության մեջ:

Քանի որ գրական տեսակների հոլովույթն է գրականության պատմության բովանդակությունը, ուստի պետք է նախ իմանալ, թե գրական ինչ տեսակներ մշակած են մերոնք. ե՞րբ են սկսած գրական այս կամ այն տեսակի մշակումը և մինչև ո՞ւր տևած է այդ տեսակի կյանքը. ի՞նչ փոփոխություն կրած է նրանց բովանդակությունն ու ձևը և ի՞նչ պատճառով: Ե՞րբ է հասած գրական այս կամ այն տեսակը իր զարգացման բարձրագույն կետին և ի՞նչն է պատճառը իր անչքացման և չքացման: Որո՞նք են մշակած գրական այս կամ այն տեսակը և ի՞նչ ընդհանուր գծեր ունին: Որո՞նք են, որ նորություն են բերած գրական այդ տեսակի մշակման մեջ և ի՞նչն է այդ նորության բնույթը. փոխառություն՞ է արդյոք, թե ինքնուրույն ճիգի արդյունք և ի՞նչ է այդ նորության արժեքը գրական արվեստի տեսակետից: Հատուկ ուշադրության պետք է առնվի հեղինակների վերաբերումը իրենց մշակած նյութի հանդեպ: Այդ վերաբերումն արդյունք է հեղինակների մտայնության, իսկ այդ մտայնությունը՝ անձնական և պատմական հոլովույթի: Այսպիսով ամեն նորություն գրականության մեջ դառնում է կյանքի արտահայտություն, այսինքն արդյունք է անձնական ճիգի, որ իր դրդումը նույնպես կյանքից է ստանում: Կյանքի և գրականության փոխադարձ կապը բանալին է գրապատմա-

կան մեկնությանց, հետևապես հիմնական նյութերից մեկը գրականության պատմության: Գրական երկերը հաճախ մեկնվում են փոխազդեցությամբ. մի երկ հղացվում և հորինվում է մի ուրիշ երկի դրդումով. բայց մեծ մասամբ երկերն արդյունք են ոչ թե գրական, այլ կենսական դրդման, որ պետք է որոշվի, ցուցադրվի և մեկնվի:

Գրական վաստակներին և նրանց հեղինակներին նայելով վերից՝ մեր աչքին ուրվագծվում են հասարակաց միտումներ ու դրդումներ, մտածումի, զգացումի և կամեցողության հանրային կերպար, որ ծնունդ են տալիս մի որոշ գրականության, որ ունի ուրույն ձև և բովանդակություն: Գրականության ընդարձակ տեսադաշտի վրա երևացող այդ ուրվագծերը գրական հոսանքներն են, այսինքն հոգեկան ապրումների տարբեր կերպերը, որ հատուկ են որոշ ժամանակի: Թեև ի՞նչ որ ապրում և գործում է մարդ՝ միշտ մարդկային է, բայց ապրողն ու գործողը միշտ նույն մարդ չէ, ուստի պետք է ուշադիր լինել տարբերությանց ավելի քան հանգիստությանց, որովհետև տարբերությամբ է բնորոշվում մի ժամանակի մտայնությունը մյուսից և մտայնությամբ է զատվում գրականության մի կերպարանքը մյուսից: Տարբերությունը դարից դար և փոխակերպման ընթացքը, որով տարբերանում են գրականության շրջանները՝ մեզ տալիս են գրականության ընթացքն ու պատկերը: Եթե այդ տարբերացումն առաջացած է օտար ազդեցության տակ՝ այն ժամանակ պետք է զուգահիշ ցուցադրվին մեր և օտար գրական հոսանքները և որոշագրվի այն, ինչ որ առած են մերոնք օտարից, պայծառորեն մատնանշելով՝ թե ի՞նչ փոփոխություն կրած է օտարից առածը մեր միջավայրում: Գրականության կյանքի այս կողմը լավապես հետազոտելու և մատնանշելու համար անհրաժեշտ է ընդարձակ ժանրություն այն գրականությանց, որոնց ազդեցությունը նկատվում է մերինի վրա:

Այսպիսով կարող ենք ասել, թե գրականության պատմությունը մի ազգի հոգեկան կյանքի պատմությունն է նրա գրավոր հուշարձանների հիման վրա: Հեղինակներն այնտեղ պետք է երևան իբրև իմացական տիպարներ և երկերն իբրև զգացումի, մտածումի և կամքի ցուցանիշեր. պետք է ցուցադրվեն այն հուները, որոնց միջով ընթացած է ազգի գրական ստեղծագործությունը և այն պատճառները, որ այս կամ այն կերպարանքը տված են այդ ստեղծագործության:

Մոտավորապես այս էր իմ ըմբռնումը գրականության մի հմտալից և լավ պատմության, որ սկզբում աղոտ և հետագային ավելի պայծառա-

ցավ, երբ ծանոթացա Ա. Պիպինի ռուսաց գրականության և Յ. Տենի անգլիական գրականության պատմությամբ: Այս ըմբռնումն էր, որ կարծում էի, թե հնարավոր է գործի վերածել ջանադիր աշխատանքով: Որքան ավելի ճանաչեցի օտար գրականություններ, այնքան ավելի անհնարին երևաց իմ ըմբռնումի իրացումը: Չունիմք մեր գրական ժառանգության լրիվ իրացանկ, չունիմք գրական պատմական մասնակի հետազոտություններ, չունիմք բնագիրների գիտական հրատարակություն: Շատ մեծ և շատ գնահատելի աշխատանք կատարված է այս երեք ուղղությամբ. բայց ոչ լիովին, ոչ իսկ բավարար չափով: Հին գրականության հետազոտությունը դեռ չէ դուրս եկած բանասիրական բովից: Շատ երկերի երևման ժամանակն իսկ դեռ ստուգապես հայտնի չէ: Նույն վիճակի մեջ է գրական գործերի գրապատմական հետազոտությունը. աղբյուրների և ազդեցության խնդիրների քննությունը հազիվ սկսված է: Կան գրական ընդարձակ դաշտեր, որ դեռ խոփի չեն հանդիպած. այդպես են մեր դավանական և վարքագրական մարզերը: Միջնադարյան մեր տաղերգուները նոր միայն ուշադրության և հետախուզումի առարկա դարձան: Արևմտահայ հրապարակագրությունը դեռ պատմություն չունի, Հայոց քաղաքական մտքի պատմությունը հազիվ ուրվագծված է, բայց հիմնովին դեռ չի հետազոտված... Ո՞ր մեկն ասեմ և որը թողնեմ: Գրականության պատմությունը մի համադրություն է, մի նոր կառուցում, որ կարիք ունի տաշած քարերի: Տաշվածքը գրապատմական մյուսերի նախնական մշակությունն է և զատ հեղինակների կյանքի և գործի հետազոտությունը: Ոչ մեկ կյանք կարող է բավել այդ նախնական աշխատանքը կատարելու համար:

Ահա թե ինչու ստիպված եմ հրաժարվելու գրականության հմտալից և գիտական պատմություն գրելու իմ վաղեմի երազից՝ թերատ մի գործ շարադրելու համար: Այս ընդարձակ էջերը ես գրեցի մեր խորենացու պես ասելու, թե «Մի՞ ոք աստանոր անուսումն զմեզ համարեալ բամբասեսցէ, իբրև զանվարժս ոմանս և զտգետս»: Գիտեմ թե ի՞նչ պետք է և ի՞նչպես. բայց բավական չէ պայծառ գաղափար ունենալ գրականության լավ և հմտալից պատմության մասին, պետք է այդ գաղափարը իրացնել կարենալ գործնապես: Եվ բավական չէ իրացնելու կարողություն ունենալ. պետք է նաև հնար ու միջոց: Մի՞միայն Մխիթարյանք ունեն գրքերի և պարբերական մամուլի հարուստ հավաքածուներ, բայց այն տեղերը հասնելու ո՞վ ունի հնար ու միջոց, որ կարենա եթե ոչ մանրապատում հետազոտել, զոնե խորենացու պես «Թեթևակի ընդ խորս դիվանին նավել»: Հասկանալի է վարանքս, որով խուսափած եմ ձեռ-

նարկելու մեր գրականության մի հմտալից ու գիտական պատմության:

Ես գոհացա իմ ըմբռնումը պարզել այդ մասին իբր ցուցում ու հրահանգ, եթե լսող գտնվի: Պիտի անեմ կարելին ոչ իբր հմուտ ու գիտուն, այլ իբր մի պարզ գրասեր: Արժարժեղով սեր դեպի մեր հին ու նոր գրականությունը՝ ես այն հույսն ունեմ, թե ունկնդիր բազմության միջոց պիտի դուրս գան երիտասարդներ հետազոտելու մեր գրականությունը ոչ սիրողաբար, այլ իբր գիտուն բառի լավագույն առումով: Հին սերունդը պայծառ գաղափար չունեի գրականության պատմության մասին, ես ունեմ, բայց անկարող եմ իրագործել. նոր սերունդին կմնա և գաղափարն ունենալ, և իրագործել:

Ամբողջական երկեր, հ. IV, էջ 73-81

Ղազար Փարպեցի

Թեև 440-ին Հայոց թագավորությունը վերջացած էր, բայց Հայոց ներքին կացությունը դեռ շատ ամուր էր. հայ էր սպարապետը՝ Վարդան Մամիկոյան. հայ էր և մարզպանը՝ Վասակ Սյունի: Հոգևոր դասի գլուխն էր Մաշտոցի աշակերտը՝ Հովսեփ: Նախարարներն ու հոգևոր դասը իրենք զիրենք կնկատեին տեր ու տնօրեն հայ ներքին կյանքին, և Շահապիվանի ժողովին կանոններ կսահմանեին այդ կյանքը կարգավորելու համար:

Բայց դարու կեսին պայմանները կփոխվին: Կրոնափոխության գաղափարը մերժելով՝ նախարար և հոգևոր դաս կապստամբին: Ներքին տարակարծության հետևանքով՝ Հայերը կպարտվին: Նախարարներու մեկ կեսը կմեռնի պատերազմի դաշտին վրա, մյուս մասը կաքսորվի հարավ՝ արևելք. անոնց կավանդեն կգրավվին և ընտանիքները կմատնվին թշվառության: Հոգևոր առաջնորդները կնահատակվին: Վասակ Սյունին պաշտոնանկ կըլլա և կմեռնի չքավորության մեջ: Ուրացությունը կդառնա հաջողելու միջոց և կրոնափոխ նախարարները կվարեն հայ կյանքը: Կաթողիկոսական իշխանությունը կանցնի Մանազկերտցիներուն, որ հակառակ էին Լուսավորչի տան և անոր ուղղության և քրմական սերունդ էին: Մանազկերտցի էր Սուրմակը, որ կամբաստաներ Ս. Սահակը Պարսից արքային առջև. նույն շրջանին էր Գաթիշոյ Մաղխազը, որ կամբաստաներ Գյուտ կաթողիկոսը: Հոգևոր թե աշխարհիկ վարիչներն այդ աշխարհի՝ պարսկամետ էին հիմեն ի վեր:

Բայց 460-ին ուխտապահ նախարարները աքսորեն կվերադառնան իրենց տուները: 461-ին կաթողիկոս կընտրվի Գյուտը, որ Տայոց անառիկ աշխարհեն էր, Յայաստանի հունամերձ սահմանեն և ուներ հունական կրթություն: 478-ին անոր կհաջորդէ Յովհան Մանդակունի մինչև 490: Պետք է կարծել, թե ան ալ հունական կրթություն ունի, եթե հաստատված համարենք, թե ինքն է մեր Պատարագամատույցին թարգմանիչը: Գյուտ կաթողիկոս խուլ պայքար կսկսի ուրացող և վարիչ նախարարներու դեմ և պաշտոնանկ կըլլա անոնց ամբաստանության հետևանքով: Իր հաջորդը, Մանդակունին, կշարունակե նույն ընթացքը և ավելի մեծ չափով, քանի որ զայն կտեսնենք Վահանի ապստամբության մասնակից քաջալեր: Ինքն է մեր Ծիսարանի (Մաշտոցի) գլխավոր կազմիչը, այսինքն ուրացության շրջանին մեր քայքայված եկեղեցական կյանքի վերակազմիչը: Ու թեև ուրացողներ այնքան զորավոր են, որ մինչև իսկ Վահան Մամիկոնյան ստիպված է իր հավատքը ուրանալ անոնց դավերուն զոհ չերթալու համար, բայց հավատարիմ տարրերու վերախմբումը արդեն զորավոր ազդակ է հանրային կյանքի մեջ, և արդեն ապստամբության կերպարանք ստացած:

Վերելքի այս շրջանին է, որ ապրած ու գործած է Ղազար Փարպեցին: Ոչ մեկ հին հեղինակի անձի և գործի մասին այնքան շատ տեղեկություն կա, որքան իր մասին. այդ տեղեկությանց աղբյուրն է իր պատմության հառաջաբանը և իր գրած թուղթը Վահան Մամիկոնյանին: Ավանդությունը ուրիշ գրական վաստակ չի վերագրեր անոր, իսկ վերագրած հասած է մեր ձեռքը, թեև մեկ օրինակ միայն, ուշ գրությամբ (1672) և պակասավոր: Գրիչը կըսե, թե օրինակը քայքայված էր. կխնդրե լրիվ օրինակ գտնողներեն լրացնել թերին, բայց այնուհետև ոչ մեկ նոր օրինակ գտնված է: Վնասված է պատմության հառաջաբանը և Վահանին գրած թուղթը: Այս թուղթը Ղազար գրած է Ամիդ քաղաքեն, որ հունապատկան էր այն ժամանակ և ուր ապաստանած էր Ղազար, խուսափելով հալածանքների: Լսելով, որ զինք կմեղադրեն Վահանի առջև, կփութա արդարանալ այդ գրությամբ, պաշտպանելով իր կյանքն ու գործը:

Ղազար Փարպի գյուղեն է, որ կա մինչև այսօր և կգտնվի Արագածի հարավային ստորոտը, Օշականեն ոչ շատ հեռու: Այդ գյուղին մոտ է Ղաղրան երբեմնի թրքական գյուղը, ուր ըստ ժողովրդի, թաղված է Ղազար: Իր Թուղթեն կիմանանք, թե եղած է Աղան Արծրունիի աշակերտը, որ Վահան Մամիկոնյանի քեռին էր, և անոր հետ ապրած է Գուգարաց աշխարհի տեր Աշուշայ Բոեշի տունը: Աշուշա, որուն կինը Վահանի մորաքույրն էր, ազատած է Վահանը և իր եղբայրները Պարսկաստանեն,

ուր մանուկ հասակին պատանդ դրկված էին Վասակ Սյունիի կողմն: Զավակներուն հետ վրացի իշխանին քով կերթա նաև անոնց մայրը:

Այս ապահով միջավայրի մեջ երկու իշխանուհի քույրերը իրենց զավակներուն հետ կսնուցանեն նաև Ղազարը, որ տարիքով մեծ էր, բայց անոնց խաղընկերն էր:

Պոլիս կուսանի և Յայաստան կուգա

Այնուհետև անոնց ծամփաները կբաժնվին: Վահան պետական պաշտոն կվարե, իսկ Ղազարը վարդապետներու հրամանով ուսանելու կտանին արևմուտք, հավանաբար Պոլիս:

Յայտնի չէ, թե որքա՞ն են այդ «վարդապետներ»-ը և քանի՞ տարի կմնա «ի Յոռոմս», բայց այն հանգամանքը, որ Ասորիք չեն դրկեր, նշան է, թե դրկողները հունամետ էին:

Վերադարձին Ղազար կմնա Կամսարականներու մոտ, որ կնշանակե, թե 640-են հետո վերադարձած է Յայաստան և անոնց մնացած է մինչև Վահանի մարզպանության տարին, այսինքն մինչև 484: Այնուհետև, ապստամբական շրջանի աղմուկներեն ձանձրացած, կուգե աղոթքով պարապիլ և հանգչիլ. ուստի կերթա Սյունիք և երկու տարի կմնա, ծնեռն ապրելով քարայրի մը մեջ Մովսես Անուն ճգնավորի մը մոտ, իսկ ամառը Սյունյաց Մուշե եպիսկոպոսի հետ «ի հովու», այսինքն ամարանոց:

Էջմիածինը կշենցնե

Երկրի վերաշինության ձեռնարկելով՝ Վահան կորոշե վերաշինել Էջմիածնի տաճարը: Փնտրելով կգտնե Ղազարը, կերե իր տուն և անոր կհանձնե այդ գործը, հակառակ շատերու, որ մինչև անգամ կաշառ խոստանալով՝ կձգտեին տիրանալ այդ գործին: Թե Վահան և թե Կամսարական կհոգային վանքին և Ղազարին պետքերը: Ինք Փարպեցին ալ կանցնի Վրաստան, Աղվանք, Սյունիք, Արշարունիք և առատ նվերներ կերե: Երեք անգամ կնորոգե վանքի կահերը, իր խոսքը ունկնդիրներու բազմություն կհավաքե իր շուրջը:

Ծառաներն ու շահախնդիրները գործի վրա

Բայց Վահանի ավագ ծառաներն ու տաներեցը, նախանձն դրոճված, ամեն կերպով կաշխատեն Ղազարը վարկաբեկել մարզպանի աչքին և հեռացնել վանքեն: Նախ կշատախոսեն ասելով, թե Ղազար պոռնկու-

թյունը մեղք չի համարեր և ուր պիղծ ու չարագործ մարդ կա՝ անոր տունը հոն է: Հետո կամբաստանեն, թե աղանդավոր է: Այս առիթով Ղազար մեծ հմտությամբ կպաշտպանե ինքզինքը՝ հայտնելով թե Փրկչին հետևելով կզգուշանա «ի լրո» դատապարտել կասկածելի նկատված մարդիկը, որով կարծած են, թե ինքն ալ աղանդավոր է: Ոչ դատավոր, ոչ իսկ քրեապիսկոպոս եղած է, որ շփում ունենա աղանդավորներու հետ. ինքնագլուխ վարդապետ չէ դարձած, զգուշանալով առաքյալի սաստեն: Շատերու նման իր աչքի գերանը թողած՝ ուրիշներու աչքեն շյուղ հանել չէ ուզած՝ իր անձը մաքուր ցույց տալու մտահոգությամբ, բայց իրականին մեջ դրամ շորթելու համար:

Գալով բուն աղանդին, իր անձը անխոցելի կհամարե, նկատելով որ տարիներ շարունակ ուսումնասիրած է դավանաբան մեծ հեղինակներ՝ Աթանաս, Կյուրեղ Երուսաղիմացի և Ալեքսանդրացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Լուսավորիչ: Իբր հերձվածող կհիշատակե Նեստորը և Եվտիմեոսը: Ուրեմն Եփեսոսյան ժողովի հետևորդ է:

«Հալածիչներս,- կգրե Ղազար Վահանին,- անտարբեր էին այն արուեստի հանդէպ, որու համար զիս կը զնահատէիր դուն: Անոնց պէտք է ոսկի և արծաթ, որ չունէի. եղածն ալ ծախսեցի վանքիս վրայ: Խոհակերութեան վարժ չէի, որ անոնց քիմքը պարարտէ»:

Նախանձորդները երբ կհաջողին պաղեցնել Վահանի սիրտը Ղազարեն, կհարձակին վանքին վրա, կվռնտեն Ղազարը, կհափշտակեն անոր անձնական գույքն անգամ: **«Մինչև իսկ յունարէն գիրքերս ինձ չտուիմ-կգրե ան,- և մնացին ցեցի կեր. գոնէ կարենային կարդալ և օգտուիլ...»:**

Ղազար երևելի սեպուհ մը կղրկե ժամանակի կաթողիկոսին, որ օգնության հասնի, բայց կաթողիկոսը, վախնալով հզոր նախանձորդներեն, չի համարձակիր որևէ օգնություն հասցնել. թեև իր կարծիքով Ղազարը **«զարդ էր եկեղեցու»:** **«Ես,-** կհայտնե կաթողիկոսը իր պատասխանին մեջ,- **կը վախճամ երեսդ անգամ տեսնելու, իսկ դուն կըսես, թէ զամ բժշկեմ քեզ կամ թաղեմ:** Եթե իմանան, զիս ալ քեզի հետ միասին կը թաղեն...»:

Եվ Ղազար ցասունով կբողոքե հոգևոր պետին այս վախկոտության դեմ. **«Ու՛ր աներկիւղութիւն քաջ հովուի է. ու՛ր հոգողութիւն արդար ուսուցչի»:** Այո՛, վարիչներուն մոտ մասնավոր խոսակցությանց ատեն, կաթողիկոսը երբեմն կպաշտպանե Ղազարը, ըսելով, թե **«ճիշդ չեղաւ անոր հեռացումը, քանզի զարդ էր եկեղեցվոյ»:** Բայց ծայն չի հաներ... երբ դիմացիները պատասխան կուտան, նորեն կչարախոսեն արդար Ղազարը:

Հիշատակելով քանի մը ուրիշ ամբաստանություններ և չարախոսություններ, որ իբր թե առաջ գիտնաբար կխոսեր, հետո՝ անգիտնաբար. որ եկեղեցիի մեջ գիրք չի կարդար, այլ զոց կըսե. որ վանքին մեջ ոչինչ կար Ղազարին մեկնած ժամանակ. որ երիտասարդ մը անգամ պատրաստված չէ վանքին հսկելու համար. և ասոնց պատասխանը տալե հետո Ղազար կգրե.

«Ըսենք թէ ես մեղաւոր էի և իմ հատուցումն էր, որ ստացայ. իսկ առաքելանման անձերը ի՞նչ ըրած էին, որ վատթար վերաբերումի հանդիպեցան, քան ես»:

Եվ կբերե նշանավոր անձերու ցանկ մը, որ դժբախտաբար կիսատ է. որովհետև ճիշտ այդտեղ կպակսի թերթ մը: Կհիշատակե նաև Ներսես Մեծը և Սահակ Պարթևը, որոնք նույնպես հալածանքի ենթարկվեցան, խոսքը կկնքե բուն ինքն Վահանը հիշելով, որ բազմաթիվ մարդոց կյանքի և պաշտոնի պատճառ դարձած է, բայց և այնպես ազատված չէ նախանձե և չարախոսութեն:

Այս մեծարժեք թուղթը, որ Մամիկոնյան Համազասպ կտանի Վահանին, ոչ միայն կվերականգնե Ղազարի արժեքը Վահանի աչքին, այլև բարերար հետևանք կունենա մեր գրականության համար: Վահան Մամիկոնյան կտրուկ հարվածով մը կլուծե հանգույցը, Ղազարի հանձնարարելով գրել Հայոց պատմության շարունակությունը: Այս գործը չէր կրնար նախանձ հարուցանել, որովհետև վարչական և հասութաբեր գիրք չէր:

Իր թուղթի մեջ Ղազար մեզի կերևի իբր ազնիվ և անշահախնդիր մարդ: Ոչ թե խոսքով ու պաշտոնով, այլ սրտով ու գործով քրիստոնյա, ինչպես ինքը կըսե՝ **«Երկրաւոր իմաստով տկարամիտ ու անզգուշաւոր»**, հեռու դավերե և դավադիրներե, անձնատուր իր հանձն առած գործին ու պարտականության, մեծաշնորհ, բայց համեստ գիտուն, բայց ո՛չ, ո՛չ սնափառ, սակավապետ, ուստի ոչ ընչասեր, բարյացակամ և բարեխորհուրդ: Եթե կհամարձակի ինքզինքը պաշտպանել՝ Պողոս Առաքյալն ունի իբր օրինակ. այլապես համբերած է, նախանձորդներուն դատը Աստծուն թողելով:

Այս թուղթն ունի միաժամանակ պատմական և գրական մեծ արժեք: Այնտեղ կտեսնենք ուրացության շրջանի հոգևոր դասը իր տգիտությանմբ և շահամոլությամբ, իր անողոք ու զռեհիկ պայքարներով վերելքի մարդոց դեմ: Ղազար կփայլի այս թուղթի մեջ իբր իսկապես հոգևորական և գիտուն մարդ: Իր փաստարկությունը զորավոր է, խիտ ու կտրուկ, լեզուն աշխույժ, խոսքը համարձակ, հեռու քծինքե և լի գիտակից պատվազգացությամբ:

Փարպեցիի Պատմությունը

Իսկապես Վահան Մամիկոնյանին պարտական ենք Ղազար Փարպեցիի Պատմությունը: Ոչ Փարպեցին ինք անծանր և ոչ իր գնահատողները ու պարսավողները զայն համարած են հեղինակ: Իր առաջին գնահատողներեն մեկը - իր թղթի հառաջաբանը գրողը, որ ժամանակակից կթվի - անոր վրա կհիանա իբր բարձր ուսումնականի և նշանավոր վարդապետի. ժամանակի կաթողիկոսը իբր եկեղեցիի գարդ կհամարե զայն:

Տիրող կղերը որևէ պաշտոն չէ տված անոր, իսկ ինքը իբր վանահայր աշխատած է մեծ եռանդով, անարժան համարելով իր անձն ապրելու, եթե չկարենար էջմիածնի նորոգված վանքը կարճ ժամանակվան մեջ հասցնելու երկու հարյուր տարվան վանքերուն ճոխության:

Պիտի մոռցվեր այսպես աննշան, եթե Վահան չօգտագործեր անոր գիտական պատրաստությունը և բնատուր կարողությունը: Վահան ինքը որոշած է Փարպեցիի պատմության նյութը, ծավալը, նպատակը: Նյութը պետք է ըլլար «աճեցնել» Հայոց պատմությունը՝ շարունակելով Փավստոսի թողած տեղեմ. ծավալը՝ Հայաստանի բաժանումեն մինչև Վահանի մարգարայության օրը. բովանդակությունն ու նպատակը՝ **«քազում զգուշութեամբ գրել և կարգել մի ըստ միոջէ զամենայն զհոգևորացն զառաքինութիւնս և զորաց քաջաց «գլխութիւնն»**. որպէսզի հոգևորականները լսելով իրենց սմաններուն բարի վարքը, աշխատին անոնց ճգնության սմանիլ, իսկ քաջերը լսելով նախնի քաջերու գործերը՝ ավելցնեն իրենց քաջությունը և անվանի հիշատակ թողուն թե իրենց անձի և թե ազգին: Իսկ ծուլերն ու վախկոտները լսելով ուրիշներու հասցեին եղած պարսավը՝ բարի նախանձի գալով ջանան լավանալ:

Վահան լավ ծանոթ կերևի Փավստոսի Պատմության և կուզե, որ Փարպեցին անոր սման պատմություն մը գրե, նույնատեսակ բովանդակությամբ և նույն նպատակով: Այս առաջարկին ուժ տված են նաև ուրիշներ: Փարպեցին կըսե՝ թե հանձն առի այս գործը «հրամանաւ իշխանաց և սուրբ վարդապետաց»: Իշխանները հավանորեն Կամսարականներն էին և Վահանի եղբայրները, իսկ վարդապետները հավանորեն անոնք էին, որ, ժամանակի կաթողիկոսին պես թեև կգնահատեին Փարպեցիին արժեքը, բայց չէին համարձակեր պաշտպանել հայտնապես:

Թե ե՞րբ սկսած և ե՞րբ ավարտած էր իր պատմությունը, հայտնի չէ: Անշուշտ հալածանքներն հետո, այսինքն 490-են վերջ, քանի որ Ման-20

դակունին չէր կրնար ըլլալ Փարպեցիին մերժողը, և Վահանի մահեն առաջ, որ կնշանակե 510-ին:

Իր պատմությունը, որ կընդգրկե հարյուր տարվան շրջան մը (384-484), երեք մասի բաժնած է:

Հայաստանի բաժանումեն մինչև Վարդանանց պատերազմը:

Այս պատերազմն ու իր հետևանքները:

Վահանի կյանքն ու գործը մինչև մարգարայություն:

Գործին կցած է հառաջաբան մը, որ տեղ-տեղ պակասավոր է: Այստեղ կպարզե իր տեսակետը պատմագրության վրա և տեղեկություն կուտա իր ձեռնարկի մասին: Հավիտենական գանձի ժառանգորդ կհամարե անոնք, որ «ստուգապատում պատմագրեցին» և «մարդահաճ խոսքերու» հավելում չըրին: Պատմագրությունը կ'սեպե «մեծ և հոգևոր գործ» և կնկատե, թե պատմագիրը պետք է հորինե կանոնյալ գիտության հրահանգի համաձայն, այսինքն հետևելով հռետորական ուսման պահանջներին, պետք է որոշ կարգ պահե իր պատմածի մեջ և ունենա նյութին հարմար խոսք. պետք է ստուգապատում ըլլա. պետք չէ եղածը կարճակտուր պատմե և չեղածն իբր եղած ներկայացնե «յընդունայն աճմունս բանից»:

Որով կտեսնենք, թե պատմագրությունը, ըստ Փարպեցիի, պետք է ըլլա կարգավոր, հարմարաբան, ստուգապատում և բարոյակրթական նպատակ հետապնդե: Ուրեմն՝ ոչ առասպել, ոչ վիպասանություն, այլ «զեղեալս աշխարհիս Հայոց»: Եվ այս ստուգապատում եղածները այնպիսի ձևով, որ հրահանգիչ ու խթան ըլլա հոգևոր և աշխարհական ունկնդիրներու համար:

Ղազար Փարպեցի և հունարան դպրոցը

Ղ. Փարպեցին իրմե առաջ երկու պատմագիր կճանչնա, Ագաթանգեղոս և Փավստոս: Առաջինը կհամարե Հայոց Պատմության առաջին գրքի հեղինակ, իսկ երկրորդը՝ երկրորդ գրքի: Երրորդը կգրեմ «ես Ղազարս» կըսե: Երկու գիրքերը պատմագիրներու **շարք** կնկատե և կհարի այդ շարքին:

Կուտա նախորդ երկու գիրքերու բովանդակությունը. առաջինը ամփոփ, բայց լրիվ, իսկ երկրորդը՝ ընդհանուր առմամբ: Կթվի թե այդ մասին մեջ խանգարված է բնագիրը: Իր տեսած Ագաթանգեղոսը եղած է լրիվ, սման հույն թարգմանչի ձեռքը եղածին, իսկ Փավստոսը՝ նույն գլխավարությամբ, որ ունինք այսօր: Բարձրորեն կգնահատե Ագա-

թանգեղոսի գործը, անոր մեջ տեսնելով այն հատկանիշները, որ իր կարծիքով պետք է ունենա պատմագրողը: Իսկ Փավստոսի մասին տարակույսով կիսոսի, նկատելով անոր պատմության մեջ դրվագներ, որ չէր կրնար գրած ըլլալ Բյուզանդիոն կրթված մեկը, ուստի խարդախված կհամարե անոր պատմությունը:

Պատմագրության մեծագույն արժանիքը համարելով ստուգությունը, Ղազար օգտագործած է հավաստի աղբյուրներ իր պատմությունը գրելու համար. գիրերու գյուտին շրջանին համար՝ Կորյունի գործը, որ ականատես հեղինակ է: Վարդանանց պատերազմի համար՝ մասնակիցներու վկայությունները և անշուշտ իր պատմական հուշերը. Վահան Մամիկոնյանի պատմության համար ալ՝ բուն իսկ Մարզպանին և անոր գործակիցներուն պատմածը և իր աչքով տեսածը: Ավելի հին շրջանի անցքերը համեմատաբար համառոտ հիշված են և հավանաբար ծերունի վերապրողներու պատմածներեն ամփոփված:

Ղեպքերը իրարու կհաջորդեն բնական կարգով և բնական պատճառակցությամբ: Իբրև կրոնամիտ՝ սատանայի և Աստուծո մատը տեսնել չի մոռնար Ղեպքերու ծագման և թավալման մեջ, բայց անոնց չարակցությունը և պատճառական կապակցությունը կուտա աշխարհիկ կարգով: Պետական նկատումներն են, որ Չայերը կրոնափոխ ընելու քաղաքականության ծնունդ կու տան պարսիկ արքունիքի մեջ. անձնական շահը և մարդկային վրիժառության կիրքն է, որ կնդեն հայ նախարարները իրենց կրոնը փոխելու (Վասակ Սյունիի փեսան՝ Վարազվաղան և ուրիշներ): Կրոնափոխության դյուրին ճամբան է, որ անարժեք մարդիկ կհանեն պաշտոնի գլուխ և բարոյապես ու ռազմապես վարկաբեկ կընեն հայ գորքն ու ժողովուրդը: Անձնական հաշիվներով է, որ Վահան Ամատունին կ'ստիպե Վարդանը շուտափույթ ապստամբության ձեռնարկել, դեռ հույներն օգնության խոստում չստացած: Այդ հաշիվն էր վնասեր Վասակ Սյունիին, որ մարզպան էր և որուն հակառակ էր Ամատունին: Նախանձն էր, որ կստիպեր ուրացողները ամբաստանել Վահանը պարսիկ թագավորի առջև: Ներքին խռովությանց հետևանքով է, որ պարսիկ արքունիքը զիջող ընթացք բռնեց ապստամբ Վահանի հանդեպ և այլն:

Ղազար Ղեպքերը կպատմեն հանգամանորեն և կծգտի ոչինչ թողել անորոշ ու մթին: Պետք եղած ժամանակ կիջնեն մանրամասնությանց, պայծառորեն ներկայացնելու համար Ղեպք մը, վայր մը, անձ մը, հանգամանք մը, Պոլսո անցյալն ու աճումը, Աղան Արծրունիի կյանքը, Խուժիք ասորիի ձեռնարկը մեր նահատակներու ոսկերտիքը ձեռք բերելու, Վահանի կռիվները, քսոտրական նախարարներու կենցաղն են և այլն:

Պատմագրությունը ստեղծաբանություն է իսկապես. վերապրած և ցրիվ տեղեկությանց հիման վրա կառուցանել անձերու, հաստատությանց և պետությանց կյանքը. բայց պետք է որ կառուցման հիմքին մեջ ստուգված իրողություններ դյուրին և պատճառական շղթան խելամոտ ըլլա: Ղազար դիմած է ստեղծաբանության, սակայն իր հնարքները հարմարած են կացության կամ հղկունն են իրականի: Իր երևակայությունը կհորինե իրականին շրջանակին մեջ և ստույգ իրողության հիմքին հենած: Անշուշտ չէր գիտեր, թե իրոք ի՞նչ խոսած է Միհրներսեսի՝ պարսիկ արքային. բայց կրոնափոխության քաղաքականությունը իրական փաստ էր, պետական հրահանգն ու հրամանը՝ նույնպես: Եվ ահա Ղազար այս կացության համար խոսքեր կդնե Միհրներսեսիի բերանը:

Այն ամենը, որ Վահան խոսած է Պարսից արքայի կամ Նիխորի մոտ՝ Ղազար գիտեր անշուշտ բուն իսկ Վահանի պատմածեն. բայց Վահանի ըսածն ու խոսածը հղկված կերևի Ղազարի գրչով:

Սահակ կաթողիկոսի կամ Գյուտի խոսքերը հայ նախարարներու կամ Պարսից արքայի հետ՝ Ղազար լսած չէ: Բայց անոնց ընդհանուր բովանդակության մասին տեղեկություն ունեցած է և ահա մեզի կու տա հաջող հորինված խոսքեր, որոնք պատշաճ են խոսողին և տեղին, ուր խոսված են:

Ըլլալով ստեղծաբանություն ըստ ձևի և հորինվածքի, այդ ամենն ու նմանները իրական են ըստ գոյության: Սուտեր չկան իր պատմածի մեջ, քանի որ հետամուտ է ստուգության, բայց ձևը Ղազարինն է, որ ունի շատ հաստատուն և գրական կրթություն: Ղազար կրոնավոր է և ճգնասեր, բայց ապրած է նախարարական շրջանակի մեջ, ուստի աշխարհիկ կյանքի անցուդարձերու հետաքրքրությունն ունի և ըմբռնումն: Ծիշտ է՝ իր աշխարհիկ գործող անձերուն մեջ միշտ կծգտի կրոնական կողմը շեշտել, բայց երբեք չի մոռնար անոնց աշխարհիկ գործունեությունը աշխարհորեն ցուցադրել, պայծառ ու որոշ տալով անոնց տեղը, ժամանակը, ընթացքը, արդյունքը: Իր գլխավոր հերոսը Վահանն է. մարզպան և ուրեմն առաջին մարդը հայության մեջ: Բայց Ղազար ոչ շողոքորթ է, ոչ ալ ներբող կիյուսե: Ոչ վկայարան՝ Ազաթանգեղոսի պես, ոչ բանաստեղծ և հերոսապատում՝ Փավստոսի նման, այլ չափակից և իրատես: Վահանն իբր ապստամբ անոր գրչի տակ չանցներ այն սահմանը, որ հատուկ է հայու ավանդական խիզախության: Խորապես և իրապես քրիստոնյա՝ Ղազար արհամարհող է մազդեզական կրոնը, բայց պարկատյաց չէ. գիտե տարբերել լավն ու վատը: Նիխոր, Անդեկան, Վաղարշ իր գրչի տակ կերևան լուրջ ու բարեմիտ պետական անձեր. Վասակ

Սյունիքն անոր պատմության մեջ պետական մարդ է, և ոչ թե հրեշ:

Ղազարի գրական կարողությունը մեծ է և մշակված, գիտե իջնել մանրամասնությանը և բարձրամալ հանուրին. Արարատյան աշխարհի նկարագրությունը, ուրացողական քայքայիչ դերի ցուցադրությունը՝ ապացույց են վերապրող մտքի և պատկերացումի կարողության: Ս. Գրքեն դուրս՝ անոր մտածումն աշխատած է քաղաքական աշխարհը ըմբռնել: Իր ժամանակի քրիստոնյա մտավորականն է, բայց և քաղաքական հայ մարդը: Ոչ միայն յուրացված է Կամսարական և Մամիկոնյան շրջանակեն իբր հայր հոգևոր, այլև խորհած ու դիտած է անոնց կենցաղն ու գործը. ըմբռնած է անոնց մտահոգությունները, քաղաքական կյանքի զսպանակները, ուստի և տերն է իր նյութին, որ կերևա իր գործին իբր պատրաստություն, ծանոթություն և թափանցում:

Շատ մեծ է իր Պատմության արժեքը. մեր հարյուրամյա պատմության միակ պատմագիրն է. եղիշեն անկե կախում ունի: Փավստոսի արժանավոր հաջորդն է իբր պատմագիր Հայոց Մամիկոնյան տան, բայց ավելի իրատես ու չափասեր: Չունի արքայական շրջանի շունչը, բայց դեռ Հայաստանը «հանուրց հյուսիսականաց վեհագույն» գիտե, գերադաս՝ քան Վիրք և Աղվանք: Իր վերաբերումը ժխտական է դեպի ասորականը և թեր ու սիրող է հունականի. ուստի և առանց ժխտելու Մաշթոցի դերը՝ գերադաս կներկայացնե Ս. Սահակը և իր մեծարանքի սիրուն կխանգարե իր պատմության գեղեցիկ չափակցությունը՝ մեծ տեղ տալով Ս. Սահակի տեսիլքի և անոր մեկնության, որից կթվի թե առած ու զետեղած է իբր պատրաստի գրություն: Այդ գրության լեզուն ինձ կթվի ավելի դասական և հնաբույր:

Փարպեցիի լեզուն ժամանակի հետքն ունի իր վրան: 428-են հետո, երբ Հայոց արքունիքը չքացավ, հայ կյանքը զավառացավ. չկար այլևս կեդրոնական իշխանություն՝ պատմական և հարազատ. չքացած էր լայն կյանքն ու երկրին կշիռը: Ան մարզն մըն էր և ոչ պետություն. խամրած էր պետական ինքնազգացումը և զայն փոխարինած էր օտար և այլակրոն տիրապետության մորմոքը, որ կերևա Ղազարի պատմության մեջ: Քրիստոնյա հայությունը կդառնա ինքնամփոփ. կփոքրաման շահերը՝ պետականեն իջնելով իշխանական տուներու. կնեղնա քաղաքական կյանքի հորիզոնը, նվաստության զգացումը կտիրե և թռիչքը կպակսի: Նախարարական տուները անջատ են և հակամարտ, իրարմե հեռու՝ անջատորեն կաշխատին կացության տեր դառնալ. շատերը օտարամետ են և հավատուրաց. հոգևորական դասը նկուն է, համակերպող, շատերը շահամոլ:

Կոտորակված է և նսեմացած նաև հայ լեզուն: Նորեն միջնաաշխարհի

լեզուն է, բայց ոչ արքունիքի, այլ նախարարական տուներու և միջավայրի, որ անմիջական շփման մեջ են շինական դասակարգի և մանր ազնվականության հետ. ուստի ավելի ընտանեկան է և հանրային: Հատկապես Ղազար, որ ապրած է Կամսարական միջավայրի մեջ և Վահանին եղած է սննդակից, վարժված կհետևի անոնց խոսք ու զրույցին: Իր կրթությունը որոշ բարձրության վրա կպահե այդ լեզուն, բայց գործող անձերու բերնին մեջ արդեն ռամկունակ է, աշխարհաբարի տարրերով, բայց առույգ և աշխույժ: Դարավերջի ընթացիկ և կենդանի խոսվածքն է, որ ոչ Փավստոսի առատաբան և բանաստեղծական լեզուն է, ոչ Ազաթանզեղոսի մեծափառքան և արքունի դիվանական բարբառը, ոչ Ս. Գիրքի ազնվական և պայծառ զրույցը:

Ամբողջական երկեր, հ. IV, էջ 351-361

Սայաթ -Նովային հետ

Մտադիր եմ այս նոր պարբերականի* ընթերցողների հետ զրույց անել Սայաթ - Նովայի մասին, մեկնելով նրա երգերը թե լեզվական - բանասիրական և թե գրական-հոգեբանական տեսակետից: Այս գործի համար ես ունիմ մի քանի հարմարություններ, որ մտադիր եմ օգտագործել, և որ ինձ թույլ են տալիս հանդգնելու մեկնաբանը դառնալ մեզանից երկու հարյուր տարի առաջ ապրող այդ մեծատաղանդ աշուղի ստեղծագործության:

Ես ծնած ու մեծցած եմ նույն այն քաղաքի - Թիֆլիսի- և նույն այդ թաղի մեջ - Հավլաբար, ուր ծնած և ապրած է Սայաթ-Նովան: Իր մահն իմ ծնունդեն բաժանում է ութսուն տարի, բայց իմ մանկության շրջանին Թիֆլիսը դեռ պահում էր շատ հին հետքեր անցյալ շրջանից և իմ տեսած նիստ ու կացը շատ չէր հեռացած արքայական շրջանի Թիֆլիսի կյանքից: Ճիշտ է, չկար վրաց թագավորությունը, դրա փոխարեն իշխում էր ռուսը, չկար և զորավոր պարսկական ազդեցություն, բայց ժողովրդի կյանքը նոր միայն սկսած էր փոխվիլ և նիստ ու կացը դեռ հնամենի էր:

Մեր թաղի եկեղեցին էր այն խոջի վանքը, որ ժէ. դարուն շինած էր Խոջայ Բեհբուդը, Բեհբուդյան իշխանական տան հիմնադիրը, որի լայն շրջաբակի մեջ թաղված էր Սայաթ - Նովայի կինը և ուր հավանորեն

* «Ազգակ Շաբաթօրեակ», Պեյրուք:

մկրտված էին Սայաթ - Նովան և իր զավակները:

Գուցե այդտեղ նաև պատկանում էր նա Մարմար անունով կնոջ հետ: Հազիվ գրակարդաց՝ այդ վանքի աջ պատին, ներսից, արևի կամ մոմե-րի աղոտ լույսով հաճախ փորձած եմ կարդալ. «ես խոջա Բեհբուդը»... ճգնելով վերծանել խուսկի ծուխից սևցած գրերը, որ պատիվներով բեռ-նավոր հորինում էին ինձ անծանոթ և խժական բառեր:

Մեր թաղին մեջ ես տեսած եմ ջուլիակներ, որ շարունակում էին Սա-յաթ - Նովայի արհեստը, նրա պես իրենց տան մեջ մաքուր շարժելով և փողոցի մեջ հենքը կազմելով: Հաճախ անցած եմ, քաղաքի մեջ, այն նեղ փողոցով, ուր խարազները (ասիական քոշկարներ) կարում էին չուստ (յամանի) ու ծուղա և կանանց գեղեցիկ քոշեր՝ զարդարում երե-սով, և աշխատանքի կշռույթին զուգահեռ՝ երգում էին իրենց իսկ հորի-նած սիրային կամ ծաղրական երգերը, որ իրենց աշակերտները, երեկո-յան, թնդացնելով փողոցներն իրենց զիլ ձայնով, տանում, տարածում էին Հավլաբարի ամենախոնարհ և աղքատիկ տնակները:

Շատ անգամ իմ բարեպաշտ մորս քղանցքը բռնած՝ «համբուրելու» գնացած եմ բերդի Ս. Գևորգ հնադարյան ու բարձրաշեն եկեղեցին, որ գտնվում էր Թիֆլիսի միջնաբերդի՝ Ղուրջաղալայի կիսավեր պարսպի տակ: Այդ եկեղեցու սեղանին առջև սպանած էին Սայաթ - Նովային՝ աղոթքը բերանին: Դեռ Թիֆլիսի մեջ շատ մոքալաքներ կային իմ ման-կության ժամանակ, այսինքն պատվավոր և բնիկ քաղաքացիներ, որ վե-րից էին նայում եկվոր տարրին, որ ռուս տիրապետության հետևանքով սկսած էր խուժել Թիֆլիս և վերափոխել կյանք ու կենցաղ: Այդ կռուները (այդ արհամարհական անունն էին տալիս եկվորներին բնիկ քաղաքա-ցիները), շուտով այնքան շատացան, որ բնիկը քաշվեց իր պատյանի մեջ, բայց իմ մանկության շրջանին դեռ լայնորեն հնչում էր Թիֆլիսի բարբառը և տիրում էին հին բարբերը հատկապես բնիկ տարրի մեջ: Նրանք երկելեզու էին. վրացերենը մայրենի լեզվի պես գիտեին և հայ ու վրացի շատ մտերիմ էին: Շրջակա սրբատեղիները՝ Թելեթի, Շղնեթի և Շահնաբադի եկեղեցիները իրենց տոնական օրերին հայ ու վրացի ուխ-տավորներով լիքն էին. իսկ Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Շուշանիկի գերեզմանը, որ գտնվում էր Թիֆլիսի Մետեխ կոչված ամրոցի մեջ (որ ռուսները բանտի վերածած էին), հավասարապես հայի և վրացու պաշ-տամունքի առարկան էր. միևնույն հոյակապ եկեղեցու մեջ հայ ու վրա-ցի պաշտոն էին մատուցանում հերթով:

Վրացին ուրախ և անհոգ ժողովուրդ էր. երկրի հին տերերն էին: Հա-յերը նրանց մեջ ապրելով նրանց պես դարձած էին ուրախ և սրտաբաց:

Խնճույքն ու քեֆը սովորական էր, իսկ ուրախ հավաքույթները թաղերի մեջ, երեկոյան մոտ, երբ տան գործն ու աշխատանքը վերջացած էին, մի բնական պահանջ էր կարծես: Աղջիկները մեկի տան բակի մեջ հա-վաքված՝ դափի ներդաշնակ հարվածով և բերանի եղանակումով սկսում էին պար գալ երկար, սրախոսելով ու քրքջալով, միջահասակ կանայք տան դռներին նստած խմբովին բամբասում էին կամ կատա-կում և անվերջ ու սրտանց ծիծաղում: Երբեմն աղջիկներից մեկն ու մե-կը դուրս էր գալիս ու սրանց քաշում ներս և ստիպում, որ պարեն: Աղ-մուկն ու ծիծաղը բռնում էր տուն ու երդիք:

Մեր թաղում ապրում էր մի կույր միջահասակ կին, քոռ Մային, որ գի-տեր քամանչա նվագել և հաճելի ձայնով երգել վրացերեն ու հայերեն: Հաճախ կանայք հավաքվում էին, կանչում քոռ Մայուն և նրա շուրջը բո-լորած երգել ու նվագել տալիս և իրենք էլ ձայնակցում նրան: Հետո դափն առնում և սկսում պարի եղանակ և պարում մեծ եռանդով ու սրտանց. երևում էր նաև հոգեպահուստ օղի կամ գինի, որ խմում էին իրար կենաց՝ սրախոսելով ու երբեմն չարախոսելով, բայց անցած-գնացածի մասին և ճրագները վառելուն մոտ ցրվում տները, գործից դարձող իրենց ամուսիններին դիմավորելու: Վեց - յոթ տարեկան տղա-ները մարդահաշվի չէին, ուստի մայրերը նրանց տանում էին հետները այդ հավաքույթներին, ուր երգում էին Սայաթ - Նովայի երգերը, որ մա-նուկ տարիքից մնացին հիշողությանս մեջ՝ թե բառը և թե եղանակը: Մեզ հարևան էր Կուզիկ Քալին, մի պառավ կին, որ Նալբանդ Օղլան նշանա-վոր երգչի թոռն էր, նրանից ես սովորեցի իր պապի երգերից մեկը, որ հետո գրի առնելով տվի Ս. Քամալյանին (զավառագիր հեղինակ) և տպագրվեց «Արծազանք» թերթի մեջ: Նա պատմում էր, թե իր պապը գե-ղեցիկ տղամարդ էր, հիանալի նվագող, սազը ոչ թե առջևը առած՝ այլ քամակը բռնած էր նվագում և երգում, բայց սազը լարել չգիտեր, ուրիշ-ները պետք է լարեին ու տային իրեն: Ինձ ցույց էր տալիս իրենց տան հին ձեռագիրը, որ հիմա չեմ հիշում թե ինչ էր, բայց մեծ դիրք ուներ (գու-ցե Հայսմավուրը), շատ սովոր հատոր էր, հիմա կարող եմ հիշելով ասել, թե բուլորգիր էր, գլխագրերը մարդագիր ու ձկնագիր և լայն լու-սանցքների վրա վեղարավոր վարդապետներ նկարած գունավոր: Ես փորձում էի իմ փոքրիկ մատներով այդ գրերն ու պատկերները ընդօրի-նակել:

Հայրս քեֆ սիրող արհեստավոր էր, սիրում էր լավ խմել ու խաղ կանչել, սովորաբար թաթար բայաթիներ, մանավանդ երբ իր ազգական-ները գալիս էին գյուղից: Տունը դառնում էր մի հարսանքատուն, գինին

հոսում էր, խորովածի շամփուրները լիքը գալիս, դատարկ դուրս էին գնում, դուրս ու ներսի մարդը չէր տարբերում, ամենքին գինի և տաք միս էին հրամցնում և սուր խոսքը, կատակն ու տրտում բայաթին հաջորդում էին իրար: Գինուց ու երգից աչքս փակվում էր և լուսադեմին աչքս բանալով՝ տեսնում էի դեռ սուփրան (սփռոցը) զգած և խնողների կատարը տաք:

Մայրս, որ մի բարեպաշտ կին էր, նույնպես սիրում էր երգել երբեմն վրացերեն, բայց ավելի բայաթիններ: Շատ հաճելի ծայն ուներ և կանանց հավաքությունների անհրաժեշտ անդամն էր: Գիր չգիտեր, ինչպես ինքն էր ասում. «Մի մազ էր մնում, որ կարդալ կարենամ», բայց ինձ սովորեցնում էր ուղիղ հեզել ու կապել վանկերը. ես իրար ետևից ասում էի գրերը և նա կապում էր ու ասում բառը: Շատ գրասեր էր. այսինքն սիրում էր կարդացնել ու լսել: Լսելով թե հեռավոր թաղերից մեկում - Ս. Սարգսի թաղում - մեկը «Վերք Չայաստանի» ունի՝ հիշում եմ մի օր ձեռիցս բռնած գնաց այն թաղը և հազար աղաչանքով խնդրեց այդ գիրքը, որի մասին լսած էր, թե շատ լավ գիրք է և տուն բերելով ու հարևան կանանց գլխիս հավաքելով ստիպեց, որ կարդամ ու ես, ո՛վ զարմանք, ջրի պես կարդալ սկսա, որովհետև իմ խոսած լեզվով էր գրած, իսկ կանայք բոլորն անգրագետ, լսում էին մայիլ եղած, բերանների ջուրը գալով:

Այսպես է, որ մի անգամ էլ գտել ու գնել էր Սայաթ - Նովայի աժան հրատարակությունը և այնուհետև տուն ու դրկից դադար չէին տալիս ինձ՝ խնդրելով որ կարդամ ու լսեմ: Կարդալու հետ միասին քթերի տակ բարձրածայն սկսում էին երգել, ինչ որ գիտեին:

Մեր թաղի բարձունքից դեպի Քուռ գետի ափն իջնում էին երկու զանդվայր: Արևմտյան կողմից իջնող զանդվայրի կեսին էր շինած Ս. Կարապետ եկեղեցին, որի ծուխն էինք: Չայոս երեք անգամ զնացած էր Մուշ, Ս. Կարապետին ուխտի և մեր տան պատին շրջանակի մեջ կախված էր խրիմյան Չայրիկի կոնդակը՝ հորս անունով:

Ես այդ զանդվայրով էի ներսիսյան դպրոց գնում, որ Քուռ գետի մյուս ափին էր: Զանդվայրի վրայ մի խանութ կար, ուր նստում էր մի ծերունի, հիմա կարծում եմ՝ մոտ 70 տարեկան: Մի օր, երբ դպրոցից տուն էի դառնում, տեսա, որ խանութին մեջ գինին դրած ու խորովածն առջևնին՝ նստած են մարդիկ և ծերունուն երգել են տալիս: Կանգնեցի. երգում էր Սայաթ - Նովայից «Դու եմ գլխեն իմաստուն իս...»: Եղանակը անմիջապես սովորեցի և խաղի վերջին՝ դունդունալով շարունակեցի ճամփաս: Այդ եղանակը, հետո երևաց, որ միայն ես գիտեմ: Արդեն հասուն հասակիս Սայաթ - Նովա երգող չկար այլևս: Մեր սիրելի Յովհ. Թումանյանը

շատ էր սիրում այդ եղանակն ու երգը և ամեն անգամ, որ մրա սեղանին նստած խնում էինք Կախեթի գինին՝ ստիպում էր, որ երգեմ այդ երգը: Ինձանից սովորեցին շատերը: Չայաստանի Չանրապետության շրջանին, Սպիրիդոն Մելիքյան, որ իմ բարեկամն էր, խնդրեց, որ Սայաթ - Նովայի եղանակները երգեմ ծայնագիր ընկալուչ մեքենայի առջև. երգեցի, ինչ որ գիտեի. ու նա «Դու եմ գլխեն»-ը: Այնուհետև տարագրվեցանք: Մի քանի տարի առաջ ուրախությամբ տեսա, թե այդ հին եղանակը մեծ տաղանդով օգտագործած է երաժիշտ Սպենդիարյան իր սքանչելի էնգելիին իբր մուտք: Այսպիսով ակամա փոխանցող եղած եմ իմ վաղեմի սերունդի մի հին եղանակի:

Իմ մայրենի լեզուն Արարատյան բարբառն է եղած, որովհետև Չավաբարի բնակչության մի ստվար մասը Երևանի գաղթականներ են, բայց փոքր հասակից շարունակ լսած եմ Թիֆլիսի բարբառը, տատիս քույրերը բնիկ թիֆլիսցիների հարս գացած էին և նրանց լեզուն վրացերեն էր կամ Թիֆլիսի բարբառը: Այդ բարբառը դեռ բավական կենդանի էր ութսունական թվերին: Իննսնական թվերին Գ. Սունդուկյանի թատերակները հասկանում էին, բայց շատ քիչ վայելող կար, որովհետև Թիֆլիսի բարբառը հոգեվարքի մեջ էր: Այսօր անկասկած մեռած է արդեն այդ լեզուն, քանի որ այդ բարբառով խոսող չմնաց. բարեկեցիկ խավը ռուսախոս դարձավ, իսկ խոնարի խավը խառնվեցավ կռոներին, խոսում է գրական լեզու կամ Երևանի բարբառ: Ես ուրեմն մի մնացորդն եմ այն հին օրերի, որ դեռ կարող եմ լավ հասկանալ այն լեզուն ու բարբառը, որ երևում է Սայաթ - Նովայի գործի մեջ:

Եթե ասածիս ավելացնեմ, որ երեք տարի Պարսկաստան մնալով և մասամբ հմտանալով պարսիկ լեզվին ու գրական արվեստին՝ կարող եմ քիչ ու շատ գնահատել Սայաթ - Նովայի արվեստը, որ պարսկական է. որ ես կազմած եմ Սայաթ - Նովայի համաբարբառը, մի ստվար գործ, ուր նշանակած եմ, թե այս կամ այն բառը ո՞ր երգերի մեջ է կիրարկված, որ վերջապես ես եմ կազմած Չայ Գրողների Ընկերության լույս ընծայած Սայաթ - Նովայի երգերի բառացանկը և հատկապես լավ ծանոթ եմ Գ. Չախվերդյանի առաջին հրատարակության՝ կարծում եմ բավական կը համարվի, որ ներողամիտ աչքով նային մեծ աշուղի երգերի մեկնության այս փորձին: Եթե կամ մի քանի մարդ, թե՛ դուրսը և թե՛ ներսը՝ Չայաստանում, որ կարող են այսպիսի գործ ձեռնարկել՝ դրանցից մեկը ես եմ:

Այսքան հարմարության կողքին, սակայն, ունիմ և մի քանի անհարմարություններ: Զեռքիս տակ չէ Գ. Չախվերդյանի առաջին հրատարակությունը, որ մի անմահ գործ է իր խնամքով և հմտությամբ. դրան փո-

խարհնում է պրոֆ. Ռ. Աբրահամյանի նորերս թեհրան լույս ընծայած «Սայաթ - Նովայի տաղերը», որ արտատպություն է Գ. Հախվերդյանի հրատարակության և որին կցված է մի լրացուցիչ և վերստուգված բառարան: Չունիմ ձեռքիս տակ և Սայաթ - Նովայի վրացերեն երգերի ժողովածուն, որ լույս է տեսած Թիֆլիս 1918 թ. և Գ. Լևոնյանի լույս ընծայած Սայաթ - Նովայի երգերը, որ լույս է տեսած Երևան՝ պետական հրատարակությամբ: Ավելորդ է ասել, թե ձեռքիս տակ չունիմ նաև ոչ մեկ լրագրական հոդված Սայաթ - Նովայի մասին, նույնիսկ իմ գրածները Կովկասում: Եվ արդեն հետազոտություն չէ, որ պետք է գրեն, այլ գիտուններին նյութ, իսկ սոսկական ընթերցողին դյուրություն պիտի տամ Սայաթ - Նովայի երգերը լավ հասկանալու և, եթե հաջողիմ՝ խորապես ներապրելու:

Ամբողջական երկեր, հ. II, էջ 17-22

Ը. Տաղ

*Դու՛ն է՛ն զըլխեն իմաստուն իս, խիլքդ հիմարին բար մի՛ անի,
երազումըն տեսածի հիդ մեզի մի հեսար մի անի,
ես խոմ է՛ն զըլխեն երած իմ, նուրմեկանց քարաբ մի անի,
Թե վուր, գիդիմ, բեզարիլ իս, ուրիշին սարաբ մի անի:*

*Չկա քիզ պես հուքմի հեքիմ, դու՛ն Ռոստոմի Ձալ, թաքավուր.
Ասկըղ ասկերումն գոված, համ դու՛ն իս գոզալ, թաքավուր.
Թե էսանց էլ սուչ ունենամ՝ զըլուխս արա՛ տալ, թաքավուր.
Ստիկ արա՛ քու Ստիղծողին՝ նահախ տիղ դազար մի՛ անի:*

*Յարալուն հեքիմն էնդուր գուզե՛ դիղ տալու է, ցավ տալու չէ.
Քանի գուզե արբար ըլի՝ դուլըն աղին դավ տալու չէ.
Դու քու սիրտըն իստակ պահե՛, յադի խոսկն ավտալու չէ.
Աստուծու սերն կանչողի պես դըռնենեղ ջուղար մի՛ անի:*

*Ամեն մարդ չի կանա խըմի իմ ջուրն՝ ուրիշ ջըրեն է.
Ամեն մարդ չի կանա կարդա իմ գիրըն՝ ուրիշ գրեն է.
Բունիաթս ավագ չիմանաս՝ քարափե՛ քարուկըրեն է.
Սելավի պես՝ առանց ցամքիլ, դու՛ն շուտով խարաբ մի՛ անի:*

*Քանի գուզե քամին տանե՛ ծովենն ավագ չի պակսի.
Թեկուզ ըլիմ, թեկուզ չըլիմ՝ մեջլիսներում սագ չի պակսի.
Թե կու պակսիմ, քիզ կուպակսիմ՝ աշխարհիս մե՛ մագ չի պակսի.
Սայաթ-Նովու գերեզմանն Հինդ, Հարաշ, Արար մի անի:*

Ողբուն

Սայաթ-Նովայի 8-րդ տաղը շատերի ուշադրությունն է գրաված: Մի քանիսը կարծում են, որ այդ տաղով երգիչը դիմում է Հերակլ թագավորին և խնդրում, որ ողորմած լինի իր հանդեպ և չարտաքսե իր պալատից: Այս վարկածի հեղինակն է Գ. Ասատուր, որ այնքան երախտիք ունի մեր երգչի կյանքի և գործի հետազոտության մեջ: Նրան հետևում են Դ. Ջավրյան և Ռ. Աբրահամյան, առաջինը «Վեմ» պարբերականի (Բ. տարի, թիվ 13), երկրորդն իր հառաջաբանի մեջ, որ կցած է Սայաթ-Նովայի նոր հրատարակության (էջ 16-18): Տեղը չէ մանրապատում հերքելու այս վարկածը, մի քանի դիտողություն բավական են համարում:

Հերակլ վրացի էր և հայերեն չգիտեր. ի՞նչ իմաստ ուներ նրան դիմել մի հայերեն Տաղով, երբ կարող էր վրացերեն գրել ու երգել: Մեր երգիչը հեղաշրջում ստեղծած է վրաց գրականության մեջ, հիմք դնելով վրացերեն աշուղական գրականության և իր ազդեցության ենթարկելով իր ժամանակի և հետագա վրացի բանաստեղծներին: Արդ մի հեղինակ, որ այն աստիճան վրացերեն գիտեր, որ մինչև վերջերս վրացիները նրան համարում էին վրացի, ինչո՞ւ պետք է հայերեն դիմեր իր հովանավորին: Այս տաղի մեջ կա մի տող, ուր երգիչն ասում է.

Չկա քիզ պես հուքմի հեքիմ, դու՛ն Ռոստոմին Ձալ, թաքաւուր.

«Թագավոր» բառը և այն հանգամանքը, որ Ձալի որդի Ռոստոմը (Շահնամեի հռչակավոր հերոսը) տղամարդ է՝ սխալ ճամփու մեջ է դրած քննիչներին և ուրիշ տեղ է տարած, քան պետք էր: Եթե ուշադիր կարդային հետևյալ տողը, որ ասում է.

Ասկըղ ասկերումն գոված, համ դու՛ն իս գոզալ, թաքավուր.

Կտեսնեին, որ «գոզալ» բառը անտեղի է Հերակլ թագավորին որակելու համար: Այդ բառը, որ նշանակում է գեղեցիկ, գեղուհի, Սայաթ-Նովան կիրարկում է միմիայն կանանց համար:

Միայն այս երգի մեջ չէ, որ մեր երգիչը իր սիրածին «թաքավուր» է անվանում: Ահավասիկ ԽԴ. երգն, որ ասում է. «Թաքավուր իս բարևակալ»: Ահա ԽԵ. երգն, ուր ասում է. «Դու՛ն մե՛ թաքավուր իս, ես մե՛ խեղճ դավրիշ»: Ահա Է. երգն, ուր ասում է. «Թաքավուր իս դուլ սպանող»: Նաև

միայն այդ երգի մեջ չէ, որ երգիչն իր սիրեկանին համարում է Ռոստոմի Չալ. ահա Խ. Ը. տաղն, ուր ասում է. «Մարթ հետո չի կանա խոսի, Ռոստոմի Չալ արմանելու»:

Այս համեմատությանց մեջ երգիչը Ռոստոմի ուժն ունի նկատի, որ համեմատում է իր սիրածի հզոր և անդիմադրելի ազդեցության հետ: Մեր Խորենացու ասելով 120 փղի ուժ էին վերագրում Ռոստոմին: Նույն իմաստով է կիրարկված և «թաքավուր» բառը, նկատի ունենալով արքաների անսահման իրավունքը հպատակների կյանքի և մահվան վրա: Կարծում եմ այլևս կասկածի տեղիք չի մնում, որ ինչպես մյուս երգերում՝ նաև այս տաղի մեջ երգիչն իր սիրածին նկատի ունի:

Երգիչը մի վրիպական ընթացք ունեցած է իր սիրածի հանդեպ, որի համար և բողոքում է գեղանի անողոքին: Երգիչն ասում է.

Դու՛ն է՛ն գլխէն իմաստուն իս, խելքդ հիմարին քար մի անի.

էրագումըն տեսածի հիդ մեզի մէ հեսար մի անի.

ես խոմ է՛ն գլխէն էրած իմ, նուրմեկանց քարաք մի անի,

Թէ վուր, գիղիմ, բեզարիլ իս, ուրիշին սարաք մի անի:

«էն գլխէն» նշանակում է սկզբից ի վեր. «քար» պարսիկ բառով հորինած «քար անել» ասույթը նշանակում է համեմատության ղնել: «էրագումըն տեսածի հիդ» ասությունը կապ ունի կենցաղական մի պահվածքի հետ: Երբ մեկը մեկ ուրիշի վերագրում է մի չեղած անախորժ վարմունք, մեղադրվողն ասում է՝ «էրագ ես տեսե՛լ»: Ուզում է ասել «ասածդ իրական չէ, այնպէս բան չկա և չէ եղած. կարելի է երագումդ ես տեսել և տեսածդ իրական ես համարում»: «Յեսար» արաբ բառով հորինած ասույթը նշանակում է հաշվել, հաշիվ անել. «մի հեսար անել» նշանակում է նույն համարել: «Լավն ու վատը նրա համար մի հեսար է», - ասում է բարբառը, այսինքն միևնույն է, նույն հաշվի է: «Նուրմեկանց» նշանակում է նորից, կրկին, իսկ «քարաք» պարսիկ բառը նշանակում է «խորոված» և նրանով կազմած ասույթը - քարաք անել - այստեղ նշանակում է ոչ թե խորոված անել, այլ այրել ու խորովել: «Բեզարել» պարսկարմատ բառը նշանակում է հոգնիլ, իսկ այս տաղի մեջ՝ հագենալ մեկից, այլևս հաճույք չզգալ նրանից, սառչել: «Սարաք» արաբ բառը նշանակում է պատճառ, իսկ իրանով կազմած ասույթը - սարաք անել - նշանակում է իբր պատճառանք կիրարկել որևէ անձ կամ դիպված:

Ինչպես վերն ասացի՝ երևում է, որ երգիչը մի անախորժ վարմունք է ունեցած իր սիրածի հանդեպ. «մի «արարմունք», ինչպես որակում է սիրածը Ի. տաղի մեջ: Մեկը օգտագործած է այս պարագան և չարախո-

սած է երգչի մասին նրա սիրած կնոջ առջև: «Դու նոր չէ, որ պիտի իմաստունն դառնաս,- ասում է երգիչն իր սիրածին,- դուն իմաստուն ես է՛ն գլխից», ուստի խելքդ չարախոս հիմարի հետ դու մի բաղդատիր: Քո դժկամ վերաբերումն իմ հանդեպ ենթադրում է վարմունք ու պահվածք, որ իրոք չկա և չի եղած: Դու ինձ համարում ես մի մարդ, որ չեմ իրոք: Քո կարծած մարդը երագում ես տեսած. նրա հետ ինձ նույն մի համարիր: Ես արդեն քեզանից վաղուց այրված եմ, նորից ինձ մի այրիր ու խորովիր, այս անգամ էլ համարելով ինձ մի մարդ, որ չեմ բնավ: Ինչպես տեսնում եմ (թէ վուր, գիղիմ) հոգնած ես ինձանից, այլևս քեզ հաճելի չեմ, ուրիշին զուր տեղը պատճառ մի բռնիր, մի ասիր, թե իմ արարքն է պատճառ քո դժգոհության: Երգիչը գիտակից է, թե իր, թե սիրածի կացության: Նա չի հավատում, որ իր անախորժ վարմունքը բավական պատճառ լինի սիրած կնոջ սառնության իր հանդեպ: «Ուրիշ» բառով նա իրան է մատնանշում: Նա ուզում է ասել՝ «դու ես, որ փոխված ես, ոչ թե ես: Քո հանցանքն ուրիշի, այսինքն իմ վրա մի գցիր»:

Սայաթ-Նովան խոսքի տակ մնացող մարդ չէր. իր լեզվի պատճառով շատ անախորժությանց էր հանդիպած: Նաև այս անգամ նա խոսքի տակ չի մնում: Բայց ձեռը կարժ է: Դիմացն իր սիրածն է և ոչ թե մի արքայագուն, ինչպես Յերակլի որդին, որին՝ մի վիրավորիչ վարմունքի համար՝ տեղն ու տեղը և հանպատրաստից մահացու ծաղրեց ու հարվածեց երգիչն իր վրացերեն մի տաղով:

Բայց սիրածն ավելի հզոր էր, քան արքան և արքայագունը:

Գուցե երգիչն ինքն իրավունք ուներ, բայց վեճը չի շարունակում, այլ մի կողմից գովում ու պանծացնում, մյուս կողմից բողոքում է սիրածին: Երգիչն ասում է.

Չկա քիզ պես հուքմի հեքիմ, դուն Ռոստոմի Չալ, քաքավուր,

Ասկրդ ասկերումն գոված, համ դուն իս գոզալ, քաքավուր.

Թե էսանց էլ սուչ ունենամ՝ գըլուխս արա՛ տալ, քաքավուր.

Ստիկ արա քու Ստիղծողին, նահախ տիղ դազաք մի՛ անի:

«Դուքմի հեքիմ» բացատրությունը իբր պարսկերեն շարադասություն՝ անիմաստ և անտեղի է առաջին տողի մեջ: Եղած ձևով այդ երկու բառը նշանակում է դատավորի կամ մարդի պետի հրաման: Որով անտեղի են այդ տողի մեջ: Անիմաստ կլինի, եթե հեքիմ բառն առնենք իմաստուն, գիտուն կամ բժիշկ նշանակությամբ, որովհետև ի՞նչ իմաստ կարող է ունենալ, եթե մի գեղանի կնոջ ասենք. «Չկա քեզ նման իմաստունի, գիտունի, բժիշկի կամ մարդպետի հրաման». ինձ թվում է, որ Սայաթ - Նովան այդ արաք պարսկաձև բառերուն կցումով պարզապես

ուզում է ասել՝ «չկա քեզ նման իշխեցող», այսինքն՝ իմաստի շեշտը դնում է հեքիմ բառի վրա, որ նշանակում է նաև թե դատավոր և թե մարզի վարիչ, պետ: Իր սիրածին երգիչը վերագրում է բացարձակ իշխանություն (անշուշտ իր վերաբերմամբ): Այդ ցույց է տալիս և «թաքավոր» մակդիրը: Նրան վերագրում է և անհաղթելի ուժ, քանի որ անվանում է Ջալի որդի Ռոստոմ: Բայց այդ ուժն անշուշտ մարմնական չէ, այլ հմայքի տիրական ուժի մասին է խոսքը: «Ասկ» բառը, որ «ազգ»-ն է, այստեղ նշանակում է տոհմ: Քո տոհմն, ասում է երգիչը, գովանի տոհմ է մյուս տոհմերի շարքում. բայց դու ոչ միայն ծագումով բարետոհմիկ ես, այլև միաժամանակ գեղանի ես, գեղուհի (գոզալ):

«Համ» մակբայը նշանակում է «և, նաև»: «Եվ ազգդ է ազգերի մեջ գոված, և ինքդ էլ գեղեցիկ ես», - ասում է երգիչը: Այս տողը ցույց է տալիս, թե մեր երգչի սիրած կինը հասարակ դասին չէր պատկանում: Խոսք կա այն մասին, թե Սայաթ - Նովայի սիրածը քուրքչու կին է եղած, անունը Տալիթա: Անհմարին չէ այս պարագան: Բայց կի՞նն է եղած իր երգերի գեղուհին. - այս է խնդիրը: Քուրքչի նշանակում է քուրք կարող, այսինքն՝ ոչխարի մորթուց վերարկու կարող: Չեմ կարծում, որ քուրքչու կինը ազգերի մեջ գոված մի ազգից սերած լիներ և կարենար սպառնալ երգչին թե՛ քեզ «փարա փարա», այսինքն՝ կտոր կտոր անել կտամ:

Իր վրացերեն երգերի մեջ մեր երգիչը խոսում է մի կնոջ մասին, որի անկայուն սերը վիշտ է պատճառում իրան, որի մասին ասում էին, թե քսաներեք սիրական ունի: Կարող է պատահել, որ դա լիներ Տալիթան, բայց նա չէր կարող այն բարձր ներշնչման աղբյուրը լինել, որ տեսնում ենք Սայաթ-Նովայի տաղերի մեջ: Գուցե Տալիթային է ակնարկում գեղուհին, երբ ասում է մեր երգչին իր տաղի մեջ. «Քու ասածը ուրիշ տեղ է», այսինքն ես չեմ քո ուզածը և լինել չեմ կարող. ես թագավորի թագին վայել թանկագին քար եմ. այո, Սայաթ-Նովայի յարն եմ, բայց քո ասածը ուրիշ տեղ է, ուրիշ տեղ: Ես չեմ կարծում, որ Պետրարկան ողջախոհ մեռավ, բայց նա ունեցավ իր Լաուրան, որին չհասավ: Տալիթան ոչ մեկ արգելք էր, որ մեր երգիչն իր սրտի խորքում մի խորան ունենար, ուր թագավորի պես և Ջալի որդի Ռոստոմի ուժով իշխում էր իր անհասանելի և մեզ անծանոթ գեղուհին: Մենք դեռ առիթ կունենանք տեսնելու, որ սիրածը մի բացառիկ կին էր իր դիրքով, ծագումով ու հմայքով:

«Էսանց» նշանակում է «այսուհետև», իսկ «սուչ» թուրք բառը նշանակում է մեղք, վրիպանք, հանցանք: Երգիչն ասում է՝ եթե այսուհետև մի հանցանք ունենամ գլուխս կտրել տուր, ով թագավոր, որով անուղղակի համաձայնում է , թե մի արարմունք է ունեցած սիրածի հանդեպ և

խոստանում է այնուհետև լավ պահել իրան:

«Նահախ» արաբական արմատով կազմված պարսիկ բառը նշանակում է անիրավացի, իսկ «ղազաբ», որ արաբերենի մեջ նշանակում է զայրույթ, բարկություն, վրդովմունք, մեր բարբառների մեջ ստացած է «պատիժ» իմաստ: «Մտիկ արա քու ստեղծողին» ասությունը, ողորմի բանաձև է: Ունինք նույնիմաստ «Վերևն Աստված կա» ասությունը, որ կիրարկում են անիրավ վարվողին զգաստության բերելու համար: Այս ասությանց իմաստն այն է, թե Աստված անարդար գործ չի սիրում, նա պատժում է անիրավ մարդոց: Նայիր վեր, քո ստեղծողին և անիրավ տեղը պատիժ մի սահմանիր: Վերևն Աստված կա, մեղքացիր:

Հետևյալ տունը թե բացատրություն է, թե հորդոր, թե ողորում.

***Յարալուն հեքիմն էնդուր կուզէ՝ դիդ տալու է, ցավ տալու չէ,
Քանի գուզէ արբար ըլի՝ դուլըն աղին դավ տալու չէ.***

***Դու քու սիրտըն իստակ պահե, յադի խոսկը ավտալու չէ.
Աստուծու սերն կանչողի պես դրոմնմեղ քուղաբ մի՛ անի:***

«Յարալու» թուրք բառը այստեղ նշանակում է վիրավոր: «Արբար» արաբ բառը «բարբ» բառի հոգնակին է և բառացի նշանակում է տերեր, բայց այդ բառը բռնավոր իմաստով է կիրարկում Սայաթ-Նովան: Եվ արդեն անկարելի է իր բուն իմաստով առնել այդ բառը, քանի որ բայը եզակի է և հոգնակի առումով տողն անիմաստ կդառնա: Նույն բառը ուրիշ երկու տեղ ևս կիրարկած է մեր երգիչը, բայց և ոչ մի տեղ «տերեր» նշանակությամբ: Այսպես՝ ԼԳ. տաղի մեջ. «Սիրունությունդ էլաւ արբար», այսինքն՝ գեղեցկությունդ բռնավոր դարձավ, տիրական եղավ: ԺԱ. երգի մեջ ասում է. «Սայաթ-Նովեն իմ, էնտուր կու լամ դարդիրս արբար», ուր վերջին բառը «տերեր» չի կարող նշանակել: «Յադ» թուրք բառը նշանակում է օտար, նաև թշնամի, իսկ «քուղաբ» արաբ բառը նշանակում է մերժում, բայց մեր բարբառների մեջ ստացած է «պատասխան» իմաստ: «Ջուղաբ անել» ասույթը այստեղ նշանակում է ձեռնունայն հեռացնել: Հատուկ մեկնաբանության կարիք ունի «Աստուծու սերը կանչողի պես» բացատրությունը: Թիֆլիս երբ մեկը երկարատև հիվանդություն է ունենում մերձավորները դիմում են գրբացին իմանալու, թե ո՞ր խաչից է այդ հիվանդությունը, այսինքն՝ ո՞ր սուրբից: Երբ իմանում են, թե այս ինչ սուրբից է, այն ժամանակ հիվանդին մի երկար ճերմակ շապիկ են հագցնում և գլխին մի կարմիր կամ ճերմակ փաթաթան կապում: Հիվանդը ման է գալիս դռնեղուռ թե իրենց և թե մերձակա թաղե-

րում և ողորմություն է հավաքում: Այդ հիվանդներին ասում են Աստծու սերը կանչող: Սովորաբար ոչ ոք մերժում է նրանց ողորմություն տալ, մեծ անսրտություն է նրանց ձեռնունայն դռնից հեռացնելը, որովհետև իրենց հավաքած դրամով նրանք իրենց հասակովը մեկ կամ մի քանի երկարությամբ մոռ են թափել տալիս և այդ մոռը տանում են վառում այն եկեղեցում, ուր գտնվում է հիվանդություն ուղարկող սուրբերի պատկերը: Շատ անգամ այդ սուրբը Թիֆլիսից հեռու է գտնվում և պետք է շաբաթով ուխտի գնալ ու մնալ այնտեղ: Աստծու սերը կանչողին մերժել նշանակում է նրանց մահու պատճառ դառնալ, հնար չտալ, որ առողջանան:

Երգիչն ասում է, վիրավորը բժիշկ նրա համար (էնտուր) է ուզում, որ դեղ տա իրեն և ոչ թե մի նոր ցավ. այսինքն՝ ես քեզ տենչում եմ, որ իմ վիրավոր սիրտը բուժես և ոչ թե քո անիրավ պատիժով մի նոր ցավ բերես սրտիս: Որքան և տերը բռնավոր լինի՝ ստրուկը իրավական վեճ պետք է հարուցանե իր աղայի դեմ: «Դավ տալ» ասույթը «դավի տալ», «դավի անել» ասույթի իմաստով է կիրարկված, որ նշանակում է իրավական վեճ հարուցանել: Ուզում է ասել. դու թագավոր ես, իշխեցող ես ինձ վրա և անիրավ է քո տված պատիժը (հարաբերության խզումը), բայց ես, որ քո ստրուկն եմ, գիտեմ թե իրավական վեճ հարուցելու իրավունք չունեմ, միայն խորհուրդ եմ տալիս, որ քո սիրտը մաքուր պահես, թշնամու խոսքին չհավատաս ու նաև ինձ չմերժես քո դռնից հեռացնելով, ինչպես անում են անկարեկիր մարդիկ Աստծու սերը կանչողներին: Թեև ինքն իրավացի է և թյուրիմացության զոհ, բայց երգիչը խուսափում է վեճի բռնվիլ իր սիրածի հետ: Լավ է համարում ողոքել, քան իրավունք պահանջել, մանավանդ որ վերը արդեն ասած է պետք եղածը, այսինքն, որ իրան վերագրվածն անհիմն է և երազում տեսած մարդու վարմունք:

Այնուհետև մեր երգիչը իր արժեքին բարձրորեն գիտակից՝ այդ արժեքը դնում է սիրածի առջև.

**Ամեն մարդ չի կանա խըմի իմ ջուրն՝ ուրիշ ջրերն է.
Ամեն մարդ չի կանա կարդա իմ գիրը՝ ուրիշ գրեմ է.
Բունիաթս ավազ չիմանաս՝ քարափե քարուկըրեմ է.
Սելավի պես՝ առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի:**

«Չի կանա» նշանակում է չի կարող: «Բունիաթ» արաբաձև պարսկարմատ բառը նշանակում է շենքի հիմք, հիմունք: «Չիմանաս» նշանա-

կում է չկարծես: Բնագրի մեջ տպված է «քարափ է», այսինքն ժայռ է, վեճ է: «Սելավ» պարսիկ բառը նշանակում է հեղեղ, որ կազմվում է հորդ անձրևի ջրերից: «Առանց ցամքել» բառերը ոչ թե մակբայ են, այլ ածական. ոչ թե առանց ցամքելու դու մի ավերիր, այլ չցամքող հեղեղի պես դու մի ավերիր: «խարաբ» արաբ բառը նշանակում է ավեր, ավերած, իսկ «խարաբ անել» ասույթը՝ ավերել, փչացնել: Վերջին տողի մեջ «շուտով» բառը Թիֆլիսի բարբառինը չէ: Հախվերդյանի հրատարակությունը չունի մոտոս. որքան հիշում եմ այնտեղ «մեբաշ» բառն է կիրարկված, որ նշանակում է հանկարծ, անսպասելի կերպով: Թիֆլիսեցին «շուտ» բառի տեղ «չուստ» բառն է կիրարկում. «չուստ արա», այսինքն՝ «շուտ արա»: Առածն ասում է «ով չուստ՝ նա կուշտ»:

Այս քառյակի առաջին տողն այն իմաստն ունի, ինչ որ երբ ասում են. «նրա կերած կաթն ուրիշ կաթ է», այսինքն նա սովորական մարդ չէ, նույն իմաստն ունի և երկրորդ տողը, որով ուզում է ասել, թե ինքը բացառիկ մարդ է ոչ միայն իր բնույթով, այլև իր իմացությամբ: Նա չի կարող համեմատվիլ սովորական մարդոց հետ, մանավանդ երազումը տեսածների հետ: Իր հիմքը ժայռ է և քարուկիր և ոչ թե ավազ. ուզում է ասել, ես հեղհեղուկ գագուճի տեր մեկը չեմ, իմ սերն ամուր է և հաստատուն, իմ նկարագիրը կայուն է սերիս մեջ. քո զայրույթի և անիրավության անդադրում հեղեղով մի ավերիր ամրակուռ շենքը: Գիտեմ քո արժեքը, քո ուժն ու զորությունը, բայց ճանաչիր նաև ինձ. անարժեք մի մարդ չեմ ես. ոչ ամենքը կարող են իմ ջուրը խմել և իմ գիրքը կարդալ:

Սրան հաջորդում է վերջին տունը, որ մի անգին քար է մեր գրականության մեջ:

**Քանի գ՛ուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի պակսի.
Թեկուզ ըլիմ, թեկուզ չըլիմ՝ մեջլիսներում սազ չի պակսի,
Թե կու պակսիմ, քիզ կուպակսիմ՝ աշխարհիս մե մազ չի պակսի.
Սայաթ -Նովու գերեզմանն Հիմդ, Հարաշ, Արաբ մի անի:**

Հավերժության շունչն է փչում այս քառյակի մեջ և հավերժության բարձունքից ու խորքից է նայում երգիչն աշխարհին և կյանքին: Մահվան հողմը դարձնում է ծովափի ավազը՝ ցան ու ցիր, բայց անհատնում է ծովի ավազը և տարածն ու ցրածն աննշան: Հազարներ մեռնում են, բայց կյանքը տևում է անդադրում: Եվ հաճույքը, երգն ու նվազը նույնպես տևական են՝ լինեմ, թե չլինեմ: Իմ պակասելով՝ հավաքույթներում սազը չի պակսի, միշտ նվազող ու երգիչ կգտնվի, որ իմ տեղը գրավե:

Բայց իմ անհետացումով քեզ է, որ ես կպակասեմ, աշխարհից մի մագ անգամ չի պակասի: Ինձ նման սիրահար, ինձ նման բացառիկ մարդ դու չես ունենա: Աշխարհը կունենա, որովհետև նա հավերժական է, բայց դու անցավոր ես՝ հողմավար ավազի նման և քո կարծատն կյանքում ինձ նման ուրիշին չես պատահելու, ուստի ինձ մի դներ այնպիսի վիճակի մեջ, որ թողնեմ հայրենի միջավայրս ու քեզ և գնամ թափառիմ Յիմն, Յաբաշ և Արաբ, այն տեղերը մենքիմ ու թաղվիմ: Իր գերազանցության և անփոխարինելիության մասին նա խոսում է և Ի. տաղի մեջ ասելով իր սիրականին. «Կու մեռնիմ՝ չիս տեսնի Սայաթ - Նովի պես», այսինքն՝ կմեռնիմ և ինձ պես մի ուրիշին այլևս չես հանդիպելու. ուստի մի լինիր անողոք և սիրամերժ, անդրադարձիր իմ արժեքին և մեր անցավոր կյանքին ու աշխարհին:

Ամրողական երկեր, հ. II, էջ 101-110

Գրիգոր Նարեկացի և Կորյուն

Չանճարը բնածին է, բայց իր ոգեկան սնունդն ստանում է միջավայրից: Միջավայր ասածը այն բնությունն է և մշակույթը, որի մեջ աճում է հանճարը: Երբ մատենագրի մասին է խոսքը՝ ուրիշ ազդեցությանց կարգին կարևոր է որոշել գրքերի ազդեցությունը հեղինակի վրա: Ուստի գրականության պատմության մեջ աղբյուրների հետազոտությունը հիմնական աշխատանք է որևէ հեղինակի ուսումնասիրության համար: Նպատակս է որոշել, թե Գ. Նարեկացին կարդացած է Ս. Մաշթոցի վարքը, որ գրած է Կորյուն, հինգերորդ դարում, 443 թ. հետո:

Գ. Նարեկացին մեծ ընթերցող եղած է: Այդ մասին ինքն իսկ վկայում է Աստվածածնին նվիրված ներբողի վերջում, իր ընծայական գրության մեջ, դիմելով «Լերինն Մոկաց հզոր դիտապետին»՝ Ստեփանոս Եպիսկոպոսին. «Եւ ինձ տառապելոյս օգնեա՛ աղօթիւք, որ *յարածամ դեգերիմ յընթեռնուլն* եւ գործոյ եւ ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ»^{*}: Անհնարին չէ, ուրեմն, որ իր հարածամ դեգերումների ընթացքին Գ.

^{*} Եվ ինձ՝ տառապածիս օգնիր աղոթքով, որ հարածամ դեգերում եմ ընթերցումի և գործի համար փոքր ժամանակ իսկ չեմ սահմանում և որոշում (Գ. Նարեկացույ երկրորդ մատենան ճառից, Վենետիկ, 1827, էջ 85):

Նարեկացին կարդացած լինել Կորյունի գործը: Բայց մակաբերումը մեծ արժեք չունի գրականության պատմության մեջ. կարևորը անհերքելի հետքերն են: Նույն Ստեփանոս Եպիսկոպոսն է, որ հատուկ գրությամբ խնդրած է Գ. Նարեկացուց գրել Ապարանից Խաչի Պատմությունը, որ և կատարած է, կցելով իր գրության երկու ներբողյան, մեկը՝ Խաչի, մյուսն Աստվածածնի մասին:

Ապարանից Խաչի Պատմության մեջ Գ. Նարեկացին խոսում է Դավիթ անունով մի եպիսկոպոսի մասին, որ Մոկաց աշխարհում մեռած էր սուրբի հռչակով: Այդ սուրբի եղբոր թոռն էր հիշյալ Ստեփանոս Եպիսկոպոսը, որի մասին գրում է, թե նույն երանելի Դավիթ եպիսկոպոսից ստացած էր իր ուսումը և նրա «աստվածամերձ» ձեռքով ձեռնադրված էր և վանականների վերակացու կարգված: «Որ անոր (այսինքն Դավթի) նմանութիւնը նկարագրեց իր անձի մէջ՝ գեղեցկապէս հետեւելով իր նախնիներին»: Եվ շարունակում է. «Իսկ ի դատումն ընտրութեան վարժից՝ *առաքելագէտ և մարգարեածանօթ և աւետարանաժառանգն* գիտութեանց և այլոց բազմաց սոփեստից վայելչապէս համբուրիւ պատահեալ»^{*}: Մեր հին մատենագրության մեջ սոփեստ կոչվում են այն վարդապետները, որոնք ծանոթ էին արտաքին գիտությանց և իմաստասիրական գրականության: Նարեկացին ուզում է ասել, թե Ստեփանոս Եպիսկոպոսը ոչ միայն ծանոթ էր Ս. Գրքին (Ավետարան, Գործք և Թուղթք Առաքելոց և Մարգարեներ), այլև պատահած էր «համբուրիւ», այսինքն կարդացած էր սիրով բազմաթիվ ուրիշ սոփեստների գործերը:

Չայոց, Վրաց և Աղվանից գրերը հորինելուց հետո Ս. Մաշթոց անցնում է Աղվանից աշխարհ, տեսնում է երկրի Երեմիա եպիսկոպոսին և Արսվաղէ թագավորին, որոնք սիրով ընդունում են նրա առաջարկը մանուկներ հավաքելու և նոր դպրությամբ կրթելու: Երբ աշակերտները հավաքվում են, Երեմիա եպիսկոպոսը շտապով (վաղվաղակի) ձեռնարկում է Ս. Գրքի թարգմանության, «որով անդէն,- գրում է Կորյուն,- յական թօթափել վայրենամիտ եւ դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղւանից *մարգարեագէտք եւ առաքելածանօթք եւ աւետարանաժառանգք* լինէին եւ ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւրք անտեղեակք»^{**}:

Ընդգծածս բառերը, որ Կորյունին հատուկ են և իր իսկ բարդածն են,

^{*} Գ. Նարեկացույ երկրորդ մատենան ճառից, էջ 14-15:

^{**} Կորիւն, Վարք Մաշթոցի, Երուսաղեմ, 1930, էջ 43. «որով ակնբարթի մեջ վայրենամիտ, դատարկասուն և անասնաբարոյ Աղվանից աշխարհը դառնում է. մարգարեագետ, առաքելածանոթ և ավետարանաժառանգ և Աստծո ամեն ավանդածներին ոչ անտեղեակ»:

մենք տեսանք վերը Գ. Նարեկացու գրության մեջ: Ոչ մեկ կասկած, որ Նարեկացին կարդացած է Կորյունի գործը. ուրիշ որևէ գրության մեջ այդ բառերին այդ կարգով նա չէր կարող հանդիպել:

Բայց սրանով չի վերջանում մեր դիտողության տարողությունը:

Նարեկացին ոչ միայն լավ ծանոթ է Կորյունի գործին մինչ այն աստիճան, որ գրչի տակ են գալիս Կորյունի հատուկ բառերը, այլև հետևված է Կորյունի բառաբարդության եղանակներին և ստեղծած է հարաբարդ բառերի մի անբավ քանակություն:

Ահավասիկ Ապարանից Խաչի Պատմության կես էջից միայն քաղածս բառերի շարքը, որ մեծագույն մասամբ հատուկ են Նարեկացուն (էջ 22): «Ծառս գեղասաղարթս, շնորհաշառաւիղս, ամբարձուղէշս, հաստաստեղունս, մարդադարմանս, բազկաստածուս, ածիւնաճիւղս, վայելչատերես, բարեբողբոջ բոյսս... ցցեալ ի գետինս գերապարարս, արգաւանդահողս ... Տունկս ծաղկընծիւղս, պտղածինս, արմախարիսխս, մրգամատոյցս, պատուաստակիրս, պտղապարգես, անդս ամենունակս, ջրահոսս և շուշանափայլս. սահմանս վտակարբուս, ուղխապարարս, անձրեւասնունդս, ցօղամատոյցս ...» և այլն:

Այսպիսով մենք տեսնում ենք, թե Գ. Նարեկացին ոչ միայն կարդացած է Կորյունի գործը, այլև մեծապես ազդված է նրա բառաբարդության եղանակից:

Նույնքան, եթե ոչ ավելի, Գ. Նարեկացին ազդված է Սեկունդոս իմաստասերի ոճից, բայց այս մասին մի ուրիշ անգամ:

Ամբողջական երկեր, հ. IV, էջ 496-498

Հովհաննես Թումանյանի «Նաղաշ Հովնաթան և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը»

Ա. Չոպանյանը 1910 թ. Փարիզում հրատարակեց Նաղաշ Հովնաթանի տաղերը: Հետևյալ տարին Հովհ. Թումանյանը այդ գրքի առիթով գրեց մի գրադատական, որ այժմ լույս է ընծայում առանձին տետրակով: Հիմա, որ Վ. Բրյուսովի դասախոսության հետևանքով մի լայն հետաքրքրություն արթնացավ մեզանում դեպի մեր միջնադարյան երգիչները, շատ ժամանակին է լույս տեսնում այս հոդվածաշարքը:

Այստեղ՝ ցուցադրելով իբր ֆոն արևելքի մտայնության մի քանի բնորոշ կողմերը, որոնց անմասն չենք նաև հայերս, այդ ֆոնի վրա իր «խոսքերով պատմելու փոխարեն»՝ հեղինակը «իրենց խոսքերով, իրենց ոճով ու շնչով, իրենց հանգով ու երանգով իրար կողքի է դնում մեր հին բանաստեղծներից երեքի սերը»: Իրար բերելով հմտությամբ ընտրած տողեր ու տներ նրանց երկերից՝ Հովհ. Թումանյանը մեզ նկարում է նրանց սիրուհիներին և վերապրել տալիս մեծ երգիչների զգացումը: Գրքույկի մեջ շողում է բանաստեղծի տաղանդը՝ գրավիչ նյութին տալով հաճելի կերպարանք և որոշակի առաջադրելով երեք երգիչների տարբեր վիճակն ու վերաբերումը սիրած կանանց նկատմամբ:

Ամեն հայ, որ հավակնություն ունի մտավորական հաշվելու իրեն՝ պարտավոր է առնվազն այնքան բան գիտենալ մեր երեք նշանավոր երգիչների մասին, որքան տալիս է Հովհ. Թումանյանն իր փոքրիկ տետրակով: Վստահ ենք, որ այս գրքույկը լայնորեն կտարածվի մեր ընթերցող շրջանակներում:

Վ. Բրյուսովի դասախոսության առիթով ամեն տեղից վեր կացող գրեց ու հրատարակեց, թե մենք չենք ճանաչում մեր բանաստեղծությունը, չենք գնահատում նրա արժեքը: Բայց ո՞վ ենք «մենք»: Հխոսելով Հ. Ղ. Ալիշանի և Ա. Չոպանյանի մասին՝ ահա մեր մեծանուն բանաստեղծը, որ սրանից հինգ տարի առաջ գրում էր. «Ամեն մի ժողովուրդ պետք է սիրի ու պարծենա Քուչակ Նահապետի և Սայաթ - Նովայի մման բանաստեղծներով (հիշյալ գրքույկը, էջ 26): Բայց... Ասողին լսող պիտի» և հետո՝ «Տանու տերտերին «Օրհնյա տեր» չկա»...

Մեր մտքի անզորությունը, որ ազգային տրորված արժանապատվության հետևանք է, պետք է տևե այսպես, մինչև մեզանում ևս առաջ գա հասարակություն, որի խելքն իր գլխումը լինի և ընդունակ անկախ մտածության ու դատաստանի:

Օգտվում ենք առիթից երկու դիտողություն անելու: Նախ՝ Սայաթ Նովան երկու երգ ունի (ԺԱ և ԺԹ), որ գրված են սիրուհու բերանից: Շատերը, որոնց հետ նաև Գ. Հախվերդյանն ու Հովհ. Թումանյանն այդ համգամանքը նկատի չառնելով, Սայաթ Նովայի բերանն են դնում այն խոսքերը, որ սիրուհու ասածը պիտի նկատվի: Այդպես է Գ. Հախվերդյանի մեջ բերած նշանավոր տողը.

Թեկուզ անմահություն ուզես՝ սիրով կու ճարիմ քեզ ամա (էջ Թ):

Եվ Յովհ. Թումանյանի բերածը.

Թաքես մորես չի ծնի . վայ էն օրին՝ես քեզ տեսա (էջ 23):

Երկրորդ՝ Քուչակ Նահապետը մի քառյակ ունի (ԺԴ. էջ 45):

**Սուրաթ ու ճրագ դրիր, զիս ի քո լուսըդ ձենեցիր.
Ձեդ ի քո ծովուդ եկի, լոք զարկիր ճրագն անցուցիր.
Ա՛տ էր քո ամեն ումեսն, ա՛յ հոգեկ, որ ինձ կու տայիր.
Ճրագդ, ա՛մ, ալ ի՞նչ վառած՝ երբ քազկիս ուժն հատուցիր:**

Այս քառյակն ակնարկ է անում Աղթամարի ավանդությունը, որ այն-քան տաղանդով վերստեղծել է Յովհ. Թումանյանը: Երգիչն իր ապրումը հասկանալի դարձնելու համար գոհանում է հարմարեցնելով ավանդու-թյունն իր վիճակին, որ նշանակում է, թե Աղթամարի գրույցը դեռ ԺԶ դա-րում հանրածանոթ էր շինականին, ինչպես այսօր Ոստանի քրդերին: Մեր դիտողությունը կարող է պետք գալ մեր լեզունդները հետազոտո-ղին, ինչպես նաև Քուչակ Նահապետի հայրենիքը որոշողներին - Վա՛մ, թե՛ Ակն:

Ամբողջական երկեր, հ. II, էջ 209-211

Մանուկ Աբեղյան

Մ. Աբեղյան այն անձերեն մեկն է, որուն գործի մասին որքան շատ գրվի ու խոսվի՝ այնքան շահ է հանրության: Համազգային ընկերություն-ը իբր մշակութային միություն՝ հիշատակի այս երեկոն կազմակերպած է հավաքական հարգանք մատուցելու համար նշանավոր գիտունի ան-ծին ու գործին:

Իր գործը լավապես գնահատելու համար պետք է տեսնել, թե ի՞նչ կար այն մարզերուն մեջ, ուր աշխատած է Մ. Աբեղյան՝ նախքան անոր երևումը. և ինչ ունինք հիմա անոր հիսնամյա գիտական աշխատանքն հետո: Ան երևաց ութսունական թվականներու վերջերը: Տեսապես հե-տապնդած է հայոց գրականությունը, բանահյուսությունը և լեզուն: Իր երևման շրջանին չկար հայոց նոր գրականության պատմություն: Հ. Գ. Զարբիսանյանի Բ հատորը անուններու ցանկ մըն էր ավելի, քան գրա-

կանության պատմություն: Այդ գիրքը կպտտեր գրականության շուրջ՝ առանց կարենալու մեջը թափանցել. իսկ իր գործին առաջին հատորը մատենագիտական և մատենագրական տեղեկությանց շտեմարան մըն էր, բայց ոչ համադրություն:

Ավելի գիտական բնույթ ունեն Յ. Հ. Գաթրճյանի նիհար տետրակը, որ կխոսեր հայոց հին բանավոր գրականության մասին: Բայց ասիկա փայ-լուն խոստում մըն էր, որ չիրացավ լիովին: Հայոց ազգային վեպի անունն իսկ չկար: Հ. Գ. Սրվանձտյան գրի առած էր Սասունցի Դավթի վեպը իբր պարզ գրույց, առանց անոր բովանդակ արժեքն ըմբռնելու և խորաչափելու: Լեզվի հետազոտության մարզին մեջ տիրաբար և ար-ժանապես կիշխեր Յ. Ա. Այտընյանի քննական քերականությունը, ուր հմուտ բազկով ուրվագծված էր հայոց լեզվի պատմությունը և հիմնա-կան բարբառներու ներքին կազմը: Նույն գործի մեջ հետազոտված էր և Հայոց տաղաչափությունը իբր մեկ մասը լեզվական ուսմանց:

Ֆրանսիական մեծ հեղափոխության, բայց մանավանդ 1848-ի շարժ-ման ազդեցությամբ՝ կենդանի հետաքրքրություն մը արթնացավ Եվրո-պայի մեջ դեպի ժողովուրդն ու իր ստեղծագործությունը: Այդ շարժումը լայն հիմքեր բռնեց Գերմանիո մեջ և անցավ Ռուսիա: Ազգային վեպը և ժողովրդական բանահյուսությունը գիտական հետազոտության առար-կա դարձան: Այդ ալիքն իր բարձր կետին հասած էր 70-80 թվին: Այդ հորձանքեն տարվեցավ Մ. Աբեղյան: Իր առաջին գործն եղավ Սասուն-ցի Դավթի նոր տարբերակի մը հրատարակումը և հետազոտություն մը այդ վեպի մասին **Սուրճ** ամսագրին մեջ (1889): Այստեղ մատնանշեց Սասունցի Դավթի մեծ արժեքը իբր հայոց ազգային վեպը՝ նման գերմա-նական Նիբելունգներուն և ռուսական Բլինաներուն: Այնուհետև ասիկա դարձավ Մանուկ Աբեղյանի տևական հետազոտությանց նյութ և ինքը անվիճելի հեղինակություն մը՝ այդ մարզին մեջ:

Անցավ Գերմանիա և ծանոթացավ եվրոպական գիտության հետազո-տական եղանակներուն: Այն ժամանակ նոր սկսած էր կիրարկվիլ համե-մատական եղանակը հետազոտությանց: Իր հետաքրքրությունը մնաց ժողովրդական ստեղծագործությանց սահմաններուն մեջ: Իր ավարտա-կան շարադրությունը կվերաբերեր հայ ժողովրդական հավատքին, որ եկավ լրացնելու Հ. Ղ. Ալիշանի «Հայոց հին հավատքը»:

Վերադառնալով հայրենիք հրավիրվեցավ էջմիածին՝ դասատու հայ լեզվի և գրականության՝ ճեմարանի մեջ: Շուտով հասավ գերմանական ուսում ստացած երիտասարդ հոգևորականներու խումբ մը - Գաբեգին (մեր նորընտիր կաթողիկոսը), Երվանդ, Միաբան, Մեսրոպ - բոլորը բա-

մասեր ավելի, քան աստվածաբան. և սկսավ հետազոտել մեր առասպելները Մ. Խորենացիի Պատմության մեջ և մեր նոր լեզուն (բայի ժամանակները, հայցական հոլովը), ինչպես և գրել՝ Ուրվագծեր հայ գրականության (Յ. Յովհաննիսյան): Հայ առասպելներու հետազոտությունը ան կատարած էր համեմատական եղանակով, զուգադրելով մերը գերմանական, հնդկական, սկանտինավյան և ռուս առասպելներուն. իսկ իբր մեկնություն հետևած էր տիրող տեսության, որ բնության երևույթներուն անձնավորումը կհամարեր առասպելները:

Հայոց ազգային վեպի հետքերով մտավ հին գրականության մեջ և գտավ նոր և ընդարձակ վեպ մը – Պարսկահայ պատերազմներու վեպը, որոնց անդրադարձումն էին Փավստոս Բյուզանդացիի և Յովհ. Մամիկոնյանի պատմական գործերը: Այս նոր վեպի հետքերով ան մտավ հայոց միջնադարյան գրականության մեջ. որոշեց Գ. Նարեկացիի կատարած գրական հեղաշրջման բնույթը և հասավ Սասունցի Դավթի վեպին պատմական ակունքներուն: Մեկ կողմն իբր դասատու հայոց գրականության, մյուս կողմն իբր հետազոտող ժողովրդական ստեղծագործության՝ չափեց հայոց բովանդակ գրականության պատմությունը լայնքին ու երկայնքին. և մշակեց հայոց գրականության պատմություն, որուն քանի մը դրվագները լույս տեսան մամուլի մեջ (շարականներու մասին, Նարեկացիի, Մխիթարյանց բանաստեղծության, Յ. Միրզա Վանահեցիի և այլոց մասին): Ենթարանի տեսուչ էր Կ. Կոստանյան, մասնագետ միջնադարյան տաղերգուներու. երևցած էր Կոմիտաս Վարդապետը հայ բնիկ երաժշտական որոնումներով ռամկական երգին մեջ – Մ. Աբեղյան գործակցելով անոնց՝ մեկ կողմն ուսումնասիրեց միջնադարյան բանաստեղծությունը, մյուս կողմն՝ ռամկական երգը. և Կոմիտասի հետ հրատարակեց «**Հազար ու մեկ խաղ**» տետրակները ռամկական նոր բանաստեղծության:

Թարթափելով հին գրականության ուլորտին մեջ՝ ան մասնագիտացավ իբր բանասեր և իր հմտության ենք պարտական Մ. Խորենացիի պատմության գիտական հրատարակությունը՝ ձեռագիրներու ուսումնասիրությամբ և ուշադիր համեմատությամբ:

Հայաստանի համալսարանի հիմնարկությամբ՝ հայագիտությունը նոր և աշխարհիկ կենտրոն մը ունեցավ: Մ. Աբեղյան արդեն հասունացած էր իբր գիտուն. հասած էր համադրության ժամանակը: Արդեն պատրաստ ուներ ընդարձակ ուսումնասիրություն մը հայոց տաղաչափության մասին. ասիկա կարգավոր համապատկեր մըն էր հայ բանաստեղծության տաղաչափական իրացումներուն, հնագույն շրջանն

մինչև մեր օրերը և միաժամանակ ցուցադրությունն էր մեր լեզվի տաղաչափական ունակության: Անոր զուգահեռ ան տվավ համադրություն մը հայոց նոր լեզվի մասին տեսություն մը, ուր հայոց լեզուն դիտված էր իբր իմացական կառույց մը և մեկնված էին անոր հոգեբանական հիմունքները:

Այս կարգի աշխատանք էր և անոր «**Հայոց լեզվի համաձայնությունը**»:

Մ. Աբեղյան առաջինն էր մեր մեջ, որ քերականությունը համարեց ոչ թե արվեստ ուղիղ գրելու և խոսելու, այլ գիտություն լեզվի կազմության և հոգեբանության: Ուրիշ համադրություն մը եղավ իր հետազոտությանց ամփոփումը հայոց ազգային վեպի, հատկապես Սասունցի Դավթի մասին, ուր ան որոշեց վեպին ծագումը, փոփոխություններն ու զուգահեռները: Իր գործն է նաև մեր ազգային վեպի տարբերակներուն շքեղ հրատարակությունը, հմտալից հառաջաբանով մը, որ անսպառ նյութ կրնա դառնալ հետագա հետազոտությանց: Վերջապես ան մշակեց տեսություն մը հայոց գրականության, ուր համադրելով ցրիվ նյութը Հայոց բազմադարյան գրականության՝ որոշեց մեր գրական ստեղծագործության հոլովույթի ծիրը: Ոչ թե գիտանքներու կարգավոր դասավորություն մըն է, այլ գրականություն կոչված երևույթին ցուցադրությունը իր հոլովույթին մեջ, ոչ թե «շտեմարան գիտելյաց» մը, այլ կենդանի պատկեր մը ազգային ստեղծագործության՝ գրական մարզին մեջ:

Իր բովանդակ գործին մեջ նկատելի է հմտական ընդարձակ աշխատանք և մտավորական մեծ կորով իմաստավորելու երևույթներու ընթացքը և շարամանելու ցրիվ երևույթները իբր իմացական կյանք մը, որ տևած է դարեր, ցուցադրելով տարբեր փուլեր: Իր մեծագույն գործը հայոց ազգային վեպի հետազոտությունն է, որ բացառաբար կապված է իր անվան. ինքն է գտած ու ձևակերպած այդ վեպի գծերը–հեթանոսական, Պարսկահայ պատերազմ, Սասունցի Դավիթ–ընդունարած է այդ վեպի հիմնական կորիզը, որ առած է տարբեր կերպարանքներ, ինքն է դիտած ու մեկնած բազմաթիվ երևույթներ այդ ազգային դարատև վեպին մեջ:

Այսպեսով Մ. Աբեղյան մտավորական մեծ ճիգի մարդ է, որ ցրիվ գիտանքները միավորած և վերածած է տեսությանց. տեսություն հայոց գրականության, տեսություն հայոց ազգային վեպի, տեսություն հայոց լեզվի և տեսություն հայոց տաղաչափության:

Նշանավոր մասնակի հետազոտող է ան. բայց ավելի համադրող: Ոչ ոք այսուհետև կարող է այդ մարզերուն մոտենալ առանց անցնելու անոր դպրոցն: Տգետ պիտի նկատվին ամեն անոնք, որ նախապես

անոր չեն աշակերտած: Ան կառուցած էր իմացական շենքեր, որ երկար ժամանակ պիտի դիմանան ժամանակի ժանիքին:

Անոր գործին շնորհիվ մենք այսօր ունինք ոչ միայն բազմապատկված գիտանքներ, այլև շատ որոշ պատկեր մը հայոց իմացական ճիգին՝ գրական, բանահյուսական, լեզվական և տաղաչափական ստեղծագործության մեջ: Ան կազմակերպած է մեր ազգային գիտակցությունը այս մարզերուն մասին: Պատմական և հանրային մեծ ծառայություն է ասիկա հայ մշակույթին, որ փառքով պետք է արձանագրվի և անկորուստ մնա հայոց գրականության պատմության մեջ:

Ամբողջական երկեր, հ. I, էջ 407-411

Նոր շրջանի գրականություն

Գրական հետաքրքրություն

Վերջին երկու-երեք տարին մի չտեսնված հետաքրքրություն է նկատվում մեր հասարակության մեջ դեպի սեփական գրականությունը: Այդ հետաքրքրությունը ակնհայտնի դարձավ հայ գրերի գյուտի և հայ տպագրության հոբելյանների առիթով և հանգեց մի շատ կարևոր կազմակերպության՝ «Չայ Գրական Ընկերության»: Շանթի «Հին Աստվածները» մեր հասարակական կյանքի մեջ դարձավ մի դեպք և լայնորեն շարժեց ընթերցող բազմության բոլոր խավերը:

Նախորդ սերունդները չեն ճանաչում այսպիսի մի ծավալուն հետաքրքրություն: Մեզանից մի տաս և ավելի տարիներ առաջ հայ հեղինակն զգում էր իրեն մեկուսացած, մի քանի բարեկամներ և համակիր մարդիկ էին նրա երգի գնահատողները. չկար ընթերցող հասարակություն և գիրքը հասարակական երևույթ չէր մեզանում: Նույն Շանթն, օրինակ, որ գրում էր ավելի քան քսան տարի, անծանոթ էր համարյա ընթերցող բազմության: Գրականությունն անմշան չափով միայն ազդակ էր հասարակական հառաջադիմության:

Հարցն այստեղ չի վերաբերում հեղինակների տաղանդին, քանի որ տաղանդավոր հեղինակներ երևացել են մեզանում և սրանից առաջ: Հարցն այստեղ վերաբերում է ընթերցող հասարակության, որ հանդես է գալիս իբր գրական երկերով ապրող մի բազմություն, որին հետաքրքրում է թե երկը իր ներքին արժանիքով և թե նրա արժարժած գաղափարները:

Ոչ մի անգամ արվեստի և իմաստության խնդիրները չեն զբաղեցրել այնքան ընդարձակ շրջաններ, ինչպես այսօր, ոչ մի անգամ գրականությունն այնպիսի հանրային պահանջ չի դարձել, ինչպես մեր օրերում:

Գրական ընկերության երեկույթները և ուրիշ գրական շրջանակներ հաճախում են եռանդով. լցվում են նաև այն սրահները, ուր բանախոսում են մեր գրականության մասին: Այս ամենը ցույց են տալիս, որ ստեղծվել է մեզանում մի որոշ հասարակություն, որ ապրում է գրական շահերով, սա ապացույց է, թե գրականությունը դառնում է մի զորեղ

գործոն, որ բարձրանում է ազգի ինքնագիտակցությունը և ստեղծվում են բարձր կարգի հանրային շահեր:

Մի ուրիշ հանգամանք գալիս է լուսաբանելու մեր մատնանշած երևույթը: Ոչ մի ժամանակ մեզանում այնքան գրական գնահատականներ, քննադատություններ չեն եղած, ինչպես մեր օրերում:

Նոր ու նորագույն սերունդը եռանդով կարդում ու մեկնում է անցյալ և ժամանակակից հեղինակների գործերը, փորձում է գնահատել նրանց պատմական և գրական արժեքը, կապել նրանց գործը պատմական հոլովության ընթացքին, բնորոշել մեր զարգացման շրջանները իրենց գրականությամբ և ընդհակառակն:

Այսպիսով գրական քննադատությունը դառնում է հասարակության մեջ նկատվող տարբեր հոսանքների բերան և փոխադարձաբար դրդումներ է տալիս հասարակության մտքին՝ նայելու իր շուրջը, իր անհատական ու հավաքական կյանքին, իր գրականության և ճշտել իր դիրքը անցյալի հանդեպ և նոր կյանքի հարուցած երևույթների և խնդիրների դիմաց:

Սկսված է մի վերագնահատության ընդարձակ շրջան, արթնանում է քննադատական միտքը, որ սրվելով գրական երևույթների գնահատության շրջանում, չի դանդաղի անցնելու կյանքի մյուս ոլորտները և իր լույսը սփռելու մեր կյանքի բազմազան երևույթների վրա:

Այս ամենը ցույց է տալիս, որ կյանք է իջել մի նոր սերունդ, տարբեր հոգեկան կազմով և մտավոր ու բարոյական տարբեր պահանջներով, որ դատաստան է անում անցյալ սերունդների և նրանց գործերի վրա և նույն քննական հայացքով նայում է ժամանակակից գործերին ու գրական արտադրություններին:

Վերին աստիճանի նշանակալից և ողջունելի է այս երևույթը մեր կյանքում. մտավորական դասը հասնում է ազգային ինքնագիտակցության, որ առայժմ արտահայտվում է գրական երևույթների գնահատության մեջ, և իր ձեռք բերած արդյունքներին հաղորդակից անելով հասարակական լայն խավեր, արթնացնում է ինքնագիտակցությունը նաև ազգի բազմության մեջ:

Այս սրտապնդիչ երևույթի նշանակությունը անկարելի է ներկայումս գնահատել հարկ եղած չափով և խորությամբ: Մի բան անկասկած է. գրական հետաքրքրությունը նշան է ազգային արթնացող ինքնագիտակցության, որ դրական երևույթ պետք է նկատել:

Հորիզոն, 1913, № 36

Գ. Սունդուկյանի «Կտակը»

Սունդուկյանի «Կտակը» պաշտոնական թուղթ լինելուց առաջ՝ մի գրական գործ է, արժանի «Պեպո»-ի անմահ ստեղծողին: Ութսունևյոթամյա ծերունի թատերագիրը, գրական փառքից ու կյանքից հագեցած, մայր մտնող արևի հանդարտ ու մտերիմ հայացքով թողնում է աշխարհը: Մի զարմանալի բարություն, մեղմություն և հանգստություն է բուրում այդ փոքրիկ գրվածքից: Պարզությունը, որ Սունդուկյանի գործերի գերագույն հատկությունն է, իշխում է նաև այս «Կտակի» մեջ, որ վերջինը լինելով նրա երկերից, պետք է դասվի «Պեպո»-ի կողքին:

Այստեղ խոսում է մի խոշոր տաղանդ, գեղարվեստական մի մեծ կարողություն, երկարամյա կենսական փորձի տեր մի ազնիվ ծերունի, մի հայ և մի Թիֆլիսցի, որի վրայից ժամանակը սրբել է բոլոր չքոտեն և աննշանը, բյուրեղացրել այն թանկագինն ու անանցը, որ պիտի մնա հետնորդ սերունդներին Սունդուկյան – մարդուց:

Մի ձգտում է նկատվում այս հմայիչ ծերունու մեջ՝ այս անցավոր կյանքի վերջին հանդիսավոր ժամերին ջրացնել կամ նվազագույն չափերի հասցնել աշխարհային ամեն անխորհուրդ ու սնոտի ձևականություն և հեռանալ աշխարհից նույնքան պարզ ու մտերիմ, որքան նա ապրել ու ստեղծել էր կյանքում:

Ոչ մի աստիճան, որին հասել էր իր ժառանգության ընթացքում, ոչ մի շքանշան, որին հասել էր բարձր իշխանությունից, ոչ մի շուք, որ տալիս են դիակներին, ոչ մի անտեղի արտահայտություն, որ ստանում է վիշտը՝ նա չուզեցավ, որ խանգարե մահվան հանդիսավոր պարզությունը: Նա ձգտեց նվազագույն չափերի հասցնել մինչև իսկ ազգային - եկեղեցական ծեսը: Նա ցանկացավ աշխարհից հեռանալ ինչպես մի գրական մշակ, մի «Սունդուկյան - Համալ», հայտնելով մեզ իր ներքին համոզումը, թե այդ է միայն արժեքավորն ու գնահատելի համարում իր անցավոր կյանքում:

Հրաժարվելով աշխարհից, նա հրաժարվում է և հեղինակի ունայն փառքից: Նա կտակում է արձան կանգնել ոչ թե իրան, որ անցավոր է և ահա անցնում է անդարձ, այլ այն գաղափարին, որի հավերժության և արժեքին նա հավատում է անսասան և որի մարմնացումն է նա ուզում տեսնել մարդկանց սրտերում և «Պեպո»-ի արձանի մեջ:

Դա պիտի լինի մի արձան, որ մշտական ջատագովություն լինի հավատարմության և մշտական հանդիմանություն՝ ուրացության: Հավա-

տարիմ լինել տված խոսքին, պարտքը ճանաչել - ահա բարձրագույն իղեալը, որ կուզեր մարմնացած տեսնել Սունդուկյանը իր ժողովրդի մեջ: Սա նշանակում է բարոյական վերածնություն և կորովի ժողովուրդ տեսնելու մի տենչ:

Սա նշանակում է ճանաչել ազգի հիմնական արատը և նրա դեմ կանգնեցնել պարտքի արծանը: Ժողովրդի մատն ուղղել նրա վարիչ դասերի պարտաթղթի վրա և խարանել հրապարակում նրա ուրացությունը: Այս հղացումն ինքնին բավական է Սունդուկյանի տաղանդն ու հոգին գնահատելու համար:

Ու ես հակված եմ կարծելու, թե կտակելով իր գերեզմանի վրա փորագրել «Գ. Սունդուկյան - Համալ», մահվան հայտարարության մեջ չհիշել իր պաշտոնը, գերեզման տարվել համալների և կինտոների ուսերին, որ նույն է, թե թրքահայ և ռուսահայ ժողովրդի ձեռքով, նա ցանկացել է խորհրդանշել իր հավատարմությունը իր ազգին և մանավանդ իր ժողովրդին և վերացնելով իր վերապահ մեկուսացումը ժողովրդից, որ ուներ իր պաշտոնի և դիրքի բերումով, նրա որդիների ուղեկցությամբ հասնել վերջին հանգիստը, ինչպես նրանց արժանիքը բարձրացնելուն նվիրել էր իր ստեղծագործական մեծ տաղանդը՝ քանի կենդանի էր:

Թվում է ինձ, որ նա ցանկացել է մի վերջին անգամ, այս աշխարհից մեկնելիս, բանաստեղծական մի գեղեցիկ խորհրդանիշ դարձնել իր թաղումը, շեշտելով ժողովրդի և մտավորականի հարազատության պահանջը, մի արտաքին նշանով ցույց տալ, թե ում համար պետք է գործել և որի ձեռքով պետք է հող դրվել իբր մի թանկագին ավանդ:

Ինչպես խորհրդավոր է իր հղացած արծանը և իր թաղումը, այնպես էլ իմաստալից ու խորհրդավոր են նրա վերջին «մնաս բարև»-ները: Նա հիշում է ամենից առաջ իր լծակցին ու սիրածին, իր կյանքի ուղեկցին, հետո իր զավակներին և բարեկամներին. ապա բոլոր «սիրելի մարդկանց», ինչ ցեղի, ազգի և հավատի էլ նրանք լինեին. հետո իր սիրելի թիֆլիս քաղաքը և վերջն իր ազգին, մաղթելով, որ Աստված արժանի անի նրան իր վաթանին:

Այս «մնաս բարև»-ները ցուցադրում են մի ամբողջ աշխարհայացք և ազգային բնույթի մի իրական գիծ: Նրա սերն ու համակրանքը գնալով լայնանում է և իր վերջին սահմանները գտնում իր ազգի մեջ: «Կտակը» մի վերջին անգամ ցույց է տալիս, որ Սունդուկյանը պատկանում էր մեր հասարակական մտքի այն հոսանքին, որի տենչերն ու մտահոգությունները վերջանում էին ազգով և ազգի համար:

Սունդուկյանը վերջին բարևով դիմում է «ազգին», նա չի ասում «մնաս բարև, իմ հայրենիք»: Նա գիտե, որ հայը սեփական հայրենիք չունի: Դրա համար կցում է և իր մաղթանքը, որ տենչ է միանգամայն, և ցույց է տալիս այն քաղաքական համոզումները, որ սքանչելի ժերունին ուներ իր հոգու խորքում՝ «Աստված վաթանիդ արժանի անե» ... Մի նոր թել ևս, որ կապում է նրան մեր 60-ական թվականների ազգային և հայրենասեր ուղղության:

Վերջին գիծը, որ շատ ուշագրավ է այս «Կտակի» մեջ, Սունդուկյանի դիմումն է «սիրելի մարդկանց», ինչ ցեղի, ազգի և հավատի էլ նրանք պատկանեն: Այս դիմումը խորապես ազգային է և անհունապես թանկագին: Մեր ժողովուրդը իր սրտի խորքում չի ունեցել և չունի ոչ մի ատելություն դեպի որևէ ժողովուրդ, մինչև իսկ իր հարստահարիչները: Լավ է, թե վատ այս գիծը, այդ չէ կարևորն այս վայրկյանին, բայց դա մի հատկորոշ գիծ է և չափազանց ազգային: Սա այն գիծն է, որ դատապարտվել է շարունակ իբր «օտարասիրություն»: Հայը լավ մարդն է որոնել ամեն տեղ, «սիրելի մարդը» և նրանց հետ է կապվել սրտանց: Մտավորական դասն ապրել է երբեմն ատելության, քեմի և ոխի զգացումներ: Բայց ժողովուրդը միշտ բարյացական ու համակիր է եղել դեպի ամեն ազգ ու ժողովուրդ: Եւ այդ համբերատար, լայն ու անկեղծ գիծն է մեր ժողովրդի, որ խոսում է նրա լավագույն զավակներից մեկի սրտում և «Կտակի» մեջ:

«Կտակը» մի վերջին վրձին է քաշում Սունդուկյանի հոյակապ նկարին և կենդանագրում մեր սրտում մի ճշմարիտ հայ, հավատարիմ իր ժողովրդի բնավորության լավագույն և հիմնական գծերին, որոնց գիտակցել է իր հոգում և արձանագրել թե «Կտակի» և թե իր երկերի մեջ:

Հոդված, 1913, № 59

Ռաֆֆի

Այսօր լրանում է Ռաֆֆու մահվան 25-ամյակը և ամեն գիտակից հայ ականա անդրադառնում է Ռաֆֆուն և իր գործին: Քառորդ դար առաջ հայ մտավորական դասը և ժողովրդի մի ստվար բազմություն՝ վերևից թափվող անձրևի տակ՝ դեպի հավիտենական հանգիստն էր առաջնորդում այն մարդու դին, որ Արծրունու կողքին՝ մտքերի երկրորդ հզոր իշխանն էր հայ գրականության ոլորտում:

Քառորդ դար է անցել այդ մեծ հայի և նշանավոր հեղինակի մահից

հետո, բայց մինչև այսօր ժողովրդական լայն խավերում նա շարունակում է իր դրոշմը դնել ընթերցողի հոգու վրա, արթնացնել նրա մեջ ազգային գիտակցություն և արծարծել ազատամիտ գաղափարներ, խլելով նրան ավանդական աշխարհայացքի ճիրաններից և մղելով դեպի քննադատական վերաբերում մեր ազգային արժեքների հանդեպ:

Մտավորական դասն ազատագրված է նրա ազդեցությունից, բայց ընթերցող հասարակության խոնարհ խավերին նա շարունակում է մոգել իր ստեղծած անձերի և իր սիրած իդեալների հմայքով: Նա շարունակում է ազդակ լինել հայի կուլտուրական կյանքում և նրա դերը դեռ չի վերջացել: Մեռած մարդու հետ չէ, ուրեմն, որ մենք գործ ունենք, այլ նրա կենդանի հոգու հետ, որ դեռ շարունակում է ազդել:

Այդ մեծ տաղանդի ապրումն հմայքը ոչ միայն իր ներքին արժեքի մեջ է, այլև այն խնդիրների, որ մոտ էին Ռաֆֆու սրտին և որոնց արծարծելուն և լուծելուն նա նվիրեց իր կյանքի մեծ մասը: Այս խնդիրները մտացածին չէին, այլ բխում էին պատմական վայրկյանից և մեր կյանքից և նրանց շարքում «հայոց հարցը» կամ որ նույն է՝ թրքահայ ժողովրդի վիճակի բարվոքումը այն կենտրոնական խնդիրն էր, որի վրա հառած էր 70-ական թվականների հայ մտավորականության և առանձնապես Ռաֆֆու ուշադրությունը: Այդ խնդիրը ուղղություն էր տալիս հասարակական մտքին ու տրամադրություններին. և ամեն ոք մեր հեղինակներից, որ իր անունը կապեց այդ հարցին՝ ունեցավ ծավալուն ժողովրդականություն: Տաղանդը փայլ էր տալիս այդ խնդրին և խնդիրը բարձրացնում տաղանդի արժեքը:

Մինչև այսօր էլ, երբ ասում են Ռաֆֆի՝ հասկանում են «խենթի», «Ջալալեդդինի», «Կայծերի», «Դավիթ-Բեկի» և «Սամվելի» հեղինակին, և այդ երկերի անունը տալիս են ոչ այն պատճառով, որ մեծանուն վիպասանի մնացած գործերը պակաս ծավալ ունին կամ գեղարվեստական արժանիք, այլ որովհետև այդտեղ են արծարծված ու պաշտպանված այն հիմնական գաղափարները, որ մի քանի սերունդ են սնել, նրանց մեջն է ապրում այն բուռն ու անկեղծ հայրենասիրությունը, որ նրանց շունչն է կազմում և որ վարակել ու վարակում է ընթերցողներին: Գամառ - Քաթիպա և Ռաֆֆի, մեկը բանաստեղծ, մյուսն արծակագիր, երկուսը միասին ներկայացնում են մի ամբողջ պատմական շրջան, հայ մտքի մի որոշ և տիրական հոսանք, որ կերպարանափոխ եղած՝ շարունակում է ոռոգել մեր հասարակության լայն խավերի հոգեկան անդաստանը:

Իր տաղանդն ու գործը կարելի է որակել «հայրենաշունչ» բառով.

հայրենիքը կազմում է Ռաֆֆու կենտրոնական մտահոգությունը: Հայրենիքի գաղափարի տակ նա ըմբռնում է հայի հերոսական անցյալն ու անմխիթար ներկան և իր գունեղ վրձինը գործադրում է վերստեղծելու և պատկերելու թե մեկը և թե մյուսը: Հայության թշվառ ներկայի դիմաց նա շքեղորեն ցուցադրում է մի բարեբաստիկ և անդորր ապագա և ավերի ու արյունի երկիրը նրա հայրենասիրական անուրջների մեջ ներկայանում է իբր քաղաքակիրթ ու խաղաղ աշխարհ:

Այս հմայիչ հեռանկարը իր ժամանակին և նրանից հետո շատ ազնիվ հոգիներ վառեց ու զինեց պայքարի համար, որոնք անձնավիրության և հերոսության անսովոր օրինակներ տվին հայության և ի գարմանս ամբողջ աշխարհի, որ կարծում էր, թե հայությունը մեռած է հոգով: Երիտասարդությունը նրա հերոսների անուններն առնելով իր վրա՝ հետամուտ եղավ նրանց մամնիլ և այն, ինչ ծրագիր էր միայն, շատերն աշխատեցին և մասամբ հաջողեցան գործ դարձնել:

Այս տեսակետից վերին աստիճանի ուսանելի է Ռաֆֆու գործը իբր մի մուշ, որ ցույց է տալիս, թե մինչև որ աստիճան մեծ տաղանդներն ընդունակ են ըմբռնելու ժամանակի ոգին և միտումները և կաղապարելու իրենց ժողովրդի կամքի, մտքի և զգացումի բնագրական վերելքը:

Մի քանի սերունդ մտածում, զգում և կամենում էր Ռաֆֆու ստեղծած ձևերով և ընթանում էր նրա գծած շավղով:

Քառորդ դար է անցել նրա մահից հետո, եկել են նոր սերունդներ նոր աշխարհայացքով ու զգացումներով, որոնք հետամուտ են նոր իդեալների. բայց ոչ այն խնդիրն է լուծվել, որին նա ի սպաս դրավ իր ստեղծագործ տաղանդը և ոչ այն իդեալներն են դարձել անարժեք, որոնցով նա թովում էր իր ժամանակվա և հետագա սերունդներին: Թրքահայ դատը շարունակում է մնալ անվճիռ և Հայաստանի ապագան՝ անստույգ:

Բայց Ռաֆֆին անմահ է այլևս. անխզելի կապված է նա հայոց պատմության հետ. ո՛չ հայ մտքի և գրականության և ո՛չ հայ հեղափոխության պատմաբանը չի կարող անցնել նրա մոտից՝ առանց նրա դերն ու նշանակությունը պարզելու: Նա կմնա կենդանի, որքան թրքահայի տառապանքը հեծեծում է ու օգնություն է կանչում Հայաստանից և նրա դերը կվերջանա այն օրը, երբ հայությունը կազատվի թյուրքական լուծից:

Հետագա դեպքերը ցույց տվին, որ մեր նորագույն պատմությունը գնում է այն ճամփով, որ գուշակել ու գծել էր Ռաֆֆին, և իրավամբ նա համարվել ու պետք է համարվի մեկը հայ կյանքի ու մտքի ամենասրատես առաջնորդներից:

Դ. Աղայան

Նրան ճանաչողներից ոչ մեկը դեռ չի հաշտված այն մտքի հետ, թե այդ հոյակապ ծերունին չկա այլևս: Նրա հմայքն ապրում է մեզանում և ամեն անգամ, երբ գրչի և դպրոցի մարդիկ խմբվում են մի տեղ, թվում է, թե ահա ներս կմտնի նա իր զվարթ և աշխույժ դեմքով և ախորժ տրամադրությամբ վարակելով ամենքին:

Մարդը նրա մեջ գերակշռում էր հեղինակին. նա ինքը ստեղծող լինելուց առաջ արարչության ներդաշնակ ստեղծագործություններից մեկն էր և իր անձն ու օրինակը նույնքան կրթիչ էր, որքան իր պայծառ լավատեսությամբ համակված երգերը:

Կարծես կյանքում չէր ապրում, այլ սավառում էր նրա վրա: Իր բարձր հասակը խորհրդանշում էր նրա բարձր հոգին, որ վերից նայում էր աշխարհի մանրուքին իր մանկական աչքերով:

Կյանքի դառնությունները, հակառակորդների հալածանքը, ողորմելի շրջապատը կարծես հազիվ ողողում էին նրա ունեերը միայն. ինքը քայլում էր այդ ամենի մեջ հաստատուն ու անշեղ՝ միշտ մնալով անկեղծ, միամիտ, սրտաբաց:

Չարիքն անժանոթ մնաց նրա հոգում, ատեց շատ բան մեր կյանքում, խորապես ատեց գաղափարներ ու գործեր, որովհետև խորապես սիրում էր բարին ու լուսավորը, բայց իր ատելությունը չհասավ քինախնդրության, այլ միշտ մնաց գաղափարի սահմաններում: Նա գիտեր մարդուն տարբերել նրա գործից ու գաղափարներից և զինվելով մեկի դեմ, ներողամիտ էր դեպի մյուսը:

Նրա վարմունքի մեջ ինչ որ հայրական բարություն կար, որ գրավում էր ամենքին, զորեղի մեծահոգությունը և փորձված մարդու իմաստությունը, կարծես:

Իր սիրածը կյանքի մեջ բարին էր և հերոսականը, որ իր բնավորության հիմնական գծերն էին կազմում և արտահայտություն գտան իր գրվածքներում:

Չերոսաբար դուրս եկավ նա գյուղական խավարից մտավոր լուսի հասնելու համար, անհամար նեղություններ կրեց իր երկար ճամփին, աշխատանքով և տաղանդով հաղթեց ամեն արգելքի և բոլոր դիվական փորձություններից դուրս եկավ անարատ հոգով, առանց դառնության ու դաժանության: Չերոսական պայքարը կոփեց նրա հոգին՝ առանց կոշտացնելու և փորձանքների միջից դուրս գալով՝ նա պահպանեց

անսպառ բարություն սիրելու հայ գիրն ու դպրոցը:

Դ. Աղայանն այն մարդկանցից մեկն է, որ մեծանում են ժամանակի ընթացքում, նրա մեծությունն այսօր զգում ենք, վաղվան սերունդը պիտի հասկանա: Մենք հանոզված ենք, թե այդ զգացումը շատ մարդ պիտի հավաքե այսօր նրա հիշատակով մի անգամ ևս պայծառ տրամադրություն ապրելու:

Հորիզոն, 1913, № 137

Յ. Շիշմանյան - Ծերենց

Գրական ընկերության հերթական երեկույթը այսօր նվիրված է Ծերենցի հիշատակին: Քսան և հինգ տարի առաջ հայ հասարակությունը կորցրեց իր լավագույն անդամներից մեկին և հայ գրականությունը իր տաղանդավոր մշակին, որ Րաֆֆու կողքին հայ պատմական վեպի ականավոր ստեղծողն է մեզանում:

Մտավորական դասը մի անգամ ևս առիթ կունենա հիշելու Ծերենցին և իր գործը, ասելու իր հարգանքի խոսքը նրա հիշատակին և արտահայտելու իր վերաբերումը դեպի նրա ստեղծագործությունը:

«Թորոս Լևոնի», «Թեոդորոս Ռշտունի» և «Երկուք թ. դարու» մի-մի հուշարձան են Ծերենցի ստեղծագործական տաղանդի և հայ գրականության լավագույն երկերի թվին են պատկանում: Նրանք արդյունք են ազգային գիտակցության այն արթնացումի, որ վաթսունական թվականներից նկատվում է թե թուրքահայերի և թե ռուսահայերի կյանքում:

Ազգային արթնացած գիտակցությունը մի կողմից հետամուտ էր Հայաստանի ապագան ուրվագծվելու, մյուս կողմից նրա անցյալը պատկերացնելու: Ապագան անցյալի վրա հիմնելու մտահոգությամբ ժամանակի կարկառուն գրական դեմքերը ջանք են անում հասկացնել ժողովրդին, թե ով է ինքը, որտեղից է գալիս, ինչ պատմական անցյալ ունի և ինչ ապագա կարող է հուսալ:

Այդ տիրական մտահոգությունը մղում էր տալիս և՛ բանաստեղծի, և՛ վիպասանի, և՛ հրապարակախոսի, և՛ պատմաբանի ստեղծագործության և աշխատանքներին:

Բանաստեղծը երգում էր Վարդանին ու Ղևոնդին, վիպասանը՝ Դավիթ Բեկին, Հովնանին և հայ ազատորյարն էր ցուցադրում թմրած հայության աչքին, հրապարակախոսը հայոց հարցն էր հարուցանում, գիտ-

նականը Հայաստանի պատմության և աշխարհագրության մասին էր խոսում:

Այս ընդհանուր հոսանքի մեջ էր նաև Ծերենցը. նրա երևակայությունը հաճում էր բացառապես հայի պատմական անցյալում և ընտրում էր այնպիսի նյութեր, ուր երևում է հայի ինքնապաշտպանության կորովը և նոր կյանքի հետամուտ լինելու անխորտակելի կամքն ու կարողությունը:

Նա գրում էր մի այնպիսի ժամանակ, երբ թրջահայ լեզուն անմատչելի էր Կովկասի ընթերցող հայության: Նրա գործերն այդ պատճառով այն լայնասփյուռ ժողովրդականությունը չունեցան, որին արժանի էին իրենց ներքին հատկություններով:

Այսօր մենք շատ ավելի նպաստավոր պայմանների մեջ ենք այդ կողմից և ռուսահայը շատ ավելի հնարավորություն ունի գնահատելու Ծերենցի տաղանդը:

Հուսով ենք, թե այդ գնահատությունը հանդես կգա Գրողների Ընկերության այսօրվան երեկույթի մեջ:

Հորիզոն, 1913, № 112

Հ. Հովհաննիսյան

Բազվում այսօր կատարվում է բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի գրական գործունեության երեսնամյակի հանդեսը: Հայոց կուլտուրական հիմնարկությունները և համակիր շրջանակները այսօր առիթ կունենան իրենց հարգանքը մատուցանելու այն մարդուն, որ երեսուն տարի ստեղծագործել է իբրև բանաստեղծ և պատվավոր տեղ է գրավել հայոց նոր գրականության մեջ: Երկար տարիներ նա եղել է նաև ուսուցիչ, ունի բազմաթիվ աշակերտներ, բայց նրա գրական դեմքն է, որ այսօր գրավում է մեր ուշադրությունը և դրանով է, որ նա պիտի անմահանա գրականության պատմության մեջ:

Որքան էլ գրական քննադատությունը և գրասեր մարդիկ տարբեր կարծիք ունենան Հ. Հովհաննիսյանի տաղանդի, նրա ստեղծագործ կարողության չափի և նրա կատարած դերի մասին մեր գրականության մեջ, մի բան մնում է անկասկածելի - այդ նրա բանաստեղծական անվիճելի տաղանդն է և այն հանգամանքը, որ նա առաջինն եղավ Գամառ-Գաթիպայից հետո հայ քնարը ձեռք առնող:

Նա հանդես եկավ այն ժամանակ, երբ թվում էր, թե ռուսահայությունը ամուլ է այլևս և անընդունակ Գամառ-Գաթիպայից հետո բանաստեղծական նոր տաղանդներ ծնելու: Նրա գիրքը այնքան ավելի անակնկալ եղավ իր ժամանակին, որքան քիչ հույս էր նկատվում նոր բանաստեղծ տեսնելու: Հասկանալի է այն բուռն հետաքրքրությունը, որ առաջ բերեց բանաստեղծությանց այդ ժողովածուն՝ երեք մեծ հոդվածների նյութ դառնալով «Աղբյուրում» և «Մուրճի» մեջ:

Հովհաննիսյանն իր գրքով նշան էր, որ արթնանում է բանաստեղծական ոգին մեզանում և նրան շուտով ընկերացող Հ. Թումանյանը, Ա. Ծատուրյանն ու Լ. Մանվելյանը այլևս կասկած չթողին այդ մասին: Նրանցով հայ բանաստեղծության մեջ սկսում էր մի նոր շրջան:

Այդ նոր շրջանի կարապետը լինելու պատվից դուրս՝ Հ. Հովհաննիսյանը բերում էր իր հետ նոր տրամադրություն և նյութի մշակության ավելի կատարյալ ձևեր:

Այն ժամանակ, երբ կազմավորվում էր Հ. Հովհաննիսյանի տաղանդը, հայությունը Ռուսաստանում և այլուր ապրում էր իր առաջին հիասթափությունը: Բեռլինի 61-րդ հոդվածը ոչինչ բարվոքում չբերեց հայ տառապանքին: Երբեմն ծաղկած հույսերը հայության՝ թոշնում էին արդեն և Կովկասում սկսվել էր մի հետընթաց շարժում, թե ազգային և թե կառավարչական շրջանակներում: Այդ այն ամուլ շրջանն է մեր կյանքում, որ կոչվում է 80-ական թվականներ: Մամուլը շարունակում էր ծածծմել մի անգամ արդեն հայտնված գաղափարները, գրականությունը հանդես չէր բերում նոր դեմքեր ու երևույթներ և ամենքին համակել էր մի ընդհանուր թմրություն, իսկ բոլոր զգայուն հոգիների մեջ տեղ էր բռնել մի ընդհանուր տրտմություն, որ արտահայտություն գտավ Հ. Հովհաննիսյանի երկերում և դարձավ նրա տաղանդի բնորոշ կողմերից մեկը:

Հին հույսերը խորտակված էին չարաչար, նոր հույսեր դեռ չէին արթնացել հասարակության մեջ. հին ուղիները լքված էին արդեն, նոր ուղիներ դեռ չէր գտել հասարակական միտքը. վստահությունը կորել էր կյանքի վրա և բանաստեղծի հետ հասարակությունը մնացել էր «Երկու ճանապարհի» դեմ, առանց որոշել կարողանալու, թե դրանցից ո՞րն է պատրաստում կյանքն իրենց համար և առանց կորով ունենալու ընտրել այս կամ այն ուղին:

Այն ազգային-քաղաքական իդեալները, որոնք ոգևորում էին Հ. Հովհաննիսյանի նախընթաց սերնդին, որոնք հույզ ու բուռն ապրումներ էին տալիս նրանց, որոնց խորապես հավատացած՝ պայքարում էին հայի քաղաքական թմրության և բարոյական անշարժության դեմ - այդ

իղեալները դադարել էին ոգեկան կյանքի զորեղ խթան լինելուց: Կային իղեալները, բայց իբր վերացական գաղափարներ. Յ. Յովհաննիսյանի սերունդը չէր ապրում նրանցով. ընդունում էր նրանց վեհությունը, արժեքը մեր կյանքի համար, բայց անգոր ու անպատրաստ էր համոզվում նրանց փարելու, կյանքի մեջ նրանց իրագործելու:

Նրանք տեղ ունեին այդ սերնդի գլխի մեջ, ճանաչվում էին արժեքավոր նրանց մտքի համար, բայց սրտի մեջ նրանք տեղ չունեին, նրանք համոզում չէին, նրանց համար այդ տրտում ու հիասթափ սերունդը պատրաստ չէր կյանքը գոհելու: Դրա համար մի ուրիշ սերունդ էր հարկավոր, որ երևաց 90-ական թվականներին՝ ստեղծելու համար հայոց նորագույն պատմության փառավոր էջերից մեկը:

Ահա այս անցողական շրջանում երևաց Յովհաննիսյանը իր տրտում քնարով. մի տրտմություն, որ արդյունք էր անզորության և կորովի պակասության: Ոչ այնքան քաջություն կար հին իղեալները մերժելու և նորերը ստեղծելու, ոչ այնքան կորով հին, բայց արժեքավոր համարած իղեալները կյանքում գործ դարձնելու:

Այս է պատճառը, որ Յովհաննիսյանի երկերից այն հատվածները, ուր իշխում է խոնջեցնի ու տրտմության տրամադրություն, այնքան անմիջական են, որովհետև արտահայտում են իր սերնդի բուն էությունը, իսկ այն հատվածներում, ուր խոսում է իղեալներից, նա ավելի սգում է, քան ստեղծագործում:

Յ. Յովհաննիսյանը պատկանում է Շահագիզի գրական դպրոցին, իր լեզվով և տաղաչափությամբ հարում է նրան: Նա մտցրեց մեր նոր բանաստեղծության մեջ ավելի խնամված ձևեր՝ հատվածի և հանգի տեսակետով և հետևելով Գամառ - Գաթիպային՝ հնչեցրեց ժողովրդական մոտիվներ, որ հետո այնքան ցայտուն զարգացման պիտի հասնեին Յ. Թումանյանի և Ա. Իսահակյանի երկերում:

Յ. Յովհաննիսյանը կար և կմնա իբրև 80-ական թվականների տրտում տրամադրության արտահայտիչ, իբրև մի մարդ, որի երկերում անդրադարձել է մեր հասարակական զարգացման մի որոշ շրջան:

Հորիզոն, 1913, № 80

Յովհ. Թումանյանի այս նոր գրքույկը նույնքան շնորհալի և հրահանգիչ գործ է, որքան այն բոլոր մանկական գրվածքները, որ դուրս են եկել նրա գրչի տակից: Հրատարակությունն ևս կատարված է սովորական խնամքով և զարդարված 6 գունավոր պատկերներով, որ նկարել է Ռոտտեր, միակ շնորհալի նկարիչը, որ օտարազգի լինելով՝ կարողանում է գույնի ու գծի շնորհիվ հաջողապես արտահայտել Կովկասի գրողների հղացումները:

Հեղինակն այս գրվածքի մեջ ևս օգտագործում է մեր ժողովրդական անգիր բանահյուսության անհատնում շտեմարանը, իր ընտրած նյութը մշակելով հայ ժողովրդի ոգով ու ոճով:

«Քաջ Նազարի» նյութը իր էությամբ միջազգային է, բայց նա ստացել է իր հատուկ երանգը, մշակությունն ու մեկնությունը մեր ժողովրդի բերանում և Յովհ. Թումանյանի գրչի տակ:

Այս նյութի եվրոպական տարբերակն է «Անվախ դերձակը», որ տարիներ առաջ հրատարակված է հայերեն, նույնպես գունավոր պատկերներով և թարգմանված է հռչակավոր Գրիմ եղբայրների մշակած օրինակից: Նույն հեքիաթի տարբերակները կան նաև վրացերեն, թուրքերեն և քրդերեն:

«Քաջ Նազարի» նյութը խորապես հոգեբանական է և իմաստասիրական. նա ցուցադրում է մի ամբողջ աշխարհայացք՝ հանդուգն ու տրտում: Մի Սերվանտես նրանից կարող էր կերտել մի նոր Դոն-Քիշոտ: Յովհ. Թումանյանի ձգտումները այդքան խիզախ չեն. նրա նպատակը պարզ է. նա աշխատում է այդ նյութը տալ իր ազգային կերպարանքի մեջ, նույնքան խոշոր ու հիմնական գծերով, ինչպես մշակելով ստեղծել է հայ ժողովուրդը:

Ժողովրդական ստեղծագործությունը, սակայն, հաճախ ունենում է բազմաթիվ շեղումներ. նրա վրա նկատվում են մի քանի շերտեր, որոնք ժամանակի ընթացքում եկել նստել են բուն նյութի վրա և երբեմն ձևափոխել, բայց հաճախ կերպարանափոխել են նախնական հղացումը: Այդ շեղումներն ու շերտերը հիմա շատ դժվար է իրարից ջոկել և միմիայն երկարամյա և ուշադիր քննությունը կարող է պարզել ու որոշել մի կողմից նյութի հիմնական ընթացքը և նրա շեղումները, մյուս կողմից նրա նախնական կերպարանքն ու հետագա շերտերը և սրանց նստելու ժամանակները:

Շատ է պատահում, որ մի որևէ սկզբնական նյութի հիմնական մոտիվը ժամանակի ընթացքում անտես է արվում. դրա պատճառը լինում են հոգեկան-բարոյական հեղաշրջումները. մինչդեռ մի որևէ երկրորդական արկած՝ ինչպես մի կորիզ՝ ընկնելով ժողովրդի երևակայության պարտա հողի մեջ՝ աճում ու զարգանում է իբր անկախ մի ծառ. այն ինչ ստեղծագործական բունը, որից անջատվել է նոր ծառի կորիզը, ինքն արդեն փտում է ամենտ կամ թե փշրվել է արդեն ու դարձել մանրիկ առակներ, առածներ կամ առակածն խոսքեր:

Այդ է պատճառը, որ ժողովրդի բանահյուսության մեջ գտնված մի նյութ շատ հաճախ չի հանդիսանում մի ամբողջություն՝ իբր մարմնացում մի հիմնական գաղափարի, այլ երևում է մեզ իբր գաղափարների և ըմբռնումների խառնուրդ, որոնց պետք է իրարից զատել և հատվածները լրացնել, մասից գուշակելով ամբողջը. ճիշտ այնպես, ինչպես վարվում է փորձված ու հմուտ կենդանաբանը, երբ նախապատմական որևէ վայրում գտնելով երկրաբանական հին շրջաններում ապրող կենդանիների ոսկերտիք՝ խառնված իրարու մասամբ փոշիացած՝ մի ծնոտից կամ գանգոսկրից կարողանում է մտովին վերաստեղծել ամբողջ կենդանին և մինչև իսկ բնորոշել նրա բնույթն ու կենցաղը:

Սրանից կարելի է տեսնել, որ ժողովրդական բանահյուսության ամեն արգասիք ենթակա է բազմադիմի մեկնության:

Եվ երբ այդ նյութին ձեռք է զարկում մի բանաստեղծ մշակելու դիտումով, ապա նրա տված մեկնությունը կախված է իր ըմբռնումից, ճաշակից և ազգային ոգու խորքը թափանցելու կարողությունից: Նյութի ըմբռնումն օգնում է նրան հմտորեն վերլուծել մի խառնուրդ, ջոկջկատել մասերը և մերժել ինչ-որ ավելորդ է՝ մեկնելով մի որոշ իդեայից, որ նա կարծում է, թե դրված է իր ընտրած նյութի հիմքում: Ազգային ոգու մեջ թափանցելու կարողությունը նպաստում է նրան մի քանի հնարավոր մեկնություններից ընտրել այն, որ ամենից լավ է հարմարում իր ժողովրդի մտայնության, աշխարհայացքին և պատմական փորձին: Իսկ ճաշակը թելադրում է նրան գեղարվեստական ամբողջություն կառուցանել այն հատվածներից, որ նա գտնում է հում նյութի մեջ և նրան տալ ազգային ոգուն մտերիմ մի ձև:

Մենք ոչ ժամանակ, ոչ էլ հարմարություն ունենք համեմատելու բանաստեղծի մշակումը և հում նյութը՝ իր բոլոր հայ ու օտար տարբերակներով: Այդ պետք է թողնել ուրիշ օրերի. գուցե և ապագայի բանասերներին, որոնք անշուշտ մի ժամանակ մասնակի հետազոտության նյութ կդարձնեն մեր մեծանուն բանաստեղծի ամեն մի քերթվածը, որ մեզ այ-

սօր ներկայանում է իբր մի պարզ գործ և որն իրոք խտացումն ու կարգավորումն է բազմաթիվ ապրումների և հայ ու օտար տարբերակների:

Այստեղ մենք այնքանը միայն կարող ենք ասել (օգտվելով իր բերանացի բացատրությունից), որ Յովի. Թումանյանը այս հեքիաթի մշակության ժամանակ մտցրել է մի քանի մանրամասներ հարսանիքի տեսարանում: Բացի այդ՝ բուն նյութը նա զարդարել է երեք սիրուն երգերով, որոնցից մեկը ժողովրդական՝ միայն մի փոքրիկ հարմարացումով և մի սրամիտ բառախաղի հավելումով (Նազարը և իր Նազ-յարը):

Կարող ենք վկայել, որ իր ավելացրած մանրամասները չեն հակառակում մեր ժողովրդի այդ ստեղծագործության բնույթին և հարազատության, ընդհակառակն նրանք լրացնում են այն ազգային իմաստությունը, որով տոգորված է Քաջ Նազարի բազմաբովանդակ նյութը:

Բանաստեղծի հավելվածը մենք նկատում ենք մի տաղանդավոր անհատի մեկնություն մի դարավոր առեղծվածի. մի իմաստալից պատասխան՝ մի դարավոր հարցի:

Չկա այդտեղ ոչինչ անբնական և հակագեղարվեստական: Ուրիշ տաղանդավոր անհատներ՝ ժողովրդական պատմիչներ՝ նույնպես ծաղկեցրել են որևէ նոր արկածով կամ մանրամասնությամբ ժողովրդական այս կամ այն նյութը իրենց ժամանակի հայացքով մեկնաբանելով նրան ու լրացնելով թերի համարվածը: Երբ ասում են, թե ժողովրդական բանահյուսությունը հավաքական ստեղծագործության արդյունք է, այդ մտքով պետք է հասկանալ:

Քաջ Նազարի պատմությունը շատ պարզ է. վախկոտի մեկը, որ առանց կնոջ իրենց շենքն իսկ չէր կարող դուրս գալ գիշերով, մի քանի նպաստավոր արկածներից հետո, որտեղ իր մասնակցությունը լիովին կրավորական է, հասնում է փառքի և մեծության ու դառնում թագավոր: Յոթ հսկաներ ծառայում են նրան, հսկաների սիրուն քույրը նրա կինն է, ժողովուրդը նրա գովքն է երգում և աշխարհը նրա բռան մեջն է:

«Ասում են մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու, երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում՝ ծիծաղում է, ասում է.

- Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդու բախտն է: Բախտ ունե՞ս - քեփ արա:

Եվ ասում են մինչև էսօր էլ քեփ է ամում Քաջ Նազարը ու ծիծաղում աշխարհի վրա (էջ 16)»:

Նազարը, որին կինը տանից դուրս էր արել, հարևանի իշին նստած մտնում է անտառ. նա գոռում է վախից, իսկ դիմացից եկող գյուղացին

կարծելով, թե ավագակի է հանդիպել, ձին թողնում է ու փախչում: Նա-
զարը դառնում է մի ձիու տեր:

Ընկնում է մի հարսանքատուն: Քահանան կարդալով Նազարի դրո-
շակի վերտառությունը, թե մի գարկով ջարդում է հազար՝ Նազարենց
գյուղի քահանայի ծաղրը հալած յուղի տեղ է ընդունում և ահա վախկոտ
Նազարը հասնում է պատվի և հռչակի:

Յոթ հսկաներ տեսնելով Նազարին իրենց ամրոցի տակ պառկած մեն
մենակ և լսած լինելով նրա հռչակը՝ նրա ահից դողալը համարում են
բարկության նշան և ահա Նազարն ունի յոթ հսկա ծառա և նրանց սի-
րուն քրոջն իբր նշանած:

Հսկաների աշխարհում մի վագր է լույս ընկել: Նազարը սարսափած
ծառն է բարձրացել ու պատահմունքով վայր ընկել վագրի մեջքին: Վագ-
րը վազում է խելահեղ: Նազարը հազիվ է իրան պահում վագրի մեջքին,
իսկ ժողովուրդը կարծում է, թե նա վագրին ձի է շինել ու վրան նստել:
Եվ ահա Նազարի անօրինակ քաջության գովքն են երգում ամեն տեղ,
նա դառնում է հսկաների քրոջ ամուսինը:

Հարևան թագավորը կռվի է գալիս հսկաների վրա, որ մերժել են
իրենց քրոջ տալ նրան: Նազարն իր ամեհի ձին պահել չի կարող. նա
ձեռքը ձգում է մի ծառի ճյուղի, փտած ճյուղը մնում է ձեռին: Ձին վազում
է դեպի թշնամին և նրանք կարծում են, թե Նազարը հարձակվում է ծա-
ռերն արմատահան անելով: Եվ ահա Նազարը հաղթական ու թագավոր
մի ամբողջ աշխարհի:

Այս է հեքիաթի բովանդակությունը: Բանաստեղծն իր կողմից տալիս
է հետևյալ մանրամասները: Երբ հարսանքատանը իմանում են, թե
իրենց անակնկալ հյուրը Քաջ Նազարն է, մարդիկ են գտնվում, որոնք
ներկայանում են իբր հին ծանոթներ, պատմում են նրա քաջություննե-
րից, բացատրում են նրա ծառա չունենալն ու ժանգոտ սուր կապելը,
խորհրդավոր մեկնություն են տալիս նրա ամենապարզ շարժումների
և ամենուրեք տարածում են նրա հռչակը:

Այս հեքիաթը մեծ առնչություն ունի Անդերսենի այն հեքիաթի հետ,
որ մի թագավոր հանդիսավոր թափորով անցնում է քաղաքի փողոցնե-
րով բոլորովին մերկ, իսկ ժողովուրդն ու պալատականները սքանչա-
նում են նրա անտեսանելի և նուրբ հագուստի վրա, մինչև մի մանուկ, իր
անմեղության մեջ բացականչում է. «բայց նա բոլորովին մե՛րկ է»:

Երկու հեքիաթում էլ մի մտավոր կուրություն, որ արդյունք է ինքնա-
ներշնչման՝ իշխում է ամենքին: Ոչ թագավորի հպատակներն են տես-
նում նրա մերկությունը, ոչ Նազարի շրջապատը՝ նրա ոչնչությունը:

Բայց եվրոպական հեքիաթում կա մի մանուկ, որ տեսնում է ճշմար-
տությունը, իսկ ասիական հեքիաթում միայն ձին է հասկանում, թե ի՞նչ
անպետքի մեկն է նստած իր վրա:

Ավելի հեռուն չէր կարող գնալ մեր ժողովրդի սարկազմը. անբան
անատունն ավելի իմաստուն է, քան բանական մարդը, որ չգիտե լավը
վատից ջոկել, կեղծն ու իսկականը տարբերել և ստրկամալով իր իսկ
ինքնամերշնչումին՝ դառնում է Նազարների հլու հպատակը:

Եվրոպական հեքիաթում ամեն նոր սերունդ ճանաչում է հնի մերկու-
թյունը և այսպես կեղևում է մի պատրանքը մյուսի ետևից. ասիական հե-
քիաթում իշխում է անմխիթար անշարժությունը մի անգամ տիրապե-
տած պատրանքների դեմ:

Բայց մեր «Քաջ Նազարի» համար սա մի շեղ իդեա է. բուն նյութը
ապրում ու զարգանում է ուրիշ գաղափարով - բախտի իդեայով: Հե-
քիաթն ասում է, որ աշխարհում քաջությունը, խելքն ու հանճարը ոչինչ
են, բախտն է գլխավորը:

Արդ՝ ի՞նչ է բախտը մեր ժողովրդի այս հղացումին նայելով: Բախտն
այլ բան չէ, քան հանգամանքների հաջող դասավորություն և աննպաս-
տի նպաստավոր մեկնություն: Շրջելով այս որոշումը՝ կարելի է ասել, որ
անբախտությունը այլ բան չէ, քան հանգամանքների անհաջող դասա-
վորություն և նպաստավորի աննպաստ մեկնություն:

Ճշտե՞նք այս որոշումը հեքիաթի վրա:

Ահա մի շարք հանգամանքների հաջող դասավորություն. Նազարենց
գյուղի քահանան մի սրամիտ մարդ է. ծաղրի համար նրա ձեռքն է տա-
լիս մի դրոշակ, վրան գրած՝

**Անհաղթ հերոս քաջն Նազար
Որ մին գարկի ջարդի հազար:**

Քահանան ակնարկում է Նազարի սպանած ճանճերին, բայց այդ
դրոշակը դառնում է Նազարի բախտի բանալին:

Նազարը մտնում է անտառ և այդ ժամանակ մի վախկոտ գյուղացի է
անցնում ձիով: Նազարն ընկնում է հարսանիք և գտնվում են սնափառ
մարդիկ, որ աչքի ընկնելու համար հնարում են չեղած սխրագործություն-
ներ ու կապում Նազարի անվան: Նազարի հռչակը իրանից առաջ հասած
է լինում յոթ հսկաներին, որով Նազարի բանը հաջող է գնում: Վագրը գա-
լիս է ճիշտ Նազարի ելած ծառի տակն է պառկում. լեղապատառ Նազա-
րը ճիշտ վագրի մեջքին է ընկնում և հաջողում է կպած մնալ առանց վայր
ընկնելու: Կռվի ժամանակ ծառի ճյուղը փտած է դուրս գալիս:

Ահա և աննպաստի նպաստավոր մեկնությունները: Նազարը ոչ ծառա ունի, ոչ կարգին զենք - այդ նրանցից է, որ ամբողջ աշխարհը նրա ծառան է և կարգին զենքով ամեն հասարակ մարդ էլ կարող է քաջություն անել: Նազարն իր ահից գոռում է. ճամփորդ գյուղացին կարծում է ավազակներ են գալիս՝ թողնում է ձին ու փախչում: Հսկաների առաջ նա դողում է սարսափից. նրանք կարծում են բարկացել է և ուր որ է յոթին մի զարկով կվերջացնի: Վազրի մասին լսելիս դուրս է պրծնում, որ ետ փախչի իրենց տուն. կարծում են անմիջապես ուզում է գնա սպանի, այն էլ առանց զենքի: Նույն մեկնությունը տալիս են նրա փախչելու փորձին, երբ լսում է, թե հարևան թագավորը գալիս է իր դեմ կռվի...

Եվ այսպես՝ մեր Նազարը առանց որևէ մասնակցության իր կողմից՝ իրերի բնական ընթացքով, հանգամանքների հաջող դասավորության և աննպաստի նպաստավոր մեկնության շնորհիվ դառնում է թագավոր և աշխարհը իր բուռն հավաքում: Ահա թե ինչպես է գործում բախտը և չնչինը դարձնում մեծ ու ոչինչը՝ ինչ:

Կա՞ արդյոք մի հիմք բուն իսկ մարդու մեջ, որ նպաստավոր հող է դառնում այս համաշխարհային և ապշեցնող երևույթի: Այո՞, կա. ասում է ժողովրդի դարավոր իմաստությունը: Կա՞. կցում է բանաստեղծը իր հավելումով:

Ժողովուրդը մատնանշում է մարդու հավիտենական հակումը դեպի պատրանքը և ինքնաներշնչումը կամ նախապաշարունը: Այստեղ ժողովուրդների դարավոր իմաստությունը ձեռք է մեկնում հզորագույն իմաստասերի իմաստության. ես խոսում եմ Կանտի մասին: Մեկը մերկացնում է պատրանքի հակումը գործնական աշխարհում, իսկ մյուսը իմացական աշխարհում:

Բանաստեղծն իր հերթին մատնանշում է երկու ուրիշ հավերժական գծեր մարդկային բնույթի. դրանք են սնափառությունը և ուժին փարելու անբուժելի հակումը:

Կան իսկական հսկաներ - հավատում է ժողովուրդը. բայց կան նաև կեղծ ու պատիր հսկաներ. այդպես են յոթ հսկաներն ու Նազարը: Բայց նախապաշարունն ու ինքնաներշնչումը այնպես է կուրացնում ամենքի մտքի աչքերը, որ մինչև անգամ իսկական հսկաները կեղծին գերադասում են իրենցից ու դրանով Վախկոտ Նազարին դարձնում են Քաջ Նազար և դառնում նրա ծառան, հլու գործիքը:

Դրան նպաստում է սնափառությունը, ասում է բանաստեղծը. ցանկանալով գերադաս լինել իրարից՝ մարդիկ չեղածը եղած են հռչակում, որ վայելեն ուժի հովանին և դրանով ստեղծում են ուժեղի պատրանքը

ու ստրկանում իրենց իսկ ստեղծած հեղինակության:

Այսպես՝ ինքնաներշնչումն ու նախապաշարունն իբրև պայման և սնափառությանն ու ուժին փարելու հակումը իբրև մղիչ՝ ստեղծում են Քաջ Նազարներ ու բազմեցնում գահերին: Անասունն ավելի բանական է, քան մարդը, դառնությամբ նկատում է ժողովրդի իմաստությունը. նրա բնագոյն ավելի անսխալական է արժեքները գնահատելու գործում, քան մարդու համբավված բանականությունը, որ մի բնական հակում ունի միշտ պատրանքներ ստեղծելու:

Նոր սերունդները նկատում են թագավորների մերկությունը, մխիթարում է մեզ բարի Անդերսենը: Նկատում են, այո, բայց և ստեղծում են նոր մերկություններ, որ նկատում են ուրիշ մանուկ սերունդներ, ստեղծելով իրենց հերթին նոր փառապանծ մերկություն:

Մի՞թե հնար չկա բուժելու թշվառ մարդկությունը այս ահավոր արատից: Կա՞, հուսադրում է Քյոնիգսբերգի իմաստունը. բանականության քննությունն է այդ. նա միայն կարող է մեզ հեռու պահել ամեն տեսակ նախապաշարուններից. պետք է քննել այն մեքենան, որ արտադրում է ամեն տեսակ պատրանքներ, պետք է զգուշությամբ վարել այդ մեքենան և մարդիկ եթե չբուժվեն լիովին, առնվազն շատ քիչ կվնասվին, որովհետև պատրանքի հակումը նա ևս բնածին է համարում և կցորդ մեր գոյության:

Այսպիսով այս օրհասական ու համամարդկային ախտի բուժումը ոչ թե բնազդի մեջ է, ինչպես հրահանգում է մեր ժողովրդի իմաստությունը և սկսել են տարփողել մեր դարի քայքայվող դասերի իմաստունները, այլ բանականության խելացի գործադրության մեջ, որ միակ ընդունակն է լուսավորելու մեր միգապատ ուղին տիեզերական անսահմանության այն փոշու վրա, որ կոչվում է երկիր: Բայց եթե մեզ տան մի երկրնտրանք. բնա՞զդ, թե պատրանք. մենք կուսակից ենք բնազդին և դրանով մենք մեզ զգում ենք համամարդկային և ազգային իմաստության ոլորտում: Իսկ այս խնդրի իդեալական լուծումը մեր կարծիքով հետևյալն է. բնազդը պայծառացած քննական մտքի աշխատանքով: Պատրանքի վիճակն անցողական է. և ամեն խելացի մարդ, որ տեսնում է հասնել ինքնագիտակցության բարձունքին, պետք է արագ անցնի այդ միգապատ մթնոլորտից՝ ողջունելու հոգեկան ազատության պայծառ արևը...

«Քաջ Նազարը» մեզ տալիս է մարդկային փոխհարաբերությունների վերլուծությունը, որքան այդ փոխհարաբերությունները կարող ենք նկատել իբր հոգեբանական բարոյական երևույթ: Եվ մարդ փորձում է հարցնելու. իսկ ի՞նչ վերաբերում ցույց կտա ժողովուրդը, եթե պատմեր

յոթ հսկաների արկածները: Նրա հզոր անդամատիչ դանակի տակ այդ հսկաներն ևս չէի՞ն դուրս գալ մի-մի Քաջ Նազար:

Ժողովուրդներն ընդունել և մինչև այսօր էլ ընդունում են հսկաների գոյությունը, և Հովհ. Թումանյանը այս հեքիաթը տալով ժողովրդի հղացումի համեմատ, ոչ միայն հավատարիմ է մնացել մեր ժողովրդի իմաստության, այլև հագուրդ է տվել իր իսկ բնության պահանջներին, որովհետև նա ինքը ընդունում է բարոյական ու մտավոր հսկաների գոյությունը աշխարհում:

Քայց և հոռետես բանաստեղծի համար Քաջ Նազարը շատ հարուստ նյութ է, եթե նրան մշակե Գոգոլի «Մեռած հոգիների», Դանտեի «Աստվածային կատակերգության» կամ Սերվանտեսի «Դոն Զիշոտի» նման, այսինքն ճամփորդել տալով Քաջ Նազարին. ու հանդիպեցնի ուրիշ Նազարների, որոնցից ամեն մեկը Քաջ է իր շրջանում՝ մինչև հետին ռամիկը, որ Քաջ Նազար է առնվազն իր կնոջ և երեխաների աչքում: Դա կլիներ պատրանքի հսկայական ջախջախում...

Իսկական արվեստի ամեն մի արգասիք մի պատուհան է՝ բացված տիեզերքի ու մարդկության վրա: Նայեցեք այժմ ժողովրդական այս հանճարեղ ու համարձակ հղացումի միջից ձեր շուրջն ու ձեզ վրա և տեսեք, թե որքան երևույթներ ու դիտողություններ գալիս խտանում են այս հանճարեղ ձևի մեջ և որպիսի պայծառ լույս է ընկնում այնտեղից մարդկային պատմության և առօրյա կյանքի վրա...

Այո՞, մինչև այսօր էլ թագավորում է Քաջ Նազարը և իրավունք ունի ծիծաղելու այս հիմար աշխարհի վրա: Նա ապրում է ամեն տեղ և հսկաներն ու ժողովուրդները ծառայում են նրան, քծնում են առաջը և տարածում են նրա հռչակը, գորացնելով նրա հմայքը:

Քաջ Նազար են ոչ միայն մարդիկ, այլև գաղափարներ, տեսություններ, հիմնարկություններ, որոնք սնանք են, ոչինչ, անարժեք և սակայն աշխարհն առել են իրենց բռի մեջ և ծիծաղում նրա վրա: Ու քանի կա մարդկային սնափառությունն ու վեհերոտությունը և ինքնամերշնչումի ու նախապաշարման անիծյալ հակումը՝ դեռ մարդկությունը շատ կտեսնի Վախկոտ Նազարների Քաջ Նազարներ դարձած:

Մենք չենք կարող սպառել այն բոլոր երևույթները, որոնց խտացումն ու մեկնությունն է մեր ժողովրդի այս հանճարեղ հղացումը: Մշակված մի մեծ տաղանդի ձեռքով՝ նա կա և կմնա մեր գրականության լավագույն արտադրություններից մեկը, որ ունի բոլոր մեծ ստեղծագործությանց անկասկածելի կմիքը-լինել մատչելի և թելադրական մանուկին ու մեծին և ազգի բոլոր խավերին:

Հովհ. Թումանյանը գնում է մի ճամփով, ուր վաստակել և մանավանդ թե՛ վաստակելու է անանց փառք մեր գրականության մեջ: Այդ ճանապարհն է. տոգորվել մեր ժողովրդի զգացումով ու մտածումով, ըմբռնել նրա հանճարը և գուշակել նրա իդեալը գեղեցկի աշխարհում, և իր անհատական մտքերն ու զգացումները ապրել նրա ստեղծած հավերժապես գեղեցիկ, հզոր ու հոյակապ կառուցումների մեջ:

Սրանով բարձրանում է ինքը և բարձրացնում մեր ժողովրդին, որովհետև արվեստի ամեն մի գործ մեկնությամբ ու վերապրումով է մեծանում:

Ավելորդ են համարում խոսել Հովհ. Թումանյանի լեզվի մասին, թեկուզ և ունենայի ինչ-ինչ մանր դիտողություններ: Նա ինքը հայ լեզվի ստեղծողներից մեկն է. նա բանաստեղծ է, «ոտից մինչև գլուխ», ինչպես Լիրը՝ թագավոր, այսինքն նա ստեղծում է մեր ազգային *բանը*, որ խոսք և իմաստ է մշակական միանգամայն: Իսկ ուր խոսում է բանաստեղծը, քերականը լռում է:

Հորիզոն, 1912, №№ 232-233

Ալ. Ծառուրյան

Նրան ճանաչում են ամենքը՝ դպրոցական, թե գրասեր. իր ուղանավորը սերտում են դասարանում, արտասանում երեկույթներին, երգում ժամանցին: Գրադատը՝ առիթ եղած ժամանակ՝ նրա մասին նպաստավոր խոսք է ասել մամուլում: Նրա մասին ոչ խանդավառ գովեստ է եղած, ոչ չարախանձ պարսավ: Ինքն անծանոթ մեծ կրքերի՝ կրքեր չի հուզել ուրիշների մեջ. ոչ ունեցել է իր անունով երգվողներ, ոչ էլ եղած է անեծքի բաժին: Համակրանքով խոսել են նրա մասին և գնահատել իր համեստ վաստակը: Հասարակությունը նրան ճանաչել է բարեկամ և հորեյան կազմելով՝ հարգահատույց եղել հրապարակով:

Նա տեղ ունի գրական այն շարքի մեջ, որ Ս. Շահազիզից գալով և Հովհաննիսյանին մեջ առնելով՝ հասնում է Վ. Տերյանին: Այդ շարքին զուգահեռ ձգվում է ուրիշ շարք՝ Խ. Աբովյան, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան: Ա. Ծառուրյանը կանգնած է Հ. Հովհաննիսյանի և Վ. Տերյանի արանքում:

Իր շնորհքը համեստ է և շունչը կարճ: Հեղինակել է քնարական ուղանավորներ, ու թեև թարգմանել է ռուս մեծանուն բանաստեղծների՝ Պուշ-

կինի և Լերմոնտովի ստեղծագործությունները, բայց ազդված է երկրորդական հեղինակներից՝ Պլեչեև, Ֆրուգ, Նադսոն, Նեկրասով:

Մեր գրականության մեջ նա հանդես է եկել իբր թարգմանիչ և ինքնուրույն հեղինակ: Իր ինքնուրույն վաստակներով նա արձագանքել է ժամանակի տիրող գրական ծայրերին, յուրատեսակ մի շեշտով, որ բավական չէ եղած մի նոր եղանակ ստեղծելու, բայց բավարար է եղած իր ուրույնությունը ուրվագծելու: Իր թարմ օրերին տիրաբար իշխում էր Գամառ Քաթիպան իր ոճով ու մոտիվներով. Ա. Ծատուրյանը նվագում է վարպետին ներդաշնակ: Երևում է մեզանում Բ. Գովհաննիսյանը, իսկ Ռուսաստանում համատարած հռչակ է ստանում Նադսոնը - Ա. Ծատուրյանը դաշն է նրանց տրամադրության և ապրումներին: Ծագում է Ա. Իսահակյանի ինքնատիպ տաղանդը և իր շողերով տաս տարի ներկում է հայոց բանաստեղծությունը - այդ շողերով գունավորվում է Ա. Ծատուրյանը: Հայտնվում է Վ. Տերյան. ու թեև հանգուցյալը բավական ճկուն չէր այլևս նոր ապրումների համար, բայց խնամքով աշխատում է ուղեկցել երիտասարդ բանաստեղծին ձևի մշակման գործում:

Ուշադիր ու համակիր հետևում է հայ կյանքի անց ու դարձին և հասարակության տրամադրության ելևէջին. մերթ հորդոր է կարդում, որ չվիատեն, մերթ տրտմում է մեղմակի: Այսպիսով արձագանքում է ոչ միայն գրական ծայրերին, այլև տիրող տրամադրության հառաչին ու կանչին:

Իր շնորհքի հիմնական գծերը մեղմ են. իր ծաղրը-կատակ: Իր ապրումները համեստ են իր շնորհքի նման: Ոչ մի խիզախ պատկեր կամ մտածում չի հղացել նրա շնորհքը, այդ պատճառով սիրելի է միջին ընթերցողին: Ոչինչ ունի խորիմաստ, մթին, տարերային, բնագրական. ամեն ինչ պարզ է, մերկ, միջակ: Իր հայացքները տիրող հայացքներն են. իր ճաշակը - հասարակաց է. իր գրելու ձևերը- տարածվածը: Բարեկամ է լավ տրամադրությանց, քաջալեր է բարի գործերի, գովաբան է օգտակար ձգտումների - այդ լավը, բարին և օգտակարը ընթացիկ ու հանրացած առումով: Ընդհանուր առմամբ հաշտ է շրջապատի և բախտի հետ. իր տրտունջն ու տրտմությունը ներդաշնակ են սովորական տրտունջին ու տրտմության, անվնաս մարդ է իր ապրումներով և դուրեկան հեղինակ իր ձևով:

Մտքեր, որ ծնել են կարող գլուխներ՝ նրա գրչի տակ ստանում են դուրատար ու չափածո ձևեր, տրամադրություններ, որ ապրել են զորեղ հոգիներ, նրա շնորհքից անցնելով՝ հագնում են պարզունակ տողեր: Համեստորեն վերապրում է ուրիշի զորեղ տրամադրությունը և միջակորեն վերակերպում ուրիշի զորեղ մտածումը: Մի համեստ առու՝ առնված շառաչում

ու փրփրում լեռնաջրերից, որ հանդարտ ու պարզունակ ջուր է տանում հարթավայրերը. ոչ ջրվեժ ունի գահավեժ, ոչ սահանքներ փրփրադեզ, այլ մեղմ հոսանք: Նա աղբյուր չէ, որ պիտի դառնա պղտոր ու սրընթաց հուժկու գետ, այլ մի առու, որ ցամաքում է այսօր, բայց թողնում է իր հունը, որով կարող է երբևիցե նոր ջուր անցնել՝ ափերը ձևափոխելով:

Իր շնորհքը աշխատել է ձևի մշակման վրա և նշմարելի հետք է թողել մեր գրականության մեջ. հաջողապես նպաստել է թե հայ արձակի և թե մանավանդ հայ տաղաչափության մշակման գործին. այդ ծառայությունը հաշվի կառնի հայոց գրականության պատմությունը: Իր ոտանավորը միջին տեղն է բռնում Բ. Գովհաննիսյանի և Վ. Տերյանի արվեստի. ավելի թեթև է ու ճկուն. քան առաջնի կուռ ու ճարտասան տողերը և ավելի պարզ ու ամուր, քան Վ. Տերյանի թանձր ու միգամած շարքերը: Իր հանգը հաջող է, հաճախ հարուստ, երբեմն անակնկալ. իր հատածները որոշ են, շեշտը համարյա անթերի: Բ. Գովհաննիսյանից հետո Վ. Տերյանը հասանելի է Ա. Ծատուրյանի միջոցով. ոչ թե պատկերների, նյութերի և տրամադրությանց տեսակետով, այլ տաղաչափության, շարքի ճկունության և հանգի: Սրանով Ա. Ծատուրյանը իր անունը օղակ է անում հայոց բանաստեղծական ձևի մշակման շղթային:

Իր ծառայությունը հայոց թարգմանական գրականության՝ աչքի ընկնող է և երախտագիտության արժանի: Պուշկին, Լերմոնտով և ուրիշ նվազ կարևոր բանաստեղծներ Ա. Ծատուրյանի շնորհիվ է, որ հայը կարող է կարդալ մայրենի լեզվով. Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունները» նրա գրչով հայացան: Իր թարգմանությունները կատարված և հրատարակված են խնամքով. մի քանիսը շատ հաջող. մյուսների լավագույնը դեռ չունինք: Այս ծառայությունն ևս չի մոռանա հայոց գրականության պատմությունը:

Գերեզման է դրվում այսպիսով մի շնորհալի գրական մշակ, որ իր կյանքի մեծ մասն ապրեց օտար աշխարհում, միշտ մնալով հայրենաբաղձ: Իր անձնական վիճակը իր դեմքին ու պահվածքին տալիս էր մի համեստ տրտմություն, որ անդրադառնում էր և իր տողերում: Հյուսիսի սառ ու մռայլ երկրում նա հոգով տեսնում էր հայրենի կապույտ լեռներն ու կանաչը ծուփավոր. և կարծես անսալով ներքին ազդարարումին՝ նա եկավ Կովկաս՝ այստեղ փչելու իր շունչը վերջին: Երկու կարոտ միանգամից լիացրին նրա հիվանդ սիրտը- հայրենիքի և ազատության. և նոր հայության լուսածագին՝ աչքերը հավիտյան փակում է մի համակրելի մարդ, որ սիրում էր մեկը և ապրում մյուսի հուսով:

Լևոն Շանթ*

Հաջող մտածում է ունեցած Համազգային Ընկերությունը Լ. Շանթի երկերի հրապարակախոսությունը դարձնել առիթ հեղինակի մասին խոսելու: Հիսունհինգ տարի գրած և ստեղծագործած է Լ. Շանթ, բայց դեռ նրա մասին հատուկ ուսումնասիրություն չունինք: Իր այս կամ այն գործի մասին հողվածներ երևցած են մամուլի մեջ, բայց նրա գրական բովանդակ գործը դեռ հետազոտված չէ: Եվ ոչ ես պիտի այդ գործը կատարեմ այս հանդեսի մեջ: Դուք պիտի լսեք յուրաքանչյուր մի ընթերցողի կարծիքը ութսունամյա մի հեղինակի մասին:

Իր գործը բազմազան է. վեպ, քնարական հատվածներ, թատերակներ, գրաբանական և գրապատմական ուսումնասիրություններ, ընկերաբանական, մանկավարժական և հոգեբանական երկեր: Ես պիտի խոսիմ գրագետ Լ. Շանթի մասին, բառի նեղ իմաստով:

Տարբեր սեռի գործեր են Լ. Շանթի գրական վաստակները, բայց ամեն տեղ միևնույն մարդն է և միևնույն ներքին աշխարհը: Բուն իմաստով մտավորական է Լ. Շանթ, այսինքն մի մարդ, որի միտքն աշխատում է հանրային և իմացական կյանքի խնդիրներ դնել, պարզաբանել և լուծել:

Իր միտքը կազմավորված է որոշ ժամանակ և որոշ ուղղությամբ: Ութսունական թվականները բնական գիտությանց հաղթանակի տարիներն են, երբ մեկը համարձակ հայտարարում էր. միտքը ծորում է ուղեղային բջիջներից այնպես, ինչպես մեզը երիկամունքից. իսկ մի գերմանացի բնախոսի ասելով՝ *der Mensch ist, was er ist*, այսինքն՝ մարդն է՝, ինչ որ ուտում է... Մեքենական պատճառականությունն իշխում է տիեզերքի մեջ: Կա շատ բան, որ անհայտ է դեռ, բայց չկա ոչ մեկ խորհուրդ. կա ուժերի բարդ խաղ և փոխազդեցություն, բայց չկա իմաստ տիեզերքի մեջ: Մտքերի վրա տիրաբար իշխում էր Դարվին և իր տեսությունը բնական ու սեռական ընտրության և գոյության կռվի մասին: Այս աշխարհիմացությունը քաղքենի դասի իմացական կառուցումն էր, որ ազատագրում էր մարդուն վերինի խնամքից և դնում էր նրան գոյության պայքարի մեջ բնության և իր սմանի հանդեպ: Պատանեկան խանդով

փարում է այս աշխարհիմացության Լ. Շանթ և մինչև վերջը հավատարիմ է մնում:

Այս աշխարհիմացությունը, սակայն, որ կարող էր շատ պատշաճ լինել մի գիտունի կամ հանրային գործչի՝ բուն է դնում մի անձի մեջ, որ ծնված է արվեստագետ. որով ստացվում է մի բարդ մտայնություն: Արվեստագետի մեջ բնածին է հակումը դեպի գեղեցիկը. իսկ պատճառական իմացականությամբ ամեն ինչ իր տեղն է և նույնիսկ նույնարժեք. լավն ու վատը, ծաղիկն ու դիակը, սիրունն ու տգեղը: Այսպիսով մի ներքին ճեղքվածք՝ նկատելի է սկզբից մեր հեղինակի սրտի և մտքի միջև: Միտքն ամեն ինչ նկատում է ուժերի անիմաստ և անխորհուրդ խաղ, սիրտն այդ խաղերի մեջ մետ է գեղեցիկին, որ հաճելին է նախապես: Այդ հաճույքը բնազդական մի մղում է նախ *Լեռան Աղբյուր* մեջ, և հազիվ գիտակցական մի հակում է դեպի հակասեռը *Երազ Օրեթ*-ի մեջ: Այս երկու գործերը հովվերգություն են: Միտքը զգացումի առաջին խլիտները հայոց լեռնաշխարհում:

Լ. Շանթ յոթ տարի ապրած է Էջմիածնի ճեմարանի մեջ իբր գիշերօթիկ: Սա մի միջավայր էր ազգային մտածումի և զգացումի, ուր ներշնչում էին բոլորանվեր անձնուրացություն հանուն ազգի և հանրության շահերի: Այնտեղ իշխում էր ռուսաց գրականությունը, որի գեղարվեստական բարձր ներշնչումը զույգ էր ընթանում հանրօգուտ մտածման: Ծառայել ռամիկին, հատուցանել պարտքը ռամիկին, որ սնած է քեզ՝ այս էր իշխող ոգին այն ժամանակվան ռուս գրականության: Լ. Շանթ տարվում է այս մտայնությամբ: Իր *Դուրսեցիները* այդ մտայնությունն ունին, հանրային շահերին ծառայելու գիտակցությունը կազմում է նրանց անձնականությունը, որին զոհ է բերվում անհատական երջանկությունը: Այդ զոհը սակայն բերվում է դժվարությամբ, ներքին դժգոհանքով...

Այս մտայնությամբ Լ. Շանթն անցնում է Եվրոպա. գոյության կռվի դասական աշխարհը, որ մղվում է հանուն անձնական բարեկեցության: Իբրևն ոգորում է հանուն անհատի գերակայության: Նիցշե քայքայում է ընթացիկ բարոյականը, անցնելով «Հայնկույս բարու և չարի»: Գրական և իմաստասիրական այս հոսանքների և բնական գիտությանց զորավոր ազդեցության տակ քայքայվում են Լ. Շանթի բարոյական ընթանումները: Իր մեջ շեշտվում է անհատն ու անձը և բարոյական սկզբունքները արժևորվում են այդ տեսակետից: Ճեմարանի ներշնչած իդեալը՝ հոգևորական դառնալով ծառայել ազգին՝ նոր հովերի ազդեցության տակ ժխտվում է խստորեն (*Դարձ*): Պատճառական կապակցությանց

* Աղբյուրն այս վերլուծումը կատարած է 1947ին, Բեյրութի «Կրան - Թեաթր» թատրոնին մեջ տրված հարգանքի երեկույթի մը ընթացքին: Դասախոսության բնագիրը չունինք ձեռքի տակ: Ներկա գրությունը տպված է Հալեպի «Նախիրի» և Բեյրութի «Ազդակ Շաբթորյակի» մեջ:

գերագույն լույսի տակ հաստ ու բարակը ստանում են մի գին և հայրե-
նասերն ու դավաճանը դիմաբերվում են իբր երկու եսեր, որ նույնարժեք
են: Կյանքը եսերի պայքար է, որ խորտակում է ամեն բարեկեցություն
(**Եսի մարդը**): Հանրաշահ եսը արգելք է անձնական երջանկության
(**Ճամբու վրա**), իսկ այնքան փառաբանված անձնվիրությունը խորտա-
կում է մարդոց սրտերն ու կյանքը (**Ուրիշի համար**): Ընկերասիրությունն
ու փափկասիրությունը գործի հանդեպ միմիայն խանգարում են կյանքի
վայելքը (**Վերժիմ**). Եսերի պայքարն անողոք է և քայքայիչ, երբ մանա-
վանդ եսն երևում է իբր կոչում (**Դերասանուհին**):

Սիրո մղումի ազդեցության տակ արթնանում է մարդու անձնականու-
թյունը. արթնացած անհատը պայքարում է գերակայության համար. գո-
յության կռիվը տիրական օրենքն է բնության, ուր գորավորն է հաղթում:
Ճեմարանի ներշնչած բարոյականն արգելում է, որ մերկ եսերի ջատա-
գով կանգնի Լ. Շանթ, բայց և բնագիտության պատճառախնդիր իմա-
ցությունն արգիլում է, որ գորավորն ու հաղթականը մերժվի և անարգ-
վի: Իր գեղասեր սիրտն իր մտքին հետևելով պայքարն ու հաղթողն հա-
մարում է գեղեցիկ:

Իր միտքն աշխատում է շարունակ, կյանքը ուժերի խաղ է անիմաստ.
հետևապես ունայնություն է ամեն ինչ: Հաճելին է գեղեցիկը, բայց հա-
ճույքը վաղանցիկ է: Հաճույքի վերելքին հաջորդում է հագեցման վայ-
րէջքը: Ամեն ինչ պատրանք է և հիասթափում. կյանքն այդ վիճակների
հաջորդական շարանն է: Մենք **Հին Աստվածների** շրջանին մեջ ենք հի-
մա, ուր խորտակվում են պատրանքները և ուր երևում է ունայնության
փոսը:

Կյանքը ուժերի մի անիմաստ խաղ է. ունայնության փոսի մի լիցք: Լ.
Շանթ հասուն է արդեն և հիմա մեզ տալիս է ունայնության փոսի տարա-
տեսակ լիցքերի պատկերներ. «Կայսրը», «Շղթայվածը», «Ինկած Բերդի
իշխանուհին», «Օշին Պայլ»: Մեր առջև անցնում են պատրանակերտ
անձեր, որ դառնում են պատրանաթափ. ոմանք ունայնության փոսը
լցնում են մեծ վստահությամբ իրենց ապրածի հանդեպ - ինչպես գող
Վասիլ և Ինկած Բերդի իշխանուհին. ոմանք իբր խաղ - ինչպես Հովհան
Գուրգենը՝ «Կայսեր» մեջ: Ամենքը հետամուտ են վայելքի և իշխանու-
թյան, ինչպես հանրային դասերը «Շղթայված»-ի մեջ, կամ Կայսրուհին
և Լեկապեն «Կայսեր» մեջ. մերկ կամ զարդարուն եսականությանց մի
անվերջ շարան, որ հորինում է իրադարձությանց մեկ անիմաստ խաղ:
Խորապես անհուսական է այս ըմբռնումը կյանքի:

Ամեն ինչ անիմաստ է, բայց ոչ նույնարժեք գեղագետի համար. Շան-

թին հաճելի է ձգտումը դեպի վեր, դեպի նորն ու լիարարը, որ հափշտա-
կում է, տիրանում է մարդուն բովանդակ ու մոռցնում է ունայնությունն
աշխարհի:

Սայաթ-Նովան ասում է.

Չունքի մահս յարեմեն է, թող լի մեռնեմ լավ գոզալով...

Այսինքն քանի որ մահս յարից է գալիս ինձ, թող որ լավ գեղեցկուհու
ձեռքից մեռնեմ:

Մեր Լ. Շանթն ասում է. թեկուզ և կյանքն ուժերի մի անիմաստ խաղ
է, բայց ապրենք գեղեցիկ խաղեր, սրտանց ու սրտալի:

Մի ժամանակ նա ասում էր.

Միայն երկինք, գեթ մի անգամ

Պետքի գալս սրտես զգամ:

Հիմա ոչ թե պետքի գալն է արժեքավորն, այլ լիակատար ապրումը
կյանքի:

Բայց անհնարին է բուռն ու լիասիրտ ապրել, երբ գիտես, թե ամեն
ինչ անիմաստ է և անարժեք և ոտքիդ տակ ունայնության փոսն է բերա-
նաբաց: Այս է պատճառը, որ Լ. Շանթի հերոսները բուռն ու զորավոր չեն
և ոչ անմիջական.

Շանթը տարիներ ապրած է էջմիածնի կրոնաբույր և ազգաշունչ
մթնոլորտի մեջ, ու թեև աշխատած է հետևողական ճիգերով հին ժա-
ռանգությունը քայքայել, բայց լիովին ազատված չէ նրանից, որովհետև
կաթի հետ մտածը հոգու հետ է դուրս գալիս, և այսօրվան հայ մտավոր-
ականը մեր հին վանականի հաջորդն է, և Լ. Շանթին երկնած է այն ազ-
գը, որ տված է Նարեկացի: Ունայն է աշխարհը, բայց գեղեցիկ է խիզախ
մտածումը: Մերժելի է հին ժառանգությունը, բայց գրավիչ է նորի կեր-
տումը: Այո, սերն ու գործը լիցք են ունայնության, բայց ամեն սեր ու
գործ նույնարժեք չեն և միապես վայել չեն մարդուն: Մարդիկ էգեր են և
արուններ, մինչդեռ նրանք պետք է լինեն այրեր և կիներ: Նա է այրը, որ
ստեղծագործում է, բայց ոչ թե զավակներ, այլ արվեստ և նա է կինը, որ
նպաստում է այր մարդուն ստեղծագործելու արվեստ:

Հիսուսն ասում էր. կան ներքինիներ, որ ակամա դարձած են ներքի-
նի, բայց և կան, որ իրենց անձերն ըրած են ներքինի երկինքի արքայու-
թյան համար: Արուից վեր կանգնած է կամավոր ներքինին, որ կերտում
է արվեստ և էգից վեր կանգնած է կամավոր ամուլը, որ նպաստում է ար-
վեստի ստեղծումին: Այո, աշխարհն ունայն է և խաղ անիմաստ ուժերի,
բայց լավագույն խաղն արվեստն է և լավագույն սերը ստեղծագործ

ոգիների մտերմությունը, որից ծնվում է արվեստի գործը: Սեռական հզոր և ստեղծագործ բնագրի վեհացումն է սա, և ունայնության փոսի գեղեցկագույն լիցքը: Լ. Շանթ հասած է այս կետին **(ԿԻՏ)**:

Մի երկու խոսք Լ. Շանթի արվեստի մասին: Ավելի քան հիսուն տարի առաջ նա գրած է.

**Երբ զեղեցիկ թարմ աղջիկը ժպտեցավ,
Սիրտս դողաց հուզումով մը ներդաշնակ.
Սիրեցի ալ, միայն ոչ այն, որ անցավ,
Այլ անոր նուրբ հափշտակիչ դեմքին տակ
Նոր էակ մը, որ մտքես հոն անցուցի.
Ես պատրանքը սիրեցի:**

Ու նաև գրած է.

**Ինձի համար այն ժամերը թանկ եղան,
Երբ ներշնչված ստեղծեցի միշտ անգո,
Բայց անձնուրաց ազնիվ դեմքը սիրական.**

Այսպիսով, ոչ թե իրական աղջիկն է, որ սիրած է, այլ իր մտքի ստեղծած աղջիկը, որ անցուցած է իրական աղջկա դեմքի տակ. և իր ստեղծած անձերն իր իսկ ասելով եղած են «միշտ անգո»: Նրանք նույնպես իր մտքի ստեղծածն են, որ անցած են իրական անձերի դեմքի տակ: Կարող ենք ասել, թե Լ. Շանթ իր դրդումները իրական կյանքից առած է, բայց իրական կյանքը չէ, որ տված է, ոչ-իրական էակներ ստեղծած է իր միտքը և այդ էակներն են, որ խոսում և գործում են նրա երկերի մեջ: Լինելով խստորեն շեշտված անձնականություն՝ նա ոչ թե հարմարած է կյանքին՝ լավապես պատկերելու համար ինչ որ իրական է, այլ կյանքի տվիքներն հարմարած է իր անձնականությունը շեշտելու համար: Նրա երկերը կարդալով ոչ ոք կարող է գաղափար կազմել այն կյանքի մասին, որ թավալած է Լ. Շանթի շուրջը, բայց այն մասին միայն, թե ինչ մտածումներ ունեցած է Լ. Շանթ, իր կառուցումների այս ու այն տարրն է կյանքից առնված, բայց այդ կառուցումները կյանքի պատկերը չեն: Նրանք նկարագարողում են Լ. Շանթի գաղափարները: Բայց այս հանգամանքը ոչ թե արժեքագրկում է նրա գործը, այլ տարբեր արժեք է տալիս նրան, որովհետև Լ. Շանթ մեծ մտավորական է, խորամիտ և խորաթափանց: Իր նյութն է ոչ թե հայ կյանքն ու հայ մարդն, այլ մարդը հայի մեջ, հայի մարդկայինը, կամ կարճ և՛ մարդկայինը, որ մեծ արվեստի նյութն է բոլոր դարերի: Իր հետաքրքրությամբ և խոկումներով նա վեր է ընթացիկ կյանքից և նրան հասնելու համար պետք է վերանալ: Հակառակ իր երկարամյա գրական գործունեության նա մնում է մեծ անձանոթը մեր

մեջ: Իր գրիչ ձեռք առնելու տարիները կազմակերպվեցավ հայ հեղափոխությունը և երիտասարդության գաղափարական տարրը անձնատուր եղավ այդ շարժման և ժամանակ չունեցավ Լ. Շանթին կարդալու: Այն տարրը, որ գաղափարական չէր և անձնական բարիքին էր հետամուտ՝ բնավ ձեռք չառավ նրա գործերը, ոչ իսկ իմացավ նրա գործերի մասին: Լ. Շանթ մտավորականների հեղինակն է. իր գործող անձերը մտավորական դասիցն են, իր հարուցած խնդիրները վերացական են, մարդկային և մնայուն. այս հանգամանքը, եթե մի կողմից կայուն ու մնայուն դիրք է տալիս նրա գործին, մյուս կողմից սահմանափակում է ընթերցողների թիվը:

Բայց պետք է նրա միջից անցնել ավելի վեր գնալու համար: Երկերի հրատարակությունը լավագույն առիթն է ճանաչելու հեղինակին, որ մնացած է մեկուսի: Հոտ է այն ազգը, որ չունի իմացական բազմություն: Պետք է ստեղծվի այդ բազմությունը մեր մեջ, և Լ. Շանթի երկերը լավագույն միջոցներից մեկն են այդ խավն առաջ բերելու: Լ. Շանթի գործը հմայաթափ է անում խորամուխ ընթերցողին, որովհետև ներշնչումը չէ, որ իշխում է իմացության վրա, այլ պատճառախնդիր իմացությունն է, որ գունաթափում է ներշնչման ծաղիկները, ուստի իր անձերը ուրվագծեր են: Հմայաթափ է անում նաև գիտությունը: Բայց ոչ մեկ ուժ կարող է հաղթել կյանքի մղումին, որ գալիս է տիեզերքի խորքից և անցնում է մեր միջով: Պետք է անցնել գիտության և Լ. Շանթի երկերի բովից՝ ավելի ներուժ ապրելու այս կյանքը:

Ամբողջական երկեր, հ. 1, էջ 78-84

Ավետիք Իսահակյան

Քանի մը շաբաթ առաջ նույն այս սրահին մեջ հոծ բազմությամբ տոնախմբեցին Ա. Իսահակյանին յոթանասունամյակը: Նույնքան հոծ բազմությամբ այսօր հավաքված ենք նույն նպատակով: Վստահ եմ, որ եթե վաղը ուրիշ մշակութային հաստատություն մը նույն նպատակով դիմեր հանրության, պիտի համախմբեր նույնքան մեծ բազմություն: Ե՛վ բնական է, և՛ հասկանալի: Ա. Իսահակյան ծանոթ է ամենքին, ամենքը կարդացած են անոր երգերը, սիրած են և երգած: Ե՛վ այսպես եղած է առաջին օրեն, երբ 1898 թ. լույս տեսավ իր փոքրիկ գրքույկը՝ «Երգեր և Վերքեր»: Ուրախ եմ, որ այդ գրքին առաջին գնահատողն եղած եմ այն տարին և անոր հեղինակին մեջ մատնանշած եմ նշանավոր բանաստեղծ

մը: Մարգարեությունն շիտակ դուրս եկավ և հիմա կրկնակի ուրախ եմ, որ պատեհություն ունեն հիսուն տարի հետո անոր յոթանասունամյակի տոնախմբության մասնակցելու:

Ավետիք Իսահակյան գրած է երգեր, քերթված մը «Աբու Լալա Մահարի», արևելյան զրույցներ և կենցաղական մեծ վեպ մը՝ «Ուստա Կարոն», բայց ան գերազանցապես քնարական բանաստեղծ է և ես բանաստեղծի մասին է, որ պիտի խոսիմ և հատկապես պարզեմ, թե ուր է անոր մեծ ժողովրդականության պատճառը և որն է իր հանրային դերը մեր կյանքին մեջ:

Ինքն իր մասին կըսե.

**Ես երգիչ եմ,- երկնի թիթեռ,
Ես գանձ չունիմ- լեռ ու բեռ.
Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,
Ծաղկի բուրմունք, կույսի սեր.
Ես սիրում եմ մրմունջ, տրտունջ,
Տանջված սրտի երգ ու վերջ:**

Ըստ երևույթին շատ քիչ բան, բայց նկատեք՝ շատ էական բաներ: Բնության տված զոդտրիկն ու հմայունը - ծաղիկ և աղջիկ. և ասոնց կյանքի նրբահուն ծորանքը - բույր ու սեր: Արևելյան կյանքին լավագույն կերպը - թիթեռի պես ազատ, անհոգ ու աշխուժ՝ ինչպես մանուկ ու պատանի: Դժգոհանքի մեղմագույն տեսակը - մրմունջ ու տրտունջ: Սիրո տառապանքն ինքնին - վերքը և անոր մեղմ կտտանքը՝ երգը:

Այդ վերքը նա ստացած է իր պատանի տարիքին հազիվ երիտասարդ: Իր սիրածին առած և տված են ուրիշի: Այս դարձած է անբուժելի հարված իր սրտին, մնայուն վերք և հիմնական լարը միանգամայն իր քնարերգության, որ ուրիշ բան չէ, քան այդ վերքին մորմոքը և անդրադարձումները անոր ոգեկան և իմացական կյանքի մեջ:

Բացառիկ էր արդյոք այն աղջիկը: Բանաստեղծն արդեն հիսուն տարեկան և օտարության մեջ՝ կհիշի և կնկարագրի այդ աղջկան: Երբ, կըսե, հոգնաբեկ՝ անգամ մը ևս գամ շեմիդ, ես կուզեի

**Տեսնել այնպես նորից քեզ
Ինչպես տեսա, սիրեցի,
Սիրեցի քեզ սրտակեզ
Շնորհներով կուսական,
Աչքերիդ մեջ նվիրում,
Խոստումներով դյութական.**

**Ճակատդ լույս ու ճաճանջ
Եվ ժպիտով հոգեթով,
Եվ ծայնիդ մեջ՝ սիրո կանջ:
Շուրջդ գարնան բույր ու շաղ,
Շուրջդ կարկաչ ու կանաչ:**

Ո՞ր բարեձև հայ աղջիկը չէ այսպես, մանավանդ գարնան բույր ու շաղին մեջ, երբ ջրերը կարկաչեն և ծառերը կանաչեն: Եվ մանավանդ երբ անոր նայողը խանդաբորբ պատանի մըն է: Եվ ո՞ր պատանին չէ խանդաբորբ արևասուն գարունին: Ոչ թե աղջիկը, այլ ինքն է բացառիկ, իր սիրտն է բացառիկ, ուր սիրածին կորուստը անբուժելի բեկում կատեղծի և խորին վերք կբանա, որ թեև կսպիանա, բայց չի դադրիր կտտալ և մորմոքիլ:

Ուխտած էի քեզ չտեսնել, կասե բանաստեղծն իր սիրածին, բայց նորեն հանդիպեցա.

**Քուրիկ, վերքս լավ է հիմի.
Մի սև սպի տեղը կա:
Էն սև սպին սև ամպի պես
Սևցուց դեմքը արևի.
Ու ման կուզամ սև շուքի պես
Սարե՛ր, ձորե՛ր ամայի...**

Այնուհետև բանաստեղծը կյանքին և աշխարհին կնայի այդ սև սպիին տեսանկյունից և անոր պահվածքը կյանքին մեջ այդ սև սպին է, որ կորոշե: Ան բազմազան ելքեր կորոնե իր վերքեն ազատելու- և իր ոգեկան ողջության ու թարմության հասնելու և իր երգերը այդ որոնման հետքերն են տրոփուն: Նախ ինքն իրեն սիրտ կուտա և կըսե իր սրտին. մի՛Տ վհատիր, տանջվի՛ր, հուսա՛: Դետո վաղսմունց կերպով կմխիթարվի. գուցե սիրածը հետ գա: Այնուհետև անմխիթար լացով կանցնեն իր օրերը: Աշխարհը սակայն կերթա իր կարգով. սիրածն ուրիշի ծոցին մեջ, իսկ ինքը մի՛նակ ու մոլոր: Կհեռանա այն աշխարհեն ու միջավայրեն, ուր իր սիրտն արյունեցավ և կթափառի լեռ ու ձոր, օտար աշխարհներ, միշտ մեն-մենակ և իր վշտին հետ. սև սպին կմռայլե իր մտքին աչքն ու լույսը: Աշխարհը, մարդն ու աշխարհը կդառնան անարժեք. ամեն ոք և ամեն վարմունք կթվա կեղծ ու պատիր, ընկերը դավադիր, կինը՝ դրուժան, համայնքը հանցապարտներու և խարդախներու հավաքույթ մը և մինչև իսկ տիեզերքը դավադիր մարդու բախտին դեմ: Ասկե կծնի հաճախանքը լիակատար մեկուսացման և անվախճան թափառումին, որ աղբ-

յուրն է «Աբու Լալա Մահարի» քերթվածին, իսկ աս՝ ի սրտաբեկ և սևատես տրամադրության հոյակապ անդրադարձումը, իր սրտին սև սպիին շողշողուն փայլատակումը:

Բայց բնությունը կ'ապրի հարատև և ամեն նոր գարուն կնորոգի անոր վիրավոր սրտին կսկիծն ու մորմոքը: Ան կփորձի տառապանքեն ազատիլ զգայական հաճույքին մեջ սպառելով իր կյանքը: Սակայն ինքն իսկ կխոստովանի թե

***Ուրիշին գրկած՝ ես քեզ եմ զգում
Ուրիշի գրկում՝ ես քոնն եմ հավետ...***

Ու նաև դառնորեն կհամոզի, թե զգացական հաճույքի մեջ

***Մերն է անկումը մեր աստվածության,
Շրջմուլիկ հյուրը կրքերի ճահճի...***

Այս հաճույակից և մոլեգին կյանքեն իբր դիրք իր հոգիին մեջ կմնա հավատքի կորուստը դեպի մարդը, կինն և ընկերը:

Տարիները կ'անցնին. ճերմակը սևին կխառնվի մազերուն մեջ: Ընթուտ հոգին կհամակերպի ակամա և տրտմությունը կդառնա տիրական տրամադրություն: Սիրո նոր փորձերեն կխուսափի ան. և ժամանակ է արդեն. հիսուն տարեկան է: Համը բերնին մեջ է, բայց և ահը սրտին մեջ.

***Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամրջին
Հորդ մազերը գետ գիշերվա
Եվ հակինթներ ականջին.***

***Աչքերը սև - արևներ սև
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:
Աչքս դիպավ աչքի բոցին
Ու գլուխս կախեցի.***

***Ժպտաց ժպտով առեղծվածի
Հավերժական կանացի:
Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի.
Մի մրահոն կույս էր քեզ պես
Կտորեց սիրտս պատանի...***

Արդեն կզգա մահվան շունչը. և խո'րապես: Տրտում աչքերով կտեսնե և շատ պարզ, որ ամեն ինչ անցավոր է այս աշխարհին մեջ և, ավա՜ղ, անցած են արդեն իր կյանքին թարմ օրերը. կտևե կյանքը տիեզերքին մեջ և ինքն է, որ մոտ է չքացման:

Այս ապրումները կծնեն բազմաթիվ գեղեցիկ տաղեր, բայց ունայնության տաղտուկը կծավալի սրտին մեջ:

Մեկ միջոց կար «ունայնության փոսը» լցնելու և իր ստացած վերքը մեղմելու. - հանրօգուտ և տևական աշխատանքը: Բայց ան երգիչ է և երկնի թիթեռ և ուրեմն անկայուն և տպավորական: Ու քանի որ տպավորական, բայց և ազատատենչ և խորքով կարեկից, ուստի համակիր և համազգաց է ազատագրական լայն շարժումներու: Հանրային կյանքի շառաչումներուն անոր հոգին կարծազանքե ամրակուռ և շառաչուն երգերով, որ ծնած են ֆիդայական շարժումեն, հայ-թաթարական ընդհարումներեն, Ռուսաստանի հանուր հեղափոխության գոռ ալիքներեն և աշխատավոր դասերուն համայնացունց խոյանքներեն: Բայց ամենը դիպվածական են: Ան ոչ թե վարիչ է և կամ առաջնորդ, այլ մեծատաղանդ համակիր: Պողպատը քիչ է իր բնույթին մեջ և կամքի պրկումն անբավարար: Իր մարտական երգերուն միմիայն է. շարենցը մրցորդ երևաց, բայց ան հեղափոխության համակիր չէր միայն, այլև մարտիկ էր միանգամայն: Հանրային լայն շարժումներուն համակիր ներապրումը կրնա ոգիները հափշտակել առժամայն, բայց չի կրնալ սրտին վերքերը բուժել. և գոռ ալիքներն անցնելով՝ նույն մարդն է իր վշտով և մահու սարսուռով, որ կտեսնենք մեր բանաստեղծին մեջ: Իր մարտական տրամադրությունները թողած են անկորնչելի հետք մը - Ուստա Կարոն - որ ինքն է այլափոխ:

Այս է Ա. Իսահակյանին ոգեկան ընթածիրը, նախ մաքուր և երազուն պատանի, հետո սրտաբեկ հոգի, այնուհետև սիրասթափ և հիասթափ մարդ մը, որ ելքեր կ'որոնե հանրային շարժումներուն և զգայական սիրո մեջ. ապա նկուն կյանք մը և դառնացած սիրտ ու մտայնություն: Բայց տառապանքեն իր սիրտն դաժան չէ դարձած և ոչ փոխված է անոր խորքը, որ բարի է, բնաբույս: Եվ ան մեզ և իր զավակին կկտակե.

«Ատելու չափ սիրիր մարդկանց, բայց լավություն միշտ արա»:

Բացառի՞կ է հոգեկան կյանքի այն ընթածիրը, որով անցած է Ա. Իսահակյան: Ո՛չ: Այդ ընթածիրն է բոլոր մաքուր և երազուն հոգիների: Ո՞ր պատանին է, որ չէ երազած և ո՞ր հասունը, որ չէ հիասթափ: Այն ո՞վ է, որ չէ վշտացած, երբ չէ հասած իր երազածին: Ո՞վ չէ հաճույքին կառչած

իր վիշտը մոռանալու համար: Ո՞ր սիրաբեկ սիրտն է, որ չէ տրտմած գարնան և չէ ավաղած իր թռչունը, երբ տեսած է թարմ ծաղիկ ու աղջիկ և ո՞վ է, որ չէ վշտացած աշնան, հիշելով իր լավ օրերը, և զգալով մոտալուտ վախճանը: Այս ամենը տիպար ապրումներն են և սովորական ընթացիկն է բազմաթիվ հոգիներու:

Ո՞րն է բանաստեղծի կոչումը: Իր անվան մեջ է իր կոչումը - բանաստեղծ, այսինքն՝ «բան ստեղծող», որ կնշանակե խոսք և միտք ստեղծող: Որո՞ւ կամ ինչի՞ համար - իր ներքին աշխարհն արտահայտելու համար: Ու երբ բանաստեղծի ներքին աշխարհը տիպար ապրումներ ունի, այսինքն կ'ապրի նույն սերն ու վիշտը, կսկիծն ու մորմոքը, սրտաբեկումն ու սիրասթափումը, որ կ'ապրինք նաև մենք, այն ժամանակ իր ստեղծած «բանը» կխոսի նաև մեր սրտին և մեր սրտեն: Մենք կհամազգանք բանաստեղծին: Մեր ապրումները նման են, բայց նման չեն մեր կարողությունները: Ան բանաստեղծ է և տաղանդ ունի, իսկ մենք սովորական մարդիկ ենք: Ան ավելի պայծառ կզգա, քան մենք և ավելի գեղեցիկ կխոսի իր ապրումի մասին: Անոր պայծառ և գեղեցիկ խոսքը, որ մի երգ է, կդառնա երգը և մեր ապրումի: Եվ մենք կսիրենք ու կերգենք անոր խոսքը, որովհետև ասով մեր ապրումն է, որ կերգենք: Անոր փորած հունով կհոսի մեր զգացումը: Մեր վիշտն ու սրտաբեկումը կդառնան հնչուն և գեղեցիկ և այն, ինչ որ տառապանք էր, կդառնա վերելք: Իսկ երբ իր պատկերները հայրենի աշխարհեն առնված են և մեզ սովոր աշխարհեն, երբ անոնք ցայտուն են և անմիջապես կնկարվին մեր աչքին, երբ իր լեզուն պարզ է և մտերիմ, ասույթները հարազատ և մայրենի՝ այն ատեն բանաստեղծի «բանը» մեզ հիացում կազդե և մեր սիրտը կլցվի սիրով դեպի այն մարդը, որ այդքան մեծ շնորհք ունի մեր սրտին խոսելու՝ այնքան պարզ գեղեցիկ և մտերիմ և մեր ապրումը կդարձնե արվեստի գործ: Հիսուն տարի է հայ մարդը՝ լինի երազող պատանի, սիրատարփ երիտասարդ, թե հիասթափ տարեց՝ իր սրտի ապրումներում իբր հուն կօգտագործե Ավ. Իսահակյանի ստեղծած «բանը»: Սիրով սրտաբեկը, կյանքեն դառնացածը, տրտում մահազգացը հիսուն տարի է գիտեն, որ միմակ չեն տառապանքի մեջ, որ ազգին նշանավոր բանաստեղծը ունին իբր ցավընկեր և թարգման: Հասկանալի է հիմա, թե ինչու՞ ան սիրված է և իր երգերը ամենի բերանն են և ինչու՞ հո՞ծ բազմությամբ կերթան ամեն հրավերի, ո՞ւր կլսեն, թե խոսք պիտի ըլլա իրենց սիրած բանաստեղծի մասին: Այսպես են ամենքը, որ ժողովրդի սրտեն ջուր կխմեն:

Ավ. Իսահակյան անարվեստ հեղինակ է, եթե արվեստ ասելով հաս-

կանալ ուզեն գործի հղկումը: Նա Շիրակի ծնունդ է, ուր ժողովուրդը կխոսի արևմտյան բարբառ (Կարոն) և Ավ. Իսահակյան կգրե լեզվով մը, որ միապես հասկանալի է թե մեր երկրի ներսը, թե դուրսը: Շիրակը մեր մանինների աշխարհն է, ուր գյուղացի աղջիկները ամեն տարի կստեղծեն նոր ու նոր երգեր իրենց շուրջպարի ընթացքին: Նաև աշուղների աշխարհն է Շիրակը, ուր քաղաքի բանուկ սրճարանին մեջ տարիներ առաջ կերգեր ու կնվագեր Ջիվանին, իսկ իր հետևորդները իրենց սազով ու երգով կթափառեին Շիրակի գյուղերը: Մեր բանաստեղծին ականջը դեռ վաղ տարիքեն լցված է ռամկի սրտաբուխ երգերով և ան ստեղծած է անոնց արվեստով, որ համարած է միակն և իսկականը: Տարիներ հետո միայն այն գրած է միայն մաքուր գրական լեզվով, բայց միշտ մնալով պարզ ու մատչելի: Ոչ մեկ ճիգ կնկատվի իր երգերուն մեջ և ոչ մեկ հղկում: «Սրտաբուխ» բառը կարծեք հորինված է անոր երգերը որակելու համար: Թեև ճեմարան ուսած է և Գերմանիա եղած՝ բայց երբ գրիչը ձեռք առնե՝ ան շիրակեցի հայ մարդն է, պարզ սիրտ, երազուն հոգի. բայց սիրախոց սիրտ և վշտահար հոգի, համակերպված ու տրտում, ինչպես հայ ժողովուրդը:

Լինելով մեզ ընկեր իբր սրտաբեկ և մահազգաց՝ ան վեր է մեզմե իր հոգիին ապրումներով: Ամենն առաջ ան համառ երազողն է մեր մեջ, որ երբեք չէ հաշտված իրական կյանքին հետ. երազն իր աչքին միակ իրավացին է, իսկ իրականը բիրտ և անիրավ, ուստի միշտ վեր է կյանքեն և ատեցող առօրյան: Եվ ապա անոր մեջ միշտ կենդանի ապրում մըն է համազգացումը տիեզերական կյանքին: Չեմ ըսեր, թե մտածողն է ան, բայց խոկացողն է մեր մեջ: Տիեզերքը լայնորեն կարծազանքե անոր հոգիին մեջ և այդ մտերմության մեջ միշտ կթարմանա անոր կորովը և սիրտը ուժ կստանա տաղտկալի առօրյան ապրելու: Այս լայն համազգացումն է, որ մեր բանաստեղծին կդարձնե համակիր և կարեկից մարդկային թշվառության, խոնարհ խավերու տառապանքին և ազատության խոյանքներին: Նիցշեի ազդեցության տակ, որ տիեզերական հռչակ ուներ մեր բանաստեղծի երիտասարդ ժամանակ՝ ան մի պահ կարծեց, թե կոչված է լինել մարգարե: Այս ապրումին սաղմը սակայն ան ուներ, երբ դեռ Նիցշեն չէր ճանաչեր: Այս ապրումը ծնունդ էր իր բնածին համազգացության՝ բնության կյանքին: Հոյակապ են և անկորնչելի այն երգերը, որ ծնունդ են այս ապրումի: Բանաստեղծին կթվի, թե տիեզերքը մի անհուն զանգ է և իր հոգին անոր լեզվակը:

*Եվ հանկարծորեն՝ պարզ ու աննսեմ
ես իսկ զգում եմ, տեսնում եմ ահա-
Տիեզերքը ողջ մի մեծ անհուն զանգ
Եվ հոգիս նրա լեզվակը վսեմ...
Եվ հրաշքներով վեհ լռության մեջ
Տիեզերքն անծիր դողանջում է խոր.
Եվ իմ հոգումն է, իմ հոգին է այն
Որ դողանջում է.- Ես մարգարե եմ...*

Եվ բանաստեղծը գահավիժում է դեպի «գորշ ու հարթ» զանգվածը, դեպի ամբոխը.

*Նրան խայթելու և քարոզելու
Ե՛վ արտասվելու, և՛ այրվելու...*

Եվ նա զայրագին խոսում է նյութապաշտ ամբոխին.

*Ես ձեզ ասում եմ. կգա ոգու սով
Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ.
Կընկնեք մուրալու հափրած որկորով,
Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ:
Լրբենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու վառ զեղմունք - միտք ու երազանք,
Նյութի տաճարում արբած պարեցիք
Մոռացած անմահ անհունի տենչանք:
Դո՛ւք, որ հեզնեցիք ուժն ստեղծագործ,
Ձեր նյութի հանդեպ կգա ոգու սով
Եվ մուրացկի պես փշրանքի համար
Ծարավ ու նոթի՝ կանցնեք ծովե ծով:*

Եվ հոգու աչքով կտեսնե նաև մարգարեի վախճանը մեր բիրտ աշխարհում: Երագին մեջ կթվի, թե զինքը կտանին կախելու՝ տատասվի պսակը ճակատին...

*...Եվ խոսքս մուրճ էր և խոսքս հրդեհ
Ես փշրում էի սրտերը մարդկանց.
Եվ խոսքս մուրճ էր և խոսքս հրդեհ
Ես այրում էի սրտերը մարդկանց:*

*Ինձ տանում էին դեպի կախադան
Սվինների տակ զինավառ զորքի*

*Եվ հետևում էր ամբոխն ինձ ունայն,
Ամբոխը հոգու և նանիթ խոսքի:*

*Ինձ բարձրացրին դեպի կախադան.-
Եվ ճակտիս ցնորք և վսեմ պսակ.
Ամբոխը սակայն թշվառ և ունայն
Խուռն սողում էր իմ ոտքերի տակ...*

Այս կարգի հղացումները ցույց կուտան, թե բանաստեղծը վեր է մեզմե, և կգծեն ճանապարհ նը հոգով «վաստակածներու և բեռնավորներու» առջև՝ թոթափելու առօրյան և բարձրանալու դեպի տիեզերական համազգացում և անձնվիրություն: Ահա սպեղանին բուրդ հոգեկան խոցերու:

Գրականության պատմության մեջ որոշ և հաստատուն է Ա. Իսահակյանի տեղը: Ան կու գա Գ. Թումանյանեն հետո և ձեռք կմեկնե Վ. Տերյանին: Իր անունն ու գործը անկորնչելի ստացվածքն են Հայոց Գրականության: Քանի կա երազ, սեր ու սիրասթափություն, քանի կա անցավորին ապրումն ու համազգացումը բնության՝ կան ու կմնան մեր բանաստեղծին ընտիր երգերն ու մրմունջները: Հայոց լեզուն կրնա փոխվիլ, բայց անոր լավագույն երգերը կմնան ու կխոսին հայ սրտերուն, ինչպես Քուչակի և Սայաթ-Նովայի երգերը: Հիսուն տարի անցած է, բայց անոր երգերը թարմ են ու բուրյան: Այդպես շատ հիսուն տարիներ պիտի անցնին առանց որ փոշի նստի այդ ծաղիկներու վրա:

Ահա մի վերջին տաղ, որ գրված է հիսուն տարի առաջ և զոր չպիտի կարենա մաշել ժամանակը.

*Շղարշ ամպերդ երկինքն առան
Լուսնակն անդորր կշողա.
Լռիկ ճահճում հարհանդ- մարմանդ
Նուրբ եղեգնը կդողա:*

*Արագիլը մինակ ու լուռ
Եղեգնի մոտ կքայլե,
Կմտորե խոր ու տխուր
Ճահիճն աղոտ կփայլի:
Մռայլ ափին մեմակ նստած՝
Սիրտս անուշ կթախծի
Եվ անուրջում միտքս թաղված՝
Քունն աչքերիս կհանգչի...*

Այսպես է Ավ. Իսահակյանն իբրև քնարերգու:

Հիմա նա հայրենիքի մեջ է, որ կվերաշինվի, կամ լավ ևս՝ կնորաշինվի: Իր շուրջը կաճի հավատավոր և թարմ սերունդ մը, որ կսիրե և կգնահատե անոր գործը: Իր շուրջն է նաև Հայոց ժողովուրդը, որ սնած է անոր երգերով և հիմա կրնա կարդալ նաև անոր գիրքը: Անոր հովանի և քաջալեր կեցած է Հայոց Պետությունը, այն «փարթամացուցիչ պսակը գեղեցիկ և կենցաղօգուտ», որի վերացումն իր գլխեն կողբար Խորենացին: Անկասկած կամոքեն անոր վիշտը մեկ կողմեն տարիքը, մյուս կողմեն հայրենիքի ներկան, բայց մանավանդ անոր փայլուն ապագան:

Թույլ տվեք հիմա անձնական տենչանք մը արտահայտեմ, որ հուսամ թե նաև ձերն ըլլա: Կուզեի, որ հիմա գարուն լիներ, ապրիլ, և մենք նստած ըլլայինք Ավ. Իսահակյանի հայրենի գյուղի մեջ, Ախուրյանի ափին: Բայց ո՛չ: Նախ Արաքսի ափը տղմուտ է և հետո դիմացը դարձյալ նույն տաճիկն է՝ կլափն արյունոտ: Լինեինք Երևան, Հրազդանի ափին (այս գետը մերն է ծայրե ծայր): Գետեն ձուկ լինեին հանած, խաշած ու դրած սեղանին. լիներ Երևանի թունդ գինին: Ձուռնաչին Ավ. Իսահակյանի երգերից մեկը նվագեր նեյի վրա և թմբկահարը մատերի հարվածով ընկերանար նվագին: Լցնեինք բաժակներն ու կանչեինք.- Ավո՛ ջան, քու կենացը. շատ ապրես հայոց ազգի համար. երգդ անսպառ, հասար մուրազիդ: Բայց... հասա՞վ արոյոք: Հիսուն տարի առաջ, երբ մենք երիտասարդ էինք, Հայաստան ըսելով մեր մտքեն բնավ չէր անցներ Երևան ու Սևան: Մեր միտքը կթռչեր Կարին, Մուշ ու Վան:

Եվ հիմա կպահեն նույն տեսարանը, նորեն թող սեղանին ձուկ ըլլա, բայց տառեխ և նորեն գինի, բայց Շահբազի. և մենք նստած Վանի Այգեստանին մեջ, բարդիներուն տակ, առվի ափին... կամ, լավ ևս, լինեինք Մշո Ա. Կարապետ, լուսաղբյուրին քով, Սասնոյ լեռներուն դիմաց, ուր այնքան ֆիդայիներ ընկած են փառքով և որոնց հիշատակին այնքան սրտաբուխ երգեր նվիրած է մեր բանաստեղծը, այնտեղ, ուր դարերով երգած են հայ գուսանները և միջնադարի և վերջադարի հայ աշուղները. այնտեղ Ս. Կարապետի հովանիին տակ, որ բանաստեղծներուն շնորհք է տված դարերով և ճարտարություն բաշխած արվեստագետին՝ մենք ամենքս մեր ազգային երազին լիովին տիրացած՝ տոնախմբեինք Ա. Իսահակյանի գրական գործունեության հիսունամյակը մեր ամբողջացած հայրենիքին մեջ... Իցիվ թե՛ այս երազը նույնպես կատարվի, քանի դեռ ողջ ենք բանաստեղծն ու մենք:

Ամբողջական երկեր, հ. I, էջ 120-130

Հայ տառապանքի երգիչը*

Ատոն Յարճանյանը հայ նորագույն գրականության ամենախնքնատիպ դեմքերից մեկն է: Ավ. Իսահակյանի մման նա էլ ստեղծել է մի դպրոց. արևմուտքի սկսնակ հայ բանաստեղծները նախ նրա շավղով են գնում, ապա ընտրում իրենց ուղին. կան, որ հետևում են նրան քայլ առ քայլ և կապկորեն: Սա մշան է, որ նա մի գորեղ անհատականություն է, մի բնութային ոգի, որի ստեղծելու և արտահայտելու կերպը իր անակնկալով գամում է մեր ուշադրությունը:

Արդեն վեց տարի է, որ նա երևացել է մեր գրականության մեջ և չի կարելի ասել, թե ռուսահայերս ճանաչում ենք նրան: Մասամբ գրաքննական պայմանները, մասամբ գրելու ձևն ու ոճը՝ անսովոր մեզ համար՝ չեն թողել, որ մոտից ճանաչենք այս հետաքրքրական դեմքը: Մի շատ նեղ շրջանից դուրս՝ նրա անունը անծանոթ է եղել և է՛ մեր միջավայրում: Մինչդեռ նա արժանի է ամենալուրջ ուշադրության:

Յարճանյանը հայ տառապանքի երգիչն է. նրա մտածումը տածում է այդ տառապանքի շուրջը, երևակայությունը նրանով է կլանված, և ներշնչումը այնտեղից է սնունդ առնում: Մինչդեռ Գամառ-Քաթիպան, Րաֆֆին, Ահարոնյանը սրտացավ հայեր են, որ երգում կամ պատկերացնում են հայի տառապանքը, Յարճանյանի մեջ տառապող հայն ինքն է, որ ցուցադրում է իր տառապանքը, արտահայտում իր գայրույթը, գոռում իր վրեժը և տարածում իր խոր վերքերը անտարբեր աշխարհի առաջ:

Եվ ողբերգականն այն է այստեղ, որ նա երգում է հայի տառապանքը այնպիսի ձևով, որ մատչելի չէ ամենքին. ցուցադրում է հայի դարավոր վերքերն այնպիսի գույներով, որոնց համար շատ քիչ աչք կա մեզանում: Եվ մի զգացում, մի կոչ, մի աղաղակ, որ պետք է ամբոխներ հուզեր և կամքեր կռեր, որովհետև այդ ամբոխի վշտից էր աղբյուրացած, գնում կորչում է մեր մտավորականության բարձունքներում՝ սակավաթիվ և ընտիր փոքրամասնության սրտերում: Այսպիսով Յարճանյանը տեղ բռնելով մեր գրականության մեջ, պատմական դեր չի խաղում. լինելով հայ ոգու ամենահետաքրքրական արտահայտություններից մեկը, մնում է կղզիացած և անազդեցիկ:

Վերջերս սակայն Յարճանյանի տարօրինակ տաղանդի և հասարակության անսովոր ճաշակի միջև ստեղծվում է մի հավասարազոր,

* Ատոն Յարճանյան (Սիամանթո), «Հայորդիները», երրորդ շարք, Փարիզ, 1908 թ.:

շփման մի քանի կետեր, որոնցով հնարավոր է դառնում իրար հասկանալն ու համագալը: «Հայորդիների» այս երրորդ շարքով նա մեղմել է իր արտակենտրոն և մթն քաղաքացիական ձևերը. քիչ են պատահում անհարիր ածականներ և բառերի՝ իրան միայն հասկանալի՝ հարևանություններ: Նրա տաղանդը հասունանում է և պարզությունը ու որոշությունը՝ բարձր արվեստի այս մեծագույն հատկանիշները, նրա համար և ըմբռնելի և պարտավորիչ են դառնում: Մյուս կողմից գրականությունը սիրող խմբերը (որովհետև մենք հասարակություն չունինք բառի բուն մտքով) սկսել ենք վարժվել այդ ձևի գրության: Այս կողմից, կարելի է ասել, որ Յարճանյանը տարիների ընթացքում համառորեն աշխատեց և վերջապես հաջողեց իր ինքնուրույնությունը շեշտել մեր մեջ:

Յարճանյանի գրական երկերի մասին մանրամասն խոսելը թողնելով մի ուրիշ անգամի, մենք կգոհանանք «Հայորդիների» երրորդ շարքի առիթով մի քանի ընդհանուր նկատողություններ անելով:

Յարճանյանը մինչև այսօր միմիայն ոտանավոր հատվածներ է լույս ընծայել, եթե հաշվի չառնենք մի փոքրիկ արձակ՝ «Կարմիր նամակ» վերնագրով: Վեց տարվա ընթացքում չի տվել և ոչ մի թարգմանություն. գերազանցապես հայ տառապանքով կլանված՝ նա հնարավորություն և ցանկություն չի ունեցել օտարի ստեղծած ձևերի մեջ ապրել իր հուզումները:

Իր ներշնչումը նա ստանում է հայի անցյալից և ներկայից, ապրում է մեր դարավոր տառապանքը և երգում է նրա զոհերին ու հերոսներին: Իր լեզվի տարրերը նա առնում է մեր հնագույն և միջնադարյան հեղինակներից և ստեղծում է արտահայտության նոր ձևեր՝ առավելապես Նարեկացու ուղղությամբ: Իր ոճը կուռ է, կոփած, թանձր և ծանրահոս. շարքերը երկար և անհանգ: Ամեն տողի մեջ զգացվում է մի լարում՝ չափազանց պիրկ, որ ուժի տպավորություն է անում: Չկա թեթևություն և թռիչք. ոճն ավելի մի քանդակ է մարմարի վրա, քան երաժշտության մի սլացք: Աչքն է ավելի դեր խաղացել, քան ականջը. նա մի կերտվածք է:

Յարճանյանը իրապաշտ չէ, նա ներշնչվում է ոչ թե իրականությունը **դիտելուց**, այլ նրա **հայեցումից**: Իր ստեղծագործության տարրերն անշուշտ թաքնված են մեր իրականության մեջ, բայց այդ իրականության տպավորությունները համադրվելով կազմում են մի պատկեր, որ իրականությունից վեր է և անհամապատասխան նրան:

Նրա տրամադրությունը միշտ բարձր է, լարված և ներկայացնում է վիպերգականի և քնարականի մի ինքնօրինակ խառնուրդ: Սա այն բանաստեղծն է, որ ամենից քիչ է երգում իբրև մի ազատ թռչուն, և իր մե-

ծագույն պակասությունն այն է, որ ամեն տեղ զգացվում է նրա լարված ճիգը: Նա նյութից վեր չի բարձրանում՝ սավառնելու նրա վրա. աչքիդ առաջ տեսնում ես, թե ինչպես մագլցում է նյութն ի վեր և քայլ առ քայլ, դժվարությունները հաղթելով առաջ գնում, առանց երբեք գագաթը հասնելու: Մեծ վարդապետների տիրական ուժը պակասում է նրան:

Այս է պատճառը, որ նա չունի ոչ մի ամբողջական երկ՝ բոլոր մասերը հավասարապես մշակված և համադրվելով մի ամբողջություն կազմող: Ամբողջի զգացումը օտար է նրան: Նա ավելի քանդակագործ է, քան ճարտարապետ:

Իր ուժն ասելու ձևի մեջն է և ոչ ասածի նորությամբ: Իր մտածելու եղանակը սովորական է, աշխարհայացքը նեղ: Ինքը եզրափակ է և միախոհ, անկարող ուրիշի հոգին թափանցելու, հոգեբանական վերլուծումներ անելու, ուստի և ոչ մեկ դեմք ունի կերտած: Ոչ թե հոգեկան վիճակներն են նրան գրավում, այլ կենսական կացությունները. նա տեսնում է միայն արտաքինը. նրա աչքը դրսի կողմն է նկատում և թափանցելու ուժ չունի:

Այս հատորի մեջ ամփոփված են իր «Հայորդիների» ժԱ-ժԵ գլուխները՝ հինգ հատված. «Որբերու ճակատագրեն», «Սովամահ», «Բանտերու խորերեն», «Կախաղաններու կատարեն» և «Դավաճաններ»:

Առաջին հատվածի նյութը հայ որբերի ճակատագիրն է. թե որքան ծանր պայմաններում աշխարհ եկան, ինչպես օտարի ձեռքը մնացին, որոնք նրանց իրենց շահի համար օգնել ցանկացան: Հետո, հիշեցնելով, որ մենք ջարդվեցինք, որովհետև ապրել ցանկացանք մեր անցյալով հուսալից, հորդոր է կարդում օտարից հեռու մնալ, որովհետև մենք պատրաստ ենք իրենց օգնելու: Մի շատ սովորական մտաշար, որ, կարելի է ասել, հասարակ տեղիք է: Բայց մտքի ինքնուրույնությունը չէ՛, որ փայլում է Յարճանյանի երկերում, այլ արտահայտելու ձևը, նորակերտ պատկերները: Տեսե՛ք, թե ինչպե՞ս նկարում է որբերի վիճակը և կարդում իր հորդորը:

Ձարհուրելի՛ անցյալ, մոխիրներուն վրա ծնաք և ավերակներեն քալեցիք:

...Գիտեմ որ, երբ ձեր խանձարուրներուն մեջեն շարժեցիք ձեր ձեռները շուշանափայլ,

Անոնք մահվան վարդերուն պես կարմրեցան ձեր մայրերուն արյունեն իսկ,

Եվ համբույրի, օրորներու, գգվանքի և սիրո քաղցրությանցը տեղ, Ռ՛վ գիտե, թերևս կաթիլ մը արյուն էր, որ ինկավ ձեր աչքերուն

և ձեր բերաններուն մեջ...

Ա՛հ սարսափներու ցնորաբեր օրեր, ե՞րբ պիտի մեռնիք հիշատակներուս դուռներուն առջև, ե՞րբ... (10 էջ):

Այս հատվածի մեջ բավականաչափ ողորկ չեն վերջին տողը և երկրորդ տողի «մահվան վարդերուն» արտահայտությունը: Բայց ինչ մռա՛յլ և ահավոր պատկերներ:

Եկան մարդորսները.

...Ցանցեր հյուսեցին ձեր անբիծ կարապի անմեղությունը վանդակելու համար.

Եվ թշնամիին սուրերուն տեղ, իրենց շահախնդիր և մեղավոր խաչերը շարժեցին...

...Իրենց սկիհը մեր արցունքով լեցված էր...

...Բայց այսօր գիտե՞ք թե ինչո՞ւ համար մեր արյունը ծով առ ծով:

Տարիներով՝ և անխնա ստրկորեն և հերոսաբար ձեր ծնած հողը ողորդեց... (էջ 11-13):

Ահա և հորդորը.

... Ձեր ձեռքերը օտարին հալումեն հետ քաշեցեք, մերինները պատրաստ են և զինաբարձ.

... Այսուհետև ձեզի հետ ենք մենք, ով մահվան արգանդեն կյանքին մեջ ծնացող որբեր.

Այսպես է նաև արաբեսքը. երկրաչափական պարզ ձևեր են, որոնք համադրվելով կազմում են ակնախտիղ հորինվածքներ:

«Սովամահը» ողորկ հակադրությունների մի շարք է. մեր երկիրը ավերից և սրածությունից առաջ. գյուղական անդորր կյանքը, հողագործի մաքուր աշխատանքը և դաշտերի հուսալից առատությունը: Ապա ավեր և ավերակ խիստ գունավոր պատկերներով անցնում են աչքիդ առաջ: Եվ վերջապես հրեշավոր սովի զարհուրելի պատկերներ խռովում են երևակայությունը:

Ահա լավ օրերը.

Առունները մամուռներու մետաքսին մեջ են մանկահասակ մերկություններու նման կիոսին...

Եվ բուխերիկներեն, ատրուշաններու հանգույն, առավոտյան ծուխը իր խունկը կծխե:

Մարմարիքան և գեղանի հարս էր, կուժը ձեռվնին, աղբյուրներու աղամանդին կերթան...

Ուրիշներ վարդի թուփին կմոտենան, սոխակին հետ իրենց նորածին սերն երգելու (էջ 18):

...Բնությունը հղի է և երկրագործները իրենց հանճարի ճիգեն և պտուղեն գինով՝

Դաշտերուն շուրջը կխոնավին: Գերանդիները ուսերուն վրա, հույսերու պես կշողան (էջ 18):

Անդաստան է. սկսվում է հունձը.

Հովին խորհուրդեն դեռ կանգուն հասկերը անգամ մըն ալ զիրար կհամբուրեն:

Մանգաղները կշարժին... և ոսկեվառ ծովե՛ր, ծովե՛ր, ծովե՛ր են, որ կհնձվին.

Եվ խուրձ առ խուրձ, որաներն, արգասաբեր երեկունին ստվերներուն մեջ են:

Անծրևված աստղի հոյլերու նման, արտե արտ, անշարժ կխոկան... (էջ 19):

Սակայն այս ամենը երազ է՝ անցյալ: Ահա և դառն իրականությունը՝ ներկան.

...Տեսեք անցյալին ոսկի դաշտերն անծայրածիր՝ գերեզմանոցներու ահավոր տեսիլքն ունին,

Եվ քանդված աղբյուրներու ջուրերը, մահամերձի հեծեծանքին այնչափ նման...

...Ցորենի հասկերուն անհուն բարությանը տեղ դեղին տատասկներ են բուսեր,

...Դժխեմ ու միհար ծառերը հորիզոններուն մեջեն, իրենց բազուկները տարածած,

Անթվելի մեռելներու կմախքներուն նման, հողմերու ժամուն, զիրա՛ր, զիրա՛ր, զիրա՛ր, կջախջախեն...

...Այլևս հունձք չի, հնձող չի, սերմնացան չի, ոչ ալ վարելահող...

...Արորը գոմին մեկ անկյունը նոր և անդառնալի գարունին կսպասե:

Աքաղաղն այլևս չ'երգիր: Արշալույսն ալ կարծես ցեղիս արյունին նման, հողին խորերն է իջած (էջ 20-22):

Սով է համատարած.

...Ձարհուրյալ աչքերով նորածիններ, ցամաքած ստիքներ կծծեն:

...Լսեցեք, սա ողբ ու կոծը, պաղատանքը, աղերսը, անո՞թի ենք, անո՞թի ենք...

Կան որ մազերնին կփետտեն, կան որ արցունքնին կապարներու պես վար կթափեն,

* Այսու հատվածների մասին զանց ենք անում մանր նկատողությունները:

...Կան որ իրենց արյունաթաթախ եղունգներովը նորեն քարացած հողը կփորեն...

...Կան որ անդունդներուն մեջ դեռ հույսեր և արմատներ փնտրելու համար հույսն ունին,

Կան, որ ահավորապես սկսան պարել սոսկատեսիլ խենթության հետ թևիթև...

Եվ ուրիշներ, ո՛վ զարհուրանք, ահավասիկ, անթաղ սպասող մեռելներուն կմոտենան... (էջ 24-25):

Այս հատվածները բավական են Յարճանյանի մասին մի ընդհանուր գաղափար կազմելու համար: Սրանցով կարելի է մասամբ ստուգել մեր կարծիքը նրա մասին: Նրա տաղանդի և մտածության ուրիշ կողմերը մենք առայժմ թողնում ենք առանց բնորոշելու: Ընթերցողին ըմբռնելի լինելու համար պետք է հենվել նրա ունեցած ծանոթություններին: Մեր գրախոսականով ուզեցի՞ք հետաքրքրությունը շարժել դեպի այս ինքնատիպ տաղանդը և դրանով նյութ պատրաստել ապագա զրույցների համար: Մեր սկսնակ գրողներին և գրականությունը սիրողներին խորհուրդ կտանք ձեռք բերել և ուշադիր կարդալ նրա երկերը:

Յարճանյանը անպայման տաղանդավոր բանաստեղծ է և շատ ինքնատիպ: Իր ուղղությամբ նա պատկանում է մեր գրականության այն հոսանքին, որ տանում է դեպի **ազգայնացում**, թեև գալիս է տարբեր կողմից, քան ռուսահայ և տաճկահայ մի քանի անվանի գրողներ: Նրա տաղանդը հասունանում է, և նրանից վստահորեն կարելի է ավելի կատարյալ և հայացի երկեր սպասել:

Ձանգակ, 1908, № 2

Ի. Իսահակյան, «Չեքիաթ արևի տակ»*

Այս գիրքը հեղինակված է «Առձեռն բառարանի» օգնությամբ և առանց այդ բառգրքի միմիայն Մխիթարյան հայրերից մի քանիսը կարող են հասկանալ: Մեր սովորական ընթերցողը երկու էջ կարդալուց հետո կնետե մի կողմ և եթե բարյացակամ չէ՝ դեպի սկսնակ հեղինակները՝ ուղղակի ցնդաբանություն կհամարե:

Նայեցեք միայն հետևյալ բառերին, որոնք հանդիպում են այդ գրքի

* Ալեքսանդրապոլ, 50 էջ (Ընտիր թղթի վրա):

մեջ շարունակ. շիփք, շաղաշույտ, շառ, շառափ, շրվանդ, շվառն, մառ, մեղծ, մղուտ, պարխուրց, փարագուն, դոշ, զակատիլ, երահ, կյուս, անվտավան, տրմուդ, գեղազատ, յահուր, յահուրդ, հորձք, խանթուռք, կանդ, խազմուզ, ամատտարա, կղարթք, ռիշտ, կոշարա, կաշմբուռն, զարդուն, արեկ, ապարթանական, ռոշնական, հիր, շոշանք, ժմերտ, չափրակել, վիրագի և այլն...

Համոզված ենք, որ հազար ընթերցողից հազիվ երկուսը գիտեն այս բառերի նշանակությունը և ուրեմն հազարից երկուսը միայն այս գիրքը կհասկանան առաջին իսկ ընթերցումի ժամանակ, առանց բառգրքի օգնության:

Բայց հեղինակը մեր հին բառերը բավ չհամարելով՝ կերտում է նորերը. «թիռ», նշանակում է թռիչք, սաստիկ փափագ և ահա նա կերտում է թիռեղ բառը. սաթ բառից նա շինում է սաթվել բայը, որ պարզապես նշանակում է սկին տալ. «կոշեն» բայից, որ նշանակում է գազանի պես մոռնալ, նա կազմում է կոշանք գոյականը, «զոշ» բառից, որ նշանակում է վատ, ամոթալի, նա շինում է զոշություն, զոշոտ և այսպես շարունակ:

Մինչև իսկ ունի բառեր, որոնց կազմությունը մեզ անհայտ մնաց, ինչպես, օրինակ՝ պաշտեկում, ռուշ /միջարկություն է/, սահաճող, շեռոց, շաղավոտ:

Եվ կարդալով այս տեսակ բառերով հորինված մի գիրք, ես հիշեցի մեր հին մատենագրության հանելուկային Գրիգոր Մագիստրոսին (ԺԱ. դար), որի գրությունները հասկանալու համար Հ. Գ. Մենելիշյանի հմտությունը պետք է ունենալ (Համեմատեցեք Գր. Մագիստրոսի «Գամագտականի» հմտալից մեկնությունը «Հանդես Ամսօրյայի» 1911 թ. համարներում):

Ոչ միայն սակավալուր բառերի ընտրանքով, այլև մի ուրիշ կողմով Ի. Իսահակյանը հիշեցնում է Գր. Մագիստրոսին. այդ նույն հնչյուններն ունեցող բառեր զուգորդելու շեշտված հակումն է երկուսի մեջ: Կարդացեք այս հատվածը Մագիստրոսից, առանց հուսալու մի բան հասկանալ. «Մատիր դու առ մակագրությունս անմոռնական միտելով մագույն և զմակ անկյալ բրոք, առ մարգ, հորում խուզում հարահուն»: Նկատեցեք նույն հնչյունն ունեցող բառերը. մատիր, մակագրություն, անմոռնական, միտելով, մագույն, զմակ, մարգ. այստեղ «մ»-եր են: Ահա և «փ»-եր. «Ոգես մեզ գի ծանայց՝ եթե սուղ փաղփյալ փանաքիմացդ փարավարթյա՞լ գոս, զփաստ քո վիպասանութեան»:

Այժմ կարդացեք հետևյալ հատվածը. «Եվ ահա շոշանքող եմ ես և իմ ժպիտներս ժմերտ, շարժումներս ժպերի եմ, և ահա ես հրաբուխ եմ,

հրդեհ,- հայացքներս հրարծակ՝ հպումներս հործք...» (էջ 2): Նկատեցիք անշուշտ «Ժ»երն ու «հ»երը: Կամ թե՛ ցանկությունը ցավի պես խոր, ցանկությունը խիթի պես, ցանկությունը, որ խոցում է, խոստում (բայը՝ խոստել) (էջ 25). այստեղ էլ «ց»-եր են և «խ»-եր:

Գր. Մագիստրոսը մի գրասեր և մեծամիտ ավատական էր, իրան սերած էր համարում Ս. Գրիգորի ցեղից և վերը մեջ բերած տողերը ուղղում էր մի քահանայի՝ նրան ճգմելու համար իր գիտունի հեղինակության տակ ու թեև նա խրթնաբան է ամեն տեղ, բայց «Գամագտականի» մեջ գերազանցում է ինքն իրան:

Մեր հեղինակը, որին գրության ձևի կողմից ես կանվանեի Գր. Մագիստրոսի հետնորդ, ինն դար անցնելուց հետո՝ նույն խաղն է խաղում մեր ընթերցող հասարակության գլխին՝ իր խրթաբան ոճով նեղը լծելով նրան:

Գրության նույն տարօրինակ ձևն ունին և Գր. Նարեկացու տաղերը և շատ ուրիշ, ավելի անմշան հեղինակների գործեր: Այս երևույթի պատճառները քննելը չէ մեր նպատակը, այլ միայն ցույց տալ, որ Ի. Իսահակյանի գրության ձևն անմախընթաց չէ մեր գրականության մեջ:

Բայց այն, ինչ ներելի էր ԺԱ դարում մի մեծամիտ և ինքնահավան ավատականի, ներելի չէ մեր քաղքենի և ռամկավար դարում մի սկսնակ հեղինակի: Գրվածքը պետք է անմիջապես մատչելի լինի իր կառուցվածքի կամ հորինվածքի և լեզվի պարզությամբ. այս մեկը չպետք է մոռանան հեղինակները: Նա պետք է անմիջապես գրավե ընթերցողին. նա կարող է շատ խորին իմաստ ունենալ և անհունապես շատ ապրումներ խտացնել, բայց առաջին իսկ հայացքից նա չպետք է վանե, այլ քաշելով ընթերցողին դեպի մուտքը՝ դրդե նրան շենքի խորքերն անցնելու:

Այս տարրական պահանջը անգիտացել է մեր սկսնակը և դրանից պիտի տուժեն թե ինքը և թե իր գործը, մինչդեռ երկուսն էլ արժանի են ուշադրության:

Գրվածքն իր ձևով գրական ոչ մի սովորական տեսակի չի հարմարում. սա ո՛չ վեպ է, ո՛չ պատկեր, ո՛չ գրույց, ո՛չ հեքիաթ. սա մի գեղում է կամ լավ ևս մի խանդավառ հիացում սիրո գոյության և նրա արթնանալու առիթով՝ գարունքին:

«Չեքիաթ արևի տակ» գրվածքը քսան գլուխ ունի, որոնցից երկուսը (7., ԺԳ.) նույնիսկ հեղինակի գրության կերպն ի նկատի առնելով՝ անհաջող են, իսկ մեկը՝ (Թ.) թույլ: Բոլոր գլուխները, չնայած գրության խրթին լեզվին և նյութի անսովոր մշակության՝ կապված են իրար և կազմում են մի ամբողջություն:

Ի՞նչ է սերը. դա մի տենչ է դեպի հեքիաթ - աղջիկը, մի տենչ, որ ծնում

է արևազուն թագավորի (երիտասարդի) սրտում և ստիպում նրան որոնելու Երազ - Աղջկան: Եվ ահա նա սիրում է շատ աղջիկներ, որոնցից ամեն մեկը որևէ բանով նման է Երազ - Աղջկան, բայց և որոնցից ոչ մեկը նա չէ լիովին: Սիրո մի ըմբռնում, որի հար և նմանը տեսանք Մ. Մանվելյանի. "Victus Vos Salutat" փոքրիկ գրվածքում:

Եթե նկատի առնենք, որ այս երկու հեղինակներն իրար վրա չեն ազդել և հակադիր խառնվածք ունեն, ապա հայացքների այս նույնությունը չափազանց նշանակալից կդառնա: Իսկ եթե սրանց ավելացնենք նաև Վ. Տերյանին, որ նույնպես տարված է մի անուրջ - աղջկա տենչով՝ այն ժամանակ պետք է կարծել, որ այդ է այն նոր խոսքը, որ մեր գրական նոր սերունդը ասում է սիրո մասին:

Երեքն էլ նույն հայացքն ունին սիրո վրա և նույն կերպ են մեկնում նրա ծագումը, միայն թե Վ. Տերյանը մեղմ է, Մ. Մանվելյանը վիատ, իսկ Ի. Իսահակյանը՝ հախուռն:

Առաջինը դեռ որոնում է հավատով, երկրորդը՝ հիասթափ լքում է սեր ու կին, իսկ երրորդը՝ դեռ նոր է զգում Երազ - աղջկա հմայքը: Երեքն էլ սիրո վրա բնախոսական տեսակետ չունեն, չունեն նաև բարոյական տեսակետ. երեքի հետաքրքրությունն էլ իմաստասիրական է, եթե կուզեք՝ գեղագիտական. միայն Վ. Տերյանն ավելի բանաստեղծ է և երագուն, Մ. Մանվելյանն ավելի ապրած ու արծակունակ, Ի. Իսահակյանն ավելի անփորձ և խանդավառ: Առաջին մեջ կա մի ազնիվ տրտմություն, երկրորդի մեջ մի դառն հուսախաբություն և երրորդի մեջ մի տենչալից սպասում:

Ի. Իսահակյանը իր տրամադրությամբ շատ է տարբերվում մյուս երկուսից և թվում է մի նոր աստիճան մեր մատաղ սերունդի վերելքին: Նա դեռևս՝ իր բառով ասենք՝ մի «խազմուզ» է, այսինքն քաղցու, նոր գինի, ամբողջովին եռ ու եփի մեջ. թե ինչ կդառնա կյանքի մեջ այդ գինին, երբ եփը նստի՝ առաջուց դժվար է գուշակել:

Նա նախազգում է կնոջ հմայքը, բայց դեռ չի ճանաչում նրան. տրտմություն է սպասում նրան, ինչպես Վ. Տերյանին, թե հուսախաբություն, ինչպես Մ. Մանվելյանին, ո՞վ կարող է գուշակել: Բայց իր բարձր տրամադրությունը մեզ համար մի նշան է, որ նոր սերունդի վրայից կարծես անցնում է վիատության կործանիչ հորձանքը և թարմ ծիւերը հավատով ու վստահությամբ նոր կյանքի են բարձրանում, հոգ չէ, որ առայժմ սիրո շրջանում: Ազնիվն ու արին միշտ հաղթանակում են այսօր սիրո մեջ, վաղը՝ հասարակական կյանքում: Ի. Իսահակյանի գիրքը այս տեսակետից մի սրտապնդիչ «նշան է ժամանակաց»:

Նրա տրամադրության մեջ սիրո տենչը գերակշիռ է, բայց նա հյուսված է այլասիրական մղումների հետ մի զարմանալի սերտությամբ: Վերջին գիծը աննշան տեղ է բռնում, մի ցայտ միայն նրա ոգևորության շատրվանի մեջ, բայց և այնպես այդ ցայտը կա: Այս հիման վրա նա մի օղակ է կազմում այն երիտասարդության, որին պատկանում են Վ. Տերյան և Մ. Մանվելյան, որոնք ինքնամոլորի են, և այն զալոց սերունդի միջև, որ պիտի ստեղծե նոր հասարակական իդեալներ և նրանց իրագործման համար սպասարկե իր ոգեկան ուժերը, դուրս գալով անձնական ապրումների նեղլիկ խեցիկից:

Մի թարմ, կազդուրիչ հով է փչում այն պատանեկան խիզախ կանչերից, այն ինքնավստահ հրավերներից, որ նետում է հեղինակը դեռատի սերունդին: Ես զգում եմ վիատության մղձավանջից ազատված ապագա մարտիկների զուսպ ուժերի բաբախումը դեռ չամրացած կուրծքերի տակ. կարծես վարից բարձրանում են նրանք կյանքի բեմը՝ պայծառ, զորեղ ու նշանակալից մի դեր խաղալու. ի՞նչ ոգևորություն, ի՞նչ լայն համակրություն, ի՞նչ հմայիչ ինքնավստահություն:

«Ջան,- նետես սիրտդ աշխարհով մեկ, հորիզոններից հորիզոն, ձգվես, տարածվես, խոսես սրտանց ամեն մի շնչի, ինչի հետ. զգաս, հասկանաս, զգվես, զուրգուրես ամենին և արևի տակ, արևի պես սիրո շռայլ շառայլումով առատ, ջերմ փայես փայփայես աշխարհը հանուր և արևի պես վառվես, ապրես աշխարհի մեջ, աշխարհի համար...» (էջ 47):

Ու հետո. «Ե՛ր, ով ջահել է, արի, ով ուժեղ է, խիզախ - ինչու՞ է դժգոհ, ինչու՞ է վիատ...»

Աշխարհը սեր է արևի տակ, սերը՝ հեքիաթ, կյանքը հեքիաթ հեքիաթի մեջ, ջահելությունը թագավոր...»

Ես թագավոր եմ ջահել,- սրտիս ցանկությունը բախտն է իմ, բազկիս զորը տեր է իմ բախտին, ստվերիս պես միշտ ինձ հետ է բախտը իմ...»:

Ահա և հրավերը, մոտավոր և հեռավոր ջահել եղբորն ուղղված.

«Ռո՛ւշ: բարձրացիր կարո՛ղ, տիրական ու գոտեպինդ, հաստատ գնա՛ ինքնիշխան և սիրիր ու գնա, և սիրիր ու գնա...» (էջ 51):

Կարդացեք այս հատվածը Ե. զլխից, որ մեր կարծիքով լավագույն հատվածներից մեկն է գրքում և որ նկարագրում է ծյունհալն ու զարման առաջին ջերին օրերը.

«Ի՞նչ եղավ գիշերը:

Լսեցի՞ր, որ խնդում ու ճչում էր գարնան քամին մոլեգնած...»

Կրքից հարբած, խենթ, խուժդուժ հարձակվեց նա երկրի վրա, որ

անվրդով իր աղջկական ճերմակ ճերմակ անկողինն էր մտած և ավագակի պես զորաբար հափշտակեց նրա սերը կուսական - ծվեն-ծվեն դարձնելով հանդերձները նուրբ և պոկելով բոլոր հանգույցները, որ խանդոտ՝ թաքցնում էին նրա մարմինը թա՛րմ, փարթա՛մ:

Հիմա պագշտ արևի դեմ, որ քամու պես ցոփ է, զոչ՝ հոլանի է երկրի կուրծքը արգավանդ և արևը տարփատենչ՝ արձակում է իր հրերը առոգիչ, ու լիրբ քամին բախտից խելառ, ցնորած, մեկ պատմում է գիշերին անցածը, թող արևը կատաղի՝ մեկ իր վայրի կյանքը ապրած, թող երկիրը նախանձի, թե ինչ անցյալ է ունեցել, ի՞նչ գիշերներ, գաղտնիքների՝ հեռու՛, անհայտ երկիրներում կրքոտ, առատ, արևոտ...» (էջ 17-18):

Ահա ձեզ գրության մի նոր ձև, մի երկարաշունչ ոգևորություն, որ ձգվում է գրվածքի առաջին էջից մինչև վերջինը՝ առանց թուլանալու, մի նոր լեզու, մի նոր պատկեր՝ լիովին ներդաշնակ ու զուգահեռ գրվածքի նյութին ու հիմնական գաղափարին...

Հեղինակը զարմանալի հակիրճությամբ գծում է երեք վերաբերում կյանքին.

«Մեկը կասկածում է, ցավում*.

-Ի՞նչ կլինի վաղը:

Մյուսը ափսոսում է, հիշում.

-Երեկ երեկին:

Մեկն էլ մռայլ է ու պաղ.

-Սո՛ւտ է» (էջ 37):

Հեղինակը ոչ վարանում է, ոչ ափսոսում և ոչ հոռետես է. կյանքն ու աշխարհը նրան հիացնում են, հարբեցնում միայն նրանով, որ կան, որ սերն ու մահն են նրա առանցքի բևեռները: Արևագուն թագավորը իր փառքի մեջ սարսում է մահից, բայց հենց որ զարթնում է սիրո զգացումը նրա հոգում՝ իսկույն վերափոխվում է, աշխույժ ու եռուն՝ մտնում է կյանք և որոնելով երազ-աղջկան՝ սիրում ու սիրվում է շատ անգամ ու շատ տեղ, բայց միշտ թարմ, միշտ զորեղ զգացմունքով: Հանդիպումը ուրախություն է բերում, իսկ անջատումը տրտմություն չունի. սերը դառնում է մի օրհնություն և փրկություն մռայլ մտքերից. իր սերն ապրելն արդեն դառնում է մի կյանք հեշտին ու գեղեցիկ, առանց պարտավորությանց ծանր բեռի և խղճահարության խիթերի: Նա ամեն տեղ երջանկություն է տանում. «և նա, որ ճաշակում էր նրա սերը հզոր՝ հեքիաթի մեջ էր ընկնում և նա, որ հեռանում էր նրանից՝ օրհնում էր նրան» (էջ

* Մենք ուղղում ենք կետադրությունը, որ չափազանց անխնամ է:

18): Եվ այսպես նրա անցյալն «անափսոսանք» է, որովհետև ներկան վատ չէ անցյալից. իսկ գալիքին նայում է խիզախ. կամ հեղինակի բառերով ասենք. «ինչ որ անցել է՝ սուտ է. ինչ որ կա՝ լավ է. ինչ որ գա՝ թող գա» (էջ 38): Քանի որ սեր կա աշխարհում, ուրեմն ամեն ինչ լավ է և մահը սոսկում չի բերում: Ու հեղինակը սիրո թևերի վրա բարձրանում է վեր և հաշտ հայացքով նայում է կյանքին. «Եվ տեսնում եմ ես տարերքի ստեղծագործությունն ու ավերումը, ծնունդն ու մահը մարդկանց և մահն ու կյանքը հավերժական հյուսվում են իմ հոգում ծիածանի պես և ծիածանը պայծառ է, պայծառ»: Եվ նա օրհնում է «կյանքին ու մահը մարդկանց, վիշտն ու ծիծաղը, ցավն ու հաճույքը» (էջ 40-41):

Մանուկներն ավելի իմաստուն են, քան բոլոր դպիրներն ու փարիսեցիները և ահա առույգ պատանին թոթովում է իր իմաստությունը. «Բախվող բանակների պես բոսոր, բարկալի դու (կյանքը) և մահը չափվում եք արևի տակ և աշխարհը որպես պատերազմի դաշտ, և քրտինքն ու արյունը բեղմնավորում են երկիրը բերրի...» (էջ 50):

Այս տրամադրությունը նոր է և ցանկալի մեր երեկվա լավան և այսօրվան վիատ գրականության մեջ: Չենք ուզում տարակուսանքի մահադեղով թունավորել առողջ տրամադրությունը մատաղ սերնդի. և համոզված ենք, որ առողջ մարմինը զորեղ հակաթույներ ունի իր մեջ ամեն քայքայիչ դեղերի դեմ: Ժամանակի ալիքները ափ են հանում մի նոր սերունդ՝ գոտեպինդ ու հզոր, և մենք կուզեինք վարակել բոլոր վիատ հոգիներին մեր սպասումի հաճույքով...

Գրքի մասին խոսելու մենք առիթներ կունենանք. շտապենք խոսել գրողի մասին, որ իր երկը նետել է հրապարակ և սպասում է ընթերցողի դատաստանին:

Ի. Իսահակյանը մի ինքնուրույն դեմք է մեր գրականության մեջ, թեև ազատ չէ Ավ. Իսահակյանի և Նիցշեի ազդեցությունից, որ նկատվում է ինչ-ինչ արտահայտությունների մեջ:

Նա ունի ոգևորություն, որ տեղ-տեղ հասնում է ներշնչման, ունի իր հատուկ լեզուն և արտահայտությունները՝ լիովին ոչ նման մինչև օրս մեր տեսածին հայ գրականության մեջ. սիրո վրա իր ունեցած հայացքն ընդհանուր է մեր մյուս երիտասարդ գրողների հետ, բայց իր տրամադրությամբ նա մատնանշում է մի բեկում մեր ժամանակի ընթացքի մեջ: Նրա մեծագույն պակասությունն իր խրթին լեզուն է և մթին հորինվածքը, որով շատերին անմատչելի կմնա, ինչ որ շատ ցավալի է:

Թե ինչ ձև կստանա այս չտաշված շնորհքը երբ հղկվի՝ դժվարանում ենք ասել. մենք չենք զարմանա, եթե շփվելով կյանքի երկնաքարերին՝

Ու դառնա փոշի և կորչի անհետ, որովհետև անկումը նույնքան խորն է, որքան վերից են ընկնում: Պիտի գտնե՞ն իրենց ներսը այնքան ուժ՝ թե մեր հեղինակը և թե այն սերունդը, որի հայտարարն է նա, որ կարողանան տոկալ մեր կոպիտ կյանքի հարվածներին և փորձիչ ոստայնից խուսափեն՝ ստեղծելու համար մի խելացի, առույգ ու գեղեցիկ նոր կյանք...

Ի խորոց սրտի կցանկանայինք, որ հայի դարավոր ճակատագիրը ջնջվեր նրանց երեսից և մեր ազգի ողբալի անցյալը չծանրանար նրանց մատաղ ուսերին...

Յորհգոն, 1912, № 280

Ստ. Ջորյան*

Նշանավոր հեղինակի մասին գրել, նշանակում է վերծանել ու մեկնել նրա գործը. սկսնակ մեկի մասին խոսել, նույնն է, թե հանձնարարել նրան ընթերցողի ուշադրության: Մեկը կարիք չունի ուշադրություն գրավելու. նա հռչակված է արդեն. մյուսը պետք է ուշադրություն գրավե, որ հռչակ ստանա: Մեր նպատակն է ընթերցողի ուշադրություն գրավել այս երիտասարդ հեղինակի վրա, հռչակ շահելը թողնելով իր շնորհքին ու ճիգերին:

Վերջին տասնամյակը մեզ բերեց մի քանի արծակագիր հեղինակներ՝ Ռեն, Կ. Միքայելյան, որ արտաքին իրականությունը հասկանալու և պատկերելու հակումն ունեն: Սրանք վերսկսում են գրական մի աշխատանք, որի վերջին մշակը նախորդ սերունդից Շիրվանզադեն է մեզանում: Համեստ են այդ ուժերը, բայց «խմում են իրենց բաժակով». խոստումնալից են և դեռ զնալու երկար ճանապարհ ունեն, լինելով երիտասարդ: Նրանց շարքը դասվելու գալիս է իր համեստ շնորհքով և Ստ. Ջորյան:

Որքան և համեստ շնորհքի տեր, բայց այս հեղինակները թարմացնում են մեր գրականության մեջ մի առողջ հակում, իրական կյանքի վերարտադրությունը, որ կարծեք մոռացվում էր գլխովին, հրապարակը զիջելով անձնական ապրումներն ու երազները պատկերողներին:

* Ստ. Ջորյան, Տխուր մարդիկ, Թիֆլիս, 1918, էջ 5-18:

Կան հեղինակներ, և նրանք վերջերս շատ են մեզանում, որոնց համար արտաքին աշխարհն իբր վերստեղծման նյութ անարժեք է բնավին: Նրանք հակում չունեն արտաքին իրականությունն ինչպես որ կա՝ ըմբռնել ու մեկնել. նրանք մտահոգված են իրենց անձնական ապրումները վերարտադրելու և երազները կերպարանելու: Քնարական ոգիներ են դրանք. արտաքին աշխարհի այս ու այն երևույթի առիթով նրանք գեղում են իրենց ներքին բովանդակությունը:

Կան ուրիշ կարգի հեղինակներ, և մեր հիշածները այս կարգին են պատկանում, որոնց համար արտաքին աշխարհն ինքնին վերստեղծման արժանի նյութ է: Նրանք ձգտում են արտաքին իրականությունը՝ ինչպես որ նա կա՝ հասկանալ և մեկնել իրենց անձնական ապրումների օգնությամբ: Մի դեռատի կին, սրբի պատկերը կրծքին սեղմած՝ վերին հարկի պատուհանից կամովին վար է նետում իրան ու մահանում: Ահա մի իրական դեպք: Դոստոևսկին ճգնում է հասկանալ ու հոգեբանորեն մեկնել այդ փաստը, դիմելով իր անձնական ապրումների օգնության կամ՝ ինչպես ասում են՝ «համակիր փորձին» և գրում է իր «Յեզը» (краткая):

Ժամկոչ Անտոնին, որ մի կծծի է, տեսնում են իր փակ սենյակում մեռած, ձեռքերը հողոտ: Ստ. Ջորյան փորձում է հասկանալ ու մեկնել այս իրական փաստը: Ինչպես տեսնում եք, այս կարգի հեղինակները դեմքեր, դեպքեր ու կացություններ չեն հնարում, այլ իրոք պատահածը, իսկապես եղածն աշխատում են հասկանալ և մեկնել ներապրումով:

Ստ. Ջորյան այս ուղղությամբ փորձեր է անում: Նրա ուշադրությունը հասնում է առայժմ այս ու այն կողմ: «Անհասկանալի բաներ շատ են պատահում կյանքում»՝ ասում է նա մի տեղ (ժամկոչ Անտոնը), «էհ, ինչե՛ր ասեք որ չի պատահում աշխարհում», - ասում է մի ուրիշ տեղ (Սատանա): Եվ իրոք նրան գրավում են «պատահական» և «անհասկանալի դիպվածները», որ աշխատում է իրան ու մեզ համար հասկանալի դարձնել: Սրանք փորձեր են Ա. Չեխովի ոճով, որի ստեղծագործության նախնական շրջանի եղանակին է հետևում մեր հեղինակը, երբեմն մինչև նույնություն նյութի և ձևի («Ձինգերի գործակալի հուշատետրից»), որ չի առնված այս ժողովածուի մեջ: Համեմատիք նաև ժողովածվի վերնագիրը- Տխուր մարդիկ և Ա. Չեխովի առաջին գրքույկինը՝ (Хмурые люди): Մենք տեսանք արդեն ժամկոչ Անտոնի «անհասկանալի» դիպվածը: Ահա և Ակոր աղան, որ կարճատև փորագավից մեռնում է և հետո պարզվում է, որ դեղել են մարդուն (Սատանա): Ահա Պետրոս աղան, որ երկու օր առաջ ողջ առողջ էր, իսկ այսօր պատռած գլխով եկել է հիվան-

դանոց (Փորձանք). ահա մի երիտասարդ, որ շուկայում ման է գալիս «ծանր ու մոլորուն քայլերով և շարունակ շուրջը նայելով, ինչպես տան հասցե որոնող օտարական», մի նոր շաքարաման ձեռին (Շաքարաման): Ահա եփրեն պապը, որ անտառի պուրնգին ընկել է բերանքսիվար ու մեռել (Պապն ու թռռը): Ահա մի հանդիսավոր ճաշկերույթ, ուր չափազանց աղի ապուր են մատուցանում պատվարժան հյուրերին (Ջերմաչափ) և այլն, «անհասկանալի» դիպվածներ, որ «շատ են պատահում կյանքում» և որ Ստ. Ջորյան ջանում է հասկանալ ու մեկնել:

Որքան և թափառիկ, բայց Ստ. Ջորյանի ուշադրությունը գրավում են որոշ կարգի երևույթներ: Նախ՝ անձերը: «Մանուկ օրերից մինչև այսօր ես մի առանձին սեր ունեմ դեպի ծեր, ալևոր մարդիկ», - ասում է նա (Ծեր Սոսին) և հավանորեն դեպի մանուկները, կասենք մենք: Համեմայն դեպս մանկությունը հիշելով նա գգում է «մի անծայր սփոփանք» (երկաթուղին): Իր «գործող անձերը» մեծ մասամբ ծերունիներ են, հասակն առած մարդիկ կամ մանուկներ: Այսպես են «Բարեկամները», «Հրեշտակը», «Պապն ու թռռը», «Ջերմաչափը», «Սպիտակ տան բնակիչները», «Համեսը», «Ծեր Սոսին» և այլն: Հեղինակը սրանց պատկերում է մեղմ սիրով ու ջերմ սրտակցությամբ, մի տրտում համակրանքով, որ հատուկ է նկուն սրտերին:

Նկուն սիրտ է Ստ. Ջորյան և աշխարհից ձեռնթափ: «Համակերպություն», ահա իր հիմնական տրամադրությունը. իր սրտի պես համակերպած ու անզոր են և իր պատկերացրած անձերը՝ ծերունիներ ու հասակն առած մարդիկ, որ արդեն «վարել են իրանց վարը», և մանուկներ, որ անզոր են նույնպես: Նրանք ապրում են անջատ, ամեն մեկը հլու իր ցավին ու ճակատագրին, որի դեմն առնելու անճարակ է կամ անզոր: Անողոք ուժեր ծանրանում են ամենքի վրա, և պայքարը նրանց դեմ հարուցանում է ծիծաղելի կացություն, թշվառագին վիճակ կամ հանցանք: Ահա թե ինչու իր պատկերները տողորուն են տրտմությամբ:

Խղճուկ կյանք ունեն իր բոլոր «հերոսները». մեմակ, մեկուսի, ինքնամփոփ, անօգնական, անճարակ. խեղճ են իրենց հոգով, մտքով ու կամքով: Ահա գործակատար Պողոսը, հասակն առած ամուրի, որ սիրած մոր մահից հետո մի մտերիմ ունի՝ մոր թողած կատուն: Ոտքի է ժամը վեցին, քնում է վաղ, «ճաշին ուտում է մի տեսակ կերակուր, իսկ երեկոյան՝ ինչ որ կպատահի»: Ինքն է, իր կատուն. հաճախ բարեկամ, երբեմն գժոված իրար հետ: «Եվ այսպես է անցնում նրանց կյանքն ամեն օր» (Բարեկամներ): Ահա «Սպիտակ տան բնակիչները» անզավակ ու ծեր մի զույգ, որ ապրում է շենից հեռու, անտառում, մեկուսի, մի

թողնված տան մեջ: Հավերի կուտն ու շան լափը հոգալ, երբեմն գյուղը գնալ ժամ կամ ալյուրի. այս է նրանց կյանքը: «Երևի այդպես երկար կշարունակվեր նրանց կյանքը, եթե չպատահեր մի տխուր դեպք». այսինքն չգտնվեր մի եղնիկ, որի հոգան ավելանում է շան ու հավերի հոգսին, ինչ որ, սակայն, հաճելի է ծեր զույգին: Շուտով կորչում է եղնիկը և պառավը կորուստի ցավից և որոնման հոգնությունից մեռնում է՝ թողնելով ծերուհուն մեն-մենալ: Ահա «ժամկոչ Անտոնը», որ ցերեկը պեղում է աղբահարը, գիշերը իր կոպեկներն է հաշվում գյուղից հեռու, գերեզմանատան իր խցիկի մեջ, որ յոթ ամիս վիճել է կնոջ հետ 10 կոպեկի համար, մինչև որ սա թողել հեռացել է հորանց տուն, և որ չի վարանում նոր թաղած երեխայի գերեզմանը հետ քանդել գիշերով՝ իր կորցրած 7 ռուբլի 62 կոպ. գտնելու համար: Ահա ինքնամփոփ «Ծեր Սոսին», որ մի տարում կորցնելով իր երեք որդուն և շուտով նաև կնոջը, մտածում է Աստծու անարդարության վրա և փորձում է հիշատակ թողնել՝ ծառեր տնկելով մեծ ճամփի կողքին, չի հաջողում և մեռնում է վշտահար: Ահա անօգնական փոքրիկ «Հանեսը», որին հոր սպանողն ու մոր սիրեկանը, անշուշտ, մոր համամտությամբ՝ հեռացնում է քաղաք, որ իրանց չխանգարի: Ահա «այրիացած Լևոն Ազիզյանը», որ մենակ ճաշում է իր ընդարձակ սեղանատանը, քրթմնջում է շարունակ, թե «հանգուցյալի» ժամանակ կերակուրները համով էին, դժգոհում է խոհարար Գրիգորից, բայց և պահում է, այլապես լիովին մենակ կմնար: «Եվ այսպես ամեն օր» (ճաշ): Ահա խանութպան Սինասը, որ վեց տարի է լրագիր է ստանում և «Բրիտանական ակամակիրը Օստենդեի մոտ խարիսխ ձգեց»-ը այն մտքով է մեկնում իր ունկնդիրներին, թե «ռսները բոմբ օգեցին նեմեցների քաղաքի վրա»: «Եվ լրագրի ընթերցումը շարունակվում է: Նույնը կրկնվում է և հաջորդ օրերը» (Ընթերցողներ): Ահա վերջապես թեմական տեսուչը, որ ճամփից ուշացած ու հոգնած՝ հյուր է ընկել Տեր Սիմոնին. նա կուզեր քնել, բայց կամք չունի տեր հոր հեքիաթն ընդհատելու կամ նրա քացախից գլուխն ազատելու (Հայր Սիմոնը): Այդպես և մյուսները:

Այս խղճուկ կյանքը տանելի է դեռ՝ քանի միօրինակ է, անպատահար. սովորությունն աննշմար է դարձնում նրա անիմաստ ու ծանր ընթացքը: Ամեն փոփոխություն, ամեն նորություն սակայն դառնում է աղետաբեր, խանգարիչ ու երբեմն ճաշակել տալով «սակավիկ մի մեղր»՝ բերում է թշվառություն: Եփրեմ պապի զբոսանքի դուրս գալը նրա նվազած կյանքին վերջ է դնում (Պապն ու թողը). «վերակացուի» սրտանց ճաշելը մի հորեյանի հացկերությոն՝ նրա պաշտոնից արձակվելու պատճառ է դառնում: Արդեն պառաված «Օր. Մարիամի» արթնացող հույսը, թե գա-

լու են իրան առաջարկ անեն՝ դառնում է դառն հիասթափություն և նրան անկողին զցում: Եղնիկի երևումն ու չքացումը «Սպիտակ տան բնակիչների» մոտ պառավի մահվան պատճառ է դառնում: Շինվում է երկաթուղին և քանդվում է հարևան Պետրոսի տունը (Երկաթուղի): Լսում է Հանեսը, թե իր մայրը սիրեկան ունի և զրկվում է մորից ու տա-նից...

Ամենքի ոտից մի ծանր քար է կապած, որ չի թողնում ազատ շարժվելու: Սովորականը, անխուսափելի փոխելու ամեն փորձ ցավագին ժպիտ կամ արգահատանք է շարժում: «Օր. Մարիամը», որ համակերպած էր արդեն պառաված աղջկա վիճակին, որքա՞ն խեղճ է դուրեկան երևալու իր փորձերով. գործակատար Պողոսը որքա՞ն անզոր է իր կատվին պատժելու ճիգերով: Որքա՞ն խեղճ են փոքրիկ Գարոյի ծնողներն իրենց մատաղով (Հրեշտակ), «Շաքարամանի» հերոսն իր անվստահությամբ, «Վերակացուն» իր պատվախնդրությամբ, ավագ ուսուցիչն իր գրությամբ (Հոգաբարձու), թեմական տեսուչն իր ստերով (Հայր Սիմոնը), գիշերօթիկներն իրենց ատամի կրճտոցով (Ջերմաչափ), «Սպիտակ տան բնակիչներն» ու «ժամկոչ Անտոնն» իրանց որոնումներով, հարևան Պետրոսը երկաթուղու դեմ, «Հանես»-ն իր մոր ու նրա սիրեկանի դիմաց...

Միօրինակ, տևական ու խեղդուկ վիճակից դուրս գալու համար շատ անճարակ են Ստ. Ջորյանի «հերոսները», նրանք չեն գտնում շիտակ ու հաջողակ ճամփան, երբ անկարող են համակերպելու. ընդարմացած կամք ունեն ամենքը: Պետրոս աղան փորձում է իմանալ, թե լա՞վ է հսկում պարտեզին իր պահապանը և իր զլուխը ճղել է տալիս, փոխանակ ժամանակին ձայն հանելու կամ պահապանին փոխելու (Փորձանք). այրի Ազիզյանն ամեն օր քրթմնջում է, փոխանակ նոր խոհարար վարձելու կամ հնին մի փորձվածի մոտ ուղարկելու. և խոհարարն իր հերթին շարունակում է դժգոհությամբ ծառայել, փոխանակ տեղը փոխելու: «Ծեր Սոսին» ծառեր է տնկում մեծ ճամփի եզրին մի հիշատակ թողնելու համար, փոխանակ իր անժառանգ կարողությունից մի բան կտակելու: «Ս. Գևորգ եկեղեցու երեցփոխ, ծխական դպրոցի հոգաբարձու, Մարդասիրական Ընկ. անդամ, քաղաքային դումայի իրավասու, սանիտարական հանձնաժողովի նախագահ և տնատեր ու պատվավոր քաղաքացի Դավիթ Դանիելյանը», որի ատամները ցավում են, երեք օր ծնոտը բռնած՝ կնոջ միջոցով սաստում է իր երեխաներին և խնդրում հարևաններին, որ կամաց խոսեն, փոխանակ բժշկի դիմելու կամ ատամի որքն արևին ցույց տալու (Կամաց խոսեք): Գարոյի ծնողները խաչի

դուռն են տանում հիվանդ երեխային և անձրևին գիշերում խոնավ մատուռում՝ փոխանակ բժշկին կանչելու և այլն: Իսկ ովքեր ըմբոստ են՝ բռնում են հանցանքի ուղին: «Ձերմաչափից» դժգոհ գիշերօթիկները աղ են ածում նրա եփած կերակուրի մեջ, որ վոնդել տան նրան՝ չուզեմալով համակերպել նրա «կարգ ու կանոնին»: Ահել մարդու դեռատի կինը իր վիճակը փոխելու համար նախ սիրաբանում է իր ժառանգի հետ, վերջը թունավորում իր մարդուն (Սատանա): Եվ... մարտում են թե կինը, թե գիշերօթիկները...

Իսկ ովքեր օրինավոր կարգով փորձում են «ճակատագրի» դեմ գնալ՝ հանդիպում են անհաջողության և համակերպում են, ինչպես երևանցի անզավակ գույգը, որ փորձում է բազմազավակ մի գյուղացու աղջիկներից մեկին որդեգրել ու չի հաջողում: «Ոչինչ, ոչինչ,- մխիթարում է կնոջը, երբ որդեգիր տված երեխային կայարանից հետ են տանում գյուղ,- երևի Աստված եղպես է կամեցել՝ Նրա կամքն է. մեր ճակատին երեխա չի գրած» (Անհայտ թելեր): «Ինչպես երևում է, Տերը բարկացել է ինձ վրա. նա չի ուզում, որ ես մի ժառանգ, մի հիշատակ թողնեմ այս աշխարհի վրա... Որդիներս խլեց... ծառերն էլ շատ համարեց...», - ասում է «Ծեր Սոսին» և այդ խոսքերով հոգին ավանդում: Ձուր է մաքառման ամեն փորձ. համակերպիլ- ուրիշ էլք չկա... Ստ. Ձորյանի «հերոսները» թփրտում են մի քանի վայրկյան անողոք ու բիրտ ուժերի ճանկում և... հանգստանում: Եվ նորից սովորական կյանքն ընթանում է իր ճամփով դանդաղ, միօրինակ, մեմակ ու տխուր, մինչև մահը գոցում է տեսարանը սև վարագույրով: Եվ այսպես «ամեն օր», անցնում է կյանքը միօրինակ բնության ծոցում, որի անտարբեր տեսքը քնարական տրամադրություն է բերում հեղինակին:

Ահավասիկ միայնությունը. «Այժմ սպիտակ տան մեջ ծերունին ապրում է մեմակ՝ իր շան հետ միասին: Շուտ շուտ նա իջնում է գյուղ և այցելում պառավի գերեզմանը: Հաճախ նա նստում է իր կացարանի շեմքին և հայացքը հեռուն նետած՝ հիշում է իր պառավին ու ինչ որ լուռ դնողնում ինքն իրեն: Երբեմն էլ,- այս լինում է առանձնապես երեկոները,- երբ մութն իջնում է աշխարհի վրա, նա դառնում է ոտքերի մոտ պառկած շանը և խոսում նրա հետ- եղպես՝ Բողար, «այ տո»-ն էլ չկա,- ասում է նա մեղմ, մտերիմ ձայնով,- նա մեզ մեմակ թողեց ու գնաց: Նա էլ չի գա, Բողար, էլ չի գա: Անխիղճ այ տո, խեղճ այ տո:

Շունը դուռնը թաթերի վրա դրած՝ լուռ նայում է տիրոջ դեմքին ու աչքերը խոնարհում: Նա հասկանում է, որ խոսքն այն պառավի մասին է, որն իր համար լավ էր պատրաստում և որը հիմա ուր որ գնացել է:

Տեսնելով շան կարեկից լռությունը ծերունին ոգևորվում է ավելի և շարունակում է իր գրույցը:

Մինչ այդ մութն ավելի ու ավելի թանձրանում է անտառում և նրանք երկա՛ր-երկա՛ր մնում են միևնույն տեղը նստած...» (Սպիտակ տան բնակիչները):

Ահա և անտարբեր բնությունը, որ տիրապես համակերպում է ամենքին, և միօրինակ, տևում կյանքը իր ծոցում: Ձառան Եփրեմ պապը, թոռան ձեռը բռնած՝ դուրս է եկել տանից գարնան մի լավ օր:

«Նրա ականջին էր հասնում եկեղեցու տոնական զանգահարությունը, որ կարծես թրթում խաղում էր օդի մեջ և շունչը կտրած ընկնում գետին:

Ձանգերի դողանքը Եփրեմ պապի հոգում զարթեցնում էր անցած-մեռած հիշողություններ և նա իրան տեսնում էր երեխա, որ Ձատկին հոր հետ գնում էր եկեղեցի, ու զանգերը դողանջում էին այդպես հանգիստ ու միալար... Հետո նա տեսնում էր իրան ջահել ու առողջ, որ, նույնպես ջահել մի աղջկա հետ, թև-թևի տված պսակի է գնում ու զանգերն էլ դողանջում էին այդպես թրթալով... Վերջապես նա տեսնում է իրան հասակն առած տղամարդ, որ գերանդին ձեռին խոտ է հնծում դաշտի մեջ... Ձնգում էր գերանդին, լորերը թռչում էին խոտի միջից, խոտը լաս լաս դարսվում էր շարքով և այսօրվա պես դարձյալ դողանջում էին ժամի զանգերը...»:

Սա կյանքն է, որ գնում է իր ճամփով. ահա և բնությունը: Եփրեմ պապը դաշտ է դուրս գալիս ու մոտենում անտառին: «Անտառը խշշում էր այնպես, կարծես բոլոր ծառերը միասին երգ էին ասում: Ինչ լավ է խշշում անտառը, մտածեց պապը: Այդ խշշոցը նույնն էր, ինչ որ շատ տարիներ առաջ: Այդպես էր խշշում նա, երբ ինքը երիտասարդ էր, այդպես էր խշշում մերին, երբ նա հասակն առած տղամարդ էր: Այդ խշշոցը նույնն է, առաջվանը, նույնը կլինի և միշտ...»

Նա շարունակում էր ականջ դնել:

Այժմ անտառի խշշոցի հետ նրա ականջին էր հասնում առվի քջջոցը... Նա ճանաչում էր այդ առուն, հնձի ժամանակ քանի՞ անգամ էր հաց կերել նրա մոտ: Առվի քջջոցի հետ Եփրեմ պապի ականջին էին հասնում և թռչունների երգը,- այդ արտույտներն էին երգում,- և խոտերի շրշունը, և հովից օրորվող թփերի շշունջը, իսկ հեռվից գալիս էր դարձյալ եկեղեցու զանգերի ձայնը ու խառնվում անտառի խշշոցի հետ»:

Այս արթնացող բնության միջին Եփրեմ պապը բերանքսիվար ընկ-

նուն է գետին, համբուրում հողն ու հողին փչում գերագույն համակերպությամբ:

Այսպես է երևում կյանքը Ստ. Ջորյանին - միօրինակ ու տխուր տևունով- և տրտմությամբ լցնում նրա նկուն սիրտը: Իր «հերոսների» պես ինքն էլ բարի սիրտ ունի և անզոր է զգում իրան «ճակատագրի» դեմ: Նա տեսնում է իրար տարակա մարդիկ, հոգով, մտքով ու կամքով աղքատիկ, բայց սրտով բարի, ամեն մեկը իր խաչը կրող՝ անջատ, ինքնամփոփ, շարունակ՝ և անզոր իրանց բախտը փոխելու կամ իրանց անճարակության, կամ արգելքի բրտության, կամ նրա անխուսափության պատճառով:

Եվ քանի Ստ. Ջորյանի հոգին կմնա նկուն, հակված դիտելու և զգալու կյանքի մեծ ճամփից դուրս շարտվածների տխուր վիճակը, նա միշտ կմնա մանր պատկերների հեղինակ, որովհետև համակերպվում են անհատները, իսկ խմբերը մաքառում են. առկայծող ու մեղմ բարության կողքին կա բոցավառ բարություն, որ հրդեհում է բազմություններ և լուսավորում է նոր հորիզոններ, ստեղծագործելով կյանքի նոր ձևեր ու կապեր:

Ստ. Ջորյանի թե գրական շնորհքը և թե արվեստը մեծ չեն, բայց աչքի ընկնող են և զարգանալու ընդունակ: Նա տիրանում է իր նյութին և մշակում է խնամքով: Հմուտ չէ հայ լեզվին, բայց և անհաղորդ չէ նրա հոգուն. կշռել չգիտե բառերի ներքին արժեքը և ներուստ չի ապրում լեզուն, ուշադրությունը տված լինելով դեմը երևացող պատկերները գծելուն: Իր աչքը սուր է կյանքի մանրուքը դիտելու և շատ հաճախ կարողանում է բնորոշը գատել և միարարել մի դեմք կամ մի կացություն պատկերելու համար: Երբեմն հաջողվում է ամփոփ տողերով խոշոր բովանդակություն ուրվագծել ինչպես՝ «Գյուղացի Երեմի կենվորները նույնպես պատրաստվում էին քաղաք մեկնելու: Դրանք սպիտակահեր, անզավակ անուսիներ էին, բայց իրար սիրում էին ինչպես նորապսակներ, դողում էին մեկը մյուսի առողջության համար, ճաշին միմյանց մեկնում էին յուրոտ պատառներ, իսկ թեյի ժամանակ միշտ մի ավելորդ կտոր շաքար էին զցում միմյանց բաժակ, «թող քաղցր լինի» ասելով: Նրանք երևանցի էին, իրենց ասելով ունեին սեփական տուն, խանութներ և խաղողի մի այգի» (Անհայտ թելեր): Ինքնաբերաբար գալիս է ձեր առջև այս ծեր գույզը ու երագում եք նրանց անցյալն ու ապագան: Հաճախ հաջողապես կենդանագրում է մարդկանց, որ նշան է կերտող երևակայության: Կարդացեք, օրինակ, «Ձերմաչափ» նկարագրությունը

ու եթե կարող եք՝ միք տեսնի ձեր աչքի առջև այդ անունը կրող վտիտ մարդուն՝ նրա ծմեռը բարձրացող ու ամառն իջնող ուսերով: Հաջող և անակնկալ համեմատությամբ հաջողում է գամել պատկերը ձեր հիշողության մեջ, ինչպես. «Նրանք (մարդ ու կին) նայում էին դեպի իրենց մառանը, որի հին դռան վրա փայլում էր մի նոր կողպեք, ինչպես կեղտոտ փողկապի վրա ադամանդյա քորոց» (Հանցանք ու պատիժ):

Իր դիտողության դաշտը գյուղն է և գավառական քաղաքը, որ նրա սուր աչքին շատ «անհասկանալի» և «պատահական» դիպվածներ են բերում: Հասարակական կյանքի մի քանի գավառական անդրադարձումներ նրա գրչի տակ ստացել են տիպական ամփոփում, հորինելով նրա երկու լավագույն պատկերը՝ «Հոգաբարձուն» և «Ընթերցողները»: Պայմանադրաբար թույլ տալով, որ հոգաբարձուն կարող է մի երկար նամակով պատասխան տալ ավագ ուսուցչի գրության,- որ հորինվածքի արատը պետք է նկատել,- չէր կարելի ավելի սեղմ, ցայտուն և իրական պատկերել մեր դպրոցական կյանքի խեղճությունը: Ավելի հաջող, թեև մի երկու տեղ կրճատելի և փոփոխելի մասերով պատկերած է մեր լրագրի գավառական ընթերցողը երկրորդ պատկերի մեջ: Նույն դպրոցական կյանքը իր աղքատիկ բովանդակությամբ և չնչին կրքերով հաջողապես գծված է «Վերակացուի» մեջ, ուր տեսնում ենք հոգաբարձուներից մեկի կնոջ միջնորդությամբ հրավիրած և մյուս հոգաբարձուի աղջկա միջամտությամբ վճռված վերակացուի սահմանափակ հոգին և անզոր պատվախնդրությունը:

Այս պատկերների մեջ արտացոլում է Ստ. Ջորյանի շնորհքի մի տարրը - ծաղրը: Մյուս տարրը քնարական ապրումն է հավերժական բնության, որ տեսանք «Պապն ու Թոռը» պատկերի մեջբերումներից: Ձեռքնթափ ծաղրի ենթարկվում են փոքրիկ մարդկանց անզոր ճիգերը ընդդիմանալու համակերպության հարկադրանքին: Մինասը, որ իզուր ճգնում է բացատրություն տալ իր ունկնդիրներին Տրիեստի և Տրիենտի մասին. վերակացուն, որ մտածում է բողբոջել իր արծակման դեմ և այլն: Նկուն հոգու անզոր ծաղր է սա, ավելի շուտ մի հեգմանք, որ ձգտում չունի ոչինչ ուղղելու, ոչինչ խարանելու, ոչինչ խթանելու քանի որ մեկ է, չի կարելի «ընդդեմ խթանի աքացել»...

Աչքի ընկնող է Ստ. Ջորյանի վերլուծական կարողությունը. այսինքն այն ընդունակությունը, որով նա մեկնում է «անհասկանալին», «պատահածը», որ կարելի է տեսնել «Ժամկոչ Անտոնը» և «Սատանա» պատկերներից. մանավանդ առաջինը, ուր նկատվում է մի գաղափարի տիրապետիչ բռնության զորացումը մի սահմանափակ և աղքատ հոգու մեջ:

Այս երկու պատկերը ցույց են տալիս, թե հեղինակը կարող է ավելի հետազայում արժեքավոր երկեր տալ մեզ, քան ինչ որ գետեղել է իր ժողովածուների մեջ:

Պատկերը, նորավեպը գրական մի ճյուղ է, որ շատ հարմար է գալիս մեր անհամբեր ու անպարպա ժամանակին, երբ մեծ վեպեր կարդալու ոչ ոք ախորժակ ու հնար չունի բացի պատանիներից: Այդ ճյուղն իր վարպետներն ունի. համաշխարհային գրականության մեջ Բոկկաչիո, ֆրանսականի մեջ՝ Մոպասան, Ռուսաստանում՝ Չեխով: Սրանց ուշադիր ուսումնասիրությունը կարող է մեծապես օժանդակել մեր հեղինակին համաչափելու իր հորինվածքը, պարզելու իր ուրվագիծը և հմտանալու լեզվի մոգական կարողություններին: Ուսումնասիրել ոչ թե նրանց հետևելու ստրկաբար, ինչ որ կլիներ ծիծաղելի, այլ նրանց օգնությամբ սեփական ճամփան հարթելու, որ կլիներ մի ծառայություն մեր գրականության և փառք ու հռչակ հեղինակին:

Հառաջարան*

Չորս տարի առաջ լույս տեսավ ժագ Հակոբյանի «Գաղտնի ճամբան» և որքան գիտեմ մանուլի մեջ անդրադարձում չունեցավ: Չգիտեմ արդյոք շատե՞րն ընդունեցին քերթողի հրավերը և թողնելով իրենց «Հին սիրտը»՝ «մանուկի պես ժպտուն»՝ նրա հետ երկար խոկացին

... մեծ սերեր, ոսկի տարփանք, հույսեր նոր,
վաղորդայններ լուսավոր»:

Չեմ զարմանա, եթե քչերն ընդունած լինեն այդ հրավերը, որովհետև այս նոր քերթողը հոգեկան արտասովոր կառույց ունի և անսովոր ստեղծագործություն:

Իր «Երանգապնակս» քերթվածի մեջ ինքն իսկ լավապես ցուցադրած է իր դավանանքը բանաստեղծության մասին և իր հոգեկան կառույցի բնորոշ կողմը: Ես չեմ տեսնում ցայգն, ասում է նա, և ոչ լսում սրինգի ծայնը, ես «կզգամ»: Իր ըմբռնումով

Բնությունն զգայություն է համրում

Եվ Բանաստեղծն զգայությանց նկարիչ...

Ուրեմն ո՛չ թե զորավոր զգացումներ կամ բուռն կրքեր ունի Ժ. Հակոբյան, այլ լոկ զգայություններ, որ սակայն չափազանց նուրբ են և այդ նրբությամբն իսկ՝ անսովոր:

* ժագ Ս. Հակոբյան, Մեղրալուսին, Կահիրե, 1943, էջ 5-10:

Մեր նկուն օրերի ծնունդն է Ժ. Հակոբյան, երբ խամրած են համազգային իդեալները, երբ թմրած է լայն խոյանքներ ստեղծելու կարողությունը, երբ հայ զանգվածներն ապրում են այլազան միջավայրում՝ հետապնդելով անձնական կամ տեղական շահեր և ստեղծելով ինքնամոփոփ խմբակներ: Նա պատկանում է մեր նոր սերնդին, բայց ոչ այն խավին, որ ճանկրտուքով հաց է վաստակում և ոչ այն խավին, որ ապրում է մեր մարտական հուշերով, այլ այն սակավաթիվ անձերի շարքին, որ ապրում են ոգեկան կյանքով և ձգտում են հարատևել հայ մշակույթը: Տխուր է այս խավի ներկան և անստույգ՝ ապագան: Իր ոտքի տակ նա հայրենի հող չունի և իր շուրջը՝ հայրենի միջավայր: Իր ապրումները լայն արծազանք չեն գտնում, նա ապրում է հանրորեն մեկուսի: Այս հանգամանքը ծանրանում է նրա ներքին աշխարհի վրա: Նա չի ապրում իր հանրությանն համընթաց. դա կլիներ ոգու մահացում և գոեհկացում: Նա ապրում է տարաշխարհիկ գրականության ոլորտում, որ սակայն մտերմորեն չի խոսում իր սրտին: Իր ոգին թռիչքներ ունի և սիրտը՝ հույզեր, որ խորթ են իր ցեղակից միջավայրի համար: Այդ ցեղակիցը հաց է վաստակում և մեղմակի օտարանում է, նա հազիվ հասկանում է լրագրի լեզուն. նա հազիվ կարող է ընթացիկ գաղափարներ ըմբռնել և ընթացիկ զգացումներ ներապրել: Միայն փոքրիկ և մտերիմ խմբակներ կամ թե այս ու այն կողմ ցրիվ անհատներ հասկանում ու համազգում են իրար, բայց այդ ջերմին մտերմությունը և հեռավոր արծազանքները բավական չեն խթանելու նոր սերնդի ստեղծական կարողությունը և ցնցելու սիրտ ու միտք: Եվ այսպես է, որ գուլանում է ամեն կարողություն և թուլանում ամեն ճիգ: Ինքնամոփոփ խմբակների մեջ մշակվում են խմբակային և մինչև իսկ անհատական լեզուներ. ստեղծագործությունը դառնում է ջերմանոցային. հոգիները փշակալում են կամ չափազանց նրբանում. գրականությունը դադրում է հանապազորդ հաց լինել և դառնում է մեկուսի խմբակների և ինքնամոփոփ անհատների վայելք: Նոր սերնդի զանգվածը ոգու սով չունի, իսկ սակավաթիվ անձերը, որ այդ սովն ունին, ապրում են զանգվածներից դուրս, վեր ու մեկուսի:

Բայց այդ մեկուսի ոգիներն են, որ արժեք ունին և ստեղծում են հանրային արժեքներ: Նրանց ներքին աշխարհի մեջ է ազգն իր վերելքն ապրում և իր կարողությունները ցուցադրում: Նրանք են, որ ստեղծում են մշակույթ և հարատևում ազգի ոգեկան կերպարանքը: Դժնդակ պայմանների բերումով ազգի բազմությունն ու իր մեծարժեք ծիլերն ապրում են տարանջատ և ծիլերը հաճախ խամրում են բավարար սնունդ չառնելով ցեղակից հողից: Բայց այդ ծիլերն են՝ որքան և վտիտ՝ մեր

հավերժության հույսն ու ապավենը:

Դրանցից մեկն է ժազ Զակոբյան, որ մի նոր բողոք է մեր մշակույթի բազմադարյան ծառի վրա և ունի մեծարժեք կարողություններ այդ մշակույթը գունազարդելու և նոր տարրերով հարստացնելու: Նա մի նոր հայ աչք է աշխարհի դիմաց և մի նոր հայ սիրտ, որ ներապրում է բնությունը: Նա շարունակում է Մ. Մեծարենցի գիծը. նույն կարգի ոգի, բայց ոչ նույն:

**Կնույնանամ այն ատեն բնության հետ միասին,
Երանգներով կլեցվիմ, համակ բույրեր կցուլամ,
Եվ թրթռուն իմ սրտեն՝ թել թել ծայներ կհոսիմ:**

Այսպես է նա իր «Գաղտնի ճամբան» հատորի մեջ: Նույն ոգին է նաև այս նոր հատորի մեջ, բայց մեկ տարբերությամբ. այնտեղ իր սիրտը բացված է բնության մեջ և բնության հանդեպ. նորաստեղծ Ադամն է դրախտի մեջ: Այստեղ, չորս տարի հետո, նրա սիրտը զարթած է սեր ապրելու համար. նա զգում է Եվայի ներկայությունը: Նա դեռ չի ճանաչում Եվային, բայց արդեն որոնում է շարունակ: Մի վաղանցուկ համբույր և մի թեթև շոյանք բոցավառում են նրա երևակայությունը: Հատորը դառնում է մի հարսներգություն, մի գունագեղ ու նրբին հեքիաթ, որ վերջանում է «երեք խնձորով»: Մենք տեսնում ենք սիրո երազանքներ ու տենչեր, հուր բնագրի մանուկ թոթովանքներ, անհամարձակ վայելքների գեղազարդ հուշեր, սպասումներ, կարոտներ, պաղատանքներ և անեծքներ, ողորներ ու քմայքներ, որ ծագում են նրա ներքին հորիզոնի վրա և դառնում են նուրբ և այլազան պատկերներ, որ խուժում են հոժ:

Իր նուրբ զգայությունները նկարելու համար ժազ Զակոբյան օգտագործում է մեր լեզվի հարուստ բառամթերքը, պեղում ու հանում է անլուր բառեր, ստեղծում է նոր բարդություններ, զատում է արմատները և իբր անջատ բառեր կիրարկում: Նա զգում է բառերի նկարչական և հնչական արժեքը և գիտակ է այն լույս ու ստվերին, որ բառերն ունին իբր դրկից: Իր պատկերները խուռն են, հարաբարդ և վրձինի հետքն ավելի ծիր է, քան գիծ: Պարզ ընթերցումը բառերի ժխոր է թվում, պետք է հատ-հատ կարդալ տողերը և բառերի հետքով պատկերներ գծել:

«Զգայությանց նկարիչ» է նա և ուրեմն հույզերի: Մարդկային գաղափարները հույզի թալկացում են և գունազրկում: Իր զգայությունները սակայն չափազանց թարմ են, նուրբ ու գունագեղ, ուստի նա գաղափարներ չունի: Նա զգում է, ոչ թե մտածում. ուստի իր պատկերները ծագում են խուռն ու ձուլվ, և ընթերցողին է մնում լուծել և գատորոշել: Ամեն-

նից նվազ դասականն է մեր քերթողների մեջ: Իր բնույթը մեղմ է և նրբին. ուստի մշմարում, ներապրում և նկարում է մեղմ տեսարաններ և նուրբ առնչություններ - պայծառ գիշերներ, մեղմ հովեր, նրբին ծաղիկներ, շշուկներ ու բույրեր, տրտում հուշեր, մեկուսի երազանքներ ու մտորումներ: Իր երազկոտ խառնվածքին զուգահեռ՝ իր տողերը երկար են և կշռույթը՝ լուրջ, թեև պատահում են նաև աշխույժ ու կայտառ տողեր: Լի-նելով շատ ավելի նկարիչ, քան երաժիշտ՝ իր քերթվածների մեջ հաճախ պատահում են կշռույթի և շեշտի թերացումներ: Նա լայնորեն տիրացած է հայոց լեզվի բառազանծին, բայց իր կազմած խոսքերը հաճախ տարտամ են: Մեծատաղանդ նկարիչ է նա, բայց հետամուտ է մանր մասերին: Նա դեռ չգիտե հեռանալ իր նկարից՝ մասերի զոդվածքը դիտելու իբր ամբողջություն: Նկատելի է կառուցումի բնագող, բայց առայժմ նա նկարիչ է և ոչ կառուցող: Որմաքանդակի փարթամության մեջ կորչում է շենքի հատակագիծը:

Ժազ Զակոբյան ունի ինքնատիպ զգայություն և պատկերելու մեծ կարողություն. կարծում են նաև փայլուն ապագա՝ իբր արվեստագետ: Իր ոգեկան կառույցի և նուրբ արվեստի պատճառով նա կմնա մեկուսի, բայց շատերին սիրելի: Ձանգվածներին պետք են հորդառատ գետեր և արգավանդ դաշտեր. վճիտ օդն ու ջուրը բարձունքներին են հատուկ: Բայց միշտ կան ու կլինեն նուրբ ու ծարավ ոգիներ, որ սիրով հանձն կառնեն բարձունքները մազլցել՝ այդ օդին ու ջուրին հասնելու համար...

Քեյրուք, դեկտեմբեր, 1942

Երկու երգ

«Եթե հնար ունենայի, ես ամենասուրբ պարտականություն կդնեի ամեն մի հայի վրա անգիր ուսանել այս երգը (Մ. Թաղիադյանի «Տեր, կեցո Դու զհայս» երգը): Մինչ այսօր իմ կյանքի մեջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ»:

Այս է գրում մեր ազգային առաջին օրհներգի մասին նա, որ պիտի գրեր երկրորդը՝ «Մեր Հայրենիքը»: Այդ երկու ազգային երգերը խտացնում են մեր ազգային մտքի զարգացման երկու տարբեր շրջան. մեկը, որ անցել է և մյուսը, որ անցնելու վրա է արդեն: Մ. Նալբանդյանի գրական հռչակը ծագում է այն տարին, երբ խավարում է Մ. Թաղիադյանի

արկածալից կյանքը (1858 թ.): Ամենաշատը երկու սերունդ զատում է նրանց իրարից, բայց ինչ տարբերություն անձի և աշխարհայացքի:

Մեկը ծնվում է հայրենի միջնաշխարհում, պարսիկ բռնության տակ, մտնում է վանք, գտվում անգլիական դպրոցում և աղոթք է գրում հայության բերանից. մյուսն արև է տեսնում մի հայաշատ գաղութում, ռուս իշխանության տակ, քահանայի ձեռքից կոնսիստորի միջով անցնում է համալսարան, մտերմանում Բակունինին և Յերցենին և կոչ է ուղղում հայության: Երկուսն էլ աստանդական կյանք ունին, բայց մեկը թափառում է որոնելով հաց ու կայան իր մտքին. մյուսը ծովեր է չափում հանրային շահեր պաշտպանելու: Երկուսն էլ մեռնում են տարագիր, ամբաստանված իբր խառնակիչներ՝ մեկը ազգային, մյուսը պետական կյանքի. մեկին սպանում է չարքաշությունը, մյուսին՝ բանտը: Երկուսի միտքն և՛ պայծառ հարավից և մռայլ հյուսիսից՝ հածում է հեռավոր հայրենիքի շուրջը, երազելով նրա փայլուն ապագան. ու երկուսին էլ ժխտում է ժամանակի հոգևոր տերը՝ մեկին անտեսելով, մյուսին հալածելով:

Մ. Թաղիադյան և Մ. Նալբանդյան հանդես են բերում տարբեր տրամադրություն և տարբեր մտայնություն: Առաջինը աշխարհիկ հայն է, որ նկատում է իրեն հայ եկեղեցու զավակ, բայց և հայ ազգի անդամ, և կուզեր, որ եկեղեցին աշխարհավարեր. նա գրում է գրաբար և վերջում միայն թեքվում է աշխարհաբարին: Երկրորդը նույնպես աշխարհիկ հայ է, որ նկատում է իրեն հայ ազգի զավակ, բայց և հայ եկեղեցու անդամ, և կուզեր, որ եկեղեցին ազդակներից մեկը լիներ ազգային լուսավորության. նա հարգում է գրաբարը, բայց գրում է աշխարհաբար: Մեկը տրտունջ ունի եկեղեցականից, մյուսը բողոքում է նրա դեմ, դատափետում, պարսավում:

Երկուսն էլ «հայ-քրիստոնյա» են, միայն Թաղիադյանի մտածումը կրոնական-ազգային է, Նալբանդյանինը՝ ազգային-կրոնական, այն տարբերությամբ նաև, որ մեկի միտքը չի դուրս գալիս ազգայնության սահմաններից, մյուսի ազգայնությունը հենարան է դառնում միջազգայնության, քրիստոնեությունը՝ ռամկավարության՝ ընկերավար հովերով և ինչից են:

Մ. Թաղիադյանի կրոնական - ազգային մտածումը, որ քաղաքական գունավորում է առնում Դորպատում, դառնում է ազգային - քաղաքական Նալբանդյանի գրչի տակ և ժառանգաբար անցնում Գ. Արծրունուն և Բաֆֆուն. այնուհետև երազները մարմնանում են կյանքի մեջ և դառնում քաղաքական-ռամկավար շարժում՝ ընկերավարական շերտավորումով:

Այս երկու նշանավոր հայերի տրամադրության ու մտայնության զուգահեռ՝ մեկի «Տեր, կեցո»-ն աղոթք է, մյուսի «Մեր Հայրենիքը»՝ կոչ: Երկուսն էլ արդյունք ազգերի ազատության. մեկը հայի՝ պարսկական լծից, մյուսն իտալացու՝ ավստրիական: Թաղիադյանը դիմում է Աստծուն, նրա ողորմությունը հայցում, որով հույս ունի ազգովին ապրելու այս աշխարհում, մյուսը դիմում է հայրենիքի քաջ որդիներին և ազգի բախտը կապում նրանց սուրբ արյան հետ: Մեկը մաղթում է հաստատություն հայրապետական աթոռին և արի հովվապետին է վստահում ազգի բախտը: Թշնամուց ազատված ազգն իր հովվապետի հովանու տակ - ահա մեկի իղեալը: Իր քաջ որդոց սուրբ արյունով ազատված հայրենիք - ահա մյուսի իղեալը:

Բայց Նալբանդյանի «Մեր Հայրենիքը» կոչվում է «Իտալացի աղջկա երգ». բանաստեղծի բուռն տենչն է, որ այդպես հնչեր հայ աղջկա երգը և մեր հետագա պատմությունը ճգնել է սրբագրել այդ վերնագիրը և հաջողել է արդեն: Այդպես են վկայում մեր բանաստեղծուհիները՝ Ա. Տիգրանյան և Վ. Աղասյան ... 25-30 տարի է արդեն, որ հայ աղջիկը եռագույն դրոշներ է կարում, արտասուքով լվանում և հոգով ընկերանում հայրենիքի քաջ որդիներին: Եվ վաղուց է արդեն, որ «Մեր Հայրենիքն» արտահայտում է հայության ազգային զգացումն ու տրամադրությունը:

Սակայն մոտ է ժամանակը, երբ «Մեր Հայրենիքն» պետք է փոխարինե մի ուրիշ օրհներգ, որ դեռ չէ գրված: Թյուրք անիրավ իշխանության վերացումով բացվելու են նոր ու ընդարձակ հորիզոններ արյունվա, բայց մարտական հայության առջև: Հայի ստեղծագործ հանճարը կստեղծե մի նոր «բուն ազգային երգ», որ կխտացնե մի կողմից մեր հերոսական պայքարը, մյուս կողմից մեր լուսաշող ապագան, ինչպես «Մեր Հայրենիքը» խտացնում էր մեր թշվառությունն ու ազատվելու տենչանքը ազգային մարտով: Այդ նոր երգը կստեղծվի, անշուշտ, որովհետև մոտ է ժամանակը, երբ մեր հայրենիքն այլևս չի լինի «թշվառ ու անտեր և մեր թշնամուց ոտնակոխ»:

«Մանկական գրականության մասին»

Կինը մեր ընթացիկ հասարակական կյանքին քիչ է մասնակցում, թեև մասնակցում է: Նույնիսկ «կանանց խնդիրը», թեև մեզանում ամեն տեղ, ուր ընտանեկան հավաքում է լինում, խոսակցության խոսք ու զրույցի նյութ է դառնում, բայց մինչև այսօր նա այդ նեղ շրջանումն էլ մնացել է և ասպարեզ չի դուրս հանել մի կին-ուժ իր պաշտպանության համար: Մինչև այսօր այդ խնդիրը չի կարողացել շարունակվող դրական արտահայտություն ստանալ մի կին գրողի շնորհիվ. դեռ նա կանանց միջից մի երգվյալ պաշտպան և ուսումնասիրող չի դուրս հանել*:

Թեև այսպես է եղել նրա վերաբերմունքը դեպի իր սեփական խնդիրը, այնուամենայնիվ, ինչպես վերև էլ ասինք, նա մասնակցել է մեր հասարակական ընթացիկ կյանքին: Մի կողմից նա եղել է վարժուհի և բարեգործ, մյուս կողմից իր ուժերը տվել է գրականության: Մեզ հետաքրքրում է, այն էլ ամենաընդհանուր գծերով, կնոջ գրական մասնակցությունը՝ որքան նա արտահայտվել է մանկական գրականության մեջ:

Մենք ունինք մանկական գրականություն, որ ընդհանրապես առած՝ թե որակով և թե քանակով փոքր է. ունինք նաև հատկապես մանուկների համար մի ամսագիր՝ «Աղբյուրը»: Բայց թերթելով թե այդ գրականությունը և թե այդ միակ ամսագիրը, մենք չենք տեսնում ինքնուրույն կին ուժեր, որոնք իրանց անունը կապած լինին այդ գրականության հետ: Ըստ երևույթին ինչ ավելի լավ ասպարեզ «մայրերի» համար. բայց ինչ էլ որ լինի, իրողությունն այն է, որ թեև այդ ասպարեզը նրանց համար շատ հարմար է և միշտ էլ բաց է եղել նրանց առաջ, բայց և այնպես մանկական գրականությունը չունի մի ինքնուրույն կին գրող, որ անուն հանած լինի և ճանաչված: Ինքնուրույն ներկայացուցիչ նա ունի վիպական գրականության մեջ մեծերի համար (Տիկ. Մ. Մարիսյան – Խատիսյան):

Որքան անմխիթար է դրությունը ինքնուրույն կին – ուժեր արտադրելու կողմից, նույնքան մխիթարական է, երբ նայում ենք նրա թարգմանիչ ուժերին: Ճիշտ է, մինչև այսօր՝ խիստ առած՝ ինչպես ինքնուրույն, նույնպես և թարգմանական նկատելի կին ուժեր համարյա չունինք, ուժեր, որոնք խոշոր երկերի թարգմանություններով հռչակված լինին. ճիշտ է, որ նրանք մեծ մասամբ գրական զբաղմունքի սիրողներ են եղել, բայց այս էլ կա, որ այդ սիրողների թիվը ստվար է և նկատելի. նրանցից մի

քանիսը նույնիսկ բավական շատ և երկար են աշխատել. օրինակ՝ տիկ. Խոջաթումանյան «Նոր-Դար»-ում և օր. Շխյան՝ «Աղբյուր»-ում: Այդ իրողությունը մեր աչքում մեծ գին ունի, որովհետև կին-թարգմանիչների շատությունը մենք մի քայլ ենք համարում դեպի ինքնուրույն ուժերի երևան գալու հնարավորությունը: Կնոջ գրիչը փորձվում է թարգմանությունների մեջ, դրանով ամրանում է նրա վստահությունը, դրանով նա վարժվում է գրական աշխատանքին, և ուշ չէ գալու գուցե այն ժամանակը, երբ մենք ինքնուրույն կին-գրողներ կունենանք:

Այս է մեր կարծիքով այն մեծ սպասավորությունը, որ կին թարգմանիչները իրանց գրական վաստակներ արած անմիջական ծառայությունից դուրս, անուն են մեր առաջադիմության գործին. անկասկած սա մի նշանավոր ծառայություն է. նրանք հետագա կին-ուժերի համար ճանապարհ են հարթում:

Այս գործին նպաստողներիցն է նաև տիկ Տիրուհի Կոստանյանը, որ ահա քանի տարի է իրան տվել է թարգմանական գրականության և վերջերս մանուկների համար գրքեր թարգմանելով է զբաղված: Նախքան նրա թարգմանած գրքույկների մասին խոսելը, մենք ավելորդ չենք համարում պարզել մի քանի տեսակետներ, որոնցով մենք ղեկավարվում ենք մանկական գրքույկների մասին կարծիք հայտնելիս:

Չեքիաթները մանուկների սիրած բանն է և մեծ հափշտակությամբ կարդում ու լսում են մինչև մի հայտնի հասակ՝ քանի դեռ խելքը զգալի չափով չի զարթնել և չի ղեկավարում նրանց: Չսկաները, հրաշքները, սքանչելի արկածներն ու վառ երևակայության մարմնացումները գրվում են նրանց: Բայց մանուկների այդ հակումը, պետք է լուրջ ուշադրության նյութ դառնա և հայտնի ընտրությամբ պիտի նրա ձեռքը հեքիաթներ տալ, որ նշանակում է, թե հեքիաթներ ընտրելիս պիտի ղեկավարվել հայտնի սկզբունքներով: Որոնք են այդ սկզբունքները*:

Ահա մի քանիսը գոնե: Նախ պետք է աշխատել որքան կարելի է հայ մանուկի ձեռքը հայ ժողովրդական հեքիաթ տալ՝ լավ հայերենով գրած: Մինչդեռ մեծ մասամբ (երկու բացառությամբ) մեր մանկական գրողներն աշխատում են շարունակ թարգմանական հեքիաթներով և թարգմանական լեզվով կերակրել հայ մանուկին. թող ամեն մեկը մտածի, թե ինչ մեծ վնաս է հասցնում այդ հանգամանքը մեր մանուկ սերունդի կրթությանը... Այդ ուղղությամբ փորձեր շատ քիչ է լինում մեր գրականության

* Այստեղ շոշափված հարցերի մասին նայեցեք ու համեմատեցեք «Դաստիարակական մոլորություններ» Ե. Ղազարյանցի, Մուրճ, 1890, № 9, «Մանկական ընթերցանություն, նույն մարդու, Մուրճ, 1890, № 3 և «Դեռահասների ընթերցանությունը» Գ. Տեր-Սիրաքյանի, Մուրճ, 1898, № 9, 10-11:

* Այս ուղղությամբ մի երկու թույլ փորձ է եղել կանանց կողմից. օրինակ՝ Սոֆյա Երկայնաբազուկ-Արղությանի «Չավատն ինձ կփրկի», Մուրճ, 1897 թ., № 5-6:

մեջ և մենք կարծում ենք, թե այդ առաջ է գալիս խնդիրը բավականա-
չափ խորն ու խելացի ըմբռնել չկարողանալուց... Նոր սերունդին, մա-
նավանդ այսպես կոչված «ինտելիգենտ» դասի նոր սերունդին պետք է
աշխատել մանկությունից կապել իր հարազատ ժողովուրդի հեքիաթ-
ների հետ, որոնք ավանդաբար՝ դարերի ընթացքում մեր ոգին պահպա-
նող ժողովուրդը հասցրել է մինչև մեր օրերը: Հետո այդ առողջ հիմքի
վրա կարելի է և կարևոր է ավելացնել օտար ազգերի հեքիաթները: Այս
մեկ:

Հեքիաթները ահագին նշանակություն ունին մի ազգի մտային կուլ-
տուրան ուսումնասիրողի համար. անհիշատակ ժամանակներում կո-
րած շատ բաներ կարելի է դուրս կանչել հեքիաթների միջից. մի ազգի
վիճակը իր դրոշմը դնում է նրա ոգեկան արտադրությունների վրա. նրա
ոգին արտացոլում է նրանց մեջ, լինին այդ արտադրությունները բանա-
վոր, թե առարկայական, իրավական հարաբերություններ թե բարոյա-
կան աշխարհայացք: Հեքիաթների շնորհիվ խավարում կորած անցյալը
իր աշխարհայացքը կտակում է հետագա սերունդին և այդպիսով իր
ոգով կրթում է նրան: Բայց, օրինակ, հենց մի ազգի՝ թեկուզ մեր ազգի՝
դարերով մշակած բարոյական հասկացողությունները անպայման ու-
սանելի չեն մեզ համար, որպես գործնական կյանքի խթաններ: Նրանք
հետաքրքրական կարող են լինել և են ազգի մտային կուլտուրան ու-
սումնասիրողի համար, բայց կարող են գործնական հետաքրքրություն
չունենալ, որպես հնացած և վնասակար սկզբունքներ և հասկացողու-
թյուններ: Օրինակ, մի հեքիաթ, ուր խորթ մայրը մի հրեշ է դուրս բերած,
շատ հետաքրքրական է այն տեսակետից, թե ինչ կարծիք ունի ժողո-
վուրդը խորթ մոր մասին, բայց բնավ ուսանելի և խրատական չէ այդ մեր
մանուկների համար*: Մինչդեռ մարդասեր և ողորմած վերաբերմունքը
դեպի աղքատը նույնքան թանկ է մեզ համար և նույնքան մանուկի
սրտում պատվաստելու արժանի, որքան մեր ծերունի ապուսպապերի
համար է եղել: Պարզ է ուրեմն, որ ամեն հեքիաթ չի կարելի մանուկի
ծեռքը տալ, նա լավ է և խրատական ոչ թե նրա համար, որ *հեքիաթ* է, այլ
որ *ուսանելի* և *կրթիչ* հեքիաթ է. այս դեպքում բանը հատկությունն է և ոչ
էությունը: Անհրաժեշտ է ուրեմն հեքիաթները մեծ զգուշությամբ ընտրել,
մոտենալով նրանց որոշ գնահատության չափով: Մեզ համար այդ չափը
այն իդեալներն են, որոնց ձգտել ու ձգտում է մարդկությունը. և այդ տե-
սակետից էլ նայում ենք հեքիաթների ընտրության վրա: Սա մի շատ

* Մենք վեր առանք պ.Տեր - Միրաքյանի բերած օրինակը ավելի լավը չունենալու
համար:

կարևոր հանգամանք է. և մենք մանկական գրականությամբ պարապող-
ների ուշադրությունն ենք դարձնում սրա վրա. մենք շեշտել ուզեցինք
այս հանգամանքը, որովհետև չենք նկատում թե նրա կարևորությունը
լուրջ կերպով գիտակցելիս լինի: Այս երկու:

Իսկ երրորդը հետևյալն է: Նախնական ստեղծագործությունը բնու-
թյան մեջ բարի և չար ուժեր է նկատում և նրանց անձնավորում է բարի
և չար ոգիների բանաստեղծական պատկերներով. բարիները երևում են
լուսաշող, հրաշալի, սիրող, իսկ չարերը՝ հրեշավոր և այլանդակ, սար-
սափ ազդող պատկերներով: Մեր ժամանակի մանուկի հոգին, որ նրբա-
ցել ու քնքշացել է դարերի ընթացքում և կորցրել հին մարդու հոգու ամ-
րությունն ու դիմացկունությունը, անկարող է տանել հրեշավոր ու սար-
սափելի պատկերներ. նրանք ահ են ազդում միայն և գրգռում երևակա-
յությունը՝ դարձնելով այդ երևակայությունը հիվանդոտ: Այս հանգա-
մանքը նույնպես պիտի աչքի առաջ ունենալ և հեքիաթներ ընտրելիս
վերցնել իրականի չափազանցություններ ունեցող հեքիաթներ. օրի-
նակ՝ հսկայական հասակ, աներևակայելի ուժ – ինչպես Աղայանցի
«Տորքը». միշտ հեռու մնալ սոսկալի տեսարաններից, արյունարբու և
վրիժառու հակումներից, անսիրտ գործերից և այլն:

Ինչ վերաբերում է կիսաիրական փոքրիկ պատմվածքներին ու վե-
պիկներին, դրանց մասին կասենք հետևյալը: Ժամանակ է վերջապես,
որ մանկական գրականությունը դառնա գեղարվեստական և թողմի իր
տենդենցիականությունը. թե մեծերը և թե մանուկները անշուշտ հոգնել
են այդ տխմար ու անօգուտ ուղղությունից, մանուկների ձեռքը պետք է
տալ ստեղծագործություններ և ոչ հնարովի ու սուտ պատկերներ: Պար-
զենք մեր ասածը: Ամենքը կարդացած կլինին այն «Տոնածառի» առակ-
ները, որ ամեն հունվարի հեղեղում է մանկական գրականությունն ու
հրատարակությունները. Լևոնը կամ Արշակը նոր տարում տոնածառ ու-
ներ և ուրախանում էր իր ընկերների հետ. պատուհանից նայում էր մի
խեղճ ու ցնցոտիներով փոքրիկ տղա, կամ թե՛ դռանը սրթսրթում էր մի
փոքրիկ աղջիկ. Լևոնը կամ նրա մայրը տեսավ, ներս կանչեց, միրգ
տվեց, հետո իմացավ թե որտեղ է ապրում, նրա մորը բան ուղարկեց
տոմների համար և միշտ օգնում էր: Չարն այնտեղ, բարին այստեղ: Կամ՝
նույն պատմության մի ուրիշ վարիացիա: Եվ այսպիսի գրվածներով են
կերակրում մանուկներին, կարելի է ասել, համարյա բոլոր մանկական
գրքույկները ամեն տեղ: Ընթերցողը կարդացած կլինի նույն ուղղու-
թյամբ ու ոգով և ուրիշ գրվածներ, ուրիշ նյութերի մասին: Ինչո՞ւ համար
է այս բոլորը, ի՞նչ են ուզում սրանով ասեն. կարծում են թե սա կրթո՞ւմ

է մանուկի ոգին կամ ազդո՞ւմ է նրա վրա: Այդպես մարդիկ աշխարհում չկան, կամ կան մի երկու հատ, բայց մի ծաղկով զարուհ չի գա, ասած է: Դրանք բռններ են դնում երեխայի վրա, որ նա չի կարող տանել, և մանուկը բնազդաբար դա լավ է զգում, նա զգում է, որ այդպես վարվելն իր բանը չէ, որ մայրիկը կամ հայրիկը կչարանա, որ աղքատ երեխաների հետ ընկնելը վատ է և հազար ու մի բան, որ ցանցված ու տարածված է այդ ձեր «բարի ու մարդասեր» պարոնների տներում ու գլուխներում: Լավ իմացեք, որ ոչ մի հարուստ չի թողնի իր մարմարե սանդուղներով բարձրանալ «մի ինչ որ» ցեխոտ կոշիկներով երեխա, այդպիսի մեկին չի նստացնի իր երեխայի մոտ (շորերը կկեղտոտին) և այդպես չի վերաբերվի դեպի մի խեղճ երեխա: Թող որ միայն անհարմար դրության մեջ կընկնի փոքրիկ թշվառը, ինչպես ընկնում են պատանի և հասակավոր թշվառները. աղքատ աշակերտները լավ գիտեն՝ թե ի՞նչ է նշանակում տոները հարուստների հետ անցկացնելը. հարուստների, որոնք ի պաշտոնե կամ ձևի համար են նրանց և նրանց նմանների դրության մեջ մտնում...

Մինչդեռ կյանքում կա իրական բարիք ու չարիք. իրական լավություն ու վատություն. մատչելի, սովորական և կարելի ամենքի համար, այդ լավությունը պիտի ամրացնել ու սովորական դարձնել, և դա արդյունավոր է ու կլինի, որովհետև մարդու գործող բարոյականությունը սովորությունների հաստատում շղթա է, և բարոյական կարելի է դառնալ սովորելով և վարժվելով: Մենք այն կարծիքին ենք, որ իդեալները պիտի իրականության մեջ որոնել, աշխատելով հայտնի կազմվող տեսակետից գնահատել կյանքի լավ ու վատ կողմերը: Կյանքի, իրական կյանքի մեջ շատ լավ ու վատ վարմունքներ են լինում և այդ թե մանուկների, թե հասակավորների կյանքում. մանկական գորող կարող է դրանց հակադրել իրար և գորող պիտի այդ հակադրությունը որպես բանաստեղծ երևակայի և որպես բանաստեղծ վերարտադրի: Ապա թե ոչ, եղած պատկերների նման որքան ուզեք՝ կարելի է շուլալել, առանց բանաստեղծ լինելու, ամեն խելքը գլխին մարդ կարող է այդ անել: Այսպես, ուրեմն, մանկական գրականությունն էլ իր բանաստեղծները պիտի ունենա, որոնք գեղարվեստորեն պիտի վերարտադրեն մանուկների և ծնողների իրական կյանքը: Մանկական գրականությունը մանուկների և ծնողների (այն կապով, որ ունին մանուկների հետ) կյանքի գեղարվեստական վերարտադրությունը պիտի լինի, և ոչ շինովի ու սուտ բան:

Մեր կարևոր համարած մի քանի տեսակետները պարզելուց հետո, այժմ կարող ենք անցնել տիկ. Կոստանյանի թարգմանած գրքերի գնա-

հատության, ովքեր համաձայն չեն մեր ունեցած կարծիքների հետ, նրանց համար իհարկե արդյունքն էլ սխալ կլինի և ոչ ընդունելի: Մենք կարճ կանենք մեր գնահատությունը, որ փոքր ինչ երկար կարողանանք կանգ առնել մանկական գրականության լեզվի վրա:

Մեր պարզած տեսակետներից նայելով՝ տիկ. Կոստանյանի թարգմանած գրքույկների մեջ մեզ դուր եկան և հարմար ենք դատում մանուկների համար. Գրիմնի «Չարուստն ու աղքատը»*, «Սպիտակ օձը», Պաուլ Առնոլդի «Թռչնիկը» և «Չինական առասպելները»: Մնացածները մեր վերը ասած սովորական ոգով են գրված և կկարդացվին, ինչպես կարդացվում են նույնանման հեքիաթներն ու պատմվածքները:

Մեր մանկական գրականության լեզուն ոչ միայն օրինակելի հայերեն չէ, այլև շատ վատ հայերեն է, ավելի ճիշտն ասած՝ հազիվ հայերեն է: Այդ երևույթը շատ պատճառների արդյունք է, որոնցից մի քանի կարևորները մեր կարծիքով սրանք են: Թարգմանիչներն ու գրական հետաքրքրություն ունեցողները սնվում են օտար գրականության արտադրություններով. և որովհետև այդ սնունդը փափուկ հասակից է սկսվում և շարունակվում է, կարելի է ասել անընդհատ, ուստի նրանք կորցնում են սրտի ու մտքի հարազատությունը և թե զգում, թե մտածում են օտարի նման. պարզ է, որ այդ զգալն ու մտածելը իր արտահայտությունների վրա շատ է ազդում և դրանք էլ անհարազատ են դուրս գալիս: Այս հանգամանքը շատ ավելի լայն ծավալ ունի և շատ ավելի երևույթներ է ընդգրկում, քան թե սկզբից թվում է, բայց մեր խոսքը նրա՝ մանկական գրականության համար ունեցած նշանակության մասին է: Այսպես, ուրեմն, առաջին պատճառը ազդում ու դեր է խաղում անկախ նրան ենթարկվածների ցանկությունից:

Մանկությունից օտարացածը հետո միայն խելքով գալիս է հայրենի խոսքին ու մտքին կաչելու և դիմում է մեր գրականության ու մամուլին, որ ինքն ևս իր կողմից հարազատություն քիչ ունի: Այսպիսով մատաղ հասակի արածը շարունակում է գիտակցության շրջանը: Դեկավարի պակասությունը գալիս բարդում է եղած դրությունը և հեռու տանում հարազատության մոտենալու հնարավորությունը:

Եվ հետո այդ պայմաններում աճած գործիչների արտադրություննե-

* Նույն հեքիաթի մի վարիանտը կա նաև «Չյուսիսափայլում», 1858 թ., № 3:

րին հսկողները լուրջ ուշադրության և զբաղմունքի նյութ չեն դարձնում մեր ակնարկած հանգամանքը. լեզվի մասին խոսելիս՝ ոգին ու կազմը մի կողմ է մնում և քերականական ձևերն են հրապարակ գալիս ու գնահատություն ստանում: Ահա պատճառները, որոնք այնքան անհարազատ ու խորթ են դարձրել մեր գրական լեզուն և քամում են նրա կենդանության հյութերը, որոնք այն պատճառներն են, որոնք պետք է և կարող են ուշադրության նյութ դառնալ, որոնց պետք է և կարելի է վերացնել, եթե մեծ ջանք ու աշխատանք գործադրվի. մեր խոսքը ընդհանուր պատճառների մասին չէ, որոնք շատ ավելի պարզ գիտակցության կարիք ունեն...

Մեր կողմից խորհուրդ ենք տալիս թարգմանիչներին, եթե նրանք ցանկանում են, հարազատ, մայրենի լեզվով ու ոգով գրքեր տալ մանուկի ձեռքը, որ ուշադիր լինեն դեպի մեր լեզուն: Եթե իրանց ստացած դաստիարակությունն ու կրթությունը խորթացրել է նրանց սիրտն ու զգացմունքը, այդ դեռ չի նշանակում, որ իրողությունը պիտի սկզբունք դառնա. այդ դեռ չի նշանակում՝ քանի որ այդպես է, ուրեմն այդպես էլ պիտի լինի: Մենք ունենք «Հայ ժողովրդական հեքիաթները» Տիգ. Նավասարդյանի, ունենք «Վերք Հայաստանի», «Սոս և Վարդիթեր», Աղայանցի և Քամալ. գրվածները. այդ գրքերը պիտի կարդալ ու կարդալ, անգիր անել, ականջը վարժեցնել մայրենի լեզվին, ուղեղը վարժեցնել հայերեն մտածելուն և ձեռքը՝ հայերեն արտահայտելուն: Ով զբաղվել է մեր կենդանի ժողովրդական լեզվով, ով լավ ծանոթ է մեր ասած երկերի հետ, նա նկատած կլինի, որ մենք ուրույն ազգ լինելով՝ ուրույն մտածելու, զգալու եղանակ ունենք և ուրույն արտահայտության ձևեր: Ցավը դարձանելու համար մեր առաջարկածը մի սպեղանի կարող է լինել, նա պահանջում է միայն բժշկվելու անկեղծ ցանկություն և նրան հասնելու ջանք ու տոկ: Հակառակ դեպքում ծանր պատասխանատվություն են վերցնում իրանց վրա մանկական գրականության գործիչները, որովհետև սեփական ժողովրդի ոգին չունենալով՝ չեն էլ կարող այդ ոգին ներշնչել մատաղ սերունդին և կրթել նրան հարազատ կաթով. և պատճառ են դառնում կրթվող սերունդի բաժանվելուն, կտրվելուն իր սեփական ժողովրդից, որ նշանակում է, թե կղզիացնում և անարմատ են դարձնում նրան: Ով լսելու ականջ ունի՝ թող լսի...

4. Տիրուհի Կոստանյանի լեզուն այդ տեսակ անհարազատ լեզու է: Զգիտենք կարդացողները նկատել են, բայց մենք կբերենք մի քանի օրինակ՝ ավելին թողնելով նրան, ով հետաքրքրվում է: - Որտեղ գրված էր, որ (թե) ինքն այժմ ավագ զինվորի աստիճան է ստացել: -Իսկ այն

օրից, ինչպես (ինչ) ես հեռացել եմ մեր տանից: - Հակոբը ոչ մի կերպ չէր կարող մոռանալ գետնախնձորի մասին: -Որտեղ էլ որ նա լիներ, ինչ էլ որ նա աներ ամեն տեղ ու միշտ պատկերանում էր իր հոր դեմքը: (Որտեղ էլ լիներ, ինչ էլ աներ՝ միշտ ու ամեն տեղ երևում էր հոր դեմքը): -Եվ կարծեմ մենք շուտով կգտնենք քո հորը: -Մեծ ջանքով լցնում էր երկու թուշն էլ համով կերակուրներով: -Այդպես հայր ու որդի իրար փարվելով երկար ժամանակ մնացին: -Ամերևակայելի դրություն է սա: Այս՝ «Ձիմվոր Հակոբից»:

Այս էլ՝ «Կյանքի դարոցից» . - Նա բնական շատ բարի սիրտ ուներ: Ուզում է ասել՝ **մորուց**: - Դուք երեխայքին փչացնում եք ձեր անմիտ սիրելով: -Ֆերդինանդը չուներ ոչ մի ընկեր, որովհետև ոչ ոք չէր ուզում հնազանդվել հաճույքներին (ո՞ւմ հաճույքներին): - Ֆերդինանդն իրան աղա էր կարծում, իսկ Պետրոսը (ին) գերի: - Բախտավորապես Պետրոսը չար սիրտ չուներ և դեպի յուր առատ ընկերը սրտով կպած էր: - Այ, թե սազում են մեկը մյուսին (մեկ-մեկու): -Իմաց տվեց բոլոր պատահածի մասին: - Ցույց տվեց նրա (այսինքն հոր) բոլոր սխալները Ֆերդինանդի կրթության մեջ: -Ժամը յոթին «Արծիվ» անունով նավը գաղթականների համար, պետք է ճանապարհ ընկներ: -Դու ինչպես ես քեզ զգում: -Ինձ շատ դժվար էր բաժանվել նրանից: -Կառապանը սրբում էր ձիաներին (երևի թիմարում էր): - Բերանը, շարժվածքը... նրա ամբողջ կազմվածքին տալիս էին մի առանձին տեսակ գեղեցկություն և մեծ նմանություն հոր հետ: - Եվ այլն: Բայց այս օրինակներով այնքան չի պարզվում գուցե մեր ասածը. պիտի կարդալ ու տեսնել:

Մանկական գրքեր թարգմանողից իսկի չենք պահանջում, որ նա բնագրին հլու հպատակ լինի. նա կարող է արտահայտությունները փոխել, կոկել, հարմարեցնել մեր երեխաների հասկացողության ու մտածողության: Այդ շրջանում ամեն բան պիտի հիմնել մեր մանչուկների ունեցած մտավոր պաշարի և հոգեբանության վրա. մեր մանուկն ու գերմանացի մանուկը մեկ չեն: Ինչ կարիք կա օրինակ ասելու. «Ֆիզիկական ցավս առժամանակ ինձ մոռացնել տվեց հոգեկան տանջանքս», այս արտահայտությունը շատ դժվար կհասկանա նույնիսկ մեր 13-14 տարեկան պատանին և ուրիշ շատ այս տեսակ արտահայտություններ...

Սուկրատեսի մասին այս կասենք, որ դա մի շատ լավ գիրք է*, և եթե լավ լեզվով ու մատչելի ոճով լինի թարգմանած՝ մեր ժողովրդի սիրած

* Սա երկրորդ թարգմանությունն է. առաջինը Հրատ. Ընկերության հրատարակությունն է և սպառված է:

գրքերից մեկը կդառնա իր կենսական խրատներով, իր առողջ մտքերով, իր ըմբռնելի բովանդակությամբ և վերջապես իր հերոսի բարձր, իդեալական անձնավորությամբ: Այս թարգմանությունը սակայն չի կարող այդ դերը լավ կատարել:

Մուրճ, 1898, № 12, էջ 1771-1779

Ն. Աղբալյանի դասախոսությունը*

Երբ ասում ենք «Հայ գրականության ապագա», դա նշանակում է, որ մենք խոսում ենք նրա ապրելու մասին: Որևէ ժողովրդի գրականության զարգացում կապված է նույն ժողովրդի իրականության զարգացման հետ:

Ինչ նպաստավոր և աննպաստ պայմաններ կան հայ կյանքի մեջ, որոնք կարող են նպաստել կամ արգելք հանդիսանալ հայ ինքնուրույն գրականության զարգացմանը:

Հայ գրականության ինքնուրույն զարգացման հանգամանքներ են հանդիսանում կյանքի անապահովությունը թյուրքիայում, լեզվի վտանգը Ռուսաստանում և հայ ժողովրդի ցրվածությունը թյուրքիայում, Ռուսաստանում և մանավանդ Պարսկաստանում: Վերջին հանգամանքը աննպաստ է ազգային ամբողջական մթնոլորտի գոյության տեսակետից, որովհետև յուրաքանչյուր ազգային գրականություն կարիք ունի իրեն հատուկ մթնոլորտի, ինչ տեսակ էլ որ հասկանանք գրականություն ասելով: Իսկ որպեսզի հայոց գրականության ապագան կասկածից դուրս լինի, անհրաժեշտ է ստեղծել ազգային հատուկ մթնոլորտ, իսկ դրա համար պետք է, որ ապահովվի կյանքը թյուրքիայում, լեզուն Ռուսաստանում, պետք է ստեղծվի մի հայրենիք, բայց ոչ թե պատմական, այլ իրական իմաստով, կուլտուրական, աշխարհագրական մի հայրենիք, որտեղ ապրելիս լինի հայերի հոծ բազմություն:

Հայ գրականության ապագայի համար նպաստավոր պարագա է հանդիսանում թյուրքիայում տիրող ճնշիչ քաղաքականության թուլացումը, որի հետևանքն է լինելու հայերի ապաքինումը հոգեպես և նյութապես. դրանով արդեն կզարգանա հայ ստեղծագործական միտքը, կարողությունն ու լեզուն, հետևապես և գրականությունը: Ռուսաստա-

նում նպաստավոր հանգամանք է հայ ինտելիգենցիայի զարթունը հոգեկան ծուլման դեմ. նա սկսում է հասկանալ հայ լեզվի և ազգության կարևորությունը, որոնք հաստատուն հիմունք են կազմում հայ գրակա-նության ապագայի համար:

Եթե նայելու լինենք մեր նոր գրականության վրա, կտեսնենք, որ այն՝ սկզբում զարգանում է հեռավոր սահմաններում, հետագայում սկսում է մոտենալ մեզ - Պոլիս, Մոսկվա, հետո Թիֆլիս: Այժմ մենք գտնվում ենք գրականության զարգացման այն աստիճանի վրա, որ հայ գրականությունը ուզում է եզերական լինելուց դադարել, ստեղծել մի հաստատուն բնակավայր, որտեղ ամեն ինչ հայկական կլինի: Հայ գրականությունը զնում է դեպի հայրենացում և ազգայնացում, աշխատելով ազատվել օտար ազդեցություններից:

Հայոց նոր գրականությունը անցել է զարգացման երեք աստիճան. 1) անցյալի փառաբանության շրջան (Մխիթարյաններ), երբ երգվում է հայրենիքի անցյալն ու դեպի այն եղած կարողը, առանց նկատելու ներկան. 2) հայրենասիրական շրջան, երբ գրողների (Խ. Աբովյան, Բաֆֆի, Պատկանյան, Պռոշյան, Աղայան և մյուսները) մտահոգության առարկան արդեն անցյալը չէ, այլ ներկան: Այս շրջանի գրականությունը մի տեսակ խառնուրդ է եվրոպական և հայրենական ազդեցությունների, գրողները չեն կարողանում ճշտությամբ պատկերացնել հային. և 3) նոր սկսած շրջան (Հովհ. Թումանյան), երբ հայ գրականությունը սկսում է ազգայնանալ, ազատվել օտար ազդեցություններից և սնվել հայրենի մթնոլորտում:

Այս շրջանի գրականության հատկանիշն է նրա ինքնատիպությունն և ազգային լինելը: Այդ հանգամանքի հետևանքը լինելու է այն, որ կստեղծվի ինքնատիպ լեզու, մեր գրականության մեջ կիշխե ազգային հղացում և գրականությունը մոտենալով հայ կյանքին, կներկայացնի այդ կյանքը այնպես, ինչպես որ նա կա: Գրականությունը այլևս չի մա-յի օտարի ակնոցներով, այլ հայ ակնոցներով, և դա նշան կլինի մեր զգացմունքների, մտքի զարգացման և օգտակար ոչ միայն մեր, այլ ընդհանուր մարդկության համար:

Եթե հայ գրականությունը սնունդ առնի հայրենի միջավայրում, նա կաճի առողջ կերպով և կկորցնի իր բոլոր հիվանդոտ կողմերը: Այդ գրականության զարգացման համար որպես աննպաստ հանգամանք-ներ նշանակություն չունեն մեր ժողովրդի քիչ անդամներ ունենալը (Նորվեգիա) և քաղաքական ույժ չունենալը: Վերջին հանգամանքը ճիշտ է, նշանակություն ունի, բայց այնպիսի պայման չէ, որ արգելք

* Ընդմիջումից հետո Ն. Աղբալյանը անցավ իր դասախոսությանը:

հանդիսանա գրականության զարգացմանը:

Հռովմեական իշխանության տակ գտնվող հրեաներն էին, որոնք ստեղծեցին քրիստոնեության նման մի կրոն, որը հսկայական նվաճումներ արավ նույնիսկ իր առաջին քայլերում հռովմեական կայսրության մեջ:

Այդ տեսակետից աննպաստ և կարևոր հանգամանք է մեր երկրի դիրքը, որը սկզբից ի վեր մեզ համար մի չարիք է եղել: Հայաստանը գտնվում է Արևելքի ու Արևմուտքի հանգույցում, որտեղից անցել են բազմաթիվ քաղաքակրթություններ և թողել իրենց հետքը հայ կուլտուրայի վրա:

Ինչ պետք է լինի այն մարդկանց իդեալը, որոնք ձգտում են ձեռք բերել մի հետաքրքիր, հայրենական, եվրոպական ազգերի ուշադրության արժանի գրականություն: Համախմբել ասիական և եվրոպական քաղաքակրթությունների ազդեցությունները, անց կացնել ազգային մտքի բովից և տալ նրան ազգային կերպարանք: Մենք որպես ժողովուրդ տակավին չենք ասել մեր խոսքը, մենք պետք է ասենք այդ խոսքը և աշխատենք զբաղվել խնդիրներով, որոնցով զբաղվում են համամարդկային մտքերը:

Հորիզոն, 1914, № 64

Արտասահմանյան գրականություն

Ս. Գրքի թարգմանության մասին

Պետք ունեցա ստուգելու *կողով*, *սակառ* և այս կարգի բառերի նշանակությունը: Համեմատելով Համաբարբառի կոչումները հույն բնագրի հետ, ես արի մի քանի դիտողություններ, որ համծնում են հմուտների ուշադրության:

Սակառ բառը *չորս* ավետարանների մեջ պատահում է վեց անգամ և *բուր* դեպքերում դրված է հուն. *κόψινος* բառի դեմ: Իսկ *զամբիղ* բառը, որ մեր այսօրվա *զամբիլ* է կամ *զամբյուղը*, պատահում է *չորս* անգամ *երկու* ավետարանի մեջ (Մատթ. և Մարկ.) և *չորս* դեպքում էլ գրված է հուն. *σπυρίς* բառի դեմ: Կարելի է սրանից եզրակացնել, որ *չորս* ավետարանները միևնույն մարդն է թարգմանել, որ միևնույն հունարեն բառը միշտ հասկացել է նույն իմաստով և Հայերեն նույն բառն է համարժեք նկատել և գործ ածել:

Բայց ահա *καρταλλος* բառը, որ սրածայր զամբյուղ է նշանակում և պատահում է Դ. Թագավորությանց, Բ. Օրինաց և Երեմիայի մարգարեության մեջ: Այս միևնույն հունարեն բառը *երեք* տարբեր գրքերի մեջ թարգմանված է *երեք* տարբեր բառերով: Դ. Թագավորությանց մեջ գրված է *կողով*. «և եղին զգլուխս նոցա ի *կողովս*» (Ժ, 7):

Բ. Օրինաց մեջ գրված է *կողովի*. «և արկցես ի *կողովի*». և առցե քահանային *զկողովին* ի ձեռաց քոց» (ԻՁ. 2,4). իսկ Երեմիայի մարգարեության մեջ դրված է *ոճ*. «Ձի այսպես ասե Տէր զօրութեանց. կթեցէ, կթեցէ, ճռաքաղ արարէք զննացորդսդ Իսրայէլի. և անդրէն կրկնեսցիք, որպես կթող *յոճ* իւր»: Եթե այս երեք գրքերի թարգմանիչը նույն մարդը լիներ՝ միևնույն հունարեն բառը միշտ նույն իմաստով կհասկանար և նույն բառով կթարգմաներ, ինչպես արած է Ավետարանների թարգմանիչը: Մենք կարծում ենք, որ միևնույն բառի այս տարբեր ըմբռնումը և տարբեր համարժեքների կիրարկումը արդյունք է թարգմանիչների տարբերության:

Գալով *կողով* և *կողովի* բառերին՝ կարծում ենք, որ սրանք նույն բառերն են, նկատելով, որ Փ-ը Պ-ի միջոցով լծորդ է Բ-ին, իսկ սա Վ և Ի հնչյուններին. այդպես են գործիականի հոլովակերտ գրերը Բ. անծամբ

բանիւ, գործով. այդպես են օրինակ, պարսկ. **սելաք** և **գաւառ. սելաւ**. բառերի վերջին Բ-ն և Է-ը. երկու բառն ևս նշանակում են հեղեղ: **Կողովն և կողովը** նույն բառի գավառական արտաբերումներն են, ինչպես, օրինակ **հօւյ** և **հոփ** միջարկությունները: Սրանից կարելի եզրակացնել, որ Ե. դարում բարբառներ կային, ինչ որ ենթադրելի էր և ենթադրած են արդեն. և ապա՝ որ Գ. Թագավորության և Բ. Օրինաց թարգմանիչները ոչ միայն տարբեր անձեր են, այլև տարբեր գավառներից են: Միևնույն առարկային մեկի մայրենի բարբառում ասել են **կողով**, մյուսի բարբառում - **կողով** և թարգմանիչներն ամեն մեկն իր մայրենի բարբառի հնչումով դրել է միևնույն բառը նույն հունարեն բառի դեմ, որ հասկացել են նույն իմաստով և արժեքավորել նույն բառով, թեև տարբեր արտաբերությամբ:

«Մի ծաղկով գարուն չի գա», - կմտածի ընթերցողը: Անշուշտ. բայց մի ծաղիկը նշան է, թե գարունը գալիս է. եթե ուշադիր նայող լինի - գուցե ավելի շատ ծաղիկ գտնի: Դրա համար պետք է ավելի հմտություն, քան ունիմ, և ավելի ժամանակ: Եթե առմվի Դամբարբառը և մի շարք այս կարգի բառեր համեմատվին հույն բնագրի հետ, կարելի է հաստատորեն գտնել, թե քանի՞ հոգի են եղած թարգմանիչները: Իմ գտածը թող նպաստ լինի այդ համբերատար աշխատողին:

Նկատենք նաև, որ Գործք Առաքելոցի մեջ (Թ. 25) կարդում ենք. «և առեալ զնա (այսինքն Պողոսին) աշակերտացն ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին **վանդակաւ**»: Վերջին բառը դրված է հուն. **σπυρις** բառի դեմ, որ նշանակում է կլոր հյուսած սակառ կամ կողով, հատկապես հացի և ձկան համար: Միևնույն «վանդակ» բառը կիրարկված է և Կորնթ. Բ. թղթի մեջ (ԺԱ. 33). այս անգամ Պողոսն ինքն է խոսում իր փախուստի մասին. «և ընդ պատուհանն **վանդակաւ** կախեցայ ընդ պարիսպն, և փախեայ ի ձեռաց նորա»: Այստեղ «վանդակ» բառը դրված է հուն. **σαρξανή** բառի դեմ, որ նշանակում է ուռնու հյուսած թարմ ոստ, ուստի նաև կողով: Պարզ է, կարծում եմ, որ Գործքի թարգմանիչը և Ավետարանի թարգմանիչը տարբեր անձեր են, այլապես միևնույն հունարեն բառի դեմ մի տեղ չէր դնի **«գամբիղ»**, մի ուրիշ տեղ - «վանդակ»: Նույնը չենք կարող ասել Կորնթ. Բ. թղթի թարգմանիչի մասին. կարող է պատահել, որ հայերեն բառերը բավական չեն եղած սակառների բազմազանությունը արտահայտելու համար, ուստի միևնույն հայերեն բառը զրված է երկու տարբեր հունարեն բառերի դեմ, որ սակայն մոտավորապես նույն բառն են նշանակել:

«Սինն», 1927, Ա. տարի, № 3, էջ 90-91

1840-ական թվականները ռուս գրականության համար անմոռանալի կմնան: Այդ թվականներին էր, երբ նա, ազատվելով ամեն տեսակ օտարերկրյա ազդեցություններից, ոտ դրեց ինքնուրույն ճանապարհի վրա Գոգոլի և նրա ստեղծած «իրական շկուլայի» շնորհիվ: Մինչև Գոգոլի երևալը ռուս գրականությունը թեև ուներ ինքնուրույն և շատ հայտնի երկեր, բայց, այնուամենայնիվ, նրանց վրա նկատելի էր օտար երևելի գրողների ազդեցությունը. Գոգոլն առաջինն էր, որ չենթարկվեց այդ ազդեցության և գնաց նոր, ինքնուրույն և սեփական ճանապարհով. այդ կողմից նա կարող է հայր համարվել հետագա բոլոր գրողների համար:

Միևնույն տարիները զարթնեց ռուս քննադատական միտքը, որի ամենալավ ներկայացուցիչն այդ ժամանակ Վ. Բելինսկին էր: Հռչակավոր քննադատի կրակոտ հողվածները շարժում ձգեցին մեռած հասարակության մեջ և դուրս կոչեցին մարդիկ, որոնք, Նեկրասովի ասած՝ «դեռ զգացմունքի մնացորդներ ունեին և բոլորովին չէին մեռել»: Ստիպված լինելով հարմարվել խիստ ժամանակների ռեժիմին, նա բավականանում էր միայն գեղագիտական (եսթետիք) և փիլիսոփայական հարցերով, թեև շատերի համար պարզ ու նկատելի էին այն մտքերը, որոնք ավելի թանկ էին նրա համար և որոնց ուղղակի արծարծել չկարողանալով՝ արծարծում էր տողամեջ: Շատ մանր ու խոշոր պայմանների, որոնց թվում նաև Գոգոլի գրվածների և Բելինսկու հողվածների ազդեցության տակ, սնվեց գրողների մի նոր սերունդ, որ նշանավոր երկերով ասպարեզ դուրս եկավ և գրավեց ռուս գրականության մեջ առաջնակարգ տեղեր: Այդ գրողներից էր նաև Տուրգենևը:

Տուրգենևն իր գրական գործունեությունն սկսեց բանաստեղծություններով և պոեմաներով: 1843 թվ. դուրս եկավ նրա «Պարաշա» պոեման, որի հիման վրա Բելինսկին հոտառությամբ, որ այնքան հատուկ էր նրան, զգաց հեղինակի «անսովոր տաղանդ» լինելը: Գրախոսականից, ուր հայտնած է այս միտքը, երևում է, որ Բելինսկու համար ոչ այնքան թանկ էր պոեման, որքան հեղինակի տեսակետը: Ինքը՝ Տուրգենևն իր այդ շրջանի գրվածների համար ասում է. «Ես դրական հակակրանք եմ զգում դեպի իմ բանաստեղծությունները և ոչ միայն ոչ մի օրինակ չունեմ իմ պոեմաներից, այլև շատ բան կտայի, որ նրանք չլինեին աշխար-

* Թարգմ. Ալ. Ծատուրյանի, Մոսկվա, 1895 թ.:

հիս երեսին»: Անցավ այդ ժամանակը, Տուրգենևը դարձավ հայտնի վիպասան և ահա, ծեր հասակում, նա նորից ասպարեզ է գալիս որպես բանաստեղծություններ գրող՝ այս անգամ արձակ: Բայց այն ժամանակվա և այսօրյա բանաստեղծություններն իրարից շատ են տարբերվում. մինչդեռ առաջինները նոր սկսող, դեռևս չամրացած տաղանդի առաջին փորձերն են, վերջինները ներկայացնում են հասուն հասակի արտադրություններ:

Տուրգենևի գրքույկը, որի մասին խոսում ենք, բաղկացած է 50 գողտրիկ բանաստեղծություններից, որոնք գրված են գլխավորապես 1878-79 թթ., նրանց մեծ մասը անձնական բնավորություն ունի: Բոլոր բանաստեղծությունները գրված են թե իր՝ հեղինակի սեփական և թե հասարակության կյանքում պատահած դեպքերի և երևույթների ազդեցության տակ: Քանի որ բանաստեղծությունների մեծ մասը, ինչպես ասացինք, անձնական բնավորություն ունի, ուստի նրանց հասկանալու համար անհրաժեշտ է հեղինակի կյանքի հետ լավ ծանոթ լինել: Մենք կաշխատենք ընթերցողին մի հայեցակետ տալ, որով մասամբ նրանք կարող են առաջնորդվել այս գրքույկը կարդալիս:

Նշանավոր վիպասանը իր կյանքի վերջին տարիները կորցրեց մեծ վեպեր գրելու կարողությունը: Իր վերջին „**Ноль**“ վեպից հետո, որ լույս տեսավ 1874 թ., նա այլևս խոշոր բան չտվեց, ոչ թե գեղարվեստական, այլ հասարակական նշանակության կողմից: Միայն մահից մի քանի տարի առաջ նրա տաղանդը մի անգամ էլ փայլեց անսովոր լուսով և հանգավ հեղինակի հետ: Այդ ժամանակներին են վերաբերում և «Արձակ բանաստեղծությունները», որոնք լույս տեսան 1882 թ.: Կյանքի վերջին տարիները Տուրգենևին շատ էին զբաղեցնում մահվան, ամեն բանի ունայնության և ծերության խնդիրները, մանավանդ որ ծանր հիվանդություն ուներ: Այդ խնդիրներին են վերաբերում բանաստեղծություններից «Խոսակցությունը», «Պառավը», «Գանգերը», «Ինչ կմտածեմ ես...», «Ծերուկ», «Աշխարհի վերջը», «Ախոյանը» և ուրիշները: Բացի դրանից, նրա սիրտը ծանր խոցված էր այն բաժանման պատճառով, որ նա ունեցավ նոր սերնդի հետ իր «Հայրեր և Որդիներ» վեպի առթիվ և որ հասարակությունը սառն էր վերաբերվում նրա հաջորդ վեպերին և ապերախտ էր դեպի նա. այդ է հիշել նա անշուշտ իր «Դու կլսես դատաստանը հիմարի...» բանաստեղծությունը գրելիս: Ծերունի վիպասանը մի նամակում այսպես է գրում իր բարեկամին. «Բարեկամ, ծերությունը մի ծանր ու մռայլ ամպ է, որ ծածկում է ապագան, ներկան և մինչև անգամ անցյալը, որովհետև սրբելով հիշողությունները նրան դարձնում է թախ-

ծոտ»: Այո, նրան մնացել էին բաժին միայն հիշողությունները, որոց դեռ չէր սրբել ծերությունը: Նա մնացել էր միայնակ, կենդանի չէին նրա բարեկամներից շատերը, նոր սերունդը հաշտ չէր նրա հետ, ներկան հրապուրիչ չէր, իսկ առաջ չէր ուզում նայել և նա թաղվում էր իր հիշողությունների մեջ, ուր «շողում էր իր նախկին, իրան միայն մատչելի կյանքը»: Անցյալը հիշելու արդյունք է «Որքան գեղեցիկ, որքան թարմ էին վարդերը» հիանալի բանաստեղծությունը: Մեր բոլոր ասածներն աչքի առաջ ունենալով, ընթերցողի համար պարզ կլինի այն տխուր կոլորիտը, որ կրում են Տուրգենևի բանաստեղծությունները: Այդ տխրությունը մեղմ, բարակ ու մշուշային տխրություն է, որ հատուկ է հեղինակին. դրա պատճառը կարելի է որոնել Տուրգենևի բնավորության առանձնահատկությունների և մեկանքով իր հակած լինելու մեջ:

Մենք անկարող ենք այդ բանաստեղծություններից լավերը ջոկել. նրանք բոլորը լավ են: Մեզ մնում է միայն խորհուրդ տալ ընթերցողներին, որ ձեռք բերեն այդ ընտիր գրքույկը և կարդան, այն էլ, ինչպես հեղինակն է ասում, մեկ-մեկ և ոչ իրար հետևից. այսօր մեկը, վաղը մյուսը: Այդ բանաստեղծությունները կարդալով նրանց ճաշակը կնրբանա, զգացմունքները կազնվանան, միտքը կխորասուզվի այն մեծ խնդիրների աշխարհը, որոնք զբաղեցրել են ամեն տեսակ գլուխներ, և շնորհակալ կլինեն պ. Ծատուրեանից, որ տվել է այդ հիանալի գրքույկի թարգմանությունը: Ինչ վերաբերում է թարգմանության՝ դրականապես լավ է:

Այստեղ չենք կարող ընթերցողներին չհայտնել մի ուրախ լուր. պ. Ծատուրյանը հայտարարել է նույն գրքույկի կազմի վրա, որ պատրաստում է իր «Ռուս բանաստեղծներ» խորագրով աշխատության առաջին գրքույկը (ամբողջ հրատարակությունը պիտի բաղկացած լինի երեք գրքույկից), ուր պիտի մտնեն թարգմանություններ Պուշկինի, Լերմոնտովի և Նեկրասովի երկերից: Սրտանց ուրախանում ենք, որովհետև ժամանակ է և հարկավոր, որ մենք ծանոթանանք մի ժողովրդի ստեղծագործություններին, որի հետ այնքան կապված ենք: Ոչ մի միջոց այնպես չի մոտեցնում երկու ազգ կամ ժողովուրդ, որքան միմյանց մտքի արտադրություններին փոխադարձ հաղորդակից լինելը: Այս միջոցը շատ ուրիշ ավելի ազդու կարծված միջոցներից ավելի դրական է և արդյունավոր:

Մուրճ, 1896, № 10-11, էջ 1349-1351

Լ. Ն. Տոլստոյ

Տոլստոյի գործունեությունը և ոգին այնքան բազմակողմանի են, որ մարդ չվարում է նրա վիթխարի գործը դիտելիս: Դժվար է գտնել մի բանաձև, որ կարողանար ամփոփել նրան և իր գործը: Նրա մասին եղած քննական գրականությունն ահագին չափերի է հասնում և գրված է աշխարհի բոլոր կիրթ լեզուներով: Սակայն չի կարելի ասել, թե նա, իբր արվեստագետ և իմաստասեր, պարզաբանված է լիովին:

Դեռ երկար տարիներ ճշմարտության և իմաստության ծարավի մարդկությունը նորից ու նորից կղառնա նրան և նրա անհուն կենսական փորձին: Ոգեկան այն անսպառ դրամագլուխը, որ նա դրել էր իր մոտ վաթսուն տարիների գրական վաստակներում, դեռ շատ երկար ժամանակ կարող է եթե ոչ լիովին սնուցանել, գոնե առժամանակապես գոհացնել պապական ռոմանտիկ, կոտրելով նրանց ճշմարտության ծարավը:

Գնահատել այնքան բազմավաստակ ու բազմակողմանի մի գործունեություն, ինչպես Տոլստոյին է, ընդունել այդպիսի բարդ ու բազմադեմ ոգի՝ ինչպես «ռուսաց աշխարհի մեծ մատենագիրն» է, նշանակում է գծել մի հարուստ հոգու պատմություն, որ ունեցել է ծանր խռովքներ ու տազնապներ և դուրս է եկել նրանց միջից հաղթական: Այդ աշխատանքը պահանջում է մանրակրկիտ հետազոտություն և վերապրում հեղինակի երկերի և անցնում է լրագրական հոդվածների սահմանից:

Բավական է հիշել, որ նա եղել է ուսանող, ճորտատեր, երկրագործ, զինվորական, հաշտարար միջնորդ, ուսուցիչ, արհեստավոր, վիպասան, խմբագիր, իմաստասեր, բարեգործ, թղթամուլ, նա ապրել է բարձր շրջանում և գյուղացու հետ, կռվել է լեռնցիների դեմ և Սևաստոպոլի մարտկոցներում, ստեղծել է նոր դպրոց և դասատվության նոր եղանակներ, գիտե եվրոպական լեզուներ, որոնցով գրում է ազատ, ուսել է մաթեմատիկ և իրավաբանություն, ծանոթ է բոլոր երկրների իմաստասերներին, խորապես ուսումնասիրել է արևելքի բոլոր կրոնները, լավ երկրագործ է և ծիսավոր, գիտե դաշնամուր նվագել և կոշիկ կարել, առաջնակարգ արվեստագետ է և սրամիտ ու խորամիտ մտածող...

Նկատեցեք, որ նա գրել է վեպեր, դրամաներ, պատկերներ, հրապարակախոսական հոդվածներ և ժողովրդական զրույցներ, կազմել է դասագիրք և հրատարակել է սրբագրած ավետարան:

Նա գրել է ռուս ժողովրդի բոլոր խավերի կյանքից. ազնվականը, գյուղացին, քաղքեմին, հարուստը և աղքատը, կալվածատերն ու ճոր-

տը, կայսերն ու դիվանագետները, հրամանատարներն ու զինվորները, պատերազմի ժխորը և գյուղացու խաղաղ խրճիթը, բանտը և պալատը, սովն ու լիությունը, տգետն ու մտավորականը և որ մեկը հիշես, բոլորը տեղ են գտել նրա լայնածավալ վեպերում:

Մարդն իր բոլոր հասակներում՝ ծնունդ, մանկություն, արթունք, արություն, ծերություն. իր բոլոր վիճակներում՝ հիվանդ և առողջ, սիրահարված և սիրաթափ, ամուրի և ամուսնացած, երջանիկ և ապերջանիկ, նորմալ և անորմալ, իր բոլոր տիպերով՝ կենսուրախը և մռայլը, նեղամիտն ու լայնախոհը, կամքոտը և թուլականը, երագողը և իրապաշտը, մեծահոգին, անձնվերը և ճառականը և ուրիշներ, շարան-շարան անցնում են ձեր աչքի առաջ:

Նրա խուզարկու միտքը աշխատել է մեկնել կյանքի այլազան և տարաբնույթ երևույթները, անհատական և խմբական հոգեբանության դժվարին կնճիռները, անհատի և հասարակության փոխադարձ կանխումները. կնոջ և տղամարդու փոխհարաբերությունները, բոլոր հասակներում և բոլոր ձևերով՝ թե իբրև բարեկամ, թե իբրև ծնող ու որդիներ: Հավասար վարպետությամբ նա ցուցադրում է ընկերությունը և բնությունը մի կողմից և առանձին անհատը մյուս կողմից՝ իրենց առնչություններով: Պատմության գումար երևույթները նա անդամահատում է անջատ պատահարների, մանր դեպքերի, ժխորի մեջ ջոկում է հատ-հատ դեմքերը, շարժումների մեջ հատ-հատ դրդիչները և այդ ամենը պատկերացնում է այնպես կենդանի և որոշ, որ միանգամայն ստանում ես թե ընդհանուրը և թե մասնավորը:

Հատորներ պետք է գրել խոսելու համար նրա ստեղծած կանացի և այր կարկառուն դեմքերի մասին, որոշելու համար նրանց հասարակական և գեղարվեստական արժեքը, ցուցադրելու և համակարգելու համար Տոլստոյի հիմնական գաղափարները և վերլուծելու համար նրա ստեղծագործող ահագին տաղանդը:

Ահա թե ինչն է մենք կամովին սահմանափակում ենք մեր ասելիքը, կանգ առնելով Տոլստոյի վրա իբրև մի տիպի և աշխատելով ներշնչել ընթերցողին այն տպավորությունը, որ այդ հսկան անում է մեզ վրա:

Ուշադրությամբ դիտելով Տոլստոյի կյանքն ու գործունեությունը սկզբից մինչև այսօր, մենք նկատում ենք մի հոյակապ և անընդհատ աճում: Յուրատեսակ հստակ վճարելով ժամանակի զորեղ հոսանքներին և թույլ կապվելով պատմության որոշ շրջաններին, Տոլստոյը ընդհանուր առմամբ մնում է մի զորեղ անհատ, որ անշեղ հետևում է իր ներքին մղումին և աճում ու զարգանում է ինչպես մի ծառ, միշտ ավելի լայն

տարածելով իր ճյուղերը կյանքի վրա: Նրա վերելքը չկարողացան կասեցնել կամ շեղել իր բնական ճանապարհից ժամանակի ամենագործը և վայրագ հողմերը:

Այդ հաստատուն ծառի արմատները գտնվում են «Մանկության, պատանեկության և երիտասարդության» մեջ: Այդտեղից մեկնելով նա բարձրանում է իր գլուխգործոցներով և տալիս է իր պտուղները վերջին շրջանի իմաստասիրական և բարոյախոսական երկերով:

Յենց սկզբից Տոլստոյի մեջ նկատում ենք մի զորեղ վերլուծական կարողություն, ինքնամփոփ խոհունություն, մի զարմանալի ուղղամտություն և կենսական անվստահություն, և ծախսիկություն, որ արդյունք է նրա չափազանց ինքնուրույն խառնվածքի: Այդ ծախսիկությունը նրան հեռու է պահում կոխված ճանապարհներից և կազմում է նրա բնորոշ հատկություններից մեկը: Այն անձերը, որոնց մեջ նա դնում է իր սեփական հոգեբանությունը, ինչպես Պիեռ Բեզուխովը «Պատերազմի և խաղաղության» մեջ և Լևինը «Աննա Կարենինայում», Օլենինը «Կազակներ»-ում և այլն, իր նման արտասովոր բնավորություններ են՝ ծախսիկ և տարականոն շարժուձևով: Նրանք ունեն մի զորեղ հակում դեպի բարոյական խնդիրների հետախուզությունը և մի անզուսպ փափագ ինքնակատարելագործման, որ դեռ նկատում ենք Իրտենևի մեջ («Մանկության, պատանեկության և երիտասարդության» հերոսը):

Տոլստոյի հետագա գրվածները մի-մի կայան են նրա ոգեկան-բարոյական զարգացման: Վաթսունական թվերին նա ապրում էր մի ահավոր ներքին տագնապ. նա որոնում է կյանքի իմաստը, իմաստավորելու համար իր անհատական գոյությունը: Քարշ տալ անիմաստ մի գոյություն, ապրել հազարավորների անգիտակ կյանքով՝ նրան թվում է անարժան թե իրեն և թե *մարդուն* առհասարակ:

Նա անխնա վերլուծում է իր ներքին աշխարհը, իր զգացումներն ու բնագղական միտումները. քննադատում է սովորական և անտեղի համարվող դրություններն ու գաղափարները, իր և շրջապատի վարած կյանքը և նրա դրդիչները և գալիս է այն եզրակացության, որ երջանկության ձգտումը օրինավոր է և իսկական երանությունը սիրո և անձնվիրության մեջ է: Այստեղից մի քայլ է դեպի Ավետարանը, որ նա անում է անմիջապես, և առաջնակարգ արվեստագետը դառնում է հանրահռչակ բարոյախոս:

Իր հոյակապ տաղանդի բովանդակ ուժով և նորադարձի ջերմեռանդությամբ նա տապալում է իր նախկին կուռքերը մեկ-մեկու ետևից և իր մոլեռանդության մեջ հասնում է աղանդավորության: Ավետարանը

պարզում է նրա շփոթ գիտակցությունը, տալիս է նրա ծեռքը գնահատության մի չափ և վերլուծության ու մեկնության մի գործիք և Տոլստոյը զինված իր նոր հավատով՝ մարգարեի համարձակությամբ խորանում է կյանքի բոլոր մոլոր կողմերը, կեղծ արտահայտությունները և դարավոր ու ավանդական հիմնարկությունները:

Մեր խոսքն այստեղ նրա վարպետության կամ գործունեության արժեքին չի վերաբերում. մեր խոսքը մարդու տիպի մասին է:

Մենք նկատում ենք մի մարդ, որ իր ծաղիկ օրերից մինչև ալևոր հասակը աշխատել է իր կյանքը ապրել օգտակարապես, լրջորեն նայելով նրան: Մենք տեսնում ենք մի մարդ, որ շարունակ ցավով և տագնապով որոնում է ճշմարտությունը և կյանքի իմաստը. վերջապես մենք տեսնում ենք մի մարդ, որ ամեն ինչ՝ և հռչակ, և ընտանիք և հանգիստ, և կյանք ստորադրում է այն բանին, ինչն որ համարում է ճշմարտություն:

Այստեղ է Տոլստոյի մեծագույն նշանակությունը, նրա կրթիչ ազդեցությունը: Ուրիշի ոգեկան բովանդակությունը, հարկավ, մերը լինել չի կարող. ուրիշի տառապանքն ու տագնապը մենք կարող ենք համագալ, բայց նրանք նույնպես մերը չեն. մերը չէ նաև այն արդյունքը, որ ուրիշներն ստացել են ներքին մաքառումով և անդուլ որոնումներով: Այլ բան է գիտենալ մեկի համոզումները, այլ բան է նրան նման լինել:

Տոլստոյը փափագ ուներ ճշմարտության. որոնեց, տառապեց և գտավ. նա գոհ է ու հաստատուն այս կյանքի մեջ: Նրա հավատը, նրա ճշմարտությունը պարտավորիչ չէ ոչ ոքի համար. ճշմարտության որոնումն է պարտավորիչ: Մեզ կարող են չզոհացնել նրա տված պատասխանները այս կամ այն հարցին, բայց անհրաժեշտ է այրող հարցերին պատասխան գտնել, եթե մեր կարծօրյա կյանքին այս աշխարհում նայում ենք լրջությամբ:

Մենք խոսում ենք ոչ թե աշակերտելու, այլ ստեղծելու մասին: Տոլստոյի օրինակը կարող է լինել քաջալեր ոչ միայն մեր սերունդի, այլև բոլոր սերունդների համար: Պետք է լինել նրա պես ճշմարտության ծարավի, կյանքի իմաստը որոնող և մեզ համար ամենաթանկ բանն այս աշխարհում ճշմարտության համար զոհաբերող:

Ահա թե ինչ է ներշնչում մեզ ութսունամյա ծերունին հոբելյանական այս ժխորի մեջ:

Վլ. Կորոլենկո, «Գետնափորի երեխաները»* «Ակամա մարդասպան»**

Վլ. Կորոլենկոն ռուս նոր բելլետրիստների մեջ աչքի ընկնող տեղ է գրավում և հույսեր է խոստանում առաջնակարգ գրող դառնալու: Նա թեև դեռ երիտասարդ է, բայց իր «Վեպիկներ և պատկերներով» արդեն ուշադրություն է գրավել թե՛ գրվածների գեղարվեստական արժանիքների և թե՛ իր համակրելի հայացքների պատճառով: Ջուտ գրական ասպարեզներից զատ, նա հայտնի է և հասարակական գործունեության ուրիշ ասպարեզներում: Ռուս ներկային ծանոթ մարդկանց հայտնի է անշուշտ, որ նա «Русское богатство» ամսագրի հրատարակիչներից մեկն է (որին և աշխատակցում է) . նրանց անշուշտ հայտնի կլինի և այն դեբյուտը, որ նա խաղաց վերջերս «Վօտեակների» խնդրում: Կորոլենկոն առ այժմ ոչ մի մեծ վեպ չի գրել. այդ բացատրվում է մի կողմից նրանով, որ նա երիտասարդ է, իսկ մյուս կողմից նրանով, որ ռուս կյանքի այժմյան պայմանները նպաստավոր չեն մեծ վեպ ստեղծելու համար: Մեծ վեպ ասելով մենք ծավալը չենք հասկանում. այլ այն, որ վեպի հերոսը մի կենտրոնական բնավորություն լինի, բնորոշի մի որոշ ժամանակաշրջան: Բայց քանի որ ռուս կյանքը, ազատվելով ճորտական կազմից, դեռ ներդաշնակության չի եկել, ուստի նա չի էլ կարող մի որոշ, ընդհանուր և կենտրոնական տիպ ստեղծել: Չասարակական կյանքը «ցրված» է, եթե կարելի է ասել, ընդհանուր, տիրող հոսանք չկա, իսկ ուր չկա մտքերի, զգացմունքների և համակրանքների ընդհանուր հոսանք, այնտեղ չկա և ընդհանուր տիպ: Ներկայումս ռուս հասարակության մեջ նկատվում են շատ հոսանքներ, իրարից տարբեր, շատ անգամ ուղղակի իրար հակառակ, ուստի կյանքն արտադրողն էլ ստիպված է փոքրացնել իր տեսողության անկյունը, մաս մաս անել իր դիտողությունը, առանձին առանձին շրջաններից վերցրած տիպեր ստեղծել, որովհետև, ինչպես ասացինք, հոսանքներն իրարից շատ են տարբերվում և չեն ներկայացնում ընդհանուր հատկություններ, որոնց կարելի լիներ ի մի խմբել և ներկայացնել:

Երկու գրքույկներից թե նյութի մշակության և թե թարգմանության կողմից առաջին տեղը կարելի է տալ «Ակամա մարդասպանին»: Ամեն երևույթ ունի իր պատճառները, հանցագործությունն ու ոճրագործու-

* Թիֆլիս, 1896, 78 էջ:

** Թիֆլիս, 1896, 64 էջ:

թյունն էլ, անկասկած, իրանց պատճառներն ունեն, նրանք հետևանք են ժառանգականության և սոցիալական պայմանների: Կան դեպքեր՝ ուր այդ երկու պատճառները միասին են առաջ բերում ոճիրը կամ հանցանքը: Կան դեպքեր՝ ուր առանձին -առանձին: Այսինքն՝ երբեմն մարդը ծնված է և՛ ոճրագործական հակումներով, և՛ շրջապատող պայմանները նպաստում են այն հակման զարգանալուն, երբեմն էլ մարդ բոլորովին հակված չէ ոճրագործության, բայց կյանքի պայմանները ստիպում են նրան ոճրագործություն անել: Լավ ըմբռնել ոճրագործության հանցագործության զխավոր և բուն պատճառներն ու աշխատել նրանց հեռացնել, ահա մեր դարի մեծ խնդիրներից մեկը:

Կորոլենկոյի ոճրագործը ակամա մարդասպան է, նա հակված չէ ամենևին մարդասպանության, բայց և այնպես ոճիր է գործում. նրան դրողը մի շարք ուժեղ ու բարդ տպավորությունների կուտակումն է: Բայց ասենք ինչու՞ն է բանը: Գյուղացի Ֆյոդորը մի շարք ծանր դեպքերի ազդեցության տակ (մարդկանց անարդարությունը, կնոջ ու աղջկա մի օրվա մեջ մեռնելը) կորցրել է իր հին հավատը, նորը չի ձեռք բերել, իր խելքին այնքան էլ հավատ չի ընծայում, մի ցուպ առած ձեռքը, զնում է թափառելու այս ու այն կողմ. տեսնի՛ ինչպես են մարդիկ ապրում, Աստծուն աղոթք անում, ի՞նչ հավատի են, փնտրում է շիտակ մարդիկ: Աշխարհից պոկվելու համար իր կամքով կալանավոր է դառնում և ծանոթանում է մինչև ոսկրները ծծված մի ոճրագործի հետ, որ իր արտաքինով մեծ տպավորություն է անում նրա վրա: Ոճրագործը ծեր էր, միշտ աղոթում էր. իսկ և իսկ մի սուրբ: Ծեր աղվեսը օգտվելով նրա մաքուր, մանկական սրտից ու հավատից, երդումով նրան կապում է իր հետ և ահա, մի քանի ժամանակից հետո, ազատվելով բանտից, Ֆյոդորը հայտնվում է մեծ ճանապարհի վրա գտնվող ավազակների որջում, առանց մի ռոպե կասկածելու, որ լավ մարդկանց շրջանում չի, մանավանդ որ շրջապատողները «թուփուն և արաղ բերանները չեն առնում»: Մի դեպք կասկած է զարթեցնում Ֆյոդորի սրտում և նա սկսում է չհավատալ Կոնստի (ծեր ոճրագործի) լավ մարդ լինելուն: Նույն այն երեկոյան, երբ պատահում է կասկած զարթեցնող դեպքը, Ֆյոդորին «բանի են դնում», նա պետք է գիշերով մի քահել և հարուստ տիկնոջ իր երեք փոքր երեխաների հետ տանի հետևյալ կայարանը: Մի ինչ-որ մութ կասկած ընկել է նրա սիրտը: Մոտենում են անտառապատ ճանապարհի ամենավատ տեղին: Ֆյոդորը նկատում է, որ Կոնստը ձիով կանգնեց իր առաջ: (Սպանության տեսարանը հիանալի է) Կոնստը պատվիրում է նրան ցած իջնել կառքից, տալիս է նրա ձեռքը կացին և առաջարկում է

սպանել առաջ կնոջը, ապա նրա փոքրիկներին: Երևակայեցեք Ֆյոդորի դրությունը, մաքուր սրտի, առանց ոճրագործական հակումների տեր մարդ, որին հանգամանքների անսպասելի բարդումը ստիպում է մարդ սպանել. նայում է կառքի մեջ, կինը «աղունկիկ» պես նստած է, երեխաները մեկը մյուսից փոքր (մեծը 4 տարեկան) «ճնճղուկների» նման նայում են իրար վրա: Չետ է նայում, այնտեղ կանգնած է Կռնատը, որի հետ կապված է երդումով և պարտավոր է հնազանդել: Ի՞նչ անի: Այդ տատանական դրությանը հաջորդում է վճռականությունը, Ֆյոդորի սիրտը հակում է անմեղի կողմը և Կռնատը տապալված է:

Խնդրում ենք ընթերցողին աչքի առաջ ունենալ բոլոր հանգամանքները և ասել, մեղավոր է Ֆյոդորը՝ թե ոչ: Անկասկած ոչ: Բայց տեսեք, որ խեղճը մի քանի ամիս նստում է բանտում, որովհետև դատավորի ասելով «հիմար» է և որ «օրենքը երկու միտք ունի»: Եթե ազատված կինն ու իր անուսիքը օգնության չհասնեին, ով գիտե խեղճ Ֆյոդորը աքսոր էլ գնար ...

Փոքրիկ պատմություն է, բայց խոր տպավորություն է անում և երբ սկսում եք մտածել նկարագրած դեպքի հիմնական պատճառների մասին, հղանում են ձեր մեջ մի շարք մտքեր մարդկանց փոխադարձ հարաբերություններին վերաբերող. ինչպես են նրանք և ինչպես պիտի լինեն, իսկ այդ հարցերից ամեն մեկն էլ ճյուղավորվում է բազմաթիվ ուրիշ հարցերի: Խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այս փոքրիկ գրքույկը, նա ընթերցողների մտքին զարկ կտա. մանավանդ որ գրվածքը լավ է և թարգմանությունը «հայերեն» (ասում ենք հայերեն, որովհետև մեզանում մի շարք թարգմանություններ են լույս տեսնում, որոնք հայերեն չեն):

Անցնենք «Գետնափորի երեխաներին»: Մի փոքրիկ քաղաքի բարի դատավորի որդին՝ Վասյան, ապրում է հոր հսկողությունից կատարելապես ազատ, որովհետև հայրը Վասյայի մոր մահից հետո ընկել է մի տեսակ անտարբերության մեջ: Որդին թափառում է փողոցներում, ման է գալիս ամեն տեղ, մտնում է ամեն ծակ ու ծուկ: Քաղաքից դուրս մի մատուռի գետնափորում ապրում են երկու խորհրդավոր ծագումի տեր մուրացկաններ, նրանց հետ էլ երկու երեխա. մեկը՝ տղա, իմն տարեկան, իսկ մյուսը՝ աղջիկ, չորս տարեկան: Հասակավոր մուրացկաններից մեկը, Տբուրցին կոչվող, մի հասկացող մարդ է, որին կյանքը սղմել է իր երկաթե բազուկներով և որը երբեմն, երեխաներին պահելու համար, անազնիվ ճանապարհով հաց է ձեռք բերում: Նույն ճանապարհի վրա է նաև փոքրիկ տղան՝ Վալենկը, որ հաց է «թոցնում» իր ընկերուհու՝ փոք-

րիկ Մարուսինկայի համար: Դատավորի որդին պատահմամբ ծանոթանում է այս աղքատ երեխաների հետ, նրանց համար խնձորներ է բերում իրանց պարտեզից: Նրանց շրջանում իրեն լավ է զգում, որովհետև ոչ ոք չի հանդիմանում՝ թե անպիտան՝ փչացած տղա է, մինչ դեռ տանն այնքան են ասել, որ ոչ միայն հայրը, այլև ինքն է սկսել հավատալ: Զկարողանալով տանել աշնան ցուրտ ու մռայլ օրերը, գետնափորի խոնավ օդը, ցնցոտիներով թաց հատակին պառկելը, փոքրիկ աղջիկը հիվանդանում է: Վասյան ու Վալենկը միշտ աշխատում են զբաղեցնել փոքրիկին: Մի օր էլ Վասյան իր քույր Սոնայից ժամանակավորապես խնդրում է նրա խաղատիկնիկը և բերում հիվանդին: Հիվանդը շատ է ուրախանում, բայց այդ ուրախությունը երկար չի տևում: Դատավորի տանը բանի հոտն առնում են, հայրը Վասյային թույլ չի տալիս տանից դուրս գալ: Վերջապես մի օր, երբ դատավորը խիստ կերպով հարցեր է տալիս իր որդուն խաղատիկնիկի մասին, ներս է մտնում Տբուրցինը՝ մուրացկանը և պատմում բանի էությունը, հայտնում է, որ հիվանդ աղջիկն արդեն մեռել է և դարձնում է խաղատիկնիկը: Դատավորի աչքերը բացվում են, նա առաջին անգամ հայրական զգվանքով նայում է որդու վրա և ոչ միայն թույլ է տալիս գնալ գետնափորը՝ մեռած աղջկան տեսնելու, այլև մի քանի թղթադրամ է տալիս աղքատներին հանձնելու համար: Փոքրիկ աղջկան թաղելուց հետո խորհրդավոր աղքատները ուր որ անհայտանում են, իսկ Վասյան և իր քույրը շատ անգամ գնում են Մարուսինկայի գերեզմանի մոտ, գիրք կարդում. խոսում, հայտնում միմյանց խոհերը և ապագայի ծրագիրներ մշակում ... Ահա և բոլորը: Կարդալուց հետո հարց է ծագում, ի՞նչու խեղճ Մարուսինկան այնպես շուտ, ծաղիկ հասակում, աղքատության մեջ պիտի մեռներ, ինչու Տբուրցինի պես հասկացող և զարգացած մարդը պիտի անազնիվ ճանապարհների դիմեր երկու երեխա պահելու համար, ինչու Վալենկը, դեռ նոր կյանքի ուղին ոտ դնելիս, պիտի գողություն աներ, զուցե շարունակելով վերջը բնավորություն դարձնել, բանտ նստեր և այլն, և այլն: Եվ դարձյալ մեր առաջ կանգնում են մարդկանց փոխադարձ հարաբերությունների մեծ խնդիրները ...

Թարգմանության տպավորությունը թույլ է: Երկու գրքի ընտրողն ու հրատարակողը Հրատարակչական ընկերությունն է:

Սուրճ, 1896, № 10-11, էջ 1355-1359

Դիկկենս 2., «Դավիթ Կոպպերֆիլդ»*

Մենք խոստացել էինք փոքր ինչ երկար խոսել Չարլս Դիկկենսի մասին, երբ լույս տեսնի նրա «Դավիթ Կոպպերֆիլդ» մեծ վեպի հայերեն թարգմանությունը: Վեպն արդեն լույս է տեսել, և մենք ուզում ենք մեր խոստումը կատարել:

Համաշխարհային ընթերցող դասի ուշադրությունը գրաված մեծ բանաստեղծների շարքում Դիկկենսը լավագույն տեղերից մեկն ունի գրաված: Նրա երկերը բազմաթիվ ընթերցողներ ունին թե իր հայրենի Անգլիայում և թե Ամերիկայում ու մյուս քաղաքակիրթ երկրներում: Ռուս հասարակությունը նույնպես սիրով է կարդում նրա գրվածները. նոր էր, որ լույս տեսավ նրա գրվածների թարգմանությունը տասը մեծադիր հատորով:

Ի՞նչն է պատճառը, որ նա այդպես հանրածանոթ գրող է. ինչո՞ւ հազարավոր մարդիկ օրվա աշխատանքներից հետո հանգստանում են նրա վեպերը կարդալով. ի՞նչն է պատճառը, որ նրա երկերը ամեն տեղ սիրելի են, ի՞նչ կա այդ մարդու մեջ, որ հազարավոր սրտեր մագնիսի պես իրան է քաշում: Անսովոր տաղանդը. կասեն մեզ: Այդ դեռ բավական չէ. կասենք մենք: Բանը միայն տաղանդը չէ. և ոչ իսկ տաղանդի մեծությունը: Մի՞թե քիչ գրողներ կան, որոնք մեծ տաղանդ ունեն, բայց այդպես սիրելի չեն: Խնդիրը **տաղանդի հատկությունն է**. դրանով կարելի է բացատրել այնպիսի երևույթներ, ինչպես նույն չափի տաղանդ ունեցող, բայց ոչ նույն չափ ազդեցության տեր գրողների վիճակը ընթերցողներ ունենալու և նրանց վրա ազդելու կողմից:

Դիկկենսը ամենից առաջ **խիստ զգայուն** գրող է. նրա գրվածները կարդալիս ձեր ջղերը չեն կարող հանգիստ մնալ. ձեր հոգին փոխում է իր դրությունը նրա երկի էջերը թերթելու հետ. նա տաղանդավոր ջութակահար է, որ նվագում է ձեր ջղերի վրա իր ցանկացած եղանակները:

Հազիվ թե լինի մի մարդ, որ կարողանա առանց լացի ու ծիծաղի, ժպտի ու արցունքի նրա գրվածները կարդալ: Կախարդի մման առաջին երեսից իսկ նա ձեզ իր ձեռն է առնում, և դուք ապրում եք նրա հերոսների հետ, հետաքրքրվում նրանց վիճակով՝ կարծես ձեր բարեկամները լինեն, ցավում եք նրանց վրա, բարկանում, հուզվում: «Նրա հաջողության կեսը,

ասում է Տեն,- կարելի է նրա զգայուն լինելու հետևանքը համարել»¹:

Բայց զգայուն լինելն էլ ինքնըստինքյան արժանիք չունի, եթե առանձին առնենք. այստեղ ևս գնահատելի է այդ զգայնության ուր ուղղված լինելը: Բնորոշել նրա *զգացմունքների ուղղությունը* նշանակում է բնորոշել նրա ամբողջ գործունեության ուղղությունը: Վերոհիշյալ վեպում Դավիթ Կոպպերֆիլդենց աղախին Պեգոտտին ասում է իր պարոնին նրա հանգուցյալ հոր խոսքերը, որ լսել է Կոպպերֆիլդի մորից մահվան մահճում. «...սիրող սիրտը ավելի գնահատելի է և ուժ ու զորություն ունի, քան խելքը և ուսումը»: Այս խոսքերը շատ բնորոշ են Դիկկենսի համար. նա նույնպես գնահատում է սիրող սիրտը ավելի, քան ուսումն ու խելքը: Այս վեպում գործող անձերի մեծագույն մասը, այն մասը, որի կողմն է հեղինակի համակրությունը և որոնց ձեզ համակրել է տալիս, բոլորն էլ ավելի սիրող սրտի տեր են, քան խելքի և ուսման: Դորան, Ագնեսսան, Կոպպերֆիլդի տատը, ինքը՝ Կոպպերֆիլդը և այլն, բոլորն էլ այդ տեսակ մարդիկ են: Նրա մյուս վեպերն էլ թերթելիս դուք կնկատեք նույնը. առաջին գծի վրա միշտ սիրող սրտի տեր մարդիկ են. հեղինակը նրանց է սիրում և համակրում: Բայց հակառակ տիպի մարդկանց, այսպես ասած ուղեղային մարդկանց, նա ատելով ատում է. և այդպիսի մարդիկ նրա գրվածներում միշտ վատ են, անսիրտ, չոր, պակասությունների և արատների տեր: Դուք պարզ նկատում եք հեղինակի զգվածքը, բարկությունը, կծու ծաղրը դեպի այդ անձերը:

Հայտնի է, որ ժողովուրդը ավելի անմիջական զգացմունքով է ապրում, քան խելքով. այս է պատճառը, որ Դիկկենսի համակրանքները ուղղված են դեպի ժողովրդի զավակները: Նա սիրով և համակրանքով է մայում ժողովրդի վրա, դուրս է հանում նրա միջից առաքինի և պատվական մարդիկ, նրանց շրջանում ցույց է տալիս հազվագյուտ ջերմ սեր, կատարյալ անձնագոհություն, բուռն զգացմունքներ, ներողամտություն, անմիջական գործնական խելք և հայտնի տեսակետով չնախապաշարված դատողություն: Նրանց դնում է հարաբերության մեջ բարձր դասի, լեդիների և «պարոնների» հետ և ապտակում վերջինների նեղամտությունը, անձուկ զգացմունքները, ծիծաղելի հպարտությունը, չոր ինքնասիրությունը, նախապաշարված դատողությունները և այլն: Կարդացեք ԻԱ գլուխը՝ պ. Պեգոտտու և տիկ. Ստիրֆորսի խոսակցությունը. տեսեք, թե ինչպես ծաղրի է հանում այդ մեծամիտ կնոջ, նրա մեծամտությունը՝ թե ինքը ռամիկ չէ: Դիկկենսի վեպերում հազիվ պատահեք վերին շրջանից առած մի անձնավորություն, որ ընդունակ լիներ Պեգոտտու չափ անձնագոհ լինելու.

¹ Тен, Ист. новейшей Английской литературы., т. 27:

* Թիֆլիս, 1897, 370 էջ:

կարծեք հեղինակն ուզում է ասել. «խոսք չունեն, դուք գիտուն եք, գուցե զարգացած, բայց հազիվ թե պ. Պեգոտտու չափ անձնագոհ լինեք և սիրող սիրտ ունենաք»: Երկրորդ գիծը, որ համակրողների և նույնիսկ երկրպագուների մի մեծ շրջան է ստեղծում Դիկկենսի համար, այդ հասարակ ժողովրդին սիրելն ու համակրելն է:

Բոլոր թշվառները, կյանքի խորթ որդիները, աղքատներն ու դժբախտները, հալածվածներն ու անօգնականները, դրանց հետ էլ մանուկները, որպես անպաշտպան արարածներ, Դիկկենսի սիրելիներն են. սիրով է կանգ առնում նրանց վիճակը նկարագրելու, նրանց թշվառություններն ու նեղությունները ցույց տալու. համակրանք և սեր է զարթեցնում ձեր մեջ դեպի այդ խեղճերը: Այս կողմից Դիկկենսին կարելի է անվանել թշվառների բարեկամ. իր գրվածների մեջ նա շատ անգամ է վեպի ընթացքը թողել և ջերմ էջեր նվիրել իր թշվառ սիրելիներին:

Ազնեսսան՝ Կոպպերֆիլդի նշանածը, ասում է նրան. «Չիշեցեք, որ իմ հույսս անկեղծ սիրո և ճշմարտության վրա, անդրդվելի և հաստատուն է»: Այս խոսքերը նույնպես շատ բնորոշ են Դիկկենսի համար. նրա հույսն էլ «անկեղծ սիրո և ճշմարտության վրա անդրդվելի է». նրա բոլոր վեպերը տոգորված են այդ հավատով. նրան նայած՝ կյանքում երբեք կեղծ սերն ու սուտը չեն հաղթում, նա չի տեսնում այդ. ընդհակառակը բոլոր չարերը պատժվում են, բարիները երջանկանում. բարի մարդիկ, ճշմարտասեր և անկեղծ սիրո ընդունակ մարդիկ նրա վեպերում, նույնիսկ աղքատության ճանկերում, երջանիկ են, լավ են, հոգեկան հանգստություն ունեն. մինչդեռ հակառակ տիպարի մարդիկ դաժան են, անհանգիստ խիղճ ունեն, դժբախտ են: Այս վեպում կեղծավոր, չոր ու խաբեբա Գիպը վերջը պատժվում է. իսկ Ազնեսսայի անկեղծ սերն ու ճշմարտությունը հաղթում են ամեն արգելք:

Մի այլ աչքի ընկնող հատկությունն էլ այն է, որ նա սիրահար է փոխադարձ սիրո վրա հիմնված ընտանեկան կյանքի: Ի՞նչ հիացմունքով է նկարագրում նա իր բոլոր վեպերում այդ կյանքը, ի՞նչ բանաստեղծական կահավորություն, ի՞նչ լույս ու ջերմություն. մանավանդ երբ ջահել ամուսինների կյանքն է պատկերացնում: Ընտանեկան կյանքի այդ պաշտամունքը, որ հատուկ է Դիկկենսին, Տենը բացատրում է այն հանգամանքով, որ Դիկկենսը մի տեսակ հայելի է, որ ցուլացնում է Անգլիական հասարակաց կարծիքը առանց քննադատելու նրան, իսկ անգլիացիները մոլեռանդությամբ պաշտում են ընտանիքի գաղափարը և խիստ հալածանքի մատնում այն անձանց, որոնք հանդգնում են ձեռք բարձրացնել այդ հիմնարկության վրա:

Դիկկենսը մասնագետ է քաղաքի կյանքի. բարձր շրջաններից սկսած՝ դրամատիրական դասով անցած մինչև հետին բանվորն ու աղքատը. առաքինի մարդուց սկսած մինչև գողն ու արբեցողը: Արտասահմանում նա հազիվ էր կարողանում ապրել. նրան հարկավոր էր Լոնդոնն իր փողոցներով և բնակիչներով: Նա ամենաչնչին մանրամասերն անգամ, որ վերաբերում է քաղաքի կյանքին, գիտե, ուսումնասիրել է, դիտել է և կարողանում է զարմանալի հավատարմությամբ տալ ընթերցողներին: Այստեղ մեծ դեր է խաղում Դիկկենսի երևակայությունը. այդ երևակայությունը անսովոր ուժ ունի և թարմություն. գրում է, և չեք զգում թե գրում է. կարծեք նկարում է. կարդում եք՝ կարծեք նկար եք դիտում:

Ոչ մի բան բնության մեջ նրա համար մեռած չէ. ամեն բան կյանք ունի և զգալ գիտե: Շրջապատը միշտ փոխվում է նայած հերոսի տրամադրության: Ուրախ է նա, ուրախ է և նրա շունը, պատահող մարդը, փողոցի կյանքը, ծառերը, երկինքը, օրը. տխուր է՝ տխուր են և նրանք: Բոլոր նկարագրությունները ներշնչված են զգացմունքով, որ անմիջապես ձեզ է անցնում. առանց զգացմունքով մկրտված լինելու, նա ոչ մի նկարագրություն չունի, ինչ հասարակ նյութ էլ լինի նկարագրության բովանդակությունը. նա սիրում է նկարագրած իրը, երևույթը. և ոչ լուկ հետաքրքրվում. զգացմունքով է կապված նրանց հետ և ոչ խելքով: Կարդացեք «Կոպպերֆիլդում» փոթորկի նկարագրությունը. տարերքի կույր խաղը, կատաղի հորձանքները, մռայլ երկինքը և անհանգիստ ու փրփրած ջրերը. և այդ շփոթի մեջ խորտակվող նավը դիտեցեք, կայմին ապավինած չորս մարդկանց, որոնք անհավասար կռվի են մտած. նայեցեք երեքի խորտակվելուն, մեկի հուսահատ ջանքերին, ափին խոնաված ամբոխին, նրա սպասողական դրության ու անզորության, օգնություն հասնողի վճռականության, ճիգերին. և նկատեք, որ հակառակորդը իր հակառակորդին գնում է փրկելու վերահաս մահից. ու երկուսին էլ կլանում է ազաի տարերքը. ի՞նչ խորհրդավոր թույլ, ի՞նչ վեհ դրություն:

Դիկկենսը հանգիստ մնալ չի սիրում. այնքան հարուստ են նրա զգացմունքները, որ պահել չի կարողանում: Նրա համար իր հերոսները ոչ այնքան գիտեմալու նյութ են, որքան հարվածի և սրտակցության: Նրա հերոսները նրա բարեկամներն են կամ թշնամիները. ոմանց սիրում է, ոմանց ծաղրում ու կշտամբում, ոմանց զովաբանում:

Նրա մասնավոր մամակներից երևում է, որ ստեղծագործելու խաղաղ գիշերները իր առանձնարանում անց էր կացնում ծիծաղով կամ լացով իր հերոսների վրա. այնպես է խոսում իր հերոսների մասին, կարծես իր մոտ բարեկամները լինեն, կարծես կենդանի մարդիկ են և ոչ ստեղծա-

գործություններ: Եվ այդ զգացական վերաբերմունքը նրա ամեն վեպում երևում է. կարդացեք և կզգաք նրա խանդաղատանքը դեպի Դորան, հարգանքն ու սերը դեպի Ագնեսսան, որդիական հնազանդությունը դեպի տատը և այլն, և այլն:

Դիկկենսի տաղանդի հատկությունները երկուսն են. ծաղր ու լաց, ծիծաղ և հուժոր. նրա հուժորը շատ նուրբ է, թափանցիկ և անմիջապես ազդող. կարելի է այդ նկատել հեղինակի վերաբերմունքից դեպի Տրադ-դելսը. լացը՝ սիրտ հուզող և խուլ հեկեկանք հիշեցնող. կարդացեք Դորայի մահը: Նրա ծաղրը կծու է, տեղ տեղ դաժան. թերթեցեք այն գլուխը, որտեղ խոսում են Ստիրֆորսի մայրն ու պ. Պեգոտտին: Տաղանդի այս երկու հատկությունները իրենց հպատակության տակ ունեն զանազան կոչումի ու դիրքի, սեռի ու հասակի մեծ բազմություն. այդ հատկություններն են, որ սիրել կամ ատել է տալիս Դիկկենսի հերոսներին:

Գեղարվեստական տեսակետից Դիկկենսի գրվածների ամենախոշոր պակասությունը գործողության և հոգեբանական վերլուծության բացակայությունն է: «Կոպպերֆիլդ» օրինակ, ինչպես ընթերցողը կտեսնի, գործողություն չկա, որովհետև չկա կրքի զարգացում: Իսկապես կրքի զարգացումը վեպի ամենազլխավոր արժանիքն է. չկա նա, վեպը կորցնում է իր ամբողջությունը և դառնում է դեմքերի մի հավաքածու, առանց հոգեբանական կապակցության:

Մենք չենք տեսնում Դիկկենսի վեպերում հերոսի հոգին անդամահատած, վերլուծած. վարմունքներ կան, բայց պատճառաբանություն, հոգեբանական պատճառաբանություններ չկան: Հերոսը կոխում է վեպի շենքը և դուք մինչև այնտեղից դուրս գաք, նույնն էք տեսնում. կյանքի պայմանները կարծեք նշանակություն չունեն հերոսի համար. բարի մարդը մինչև վերջն էլ բարի է մնում, չարը՝ չար: Կոպպերֆիլդը, օրինակ, միշտ բարի է, զգայուն, հնազանդ, սիրող սրտի տեր, քնքույշ. Դորան միշտ բարի, թրթռուն, կենսալի, մի քիչ թեթև, ազնիվ սրտի տեր. Ագնեսսան միշտ չափավոր, հանդարտ, հանգիստ, ծանր. և այլն: (Մենք օրինակներ դիտմամբ «Կոպպերֆիլդ»-ից ենք բերում, ավելի մատչելի լինելու համար): Այդ մեծ պակասությունը, մեր կարծիքով, հետևանք է այն հանգամանքի, որ Դիկկենսը բարոյախոս՝ մորալիստ է. իսկ մորալիստները չեն ուզում հասկանալ, նրանք պահանջում են, նրանք ասում են, թե ինչ պիտի անես, առանց նայելու, թե կարող ես անել: Մենք կանգ չենք առնում Դիկկենսի պակասությունների վրա. մենք կամենում էինք նրան բնորոշել միայն: Մի քանի նկատողություն էլ վեպի մասին:

Վեպը կենսագրական է. այդտեղ Դիկկենսը ինքնակենսագրություն է

գրում: Նա էլ աղքատ է եղել, ուշ է դպրոց գնացել, իր բարեկամ մի վաքս շինողի աշակերտել է, հարուստ երևակայություն է ունեցել և պատմելու շնորհք. գրական գործունեություն է սկսել, սղագիր է եղել. կամաց կամաց գործերը հաջող են գնացել: Երիտասարդ ժամանակ նա սիրահարվում է մի աղջկա, բայց այդ սերը Դիկկենսի համար անհաջող վախճան է ունենում՝ աղջիկը մի ուրիշի է առնում. այդ աղջկան է նա իր վեպում գրել Դորա անունով: Դիկկենսի հայրը անհաշիվ ապրող մարդ է եղել, պարտքերի համար բանտ է նստել, ինչպես միստր Միկոբերը. այդ անձնավորությունը նրա հայրն է: Բայց իհարկե ամեն բան այնպես չի եղել, ինչպես վեպի մեջ է պատմած. հայտնի ներդաշնակություն է պահպանված իրականության և ստեղծագործության միջև: Այս վեպը ըստ ամենայնի համարվում է Դիկկենսի ամենահաջող գործը: Անցնենք թարգմանության:

Վեպն ընդհանրապես լավ է կրճատած: Մեր պայմանները ավելին թույլ չեն տալիս անել. նշանավոր վիպասանների կրճատ երկերն ունենալն էլ կարող է մեզ բավականացնել, մի պայմանով, որ կրճատումը լավ լինի արած: Այս վեպի մեջ բովանդակության էական մասը և գործող անձերի բնավորության խոշոր գծերը պահպանված են: Մի երկու տեղ երևում է կարկատած լինելը, ինչպես 276 էջում, ուր պատմությունն ընդհատվում է և փոխվում: Բայց նայնպես այնքան արժանիքներ ունի նույնիսկ իր այժմյան դրությամբ, որ մենք առանց վարանելու խորհուրդ ենք տալիս մեր ընթերցող դասին անպատճառ ձեռք բերել այդ գիրքը:

Գալով թարգմանության՝ կասենք. եթե մեր բոլոր թարգմանիչները այսպես թարգմանեին իրանց հանձնած վեպերը, մենք ավելին առ այժմ չէինք պահանջիլ: Վեպի լեզուն կարող մարդու ձեռքում է եղել. կարդալիս զգում եք, որ հայերեն եք կարդում: Լեզվից հետո երկրորդ զլխավոր արժանիքը հեղինակի ոգին պահպանելն է. գոնե այդ ոգու մի կողմը շատ լավ է արտահայտած, այնպես որ զանազանություն չկա ռուսերեն թարգմանության և հայերենի արած տպավորության միջև: Թարգմանիչը լավ է արտահայտել Դիկկենսի լացի ջիղը. թույլ է արտահայտած միայն նրա հուժորն ու ծաղրը. դրա պատճառը մենք այն ենք համարում, որ թարգմանչի ոգին այդ տարրը այնպիսի ուժեղ չափով չունի: Նմանը միայն կարող է նմանին հասկանալ. ամենքին հայտնի է այն ասվածքը, թե՛ Շեքսպիրին թարգմանողը պիտի Շեքսպիր լինի. այդ միտքը շատ ճիշտ է և ամեն դեպքում էլ պահպանում է իր ուժը: Թարգմանել չի նշանակում մի լեզվի խոսքերը մյուս լեզվի խոսքերին վերածել, այլ թափանցել հեղինակի հոգու մեջ և արտահայտել նրա զգացածը. իսկ այսպես կարող է անել միայն նա, ում հոգին նույն տարրերն ունի, ինչ որ թարգ-

մանելիք գրքի հեղինակի հոգին: Եթե այդ տարրերը կան, ապա թարգմանությունը չի կարելի ջոկել բնագրից. այդ դեպքում փոքրիկ զանազանությունը նույնիսկ իր կնիքը դնում է թարգմանության վրա: Լուրջ մարդը, որ չունի ծաղրի ու սրամտության երակ, անկարող է Մուլիերի կատակերգությունը հարկ եղած չափով թարգմանել, ինչպես ծանծաղ հոգու տեր բանաստեղծը երբեք չի կարող թարգմանելիս արտահայտել Բայրոնի հսկայական ուժն ու թափը: Ուժեղ ծաղրի ընդունակ չլինելն է, որ արգելք է եղել թարգմանչին Դիկկենսի հոգու երկրորդ կողմն էլ լավ արտահայտել: Եթե դուք ծանոթ եք որևէ երկրի բնագրի հետ, այն ժամանակ թարգմանության նայելով կարելի է ճանաչել թարգմանչի ոգին, նրա հատկություններն ու նրանց ուժը: Խորհուրդ ենք տալիս հրատարակչական ընկերության առաջնորդվել վերը գրած սկզբունքով. դրանից կշահեր թե ընթերցողը, թե թարգմանությունը և թե ընկերությունը:

Լեզուն ընդհանուր առմամբ շատ լավ է. կան մի քանի հին ձևի բառեր և վատ կազմած նախադասություններ: Ձանազան ձևեր՝ մի տեղ, օրինակ, գործ է ածված *մարդիկներին*, մի այլ տեղ՝ *մարդկանքը*: Շատ տեղեր կան այսպիսի ձևեր՝ մի շարժեր, որ թարգմանչի լեզվին հատուկ չէ. նա կասեր՝ մի շարժի. մի քանի տեղ այսպիսի ձև՝ *արարքին համար*, որ թարգմանչի լեզվին հատուկ չէ, եկամուտ է. գործք՝ փոխանակ *գործ, նույն և մի՝* փոխանակ *միևնույն*, բնակություն՝ բնակարանի մտքով: Պատահում են այսպիսի արտահայտություններ՝ խիստ սաստիկ վախեցա. արտասուքը վազեցին. ինձ համար վախենալ. այդ բանի մասին զարմացա: Բարդ խոսքեր կան ա շաղկապով, որոնք դյուրահնչյուն չեն. *ամենատեսակ, նմանապիսի, զրուցաընկեր*. դասել-ասում են՝ դարսել: Շփոթված են Տրադդելս և Ստիրֆորս անունները, այնպես վատ, որ ընթերցողը շվարում մնում է: Այսպիսի արտահայտություններ կան՝ ինչ բանի ես, ով դու իմ սրտի ուրախությունը... (անորոշ պիտի դնել՝ ուրախություն) - Դոգյակս, նա ամենապատվական մարդ է: Այսպիսի դեպքերում մեր լեզուն, շատ իրավացի կերպով, գերադրական աստիճանի հետ անորոշ չի գործածում գոյականը, այլ՝ որոշ. պիտի լիներ՝ ամենապատվական մարդն է. և իսկապես ամենապատվական միայն մեկը կարող է լինել, կամ կարելի էր ասել՝ շատ պատվական մարդ է:

Սակայն այսպիսի պակասություններ, որոնք ահագին զիրք թարգմանելիս միշտ կարող են պատահել, երբեք չեն կարող զգել այսպիսի թարգմանության արժանիքը, որը կա ու կմնա մեր գրականության մեջ իբր մի լավ հայերեն թարգմանություն:

Սուրճ, 1897, № 11-12, էջ 1639-1643

Անատոլ Ֆրանս, «Երեք դար ու կես հետո» (ծննդյան տոնի ֆանտազիա)*

Այս փոքրիկ գրվածքը պատկանում է ընկերական գրականության այն ճյուղին, որ անհրապույր ներկային հակադրում է հրապուրիչ ապագան: Այս կարգի գրվածներ հնում մի քանի հատ են եղած, այդպես են՝ Պլատոնի «Պետությունը», Կամպանելլայի «Արևի քաղաքը» և Մորի «Ուտոպիան»: Այնուհետև, ընկերավարական շարժման արշալույսին մի շարք հեղինակներ դուրս եկան ապագայի ծրագիրներով և ներկայի անողորմ քննադատությամբ և ապագատենչ գրականությունը դարձավ մի հաստատուն ճյուղ: Չերնիշևսկու «Ի՞նչ անենք» վեպն ու Բաֆֆու Խենթի երազը այդ ճյուղին են պատկանում: Անցյալ դարի վերջին ամենից մեծ հռչակ ստացավ Բելլամու «Հարյուր տարի հետո» գրվածքը, որ թարգմանված է նաև հայերեն:

Այս կարգի բոլոր գրվածները նկարում են իդեալական համայնակարգ. ապագայի պատկերները մեծ մասամբ ստեղծվում են հակադրության ճամփով. ժխտում են եղածը և առաջարկում հակառակն ու լավագույնը: Սրանից հետևում է, որ ապագայի հեռանկարը այնքան արժեք ունի, որքան հեղինակը լավ է ճանաչում ներկայի չարիքը: Պարզ է նույնպես, որ ամեն հեռանկար համաբույժ չի կարող համարվել, որովհետև հեղինակ հեղինակից տարբերվում է իր ըմբռնումի խորությամբ և լայնությամբ: Մեկին շատ ծանր է գալիս, օրինակ, այսօրվան քաղաքների անմաքրությունը, լուսավորության անկատարությունը, մթերքների թանձրությունը և նման բաներ. իր նկարած իդեալական քաղաքում այդ ժմենի կարգավորումն է տալիս և գոհանում դրանով: Մի ուրիշը դասակարգերի փոխադարձ հարաբերությունից է դժգոհ, աշխատանքի ստորադաս վիճակն է նրան զայրույթ պատճառում և ահա նկարում է նա մի համայնակարգ, ուր դարմանված են այդ չարիքները:

Այսպիսով գրվածքից կարելի է ճանաչել հեղինակի հակումները, արդարության և գեղեցկի զգացումի խորությունը, մարդկային բնույթի ըմբռնման կարողությունը, բարդ խնդիրներ լուծելու հնարամտությունը: Գրականության այս ճյուղը գոհացում է տալիս մարդու հիմնական հակումներից մեկին՝ ներկայի չարիքը երազով հավասարակշռել. և քանի ընկերական գիտություններն առաջ գնան և մարդիկ հասկանան հան-

* Արտատպած «Հորիզոն» լրագրից, թարգմ. Սալլիմյան, Ալեքսանդրապոլ, 1912, 30 էջ, գինը 7 Կ.:

րային կյանքի զարգացման ընթացքն ու օրենքները, այնքան ավելի պիտի հաճախեն ապագատենչ գրականութեան արդյունքները: Դրանք հասարակական վերաշինության նախագծեր են՝ վիպական ձևով: Ֆուրիեի «Ֆլանստերը» քչերին է մատչելի, մինչդեռ Բելլամու վեպը հարյուր հազար օրինակներով և տասնյակ լեզուներով խոսում է մարդկանց ներկա չարիքի և լավագույն ապագայի մասին:

Անատոլ ֆրանս, ֆրանսացի մեծամուն հեղինակը, որ նրբին արվեստագետ է, սքանչելի ոճաբան, ազնվագարմ, բայց և ընկերավար հակումներով, մեզ տալիս է ֆրանսայի պատկերը «Երեք դար ու կես հետո»: Քուն է մտնում մյուս օրը ժամը 9-ին զարթնելու որոշումով, որ գնա մի հրավերի, ուր առաջուց գիտե, թե ինչ խոսակցություններ պիտի լինին՝ անիմաստ ու ծանծրալի, և ահա երազում տեսնում է ապագա Փարիզը ու իր շրջակայքը:

Ամեն ինչ փոխված է. նախ լեզուն, որ դժվար է հասկացվում: Բոլոր տները մի հարկանի են, ծառերի մեջ կորած, կտուրներին հանգչելու հարմարություններով և պատերին նկարներ ու քանդակներ: Օդը լիքն է օդաչու գործիքներով: Կին ու տղամարդ բանվորների նման են և հագնված են միատեսակ. կանանց մարմինն անգամ փոքր ինչ փոխվել է. ոտքերը երկար են և կոնքը նեղացել է:

Հեղինակն ուզում է մտնել մի շենք, բայց նրանից տոմս են պահանջում, որ կարելի է միմիայն աշխատանքով ձեռք բերել: Պատահում է նրան «հացի փուռի լիազորը», որ նրան տանում է աշխատանքի: Հսկայական փուռը, որ օրական 80,000 հաց է թխում և որի համար պետք է գալիս հինգ-վեց մարդու աշխատանք՝ լիազորի կարծիքով «մի հին հացարան է» և չափից դուրս մարդ է զբաղեցնում»: Մինչև ժամը 5-ն աշխատելով՝ հեղինակը մի տոմս է ստանում կերակրի և բնակարանի համար:

Որովհետև աշխատավորն ազատ է, թե հանրային ճաշարանում ընթրելու, թե իր տանը և թե բարեկամի մոտ, պատմողն ընդունում է լիազորի հրավերը և գնում նրա տուն, որ աշխատանոցից «հեռու չէ, 510 կիլոմետր /վերստ...»... Օդաչու նավից նա դիտում է դաշտերը, ուր ցրված են բազմաթիվ տներ. կանոնավորված է ոռոգումը: «Փուռի» լիազորը բացատրություններ է տալիս. քիմիկոսները դարձել են երկրագործ, ուստի հողը հինգ անգամ աւելի արդյունք է բերում: Վերացել է առևտուրը, զորքն ու դատարանները, ուստի վերացել են և քաղաքները. հին և նշանավոր շենքերը մնում են, իբրև թանգարան կամ գրադարան: Բայց դեռ կան սահմաններ, որ պաշտպանվում են էլեքտրական մարտկոցներով՝ մի զինվորի ղեկավարությամբ: Բանից երևում է, որ հացթուխը հինգ ժամ

է միայն այդ գործով պարապում. այնուհետև նա վիճակագիր է: Պատմության տեղն այժմ վիճակագրությունն է բռնել, ասում է նա:

Նստում են ընթրելու. կերակուրները փոխված են. գարեջուրը ոգի չունի: Ջրոյցը դառնում է ընտանեկան կազմի շուրջը: Սեղանակիցներից մեկը, մի պատանի, իրոք մի կին՝ բացատրություններ է տալիս: «Մենք կարծում ենք, որ մարդկային էակի ճակատագիրը չի կարող և չպիտի կախված լինի մի խոսքից»: «Իսկապես ոչ տղամարդը, ոչ կինը մի պարտականություն հանձն չեն առնում»: Բայց շատ անգամ նրանք հավատարիմ են մնում ամբողջ կյանքում: Մի ժամանակ ասում էին, որ կինը տղամարդուն է պատկանում: Մենք կարծում ենք, ասում է նա, «որ մարդկային էակը ինքն իրեն է միայն պատկանում, ոչ թե ուրիշի»: Երեխաներին դարձյալ մայրերն են խնամում. բայց ոչ ամեն կին մայր է դառնում: «Այն ժամանակից, երբ կանայք սկսեցին զործել ու մտածել նույն ձևով ինչպես տղամարդիկ՝ երևացին բազմաթիվ կանայք, որոնք իրենց տեսքով բոլորովին նման են երիտասարդներին». գուցե գա մի օր, որ ամսեռ էակներ ստեղծվին:

Այնուհետև սեղանակից կանանց մեկի ուղեկցությամբ պատմողը գնում է իր բնակարանը. ճամբին պարզվում է, որ զգացումը երեք դար ու կես հետո էլ մնում է նույն մղիչ ուժը, որ բնազդը շարունակում է բանականությունից ուժեղ լինել, իսկ սեռերի հարաբերությունները «հաճախ տանելի են, հազվագյուտ դեպքերում՝ հմայիչ են, երբեմն՝ սարսափելի»: Պատմողն արթնանում է, երբ ուղեկցուհու ձեռքը բռնած տանում էր շուրթերին...

Մեր հաշվետվությունից կարելի է տեսնել, որ Ա. ֆրանսի գրվածքը մի ուրվագիծ է իսկապես, ուր նկատողության են առնված ժամանակակից կյանքի մի քանի ախտավոր կողմերը միայն: Փարիզաբնակ քաղքենին է, որ երազում է ապագայի մասին. մի մադդ, որ զգված է զորանոցի նման մեծ տներից, մտավոր և մարմնական աշխատանքի անջատումից, ժամանակակից կանանց և ընտանեկան կազմի այլանդակություններից և արդյունաբերության ու սպառման անիշխանությունից:

Թեև թարգմանությունը կատարված է անհարթ լեզվով, բայց այս և սրա նման գրքերի լայն տարածումը չափազանց օգտակար է. նրանք կարող են բանալ ընթերցողի աչքը մեր ընկերական կարգի թերությունների վրա և վարակել վերակազմության տենչով շատերին, որոնք խուլ դժգոհություն ունեն աշխարհից, բայց պարզորեն չեն գիտակցում իրենց հակումներն ու ժամանակակից կյանքի զարգացման միտումները:

Կոպպե Ֆրանսուա, «Հանրիետ»*

Ֆր. Կոպպեն ներկայումս Ֆրանսիայում այն գրողներից մեկն է, որոնց գործերը թե սիրում են, թե կարդում: Նա ավելի հայտնի է իր չափական գրվածներով, քան վեպիկներով ու պատկերներով. և հենց չափականներն ավելի գերադասվում են նրա գործերից, քան արծակները: Նա գրում է նաև բեմի համար. ունի քերթվածներ, որոնք կարդացվում են բեմից և միշտ տպավորություն անում. ունի ոտանավորներ նաև այլևայլ հանդիսավոր դեպքերի առիթով: Գրականության մեջ նա երևաց 1866 թ. բանաստեղծությունների մի փունջով, որ մամուլը սիրով ընդունեց ու գովեց: Սակայն նրա հռչակը նկատելի չափեր առավ ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ և հետո: 1884 թ. սկսած նա ֆրանսիական ակադեմիայի անդամ է: Նրա գործերում երևում է համակրանք դեպի հասարակ դասը. բանաստեղծությունները երգում են զրկված մարդուն, նրա կյանքը, խինդն ու լացը: Եվ հենց «Հանրիետը» այդ տեսակ գրվածք է. նրա հերոսուհին մի բանվոր աղջիկ է:

Մենք ծանոթ չենք Կոպպեի չափական գրվածների հետ. ինչ որ ասելու ենք նրա մասին, գլխավորապես «Հանրիետի» և մեր պարբերական հրատարակությունների մեջ լույս տեսած պատկերների վրա է հիմնված: Այդ գողտրիկ կտորները կարդալով մենք այն կարծիքը կազմեցինք, որ Կոպպեն մեծ տաղանդ չէ, նույնիսկ խոշոր չէ: Նա այն գրողներից է, որոնք ծնվում են իրանց ժամանակի համար ու նրա հետ էլ կորչում, որոնք նոր աշխարհ չեն գտնում զեղարվեստի պետության սահմանները լայնելու համար, որոնք շարունակողներ են և ոչ սկսողներ կամ ձևակերպողներ և որոնք կարդացվում են սիրով ու անծանձրությամբ: Նրա տաղանդը մեզ վրա այն տպավորությունն է անում, ինչ մի խաղաղ, ժպտուն, զով ու շոյող զարման գիշեր ժայռերի փոքր ինչ հեշտական շունչով և թավ կանաչի գաղջ սոսավյունով. ինչ անում է մի սովորական ու դուրեկան զարման երեկո: Ռուսահայ ընթերցողի համար այս վեպիկի չորս անձերից երկուսը նորություն չեն երևա (չնչին տարբերություն բնավորության հիմնական գծերում), եթե նա ծանոթ է Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վեպին. հիշո՞ւմ եք Կոլյա Կրաստոկինի մորը և գիմնազի ուսուցչին, որ սիրում է նրան ճիշտ գնդապետ Ռիսի նման...-

* Թիֆլիս, 1899, 148 էջ: Սա «Հանրիետի» երկրորդ թարգմանությունն է. առաջին արել է Ռոտանիկ «Նոր - Դարում» 1890, №№ 176-186 «Հանրիկե» անունով: Թե «Մուրճում» և թե «Նոր - Դարում» բավականին բան ունինք Կոպպեի գործերից թարգմանած. տաս-տասներկու կտոր կարծ ու սիրում բաներ, որ կարելի էր հավաքել, սրբագրել և մի սիրուն գրքույկ շինել:

Բայց պատմենք բովանդակությունը.

Տիկին դը - Վինյին նոր թաղել է իր ցուփ ու անառակ, անասուն ամուսնուն, որի հուղարկավորության ի պաշտոնե եկել է Պարիզի բարձր դասը: Նա վճռել է առանձնացած կյանք վարել իր միակ որդու՝ փոքրիկ Արմանդի հետ. նա մերժել է երկրորդ անգամ ամուսնանալու լուռ առաջարկը, որ արել էր իրան այնքան հավատարիմ ու վախով սիրող դը-Ռիս գնդապետը: Նա իր կյանքն ու հույսերը կապում է այդ աճող մանկան. այդ միակ զավակն է եղել նրա մխիթարությունը ամուսնու կենդանության ժամանակ և է այժմ: Նրա սերը բուռն է և չափն անց է կենում. նա նախանձում է նույնիսկ իր որդու ընկերներին, առանց նրան՝ ուղղակի անկարող է ապրել: Տիկինը որդու սիրուն մերժում է դը-Ռիսի երկրորդ առաջարկն էլ:

Արմանդն արդեն քսան տարեկան է: Մոր ջանքն է եղել նրան անարատ պահել, մինչև կարող լինի մի լավ աղջկա հետ պսակել: Եվ Արմանդն իսկապես մաքուր է, անարատ, անմեղ, համեստ. ընկերները նրան «օրիորդ» են ասում, մարդիկ, որ մի քանի սիրուհի են փոխել: Արմանդի սերը լիովին դրված է իր միակ հավատարիմ ու անձնվեր ընկերոջը – մորը, որի արած զոհաբերության մեծությունը նա զգում է և աշխատում է երախտագետ լինել: Բայց Պարիզը փորձանքներից ազատ չէ...

Տիկնոջ տունը կար անելու է գալիս մի սիրուն, թարմ, քնքույշ, ուշիմ, համեստ և աշխատող աղջիկ՝ Հանրիետը: Տարիները հարկ են պահանջում, և Արմանդը անսովոր հուզումներ ու հույզեր ունի. երբ անցնում է այդ աղջկա մոտից՝ «մի ուրիշ տեսակ» է դառնում: Բայց երկուսն էլ շատ են անփորձ ու համեստ. նրանք միայն կարմրում են ու շոյանք զգում իրար տեսնելուց, թեև իրար չեն նայում: Նրանք ապրում են այն թույլների համար, երբ իրար կտեսնեն. բայց իրար հետ չեն խոսում: Աղջիկն իր գործը վերջացնում է Տիկնոջ մոտ, մի ուրիշ տեղ գործ գտնում. այսպես էլ վերջանում է երկուսի ծանոթության առաջին շրջանը:

Բայց պատահումները Կուպիդոնի բարեկամն է: Մի օր Արմանդը հանդիպում է Հանրիետին հիվանդանոցից վերադառնալիս, ուր նա գնացել էր մորաքրոջը տեսնելու: Արմանդը կանգնում խոսում է, միասին գնում են ճաշելու, զբոսանքի, և նույն երեկոյան Հանրիետը դառնում է Արմանդի **թարեկամուհին**: Հանրիետի մորաքրոջը չվշտացնելու համար Արմանդը մի սենյակ է վարձում, ուր իրար հանդիպում է քահել զույգը: Այդ կապը վաճառք չէ, երկուսն էլ իրար սիրում են ջերմ ու անկեղծ. նրանք մաքուր բնավորություններ են:

Սակայն փոթորիկը շուտ է վրա հասնում: Արմանդի մայրը մի օր

բռնում է Հանրիետի նամակը և հանդիմանում որդուն: Նախանձոտ ու բուռն սիրող կինը, որ իր բախտը գոհել էր որդուն փոխադարձ սիրո հուսով, տեսնում է այն սերը, որ իրանը պիտի լիներ, մի ինչ որ փողոցի աղջկա սոված. նրա հետ մրցելու է դուրս եկել իր բանվորուհին: Եվ ահա ամեն կարելի միջոց գործադրում է կորսիկացի բորբոք արյան տեր կինը երկուսի կապը խզելու: Սակայն զուր... Նրա անհանգիստ և համարյա ամեն երեկո կրկնվող հարցին «դու գնալու ես» որդին շատ հաճախ է «այո՛» պատասխանում: Մոր վերաբերմունքը սառչում է, պաշտոնական դառնում համարյա. ոչ մի օգուտ չի տալիս և սովորականից երկար ամառանոցում մնալը. նա դարձյալ սիրում է Հանրիետին, նա չի մոռացել...

Հանրիետի մոտից գիշերով դառնալիս Արմանդը հիվանդացել է տիֆով. սոսկալի է մոր դրությունը. նա հանգիստ չունի: Հանգիստ չունի և մի այլ նորատի կին, որ ամեն օր անհանգստությամբ գալիս է, երկար ճանապարհ կտրելով՝ բարի դժնապանուհուց տեղեկանալու սիրած մարդու վիճակի մասին: Արմանդը մեռնում է. աներևակայելի է մոր վիշտը. մենակ, հուսախաբ, տխուր, միակ որդուց ու մխիթարությունից զուրկ: Պակաս չէ և մյուս կնոջ՝ Հանրիետի դրությունը. սիրած տղամարդու մահվան վրա ավելացրեք մորաքրոջ մահվան վիշտը և օրվա ապրուստի անբաժան հոգսը:

Անցնում է մի տարի: Մայրը առաջին անգամ գնում է որդու գերեզմանը տեսնելու. նրա աչքովն է ընկնում մի թարմ մանուշակի փունջ: Ա՛, ուրեմն նրանից առաջ մարդ է եկել. դարձյալ այդ Հանրիետը... Կորսիկուհին կատաղում է. կարծում էր, թե այդ աղջիկը Արմանդից զատ շատերին է տվել իր սերը, որ նա շուտով կմոռանա իր տոհմիկ սիրելիների: Բարկացած թոպեին ուզում է դեն ձգել փունջը, բայց մտածում է, թե այդ սրբապղծություն կլինի սիրած որդու գերեզմանի դեն և... թողնում է: Ու փունջը տարվա եղանակների հետ փոփոխելով իր ծաղիկները շարունակ երևում է գերեզմանի վրա...

Բայց գարնանը՝ մի օր այլևս փունջ չկա. այդ փնջերը բռնում էին Տիկնոջ բախտի առաջը. նա չէր համարձակվում այդ հաստատուն սերը տեսնելով խոսք տալ Աֆրիկայի պատերազմից դարձած դը-Որիսին, որ խոնարհությամբ ուզում է նրա նեցուկը լինել վշտի օրերին: Եվ... փունջը չկա... Մի քանի շաբաթ սպասում է ստուգելու համար, չկա: Ա, ճիշտ էր ուրեմն տիկնոջ կասկածը. գարուն է և աղջիկը նոր տղամարդ է գտել: Այժմ նա ազատ է վերջին կշտամբանքից. նա ընդունում է դը-Որիսի առաջարկը. նա նորից զվարթ է և երիտասարդ: Հարսանիքի նախընթաց օրը նա դիտում է պսակի «լուրջ» գլխարկը ու երագում նոր կյանքի մա-

սին, որ նրան մի նամակ են տալիս:

Հանրիետն է. գրում է հիվանդանոցից. նա մեռել է արդեն. նա ներողություն է խնդրում իր ու Արմանդի համար. նա սոսկում է այն մտքից, թե Տիկնոջ կմտածի, որ ինքը մոռացել է Արմանդին, տեսնելով, որ փնջեր չկան որդու գերեզմանի վրա, նա գրում է, որ տիկնոջ չկասկածի իր սիրո, հավատարմության վրա: Նա խնդրում է գերեզմանատուն գնալիս ամեն կիրակի երկու սվանոց (= 4 կոպ.) մի փոքրիկ ծաղկեփունջ էլ իր կողմից դնել Արմանդի գերեզմանի վրա: Տիկնոջ արտասվում է, բայց նախանձում, տեսնելով, որ «այն աղջիկը» իրանից շատ էր սիրում Արմանդին. ու քիչ առաջ պայծառ օրը վատանում է նրա աչքին՝ պսակի գլխարկի հետ:

Հանրիետի անձով, ինչպես տեսնում եք, հեղինակը սովորում է տոհմիկ տիկնոջ բարոյական էությունը՝ նրա ինքնավստահությունը հաստատուն սիրո մեջ և հպարտանալը իր արած զոհով ու սիրո անկեղծությամբ: Ավելի մեծ զոհաբերություն է անում այդ բանվոր աղջիկը լուռ, համեստ, առանց ցուցամոլության. մինչդեռ քսան-քսանումեկ տարեկան որդի ունեցող մայրը, նրան թաղելուց հետո, դեռ կարելի է համարում ամուսնությունը, Հանրիետը մահվան մահճում իսկ Արմանդի մասին է մտածում: Դա մի հերքում է տոհմիկ տիկնոջ բանվորուհու մասին ունեցած կարծիքին. մի կարծիք, որով բանվորուհին անառակ է միայն և մոլորեցնող. որ ենթադրում է, թե անկեղծ ու հարատև, անձնվեր ու բուռն սեր միայն այն սրտերում կարող է լինել, որոնք փարթամ ու հարուստ հագուստի տակ և շքեղ բնակարաններում են բաբախում: Պարզ է, թե Կոպպեն ինչ է ուզում ասել Հանրիետի համակրելի դեմքով:

- Ռենուֆ տատի... Ձեր բնակարանից սոխի ու թռչունների վատ հոտ է գալիս, դուք մի սովորական ու ռամիկ կին էիք և Հանրիետի երեսին մոտեցրած ձեր քիթը ամբողջապես քթախոտի մեջ էր շաղախված: Այնուամենայնիվ, Ռենուֆ տատի, օրինյալ լինեք դուք, որովհետև ձեր դեղին ու մանր ծաղկավոր հնդկական բաճկոնի տակ մի այնպիսի հազվագյուտ բան կար, որ ընդհանրապես մարդիկ չէին էլ ենթադրում – մի շատ **բարի և կարեկից սիրտ**: Այս դիմումը Կոպպեն անում է Տիկնոջ աղախանին, որից Հանրիետը լուր էր ստանում Արմանդի մասին, երբ սա հիվանդ էր և որը մխիթարում ու խնամում էր խեղճ աղջկան մտնելով նրա դրությունը:

Տեսնո՞ւմ եք այս վերաբերմունքը դեպի հասարակ դասը, այդ բարի և կարեկից սրտի գնահատությունն ու ջատագովությունը, այն գինը, որ տալիս է Կոպպեն այդ սրտին առանց շլանալու արտաքին ճոխությունից ու շուքից, առանց խաբվելու պաշտոնական ցավակցություններից ու

կարեկցությունից: Ահա թե ինչու նա սիրելի պիտի լինի ընթերցողներին. այդ մարդասեր վերաբերմունքը դեպի մարդը, որ 40-ական թվերից առաջ է եղել ֆրանսիական գրականության մեջ, տվել է մի շարք մեծ գրողներ. նրանց է աշակերտում Կոպպեն: Կոպպեն համակիր է անմիջական, անկեղծ, կարեկից, ոչ շլացուցիչ, այլ պարզ ու հասարակ վերաբերմունքին: Այդ իր սրտին մոտ վերաբերմունքը նա գտնում է ազգի հասարակ դասի մարդկանց մեջ և ահա թե ինչու նրա գրվածների նյութը հասարակ, զրկված դասն է իր հոգս ու ցավով, լաց ու ծիծաղով:

Վեպիկի մի քանի կտորները լիրիկական շեղումներ են, որոնք տպավորություն են անում. օրինակ Արմանդի մահվան և ապա՝ նրա սիրո մասին: Եվ առհասարակ բանաստեղծը իր այս պատկերումն էլ համարյա լիրիկ է. մի բան, որ արգելում է նրան մինչև գեղարվեստականությունը բարձրանալու ուրիշի կյանքը նկարագրելիս: Նա նկատում և պատկերում է դիրքեր ու վարմունքներ. նա մարդու հոգին խորը չէ ճանաչում. այդ հոգին նրա համար մի պարզ բան է: Նա տալիս է վերաբերմունք մեծ մասամբ առանց պատճառաբանելու. մենք չենք տեսնում վարմունքների պատճառաբանությունը գործող անձերի հոգու մեջ, չկա նրանց հոգու վերլուծությունը: Կոպպեն նկատում և արտահայտում է այն, ինչ նկատում են շատերը, տալիս է եղածի արտաքինը, բայց չի ցույց տալիս, թե ինչու է լինում և ինչպես է նախապատրաստվում, կամ ինչպես է արտահայտվում եղածը մարդու հոգու մեջ. նա հոգեբան չէ, վերլուծող չէ: Ահա թե ինչու նա բացատրությունների է դիմում – ցույց տալու և նկարելու տեղ. ահա թե ինչու ինքն է հայտնում, թե ի՞նչ էր զգում այս կամ այն անձը. նա դիրքեր է տալիս և բացատրություն մեջ բերում: Դրանից նրա անձերը երես են դուրս գալիս, մակերևութային են, ոչ խորն ու բարդ, բայց որոշ են. ահա ինչու նա քիչ լարերի է զարկում և ուժով չի զարկում, բայց դուրեկան է նրա մեղմ շոյանքը. դուք մոր ոչինչ չեք ստանում մարդու հոգու մասին, բայց հաճույքով կրկնում եք գիտցածը ու նայում մի անգամ տեսածի վրա: Չկարողանալով հոգեկան աշխարհի վերլուծումով տպավորություն անել, նա դիմում է ամեն գրողի համար պատրաստ պատահումներին ու էֆեկտներին, թեև դրանք կարելի է սահմանից դուրս չեն գալիս երբեք. այսպես, օրինակ՝ Գանրիետի նամակն այն օրն է ստացվում, երբ **Տիկինը** պսակի պատրաստության ետևն է ընկած: Լինելով պարզ տաղանդ ու պարզ ոգի, նրան հաջողվում է պարզ անձեր նկարել. ամենահաջող անձը Գանրիետն է, հետո՝ Արմանդը, իսկ ամբողջ գրքույկում ամենալավ կտորը Գանրիետի նամակն է, որով վերջանում է գրվածքը. այդ նամակը հուզում է. այդ

պարզ, հասարակ, խոնարհ ոճը, այդ ջերմ զգացմունքը, այդ հարգանքի վերաբերմունքը հակառակորդին. բոլորը սիրուն է. պարզ բանաստեղծը պարզ հոգուն լավ է հասկացել:

Չեղինակի հոգու պարզությունը իր կնիքը դրել է և այն վերաբերմունքի վրա, որ նա ունի դեպի իր տված կյանքն ու դրած խնդիրը: Կոպպեի պատկերում երկու խնդիր կա՝ իսկապես. մեկը երկու նորատիների կապը, մյուսը մոր դիրքը դեպի այդ կապը. թե առաջին և թե երկրորդ խնդիրը նա չի մշակել բավականաչափ. մի քիչ գերակշռում է մշակման կողմից առաջին խնդիրը, իսկ երկրորդը, որ մի շատ հիմնական ու նշանավոր, կարելի է ասել՝ մշտական մնայուն կողմն է մարդկային ոգու, մնացել է «ընդ գրվանավ»: Մոր ու որդու սերը սկսում է տեղի տալ մի աղջկա սիրո դեմ. այդ մրցությունը, մարդու հոգու դրությունը այդ ժամանակ շատ ավելի ծանր ու բարդ խնդիր է, որ կարողանար Կոպպեի պես մի գրող մշակել: Սենք սակայն խոսք ունիք Արմանդի ու Գանրիետի կապի մասին և այն վերաբերմունքի, որ ունի դեպի այդ կապը Կոպպեն: «Գրականության ձեռքին քաղաքակրթության գաղտնիքներն են, բանաստեղծության ձեռքին իդեալի գաղտնիքները»,- ասում է Յուզոն: Եվ գրողների արժանիքն իրանց իդեալներով է չափվում: Մեծ բանաստեղծները նրանք են, որոնք իրանց տված կյանքի վրա արծվի հայացք կարող են ձգել, որոնք իրանց մեծ իդեալների բարձունքից են նայում այդ կյանքին, որոնք իրանց անձերին վերաբերվում են իբր քրիստոնյա և ոչ իբր կուսակցության մարդ. իսկական մեծ բանաստեղծը միայն համազգալ գիտե և ոչ համակրել. նրա հայացքը լայն է և չի ճանաչում կուսակցություն: Կան գրողներ (բանաստեղծներ), որոնք գոյություն ունեցող կյանքը ոչինչ են համարում իրանց իդեալների առաջ. այդ տեսակ մարդու գրչի տակ կյանքը ծայրեծայր ծաղրի նյութ է դառնում կամ կեղծիքի անսահման դաշտ. նրանց վերլուծության առաջ չքանում են բոլոր մեծությունները, բոլոր ազնիվ, անկեղծ, առաքինի համարվող վարմունքներն ու հոգեկան շարժումները: Կան և այն տեսակ գրողներ, որոնք իդեալը չարացած է ու դուրս չի գալիս գոյություն ունեցող կյանքի սահմաններից, այդ արդյունք է նրանց բարոյական բնույթի, որ ոչ լայն է, ոչ խոր: Այն, ինչ ուրիշից անքուն գիշերներ է խլում, նրանց համար սովորական բան է, այն, ինչ վրդովում է ուրիշի բարոյական աշխարհը, ինչ ուրիշի հոգում անվճռելի ու ծանր հարցերի մի բարդ ցանց է առաջ բերում, նրանց համար վճռած խնդիր է ու իր անունն ունի: Կոպպեն այդ տեսակ գրող է. նրա իդեալը շատ չնչին է ու խեղճ, նրա բարոյական զգացմունքը բավականին բութ է, ուստի և նա կատարվող իրականության մեջ է իր բա-

նաստեղծության նյութը գտնում՝ իդեալի մտքով. կյանքի և երևույթների երեսն է տեսնում: Խոսքս Արմանդի և Յանրիետի կապի մասին է. այդպիսի կապեր միշտ էլ լինում են Պարիզում և շատ էլ սովորական են: Կոպպեի գլուխն իսկի չի էլ գալիս այն հարցը, թե լավ են այդ կապերը, թե վատ. նա վերցնում է եղածն առանց վերլուծելու և այնպես ոգևորվում այդ կապով, որ կարծեք ուրիշ վերաբերմունք չի էլ կարող լինել դեպի նույնատեսակ երևույթները. մտածեցեք մի ըստ, թե ի՞նչ էր լինելու Յանրիետի ապագան... մտածեցեք մի քիչ այդ ուղղությամբ և կպարզվի, թե ինչ ողորմելի են Կոպպեի իդեալները, որքան չնչին, խեղճ... Անկասկած հեղինակը հարմար ժամանակ է վարագույրը ցած թողնում, բայց այդ արգելք չէ, որ մենք լինելիքի մասին մտածենք... Սակայն այստեղից արդեն սկսվում են մի շարք բարդ խնդիրներ ֆրանսիական ոգու, նրա գրականության, գրողի և իրականության միջև լինելիք հարաբերության և այլն մասին, որոնց ներսը մտնելու ոչ տեղն է, ոչ էլ հնարավորություն կա մի գրախոսականով...

* * *

Մի քանի խոսք թարգմանության մասին: Պր. Ռ. Խ. լավ թարգմանիչ կարող է լինել. նա կարողանում է պահպանել գրվածքի տոնը, յուրատեսակ ձևը, նրա ջերմությունը, մի խոսքով նա թարգմանել է զգալով: Ցավալին այն է, որ նրա լեզուն աղքատ է, անմշակ ու տեղ-տեղ նույնիսկ անկանոն: Որքան գիտենք այս առաջին անգամն է նա երևում գրականության մեջ. ուրեմն հույս կարելի է ունենալ, որ գործելու հետ այդ պակասները կվերանան: Բայց որ մեր ասածը անապացույց բան չերևա - ավելորդ չեն լինիլ մի քանի օրինակներ հենց առաջին էջերից:

Երբ քահանան կարգը կատարեց... հանգուցյալի բարեկամներն ու ծանոթները ամենից առաջ դուրս եկան եկեղեցուց, օրհնած ջուր սրսկեցին (էջ, 3)...»: Խոսքի այս կազմով «ամենից առաջը» նշանակում է ոչ թե «եկեղեցում եղողներից առաջ», այլ՝ նախ. - ուրեմն կլինի «ծանոթները նախ դուրս եկան եկեղեցուց», որ ինքն ըստ ինքյան անմիտ խոսք է. մինչդեռ թարգմանիչն այդ չի ուզեցել ասի: - «Նա պետք է որ իր այրիին ու տղին մի փառավոր հարստություն թողած լինի» (էջ 4): «Մի»ն ավելորդ է, ֆրանսաբանություն է: (Հանգուցյալը) արժանավոր կերպով (լավ արտահայտություն չէ) քննադատվում էր յուր բարեկամներից... և այնպիսի մի ժամանակ՝ երբ նրա այդ բարեկամները իրանց ձեռներից դեռ չէին հանել սուգի սև ձեռնոցները» (էջ 5). լիովին ավելորդ են *յուր, նրա, իրանց* բառերը. խոսողները նրանց բարեկամներն են, հայտնի է. էլ ի՞նչ կարիք կա «յուր» ասելու. հետո՝ ձեռնոցներն իհարկե իրանց ձեռներից

են հանելու. առանց «իրանց» ասելու էլ հասկանալի է: Մի ուրիշ նման օրինակ. «Տիկինը յուր ամուսնուն երբեք չէր սիրած, իսկ հիմա նա արհամարհում էր նրան» (էջ, 8): Կարելի էր կարճ ու լավ ասել. «Տիկինը ամուսնուն երբեք չէր սիրել, իսկ այժմ արհամարհում էր». նույն միտքը՝ առանց յուր, նրա, նրան: Այս ամենագլխավոր պակասությունն է, որ ունի թարգմանիչ լեզուն. մեր լեզուն չի սիրում ավել բառ ասել այնտեղ, ուր առանց այդ բառի էլ միտքը պարզ, որոշ ու հասկանալի է. մեր լեզուն շատախոս չէ, նա սիրում է հակիրճ լինել: Օրինակների թիվը չարժեքազմացնել. ամեն էջում ընթերցողը կարող է տեսնել: Բայց թարգմանիչ գլխավոր արժանիքի առաջ այդ պակասությունը, որ անկասկած շատ մեծ է, կորցնում է իր մեծության մի մասը:

Սուրճ, 1899, № 4-5, էջ 497-504

Միլտոն (Ծննդյան 300-ամյակի առթիվ)

Երբ Կառլոս I-ի գլխատումից հետո Անգլիայում հաստատվեց պառլամենտական կառավարություն, Միլտոնն ստանձնեց պետական քարտուղարի պաշտոն՝ լատիներեն գրագիտության համար:

Այդ պաշտոնում եղած, կառավարությունը նրան հանձնարարեց պատասխանել այն անանուն պարսավագրին, որ լույս տեսավ Կառլոս I-ի գլխատումից հետո և որ կրում էր «Eikon Basilike» (Պատվեր թագավորի) խորագիրը: Այս գրությունը, որ մեծ հաջողություն ունեցավ, գլխատված թագավորի կուսակիցների գործն էր և ջատագովում էր այդ բռնակալին: Միլտոնը մի պատասխան գրեց: «Eikonoklaste» (Պատկերամարդ) վերնագրով, ուր սրամտությամբ ջախջախում էր անանուն հակառակորդի բոլոր առարկություններն ու պատճառաբանությունները:

Չեղածաբանակոթիվները, որ նա վարեց կրոնական և քաղաքական ուրիշ հակառակողների դեմ, պակաս հաջողություն ունեցան:

1652 թ. Միլտոնը կուրացավ. այդ հանգամանքը շատ ազդեց նրա նյութականի վրա: Հասարակապետության անկումը և Ստիվարտների վերադարձը կատարյալ ավեր բերին Միլտոնին: Նրան բանտարկեցին և ինչքը գրավեցին հարքունիս: Բայց ավելի ծանր հարված եղավ նրա համար իր կուսակցության կատարյալ պարտությունն ու քայքայումը:

Ծեր հասակում նա մնաց մեռակ, փակված ընտանեկան նեղ շրջա-

ցակում՝ իր երկրորդ կնոջ և երկու աղջիկների հետ: Առաջին կինը վաղ մեռավ. մահից մի քանի տարի առաջ նա դարձավ մարդու մոտ: Երկրորդ կինը լիովին անմասնակից և օտար էր նրա հոգեկան կյանքին: Աղջիկները բարյացակամ չէին դեպի հայրը, դրա պատճառը՝ մասամբ ինքն էր. նա ստիպում էր, որ աղջիկները իրենց չհասկացած լեզվով (եբրայերեն, հունարեն և այլն) ամեն օր մի բան կարդան իրեն:

Այսպիսով վրա հասավ Միլտոնի կատարյալ միայնության և միաժամանակ մեծագույն ստեղծագործության ժամանակը: Իր կյանքի վերջին շրջանում 1660-1674 թ. նա ստեղծագործեց երեք հանճարեղ երկ. «Կորցրած Դրախտ», «Վերստին Գտած Դրախտ» և «Սամսոն Ազոնիստ»: Սրանցից առաջինը լույս տեսավ 1667 թ., վերջին երկուսը՝ 1670 թ.:

«Կորցրած Դրախտը» քրիստոնեական վիպագրություն է: Նրա նյութն է հրեշտակների ըմբոստությունը Աստծո դեմ և նախամարդու անկումը: Նա տարբերվում է Դոմերոսի հերոսական էպոսից և Դանթեի «Աստվածային կատակերգությունից» նրանով, որ «Կորցրած Դրախտի» մեջ հեղինակի ստեղծագործական հղացումը ազատ չէ: Մաքրական Միլտոնը իր նյութն է ընտրել Աստվածաշունչից և գրում է Ս. գրքի խոսքերի համաձայն: Բացի այդ, նրա ընտրած հերոսներն ու գործող անձերը պատկանում են գերմարդկային ոլորտին և չեն թույլ տալիս, որ նկարագրություններն այնպես իրական լինեն, ինչպես օրինակ, Դանթեի անմահ և գրավիչ երկի մեջ:

Մյուս կողմից Միլտոնի վիպերգության գործող անձերն ու հերոսներն են՝ Աստվածն ու Որդին, հրեշտակներն ու դևերը: Ադամն ու Եվան անգլիական ժողովրդի երևակայության մեջ որոշ կերպարանք ունեն: Այդ երևակայությունը կրթվել է Ս. գրքի հարատև ընթերցանության ժամանակ և Միլտոնը, որ խորապես ազգային մի բանաստեղծ է, իրավունք չի համարել մի նշանախեց անգամ շեղվելու այդ ավանդական պատկերացումներից:

Միլտոնի ընտրած նյութի առանձնահատկությունները իրենց դրոշմը դրել են «Կորցրած Դրախտի» վրա: Նկարագրությունները պայմանական են, ոճի մեջ քիչ պատկերավորություն կա, Ս. գրքի էակները հաճախ թվում են այլաբանություններ:

Այս երկի ամանց նշանակությունը դրախտի և դժոխքի հոգեբանական մրցման մեջն է: Միլտոնի քաղաքական բուռն ու եռանդուն կրքերը նպաստեցին ստեղծելու սատանայի հսկայական պատկերը, որին ազատության տենչը հասցրեց չարության:

«Կորցրած Դրախտի» ամենից ներշնչված մասը առաջին գլուխն է, ուր Ստեղծողի հաղթած թշնամին, հպարտ իր անկումով, կազմում է Դի-

վահոչակ, սպառնալիքներ ուղղելով երկնքին: Ընդհանրապես ռոմանտիկ դպրոցի և մասնավորապես Բայրոնի դիվականության նախադրյունն այս երգի մեջն է թաքնված: Մաքրական Միլտոնի ռազմական կրոնականությունը իր դարի շունչն անձնավորել է դեպի ազատությունը միտող այս չար ոգու պատկերի մեջ:

«Կորցրած Դրախտի» այս դիվական կողմի բարձր ներշնչմանը համապատասխանում է այս անգուգական վիպերգության հովվերգական մասը. այստեղ մեր առաջն են գալիս դրախտի, մարդկային առաջին զույգի ջերմ սիրո և նրանց արտաքսման նկարագրությունները: Բանաստեղծական անթիվ գեղեցկությունները՝ զգացումների արտահայտության մեջ, շարքերի նվագայնությունը, ահարկու ներդաշնակությունները, որ մեզ պատմում են անհաշտ մաքառման մասին հավատի գործում՝ ժե դարի այս աննման վիպերգության հավերժական կյանք են տալիս:

«Վերստին գտած Դրախտը», որ պատմում է Քրիստոսի փորձվիլը չարության ոգուց, արհեստական և սառն տպավորություն է անում:

«Սամսոն Ազոնիստ» երկում, որ Միլտոնը գրեց իր ծերության օրերում, բանաստեղծը ներկայացնում է Ս. գրքի ավանդական հերոսին և նրա անձի մեջ արտահայտում է իր կուսակցության խորտակված հույսերը:

«Կորցրած Դրախտը» հայերեն թարգմանված է երկու անգամ, երկուսն էլ գրաբար:

Առաջին թարգմանությունն արձակ է և լույս է տեսել 1824 թ., թարգմանիչն է Գ. Գ. Ավգեյան: Երկրորդ անգամ թարգմանել է Գ. Ա. Բագրատունին, ոտանավորով: Միլտոնի կյանքի դրվագներից մեկը՝ նրա հանդիպումը Գալիլեին, մի ազնիվ քերթվածի նյութ է դարձել, որ գրել է Լ. Մանվելյան և որի խորագիրն է «Գալիլեյ և Միլտոն»:

Գործ, 1908, № 54

Ե. ԱՆԻՋԿՈՎ, «ԳՐԱԿԱՆ ԵՐԼՈՒՅՔՆԵՐ» (փոխառումները գրականության մեջ)

Տասնութերորդ դարի վերջերին մի հետաքրքրություն առաջ եկավ դեպի միջնադարյան գրականությունը: Այդ հետաքրքրությունը հատկապես զորեղ էր ռոմանտիկների մեջ: Բանաստեղծների և հետազոտողների ուշադրությունը դարձավ դեպի բազմաթիվ մոռացված գրույցներ,

պատկերներ և մտանկարներ: Այդ հարուստ և մեծածավալ նյութը, որ կուտակվում էր աշխարհի ամեն կողմերից, տասնիններորդ դարի առաջին կեսին սկսեցին կարգի բերել ու խմբատել զանազան բաժինների: Այստեղ պայծառորեն աչքի զարկեց այն ապշեցնող մամուլությունը, որ նկատվում է շատ անգամ միմյանցից խիստ հեռավոր զրույցների մեջ:

Երևաց, որ բանաստեղծական ստեղծագործության բոլոր սեռերը, մասնավորապես լեզենդը, վիպակն ու հեքիաթը, զարմանալի միօրինակ են սյուժեների և պատկերների կողմից:

Երբեմն այդ մամուլությունը կատարյալ է. այսինքն նույն են թե գործող անձերի անունները, թե գործողության տեղերը և թե պատմած դեպքերը: Երբեմն մամուլություն նկատվում է պատմվածքի ամբողջության մեջ, թեև գործող անձերն ու տեղերը, շատ անգամ նաև առանձին միջնադեպերը փոփոխվում են: Վերջապես երբեմն էլ լիովին տարբեր բովանդակություն ունեցող պատմվածքների մեջ իրար նման են լինում միայն հատ-հատ միջնադեպեր ու մոտիվներ:

Առաջին շարքին են պատկանում այն գրվածքները, որոնք հայտնի են «թափառական կամ շրջիկ զրույցներ» անունով. օրինակ՝ «Տրովայի գրավման պատմությունը», «Ալաքսանդր Մեծի գործերը»¹, «Բաղաամի և Յովասափատի պատմությունը» և սրանց նմանները: Երկրորդ շարքից կարելի է համարել հետևյալ սյուժեները. «Անջատված սիրահարներ», «Իմաստուն կույս աղջիկ», «Դևի փախցրած գեղեցկուհին», որտեղ դեռ շատ անգամ փոխվում՝ դառնում է մի սիրուն տղա, «Ամուսնուց հալածված հավատարիմ կինը», «Սոխրոտիկ», «Քնած գեղեցկուհի», «Պարոն աղվես» և այլն: Երրորդ խումբը, որտեղ մտնում են բազմաթիվ մանր հետաքրքրական մոտիվներ, ամենից հարուստն է:

Այս մամուլությունը բացատրելու համար շատ մեծ աշխատանք են գործադրել: Ոմանք ենթադրում են, որ նման պատմվածքները ստեղծվել են զանազան տեղեր՝ միմյանցից անկախ, բայց նման կուլտուր – պատմական պայմաններում: Սակայն այս ենթադրությունը կարելի է ասել միայն այն տեսակ պարզ սյուժեների համար, ինչպես, օրինակ, երկու անջատված սիրահարներն են կամ սրա նմանները: Բայց շատ անգամ տարբեր տեղեր և տարբեր պատմաշրջաններում մենք պատահում ենք թեև երբեմն խճճված՝ նման պատմվածքների, որոնք բազմաթիվ և լիովին պատահական մանրամասներ ունեն. սրանք ևս, թեկուզ և հարևանցի, բայց նման են լինում իրար: Այս տեսակ դեպքում մենք մամուլություն

¹ Այս զրույցները կան նաև մեր հին գրականության մեջ, առաջինը մինչև իսկ 5-7-րդ դարից: Ն. Ա.

նը միայն մի կերպով կարող ենք բացատրել՝ ենթադրելով, որ այստեղ փոխառումներ կան:

Գրիմնի տեսությունը, որ հետո զարգացրին Կունն ու Մաքս Մյուլլերը, այդ մամուլությունը բացատրում է մոտավորապես նույն կերպով, ինչպես միևնույն ընտանիքին պատկանող լեզուների մամուլությունը: Ինչպես որ զանազան լեզուները զարգացել են տարբերացման (դիֆֆերենցիացիա) միջոցով՝ մի ժամանակ գոյություն ունեցող և այժմ չքացած նախալեզվից, այնպես էլ եվրոպական նման պատմվածքները առաջ են եկել մեր ընդհանուր նախահայրերի՝ բանաստեղծական ստացվածքից, այն նախահայրերի, որոնք աստիճանաբար դարձան հույներ, գերմանացիներ, սլավներ և այլն: Ժամանակի ընթացքում այդ պատմվածքների մեջ մտան ավելի ուշերը պատահած պատմական դեպքեր և հին պատմվածքի վրա նստելով՝ առաջ բերին պատմական խավ կամ շերտավորում կոչված երևույթը:

Գրիմն և հետևորդները պատմվածքների նախաձևը համարում էին առասպելը (միֆը), այսինքն պատմվածքը աստվածների մասին, որոնք, սրանց ենթադրությամբ, բնության ուժերի մարմնացումն էին: Ռսներից այս հայացքը պաշտպանում էին երկու գիտնական՝ Աֆանասև ու Բուսլաև:

Փոխառության տեսությունը գրականության և առասպելականության համեմատական ուսումնասիրության մեջ մտցրեց ավելի ստույգ և առավելապես պատմական մեթոդ: Փոխառությունը ամենից առաջ նկատեցին առաջին խմբին պատկանող զրույցների մեջ: Ռուս հեքիաթի Ռուսլանը պարզ է, որ չի կարելի գատել պարսիկ Ռոստեմից: Պետք է նկատել, որ հետազոտության ենթարկվող ստեղծագործական արտադրությունները վերաբերում էին մատենագրության զարգացման ավելի ուշ շրջանի և ոչ թե ժողովրդական բանահյուսության մթին ոլորտին: Նույն կերպով՝ ինչպես երևույթների առաջին խումբը բացատրեցին և մնացած երկուսը:

Փոխառության առաջին տեսաբաններն էին Դենլուպ, Լիբրեխտ և Բենֆեյ, որ իր երևելի ներածության մեջ կցեց Պանչաթանդրանայի² գերման թարգմանությունը, մատնանիշ արավ հնդկական, մասնավորապես բուդդայական հոսանքը, որ նկատվում է եվրոպական ազգերի վիպազրույց գրականության մեջ: Այսպիսով երևաց, որ զրույցները տարածվել են ոչ թե ուղղահայաց ընթացքով, այսինքն արմատից դեպի տոհմային ճյուղավորումները, այլ հորիզոնական ուղղությամբ անցնելով մի ճյու-

* Տեքստում՝ նախահավերի է: Գ. Ա.

² Հնդկական առակների ժողովածու սանսկրիտ գրականության մեջ: Ն. Ա.

ղից մյուսին, երբեմն էլ մի տոհմային ծառից՝ մյուսին:

Այսպես, օրինակ՝ մի գրույց, որ ծնունդ է առել, դիցուք, Հնդկաստանում՝ Իրանով անցնելիս կարող էր ստանալ իրանական կենսակրթության գծերը, որոնք ավելի հեռուններում (օր. Իտալիայում) կարող էին միանգամայն օտարոտի և անհավանալի երևալ, ուստի և կարոտ լինել նոր պատճառաբանության՝ նոր միջավայրի համաձայն: Այդ տեսակ հարաբերության մեջ են, օրինակ, հնդկական լեզենդները մետասոմատոզի մասին, դեպի թալմուդական³ լեզենդները Սողոմոն իմաստունի մասին և դեպի սրա քրիստոնեական դիմաշրջումը, որ գտնվում է «Գոռոզ Ազգեյուս թագավորի վիպակում» (այս վիպակը գրականորեն մշակել է Վս. Գարշինը):

Հետագա հետազոտությունները շատ բանում սրբագրեցին ու սահմանափակեցին Բենֆեյի տեսությունը, մերժելով նրա ենթադրությունը, որ իբր թե հնդիկ հեքիաթական հոսանքը դեպի Եվրոպա փոխանցել են մոնգոլները: Արևելքում և Արևմուտքում շրջող վիպական մոտիվների մասնությունը, բանից երևում է, շատ ավելի հին է, քան մոնգոլները. բացի այդ՝ միայն Հնդկաստանը չէր, որ կարող էր հեքիաթական սյուժեներ մատակարարել, այլև, օրինակ, Եգիպտոսը: Շատ զառանցիկ (Ֆանտաստիկ) սքեմաներ մտցրին Եվրոպական ազգերի գրականության մեջ քրիստոնեական անվավեր գրությունները, որոնք համապատասխան էին նոր – մանիքեցի հերետիկոսների, բոգոմիլների, պատարեմների և ալբիոյանների⁴ նման քարոզիչների նպատակներին: Այս գրական հաղորդակցության մեջ Բյուզանդիոնը փոխադրիչ հանգույցներից մեկն էր. նորագույն հետազոտությունները միշտ ավելի ու ավելի պարզում են նրա դերը այդ փոխանցման մեջ, ինչպես նաև միջնադարյան հրեա թարգմանիչների դերը, որոնք արևելքի և արևմուտքի (հրեա, արաբական և հունական) կուլտուրաների բնական միջնորդներն էին:

Փոխառության տեսությունը համարյա միշտ ընդհարվում է վատ ըմբռնած ազգային ինքնասիրության հետ: Օրինակ Ռուսաստանում (Պիպինի ասելով) շատ զինականների դուր չէր գալիս, որ «Ռուս բըլինական»⁵ վիպերգության նախկին իդեալիստական ու զգայնիկ հատվածացումը կամաց-կամաց գունաթափ էր լինում արևմտյան ու բյուզանդական ազդեցությունների երևան առաջ: Այդ տեսակ գիտունների կարծիքով ռուս բըլինաները ժողովրդական բանաստեղծության ինքնատիպ ստեղծագործություն էին, որ շարունակում էին հին առասպելական տիեզերիմա-

ցության (կոսմոգոնի) և երկնային դյուցազնության հեթանոսական դյուցազներգությունը»: Գերմանիայում նույնպես փորձում էին պաշտպանել գերման քնարերգության ինքնատիպությունը: Բայց ներկայումս ոչ ոք կասկած չունի այն ահագին և ճնշող ազդեցության մասին, որ ունեցել են Պրովանսի տրուբադուրները⁶ այդ քնարերգության վրա: Ատաղծի շատության, իսկ երբեմն էլ՝ անխուսափելի սակավության պատճառով, փոխառումների տեսությունը իր հետևաբանություններն անում է չափազանց զգույշ, առանց անհաստատ ապացույցներով հափշտակվելու:

Փոխառումների տեսությունը ընդհարվում է և ուրիշ կուլտուր-պատմական ենթադրությունների հետ. այդպես են Գրիմմի առասպելաբանական տեսությունը և անկախ ծագման տեսությունը, ըստ որում նման գրույցները առաջ են եկել միանման կուլտուր - պատմական պայմաններում: Սակայն այդ երեք տեսությունների մեջ, սկզբունքով առած՝ ուղղակի հակասություն չկա բնավ: Միայն թե «դիմելով այնպիսի ատաղծի, որ գուցե բազմաթիվ վերապատումների և աղավաղությանց արդյունք է ներկայացնում, առասպելաբանը նախապես պարտավոր է վճռելու այն հարցը, ինչի հետ գործ ունի - արդյոք ժողովրդական ինքնատիպ աշխարհայացքի մի իրողության, և արդյոք չի խաբում նրան ձևը և այն հանգամանքը, որ ավանդությունն ապրում է ժողովրդի մեջ ու գրված է նրա բերանից, - մինչդեռ նրա բովանդակությունը կարող է որևէ գրավոր աղբյուր լինել» (Ալ. Վեսելովսկի):

Փոխառումների տեսությունն ավելի շուտ մի մեթոդ է, մի ճանապարհ, որով գնում է հետազոտողը, քան թե մի նպատակ, որին նա ձգտում է: «Ստեղծագործության գաղտնարանները» նա բացատրել չի կարող: Բայց դրա փոխարեն նա սահմանափակում է երևույթի բնագավառը և ջանք է անում նրա բացատրությունը գտնելու «բաց թողած երրորդի» մեթոդով:

Անցնելով անանձն (ժողովրդական) ստեղծագործության շրջանից դեպի անձնական (անհատական) գրականությունը, մենք տեսնում ենք, որ այս շրջանում ևս հետազոտողներն ընդունել են փոխառումների տեսությունը, ում մասին էլ խոսելու լինեն՝ Բուկաչչիոյի, թե Շեքսպիրի, Պուշկինի, թե Գյոթեի: Հեղինակի անձնավորության գաղտնիքը թափանցելու ամենահաստատ միջոցն է՝ նրա վրա անմիջապես ազդող հանգա-

⁶ Նշանակում է աշուղ, խաղ կապող: Ն. Ա.

⁷ «Բաց թողած երրորդը» տրամաբանական արտահայտություն է. դա մի օրենք է, որի բանաձևն է. A է կամ B կամ C: A չէ. B, ուրեմն՝ A է C. այս մարդը կամ հայ է կամ օտարագահ: Նա հայ չէ, ուրեմն այս մարդը օտարագահ է: Ն. Ա.

³ Թալմուդը հրեական ավանդությունների գիրքն է, որ Ս. Գրքից հետո ամենանշանավոր երկն է եբրայական գրականության մեջ: Ն. Ա.

⁴ Միջնադարյան աղանդներ են: Ն. Ա.

⁵ Ռուս ժողովրդական վիպերգերը կոչվում են Բըլինա /Быльня/ Ն. Ա.

մանքների մանրամասն հետազոտությունը: Բանաստեղծի անձնական հատկությունները սահմանելիս առաջին բանը, որ պետք է որոշել, այն երկերն են, որոնք ոչ միայն շարունակ նրա աչքի առաջ են եղել, այլև վերաստեղծվել են նրա սեփական գործերում: Այս մեթոդն ընդունելով՝ կարելի է հայտնիից դեպի անհայտը գնալ և ոչ ընդհակառակն:

Այսպես, օրինակ՝ Շեքսպիրի «Չամլետը» հետազոտելիս ամեն մի ժամանակ գիտնական Սաքսոն Քերականի պատմվածքին կդիմի, որից և օգտվել է Շեքսպիրը: Այս դեպքում խիստ հետաքրքրական է լինում դիտել այն աստիճանական փոփոխությունները, որոնց ենթարկվել է միևնույն պատմվածքը՝ անցնելով մի կուլտուրական միջավայրից մյուսը և մի հեղինակից մյուսին: Այդ տեսակ հետազոտության օրինակ կարող է լինել երեք արկղիկների սյուժեի քննությունը, որ կատարել է Ալ. Ն. Վեսելովսկին իր «Բոկաչչիո» գրքի մեջ (այդ սյուժեն կա Բոկաչչիոյի «Տասնօրյակ»-ում - Դեկամերոն- և Շեքսպիր «Վենետիկի վաճառական»-ում): Այս մեթոդով աշխատել են շատ ռուս գիտնականներ ռուսաց նոր գրականությունն ուսումնասիրելիս (օրինակ՝ Ստոյունինը Պուշկինի մասին գրած գրքում):

Այս մեթոդը, ցույց տալով այն ազդեցությունը, որ կրել են այս կամ այն ազգի գրականությունը կամ մեծ հեղինակը, ամենևին չի ջնջում որևէ գրականության բնուրույն ազգային դիմագծերը և ոչ էլ փոքրացնում որևէ հանճարի անհատական ինքնատիպության ու ինքնուրույնության չափը: Այս բանը բավական ապացուցել է ժամանակակից գիտական քննադատությունը: Ընդհակառակն՝ միայն այն ժամանակ կհասկանանք Գյոթեի հանճարի բնուրույնությունը, երբ ծանոթանանք դոքտոր Ֆաուստի մասին եղած լեգենդին:

Ծիշտ այդպես ռուս բըլինաների ազգային նկարագիրը ամենևին չի ջնջվում պատմահամեմատական վերլուծության ժամանակ (Ա. Ն. Վեսելովսկի), այլ միայն պատշաճ շրջանակի մեջ է մտնում և այնտեղից ավելի ուռուցիկ ու գիրք դուրս նայում: Նկատելու է նաև Տարդի փորձը, որ իր «Նմանության օրենքները» գրքում ձգտում է փոխառումը կամ նմանությունը մարդկային բնաշրջման հիմնական օրենքը դարձնել:

Թարգմ. Ն. Ա.

Հորիզոն, Թիֆլիս, 1914, № 58

Մտածումներ

Ս. Նազարյան

Մեզ դեռ վիճակված է մեր նշանավոր մարդկանց մահվան և ծնունդի հորեյանները անշուք անցկացնել: Մի կողմից ժողովուրդն է անգիտակ իր անցյալ գործիչների վաստակներին, մյուս կողմից հայ կյանքն ընդհանուր առմամբ շարունակում է մնալ ակեծուփ, հույսի և վստահության ժամեր ապրելով և վարանքով ակնդետ նոր աղետների և թշվառության:

Եթե գրերի գյուտի 1500 - ամյակը և հայ տպագրության 400-ամյակն այնքան անշուք անցան, տոներ, որ վերաբերում էին համայն հայության, ապա չպետք է զարմանալ, որ Ս. Նազարյանի ծննդյան հարյուրամյակը տոնելու համար մեր հասարակությունը ոչ մի պատրաստություն չի տեսած:

Ս. Նազարյանի գործունեությունը չունի համազգային նշանակություն. նրա ազդեցությունը մեծ եղավ Ռուսաստանի հայության վրա և ամենից լավ մենք կարող ենք գնահատել նրա գործի արժեքը:

Ռուսահայ մտքի պատմության մեջ շատ մեծ է Ս. Նազարյանի խաղացած դերը: Վաթսունական թվերին նա կենտրոնական դեմք էր հայ գրական հրապարակում: Նրա «Հյուսիսափայլը» զորեղ դողանջով հրավիրում էր հայությանը ոտք դնել եվրոպական լուսավորության ուղին և հնավանդ կյանքի և նրա ազդակների վերանորոգումով դառնալ կենդանի և առաջադեմ մի ժողովուրդ: Իր ամսագրի շուրջը նա կարողացավ համախմբել ժամանակի լուսամետ երիտասարդությանը և քարոզեց մի աշխարհայացք, որ այսօր ընդհանրացած է մեզանում:

Նորոգված լեզու՝ կյանքի նոր բովանդակությանը հարմար: Նորոգված եկեղեցի՝ նոր ժամանակների պահանջին հարմար և աշխարհական դաստիարակություն՝ ժամանակի գիտության ոգով - սրանք են այդ աշխարհայացքի գլխավոր կետերը: Բայց հիմնական գաղափարը, որ առանցքն է այդ աշխարհայացքի, Ս. Նազարյանի այն միտքն էր, թե հայ ժողովրդի կոչումն է լուսավորության առաքյալ հանդիսանալ Առաջավոր Ասիայում: Նա խորապես համոզված էր այս մտքին և գործում էր հաստատամիտ լքջությամբ նույն համոզմանը բերելու համար և նորագատ հայ ժողովրդին:

Ռուսաց հաղթանակների շնորհիվ հայության մի ստվար զանգվածը ստացել էր կյանքի, գույքի և պատվի ապահովություն և կուլտուրական

զարգացման հնարավորություն: Մահմեդական անիրավ և ավերիչ տիրապետությունը վերացել էր Կովկասից: Նազարյանը փաստաբանեց հետագա զարգացման անհրաժեշտությունը և գծեց նրա ուղիները:

Նա ջանաց պատրաստել հայ ժողովրդին իր բարձր առաքելության համար և հղացավ ու պաշտպանեց մի շարք անհրաժեշտ նորություններ հայի մտավոր և բարոյական աշխարհում:

Նա ցանկացավ իմաստ ու նպատակ հաղորդել հայ ազգի գոյության, նրա հետնորդներին էր մնում ընդգրկել այդ իմաստն ու նպատակը և շարունակել պատրաստել հայությանը իր պատմական առաքելության համար:

Նազարյանցի այդ հիմնական գաղափարը՝ միջնորդ լինել լուսավոր եվրոպայի և խավարին Ասիայի միջև՝ մինչև այսօր կենդանի է և գործոն, նրա բովանդակությունը ենթարկվում է հոլովոյթի, բայց գաղափարն ինքը մնում է հաստատուն և անսասան:

Կորովի ձեռքով և մի քանի տարի շարունակ նա վարեց իր ամսագիրը, որ հանդիսանում է առաջին աստիճանը նոր հայության մտավորական վերելքի և ներկայացնում է ամբարը մեր վաթսունական թվականների ազատական գաղափարների, որոնք այնուհետև տարածվեցին ու զարգացան մեզանում:

Կենդանացնել ժողովուրդը գիտության լուսով և ղենել նրա առաջ մի վսեմ նպատակ - այս էր Ս. Նազարյանցի ծրագիրն իր էական գծերով:

Այսքան նշանավոր մի մարդու ծննդյան հարյուրամյակն է, ահա, որ լրանում է այսօր հայության վարանքի և անտարբերության մեջ:

Հորիզոն, 1912, № 285

Գր. Արծրունի

Այսօր լրանում է Գր. Արծրունու մահվան քսանամյակը:

Քսան տարի է անցել այն օրերից, երբ Կովկասի հայությունը մի չտեսնված թափորով հողին հանձնեց մի մարմին, որին կենդանություն տվող հոգին իշխում էր միահեծան հայ մտավորական ստվար խմբերի և ժողովրդական զանգվածների վրա:

Թաղում էին մի եզակի մարտնչող, որ գիտեր կռիվներ ստեղծել և հաղթանակներ տանել, մի հեղաշրջող, որ կենդանություն ներշնչեց թմրած հայության, հասարակաց շահերի մի արթուն պաշտպան և ղեկա-

վար, որի ծայրը հնչում էր հզոր և արծագանքում հեռացող բազմությունների սրտում:

Ձինված ժամանակի գիտությամբ և առաջադեմ գաղափարներով, ծանոթ եվրոպական և ռուս մտքի հոսանքներին, հմտացած հայի անցյալին ավելի, քան շատերը ժամանակի «հայագետներից»՝ նա եկավ մեր հետամնաց հասարակության մեջ և նրա խոսքը ռումբի պայթյունով՝ արթնացրեց բոլոր թմրած ուժերը՝ ստեղծելով մի աղմուկ և միաժամանակ մի բուռն հետաքրքրություն դեպի իր անձն ու գործը:

Լինելով մի գորեղ անհատականություն և ժառանգական տոկունության ու հաստատուն կամքի տեր՝ նա ձեռնարկեց մի խիզախ գործ. հարմարացնել հասարակությունը իր անհատականության և նա դրեց իր դրոշմը ժամանակի բոլոր մտքերի և գործերի վրա և առաջ բերեց մի բազմություն հասարակական ու գրական գործիչների, որոնք այս կամ այն ձևով հետևում էին նրա մտքերին և նրա անձնական օրինակին:

Իբրև գիտակից անդամ հայ հասարակության՝ նա խոսքով ու գործով տեր հանդիսացավ հասարակաց շահերի, փաստաբանեց անհամար դատեր և հայության դատերի դատը՝ Հայոց հարցը. նրան հետևելով ամեն մի զավառական քաղաքում ու ավանում երևան եկան տեղական շահերի սրտացավ գործիչներ, և առաջնորդ ու զինվոր՝ փոխադարձաբար պաշտպանում էին իրար ամեն անգամ, երբ ծագում էին ընդհարումներ հետամնացության և առաջադեմ տարրերի միջև: Դա մի լայնասփյուռ արշավանք էր մեր դարավոր անտարբերության և թմրության դեմ, որի զորավարը Արծրունին էր և սպայակոյտը «Մշակի» այն ժամանակվա խմբագրությունը:

Հրապարակախոս միտքը նա մատչելի դարձրեց ժողովրդի լայն խավերին, անհայտության միջից հանդես բերեց մի շարք մեծ ու փոքր մարտիկներ և իր հմայիչ խոսքի ուժով տիրացավ նրանց կամքին ու մտքին:

Իր խոսքի ուժին ապավինած և հենված իր հրապարակախոսական և երգիծական փայլուն տաղանդին՝ բնական էջքով նա դադարեց բարձր մտավորականության առաջնորդը լինելու, բայց դրա փոխարեն նա իր հմայքն ու իշխանությունը տարածեց խոնարհ խավերի վրա և միշտ մնաց հաղթական գործնականի մեջ:

Նախկին տարտամությունը չքացավ նրա զորեղ հարվածների տակ և հասարակություն ու ժողովուրդ բաժանվեցին կազմ ու պատրաստ բանակների և առաջին անգամ մեզանում մի քանի համակրողները դարձան բազմանդամ ու համախոհ կուսակցություն:

Գաղափարներ, որ հասարակ տեղիք են այսօր, սկզբունքներ, որ ան-

վիճելի են ամենքի համար՝ Արծրունին առաջինն էր, որ մտցրեց հասարակաց գիտակցության մեջ և պաշտպանեց ու կյանքի մեջ իրագործեց մի անօրինակ եռանդով և խանդավառությամբ:

Նա մեկն էր այն հազվագյուտ մարդկանցից, որ գրում էր «իր սրտի արյունով և նյարդերի հյութով» և նրա խոսքի անկեղծությունը ստեղծեց անձնավեր երկրպագուների և ոխերիմ թշնամիների ստվար խմբեր, որոնց թույլ արծազանքը դեռ հնչում են մեր ականջին այսօրվա մամուլի էջերից:

Հայ կյանքը նրանից հետո չծնեց մի ուրիշ անուն, որ այնքան տիրականորեն ու տաղանդով իշխեր հայ մտքի աշխարհում: Մեր կյանքն այնուուիետև ընկերական շերտավորման ենթարկվեց և ամեն մի շերտ իր քարոզիչն ունեցավ: Իսկ ովքեր փորձեցին առաջ վարել հայ մտքի զարգացումը նրա կենդանության ժամանակ, թեև ունեցան ավելի հիմնավոր պատրաստություն, բայց չունեցան ո՛չ նրա տաղանդը և ո՛չ զգացումի թափն ու ոճի փայլը:

Արծրունին ազգության հրապարակախոս էր արմատական ըմբռնումներով: Նա այն կիզակետն է, ուր հավաքվում են յոթանասնական թվականների հայ մտքի ճառագայթները: Նրա անունն ու գործերը պատկանում են պատմությանը և միշտ մնում են ուսանելի և հրահանգիչ:

Հորիզոն, 1912, № 280

Ա. Արասխանյան

Հեռագիրը հաղորդում է, որ Ախալքալաքում կնքել է իր մահկանացուն Ա. Արասխանյան, որ այս տարի գնացել էր այնտեղ ավագ ուսուցչի համեստ պաշտոնով:

«Մուրճ» ամսագրի հիմնադիրը և նրա ղեկը տասներեք տարի աներեր ձեռքով վարողը հեռացավ մեր գրական ասպարեզից, ուր վերջերս նա դադարել էր գործոն մասնակցություն ունենալուց:

Հայ մտքի զարգացման պատմության մեջ Ա. Արասխանյան և իր «Մուրճը» կազմում են մի աստիճան, որ կապում է նոր սերունդը յոթանասնական թվականների մարտիկ սերունդին:

Նա հրապարակ իջավ ութսունական մռայլ թվականներին, երբ հայ միտքը կրկնում էր իր երբեմնի «նոր» խոսքերը, որ գոհացում չէին տալիս այլևս այն ժամանակվա երիտասարդության:

«Մուրճը» հիմնադրի կարծիքով պետք է լիներ «հայ մտքի աշխատանոցը» և տասներեք տարի նա անշեղ հետևեց իր ծրագրին մի հազվագյուտ տոկունությամբ և մեր գրական բարքերի մեջ չտեսնված շիտակությամբ:

Հրապարակախոսության մեջ նա մտցրեց մի նոր տարր-ընկերական-տնտեսական խնդիրներ, որոնք մինչև նրա երևան գալը պատահական երևույթ էին մեր հրապարակագրության մեջ: Այնուուիետև այդ տարրը դարձավ մի անհրաժեշտ առարկան հայ մտածության:

Այն ժամանակ, երբ գրականության բոլոր նոր ծիլերը, որոնք այսօր դարձել են ծառեր՝ հովանավոր երկնքի թռչուններին, իբր չնչին հատիկ արհամարհանքի էին արժանանում տիրող ուղղության կողմից: Մի զարմանալի անճաշակ և անճկուն վերաբերում թագավորում էր մամուլի մեջ և հայ գրողների նոր սերունդը՝ Հովի. Թումանյան, Ծատուրյան և նմաններ հեզմանք էին վաստակում իբր հեղինակներ և այդ էր նրանց գնահատությունը:

Ա. Արասխանյան իր «Մուրճով» հյուրընկալեց գրական նորելուկ ուժերին, հովանավորեց նրանց և պաշտպանեց նրանց ժամանակի բիրտ վերաբերումից, և նրա ամսագրի մեջ տեղ գտան ու զարգացան թե շատ նոր ուժեր և թե շատ անվանի հեղինակներ:

Նրա մեծագույն ծառայությունը հայ մտքին պետք է համարել այն համառ կռիվը, որ մղում էր դոգմատիզմի դեմ՝ նրա տեղ առաջ քաշելով քննադատական ուղղությունը և վերաբերումը ոչ միայն դեպի կյանքը՝ այլև դեպի տիրականորեն իշխող սկզբունքները:

Դրա հետևանքն եղավ անաչառ հետազոտությունների հաճախումը հայոց գրականության մեջ, որ «Մուրճից» անցավ նաև մամուլի ուրիշ օրգաններին: Մեր կյանքի կարևորագույն հարցերը, որոնց մի մասը «Մուրճն» ինքն էր, որ հրապարակ հանեց, հետազոտվում էին բարեխղճորեն, ժամանակակից ընկերական, տնտեսական և պատմական գիտությանց տեսակետներից և իրենց լուծումն ստանում: Հրապարակախոսությունն այսպիսով ստանում էր գիտական հիմունքներ և լուրջ արժեք:

Վերջապես խրատական էր և այդպես էլ մնաց Ա. Արասխանյանի անդրդվելի շիտակությունը և անկաշառ անաչառությունը դեպի ամեն անձ ու գործ: Տարիներ շարունակ նա մի խարազան էր հայի բարոյական անկումին, որքանով այդ անկումը արտահայտվում էր գրականության և հանրային կյանքի մեջ:

Իր խիստ վերաբերումով նա վաստակեց անթիվ թշնամիներ ամեն ուղ-

ղության պատկանող անձանց մեջ, որոնք մի ներդաշնակ միություն կազմած խորտակեցին նրա գործը և մոռացության մատնեցին նրա անձը:

Եվ այժմ, մոռացված անենքից, գավառական մի քաղաքում, հեռու մի քանի հատ անկեղծ բարեկամներից ու հարգողներից գերեզման է իջնում Ա. Արասխանյանը, նոր սերունդին անձանոթ և հնից հալածված անհրավորներ:

Նրա մահը տխուր մտածումների առիթ է տալիս այն բոլոր մարդկանց, որոնք գնահատում են անկաշառ և շիտակ գործունեությունը մեր կյանքում և անուղղելի իդեալիստի վիճակը մեր աշխարհում:

Հորիզոն, 1912, № 267

Եվրոպան և կացությունը Բալկանում

Բալկանյան թերակղզու քաղաքական մթնոլորտը լարված է տակավին: Տաճկաստանի հարևան չորս փոքրիկ պետություններն արդեն գորակոչ են արել, թե՛ Սերբն ու Սև լեռնցին, թե՛ Յուլյան ու Բուլգարը թողած իրենց մասնավոր գործն ու տնտեսությունը՝ համազգեստ հագած՝ անցել են գործի շարքը: Ամեն տեղ պատերազմի են պատրաստվում և կռիվ են ցանկանում:

Չնայած որ Թյուրք-Իտալական պատերազմը դեռ չի վերջացել, բայց բալկանների սպառնական պատրաստությունը շփոթ ու լքում չի հարուցանում Տաճկաստանի մեջ: Թյուրքերն իրենց հերթին աղմկալից ցույցեր են անում և կանչում են սպառնալից. «Կեցցե պատերազմը, կորչի Բուլգարիան»:

Իրերի այս վիճակը չափազանց մտահոգիչ է եվրոպական մեծ պետությանց համար. ամենքը սարսափում են համաեվրոպական պատերազմից և նրա աղետավոր հետևանքներից: Ընդհանուր պատերազմի ժամանակ կարող է վտանգվել ոչ միայն այս կամ այն մեծ պետության միջազգային կացությունը, այլև բոլոր պետությունների ընկերական կազմը:

Բոլոր մեծ պետությունները ոչ միայն ունին արտաքին թշնամիներ, այլև ներքին հակամարտ ուժեր, որոնք չեն վարանի համատարած շփոթի մեջ փորձ անելու իրենց ձեռքը ձգել պետական կյանքի դեկը:

Եվ ահա եվրոպական պետությանց տիրող դասերը ձգտում են խաղաղություն պահպանել Բալկանյան թերակղզու վրա:

Նրանք մի կողմից մտածում են մի հավաքական դիմում անել Բ.

Դռան՝ պահանջելով ռեֆորմներ մտցնել Մակեդոնիայում, մյուս կողմից հորդորում են Բալկանի մանր պետություններին չափավորել իրենց ռազմատենչ եռանդը:

Սակայն հնարավոր է, որ այդ խորհուրդն ու դիմումները ապարդյուն անցնեն և պատերազմն սկսվի: Այդ դեպքի համար ևս մեծ պետություններն ըստ երևույթին եկել են որոշ համաձայնության: Նրանք որոշել են թույլ չտալ ոչ մի նոր հողային գրավում և ընդհարումը ամփոփ պահել իր ծագման վայրում: Այսպիսով պատերազմի հաջող, թե անհաջող դեպքում Բալկանների քաղաքական բաժանումը մնալու է անփոփոխ:

Հաջողության դեպքում Բալկանի մանր տերությունները առ առավել կարող են պահանջել, որ անհրաժեշտ բարեկարգություններն իրականանան, մի բան, որին կարող էին հասնել մեծ պետությունները նաև առանց պատերազմի, եթե նրանք անկեղծորեն ցանկանային քրիստոնյա ազգաբնակության վիճակը բարվոքել:

Թյուրքիան շատ է տեսել խմբական դիմումներ՝ ըստ երևույթին շատ ավելի սպառնալից և վճռական, բայց իմանալով դիմողների ներքին հակամարտությունը - միշտ էլ քամահարել է նրանց, որովհետև եվրոպան անկեղծորեն չի ցանկացել մարդ ու դրամ զոհել անշահ դատերի համար:

Թե հին և թե նոր Թյուրքիան եվրոպական միջամտությունն իրենց գործերին՝ համարել են ծանր մահու չափ և ամեն կերպ աշխատել են ջլատել առժամապես համերաշխած պետությանց համաձայնությունը:

Այսօր ևս նա զգում է, որ մեծ պետությունները արտաքուստ միայն համերաշխ՝ ներքուստ մրցում են իրար հետ. դրանով նա սիրտ է առնում և կանչում է. «Կեցցե պատերազմը», հուսալով՝ հաղթելու դեպքում՝ տկարացնել իր մանր հարևաններին, որ երբեմն հպատակ էին մահիկին:

Մինչդեռ վայրկյանը շատ նպաստավոր է: Մարդ ու դրամ զոհել չուզող եվրոպան այսօր հնարավորություն ունի Բալկանյան միացյալ գորաբանակը դարձնել պողպատե բռունցք և նրանով հարկադրել Թյուրքիային տանելի կարգեր հաստատելու Բալկանյան նահանգներում:

Երբ Թյուրքիան տեսնի մի անկեղծ համերաշխություն մեծ ու փոքր պետությունների միջև և մեծերի գրավոր պահանջին նեցուկ դարձած փոքրերի զինական ուժը, այն ժամանակ նրան մի ելք կմնա-զիջել:

Սակայն մենք դեռ չենք նկատում այդ անկեղծ համերաշխությունը և անհավանական չէ, որ արյունը հոսե առումներով, կռվող կողմերը տնտեսապես քայքայվին ու թուլանան, բայց քրիստոնյա ազգաբնակության վիճակը մնա անփոփոխ:

Հորիզոն, 1912, № 209

Բալկանյան թերակղզում

Պատերազմական գործողություններն արդեն սկսված են և Սև լեռնցոց առաջին քայլերը հաջող են անցել. նրանք արդեն ռմբակոծել են տաճկական մի դիրք, գրավել են և զորքը՝ թնդանոթների պաշտպանության տակ՝ առաջանում է դանդաղ:

Բալկանի մյուս պետությունները թեև պաշտոնապես դեռ պատերազմ չեն հայտարարել, բայց սահմանագլուխների վրա խլրտումներ են նկատվում: 150 բուլգարներից կազմված մի հրոսակ արդեն հարձակվել է թուրք սահմանապահ բերդակներից մեկի վրա, թեև հաջողություն չի ունեցել:

Պատերազմի պայմանները շատ աննպաստ են դառնում Տաճկաստանի համար մանավանդ այն պատճառով, որ կռվի վայրում քրիստոնյա ազգաբնակչությունը ապստամբում է տեղ-տեղ և տաճիկ զորքերը պիտի գործ ունենան ոչ միայն թշնամի տերությանց կանոնավոր բանակների հետ, այլև ապստամբ ժողովրդի հրոսակախմբերի հետ:

Տաճկաստանը գիտակցում է իր կացության ծանրությունը և դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Թյուրքիան շտապել է գոհացում տալ մալխոորներին՝ հարկերի և զինվորագրության խնդրում զիջումներ անելով նրանց և փոխարենը խոստում առնելով, որ նրանք աջակցեն թուրք կառավարության՝ այս ծանր ճգնաժամին:

Միաժամանակ թվում է, թե նա որոշել է հաշտություն կնքել Իտալիայի հետ, որպեսզի ազատվելով այդ չարաբաստիկ պատերազմի մտահոգությունից՝ վստահությամբ և համարձակ դեմ դնել կարողանա Բալկանյան տերությունների միացած գրոհին:

Տաճկաստանը դեմ է եվրոպական միջամտության. միջամտությունը նա համարում է բռնաբարում իր անկախության, բայց չնայած դրան՝ եվրոպական մեծ պետությունները, հիմնվելով Բեռլինի դաշնադրության վրա, սեպտ. 27-ին իրենց միացյալ նոտը ներկայացրել են տաճիկ կառավարության:

Մյուս կողմից՝ թեև մեծ պետությունները պաշտոնապես իրանց ձեռնպահ են հայտարարել այս կռվում, բայց նրանց ազատ քաղաքացիներն արդեն համակրանք են հայտնում Բալկանի մանր տերություններին. Մոսկվայում սկսել են դրամ հանգանակել Տաճկաստանի սլավոն ժողովուրդների օգտին, իսկ Անգլիայից, Ֆրանսայից, Ավստրիայից և

Ռուսաստանից Կարմիր - խաչի խմբեր են գնում պատերազմի դաշտը-Սև լեռնցոց օգնելու:

Բոլոր նշանները ցույց են տալիս, որ եվրոպան լքել է Թյուրքիային և Սուլթանների երկիրը ստիպված է օրհասական կռիվ մղելու Բալկանյան մանր պետությանց դեմ, որոնց միացնում է մի դարավոր ատելություն դեպի թյուրքը և որոնց նպաստում են մեծ պետություններն իրենց ձեռնպահությամբ և նրանց քաղաքացիներն իրենց համակրանքով:

Հորիզոն, 1912, № 213

Թյուրքիան և հայերը

Բալկանյան պատերազմը մի կողմից հույսեր է արթնացրել եվրոպական Տաճկաստանի քրիստոնյա ազգաբնակչության մեջ, մյուս կողմից բուլղորովին խանգարել է կարգը հայկական բարձրավանդակի վրա:

Մինչդեռ թյուրքահպատակ սերբը, բուլգարն ու հույնը սպասում են սրտատրոփ այն օրինյալ օրվան, երբ վերջապես կազատվեն Թյուրքիայի անիրավ կարգերից և դարավոր բռնություններից, Թյուրքիայի հայերը զիջերն անկողին են մտնում նոր ջարդերի սարսափով և առավոտը արթնանում են տագնապալից օրվա համար:

Օգտվելով քաղաքական խառն կացությունից, որ առանձնապես շեշտվեց սահմանադրության վերականգնումի օրերից ի վեր, քյուրդերը նորից և մեծ չափերով սկսել են իրենց շահատակությունները հայերի հաշվին:

Սահմանադրական Թյուրքիայի ներքին կացությունը շատ կնճռոտ է այս կողմերում: Այստեղ իրար մոտ ապրում են երկու ժողովուրդ՝ հայն ու քյուրդը, որոնք շահերով հակամարտ՝ տարբեր պահանջներ ունեն թյուրք կառավարությունից:

Մինչդեռ հայերը պահանջում են անձի, ինչքի և պատվի ապահովություն և հողային բարդ խնդրի արդար կարգավորում, քյուրդերը նոր կարգերը համարում են հակառակ իրենց բնույթին ու կենցաղին և հայերի պահանջները նկատում են իրենց ավանդական ազատության սահմանափակում:

Սահմանադրական Թյուրքիան մի կողմից դժվարանում է զսպել ավազակաբարո քյուրդ ցեղերին և նրանց ազդեցիկ ցեղապետներին, վախենալով ստեղծել մի նոր Ալբանիա այն երկրում, ուր մինչև այժմ նա

ունեցել է մի պատրաստական զինված բազմություն: Մյուս կողմից նա չի կարողանում անտես անել հայերի արդար պահանջները, որ բխում են սահմանադրության տարրական տրամադրություններից, որովհետև այդ կնշանակե երես դարձնել հայերից, որոնք մեծագույն զորավիզն են եղած ազատական կարգերի:

Այս չորս տարվա ընթացքում նոր Թյուրքիան չհամարձակվեց խստորեն զսպել քյուրդերին, վախենալով զինել նրանց իր դեմ մի այնպիսի ժամանակ, երբ անհանգիստ էր եմենը, պատերազմ էր հայտարարել Իտալիան և հարձակում էին պատրաստում Բալկանի մանր պետությունները, որոնք և առաջ բերին մի նոր ու վտանգավոր պատերազմ քյուրդերի համար:

Իսկ գոհացում չտալ հայերին՝ այդ նույնպես շատ անհարմար կլինենր, քանի որ նրանք ևս կարող էին շարժվել և իրենց խլրտումներով հրավիրել հարևան Ռուսաստանի միջամտությունը, որից այնքան սարսափում է Թյուրքիան:

Թյուրքերը անտես չէին կարող անել նաև իրենց հույսերը այդ երկու տարրերից մեկի և մյուսի վերաբերմամբ: Նրանք վստահ են, որ մի նոր ռուս-տաճկական պատերազմի դեպքում Թյուրքիան կարող է հենվել քյուրդ ցեղերի վրա, մինչդեռ նույն չափով հավատացած են, որ հայերը զենք չեն առնի մի տերության դեմ, որի սահմաններում իրենց ցեղակիցները գոնե չեն կոտորվում անիրավաբար:

Ահա թե ինչով պետք է բացատրել այն անվստահ և տարտամ քաղաքականությունը, որ Թյուրքիան հանդես է բերում հայերին զինելու և քրդերին զսպելու խնդրում:

Նա մի կողմից զենք է բաժանում հայերին, որ ցույց տա, թե իրավացի է համարում նրանց պահանջները, մյուս կողմից շատ ավելի մեծ քանակությամբ զենք է ցրում քյուրդերին, որ ցույց տա, թե դեմ չէ քրդության: Թյուրքիան չի վստահում հայերին և վախենում է, որ մի օր հայերն այդ զենքը իր դեմ դարձնեն, մինչդեռ լիովին հավատում է քրդերին, որ նրանք ռուս-տաճկական պատերազմի դեպքում այդ զենքը գործ կածեն ռուսի դեմ, իսկ հայերի ապստամբության դեպքում՝ նրանց բնաջինջ անելու համար:

Թյուրքիան ստիպված է ընտրություն անել հայի և քյուրդի միջև և կշռելով բոլոր հանգամանքները՝ նա դժվարանում է համարձակ ու որոշ քաղաքականության հետևել իր ներքին կյանքում:

Նրա տարտամության նպաստում է և մի ուրիշ, շատ կարևոր հանգամանք, որի մասին մենք կխոսենք մյուս անգամ:

Անցյալ անգամ մենք հիշատակեցինք մի քանի պատճառներ, որոնք Թյուրքիայի ներքին քաղաքականությունը հայ տարրի վերաբերմամբ դարձնում են տարտամ և անվճռական, բայց դրանք չեն մատնանշած երևույթի միակ պատճառները:

Կա մի շատ ավելի մեծ և նշանակալից մտահոգություն, որ քյուրդերի քաղաքականությունը հայ տարրի պաշտպանության խնդրում դարձնում է վեհերոտ: Դա Չայոց հարցն է կամ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը:

Դեռևս 1878 թ., երբ կազմվում էր Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, հայ ու քյուրդ մրցում էրն իրար հետ. հայերն աշխատում էին ցույց տալ, որ իրենք մի պատկառելի թիվ են կազմում հայաբնակ մահանգներում, քյուրդերը ճգնում էին պնդել հակառակը:

Չայերը հիմնված իրենց թվի վրա խնդրում էին հատուկ հողվածով ապահովել իրենց շահերը և նրանց պաշտպանությունը հանձնել հաղթող պետության, քյուրդերը պահանջում էին, որ նման հողված մուտք չգտնի դաշնագրի մեջ:

Չնայած Թյուրքիայի ջանքերին, հայոց խնդիրը հարզվեց և դաշնագրի մեջ մտավ մեզ համար այնքան կարևոր 16-րդ հոդվածը: Դաշնագիրը վերաքննվեց Բեռլինում և նույն հողվածը դեմքը շրջելով դարձավ 61-րդ, բայց և այնպես մտավ նոր դաշնագրի մեջ և նրա իրագործման վրա այս անգամ պիտի հսկեին եվրոպական վեց մեծ պետությունները միասին:

Չայոց հարցը ստեղծված էր և ստացել էր միջազգային բնավորություն: Մեծ պետությունները իրավունք էին ձեռք բերում՝ ամեն անգամ, երբ հարմար դատեն՝ միջամտեն Թյուրքիայի ներքին գործերին թե եվրոպական Տաճկաստանում, թե ասիական Թյուրքիայում, մեկի համար կռվան էր 23-րդ հողվածը, մյուսի համար՝ 61-րդը:

Այդ միջամտությունից ազատվելու համար քյուրդերին մնում էր երկու ճանապարհ. կամ շուտով իրագործել այդ հողվածների տրամադրությունները լի ու լի և դրանով վերացնել միջամտության ամեն առիթ, կամ թե նույն նպատակին հասնել վերացնելով այդ հողվածների գոյության իրավունքը, նրանց առարկան՝ Թյուրքիայի քրիստոնյաներին:

Թյուրքիան ընտրեց երկրորդ ճանապարհը և Սուլթան - Չամիդ II-ի երկարատև թագավորության ընթացքում ամեն կերպ հետամուտ եղավ քրիստոնյա տարրի բնաջնջման այն շրջաններում, որոնց վերաբերում էին այդ երկու չարաբաստիկ հողվածները՝ Մակեդոնիայում և Չայաստանում:

Հին Թյուրքիան ուրիշ կտրուկ ու խելացի քաղաքականություն չէր կարող ունենալ. մի կողմից նա գոհացում էր տալիս թյուրք ցեղի արյունարբու բնազդներին, մյուս կողմից նա նվազեցնելով քրիստոնյա տարրը տեղ էր պատրաստում թյուրք ու մահմեդական ժողովուրդների համար:

Նրա մտահոգությունն էր ստեղծել միապաղաղ Թյուրքիա, ուր ոչ մի առիթ չլիներ որևէ արտաքին միջամտության. և ահա պետական գանձարանը ահագին միջոցներ էր վատնում և հարևան երկրներից մահմեդական գաղթականներ հրավիրելով՝ բնակեցնում նրանց քրիստոնյա ազգաբնակչության մեջ ցան ու ցիր և ամեն կերպ հովանավորում նրանց:

Այսպես ուրեմն՝ խոսելով մեր մասին՝ Թյուրքիան մի կողմից ջարդում էր հայերին հարյուր հազարներով, ստիպում էր գաղթել տասնյակ հազարներով և անտեր մնացած հողերը տալիս էր մահմեդական գաղթականներին: Այդ էր **կառավարության** քաղաքականությունը:

Եկավ նոր Թյուրքիան: Նոր կառավարությունը խուսափում էր խմբական ջարդերից, ոչ թե հայերի ապստամբությամբ մտահոգ, այլ որ արգելք դառնա հայոց խնդրի վերարժարծումին:

Մակեդոնական և հայկական խնդիրը նա ուզեց նկատել Թյուրքիայի ներքին խնդիր և շտապեց հայտարարելու, որ Բեռլինի դաշնագիրը կորցնում է իր գոյության իրավունքը:

Թյուրքիայի քրիստոնյա տարրերը համբերությամբ սպասեցին իրերի ընթացքին՝ միշտ նպաստավոր ելքի ակնկալումով, որ երբեք չհասավ: Այնուհետև մակեդոնացիք փոխեցին իրենց ընթացքը, իսկ հայերը հավատարիմ մնացին Թյուրքիային: Բայց թե հավատարիմ և թե անհավատարիմ տարրերը նույն վերաբերումին արժանացան:

Անապահովությունը, մասնակի սպանությունները սովորական էին թե Մակեդոնիայում, ուր գործում էին հրոսախմբերը, թե Հայաստանում, ուր հայերը գնում էին նոր թյուրքերի հետ ձեռք ձեռքի:

Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածի չճանաչելը Թյուրքիային հասցրեց Բալկանյան օրհասական պատերազմին, որ սպառնում է նրա գոյությանը՝ եվրոպական ցամաքի վրա: Հայերը շարունակում են մնալ օրինապահ, բայց նույնիսկ այսպիսի մի ժանր կացության մեջ Թյուրքիան քաջություն չունի վճռականորեն փոխելու իր քաղաքականությունը:

Հայերի դեմ նա ունի քյուրդերի զինված և ավազակաբարո խուժանները երկրի ներսում և եվրոպական պետությանց անհամաձայնությունը երկրից դուրս: Բայց քանի որ անհնարին է առաջուց կշռել քաղաքա-

կան պատահարների ընթացքը, հնարավոր զարգացումն ու նպաստավոր կամ աննպաստ ելքը, ուստի նա գերադասում է մեծ խլրտումների տեղիք չտալ հայկական բարձրավանդակի վրա, որ դրանով նորից հրապարակ չգա հայոց հարցը, որից այնքան խուսափում է Թյուրքիան:

Հին ձգտումը՝ հայերից մաքրված տեսնել հայաբնակ վիլայեթները, թեև չի կազմում այսօրվա սահմանադրական **կառավարության** ներքին քաղաքականության մղիչը, գոնե նա չէ արտահայտում այնպես ցայտուն ու շնական, ինչպես Աբդուլ Համիդ II-ի ժամանակ, բայց այդ միտումը դեռ շատ խորարմատ է թյուրք վարիչ մարդկանց մտածողության մեջ. դրանով պետք է բացատրել մի կողմից մասսայական ջարդերի դադարումը, մյուս կողմից հատվածական սպանությունների վրա մատի արանքից նայելը:

Որքան թույլ ու սակավաթիվ լինի հայ տարրը, այնքան լավ՝ մինչև իսկ նոր Թյուրքիայի համար: Եվ երբ հարցն այսպես է դրվում՝ ասպատակող ու սպանող քրդե՞ր, թե աշխատասեր ու խաղաղ հայ ազգաբնակչություն, թյուրք թե հին և թե նոր վարչությունը վճռում է այսպես. քյուրդը ավելի գերադասելի է, քան հայությունը, որովհետև առաջինը դավանակից է, խնդիր չունի, իսկ երկրորդը այնուամենայնիվ այլադավան է և կարող է միշտ խնդիր հարուցել, լինի դա միջազգային մի դաշնագրի հիման վրա, ինչպես Բեռլինին է իր 61-րդ հոդվածով, թե իբր մշակութապես բարձր ու անդրազույն զարգացման ընդունակ և տենչացող մի տարր:

Ահա թե ինչու Թյուրքիան անկեղծորեն չի կարողանում հայ տարրի բարեկեցությունը իր մտահոգության առարկան դարձնել:

Բայց կան դեռ երկու ուրիշ մտահոգություն – հայրենիքի և սահմանադրության խնդիրները:

* * *

Անցյալ անգամ մենք ասացինք, որ Թյուրքիան ունի երկու ուրիշ մտահոգություն, որոնք նրա քաղաքականությունը հայերի վերաբերմամբ դարձնում են տարտամ ու վեհերոտ-դրանք են հայրենիքի և սահմանադրության մտահոգությունները:

Հայտնի է, որ թյուրքերը Տաճկաստանում բնիկներ չեն. նրանք եկել են Միջին Ասիայից և բնակություն հաստատել այնպիսի երկրներում, ուր դարեր շարունակ ծաղկել ու թոշնել են մեծ քաղաքակրթություններ:

Թեև նրանք բնիկներ չեն իրենց երկրում, բայց հինգ հարյուր տարուց ավելի է, որ նրանք ապրում են այնտեղ, տարել են շատ հաղթանակներ, մղել են բազմաթիվ պատերազմներ, կատարել են հաջող արշավանք-

Եւր այդ երկրի ամեն կողմերում, մի խոսքով ստեղծել են Օսմանյան հաղթական պատմությունը և կապված են այդ երկրի հետ իրենց դարավոր պատմությամբ:

Թափառական հորդաններն այսօր դարձել են ժողովուրդ, զինվորական տերությունը՝ մի պետություն նոր մտքով՝ թեև շատ անկատար և արատավոր. խուսափելով ավելի հզոր հարևանների հետապնդումից՝ թյուրքերը կանգ են առել մեր երկրում և Անատոլիան դարձրել իրենց բնակավայրերը:

Նրանք մտել են մեր երկիրը իբր վաչկատուն ցեղերի մի բազմություն, անծանոթ ու անհաղորդ քաղաքակրթության և իրենց երկարատև պատմության ընթացքում նրանք չեն ստեղծել և ոչ մի քաղաք:

Քաղաքակրթությունը իբր օտար երևույթ այդ վաչկատուն ցեղերի մտայնության՝ արժեք ու նշանակություն չի ստացել նրանց աչքում և նրանք չեն խնայել բազմաթիվ ազգերի դարավոր ճիգերի արդյունքը:

Ժամանակի ընթացքում նոր բնակավայրը դարձել է բնավայր, նոր տիրած երկիրները՝ հայրենիք, որ առատ ու ընդարձակ արոտներ է մատակարարում նրանց հոտերին, ոսկի և փարթամություն նրանց սուլթաններին, ծրի աշխատանք՝ նրանց մեծավորներին և սիրուն կանայք՝ նրանց հարեմներին:

Թյուրքերին պետք է մի կայուն հայրենիք, մանավանդ այսօր. և Անատոլիան, դրա հետ նաև Հայոց բարձրավանդակը նա միշտ նկատել է իր հայրենիքը:

Վաղուց է արդեն, որ եվրոպան վանում է թյուրքերին դեպի Ասիա. անջատելով մեծ ու փոքր հատվածներ նրա ընդարձակ կավածներից՝ եվրոպան պատվար կանգնեց թյուրքերի առաջացման՝ ստեղծելով Բալկանի մանր պետությանց շղթան:

Թյուրքերին մնում էր եվրոպական Տաճկաստանի մի մասը, բայց մանավանդ Անատոլիան: Անշուշտ մնում էին նաև Միջագետքի ընդարձակ տափաստանները, բայց նրանց դրախտ դարձնելու գաղտնիքին թյուրքերն օտար են. ստեղծագործական աշխատանքը մինչև այսօր անծանոթ մնաց այդ ցեղին:

Հասկանալի է, որ այս պայմաններում գտնվող մի ժողովուրդ ամեն ճիգ պետք է գործ դնե իր ձեռքին պահելու մի երկիր, որ իր հայրենիքն է համարում, որի գովքը երգում են իր բանաստեղծները և ուր հանգչում են իր բազմաթիվ նախորդների նշխարները:

Անատոլիան միակ հուսավայրն է թրքության: Եթե բալկանյան պատերազմի հետևանքով նա ստիպված լինի թողնել եվրոպան՝ նրա միակ

ապաստանը մնում է Անատոլիան և նրա հետ մեր երկիրը:

Թյուրքերն այդ շատ լավ են գիտակցում և ահա թե ինչու Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածը նրանց սոսկում է ազդում ոչ միայն իր ներկա բովանդակությամբ, այլ մանավանդ այն հնարավոր զարգացումով, որ կարող է ստանալ հայոց խնդիրը մեր բնակավայրում:

Եվ թյուրքերն աշխատել ու աշխատում են, որ Անատոլիան դառնա Թյուրքիա, ոչ միայն իբր քաղաքական միություն, այլ մանավանդ իբր մի ցեղագրական ամբողջություն: Նրանք ուզում են Թյուրքիան տեսնել միապաղաղ թյուրք ազգաբնակությամբ:

Սրանով և մեկնվում են մասսայական ջարդերն անցյալում և հայ տարրի կոտորվելուն հանդուրժելը ներկայում:

* * *

Մեզ մնում է պարզել այն դերը, որ խաղում է սահմանադրության պահպանումի մտահոգությունը Թյուրքիայի ներքին քաղաքականության մեջ հայերի վերաբերմամբ:

Բոլոր «լուսամիտ» թյուրքերն արդեն գիտեն, որ հին կարգերով մի Թյուրքիա անկարող է տոկալ եվրոպական գրոհի և միջազգային բարդ ուստայնի մեջ: Ուստի անհրաժեշտ է դառնում սահմանադրությունը, որ միակ դարմանն է հիվանդ Թյուրքիայի նախ ապաքինման, ապա՝ վերականգնումի:

Սահմանադրությունը, սակայն, իր զորավոր թշնամիներն ունի թե երկրի ներսը և թե դրսում: Առանց խոսելու թյուրք հոծ խուժանների մասին, որոնք շարունակում են մնալ անկիրթ ու անհաղորդ եվրոպական լուսավորության և քաղաքացիական զարգացման, ուստի և հակառակ նոր կարգերին - թյուրք սահմանադրությունը հաճելի չէր Սերբիային, Բուլղարիային, Հունաստանին և Չերնոգորիային, որովհետև սահմանադրությամբ Թյուրքիան կարող էր վերականգնել իր վաղեմի առողջությունը և դառնալ մի վտանգավոր հարևան: Վերանորոգված Թյուրքիան կարող էր հետամտել revanch-ի քաղաքականության և նկրտեր նորից ձեռք ձգելու այն երկիրները, որ կորցրել էր ժամանակի ընթացքում:

Արթնացող Թյուրքիան մի սպառնալիք էր նաև ուրիշ հարևան ու հեռավոր մեծ պետությանց համար:

Եվ ահա Բալկանի մանր տերությունները՝ ինքնապաշտպանության բնական մղումով տարված՝ միասնաբար որոշեցին մի գործը հարված հասցնել իրենց դարավոր ոսոխին, նկատելով նրա ապաքինման նշանները: Նրանց ամեն հաղթանակը համակրանքի արծազանք է գտնում

նրանց թյուրքահպատակ ցեղակիցների սրտերում:

Երիտասարդ թյուրքերին պետք է սահմանադրությունը՝ դա ոչ միայն անհրաժեշտ է նրանց հայրենիքին, այլև անձամբ իրանց. նրա շնորհիվ է, որ նոր թյուրքերը այն են, ինչ որ են. և սահմանադրությունն է նրանց անհատական ապահովության միակ գրավականը: Անձի և հայրենիքի շահերն այստեղ նույնանում են և երիտասարդ թյուրքերի գործունեության հաղորդում են մի անսովոր կորով:

Արդ, միակ տարրը, որ անկեղծորեն փարած է սահմանադրության՝ դա հայությունն է Թյուրքիայում: Նա ևս իր ազգային ու անհատական շահերը և սահմանադրության գոյության անհրաժեշտությունը նույնացած է գտնում և նոր թյուրքերը իրենց ոգևորումների մեջ՝ սահմանադրության համար՝ բնական ու հավատարիմ դաշնակիցներ են գտնում հայ տարրի և նրա մտավորականության մեջ: Հայերն էին, որ նրանց հետ Փարիզի համաձայնությունը կնքեցին, նրանք էին, որ զորավիզ ու օժանդակ դարձան նոր շարժման, նրանք են, որ փարած են մնում սահմանադրության, ապա ուրեմն, անուղղակի կերպով, նաև Թյուրքիայի վերածնության:

Թյուրքերը զմահատում են հայերի այդ դերն ու նշանակությունը և աշխատում են աննշան գոհացումներով հանգստացնել հայերին:

Թյուրքերի տիրական մտահոգությունը հայրենիքի հարցն է կազմում. Սահմանադրության պաշտպանությունը նրա հառաջդիմության գրավականն է, իսկ հայերին հովանավորելը պետք է այն չափով և այնքան ժամանակ, որ մի կողմից հայ տարրը չդառնա մի պատկառելի ույժ, մյուս կողմից թյուրք տարրն ինքն ընդունակ դառնա նոր կարգերին նեցուկ լինելու:

Ահա թե ինչու Թյուրքիան մի կողմից մատի արանքով է նայում հայերի մասնակի սպանություններին և մյուս կողմից աննշան դյուրություններ է տալիս նրանց:

Այսպիսով հայաբնակ նահանգների խլրտման երկյուղը, դեպի հայերն ունեցած անվստահությունը, հայոց հարցի վերարժարծման մտահոգությունը, եվրոպական միջամտության սարսափը և միապաղաղ հայրենիքի տենչը, միացած սահմանադրության պահպանումի հոգսերը՝ Թյուրքիայի քաղաքականությանը հայ տարրի վերաբերմամբ տալիս են երկդիմի կերպարանք:

Մինևույն մտահոգությունները, որ ստիպում են Թյուրքիային հովանավոր ձևանալ հայերին, նույն մտահոգությունները թելադրում են նրան կտրական միջոցների չդիմելու հայերին պաշտպանելու գործում

և աներկդիմի հոգատարությամբ արգելք չդառնալու հայ տարրի փչացումին՝ լինի դա մասնակի սպանություններով թե ահաբեկ գաղթականությամբ:

Նոր Թյուրքիան հետապնդում է հին Թյուրքիայի վաղեմի նպատակներին, բայց այն ձևով, որ ոչ հայերը վնասակար գործողությունների հիմքեր ունենան, ոչ եվրոպան միջամտելու առիթ:

Եվ այսպես հայությունը զոհ է դառնում Թյուրքիայի ազգային քաղաքականության:

Հոդված, 1912, № 226, 228 – 230

Քաղաքական նոր հեռանկար

Որքան Բալկանի մանր պետությունների զորքը հաջողություններ է ունենում, այնքան իրենց խոսելու տոնը փոխում են մի կողմից այդ տերությունները, մյուս կողմից եվրոպական մեծ պետությունները: Ջինված ուժը թափ է ներշնչում փոքրերին և ակնածանքի հրավիրում մեծերին:

Մի տաս օր առաջ Ավստրիան հոխորտանքով հայտարարում էր, թե նա թույլ չի տա որևէ նոր հողային գրավում Թյուրքիայի հաշվին և Բալկանի մանր տերություններին ի նպաստ. դեռ նոր էր, որ մեծ պետությունները բարձրաբարբառ հայտնում էին, որ ամեն զնով պետք է անփոփոխ թողնեն Բալկանյան թերակղզու այսօրվա քարտեզը և վայրամփոփ պահեն պատերազմը. այսօր միացյալ բանակների հաղթանակները փոխել են տալիս քաղաքագետների դյուրաշարժ լեզուն և նրանք ուրիշ ոճով են խոսում:

Ոչ ոք այլևս չի հավատում այսօր, թե հնարավոր է անխախտ պահպանել status quo-ն (դրությունն այնպես, ինչպես որ կա): Ավստրիան, որ լսել անգամ չէր ուզում Նովո-Բազարի սանջակը հարևան սերբերին ու չերնոգորցիներին թողնելու մասին, այսօր այլևս քաջություն չի զգում նույն հոխորտանքով խոսելու:

Նրանց ազդեցիկ թերթերից մինը՝ «Նոյե-Ֆրայե-Պրեսսե» հարցը դնում է շատ մեկին. Բալկանյան դաշնակցության թե՞ր, թե դեմ. և վճռում է դրամական մտքով՝ Սերբիայի հետ համաձայնության զալ առևտրի շահերն ապահովելու համար և վեճի չբռնվել «Տաճկաստանի իրավական ժառանգների հետ»: Այսօր մինչև իսկ ճանաչում են, որ ոչ միայն Սանջակի, այլև Թյուրքիայի եվրոպական կալվածքների ժառանգորդը

Բալկանյան դաշնակցությունն է...

Հունաց առաջին նախարար Վենիզելոսը, որ այնքան դեր է խաղացել Բալկանյան դաշնակցությունը ստեղծելու գործում, հայտնում է պարզ ու մեկին, որ Բալկանի մանր տերությունները համաձայն են ընդունելու մեծ պետությունների առաջարկները, եթե նրանք ներկայացվեն դաշնակից տերությունների վեհաժողովին և եթե չհակասեն բալկանյան պատերազմի սրբազան նպատակներին:

Այս նշանակում է, որ մեծ պետությանց առաջարկները առնվազն պետք է ընդունեն եվրոպական Տաճկաստանի ինքնօրինությունը, եթե շատ նկատեն նրա անդամահատումը դաշնակից տերությանց միջև:

Բուլգարները պահանջում են, որ Թյուրքիան ձայն չունենա Մակեդոնիայի և հարակից շրջանների վիճակի կարգավորման գործում. սրանից հետևում է, որ նրանք ուզում են խնդրի լուծումը թողնել Բալկանի հաղթող մանր պետություններին և առ առավել նաև մեծ տերություններին: Նրանք ուզում են լինել նվաճողի դերում և վայելել նվաճողի իրավունքներ, այսինքն իրենց պայմանները թելադրել Թյուրքիային:

Բայց ամենից նշանակալիցը այն նշանաբանն է, որ արդեն հնչում է Բալկանի վրա. «Բալկանյան թերակղզին Բալկանի մանր պետություններին»: Անհունապես մեծ է այս նշանաբանի արժեքը միջազգային հարաբերությունների համար, մանավանդ որ նա հնչում է 600 000 զինավառ կրծքերից և առնվազն տասն անգամ ավելի ազգաբնակչության բերանից:

Եվրոպան զգում է այդ կոչի ամբողջ կարևորությունը և ամենից շահագրգռված պետությունները, Իտալիան և Ավստրիան՝ կամաց կամաց հակվում են ընդունելու նրա իրավական հիմունքները:

Բալկանի դաշնակցությունը ժամանակավոր չէ, ասում են մանր պետությունները, նրա բուն նպատակն է Բալկանյան թերակղզին պահել համերաշխած մանր տերություններին և այդպիսով պատվար կանգնել գերմանական խուժումի դեմ: Եվ այս տրամադրությունը զնալով դառնալու է ավելի ցայտուն և տիրական՝ համերաշխ զենքի ամեն մի նոր հաղթանակի հետ:

Չեխ Կրամարժ մի տաս օր առաջ խորհուրդ էր տալիս Ավստրիային ձեռք քաշել Սանջակը գրավելու մտքից և առևտրա-քաղաքական դաշինք կապելով Սերբիայի հետ՝ ապահովել իր տնտեսական շահերի զարգացումը: Բայց մի հինգ օր առաջ նույն Կրամարժը արդեն խոսում էր շատ ավելի ծանրակշիռ բառերով: Ավստրիան չպիտի մոռանա, ասում էր նա, որ Բալկանի ազատագրական պատերազմը արձագանք է

զտնում իր 25 միլիոն սլավ ազգաբնակչության սրտում: Այսօր դրան կարելի է ավելացնել սլավներին օգնություն հասցնելու գործը, որ չեխերի մեջ ստացել է համազգային կերպարանք: Չեխերի խորհուրդը Ավստրիային՝ բարյացակամ աչքով նայել սլավների շարժման, որ արտահայտեցին և չեխ սոցիալ-դեմոկրատները և չեխ կաթոլիկները խորվաթ պատգամավորների հետ միասին: Սա ավել է, քան մի պարզ համակրություն, սա արդեն սպառնալիք է: Եվ Ավստրիան փոխում է իր հոխորտ քաղաքականությունը՝ վախենալով ներքին անախորժություններից...

Այս տրամադրությունը զորանում է մի ուրիշ նշանակալից հայտարարությամբ, որ լսվում է Բալկաններից - Եվրոպան, որ չկարողացավ հարկադրել Թյուրքիային իրագործելու Բեռլինի դաշնագրի մի հոդվածը (§ 23), ավելի ևս անկարող կլինի ստիպելու, որ Բալկանի մանր պետությունները հրաժարվեն իրենց արյունով ու զոհաբերություններով ձեռք բերած արդյունքներից: Միացյալ բանակը 600,000 մարդ ունի և այդ հանգամանքը պետք է հաշվի առնել:

Մինչև այժմ մեծ պետությանց հակամարտությունից օգտվում էր Թյուրքիան և անպատասխանատու իր ընթացքին՝ կոտորում էր իր քրիստոնյա հպատակներին, ավարում նրանց ինչքը և պղծում պատիվը: Եթե այդ հակամարտությունը շարունակե մնալ, այս անգամ նրանից կօգտվին մանր պետությունները՝ վերականգնելով քանդածը, պաշտպանելով սեփականությունը և արդար վաստակը և ապահովելով ազգաբնակչությունը անարգանքներից: Մեծ պետությունները իրենց հակամարտությամբ Թյուրքիայի ձեռքով ավերեցին այնքան տնտեսություններ և կոտորել տվին այնքան խաղաղ ազգաբնակչություն, մանր պետություններն իրենց համերաշխությամբ կապահովեն կարգը Բալկաններում և կստեղծեն գոյության տանելի պայմաններ:

Ինչ կերպ էլ վճռվի եվրոպական Թյուրքիայի խնդիրը, դառնա նա ինքնօրեն մի նոր պետություն թե անդամահատվի եղած չորս պետությանց միջև, երկու դեպքում էլ թյուրքը քաշվելու է եվրոպական ցամաքի ամենաարևելյան անկյունը, եթե ենթադրենք, որ Պոլիսը իր ձեռքում մնա:

Իսկ Բալկանի թերակղզին դառնալու է մի դաշնակցական պետություն կազմված չորս կամ հինգ (եթե Մակեդոնիան չանդամահատվի) մանր պետություններից, որոնք իրար հետ կապված կլինեն առնվազն միասնական հարձակումի և պաշտպանության պարտավորություններով:

Բալկանյան պատերազմը ցույց տվեց, որ համերաշխության գաղափարն է բալկանյան կնճռի իսկական լուծումը. հույն ու բուլգար, որ մի քանի տարի առաջ անգթորեն կուրացնում էին միմյանց՝ փոխադարձաբար իրար աչքեր փորելով, այսօր պատերազմի ասեղ դաշտում ընդունում են արյան մկրտություն և տեսնում են, որ համերաշխությունը անդամալուծում է այն ոսոխին, որ ամեն մեկի համար առանձին առած՝ շատ էր սոսկալի և հզոր:

Բալկանի պատերազմը եկավ համերաշխության գաղափարը գամելու ամենքի գլխում և այս դաշնակցությունը՝ հաղթական պատերազմից հետո՝ ավելի ևս ամրապնդվելու է Բալկանի վրա:

Քաղաքական այս նոր ազդակը մեծապես փոխելու է եվրոպական քաղաքականությունը մերձավոր արևելքում. դա մի նոր ուժ է, որ պիտի այսուհետև հաշվի առնվի: Այս նոր ազդակը ամենից ավելի սպառնալից է Ավստրիայի համար, որի սահմաններում ապրում են 25 միլիոն սլավներ, որոնք սպառում են իրենց ուժերը ազգային ինքնությունը պաշտպանելու ճիգերով մի պետության մեջ, որին տոն է տալիս գերմանական տարրը:

Բալկանի հաջողությունները կանդրադառնան նրանց ներքին և քաղաքական վիճակի վրա և անհավանական չէ, որ նրանք աստիճանաբար հակվին դեպի ցեղակից սլավ պետությանց հզորացող դաշնակցությունը... Այդ հակումը ամենից ուժեղ կարտահայտվի անշուշտ Բոսնիայում և Չերցեգովինայում, որ նոր միայն ավստրիական նահանգներ դարձան:

Նոր կազմված դաշնակցությունը, որի ամեն մի օղակը իր այսօրվան վիճակով և իր գոյությամբն իսկ պարտական է ռուսաց ազատարար պատերազմներին և ռուս դիվանագիտության հաճախակի պաշտպանությանը՝ անշուշտ մշտական հակում կունենա դեպի մեր լայնածավալ կայսերությունը. դրանով նա ավելի պատկառելի կդառնա, իր հերթին նոր ուժ ու հմայք հաղորդելով Ռուսաստանի միջազգային կացության և դերին թե համանվիրական խնդիրներում և թե մանավանդ Մերձավոր Արևելքում:

Այսպիսով բալկանյան պատերազմը ավետում է մի նոր ու հզոր դաշնակցության ծնունդ և մի հին ու բռնակալ պետության անկում ու քայքայում:

Յորիզոն, 1912., № 231

Մինչդեռ խաղաղության բանակցությունները շարունակվում են Չաթալջայի ռազմադաշտում և Նազըմ փաշան հյուրասիրում է բուլգար պատվիրակներին, եվրոպական Թյուրքիայի աստիճանական գրավումը շարունակվում է:

Երկու օր առաջ գրել էինք, որ կիսանկախ Սամոսն անշուշտ չի դանդաղի կամովին միանալու Յունաստանին. այսօրվա հեռագիրը հաստատում է մեր ենթադրությունը: Կղզու ազգային ժողովը որոշել է կամովին միանալ Յունաստանին և հույն ազգային դրոշը ծածանում է նահանգապետի տան գլխին:

Միաժամանակ հույները շարունակում են առաջ տանել Քիոս մեծ կղզու նվաճումը, հալածելով թյուրք զորքերին, որոնք ստիպված կլինին անձնատուր լինելու, որովհետև նահանգի հնարավորություն չունին, իսկ հույն զորքերը գերակշռում են իրենց թվով:

Յույները հաջողություն են ունեցել նաև Ալբանիայում. նրանք գրավել են Կաստորիան, որ գտնվում է համանուն լճակի ափին՝ Վիստրիցա գետի վերին հոսանքից դեպի արևելք:

Թեև Չաթալջայի դիմաց դադարել է պատերազմի շոինդը, բայց թե թյուրքերը և թե բուլգարները պարապ չեն. նրանք նոր ու նոր օժանդակ զորքերով ստվարացնում են իրենց շարքերը: Բուլգարները հավաքում են 1913 և 1914 թ. նորակոչ զինվորներին, որով անուղղակի հաստատվում է այն լուրը, թե բուլգար բանակը մեծ կորուստներ է ունեցել այս հաղթական պատերազմի ընթացքում: Մասամբ դրանով պետք է մեկնել նաև բուլգար պատվիրակների համեմատաբար չափավոր տոնը՝ հաշտության բանակցությունները վարելու ժամանակ:

Անշուշտ նույն նպատակով հունական 17 նավ 12.000 բուլգար զինվոր են փոխադրում անհայտ է թե ուր: Շատ հավանական է, որ այդ զորքը ափ դուրս գա կամ Դեդե-Աղաջում, ուր վերջերս թյուրքական երկու զորամաս կատաղի կռվից հետո անձնատուր են եղել բուլգարներին, և դիմեն դեպի Չաթալջա կամ Խերոս ծոցում՝ Գալիպոլի քաղաքի և Դարդանելի գրավմանը նպաստելու համար:

Սերբ բանակների գործունեության վայրերում ևս նկատվում են հաջողություններ:

Մենք գրել էինք, որ Մոնաստիրի գրավումից հետո սերբ զորքերը հավանորեն կշարժվեն դեպի Ադրիատիքի ափը, դեպի Դուրացցո:

Օխրիդայի գրավումը հաստատեց մեր ենթադրությունը, իսկ նոր հեռագիրները այլևս կասկած չեն թողնում այդ մասին:

Սերբերը գրավել են Էլբասանը, որ գտնվում է Օխրիդայից ուղիղ արևմուտք՝ Շկուրնի գետի ափին, որ թափվում է Ադրիատիք ծովը: Հեռագրի ասելով սերբերը գրավել են նաև Տիբանան և Դրաչը (Դուրացոն), որ մեզ թվում է անհավանական. այդ հեռագիրն ավելի մատնանշում է զորքի ճանապարհը, քան թե հայտնում կատարված իրողություն: Միաժամանակ ոչ մի կասկած չունենք, որ այդ երկու վայրերի գրավումը շուտով տեղի կունենա, քանի որ միայն Օխրիդան գրավող բանակը չէ, որ դիմում է այդ տենչավայրը:

Սերբ զորքի մի մասը, որ գրավեց Կրիչևոն՝ Արևմուտք անցնելով և Դիրբայի լեռնաշարից իջնելով Սև Դրինի հովիտը, գրավել է Դիրբա քաղաքը և հավանորեն նույնպես շարժվում է դեպի ծովափ, մասնավորապես որ այդ շրջանի արևաուտները (Ալբանները) կամովին անձնատուր են լինում սերբերին: Սերբերը լիովին ապահոված են իրենց թիկունքը. մախ որ Մոնաստիրի շրջանում թյուրք զորքերը ցաքուցրիվ են եղած և մանր խմբերով զինաթափ են լինում և երկրորդ, որ ալբանական բոլոր ցեղերը կամովին կան ստիպված անձնատուր են լինում և երրորդ, որ Ադրիատիքի ծովափին թյուրքերը շատ քիչ զորք ունեն:

Կհիշեցնենք այստեղ նաև այն հանգամանքը, որ զորքերը դեպի Դուրացոն են դիմում նաև հյուսիսից և վաղուց է, որ տիրել են Ալեսսիո (Լեշա) քաղաքին: Լեշայի և Դուրացոյի միջև միայն երկու ամուր վայր կան, ուր սերբ զորքերը կարող են կռվի բռնվել թյուրքերի հետ, եթե նրանք առանց ընդհարումի անձնատուր չլինին. դրանք են Կրայա և Պերտրեիլա:

Դուրացոն և Վալոնա (Ավլոնիա) քաղաքներում ալբանացիք հռչակել են Ալբանիայի ինքնօրինությունը: Եթե այդ հռչակումը նույնքան անարժեք է, որքան մի քանի ալբանացիների հուշագիրը, որ նույն իմաստով և երկու շաբաթ առաջ ներկայացրին մեծ պետությանց դեսպաններին Պոլսում, ապա սերբերի առաջ ոչ մի լուրջ դժվարություն չկա ալբանական ծովափը գրավելու՝ իր բոլոր նավահանգիստներով: Իսկ եթե ինքնօրինություն հռչակողները միաժամանակ ունեն նաև որոշ զինական ուժ, որ մեր կարծիքով անհավանական է, քանի որ ալբան ցեղերի ահագին մեծամասնությունն արդեն նվաճված է, այն ժամանակ սերբերն իրենց դեմ կունենան ոչ միայն թյուրք զորքերը, այլև ալբան ազգաբնակության մեծ մասը: Բայց նույնիսկ այս դեպքում ալբանական ծովափի գրավումը դժվար չի լինի սերբ հաղթական բանակների համար:

Իրենց գրաված վայրերից սերբերն արդեն կազմել են 11 վարչական

շրջան և ամեն տեղ մտցրել են սերբական կարգեր:

Հեռագիրներից երևում է, թե որքան ծանր դրության մեջ են մնում թյուրք զինաթափ զորքերը: Մակեդոնիայի ամեն կողմերից նրանք թափվում են Սալոնիկ և ձգտում են վերադառնալ Պոլիս կամ հայրենիք՝ Անատոլիա: Նրանց թիվն այնքան շատ է, որ հազիվ թե տեղ գտնել կարողանան պատերազմների պատճառով խանգարված տնտեսական ձեռնարկների մեջ: Հայրենիքիցը հեռու լինելով՝ նրանք չունին մի տուն, ուր կարողանան ապաստանել: Դաշնակից պետություններն անշուշտ զգուշանում են նրանց կերակրելուց, որովհետև այդ շատ թանկ կնստի իրենց պետական գանձարանների վրա: Ուստի չպիտի զարմանանք, եթե մի քանի ժամանակ հետո լուրեր հասնեն, որ թյուրք զորքերը պարապում են մանր գողություններով կամ թե հրոսախմբեր կազմած ավարում են մեծ ու փոքր քաղաքների շրջակաները: Հեռագիրներն արդեն նույն իմաստով մի քանի լուրեր են հաղորդել. հավանական է, որ նրանց թիվը գնալով մեծանա...

Հորիզոն, 1912, № 256

Տաճկական անիշխանության հնարավորությունը և հայ ժողովուրդը

I

Պետերբուրգի հեռագրական գործակալությունը վերջիս օրերի ընթացքում այս երկրորդ անգամն է, որ հուզումնալից լուրեր է բերում տաճկահայերի մասին: Նախանցյալ օրը նա հաղորդել էր, որ Պոլսի հայոց պատրիարքարանում հեռագիր է ստացվել, թե քրդերը հայկական գյուղերում սպանություններ են կատարում: Երեկ էլ նա հաղորդեց, թե հայոց պատրիարքը տեղեկություն է ստացել, որ զանազան վայրերում հայկական ջարդեր են տեղի ունեցել:

Որքան էլ ընդհանրապես թերահավատությամբ վերաբերվելու լինենք վերոհիշյալ հեռագրական գործակալության, ինչպես նաև ռուս թերթերից շատերի այն հաղորդագրություններին, որոնք խոսում են Տաճկաստանի մասին - ի նկատի ունենալով, որ նրանք բոլորն էլ խիստ տենդենցիոզ բնույթ են կրում - այնուամենայնիվ մենք չենք կարող առանց լուրջ մտահոգությունների անցնել վերոհիշյալ լուրերի վրայից:

Դժբախտությունն էլ այն է, որ Տաճկաստանի ներկա քաղաքական

կացությունը միանգամայն նպաստավոր է ամեն կարգի կոտորածների համար, այնպես որ ոչ ոք չի կարող պնդել, թե այդ լուրերը անհավանական են: Իսկ կոտորածների լուր հավանականությունն էլ արդեն բավական է՝ լուրջ մտահոգությունների մեջ ընկնելու համար:

Այո, կոտորածների հավանականությունը ժխտելու պատասխանատվությունը ներկա հանգամանքներում ոչ ոք չի համարձակվի իր վրա վերցնել, որովհետև նա արդեն շատ մեծ է:

Մինչև այժմ մենք մի վտանգ աչքի առաջ ունեինք, այն է, որ քրիստոնյա զորքերից պարտված տաճիկ զորքը և երեկվա իր ռայայի առաջ ընկճված և ստորացած մահմեդական խուժանը այլևս ուրիշ ասպարեզ չունենալով ռևանշի համար՝ իրենց մաղձը թափելու են քրիստոնյա հայ ժողովրդի գլխին: Բայց այս վտանգի դիմաց կար և այն ենթադրությունը, թե տաճիկ կառավարությունը, եթե ուրիշ բան էլ չլինի, գոնե ի նկատի ունենալով իր միջազգային փափուկ դրությունը՝ ներկայումս չի թույլ տա հայկական ջարդեր առաջ բերել: Եվ այս միանգամայն հավանական ենթադրությունը մեզ վստահություն էր ներշնչում փոքր ինչ հանգիստ սրտով նայելու տաճկահայ ժողովրդի գեթ մոտավոր ապագային:

Սակայն վերջին օրերում Բոսֆորի փափերին տեղի ունեցած դեպքերը լուրջ կերպով խախտում են մեր այդ վստահությունը:

Բալքանյան ճգնաժամի առաջին իսկ օրերից մի էական փոփոխություն նկատվեց երկրի ներքին կյանքում. այդ այն է, որ կանգ առան ներքին տարածայնությունները հակառակորդ կուսակցությանց միջև: Արտաքին թշնամու դեմ երկիրը պաշտպանելու պահանջը այնքան մեծ և հրամայական էր, որ երիտասարդ թյուրքերը մի կողմ դնելով իրենց ներհակությունը ամեն կերպ աջակցում էին ներկա կառավարությանը՝ դուրս բերելու երկիրը այս ծանր վիճակից: Պաղարել էին երկրի մեջ վաղեմի մաքառումները և ստացվում էր այն տպավորությունը՝ որ տաճիկ կառավարությունը, որքան էլ տկար լինի արտաքին գործերում՝ գեթ իր ներքին գործերում այնքան ուժեղ է, որ կարող կլինի ջարդերի առաջն առնել:

Բայց ինչպես երևում է, արտաքին պատերազմը ոչ թե վերացրել է Տաճկաստանի ներքին կյանքից այնքան վնասակար երկպառակությունը, այլ միայն մոխրով ծածկել է այն: Եվ այդ մոխրի տակ կուսակցական պայքարն ու իշխանասիրական ինտրիգները կատարել են իրենց ավերիչ դերը մինչ այն աստիճան, որ այլևս ոչնչով նրանց ծածկել չէր կարելի:

Երեկվա հեռագիրները հաղորդեցին, որ երիտասարդ թյուրքերը դավադրություն են կազմել՝ զորքը ներկա կառավարության դեմ ապստամ-

բեցնելու և որ այդ պատճառով նրանց շրջանում ձերբակալություններ են կատարվել: Ձերբակալված են 50-ի չափ ազդեցիկ երիտասարդ թյուրքեր - խմբագիրներ, զինվորականներ, կենտրոնական կոմիտեի անդամներ, նախկին մինիստր Թալեաթ-բեյը և մինչև անգամ ազատագրական բանակի հրամանատար և նախկին զինվորական մինիստր Մահմուտ Շեֆքեթ փաշան ...

Որ կառավարության այս քայլը առանց հակահարվածի չէ անցնելու երիտասարդ թյուրքերի կողմից՝ այդ պարզ է: Կնշանակե, որ զինվորական ու ֆինանսական տեսակետից տկարացած և պարտության պատճառով իր բարոյական հեղինակությունը կորցրած կառավարության և երիտասարդ թյուրքերի միջև նորից սկսվում է պատերազմը և այն էլ ամենասուր ձևով:

Թե ով կհաղթե այդ ներքին պատերազմում դա մենք առայժմ չգիտենք և կարիք էլ չունինք գիտենալու: Մեզ համար կարևորն այն է, որ այս հանգամանքներում ուժեղ կառավարության մասին Տաճկաստանում խոսք չի կարող, իսկ այս նշանակում է, որ խախտվում է մեր այն հույսը, թե տաճիկ կառավարությունը ջարդերի առաջը կառնի:

Կառավարական անարխիան թե Տաճկաստանում, թե Պարսկաստանում միշտ առաջ է բերել քրիստոնյաների ջարդ: Ներկայումս Տաճկաստանը այդպիսի մի անարխիայի նախօրյակին է գտնվում: Ի՞նչ պետք է անե հայ ժողովուրդը, մի նոր քստմնելի ջարդի գոհ չդառնալու համար:

II

Տաճկահայերի տագնապալից կացությունը այսօր ամբողջ հայության ընդհանուր ուշադրության առարկան է: Թե Տաճկաստանի սահմաններում և թե նրանցից դուրս գտնվող հայերի համար այսօր մի հրամայական խնդիր կա. ի՞նչ պետք է անել վերահաս վտանգի հանդեպ. ինչ պետք է ձեռնարկել կոտորածները կանխելու կամ անակնկալի չգալու համար:

Թե ինչ են մտածում իրենք, տաճկահայերը այս խնդրի մասին, այդ մենք մի կողմ ենք թողնում: Մեզ հետաքրքրում է առայժմ, թե ինչ դիրք են բռնում դրսի հայերը վերոհիշյալ համազգային խնդրում:

Ընդհանրապես դրսի հայության և մասնավորապես ռուսահայ հասարակության մեջ նկատվում են մի քանի տարբեր հայացքներ տաճկահայ ժողովրդի քաղաքական վիճակի մասին: Ոմանք պնդում են, որ այդ ժողովրդի բախտը անխզելիորեն կապված պիտի համարել Տաճկաս-

տանի հետ և նրա փրկությունը տեսնում են այդ երկրի սահմանադրական կարգերի մեջ. ուրիշները, որ թերահավատությամբ են վերաբերվում դեպի տաճկական սահմանադրությունը, գտնում են, որ տաճկահայ ժողովրդի տառապանքները չեն վերջանա, մինչև որ մի օտար քրիստոնյա պետություն չգրավի Անատոլիան և այնտեղ իրավակարգ չհաստատի. վերջապես կան մարդիկ էլ, որ տաճկահայերի ապահովության ամենապատակահարմար երաշխիքը համարում են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումները:

Այս ընդհանուր հայեցակետներին համապատասխան են այն միջոցները, որ տաճկահայոց ներկա տագնապալից կացության հանդեպ առաջարկվում են հայ հասարակության այսպես կոչված «ղեկավարող» շրջաններից: Ոմանք ասում են, թե պետք է տաճկահայերը խաղաղ մնան և ամեն կերպ իրենց լոյալ պահեն Տաճկաստանի հանդեպ, ոմանք՝ թե պետք է դիմում անել Տաճկահայաստանին տիրելու պատրաստակամություն ունեցող մի քրիստոնյա պետության և նրան որևէ հուսով այդ երկիրը գրավելու իմպուլսներ տալ, իսկ ուրիշներն էլ կարծում են, թե պետք է առաջիկայում կայանալիք եվրոպական Վեհաժողովին հիշատակագիր ներկայացնել հայերի դժբախտ կացության և Բեռլինի Վեհաժողովի 61-րդ հոդվածի մասին:

Մի կողմ թողնելով վերոհիշյալ հայեցակետների ու նրանցից բխող միջոցների մանրամասն քննությունը՝ պետք է նկատենք, որ նրանք բոլորն էլ մի կետում նման են իրար. այդ այն է, որ նրանք բոլորն էլ ազատում են Տաճկաստանից դուրս գտնվող հայերին իրենց ազգակիցների համար որևէ շոշափելի բան անելու պարտականությունից: Եվ իրոք, ինչ մի ավելի դյուրին բան կա, քան կոտորվող տաճկահայերի գլխին օրինապահության քարոզ կարդալ, կամ սրան ու նրան Տաճկահայաստանը գրավելու կոչ անել և կամ մի հիշատակագիր պատրաստել և որևէ ձևով առաջիկա Վեհաժողովին ներկայացնել:

Մենք չենք ասում, թե այս գործերը բոլորովին առանց աշխատանքի ու զոհողության կարող են գլուխ գալ, չենք էլ ասում, թե մենք անվերապահորեն հակառակ ենք նրանց. բայց երբ մի համազգային աղետի հանդեպ մարդիկ մի կողմ են դնում այն միջոցները, որոնք թեև ծանր զոհողություններ են պահանջում, բայց և առարկություն չվերցնող անհրաժեշտություն են ներկայացնում և վազում են դյուրին ու արժան միջոցների ետևից, թեև նրանց նպատակահարմարությունը շատ վիճելի է՝ մենք չենք կարող դա մեր հասարակական ապիկարության մի տխուր ապացույց չհամարել...

III

Հայ հասարակության յուրաքանչյուր անդամ, ինչ հայացք էլ նա ունենա Տաճկահայաստանի մոտավոր կամ հեռավոր ապագայի վերաբերմամբ, պետք է համաձայն լինի մնացած բոլորին մի կետում. այդ այն է, որ *Ներկայումս* տաճկահայերի առաջին և հրամայական խնդիրը պետք է լինի ինքնապաշտպանության գործի կազմակերպումը:

Մենք չենք անգիտանում, իհարկե, որ դարերի հալածանքն ու այդ հալածանքի դեմ հնչվող համբերության ու «խոհեմության» քարոզը մեր մեջ առաջացրել են ստրկահոգի մարդկանց տիպեր, որոնց քաղաքական իմաստությունը «հարվածող ձեռքը համբուրելու և ճակատին դնելու» մեջ է գտնում Հայ ազգի գերագույն ճակատագիրը: Բայց մենք սրանց հայ հասարակության անդամ համարել չենք կարող. դրանք այլաեսերված երևույթներ են, որ մեր ազգային մթնոլորտի առողջացման հետ միասին կանհետանան մեր կյանքից: Մեր խոսքը մեր հասարակության նորմալ տարրերի մասին է և, կրկնում ենք, այդ տարրերի մեջ մեկը չի գտնվի, որ ներկա պայմաններում տաճկահայերի ինքնապաշտպանության առաջնակարգ անհրաժեշտությունը ժխտել վստահանա:

Եվ իրոք, եթե կոտորածների հնարավորությունը ժխտել չի կարելի, ապա պարզ չէ՞, որ ոչ տաճկական սահմանադրությունը, ոչ օտար պետության գրավումը և ոչ էլ եվրոպական պետությանց ակտիվ միջամտությունը չեն կարող փրկել տաճկահայ ժողովուրդը այդ պատուհասից, քանի որ վերոհիշյալ միջոցները լավագույն դեպքում ամիսների ընթացքում կարող են որևէ շոշափելի արդյունք տալ, իսկ տաճկահայերին կարելի է բնաջինջ անել մի քանի շաբաթում:

Իրերի այս դրությունը ի նկատի ունենալով՝ սպասելի էր, որ հայ ժողովրդի «ղեկավարող շրջանները» նրա, այսպես կոչված «բարձր» ինտելիգենցիան իր առաջ դրած այն հարցին՝ թե ինչ պետք է անել տաճկահայերի վտանգալից կացության հանդեպ՝ միաբերան պետք է պատասխաներ - ամենից առաջ ինքնապաշտպանությանը զարկ տալ:

Բայց նա այդ չարավ. նա խոսեց ամեն բանի մասին - և սահմանադրության և օտար գրավման, և 61-րդ հոդվածի, և բալկանյան պատերազմի, և ավստրո-սերբիական հակամարտության և համեմատական պատերազմի - այս բոլորի մասին ընդարձակ հոգեշահ խորհրդածություններ արեց այդ ինտելիգենցիան - բայց ոչ մի խոսք ինքնապաշտպանության մասին չարտասանեց:

Եվ դա պատահական բան չէ. դա բնական արտահայտություններից մեկն է այն «ազգասիրության», հանուն որի այդ ինտելիգենցիան, մա-

նավանդ վերջին տարիներս այնքան քարկոծել է նոր սերնդի ներկայացուցիչ առաջադեմ տարրերին:

Այդ «ազգասիրությունը» միայն խոսել գիտե. նա խիստ կողմնակից է մեր «ազգային առանձնահատկությունների» պահպանման, բայց ամենամեծ օտարամուլը մեր մեջ ինքն է: Նա ջերմ նախանձախնդիր է մայրենի լեզվի առաջադիմության, բայց մայրենի լեզուն ամենից շատ նրա ընտանիքումն է արհամարհված և հալածված: Նա մեծ կարևորություն է տալիս Հայոց գրականությանն ու պատմությանը. բայց այդ գրականությանն ու պատմության մասին ամենից քիչ զաղափար ունեցողն ինքն է: Մի խոսքով՝ եթե բանը խոսքին մնաց՝ մեր «բարձր ինտելիգենցիան» nec plus ultra ազգասեր է, բայց երբ բանը գործին ու զոհաբերությանն է գալիս՝ նա այդտեղ չկա:

Ահա այս խոսքի ազգասիրությունն է, որ հանդես է գալիս և տաճկահայոց ներկա խնդրում: Խոսքով նա պատրաստ է ամեն ինչ անելու «տաճկահայ» եղբայրների համար և համաձայն իր այս հիմնական տրամադրության առաջարկում է օգնության այնպիսի միջոցներ, որոնք նրանից կամ գործ ամենևին չեն պահանջելու և կամ պահանջելու են շատ քիչ:

Հասկանալի է, իհարկե, որ ինքնապաշտպանության գործը այսպիսի միջոցների շարքը դասվել չի կարող: Ինքնապաշտպանություն կազմակերպել՝ մշանակում է դրան հայթայթել, զենք հասցնել Տաճկահայաստան, այնտեղ համապատասխան կազմակերպություններ առաջ բերել, ի հարկին նաև կուրծք տալ վայրենի խուժանի գրոհին... Մեր բարձր ինտելիգենցիան՝ պետք է կատարե այս գործերը...

Ակամայից մեր հիշողության մեջ վերարտադրվում են անցած տարիները: Այն ժամանակ կովկասահայ ժողովուրդն էր կոտորածի մղծավանջի տակ տառապում: Հանդես էին եկել մի խումբ մարդիկ ոչ «բարձր ինտելիգենտ» շրջանից և ամեն տեսակի զոհողության գնալով՝ ղեկավարում էին ժողովրդի ինքնապաշտպանությունը: Որ այդ զոհողություններն ու նրանց տված փայլուն հետևանքները պետք է ժողովրդի աչքում հմայք ստեղծեին վերոհիշյալ խմբի համար - այդ պարզ է, իհարկե: Պարզ է նույնպես, որ այդ հմայքը հաճելի չէր կարող լինել մեր «բարձր ինտելիգենցիային»: Եվ ահա վերջինս սկսեց իր վայնասունը: Ինքնապաշտպանությունը խմբակցական գործ չէ. դա ընդհանուր - ժողովրդական գործ է. մեզ ևս մասնակից արեք դրա ղեկավարությանը և այլ նման պահանջների կարկուտ էր, որ տեղում էր մեր ինքնապաշտպանության ղեկավարների գլխին: Բայց բարեբախտաբար հայկական այս չկամու-

թյունը հետևանք չունեցավ և հայ ժողովուրդը վերոհիշյալ ղեկավարների օգնությամբ պատվով դուրս եկավ իր ծանր կացությունից:

Անցել են այդ օրերը, բայց չէ անցել հայի ճակատագիրը. այսօր նորից կոտորածների ուրվականն է ծառացած մեր առաջ և նորից նույն ինքնապաշտպանության հարցն է մեջտեղ հանված: Այդ հարցը այս անգամ բաց է դրված. ամեն մի հայ հնարավորություն ունի իր մասնակցությունը այդտեղ հանդես բերել. բայց ոչ ոք ըստ երևույթին նրան չի մոտենում: Այն մարդիկ, որոնք իրենց ուսերի վրա էին կրում կովկասահայոց ինքնապաշտպանության ծանրությունը, այսօր կարծեք լքել են հրապարակը և մի կողմ քաշվել, իսկ մեր «բարձր ինտելիգենցիան»: Օ՛, նա շատ լավ է զգում սեփական հանգստի և ապահովության արժեքը, որպեսզի ծայն հանի ինքնապաշտպանության մասին... մանավանդ, որ իր կյանքն ու գույքը ներկա դեպքում զերծ են վտանգից:

Այդպես է մեր «բարձր ինտելիգենցիայի» տրամադրությունը: Իսկ ի՞նչ է մտածում ինքը՝ Հայ ժողովուրդը: Կարո՞ղ է այդ ժողովուրդը, որ հանդիսատես է եղել 300.000-ի մարտիրոսությանը, որ իր սեփական կաշվի վրա է զգացել կոտորածների սարսափը - բավականա՞նալ նրանով, որ իր բարձր խավերում ինտելիգենտ մարդիկ կան, որոնք մտածում են դիպլոմատիական քայլերով կամ «խոհեմության» քարոզներով կոտորածների առաջն առնել: Կարո՞ղ է այդ ժողովուրդը, որ իր ներկա գոյությունը միայն ինքնապաշտպանության գործին է պարտական, անտարբերությամբ դիտել, թե ինչպես այդ ինտելիգենտ մարդիկ ինքնապաշտպանությունը «խոհեմությամբ» հետին գծի վրա են դնում: Մենք հավատացած ենք որ ոչ: Մենք հավատացած ենք, որ հայ ժողովրդի միջից դուրս կգան մարդիկ, որոնք իրենց առողջ բնազդների շնորհիվ իրենց մատը իսկական վերքի վրա դնելով՝ դիպլոմատիական խաղերի ու քայլերի սովերի տակից դուրս կհանեն ինքնապաշտպանության գործը և անձնվիրաբար առաջ կտանեն այն:

Իսկ եթե այս հավատը ևս չարդարանա, եթե ժողովրդի մարդիկ ևս պատրաստակամություն և պատրաստակամություն չունենան րուպեի պահանջի վրա կանգնելու՝ այն ժամանակ կմնա ընդունել, որ եթե հայ ժողովրդի ինքնապաշտպանության նախկին ղեկավարները իրոք հեռացել են ասպարեզից, ապա նրանք տարել են իրենց հետ և այն ամենը, ինչ որ կարող էր վկայել մեր հասարակական կենսունակության ուժի և կորովի մասին...

Հորիզոն, 1912, № № 246, 248-249

Ռուսաստանը և թյուրքահայերը

Պոլսի ռուս դեսպանը հայտնել է Բ. Դրան, որ եթե հայերի սպանությունները մասսայական բնույթ ստանան՝ Ռուսաստանը վճռական պաշտպանություն ցույց կտա հայերին: Մի ուրիշ հեռագրի ասելով «Անգլիան առաջարկել է Բ. Դրան Հայաստանը դնել Ռուսաստանի հովանավորության տակ»: Մի երրորդ հեռագրի նայելով. «Ռուսաստանը հայտարարել է Բ. Դրան, որ հայերին պաշտպանելու համար քրդերի դեմ՝ ինքը գրավելու է Վանի, Բիթլիսի և Կարինի նահանգները»:

Այս բոլոր հեռագիրները թեև պաշտոնական բնույթ չունեն, բայց նրանց հնարավորությունն ինքնին մի ապացույց է, որ Ռուսաստանի քաղաքականությունը թյուրքահայերի վերաբերմամբ ենթարկվում է հեղաշրջման և Տաճկահայերի ապահովության խնդիրը դառնում է մեր պետության մտահոգության առարկան:

Ավելի քան քսանամյա ընդմիջումից հետո Ռուսաստանի և թյուրքահայերի շահերը ընդառաջում են իրար և տաճկահայերի ապահովության խնդիրը կռվան է դառնում Ռուսաստանի արտաքին քաղաքականության: Այսպիսով մեր ցեղի պահպանության գերագույն շահը նույնամուտ է Ռուսաստանի քաղաքական շահերին:

Թյուրքիան իր պարտությունից հետո դառնում է երկրորդական պետություն և նրա արժեքը միջազգային քաղաքականության մեջ նվազելու է չափազանց: Արդյոք կհաստատվի՞ մի միջազգային հովանավորություն Թյուրքիայի վրա, թե մեծ պետությունները կբաժանեն իրար մեջ քայքայված Թյուրքիայի ժառանգությունը - դժվար է առաջուց գուշակել: Ինչ էլ լինի Թյուրքիայի ապագան՝ մեծ պետությունների դերը նրա կյանքում այսուհետև մեծանալու է ավելի, քան երբևիցե. և երբ Ռուսաստանի նման մի հզոր պետություն ձգտում է իր ազդեցության տակ առնել հայաբնակ նահանգները, այդ հանգամանքը մեզ համար ահագին նշանակություն ունի:

Ռուսաստանի այս նպատակավոր տրամադրության անմիջական հետևանքը կլինի ջարդերի վերացումը հայաբնակ նահանգներում: Թյուրքիան իր իսկ շահերը ի նկատի առնելով՝ պիտի ջանա ամեն կերպ նպաստելու հայ ազգաբնակչության ապահովության արևելյան վիլայեթներում և ինքը պետք է ետ պահե այն ձեռքը, որ բարձրանում է հային մորթելու, եթե չի ցանկանում վտանգի ենթարկել իր տիրապետությունը Կարինի, Վանի, և Բիթլիսի շրջանում:

Հայոց հարցից ավելի այս վայրկյանին թյուրքահայերի ապահովության խնդիրն է, որ անմիջապես շահագրգռում է բոլոր տեղերում դրված հայերին և մենք չենք կարող մեր գոհունակությունը չարտահայտել այն առիթով, որ վերջապես անցած են Լոբանով-Ռոստովսկու օրերը և թյուրքահայերի և մեր պետության շահերն այսօր ընթանում են ձեռք-ձեռքի՝ հավասարաչափ նպաստելով երկու կողմերին:

* * *

Հայերի վիճակի բարվոքումը հնարավոր է այն պայմանով միայն, որ անհրաժեշտ բարենորոգումներին հայաբնակ գավառներում վերահսկել միմիայն *մի* պետություն:

Այս տեսակետից Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը թյուրքահայերին ավելի նպաստավոր էր, որովհետև վերահսկելու իրավունքը թողնում էր Ռուսաստանին, քան Բեռլինի 61-րդ հոդվածը, որով այդ հսկողությունն անցնում էր մեծ պետություններին:

Մինչև 1880 թվականը մեծ պետություններն իրար հետ համերաշխ էին հայաբնակ նահանգների բարվոքման խնդրում և երկու անգամ ազդարարություն արին թյուրք կառավարության հայոց դատին ի նպաստ:

Բայց այնուհետև քաղաքական ուժերի նոր խմբումներ առաջ եկան, շահերի նոր ընդհարումներ և հակամարտություններ երևան հանվեցին, որոնք և բաժանեցին մեծ պետություններին նաև հայոց հարցում և Սուլթանի կառավարությունը, օգտվելով մեծ պետությունների գծությունից, հրով ու սրով, գաղթով ու սովով հետապնդեց իր ազգամուլ քաղաքականությանը, նվազեցնելով հայոց թվական ուժը հայկական բարձրավանդակում և դրանով փորձեց խարխուլել հայոց հարցի և եվրոպական միջամտության բուն իսկ հիմունքը:

Մինչդեռ վեց պետություններից ամեն մեկը դյուրությամբ կարող էր թյուրքահայերի վիճակը տանելի դարձնել, եթե նա լիազոր լիներ այդ քայլն անելու և այդ նպատակին հետապնդելու՝ մեծ պետությունների հակամարտությունը արյան ծովի մեջ խեղդելու վտանգին հասցրեց թյուրքահայերի արդար դատը:

Այսօր հասել է մի ժամանակ, երբ եվրոպական մեծ պետությունները, համաշխարհային քաղաքականության այդ տերերն ու տնօրենները, ներդաշնակ և միօրինակ վերաբերում ունեն դեպի ռմբակոծ Թյուրքիան և ժամանակը նպաստավոր է հայկական հարցի լուծման համար:

Բայց ինչպես երեսուն և չորս տարի սրանից առաջ, այնպես էլ այսօր հայկական խնդրի լուծումը նորից պահանջում է նույն *միակ* պայմանը: Այսօր էլ հայկական հարցը կարող է լուծվել միմիայն *մի* պետության մի-

ջոցով, որ լիազորված լինել մյուս մեծ պետությունների կողմից Թյուրքիայի հայաբնակ նահանգներում անհրաժեշտ բարենորոգումները մտցնելու և նրանց գործադրությունը վերահսկելու:

Մի ժամանակ հաղթողը Ռուսաստանն էր: Եվրոպան չկամեցավ նրան թողնել հաղթության պտուղները և Ռուսաստանն անկարող դիմադրելու հինգ մեծ պետությունների պնդումներին Բեռլինում՝ ստիպված եղավ շատ զիջումներ անելու, որով հայերի ապահովության խնդիրը ևս դուրս եկավ նրա հզոր ձեռքից:

Այսօր հաղթողները Բալկանի մանր ազգերն են. հավանորեն նրանց ևս չեն թողնի վայելելու իրենց հաղթության պտուղները լիովին, բայց և անկարող են այդքան փառավոր հաղթանակների արդյունքը գերոյի վերածել: Անխուսափելի է ուրեմն եվրոպական Թյուրքիայի անջատումը, թեկուզ և ավելի փոքր չափերով, քան ցանկալի լինել Բալկանի մանր ազգերին:

Փոքրացած Թյուրքիան պիտի պարտավորվի ահագին պետական պարտքեր վճարել, որոնք ավելի ևս մեծացել են Թյուրք-Իտալական և Բալկանյան պատերազմների պատճառով: Թյուրքիայի պարտքերը եվրոպական դրամազուլուխներ են. նրանք կարող են վտանգի ենթարկվել, եթե Թյուրքիայում բարեկարգ վարչություն չստեղծվի, որով կեղծեքված ժողովուրդը հնարավորություն ստանա թե թյուրքական բազմածախս վարչությունը պահելու և թե պետական պարտքի գոնե տոկոսները վճարելու:

Այս մտահոգությամբ տարված եվրոպան կամ պետք է անդամատե Թյուրքիան՝ ամեն պարտքատերի մի մասը տալով, կամ պետք է հաստատե մի հսկողություն նրա ներքին կարգերի վրա, որ կարող է կամ լինել միջազգային կամ առանձնական՝ ամեն պետության հատկացնելով մի որոշ շրջանի վերահսկողություն:

Այս է պատճառը, որ երբ խոսք է լինում Ռուսաստանի հովանավորության հայաբնակ նահանգներին կամ նրանց տիրապետության մասին, եվրոպական մամուլի մեջ չեն լսվում վայնասուններ, ընդհակառակը համակիր շշուկներ են սպրդում մեր պետության հասցեին: Այսպիսով Ռուսաստանի, մեծ պետությունների և թյուրքահայերի շահերն այս անգամ ներդաշնակույթ են իրար և հնարավոր դարձնում համերաշխ գործակցություն ոչ միայն մեծ պետությունների ի նպաստ, այլև հօգուտ Թյուրքիայի և նրա այլազան և այլակրոն ազգաբնակչության, որ դարեր շարունակ տառապել և տառապում է թյուրք ապիկար կառավարության և վայրագ ու վաչկատուն ցեղերի ձեռքին:

Այս բոլոր կշռադատումները անկողմնակալ ընթերցողին բերում են մի համոզման, որ թյուրքահայերի վիճակի բարվոքումը սերտորեն կապված է Ռուսաստանի հետ: Եթե մեծ պետությունների համերաշխ ընթացքը շարունակվի և որևէ պատճառով նորից չզժժվեն իրար հետ, այն ժամանակ Թյուրքիայի և նրա հետ թյուրքահայերի դատը երեք լուծում կարող է ունենալ և երեք դեպքում էլ բուն Հայաստանի ազգաբնակչության վիճակի բարվոքումը պիտի կապված լինի Ռուսաստանի հետ:

Եթե Թյուրքիան անդամատվի, այն ժամանակ հայկական բարձրավանդակը կանցնի ռուսներին, քանի որ նրանք են այդ շրջանի անմիջական սահմանակիցները: Եթե հաստատվի միջազգային հսկողություն Թյուրքիայի վրա՝ այն ժամանակ հայաբնակ նահանգների հսկողությունը կանցնի ռուսներին նույն հիմնական պատճառով: Եթե մինչև իսկ հայերին տրվի ինքնուրույնություն, այդ դեպքում էլ նա կդրվի Ռուսաստանի հովանավորության տակ:

Այսպիսով ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում թյուրքահայ ժողովրդի բախտը կապված է Ռուսաստանի հետ: Այս հանգամանքը չպետք է աչքաթող անեն ոչ ռուսահայերը և ոչ թյուրքահայերը և պետք է շարժվեն սրա համեմատ:

Հորիզոն, 1912, № 250, 259

Քաղաքացիության պարտականությունը

Լուրերին նայելով հայ նորակոչ զինվորներն ու սպաները անձնվիրությամբ կռվում են թյուրք զորքի շարքում և դասալիքների մեջ հայեր չեն պատահում:

Թյուրքահայերը, որ ամենից շատ պատճառներ ունին դժգոհ լինելու թյուրքական հին ու նոր կարգերից, որ ամեն տեղ խոսքով, թե գործով հայտնել են իրենց բողոքն ու դժգոհությունը այդ կարգերի դեմ, այսօր երբ վտանգ է սպառնում Թյուրքայի գոյության՝ արիությամբ մարտնչում են նրա թշնամիների դեմ և մեռնում են պատնեշի վրա:

Միաժամանակ բուզարահպատակ հայեր կռվում են բուզար զորքի շարքերում թյուրք զորքերի դեմ և նույն արիությամբ նպաստում են իրենց հովանավոր ու պաշտպան պետության ընդհանուր գործին:

Մի քանի տարի է արդեն, որ պարսկահայերը կռվում են պարսիկ զորքի շարքերում այդ երկրի սահմանադրական կառավարության համար նրա թշնամիների դեմ:

Չենք խոսում Ռուսաստանի մասին, որի դրոշակների տակ հայերը հավատարմությամբ կռվել են ռուսաց պետության թշնամիների դեմ. այդպես է եղել անցյալում, ու այդպես կլինի և այժմ, եթե առիթը ներկայանա:

Այս երևույթը շատերի գարմանքը կարող է շարժել, շատերին դժգոհության առիթ տալ և շատ կարճամիտների հիմք ծառայել՝ անհամակիր գույներով ներկայացնելու հայի նկարագիրը:

Բայց այն, ինչ շատերին կարող է թվալ նկարագրի բացակայություն և անհամակրելի մի գիծ, մեզ համար մի ապացույց է հայի քաղաքական հասունության:

Եւ միշտ դժգոհել է այն անարդար կարգերից, որոնց մեջ պատմությունը նրան դրել է ապրելու, բայց երբեք չի դավաճանել այն պետական կազմին, որքան էլ վատ լիներ այն կազմը, եթե նրան սպառնացել է մի հարևան պետություն:

Սրանից է առաջ գալիս այն գարմանալի երևույթը, որ հայն ամեն տեղ համարվել է հեղափոխական և միաժամանակ հավատարիմ քաղաքացի. այս է այն ապշության պատճառը, որի մեջ ընկնում են մեր բնական վայրերի շովեն հայրենասերները, երբ նկատում են հայերին ընդդիմադիր բանակում և միաժամանակ հայրենի գործերի շարքում՝ ընդհանուր թշնամու դեմ կռվելիս:

Հայերի այս քաղաքականությունը պատմական է և միակ խելացիին իր ապրած պայմանների մեջ. նա ամեն տեղ հանդիսանում է հավատարիմ քաղաքացի և ազդակ իր պատկանած պետության քաղաքական առաջադիմության համար:

Չկա այստեղ երկերեսություն, ինչպես կարող են կարծել չարական մարդիկ ու տարրեր, այլ ազգային և պետական շահերի խորին ըմբռնում:

Կռիվ պետության ներսը արդարության համար և դուրսը իր պատկանած պետության հաջողության համար - այս է եղել հայերի ավանդական քաղաքականությունը, որ մինչև այսօր էլ շարունակում է մնալ միակ խելացիին:

Ոչ մի տեղ նա չի դավաճանել և չպիտի դավաճանի իր հայրենիքին, եթե չի ուզում արհամարհանքի արժանանալ բոլոր հայրենիքներում:

Ռուսաստանում նա եղել է և պետք է լինի հավատարիմ ռուս քաղաքացի, Թյուրքիայում՝ հավատարիմ օսմանցի և Պարսկաստանում՝ հավատարիմ իրանցի:

Ուրիշ ամեն վերաբերում կլիներ դավաճանություն իր պատկանած պետության և իր ազգային շահերին և արժանապատվության:

Հազիվ թե որևէ ժողովուրդ այսպիսի կացության մեջ դրված լինի, որքան այսօր թյուրքահայը:

Այն ժողովուրդը, որ տասնյոթ տարի առաջ տեսավ աշխարհասասան կոտորածներ, «սարսափներ», որ անլուր չափերի հասան, որ հարյուր հազարով գաղթեց օտար երկիրներ՝ տնագուրկ ու հողազուրկ, որի որբերը օտար դռներ մաշեցին և օտար ձեռքերի ապաստանեցին, այսօր ահով սպասում է սասանեցուցիչ անցյալի վերադարձին:

Ամեն օր ականատես է նոր բռնությունների, նոր անիրավության, նոր հարստահարության, ամեն օր տեսնում է զինված թյուրքեր, բայց մանավանդ քուրդեր, որոնք մի նշանի են սպասում նրան հոշոտելու և պատիվը պղծելու, ամեն օր նա լսում է սպառնալիքներ խուժանի բերանից և ստիպված է լռելու, ծպտուն չհանելու, իր գոյությունը ոչնչով հայտնի չդարձնելու...

Չկա մի ուժ հայաբնակ նահանգներում, որ կարողանա կասեցնել ավարիչ ձեռքը և ծախիչ սուրը. եղած բոլոր ուժերը ծարավի են նրա արյան ու ինչքին և ցանկացող նրա ոչնչացման: Կա իշխանություն, բայց նա թե անգոր է, թե անբարյացակամ, կան եվրոպական պետության գործակալներ, բայց նրանք երբեք չեն կարող յուրովի մի վճռական քայլի ձեռնարկել, կան անձնավեր կտրիճներ, բայց նրանք թիվը շատ աննշան է ցրիվ ու ահաբեկ ժողովրդին ոգի ներշնչելու և պաշտպանելու համար:

Այդ բախտի հալածական ժողովուրդը մի քանի անգամ կենդանության նշաններ ցույց տվեց անցյալում, բայց եվրոպան նրա բողոքին պատասխանեց անհամերաշխ լռությամբ, իսկ թյուրք կառավարությունը սուրի հարվածներով: Եվ նրա մեջ արմատացավ անվստահությունը դեպի եվրոպան և սարսափը կոտորածի հանդեպ:

Եվ այսօր, երբ որոտում են թնդանոթները թյուրք անիրավ կարգերի գլխին և ստրուկները զենք առած՝ հոժ խուճբերով միանում են ազատարար բանակներին, թյուրքահայը անշարժ է ինչպես դիակ և չի համարձակվում իր բողոքը ազդուորեն հնչեցնել թյուրք կառավարության ականջին:

Նրա համեստ պահանջների դեմ պատրաստ են սիրալիր ձգձգումները, իսկ նրա բարձրաձայն բողոքի դեմ քուրդի և թյուրք խուժանի զինված բռունցքը՝ անբարյացակամ և ազգամուլ կառավարության հանցավոր չեզոքության հովանու, եթե ոչ մեղսակից պաշտպանության տակ:

Պատրիարքարանի դիմումները մնում են անհետևանք, ինքնապաշտպանություն կազմակերպելու ամեն փորձ հետապնդվում է չարաչար, մարդկային տարրական իրավունքները բռնաբարվում են ամեն օր և պատվարժանության ամեն զգացում ոտնահարվում է ամենուրեք:

Արտաքին միջամտությունը կաշկանդված է միջազգային հարաբերությանց բարդ ցանցի մեջ, ոչ մի վստահություն չկա տիրող կառավարության բարի կամքի վրա և մի ամբողջ ժողովուրդ ոգեվարում է սարսափելի մղձավանջի տակ՝ ամեն օր սպասելով իր բնաջնջումին:

Հոբիզոն, 1912, № 258

Թյուրքահայերը և Ռուսաստանը

Մենք տեսանք, որ թյուրքահայերի վիճակի բարվոքումը հնարավոր է այն դեպքում միայն, երբ բարենորոգումների գործադրությանը վերահսկե մի պետություն միայն, այդ մասին լիազորություն ստանալով մյուս մեծ պետություններից: Յոթը ծծմոր երեխան, ասած է, քաղցած կմեռնի, նույն վիճակում կլինի թյուրքահայոց հարցը, եթե նրա գործադրությունը մնա մի քանի պետությունների, որովհետև պետությանց փոխադած հարաբերությունները միշտ ենթակա են տատանումների և այսօրվան համերաշխությունը վաղը կարող է գծություն դառնալ: Մի անգամ որ՝ համաձայնության դեպքում՝ լիազորություն տրվի մի պետության՝ հայաբնակ նահանգներում բարեկարգություն մտցնելու, այնուհետև եթե գծություն իսկ պատահի՝ այդ լիազորությունը դժվարությամբ կառնվի այն պետության ձեռքից, որովհետև լիազորությունը ետ առնելու համար ևս անհրաժեշտ կլինի մի ընդհանուր համաձայնություն, որին արգելք կդառնա ստեղծված գծությունը ...

Տեսանք նաև, որ թյուրքահայերի վիճակը սերտորեն կապված է Ռուսաց պետության հետ և սահմանակցության պատճառով՝ Ռուսաստանն է, որ շահագրգռված է հայկական բարձրավանդակի վիճակով՝ լինի դա տիրապետություն, հովանավորություն՝ հայկական ինքնօրինության, թե հսկողություն ամբողջ Թյուրքիայի վրա:

Նկատի ունենալով այս կարևոր հանգամանքը, նաև այն, որ ռուսահայերս մի կողմից ցեղակից ենք թյուրքահայերին և նրանց տառապանքը ցավագին արձագանք է գտնում ամենքիս սրտում և մյուս կողմից մենք հանդիսանում ենք Ռուսաստանի քաղաքացիներ, որ անխզելի կա-

պերով կապված ենք մեր պետության հետ, ուր ունենք պարտականություններ, բայց և իրավունքներ՝ մեզ թվում է, որ ռուսահայ ժողովուրդը եթե ցանկանում է դիվանագիտական ճանփով որևէ ծառայություն մատուցանել իր ցեղակից և տառապող ժողովուրդին՝ պարտավոր է իր աչքը դարձնել դեպի Ռուսաստանը և նրանից սպասել որևէ դրական դեր հայոց հարցի լուծման մեջ:

Ռուսաստանն է այն միակ պետությունը մյուս մեծ պետությանց շարքում, որ թե իր աշխարհագրական դիրքի և թե իր քաղաքական շահերի բերումով՝ կարող է բարեկարգություն մտցնել հայաբնակ նահանգներում, եթե լիազորություն ստանա մյուս մեծ պետություններից:

Հայոց հարցի լուծումն այս կերպ հասկանալով, մենք հորդորում ենք Ռուսաստանի հայերին մի ազգային դիմում ուղղել ռուսաց պետությանը և խնդրել, որ նախաձեռնե հայոց հարցը պետությունների գումարվելիք դեսպանախորհրդի կամ վեհաժողովի առաջ դնելու: Այս դիմումով մենք ամուր հենարան տված կլինենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիմումին և ռուս կառավարությունը միանգամայն համոզված կլինի, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիմումը ոչ միայն հայրապետական զգացումի հետևանք է, այլև արտահայտում է ռուսահայ բովանդակ ժողովրդի սրտագին ցանկությունը:

Բայց հայոց հարցի բարվոք լուծումը միայն Ռուսաստանից չի կախված: Որքան էլ Ռուսաստանը բարյացկամ լինի դեպի մեր խնդրի վերաբերմունքը, որովհետև թյուրքահայի և Ռուսաստանի շահերն իրար ներդաշնակ են՝ այնուամենայնիվ նա անկարող կլինի մի իրական լուծում տալու հայոց հարցին, եթե եվրոպական մյուս մեծ պետությունները չընդառաջեն Ռուսաստանի առաջարկին: Առանց եվրոպական աջակցության Ռուսաստանը կվաստակե մեր և թյուրքահայերի խորին համակրանքը և այդ կլինի միակ դրական օգուտը, իսկ հայոց հարցը կմնա անվճիռ և թյուրքահայ ժողովուրդը անօգնական և անապահով՝ մատնված վայրագ խուժանների և կազմալույծ ու անբարյացակամ կառավարության հալածանքին:

Այս հանգամանքն ի նկատի ունենալով, ռուսահայ ժողովուրդը պետք է՝ թույլտվություն առնելով մեր կառավարությունից՝ դիմե նաև Բեռլինի դաշնագիրը ստորագրող մյուս մեծ պետություններին, խնդրելով, որ աջակցեն մեր պետության նախաձեռնությանը և նպաստեն հայոց արդար դատի իրական լուծումին:

Հայերի պահանջը տարրական բան է. կյանքի, գույքի և պատվի ապահովություն և կուլտուրական զարգացման հնարավորություն: Թե

ինչ քաղաքական ձև կստանա այս պահանջների իրագործումը՝ այդ մեզանից կախված չէ: Մեզանից կախված է միմիայն մի բան, խնդրել այդ ամենը մեր արյունակից եղբայրների համար՝ նախ Ռուսաստանից, իբր ռուս քաղաքացի, ապա նրա թույլտվությամբ՝ Եվրոպայից, իբրև մի ազգ, որի կեսը տառապում է դարերով՝ անհնարին նեղությանց մեջ:

Հոդված, 1912, № 260

Բալկանյան պատերազմի մոտավոր հետևանքները

Բալկանյան պատերազմը կվերջանա, եթե Թյուրքիան ընդունե այն պայմանները, որ առաջարկում են դաշնակից մանր տերությունները: Ի՞նչ նոր վիճակ կստեղծվի Մերծավոր Արևելքում այն ժամանակ - ահա մի շատ կարևոր հարց, որ վերին աստիճանի շահագրգռական է թե Ռուսաստանի և թե հայերի համար:

Եթե դաշնագիրը կնքվի վերը հիշված պայմաններով, այն ժամանակ Թյուրքիան ասիական պետություն կդառնա: Եվրոպական ցամաքից նրա ձեռքին կմնա մի փոքրիկ հողաբաժին Թրակյան թերակղզուց՝ Չաթալջայի ամրություններից դեպի արևելք՝ Պուսի հետ միասին և Գալիպոլի թերակղզին, որ նշանակում է, թե թուրքերի իշխանության տակ կլինեն քաղաքական մեծ նշանակություն ունեցող երկու նեղուց՝ Բոսփորը և Դարդանելը:

Որքան էլ այդ երկու նեղուցները քաղաքական մեծ կարևորություն ունենան, բայց նրանք բավական չեն, որ Թյուրքիային տան այն խոշոր դիրքը միջազգային շահերի բախման մեջ, ինչ որ նա ուներ, երբ իր ձեռքին էր ամբողջ Եվրոպական Թյուրքիան:

Կորցնելով Մակեդոնիան և Ալբանիան, թյուրքը սահմանակից է դառնալու միմիայն Բուլգարիային արևմուտքից և Ռուսաստանին՝ հյուսիսարևելքից: Այս նշանակում է, որ այնուհետև Թյուրքիան իր դեմ ունենալու է սլավոն ցեղի երկու քաղաքական կազմակերպություն և գերման ցեղերի արշավի դեմ դեպի Թյուրքիա կանգնում է մի զորեղ թուն՝ իր ծավալը գրեթե կրկնապատկած Բուլգարիան:

Ավստրիայի քաղաքական նշանակությունը Թյուրքիայի գործերում չափազանց պիտի նվազի և ընդհակառակն Բուլգարիայի ազդեցությունը գնալով կհզորանա: Իսկ եթե Բալկանի դաշնակցությունը հարատևի,

այն ժամանակ Թյուրքիան կունենա մի հզոր հարևան, շատ ավելի մտահոգիչ, քան Սերբիան, Հունաստանը, Բուլգարիան և Չերնոգորիան առանձին առած: Անհատապես նրանք աննշան էին, բայց միացած նրանք կարող են ապագայում ևս չափվել Թյուրքիայի հետ, ինչպես չափվեցին ներկայումս:

Թյուրքերի մի մասը կթողնի Մակեդոնիան և կանցնի Փոքր Ասիա՝ հավատակից պետության դրոշի տակ և դրանով կփոխի այդ թերակղզու ազգաբնակչության տոկոսական հարաբերությունը: Այստեղ է, որ Թյուրքիան, եթե նա որևէ զարգացման ընդունակ է, կարող է կազմել մի ազգային պետություն: Նրա աչքն այնուհետև պետք է նայի Իրանին, ուր ապրում են մահմեդական բազմությունները, որոնցից մի ստվար մասը և հատկապես նրանք, որ սահմանակից են Տաճկաստանին՝ թյուրքեր են:

Կասկածից դուրս է, որ հաղթահարված թրքությունը վերադարձի բնական մղումով տարված՝ ավելի ուժով պետք է փարի համիսլամության գաղափարին և աշխատի մի մեծ իսլամական պետություն ստեղծել Առաջավոր Ասիայում:

Թե որքան կհաջողեն թյուրքերն այս վաղեմի գաղափարը կյանքի մեջ իրականացնելու, այդ կախված է ստեղծագործական ուժերի այն քանակից, որ հանդես է բերում թյուրք ցեղը: Այդ կարողությունը չնչին է համարվում սովորաբար, թեև պատմությունը և վերջին դեպքերը ցույց են տալիս, որ Թյուրքիան այն հիվանդը չէ, ինչ որ կրկնում են տասնյակ տարիներ շարունակ: Չպետք է չափազանցել նրա ներկան, բայց չպետք է գերազնահատել նաև նրա թուլությունը:

Լինելով վերին աստիճանի հարուստ երկիր, նա կարող է շուտով կարգի բերել իր քայքայված դրությունը, եթե փոքր ինչ կանոնավոր վարչություն ստեղծել կարողանան նրա վարիչները. և նրա ուժեղացումը վտանգ կսպառնա միմիայն սլավոն ժողովուրդներին՝ Բուլգարիային արևմուտքից և Ռուսաստանին՝ հյուսիս - արևելքից:

Ռուսաստանի հարավային սահմանին կից ժամանակի ընթացքում կարող է կազմվել մի ոչ աննշան քաղաքական մարմին, որի հետ նա տևականորեն պետք է հաշիվներ կարգադրե: Եվրոպական պետությունների ուրիշ խմբումների ժամանակ Թյուրքիան կարող է դառնալ մի սպառնալից առաջամարտիկ թշնամի պետությունների ձեռքին Ռուսաստանի դեմ:

Այդ սպառնալիքը շատ ավելի մեծ կդառնա, եթե Թյուրքիայի հետ դաշինք կապեն Ավստրիան և Գերմանիան ընդդեմ Ռուսաստանի:

Հոդված, 1913, № 5

Հագիվ թե մի ժողովուրդ ավելի հուսալից դիմավորե նոր տարուն, քան հայությունն այս տարի: Ամբողջ հայությունը, ուր էլ ապրում լինեն նրա անդամները, լցված է մի հուսալից կամ վարանոտ սպասումով: Հայոց հարցը, որ մոռացության խավարից իրերի բերումով լույս աշխարհ եկավ, գամել է ամենքի ուշադրությունն իր վրա:

Տասնյակ տարիներ ժողովուրդն ինքն էր այդ հարցը բարձրացնում մեկ մորթվողի աղաղակով, մեկ բողոքի որոտով: Այսօր դիվանագիտությունն ինքն է յուրացնում խնդիրը և հայությունը նպաստում է միայն շահագրգիռ պետություններին:

Մի ժամանակ դեռ շատ վառ էր չփորձված հավատը հայ առաջադեմ տարրերի մեջ, բայց դիվանագիտությունն էր անհամերաշխ ու անբարյացկամ, այսօր դիվանագիտությունն է խնդիրն իր ձեռքն առել, բայց հավատն է պակասում հայության:

Մի ժամանակ հայերը երազում էին փրկություն և ստացան արյուն ու ավեր. այսօր սպասում են մահ ու կողոպուտ և կարող են փրկություն ստանալ:

Կյանքի և մահվան այս տարուբերումը, հույսի և հուսախաբության այս ապրումները, ոմանց հավատը, շատերի վարանքը և ավելի շատերի թերահավատությունը մի անսովոր գունավորումն են տալիս մեր անցին հին տարուց Նորին:

Որքան շատ բան կարող է տալ այս տարին մեր տառապյալ հայության և միաժամանակ որպիսի հուսախաբություն ու վիատություն կարող է բերել...

Կարող է մոխիրների տակից վերընծյուղել հին քաղաքակրթության մի դարավոր և դեռ ապրուն կոճղ. կարող են նրա ծիւերը նորից քշտվել և թրջվել նրանց խնամողների արյունով:

Կարող է ավեր ու կոտորածից ահաբեկ մի ժողովուրդ ստանալ մարդկային տարրական իրավունքներ. կարող է սրախողխող լինել և հալածական իր դարավոր հայրենիքից:

Ժողովրդի քրտինքով մշակված արտն ու այգին կարող են պտուղ բերել իրենց տիրոջ համար. կարող են դառնալ հուրի և կացնի ճարակ և աշխատավորին թողնել սովամահ ու բնավեր:

Վերջապես ռուսահայերս կարող ենք ազատվել այն ժամը մղձավանջից, որ կոչվում է թրքահայոց անապահով կացություն և դառնալ

մեր կյանքին ու մեր կրթական ցավերին. կարող է պատահել, որ այդ ժամը մղձավանջն ավելի ահավոր դառնա և գույն ու ձև տա նորից մեր գրականության, մեր իդեոլոգիան ու կամքին:

Ի՞նչ սև ու սպիտակ չի կարող բերել մեզ համար այս Նոր Տարին:

Հայոց հարցը թեև թրքահայության խնդիրն է, բայց ռուսահայերն այնքան ջանք ու աշխատանք են թափել նրա բարվոք լուծման ի նպաստ, այնքան զոհեր են տվել մարդկային և նյութական, այնպես ասրել են նրա ամեն մի ելևեղով, որ կարելի է ասել, թե մեր ներքին կյանքի ամենակարևոր խնդիրներից մեկն է, որ լուծվելու է այս տարի:

Չկա ռուսահայ կյանքում ոչ մի կարևոր խնդիր, որ իր արժեքով հավասար լինի հայոց հարցին, որի մշանակությունը համազգային է: Եվ՛ զարմանալի չէ, որ ամեն միտք այդ հարցի շուրջն է հաճում, ամեն հույս դեպի այդ հարցն է թռչում և ամեն մասնակի մտահոգություն դառնում է ստորադաս այդ մեծ հարցի առթած մտահոգության:

Ծանր է գիտակցել, որ այդքան կենսական հարցի լուծման մեջ հայությունը կարևոր, բայց մանավանդ վճռական դեր չի կարող խաղալ: Սակայն թեև փոքր, բայց և այնպես նա մի դեր ունի խաղալու այս հարցում: Եվ Նոր Տարու շենքին մենք մաղթում ենք, որ նա այդ դերը պատվով կատարե:

Իր կողմից օժանդակել հարցի վերարժարծումին և լուսաբանության և պահպանել ու պաշտպանել հայ տարրը հայկական բարձրավանդակում - ահա այդ դերը:

Այնուհետև՝ ամեն բան մնում է եվրոպական դիվանագիտության և հակադիր շահերի մրցման ու նրանց հավասարազորը գտնելուն: Այնտեղ մենք դեր չունենք:

Սեզ մնում է հիշել բանաստեղծի խոսքը և մաղթել, որ այդպես լինի.

Երնեկ թե այս Նոր Տարին

Ազատ շնչեր Հայաստան...

Հորիզոն, 1913, № 1

Թյուրքահայության պահանջը

Թյուրքահայության պահանջը ընդհանուր բառերով հետևյալ կերպարանքն ունի. կյանքի, գույքի և պատվի ապահովություն և կուլտուրական զարգացման հնարավորություն: Անհատներն ու խմբակցությունները, պաշտոնական մարմիններն ու անպաշտոն շրջանակներ այս պահանջի իրականացման համար առաջարկել և առաջարկում են

զանազան ծրագիրներ, բայց մեր նպատակն այսօր այդ ծրագիրների քննությունը չէ:

Մենք առայժմ քննության չենք առնում նաև այն հարցը, թե ո՞վ պետք է այդ պահանջներին գոհացում տա կամ ուրիշ խոսքով՝ առաջարկված ծրագիրներից մեկն ու մեկը իրագործե: Մենք միայն մի բացասական որոշում կարող ենք տալ. այդ պահանջներին գոհացում տվողը և նրանց համար ծրագիր մշակողը Թյուրքիան չպիտի լինի: Նա ոչ կարող է և ոչ կուզենա հայերի պահանջներին գոհացում տալ. մեկին կխանգարե իր ներքին հողի քաղաքականությունը, մյուսին իր անկարգ և անկանոն վարչական կազմը:

Մեր խոսքը թյուրքահայության պահանջների մասին է, որոնց հանդեպ մեզանում երկու վերաբերում կա: Այդ երկու վերաբերումները ընդունում են թյուրքահայության պահանջի բովանդակ ծավալը, բայց տարբերվում են իրարից իրենց ծանրության կենտրոնով:

Հայ մտավորականության մի հոսանքը իր մեջ է առնում թյուրքահայության պահանջներն ընդգրկող բանաձևի մի մասը, հազիվ հավելով մյուսին. երկրորդ հոսանքն ընդհակառակն:

Մեկը ծանրանում է կյանքի, գույքի և պատվի ապահովության վրա. այդ է համարում հայոց հարցի ծանրության կենտրոնը. մյուսը կուլտուրական առաջադիմության հնարավորության վրա, անտես չառնելով և բանաձևի առաջին մասը:

Անկասկած, նրանք, որ առաջնակարգ տեղ են տալիս կյանքի, գույքի և պատվի եռյակ ապահովության՝ չեն ժխտում կուլտուրական զարգացման անհրաժեշտությունն ու նրա ապահովության կարիքը, բայց նրանք գերադասում են նախ մարմինը փրկել, հոգու փրկությունը հետագայի հարց համարելով:

Մյուսները ընդհակառակը, առաջնակարգ համարելով մարմնի փրկությունը, նույնքան արժեք են տալիս հոգու փրկության և աշխատում են հայության գործերին այնպիսի ընթացք տալ, որ մարմին ու հոգի փրկվին միանգամայն:

Երկու վերաբերումն էլ ահաբեկ մտքի արդյունք են. երկու կարգի մտածողների հայացքները խաչաձևում են իրար և ահաբեկվում սահմանի այս կամ այն կողմը տեսածից: Մեկը տեսնում է կոտորած ու ավեր. մյուսը՝ կուլտուրական զարգացման արգելքներ. մեկը սարսափում է ազգի կորուստից, մյուսը՝ ազգի և ազգայնության: Մեկը նայում է ներկա ճգնաժամին և տեսնում է թյուրքի և քյուրդի օրհասական սուրը հայ մարդու պարանոցին, մյուսը՝ թե այդ սուրը և թե մի

ուրիշ բռունցք հայ ազգայնության դեմ:

Մեկն ասում է. թող հայն ապրի, որ մտածել կարողանա հայ ապրելու մասին. մյուսն ասում է, թող հայն ապրի, բայց հիմնկվանից մտածե հայ ապրելու մասին:

Նայած թե մարդ այս երկու հոսանքներից որով է գնում, դրան համապատասխան էլ հայացք ունի հայոց հարցի մասին: Ոմանց համար հայոց հարցը կոտորածի և ավարի հարց է միայն. ոմանց համար՝ և կոտորածի, և հայ ազգության:

Դրա համար էլ ոմանք ցանականում են հայության ֆիզիկական գոյությունն ապահովել, ինչ ձևով էլ լինի, իսկ ոմանք և՛ ֆիզիկական գոյությունը, և՛ ազգայնությունը, այդ նպատակին նպաստավոր ծրագիրներ ու լուծումներ որոնելով:

Հայ մտայնության այդ երկու հոսանքները տարբեր վերաբերում ունեն նաև դեպի հայության ներքին ուժերը և ինքնապաշտպանությունը: Ոմանք հավատում են հայի ազգայնության ուժին և կարծում են, որ նա կարող է տոկալ ամեն տեսակ պայմաններում, միայն թե ազգն ազատ լինի ֆիզիկապես բնաջնջվելու վտանգից. մյուսները կարծում են, որ հայն իր ֆիզիկական գոյությունը կարող է պահել զինված ինքնապաշտպանությամբ, բայց իր ազգայնությունը պահել ու զարգացնել կարող է ոչ ամեն պայմաններում:

Այս հոսանքներն իրար կասեցնող չեն. նրանք գալիս են տարբեր աղբյուրներից կազմված, բայց բոլորն էլ մեր իրականության լեռներից են բխում և միանալով կարող են կազմել մի հզոր գետ: Երևույթը նույն է, բայց նրան նայում են տարբեր կողմերից: Պետք է այս երևույթը գիտակցել և ազգովին մի տեսակետ ընդգրկել, որ և կլինի երկուսի համարությունը:

Այս հնարավոր է այն ժամանակ միայն, երբ հայոց հարցը քննության առնվի իր բովանդակ ծավալով, առանց ներկայից ահաբեկվելու և ապագային վարդազույն հույսեր կապելու, այլ լրջմիտ հանդարտությամբ կշռադատել հարցի հնարավոր լուծման բոլոր թեր և դեմ կողմերը և միջազգային քաղաքական ուժերի փոխադարձ հարաբերությունները ու գտնել մի լուծում, որ լինեք տեսականորեն գոհացուցիչ և գործնականորեն հնարավոր:

Բոլոր ծրագիրների հիմքը պետք է կազմե մի գերագույն մտածում-ապահովել հայության կյանքն ու ազգայնությունը այսօր և ընդմիշտ:

Հորիզոն, 1913, № 17

Հայոց հարցի ներկա վիճակը

Այն հետաքրքրությունը, որ քաղաքական շրջանակներում արթնացել է դեպի հայ դատը, վերջերս համարյա չքացել է: Ոչ պաշտոնական մամուլը դեռ տպագրում է լուրեր ու հոդվածներ հայոց հարցի մասին, բայց այդ մամուլի կարծիքը վճռական նշանակություն չունի հայ դատի համար: Նա պատրաստում է մի բարյացակամ մթնոլորտ հայ դատի լուծման համար և դրանից այն կողմը չի անցնում ոչ նրա դերը, ոչ պարտականությունը և ոչ իրավասությունը:

Հայ դատի լուծման բանալին գտնվում է ոչ թե մամուլի, այլ պետության և նրանց դիվանագետների ձեռքին, իսկ նրանք այսօր հետաքրքրված են ուրիշ կարգի խնդիրներով և հայոց հարցը մնում է մեկուսի:

Այս փաստի հանդեպ պե՞տք է արդյոք նստենք անմխիթար և ընդունենք, թե մի անգամ ևս հայերին խաբեց եվրոպական դիվանագիտությունը: Կարելի էր այդպես մտածել ու զգալ, եթե այս հետաքրքրության թուլացումը նկատենք տևական և ոչ ժամանակավոր:

Բայց հայոց հարցը լքված չէ առմիշտ, այլ մի որոշ ժամանակով: Եռեակ համաձայնության ներկայացուցիչները հայտնել են պատվիրակներին, թե վայրկյանը նպաստավոր չէ հայ դատի հաջող լուծման համար, որ Բալկանի պատերազմից հետո միայն հնարավոր է դնել հայոց հարցն իր բովանդակ ծավալով և լուծել հայերին նպաստավոր եղանակով:

Արևելյան հարցը լուծվում է մաս-մաս: Այսօր Մակեդոնիայի խնդիրն է հրապարակի վրա, պատերազմը ծագած է նրա առիթով և դիվանագետները նրանով են զբաղված: Խճողել այդ խնդիրը հայ դատի նման մի ուրիշ դժվարալույծ խնդրով, նշանակում է վնասել մի հարցի լուծման, առանց մյուսին նպաստած լինելու:

Դնել մակեդոնական հարցի հետ հայոց հարցը սեղանի վրա, նշանակում է դնել Թյուրքիայի տիրապետության հարցն առհասարակ, մեծացնել Տաճկաստանի ընդդիմության ուժը և միջազգային հակամարտությունը հրահրել:

Խնդիրն այսօր վերաբերում է Մակեդոնիային և Էգեյան ծովի կղզիներին. այս խնդրի հաջող լուծմանը նպաստելու համար ավելի քան կես միլիոն մարդ կանգնած են զենքի տակ և չնայած դրան՝ մեծ պետությանց միջև հազիվ հնարավոր դարձավ ստեղծել մի ոչ-ամուր համա-

ծայնություն և մշակել մի հավաքական դիմում Թյուրքիային, որ ավելի խորհրդի, քան սպառնալիքի բնույթ ունի:

Ո՞րքան ավելի պիտի մեծանա հակամարտությունը, եթե եղած հարցի վրա գա և բարդվի աշխարհի ամենակնճռոտ հարցերից մեկը՝ հայոց հարցը: Եթե այսօր, երբ խնդիրը վերաբերում է Թյուրքիայի *մի մասին*՝ այնքան դժվար ու վտանգալից է դիվանագիտական ուղին, ո՞րքան ավելի խոչ ու խուճեր պիտի կանգնեն նրա ընթացքի առաջ, երբ խնդիրը հասնի համարյա *ամբողջ* Թյուրքիային:

Մակեդոնական խնդրի կարգադրության մեջ այսօր մեծապես շահագրգռված է եռյակ զինակցությունը. վտանգվում են Ավստրիայի տենչերը, Իտալիայի նկրտումներն Ալբանիայի վերաբերմամբ և գերմանական արշավի ապագան: Մի անգամ որ խաղաղության դաշնագրով այս խնդիրները կարգադրվեն՝ քաղաքական երկնքի մի մասը կպարզվի և շանթերով հղի ամպերը կկուտակվեն Հայկական բարձրավանդակի վրա:

Եռյակ զինակցության կենտրոնը այսօր կազմում է Ավստրիան, որովհետև նա է ամենից շահագրգռվածը Մակեդոնական խնդրում. վաղը հայոց հարցն հանդես գա իբր ուրույն քաղաքական խնդիր՝ այդ կենտրոնը կազմելու է Գերմանիան:

Եռյակ համաձայնությունը մասնատելով արևելյան հարցը, դրանով թուլացնում է ընդդիմությունը: Եթե մակեդոնական և հայկական խնդիրները միասին դրվեին քննության՝ այն ժամանակ եռյակ զինակցությունը իր դեմ կունենար երկու մեծ ախոյան՝ հավասարաչափ շահագրգիռ Ավստրիան Մակեդոնիայի և Գերմանիան՝ Անատոլիայի պատճառով: Մինչդեռ հարցը մաս - մաս լուծելու եռյակ համաձայնությունը ամեն անգամ իր դեմն ունի թեև նույն եռյակ զինակցությունը, բայց ամեն անգամ նրանցից *մեկն* է առանձնապես շահագրգռված:

Յուրաքանչյուր քաղաքական մարմնի ընդդիմության չափը ուղիղ հարաբերական է իր ուժին: Թյուրքիան այսօր դեռ բավականաչափ ուժեղ է ընդդիմանալու թե դաշնակից մանր տերության գրոհին և թե եվրոպական դիվանագիտության ստիպումներին: Այդ ուժի աղբյուրը ոչ միայն իր զորքն է, այլև մեծ պետությանց ներքին խուլ պայքարը:

Բալկանյան պատերազմի վախճանից հետո, երբ Թյուրքիան տարածությամբ փոքրանա, ընկնի ռազմապես և համարյա անարժեք դառնա քաղաքական նշանակությամբ՝ նրա դիմադրական ուժը կպակասի և նա ստիպված կլինի ավելի դյուրությամբ զիջումներ անելու, քան տրամադիր է այսօր:

Այս բոլոր նկատումներով հայոց հարցի լուծման հետաձգումը չպետք է լքում առաջ բերն հայության մեջ: Պատերազմից հետո պայմանները շատ ավելի նպաստավոր կդառնան: Ավելի դյուրին է մի խնդիր լուծել, քան երկու խնդիր միաժամանակ. ավելի ձեռնտու է հակառակորդ դաշնակիցների շարքում գործղապես շահագրգռված մի պետություն ունենալ, քան երկու. ավելի դյուրին է հաղթահարված պետության հետ հաշիվ կարգադրել, քան դեռ չընկճված մի կառավարության հետ:

Այսպես, ուրեմն, հայ դատի լուծման հետաձգումը ոչ թե աննպաստ, այլ նպաստավոր պարագա պետք է նկատել:

Հորիզոն, 1913, № 32

Վրաց մտավորականությունը և թյուրքահայերը

«Հորիզոնի» այսօրվա համարում տպված մեր թղթակցի վրաց մանուկից արած քաղվածքները չափազանց ուշագրավ են: Այդ հատվածներով մեր առաջ պարզվում է ոչ միայն վրաց մտածող դասի վերաբերմունքը դեպի թյուրքահայերը, այլև ցուցադրվում է մեր հարևանների մտածելակերպը դեպի առհասարակ մարդկային տառապանքը: Օտար կյանքի ցավոտ կողմերը քննության նյութ դարձնելը շատ անգամ կարող է իսկական մասշտաբ հանդիսանալ պատկերացնելու քննողի հոգին:

Վրաց շովինիստների մասին առաջին անգամը չէ, որ խոսք է լինում հայ մամուլում. նրանց մասին գրված է դեռևս մեր նախորդ սերունդների ժամանակներից. մի բան, որ այսօր էլ նույնն է մնացած՝ դա խնդիրների միակողմանի լուսաբանությունն է. փոխվողը մարդիկ են եղած և մեկ էլ փաստերը:

Ո՞ւմ չէ հայտնի, որ շովեն միտքը նեղ ու սահմանափակ լինելուց առաջ մեծապես չարակամ է. և թե ներքին կյանքի խնդիրներում, թե օտար կյանքից վերցրած փաստերի դիմաց նա միայն մի տեսակետի վրա է կանգնած՝ «սնափառ ազգայնության»: Ապագան թողած, նրա երազանքների ու ապրումների առարկան միշտ էլ անցյալի փառքն է եղած, որոնումների աղբյուրը միշտ հինը, հայրերի գործերը. այդ է պատճառը, որ ժամանակակից հարցերն ու պրոբլեմներն իսկ նրանց ձեռքի տակ փոխվում են հնի և դրվում են նոր խոսքերով ու ձևերով:

Շովեն միտքը՝ որպես դաստիարակ՝ մեղկ է, իսկ որպես գաղափարներ ծնող՝ անգոր. այդ անկարության էլ պիտի վերագրել և նրա դյու-

րագրգռությունը, որ հրապարակ է հանում ամեն անգամ, երբ տեսնում է ռամկավար մտքի նորանոր գրավումները: Դրանով էլ պիտի բացատրել նրանց չարակամությունը հանդեպ հարևան ազգերի հաջողության. փոխանակ ուրախանալու, փոխանակ օտար կյանքի մեջ կատարվող լավ երևույթները ոգևորության աղբյուր դարձնելու, առիթից օգտվելու իր ժողովրդի պակասավոր կողմերը խարազանելու, ներշնչելու բարձր ձգտումներով, շովեն միտքը, ընդհակառակը, չեղած տեղը կրքեր է ստեղծում և մինչև իսկ թշնամանք սերմանում երկու հարևան ցեղերի մեջ:

Շովեն միտքը աններելի չարակամության, նույնիսկ հանցագործության է հասնում, երբ խնդիրը վերաբերում է մի հարևանի, որը քաղաքականապես մինևույն ճակատագրին է ենթակա և որի հետ դարերից ի վեր շփումների մեջ է գտնվել ու կապված եղել շահերով: Վրաց շովինիստը պատմականորեն չէ կարողանում հանդուրժել հային, և ոչ էլ նրա կյանքի մեջ կատարվող փոփոխություններին. նա միշտ առիթներ է փնտրել հարձակվելու հայի վրա և ցուցադրելու իր ժողովրդի առաջ հայի պակասավոր կողմերը: Ներկայումս էլ վրաց շովեն միտքը նյութ է դարձրել թյուրքահայերի տառապանքները և անհամգստանում է նույնիսկ, երբ լսում է «հայկական ավտոնոմիայի» մասին:

Սակայն թողնենք մի կողմ վրաց շովինիստների հին երգը, որովհետև նա այլևս ուժ ու արժեք չունի, քանի որ նրա կողքից արդեն հնչում է համարձակ նույն ժողովրդի ռամկավար միտքը: Այսուհետև այդ մտքին է վերապահվում ինչպես վրաց ժողովրդի ներքին խնդիրների վերագնահատման գործը, նմանապես և այն մուլար, թյուր ու թշնամական վերաբերմունքը, որ նա գծել է հայի նկատմամբ:

Մենք ողջունում ենք վրաց դեմոկրատ մտքի առաջխաղացումը, հանձին «Չվենի Դրոբբա» թերթի, որ գալիս է մերձեցման նոր երաշխիքներ որոնելու ճակատագրորեն կապված հայի ու վրացու մեջ:

Հորիզոն, 1913, № 30

Առույգ ժողովուրդ

Հազիվ թե մեկը պնդել կարողանա, թե մեր հայությունը առույգ ժողովուրդ է: Գյուղում, թե քաղաքում հայը մտախոհ է, տխուր, դանդաղ: Ուրախություն չկա ոչ վարի և ոչ վերի խավերում: Թմրած է հասակավորը, թմրած է դեռատին. կինը նույնքան ինքնամփոփ, որքան տղամարդը:

Պատմական դառն անցյալը մեկը մյուսից ծանր լուծեր դնելով մեր ուսին, ավերելով հայության շենն ու անդաստանը՝ ցամաքեցրել է կարծես և մեր ուրախության աղբյուրը և թողել մի ժողովուրդ՝ տրտում ու մռայլ: Անկախության պակասին ավելացել է չքավորությունն ու աղքատությունը, որոնք կլանել են հայության ժամանակը և զրկել նրան առույգ և ուրախ կյանքով ապրելու հնարավորությունից:

Բայց ի՞նչպես կարելի է կյանքում տոկալ բազմադիմի վտանգների, առանց անհրաժեշտ առույգ տրամադրության: Մի՞թե հիրավի ծերացել է մեր ժողովուրդը: Մի՞թե դարավոր անապահովությունը ընկճել է նրա հոգին և դարձել մի բազմություն, որ քաշ է գալիս և ոչ թե ապրում: Մի՞թե ամեն հանցանք կարելի է տխուր ու դաժան անցյալի վզին փաթաթել:

Այսօր, ինչպես և միշտ, հայությունը, իբրև մի փոքրաթիվ ժողովուրդ, ստիպված է ապրելու բազմատեսակ պայմանների մեջ, բազմալեզու հարևանների կողքին, բազմաթիվ խոչընդոտների դիմաց: Իր գոյությունը իբրև ազգ պահպանելու համար՝ նա պիտի կազմված լինի կորովի և առույգ անդամներից, որ կարողանա ազգերի գրոհի և մրցության մեջ ոտնատակ չլինելու: Դիմադրության ոգին պիտի արթնանա մեր ժողովրդի մեջ, որ մինչև այժմ հանդես է բերել համակերպության և դիմացկունության ոգի: Նա կարողանում է տոկալ, բայց ոչ մաքառել: Տոկացողը կարող է գուցե՝ և այն շատ մեծ դժվարությամբ՝ պահպանել ունեցածը, բայց նոր արժեքներ ստեղծել, նոր իրավունքներ ձեռք բերել, մրցության մեջ մտնել՝ նա չի կարող:

Կարելի է մտածել, թե տոկացողը պայքարող և թմրածը առույգ կարող է դառնալ այն ժամանակ միայն, երբ կան նպաստավոր պայմանները, եթե ոչ մենք ինքներս: Մենք չենք հերքում, որ քաղաքական և ընկերական պայքարները փոխվելով՝ փոխվում է և այդ պայմանների մեջ ապրող ժողովրդի բնավորությունը. բայց այդ պայմանները մոզական գավազանի ուժով չեն փոխվում և որքան մի ժողովուրդ անտարբեր լինի դեպի իր վիճակը, իր գոյության հիմնական խնդիրները և նպաստավոր պայմանները, այնքան այդ վիճակն ու պայմանները կմնան անփոփոխ:

Առնենք միայն մի օրինակ, մեր ժողովրդի ֆիզիկական կրթությունը: Չենք սխալվի, եթե ասենք, որ հայերը զարմանալի հանգստասեր ժողովուրդ են: Խաղը բաց օդում, ծիարշավը, մարմնամարզությունը, լողը, ամառային շրջագայությունները և ամեն կարգի սպորտ անծանոթ են հայերին: Դեռ կա ավելին. հայն այդ ամենը համարում է անմիտ բան, «երեխայություն», զուր ժամանց, օտարին հատուկ մի ունակություն:

Դպրոցներում երեխաները սովորում են ամեն տեսակ գիտելիքներ, որոնց կեսը անպետք է կյանքում և այնտեղ թողնում են իրենց առողջությունը: Իդեալական աշակերտ է համարվում լուռ ու խոնարհ երեխան, որ գլուխը կախ գրում է իր դասը և ուշադիր լսում դասատուին: Աշխուժի և ֆիզիկական կրթության մասին ոչ մի խոսք:

Դեռատի սերունդը սիրում է անվերջ գրույցներ. նստած փոքրիկ սենյակներում՝ նրանք կարդում են մեծ-մեծ գրքեր, գլուխ հոգնեցնում իմաստասիրական խրթին հարցերի վրա, որոնց հասնելու համար մի ամբողջ կյանք պետք է ապրած լինել- մինչդեռ անցնում է թանկագին ժամանակը և պատրաստում նրանցից մի անավյուն ու դալուկ հասարակություն:

Հասակավորները ամբողջ օրերով ապրում են խանութներում ու գրասենյակներում և ցերեկվա պակասը լրացնում են ժողովարանում, թղթախաղի սեղանի մոտ կամ տանը բազմոցի վրա: Կյանքն անցրած մարդկանց մասին խոսելն անգամ ավելորդ է. նրանք ապրում են մի անշարժ ու դանդաղասահ կյանք, մինչ մահը սրբե ամենքին այս աշխարհի երեսից:

Եվ ծանձրությամբ ու հոգնությունը թագավորում են ամեն տեղ՝ դպրոցում, տանը, ժողովներում, հավաքություններում: Անցնում են օրերը միապաղաղ, անհրապույր ու գորշ, միջահատված մանր ընդհարումներով, բամբասանքով, անարգ կռիվներով, թշնամությամբ ու քննով և դարձնում մթնոլորտը խեղդիչ, անհանդուրժելի: Այդտեղ խինդը չի վարակում, այլ երբեմն շողում է մի վայրկյան. հազիվ մի ժպիտ ու զսպված ծիծաղ՝ և ամեն ինչ թաղվում է համածավալ թմրության մեջ:

Մենք կարծում ենք, որ գոյություն ունեցող պայմաններում հնարավոր էր այս համատարած և ազգային ցավին մի դարձան տանել: Կազմել մարմնամարզական մի ընդհանուր միություն և նրա ցանցով բռնել բոլոր հայաբնակ վայրերը. կազմակերպել տեղական և ընդհանուր մրցություններ, խաղեր, զբոսանքներ: Այս ամենը մի թարմություն, մի նոր հոսանք կմտցներ երիտասարդության կյանքում: Ժամանակով նա կփոխեր մեր ապրելակերպը, մեր տրամադրությունը և կստեղծեր մի առույգ հասարակություն և ժողովուրդ:

Մենք չենք կարող բավականաչափ զորեղ բառեր գտնել ֆիզիկական կրթության և մարզանքների նշանակությունը ներբողելու մի ազգի համար: Թյուրքահայերի մեջ այդ ուղղությամբ սկսված է մի շարժում, որ իր հատուկ թերթն ունի և իր միությունները շատ տեղերում: Մենք դիտմամբ օրինակը առնում ենք հայության կյանքից, որ չկարծեն, թե մեր առաջարկը վեր է մեր ժողովրդի ուժերից: Եթե Թյուրքիայի անհրավ պայման-

ներում մեր ցեղակիցները կարողացել են առաջ բերել այդ տեսակ մի շարժում՝ մենք կարծում ենք, որ Ռուսաստանում շատ ավելի նպաստավոր հող կա նման ձեռնարկության համար:

Ահա մի ասպարեզ, որ կարոտում է նախաձեռնող ուժերի: Թող հանդես գա երիտասարդությունը և թոթափելով թմրությունը վրայից՝ գործունեության մի նոր ասպարեզ բանա ժողովրդի առաջ: Ֆիզիկական կրթությամբ մի ժողովուրդ դառնում է առույգ, իսկ առույգ ժողովուրդը միշտ ընդունակ է գեղեցիկ և առողջ ստեղծագործության:

Հորիզոն, 1913, № 54

Արտագաղթը դեպի Ամերիկա

«Հորիզոնի» անցյալ օրվա և երեկվա համարներում լույս տեսած թղթակցությունները Փոքր - Ղարաքիլիսա և Փոքր - Կարնի գյուղերից գալիս են մի անգամ ևս հիշեցնելու մեր ժողովրդի մեջ վերջերս ծայր առած մի չարիքի մասին, որ հետզհետե սպառնալից չափեր է ընդունում. դա հայ գյուղացիության արտագաղթն է դեպի Ամերիկա:

Արտագաղթը նոր երևույթ չէ մեր անդրկովկասյան գյուղացիության համար: Նրա նշանները մենք տեսնում ենք դեռ անցյալ դարու 70-ական թվականներին, իսկ 80-ական թվականներից սկսած, երբ Բազվում, Թիֆլիզում և անդրկովկասյան այլ կենտրոններում սկսվում է տնտեսական կյանքի շարժում՝ նա խիստ լայն չափեր է ընդունում: Ներկայումս, կարելի է ասել, մեր գյուղերում ընտանիք չկա, որ մի կամ մի քանի ներկայացուցիչ չունենա որևէ քաղաքում, էլ չենք խոսում ամբողջ ընտանիքներով գաղթածների մասին:

Գաղթականական այս հոսանքի ամենազխտավոր պատճառները անկասկած տնտեսական են:

Այն հողը, որ տասնյակ տարիներ առաջ հատկացված է եղել մեր գյուղացիությանը՝ ներկայումս ի նկատի ունենալով ժողովրդի աճումը, չափազանց անբավարար է նրա կարիքներին բավարարություն տալու համար: Հողի պակասությունը ավելի ևս զգալի է դառնում, երբ ի նկատի ենք ունենում, որ մեր գյուղացու հողագործությունը ներկայումս գրեթե նույն նահապետական ձևով է առաջ տարվում, ինչ որ տասնյակ և մինչև անգամ հարյուրավոր տարիներ առաջ:

Սակայն և այնպես պետք է նկատենք, որ մեր գյուղացու տրամադրու-

թյան տակ գտնված հողն այնքան քիչ է, որ ինտենսիվ երկրագործությունը կարող է միայն որոշ չափով մեղմել սակավահողության չարիքը, բայց վերացնել չի կարող:

Այսպիսի պայմաններում հասկանալի է, իհարկե, որ հայ գյուղացին պետք է ստիպված լինի թողնել իր օջախը և դիմել այնտեղ, ուր նրա աշխատանքը գործադրություն է գտնում և արժեքավորվում:

Տնտեսական պատճառի հետ մասին, թեև նրանից ավելի պակաս ուժով, գաղթականության դրդում են հայ գյուղացիներին և քաղաքական ու սոցիալական պատճառները: Տգետ պաշտոնյաների կամայականություններն ու կոպտությունները մի կողմից, զանազան բեկերի ոտնձգությունները երկրորդ կողմից և գյուղական կուլակների դավերը երրորդ կողմից ստեղծում են գյուղում մի անտանելի մթնոլորտ, որի մեջ իր իրավունքները պաշտպանելու անկարող, բայց և սողալու սովորություն չունեցող մարդը դժվարությամբ կարող է ապրել: Իսկ այստեղից հասկանալի է, որ նա առաջին իսկ հնարավորության դեպքում պետք է թողնի այդ մթնոլորտը և օտարության մեջ հանգիստ կյանք փնտրի:

Վերոհիշյալ տնտեսական-սոցիալական-քաղաքական պատճառներից առաջացած գաղթականության առաջն առնելու համար դիմել քարոզների և հորդորների՝ անմտություն կլինեք, ի հարկե: Այսպիսի գաղթականության դեմ կռվելու համար պետք է չեզոքացնել նրա իրական պատճառները, այսինքն պետք է աշխատել մի կողմից՝ ընդլայնել գյուղացու հողը, ինտենսիվ դարձնել նրա տնտեսությունը, ինքնօգնության ընկերակցությունների միջոցով ազատել նրան վաշխառուների և զանազան գյուղական տգրուկների ճիրաններից և մյուս կողմից՝ զարգացնել նրա իրավագրացողությունը, որպեսզի նա կարողանա դիմագրավել վարչական ապօրինություններին, բեզական ոտնձգություններին և գյուղական կուլակների մեքենայություններին:

Սակայն այն գաղթականությունը, որ դեպի Ամերիկա է ծայր տալիս, արդյունք է ոչ միայն վերոհիշյալ տնտեսական և սոցիալ քաղաքական պատճառների, այլև այն տգիտության, որ ունի մեր գյուղացին Ամերիկայի կենսական և հասարակական պայմանների մասին:

Ամերիկայում, շնորհիվ մեքենական արդյունաբերության զարգացման, աշխատանքը այնքան պարզ մասերի է բաժանվել, որ վարժված բանվորների կարիքն այստեղ գրեթե այլևս չէ զգացվում: Շնորհիվ այդ աշխատանքի բաժանման և կազմակերպության, կիսապուշ մեգրերն էլ այնտեղ կարողանում են ամենաբարդ և ամենանուրբ ապրանքներն արտադրել:

Այսպիսի հանգամանքներում ամերիկացի արդյունաբերողի համար խիստ ծեռնտու է փոխանակ տեղական կրթված բանվորների՝ բանեցնել նեգրեր, չինացիներ, հնդկացիներ, թյուրքեր, հայեր և այլն, որովհետև վերջիններս չունենալով այն կուլտուրական պահանջները, ինչ որ ունեն առաջինները՝ նրանցից շատ ավելի աժան գնով են աշխատում: Բայց այդ աժան գինն էլ մեր տեղական աշխատավարձի համեմատությամբ շատ մեծ է երևում. հայ գեղջուկը, որ իր գյուղում օրական 30-50 կոպ. աշխատավարձից ավելին չի տեսել, հանկարծ հրավեր է ստանում օրական 2, 3 մինչև անգամ չորս ռուբլիով աշխատելու: Հասկանալի չէ՞, որ այդ գների անունը լսելիս նրա ախորժակը բացվում է և նա հափշտակվում է Ամերիկա գաղթելու մտքով:

Այս հափշտակությունը չէր լինի, եթե, ինչպես ասացինք, գաղթելու պատրաստակամ մեր գյուղացիները տեղյակ լինեին այն աշխատանքի պայմաններին, որոնց տակ նրանք ստիպված են լինելու ճկել իրենց մեջքը խոստացած հրապուրիչ վարձի փոխարեն:

Այն մեքենական արդյունաբերությունը, որ աշխատանքը այնքան պարզ մասերի է վերածել, միաժամանակ այնպիսի լարման է հասցրել մարդկային մկանների գործունեությունը, որ ամերիկացի բանվորը օրական ութ ժամից պակաս չաշխատելով հանդերձ՝ երեսուն հինգ տարեկան հասակից դենը արդեն աշխատանքի համար անպետք է նկատվում: Դանդաղ աշխատանքի սովոր հայ գյուղացին այդպիսի լարված աշխատանքի հազիվ 4-5 տարի կարող է դիմանալ, որից հետո նա իբրև անդամալույծ պետք է վտարվի գործարաններից:

Սակայն չարիքը դրանով չէ սահմանափակվում: Օտար բանվորներին սովորաբար աշխատանք են տալիս այնպիսի վայրերում և այնպիսի գործերի մեջ, որոնք սպանիչ ներգործություն ունին մարդկային օրգանիզմի համար: Այդպիսի տեղերում Ամերիկայի բանվոր աշխատեցնելը ծեռնտու չէ ոչ միայն նրա պահանջած բարձր աշխատավարձի, այլև այն պատճառով, որ ամերիկական մահացությունը թանկ է նստում արդյունաբերողի վրա, որովհետև նա ստիպված է որոշ հատուցումն տալ մեռնողի մերձավորներին: Մինչդեռ օտար բանվորի մահը այդպիսի դժվարություններ չէ պատճառում նրան. ո՞վ է օտար որբերի, նրա վշտակարոտ ծնողների մասին մտածողը:

Վերջապես ի՞նչ է ներկայացնում Ամերիկայում այն աշխատավարձը, որով այնքան հրապուրվում է մեր գյուղացին: Կյանքն Ամերիկայում այնքան թանկ է, որ աշխատավարձի կեսը, իսկ շատ դեպքերում երեք քառորդը, հազիվ բավականցնի նրա ապրուստի համար: Այնպես որ, վեր-

ջին հաշվով, մեր գյուղացուն առաջարկվող աշխատավարձը այն չէ լինելու, ինչ որ թվում է նրան այստեղ:

Այս հարևանցի դիտողություններն էլ բավական են համոզելու, որ Ամերիկյան այն դրախտը չէ, ինչ որ երևակայում է հայ գյուղացին, իսկ եթե սրա վրա ավելացնենք լեզվի անգիտությունը, երկրի օտարությունը, զանազան խաբեբաներից պաշտպանվելու անկարողությունը և այլն և այլն, կտեսնենք, որ այդ երևակայական դրախտը մի իսկական դժոխք է լինելու նրա համար:

Մենք կարծում ենք, որ մեր գյուղական ազգաբնակչությանը պարզելով այս հանգամանքները, կարելի կլինի հակազդել ամերիկական հրապույրներին և այս տնաքանդ գաղթականության առաջն որոշ չափով զոննե առնել: Եվ մեր գյուղական ինտելիգենցիան չպետք է թերանա իր պարտքը կատարելու: Հրապարակական դասախոսությունների, մասնավոր զրույցների և համապատասխան ընթերցանության միջոցով նա պետք է ցրե այս «ամերիկական դրախտի» իլյուզիան մինչ այն աստիճան, որ մեր գյուղացին գերադասեր իր «ծանոթ ցավերին» հանդուրժել նորից, քան թռչել դեպ նոր և անհայտ ցավեր:

Հորիզոն, 1913, № 71

Գերմանիան և հայոց հարցը

Գերմանական պառլամենտում արտաքին գործոց նախարարության նախահաշիվը քննելիս՝ նույն գործոց ստատուս-սեկրետար Եագովը, խոսելով Գերմանիայի վերաբերումի վրա դեպի պետությունները և միջազգային խնդիրները, Թյուրքիայի մասին ասել է հետևյալը. «Տաճկաստանը, թեև ծանրապես վիրավոր՝ պատվով դուրս կգա կռվից ու, թեկուզ և պարփակված իր ասիական կալվածներում՝ լայնարձակ դաշտ կգտնե իր ուժերի նոր գործադրության համար: Մենք հույս ունենք, որ առաջիկա բանակցությանց ժամանակ առիթ կունենանք նպաստելու, որ Թյուրքիան դժվարության չհանդիպե այդ խնդիրն իրագործելիս»:

Չափազանց նշանակալից է այս բացորոշ հայտարարությունը, որ անում է մի պաշտոնական անձնավորություն մի երկրի ընտրյալ ներկայացուցիչների առաջ: Այս հակիրճ բառերի մեջ կա մի ամբողջ ծրագիր: Գերմանիան սրանով անդարձ կորած է համարում Թյուրքիայի համար նրա եվրոպական մահանգները: Մխիթարում է պարտված Թյուրքիային ապագա գործունեության հեռանկարով՝ Ասիական Տաճկաստանում:

Հայտնում է իր հավատը նրա ապագայի վերաբերմամբ, խնդիր չէ՝ անկեղծորեն՝ հավատացած իր ասածին, թե ոչ: Եվ խոստանում է իր աջակցությունը Թյուրքիային ապագա բանակցությունների ժամանակ:

Երբ Թյուրքիան անփոփոխ Ասիայում, նրա գործերին առավելապես միջամտելու իրավունք ու առիթներ կունենան նախ՝ եռյակ համաձայնությունը և ապա Գերմանիան՝ Բաղդադի երկաթուղու հետ կապված շահերի հետևանքով: Դեռ Թյուրքիան Եվրոպայից փաստորեն չի քաշվել Ասիա, Գերմանիան արդեն շտապում է իր բարյացակամությունը դեպի նա հրապարակորեն վկայել:

Եվ հասկանալի են այս վերաբերումի դրդիչ պատճառները: Գերմանիային պետք է Թյուրքիայի բարեկամությունը շահել՝ եռյակ համաձայնության դեմ իր շահերը պաշտպանելու համար: Իր դաշնակիցները առաջվա նման ուղղակի շահագրգռված չէին Թյուրքիայի ապագա վիճակով, մանավանդ որ նրանք ստացել են որոշ գոհացում: Իտալիան ձեռք է բերել Տրիպոլիտանիան, Ավստրիան միացրել է Բոսնիան և Հերցեգովինան: Բացի այդ ստեղծվում է ինքնավար Ալբանիա, որից շահվողները դարձյալ այդ երկու պետությունները պիտի լինեն: Մինչև իսկ Բալկանի մասը տերությունները տեր են դառնում ընդարձակ տարածությունների և միայն Գերմանիան է, որի ձեռքը նոր բան չի ընկնում բացի Բաղդադի երկաթուղին: Նրան մնում է բարեկամ լինել Թյուրքիային՝ ապագա շահերի ակնկալությամբ...

Այսպիսի ընթացք մշակելով Թյուրքիայի վերաբերմամբ, Գերմանիան պետք է աշխատի պաշտպանել Թյուրքիայի շահերը Ասիական նահանգներում և այդ շահերը հասկանալի Թյուրքների նման: Այս նմանությունը կարող է այնքան հեռու գնալ, որքան չի վնասի Գերմանիայի սեփական շահերին. ու եթե Թյուրքները դեմ են Հայաստանի ինքնօրինության՝ Գերմանիան չէ, որ նրան խորհուրդ կտա կամ կստիպե տալ այդ ինքնօրինությունը հայերին:

Թյուրքերի կողմը տաշելու քաղաքականությունը նրան դրդելու է համակերպել Տաճկահայաստանի քաղաքական հայացքներին՝ Թյուրքիայի ներքին գործերի վերաբերմամբ: Սրա անմիջական հետևանքը այն կլինի, որ Գերմանիան ամեն կերպ կընդդիմանա Հայաստանի ինքնօրինության, եթե եռյակ համաձայնությունը մտածե երբեք կատարել իր խոստումը և բարձրացնել հայոց հարցը բալկանյան պատերազմի հաշվեհարդարից հետո:

Եվ գերմանական քաղաքականության զուգահեռ՝ մենք տեսնում ենք նաև գերման ընտրյալների կարծիքը, որ նույնպես աննպաստ է հայոց

հարցին: Ստատու-սեկրետարի հայտարարությունը, որ արժանացել է հավանության, այնուհետև և դարձել է քննության առարկա: Խոսք առնող պատգամավորներից ոմանք, դժբախտաբար անհայտ է, թե որ կուսակցության են պատկանում նրանք, շոշափել են և հայոց հարցը: Հեռագիրն ասում է. «Հետագա ճառախոսները շոշափեցին նաև Հայաստանի հարցը և ցավակցություն հայտնեցին հայերին հասած ճնշումների համար, գտնելով սակայն, որ վայրկյանը նպաստավոր չէ հայոց հարցը հարուցանելու համար, որովհետև այդ դեպքում Ռուսաստանը հնարավորություն կստանա գրավելու Հայաստանը»:

Մի կողմ թողնելով պաշտոնական ցավակցությունը, որ ամենևին պետք չէ Թյուրքիային, քանի որ նրանով չի վերանում և ոչ մի հարստահարություն, հետաքրքրական է, որ գերման պատգամավորներն եռյակ համաձայնության պատկանող պետությունների նման ժամանակն աննպաստ են համարում հայոց հարցի լուծման համար, այն զանազանությամբ սակայն, որ մինչդեռ սրանց պաշտոնական ներկայացուցիչները հուսադրում են հայերին, թե պատերազմի վախճանից հետո քննության պետք է առնվի հայոց արյունոտ հարցը, Գերմանիան չի թողնում և ոչ մի հուսատեղ:

Այս հայտարարությունն իրոք արվում է միաժամանակ թե՛ Թյուրքիայի և թե՛ եռյակ համաձայնության: Սրանով որոշվում է Գերմանիայի վերաբերումը դեպի Թյուրքիայի ապագան և դեպի հայոց հարցը: Հայտարարությունը Թյուրքիային ասում է, որ Գերմանիան դեմ կլինի ասիական նահանգների ամբողջության խախտումին, իսկ եռյակ համաձայնությանը հայտնում է, որ ամեն ծրագիր այդ նահանգների հետագա վիճակի մասին պետք է կազմվի և իրագործվի Գերմանիայի մասնակցությամբ: Սա պարզապես պաշտոնական կրկնությունն է այն անպաշտոն հայտարարությունների, թե Գերմանիան իր բաժինը կպահանջե Թյուրքիայի բաժանման դեպքում՝ լինի դա անդամատություն, թե ազդեցության շրջանակների որոշում:

Այսպիսով, հայոց հարցի այս կամ այն լուծումը կախված է այն բանից, թե ի՞նչ հասկացողության կզան եռյակ համաձայնությունը և Գերմանիան Թյուրքիայի ասիական կալվածների վերաբերմամբ: Առայժմ Գերմանիան շահում է Թյուրքիայի բարեկամությունը, որին նա դուրս է դնում կղավաճանե, եթե համապատասխան փոխարինություն ստանա:

Համենայն դեպս անկասկած է, որ ստատու-սեկրետարի այս հայտարարությամբ հայոց հարցի լուծումը դժվարանում է:

Քրդերն ու հայերը

Մոտ կես տարի է արդեն, որ համառ լուրեր են գալիս Հայաստանից քուրդերի խմորման մասին:

Երբ առաջին անգամ այդ լուրերն երևացին մամուլում, մենք այն կարծիքը հայտնեցինք, թե քրդական այդ շարժումը հակառակ չի կարող լինել հայերին, եթե նրա նպատակն է իրավակարգ հաստատել հայկական բարձրավանդակի վրա:

Ռուս թղթակից Օլգենիինի դասախոսությունից բավականին պարզվեց այդ շարժման բնույթը, որի վրա պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնել, որովհետև մինչդեռ սովորական ընթերցողը, հետևելով մամուլի հաղորդած տեղեկություններին՝ կարող էր կարծել թե հայոց խնդրում երեք ազդակ կան՝ հայերի պահանջները, թյուրք կառավարությունը և Եվրոպան, զարմանքով կանգ ենք առնում քրդական լայնածավալ խմորման դիմաց, որ Հայոց հարցի չորրորդ ազդակ է հանդիսանում: Չի կարելի ասել, որ մեր վարիչ շրջանակները չեն նկատած քրդական շարժումը, բայց որ նրա վրա չեն դարձրել լուրջ ուշադրություն, այդ կետը դուրս է ամեն կասկածից:

Քրդական շարժումը գերիշխանության շարժում է ամենից առաջ: Նա ավելի ներքին է, քան արտաքին. որոշ ցեղային խմբակցություններ մրցում են իրար հետ և այդ մրցումով ավելի են տարված, քան թե թյուրք կառավարության դեմ կռվելով, որին սակայն չեն համակրում: Քրդական երեք խմբակցություն կա, որոնք ախոյան են իրար. նրանք ապրում են Հայաստանի արևմուտքում, Վանա լճի հարավում և հյուսիսում:

Բացի մրցորդ խմբակցություններից, կան քրդական մանր միություններ, որոնք չեն հարում նրանցից մեկն ու մեկին, այլ հետամուտ են խառն վիճակից օգտվելու՝ հայերին հարստահարելով: Այս ցեղերը ամենամեծ վտանգն են ներկայացնում հայության համար:

Բոլոր քրդական ցեղերը դժգոհ են թյուրք կառավարությունից և հակված են դեպի Ռուսական պետությունը և նրա գերիշխանությունը: Անգլիացիները աչքի առաջ ունենալով այն վտանգը, որ կարող է առաջ գալ այդ համակրությունից, մանավանդ որ դրան ավելանում է հայերի համակրանքը Ռուսաստանին, թյուրք պաշտոնյաների և ուրիշ գործակալների միջոցով հարավի քրդական շրջաններում ամեն կերպ վարկաբեկում են Ռուսաստանին, դրանով խախտելու համար քրդության զգացումի ընդհանուր միությունը: Նրանք մասամբ հաջողել են հասնել իրենց

նպատակին և այսպիսով համայն քրդությունը ենթարկվել է բաժանման՝ հարավի քրդություն և հյուսիսի քրդություն: Հյուսիսում անգլիացիք դժվարությամբ կարող են հաջողություն ունենալ, որովհետև այնտեղի քուրդերը մերձավոր կապեր ունեն ռուսաբնակ ցեղակիցների հետ և շատ լավ են տեսնում Թյուրքիայում և Ռուսաստանում ապրող քուրդերի կացության խոշոր տարբերությունը:

Այսպիսով քրդությունը բաժանված է երեք խմբակցության ինքն իր մեջ և երկու շրջանների՝ արտաքին ազդեցությունների շնորհիվ: Քրդական այս ծովի մեջ ապրում են հայերը և բոլոր ցեղամիջյան ընդհարումները կատարվում են, բայց մանավանդ թե պիտի կատարվեն հայաբնակ շրջաններում:

Քուրդերի ամեն մի խմբակցություն բանակցում է հայերի հետ, որ օգնեն իրենց՝ ցեղամիջյան կռիվների ժամանակ, և հայերն այդպիսով ընկնում են մի ծանր դրության մեջ: Քուրդը, իբրև ցեղային կազմով ապրող մի ժողովուրդ, չունի ազգության գաղափարն ու զգացումը. մինչդեռ հայերը շատ վաղուց է արդեն, որ ազգ են և ունեն ազգային գործը զգացում: Մինչդեռ քուրդի աչքում ամեն մի քուրդ այս կամ այն ցեղի անդամն է ներկայանում, հայի աչքում ամեն հայ ոչ թե ցեղային, այլ ազգային միության անդամ է:

Տեսակետների այս տարբերությունը, որ արդյունք է քաղաքակրթական տարբեր աստիճանների վրա գտնվելուն՝ մի անհասկացողություն է մտցնում հայ-քրդական փոխհարաբերությունների մեջ:

Քուրդի համար բնական է իր շրջանի հային առաջարկել միանալ իր հետ և կռվի դուրս գալ մյուս քրդական ցեղային խմբակցության դեմ, որ նույնպես իր հերթին առաջարկում է, անշուշտ իր շրջանի հայերին, միանալ իր հետ՝ առաջին խմբակցության քուրդերի դեմ կռվելու համար: Բայց հայի աչքում դա նշանակում է ազգի անդամներին հանել իրար դեմ և վնասել հայության: Հայկական բարձրավանդակի վրա գոյություն ունի «հայություն» գաղափարը, որ մի կենդանի ըմբռնում է և թելադրում է համապատասխան մտքեր, զգացումներ ու վարմունքներ. մինչդեռ նույն վայրերում «քրդություն» գաղափարը գոյություն չունի. կա միայն «ցեղ, աշիրեթ» գաղափարը, որ նույնպես մի շատ կենդանի ըմբռնում է և ղեկավարում է քրդական կյանքի բոլոր կողմերը:

Մյուս կողմից քրդական ցեղերի դեմ կանգնած է թյուրք կառավարությունը, որին ամենևին հաճելի չեն քրդական շարժումները. նախ՝ որ դրանով մեծապես կարող է վտանգվել հայաբնակ նահանգների խաղաղությունը և տեղիք տալ ռուսական միջամտության և երկրորդ՝ որ քուրդ

ցեղերը ըմբոստ տարր են ներկայանում պետության համար, վնասում են նրա պաշտոնյաներին, հրաժարվում են հարկ վճարել, չեն ծանաչում թյուրք կառավարության հեղինակությունը և այլն:

Թյուրք կառավարության դեմ այսպիսով երկու տարր կա՝ հայկական բարձրավանդակի վրա. մի կողմից հայերը, մյուս կողմից քուրդերը. երկուսի դեմ էլ պետք է գործեն կառավարությունը՝ թյուրք տարրի գերիշխանությունն ապահովելու համար: Մի ժամանակ նա քրդական վտանգից ազատվեց՝ նրանց ավարատենչ բնազդներն ուղղելով դեպի հայերը և հովանավորելով ու զինելով նրանց՝ ռուսների դեմ պատվար կանգնելու համար:

Այսօր կացությունը շատ ավելի բարդ է և դժվարին. քուրդերն արդեն հակված են դեպի ռուսները, բայց առաջվա նման զինված են կառավարական և մասնավոր զենքերով. ուժը կա, բայց համակիր չէ թյուրք կառավարության: Մյուս կողմից լուրջ միջամտությունից խուսափելու մտահոգությունը ստիպում է թյուրք կառավարության հայերին հալածել ավելի «սահմանադրական» ծանապարհներով. նա չի կարող ավար ու կողոպուտ հրամցնել քուրդերին հայերի հաշվին, այսինքն զրկված է նրանց կաշառելու հնարավորությունից:

Այս նեղ դրության մեջ անհնարին չէ, որ թյուրք կառավարությունը հայերի օժանդակության դիմե քուրդերին զսպելու համար, այսինքն արժանապես փոխե իր վերաբերումը դեպի հայերը՝ քուրդերին ընկճելու համար, ինչպես մի ժամանակ դաշնակից և հովանավոր դարձավ քուրդերին՝ հայերին ոչնչացնելու համար: Բայց այստեղ կա մի ուրիշ դժվարություն, կառավարության վաղեմի անվստահությունը դեպի հայերը: Նրան հայտնի է անշուշտ այն հույսը, որ տածում են հայերը դեպի ռուսական հովանավորությունն ու օգնությունը. մյուս կողմից ո՞վ կարող է երաշխավորել, որ հայերը զենք ստանալով քուրդերի դեմ գործելու՝ վատագույն դեպքում չեն միանա քուրդերի հետ և միասին չեն պահանջի հայ-քուրդական ինքնօրինություն, դիմելով ռուսաց հովանավորության, իսկ լավագույն դեպքում՝ կառավարութանը օգնելուց հետո՝ զենքը չեն պահի իրենց ձեռքին և նույն դիրքը չեն բռնի կառավարության հանդեպ, ինչ որ բռնում են քրդական ցեղերն այսօր:

Հորիզոն, 1913, № 118

I

«Հորիզոնի» վերջին առաջնորդողները թյուրքահայոց ինքնօրինության (ավտոնոմիայի) հնարավորության մասին առիթ են տալիս մի քանի քաղաքական կշռադատումներ անելու, որ կարծում ենք հետաքրքրական կլինեն ընթերցողի համար:

Վաղուց հայտնի է ամենքին, որ Թյուրքիայի բաժանման խնդիր կա. վեց մեծ պետությունները չէին կարողանում բավարար բաշխումով լուծել այդ խնդիրը, որովհետև հակամարտ էին իրար թե՛ գատ-գատ և թե՛ իրենց խնբակցություններով՝ Համաձայնությամբ և Ձինակցությամբ: Մեծ պատերազմը շրջեց այդ խնբերի կերպարանքը. Համաձայնությունը դարձավ Ձինակցություն, իսկ Ձինակցությունը պառակտվեց: Փոխվելու վրա է և նրանց փոխհարաբերությունը. հին Ձինակցությունը գնալով թուլանում է, նորն՝ ընդհակառակը տեղ է դառնում դրության: Եռյակ Համաձայնության դեմ չքանում է համազոր մրցորդը՝ Ձինակցությունը, բայց դրանով չի վերանում հակամարտությունը համաձայնող երեքի միջև: Մասնավորապես Թյուրքիայի բաժանման խնդրում ընդհարվելու են նրանց շահերը, որովհետև միմիայն այդ երկրի վրա նրանք կարող են սահմանակից դառնալ կամ իրար մոտենալ:

Այսօրվան բարեկամը վաղը կարող է դառնալ թշնամի և հակառակը. մեզ օրինակ Իտալիան և Գերմանիան մի կողմից, Ռուսաստանն ու Յապոնիան՝ մյուս: Այս հանգամանքն անշուշտ նկատի կունենան Համաձայնության անդամները և կաշխատեն լավապես ապահովել իրանց բաժին ընկած նոր կալվածները իրանցից որևէ մեկի հետագա գրավման վտանգից:

Արդ՝ թյուրքի բաժանման դեպքում Անգլիան կարող է ստանալ Միջագետքը. Քուվեյթից վար՝ դեպի հարավ արդեն իր ազդեցության տակ էր. պատերազմից հետո կտիրապետե եղածին և կընդարձակե իր կալվածը ավելի հյուսիս՝ Պարսկաստանի սահմաններից մինչև Մեռյալ ծովի հարավը՝ մինչև Միջերկրյան, որով Արաբիան ևս նրա ազդեցության տակ կմնա՝ եթե որոշել է ոչ թե գրավել այդ թերակղզին, այլ թողնել արաբ ազդեցիկ ցեղերին՝ բայց իր հովանավորության տակ: Միաժամանակ վերջնականապես տեղ կդառնա և Եգիպտոսին՝ ուրեմն Սուեզի ջրանցքի երկու ափերին:

Ֆրանսիային բաժին կընկնի Սիրիան և Պաղեստինը, գուցե նաև Մի-

ջագետքի հյուսիսային մասը: Վերջին կետը կախված կլինի այն հանգամանքից, թե քանի՞ շերտ պատվար կուզի քաշել Անգլիան Ռուսաստանի դեմ՝ Միջագետքի իր հարուստ կալվածները պաշտպանելու համար:

Ամատողիան կմնա թյուրքերին, ելք ունենալով դեպի Միջերկրյան՝ Մերսինից արևմուտք: Այդ երկիրն է եղած թյուրք ցեղի բնակավայրը և զորության օրրանը. այդտեղից է նա արշավել աշխարհի չորս կողմը հրով ու սրով և նույն տեղը պիտի դառնա ապրելու մի նոր կյանքով՝ զուսպ ու համեստ: Եվրոպական Թյուրքիայի մնացորդը, Պոլիսն ու նեղուցները դուրս կգան նրա ձեռքից, որովհետև Պոլսի տերը չի կարող աննշան մի տերություն լինել, իսկ Համաձայնությունը չի կամենում հանդուրժել հզոր Թյուրքիա: Հայաստանն ևս չի կարող մնալ թյուրքերին, որովհետև դրանով հայոց հարցը չի ստանա բավարար լուծում և սպառնալիք կմնա միջազգային խաղաղության համար:

Բացի այդ՝ պատերազմի նպատակների մեկին՝ փոքր ազգերի իրավունքի ճանաչման՝ աղմկաշունչ հակասություն կլինի զրկել մի ժողովուրդ ինքնօրեն գոյության իրավունքից, որին նա ձգտել է տասնյակ տարիներ, որին ձգտում է այսօր և որի ձգտումը օրինավոր և արդար է ճանաչել ինքը Համաձայնությունը:

Մնում է Պոլիսը, նեղուցներն ու եվրոպական Թյուրքիան և Հայաստանը: Ֆրանսիան և Անգլիան չեն կարող տիրանալ դրանց, եթե կամենան իսկ: Բավական չէ ունենալ մի երկիր, պետք է նաև պաշտպանել կարողանալ: Հայաստանը պաշտպանելու համար՝ լինի Ֆրանսիան, թե Անգլիան՝ պետք է տեր լինեն բովանդակ Միջագետքին կամ Սիրիային, որ ծովի վրայով կապ պահեն այդ երկրի հետ: Այդ երկուսից և ոչ մեկին չի կարող բաժին ընկնել Հայաստանը, որովհետև դրանով խախտված կլինի բաժինների համաչափությունը: Սիրիա և Հայաստան, կամ Միջագետք և Հայաստան շատ խոշոր բաժիններ կլինեն Ռուսաստանի ստանալիքի համեմատությամբ: Այդ տեսակ բաժանման արգելք կհանդիսանա և Անգլիայի մշտական ձգտումը՝ սահմանակից չլինել Ռուսաստանին:

Նեղուցներն ու Պոլիսն ևս չեն կարող անցնել Ֆրանսիային և Անգլիային, անհնարին կլինի այդ նեղ ցամաքաշերտն ու այդ կարևոր նեղուցները պաշտպանել Ռուսաստանի դեմ, որի զորությունն աճում է օրերով: Սլավոնական օղակն արևմուտքից ու հյուսիսից կխեղդե Պոլսի տերերին, ինչպես խեղդում է Թյուրքիային, տանելով դեպի կործանում: Եվ պատմությունը ցույց է տալիս, որ Անգլիան կամ Ֆրանսիան շատ լավ գիտակ են այդ հանգամանքին. նրանք չեն ձգտել տիրանալ

Պոլսին ու նեղուցներին. նրանք աշխատել են պահել Թյուրքիան, թողնել նրան իր մայրաքաղաքն ու նեղուցները և դրանով արգելք դնել Ռուսաստանի ահավոր աճումին և անխորտակելի ձգտմանը դեպի Միջերկրյան:

Ո՞ւն պետք է մնա Պոլիսը, նեղուցներն ու Հայաստանը:

II

Պոլիս, նեղուցներ և Հայաստան ամենից ավելի կարևոր բաժինն են Թյուրքիայի ժառանգության, կարևոր մանավանդ քաղաքական տեսակետից և Համաձայնության երեք անդամների համար միաժամանակ: Հայկական բարձրավանդակում հաստատված որևէ մեծ պետություն սպառնալու է Սիրիային և Միջագետքին: Բաբելոն և Ասորեստան իրենց բովանդակ ուժով անկարող եղան վերջնապես նվաճելու լեռնոտ Հայաստանը, իսկ եթե հայոց լեռների վրա հաստատուն ոտք դնե Ռուսաստանի նման մի հզոր պետություն՝ Սիրիայի և Միջագետքի տերերը միշտ պետք է վտանգված նկատեն իրենց կալվածները: Եթե այդ ընդարձակ հողերի տերը լիներ Գերմանիան, նա պակաս վտանգված կզգար իրեն, որովհետև սպառնանքի դեպքում կարող էր Ռուսաստանի կողմ խթել արևմուտքից: Ֆրանսիան և Անգլիան այդ նպաստավոր վիճակի մեջ չեն: Նրանք դիվանագիտական բարդ կապեր պիտի հաստատեն, որ կարողանան Ռուսաստանին սպառնալ որևէ կողմից. նախ մի դաշնակցություն Ֆրանսիայի և Անգլիայի միջև ընդդեմ Ռուսաստանի, ապա այդ երկուսի և Չինաստանի ու Յապոնիայի միջև արևելքից և թուլացած Գերմանիայի, Ավստրիայի և Ռումանիայի միջև արևմուտքից, դավեր, Պարսկաստանում և ուրիշ վայրերում անհրաժեշտ կլինեն՝ օտար սահմաններից հարվածելու համար Ռուսաստանին: Եվ այդ ամենը մի նպատակով. պաշտպանելու Միջագետքն ու Սիրիան Ռուսաստանի գրավման կամ գերիշխանության սպառնալիքից: Այդ հողերը պաշտպանող բանակները պիտի գան հեռվից, մայր երկրներից, որովհետև գաղութների զորքով անհնարին կլինի կռվել Ռուսաստանի պես մի հզոր ցամաքային պետության դեմ: Ֆրանսիայի և Անգլիայի զորքերը այսպիսով պիտի զործեն իրենց հանգրվանից հեռու, մինչդեռ ռուս բանակները իրենց հայրենիքից մի քայլ առաջ գալով՝ արդեն մտած կլինեն թշնամու հողը: Թույլ տալ, որ Ռուսաստանը հաստատվի հայկական բարձրավանդակում՝ նշանակում է վտանգել Սիրիական և Միջագետային կալվածները:

Այսքան կարևորություն ունի հայ ժողովրդի բնավայրը Համաձայնության համար:

Ի՞նչ քաղաքական կարևորություն ունին Պոլիսն ու նեղուցները նույն Չամաձայնության համար: Հաստատվելով Պոլսում և տեր լինելով նեղուցներին՝ Ռուսաստանը ծովային մեծ պետություն կդառնա: Սա մի սպառնալիք է Միջերկրականի շուրջը գտնված պետություններին և ամենից առաջ Անգլիային և Ֆրանսիային: Սպառնալիքը բնավ այն չէ, որ Ռուսաստանը կարող է ձգտել նոր գրավումներ անելու, այլ այն, որ նրա ծայրը միշտ իր բովանդակ ուժով կհնչե աշխարհի գործերը կարգադրելու ժամանակ: Միջին եվրոպայի մանր ու խոշոր տերությունները մինչև այսօր պատվար են կանգնել Ռուսաստանի և Միջերկրականի տերերի միջև. Ֆրանսիային, Անգլիային և Իտալիային սպառնալու համար ռուս զորքերը պետք է կտրեին Գերմանիայի և Ավստրիայի լեռները, ձորերն ու հարթավայրերը: Ծովից նա ոչ ոքի սպառնալ չէր կարող. հարավից նրա առաջին բռնում էր Բոսֆորը, արևմուտքից՝ Բալթիկի նեղուցներն ու սառույցները: Տիրանալով Պոլսին իր նեղուցներով՝ Ռուսաստանի զորությունը հնար կստանա լիովին երևան գալու:

Արդ՝ Ֆրանսիան և Անգլիան՝ Իտալիայի և Հունաստանի հետ դաշնակից՝ միշտ կարող են մրցության դուրս գալ ռուս նավատորմի դեմ, եթե սա երևա Միջերկրյա ծովում:

Այսպիսով Ռուսաստանի հետ շատ ավելի հեշտ է մրցության ելնել Միջերկրական ծովի վրա, քան Միջագետքի և Սիրիայի տափաստաններում, հետևապես Չամաձայնին տիրելով Ռուսաստանը շատ ավելի վտանգավոր մրցակից կդառնա, քան Պոլիսն ու նեղուցները գրավելով: Տիրանալով միանգամից և Պոլսին իր նեղուցներով, և Չամաձայնին՝ Ռուսաստանը խախտած կլինի բաժինների համաչափության սկզբունքը և եթե պետք լինի, որ Ռուսաստանը Թյուրքիայի ժառանգությունից իր մատուցած ժառանգություններին համաչափ մի բաժին ստանա՝ Ֆրանսիան և Անգլիան ավելի շուտ Պոլիսը կգիջեն իր նեղուցներով, քան Չամաձայնը, որովհետև առաջին դեպքում նրանք գործ պիտի ունենան Ռուսաստանի ծովային ուժի դեմ, որին համազոր մի ուժ կարող են երևան հանել, իսկ երկրորդ դեպքում նրա ցամաքային ուժի դեմ, որին դժվար կարողանան հակադրել: Բացի այդ՝ գիջելով Չամաձայնը ռուսներին՝ Ֆրանսիան և Անգլիան գոհացում տված չեն լինի նրանց դարավոր տենչանքին և կենսական պահանջին - ունենալ չսառչող նավահանգիստներ բաց ծովի վրա՝ իբր տնտեսական և ռազմագիտական հեճարան: Մինչդեռ գիջելով Պոլիսն ու նեղուցները՝ դրանով փրկած կլինեն իրենց նոր գրավումները ռուս աշխարհակալության վտանգից: Պետք է միանգամ ընդմիշտ հասկանանք, որ Ռուսաստանը չի կարող

հայոց լեռներին. Չամաձայնը պետք է նրան միմիայն իբր ուղի դեպի Միջերկրյա ջրերը. եթե այդ ուղին ընթանա Պոլսի վրայով՝ Չամաձայնի կարևորությունը չափազանց կնվազի:

Այսպիսով՝ եթե Չամաձայնությունը վճռեց և կարողացավ տեր դառնալ Թյուրքիայի հարուստ ժառանգության, Չամաձայնը ամենալայն մտքով ինքնորեն (ավտոնոմ) մի երկիր կդառնա: Հայոց հարցի այդ ձևով լուծելն է միայն, որ նպաստավոր լինելով Չամաձայնության երեք անդամների շահերին միաժամանակ՝ գոհացում կտա և բովանդակ հայության տենչանքներին:

Հոդված, 1914, № № 276-277

Միջագային համերաշխության տոնը

Մայիսի մեկը տոնն է ընկերվարության, ինչպես Ծնունդն ու Ջատիկը - քրիստոնեության: Դարեր շարունակ քրիստոնեությունը փորձեց համախմբել մարդկությունը և դարձնել մի դաշնավոր եղբայրություն, բայց չհաջողեց, ընկերվարությունը ձգտում է նույն նպատակին և պիտի հաջողի: Որովհետև մեկը կոչ էր անում մարդու բարի և այլասեր մղումներին, որ վիճելի են շատերի համար, իսկ մյուսը կոչ է անում մարդուն, իբրև աշխատավոր և շահիմաց էակի, հատկություններ, որ չեն կարող վեճ հարուցանել: Քրիստոնեությունը հին մարդու փորձն էր՝ համախմբել մարդկությունը վերացական արդարության անունով. նա հենվում էր մարդու այլասիրական զգացումներին և համակիր ապրումներին. ընկերվարությունը նոր մարդու փորձն է՝ համերաշխել մարդկությունը իրական արդարության անունով. նա հենվում է աշխատանքին և նրա շահերի պայծառ գիտակցության: Ինչպես քրիստոնեությունը բոլոր մարդկանց կուզեր տեսնել սիրով ապրող որդիներ մի հոր, որ երկնքում է, այնպես էլ ընկերվարությունը, բոլոր մարդկանց ուզում է տեսնել աշխատավոր և նույնիրավ որդիներ մի մոր, որ երկիրն ինքն է: Երկու համաշխարհային մեծ իդեալներ՝ Ծնունդը հունական և ֆրանսիական հանճարի, որ անցնելով հրեական մտքի բովից - Պողոս և Մարքս - դարձել են հզորագույն ազդակները համաշխարհային պատմության:

Բայց ընկերվարության շողարձակ իդեալը անհամար խոչ ու խութեր ունի իր ճամփին: Ձանգվածները, որոնց նա բերում է փրկություն, մրափում են գիտակցության խավարում: Բռնություններ ամեն կարգի՝

թանձր մշուշ կապած՝ չեն թողնում փրկության արևի շողը թափանցե մարդկանց սիրտն ու միտքը: Արևմտյան մարդկությունը, համեմատաբար գիտակից և հակամարտ ինքն իր մեջ՝ իր բովանդակ կազմով ծանրանում է ասիական մարդկության վրա. պետություններ և հայրենիքներ սահմանազատում են ոչ թե ոգեկան մշակույթները, այլ բռնության շահերը, և ստեղծում են շառաչուն, աշխարհավեր բախումներ՝ աշխատավոր դասերի անգիտակից մեղսակցությամբ:

Աշխատանքի շահերի նույնության և միջազգային համերաշխության գիտակցությունը այն չափով չէր արմատացած աշխատավոր դասերի մեջ, որ աշխարհը չդարձներ արյան ճապաղիք և զինվոր ու հրազեն չմատուցաներ շահագործող փոքրամասնության և վարիչ խմբակներին:

Եվ դեռ որքան ազդակներ կան միջազգային տարանջատման և կործանիչ մեկուսացումի:

Սակայն վաղուց ծիլ է արծակել մեծ գաղափարը միջազգային համերաշխության և հզորապես զարգանում է այս ահավոր պատերազմի ընթացքում: Աշխատավոր խավերն սկսել են գիտակցել իրենց կարևորությունը համաաշխարհի կյանքում. ու թեև աղոտ՝ նկատում են այլազգի աշխատավորին իբր եղբայր ու դաշնակից:

Բանվորական մեծ զանգվածներն արդյունք են դրամատիկական մեծ ձեռնարկների: Դրամատիկությունը պատռում է հայրենիքի և պետության սահմանները և աշխարհը նկատում է դմակ, իսկ իրան - դանակ: Նրան զուգահեռ՝ ամենուրեք ստեղծվում են հսկայական զանգվածներ աշխատավոր խավերի: Հողագործները աշխարհի ամեն անկյունում՝ հողատիրոջ և հարկերի բեռան տակ՝ ապրում են չարքաշ գոյություն: Տիրող դասերը զինված բռնուցքով պաշտպանում են իրենց արտոնությունը իրենց ոչխարների բուրդը խուզելու: Բռնությունն ու շահագործումը դառնում են համաաշխարհային և աշխատավորությունը աղոտ կերպով գիտակցում է համատարած չարիքը, որի շահերը նույնն են ամեն տեղ և ներհակ են իր շահերին: Մայիսի մեկը արտահայտությունն է այդ գիտակցության:

Ո՞րպիսի հորիզոններ են բացվում մարդու աչքին մայիսի մեկի համաաշխարհային այս տոնին, որ դառնում են անժիր ու անհուն ապրիլի 18-ի և մայիսի 1-ի նույնացումով ... Այսօր երկրագունդն իր շրջապատույտին տիեզերական տարածությունը լցնում է միևնույն կոչով, որ պոռթկում է միլիոնավոր աշխատավորության հոգնատանջ կրծքից: Եվ Ռուսաստանը՝ գաղափարական, և՛ Գերմանիայի բռնության գերի, և՛ Ֆրանսիան ասպետ, և՛ Անգլիան գործնական, և՛ Ամերիկան համարձակ, և՛ ճա-

փոնը արևածագային, և՛ Ավստրալիան խաղաղական ջրերում, «հազարք հազարաց և բյուրք բյուրոց», անթիվ մանր ու խոշոր միություններ, այլաբարբառ, բայց նույնիմաստ՝ նույն տենչն ունեն - ազատագրել իրենց, նույն փափագը - ազատագրել մարդկությանը արտոնվածի, կեղեքի և բռնավորի լուծից և ստեղծել մի հոյակապ, նոր մարդկություն - աշխատավոր մարդկության հսկա և համերաշխ միություն, որ զգում է թե առժամավոր տերն է այս գեղեցիկ երկրագունդի, որ լողում է այսքան սքանչելի աստեղաշյա երկնքում. մի բազմություն, որ այսօր աշխատում ու վայելում է աշխարհում - ինչպես բանվորը համայնացած գործարանում և հողագործը համայնացած հողի վրա. և ուրեմն ի՞նչ սեփականություն, ի՞նչ բռնություն, ի՞նչ տառապանք, ի՞նչ տանջանք, ինչու՞ համար, ու՞մ համար. մի աշխատավոր, ուրախ մարդկություն, առույգ ու գեղեցիկ, ուրույն, բայց նույնարժեք հաճույքներով. աշխարհը տուն ամենքին, աշխատանոց և հանգստավայր, ուր չկա զրկում ու կեղեքում, գռեհիկ անկումներ և մտքի ու նյարդի հանցավոր նրբացումներ, այլ հանրօգուտ միտք, առողջ զգացում և խաղաղություն տիեզերական:

Քրիստոնեությունը դարձավ կեղծիքի կրոն և բռնության դաշնակից. հողատեր դասերն ստեղծեցին ստրկություն ու ճորտություն, դրամատեր դասը - ազգային պետություններ և աշխարհավեր մրցումներ. աշխատավոր դասերը, որ տալիս են զենք ու զորք և հենարան դառնում բռնության, այսօր աղոտ, բայց վաղը լուսապայծառ մերկությամբ պետք է զգան վերջապես խավարի և բռնության այն բեռը, որ կրել են դարերով: Այն ժամանակ վերջ բոլոր անջատումներին, այն ժամանակ ոչ թե մի հոտ և մի հովիվ՝ ինչպես երազում էր հին մարդկությունը, այլ համաաշխարհային աշխատավոր եղբայրություն, ուր անհատը կապրի առանց վաղվան գռեհիկ հոգսերի, ուր մարդու կյանքը օրորոցից գերեզման կլինի ապահով և հավասար ամենքին, որ կրում են մարդ անունը:

Մայիսի մեկը այս հեռավոր ու լուսավոր իդեալի բուռն տենչով պիտի վառե բոլոր մասնակիցների սիրտը, և բռնության ամեն զարթոնքին պիտի արթնանան մարդկության միտքն ու խիղճը և մղեն նրան պիրկ վճռականությամբ այդ փրկարար իդեալը երկնքից բերելու երկիր և թշնամության ու բռնության աշխարհում հաստատելու առհավետ:

Հորիզոն, 1917, № 78

Դասակարգային կռվի՝ թե քաղաքական հեռանկար

Երբ վրաց ազնվականն ու թուրք հողատերը հին կարգի օրով համեմարաշխած հանդես եկան հայ փոքրամասնության դեմ Անդրկովկասի ինքնավարության խնդրում՝ շատերն այդ երևույթը համարեցին հետադեմ դասերի մրցությունն ընդդեմ դրամատիրության, իսկ այդ մրցումի ազգային գունավորումը հետևանք նկատեցին այն հանգամանքի, որ թուրքն ու վրացին ունեն ազնվական ու հողատեր ազդեցիկ դասեր, իսկ հայը՝ միայն դրամատիրություն:

Մենք հավատացած էինք, թե ռամկավարության հաղթանակի օրերում, երբ այդ դասերը դառնան անազդեցիկ վրացի, հայ ու թուրք միջավայրում՝ Կովկասի երեք ազգային խոշոր զանգվածների աշխատավոր խավերը, իբր նույն շահերն ու պահանջներն ունեցող, դաշն ու համեմարաշխ հանդես կզան վերակազմելու մեր երկրի քաղաքական և տնտեսական կյանքը ազատ և արդար հիմքերի վրա:

Ռամկավարության հաղթանակը շատ ավելի շուտ, թափով ու լրիվ հասավ, քան կարելի էր սպասել: Եվ ի՞նչ եղավ արդյունքը հայ աշխատավոր զանգվածի համար: Մինչդեռ մենք, օգտվելով խոսքի ազատությունից, մարդկային ամեն հնար գործ էինք դնում հայ ու թուրք աշխատավոր զանգվածները համերաշխության բերել հանուն նրանց անմիջական և կենսական շահերի նույնության՝ գյուղացիական համագումարում տեսանք, թե մենք ենք միայն, որ ընթացել ենք այդ ճամփով: Վրաց ռամկավարության վարիչները Կովկասի մանր ու խոշոր իշխանությունն իրենց բուռը հավաքած՝ «արտաքին» քաղաքականության մեջ գնում են ազնվական դասի գծած շավղով:

Սա մի անակնկալ հայտնությունն եղավ հայ ռամկավարության համար: Այսպես ուրեմն՝ ոչ թե աշխատավոր զանգվածները, այլ ազգային հատվածները, ոչ թե աշխատավոր խավերի համերաշխության, այլ գերիշխանության ձգտումներ և դաշնակցություն հետադեմ տարրերի հետ. ոչ թե իշխանության և ազդեցության բաշխում, այլ «ով չուստ՝ նա կուշտ» -ի սկզբունք և պառակտիչ քաղաքականություն:

Այստեղ ոչ թե դեր են խաղում ընկերվարական ըմբռնումներն ու գործածները, այլ քաղաքական հեռանկարը, որ մենք կարծում էինք վրաց ազնվականության և թուրք հողատեր դասի տենչանքը միայն: Բայց քանի որ հեղափոխության հետևանքով դրությունը չփոխվեց, որքանով

խոսք կարող է լինել թուրք ու վրացի վարիչ շրջանակների վերաբերման մասին դեպի հայությունը՝ ակամա գալիս ենք այն եզրակացության, թե վրաց ռամկավարության վարիչների և թուրք հողատեր-դրամատերերի դաշնակցությունը արտահայտություն է մի որոշ քաղաքական հեռանկարի, որ ունեն Կովկասի վերաբերմամբ թուրք վարիչ դասերն ու վրաց ռամկավարները:

Այն հանգամանքը, որ ընկերվարական լինելն անգամ ոչ միայն անգոր եղավ վրաց ռամկավարներին թուրք վարիչ դասերի դեմ հանելու, այլ և տարավ նրանց դեպի սրտագին դաշնակցություն՝ մեզ բերում է այն մտքին, թե վրաց ռամկավար վարիչների գործունեության մեջ քաղաքական մղումներն ավելի մեծ դեր ունեն, քան ընկերվարական - դասակարգային պայքարի շահերը: Ու երբ կյանքի բերումով նրանք կանգնում են երկրորդայնի դիմաց - դասակարգային պայքար՝ թե ազգային քաղաքական շահ - նրանք առաջինը զոհում են երկրորդին: Այդ էր պատճառը, որ ստացվեց այսպիսի մի արտառոց պատկեր. Ջաֆարով և ընկ. ավելի մոտ նկատվեցին Ռուսաստանի հեղափոխության և ընկերվարության դատին, քան Բ. Բ. Դաշնակցությունը... Անհնարին էր երևակայել այդպիսի մի երևույթ, եթե վրաց ռամկավարության վարիչներին մտահոգեր հեղափոխության և Կովկասի աշխատավորության շահն ավելի, քան իրենց քաղաքական հեռանկարը: Վրաց ռամկավարությունը պետք է առաջնորդվեր թուրք ու հայ աշխատավորության հետ ձեռք ձեռքի՝ ընդդեմ մեր երկրի տիրող ու հետադեմ դասերի: Միմիայն գերիշխանության տենչը և քաղաքական հեռանկարը կարող էին վրացի ռամկավար վարիչներին մղել դեպի թուրք հողատեր դասը: Ձորեղ պայքարում, որ հանդես եկավ գյուղացիական համագումարում, վրաց դեմոկրատիայի վարիչները ծանրացան ազգային-քաղաքական վայրկյանի վրա և դրանով շատ շատերի աչքերը բացին Կովկասի իրադարձությունների վրա ...

Չորիզոն, 1917, № 139

Վտանգը

Պետրոգրադի դրությունը խառնակ է, գործերի և մտքերի շփոթը սպառնում է գերազանցել ամեն ամուր կամք և պայծառ նախատեսություն: Չափավոր խավերը ներկայացնող միմիստները, որ առանց այն էլ դժվար էին գործակցում ընկերվար պաշտոնակիցներին, Ուկրաինայի

ինքնավարությունը պատրվակ առած՝ հրաժարվել են պաշտոնից, ստեղծելով կառավարական տագնապ:

Միաժամանակ անհանգիստ գորքեր ու բազմություններ դուրս են եկել հրապարակ, զինված ցույց արել, որի հետևանքով կան սպանվածներ և վիրավորներ: Նրանք պահանջ են դրել, որ Ջինվ. և Բանվ. Պատգ. խորհուրդն իր ձեռքն առնի երկրի բովանդակ իշխանությունը: Սասանել է ժամանակավոր կառավարության հեղինակությունը և հսկայական ճիգ է պետք սանձահարելու կրքերի պռոթկունը և կյանքն իր հունով առաջ վարելու համար:

Այս վայրկյանին, երբ համառ ու հզոր թշնամին սպառնում է երկրի ազատության, երբ հետադեմ տարրերը սպասում են դարանամուտ, երբ ավարատենչ ախորժակները խլրտում են հանցավոր խավերի մեջ-առանձնապես սպառնալից արժեք են ստանում Պետրոգրադի խառնակությունները, որ կարող են արծազանքել մեր պետության ամենահեռավոր անկյուններում:

Այդ ցույցերի մեջ միացած են գերմանական գաղտնի գործակալը իր արբանյակներով, հին կարգի կողմնակիցներն ու նոր կարգից հիասթափվածները, շփոթից անձնական և անցողիկ շահ ակնկալողները և զանազան զառանցողներ ու նյարդասպառ մարդիկ, որ մեծ թվով հանդես են գալիս հեղաշրջումների ժամանակ, իբրև գաղափարախոս շփոթի և անիշխանության:

Չեղափոխության առաջին օրերից անհնարին եղավ ստեղծել մի գործը և պատկառելի կառավարություն, որ կարողանար պատուհասել, ուր պետք է, և չվարաներ անողոր լինել ի պահանջել հարկին: Թե առաջին և թե երկրորդ կառավարությունը որդեգրեցին մի անսովոր վարչաձև. Ռուսաստանի պես մի լայնածավալ, բազմատարր և պատերազմող պետություն մտածեցին կառավարել հորդորով ու քարոզով: Բայց ամեն պարկեշտ հորդորող միշտ բավական թվով ստահակ լսող կուռեմա, որոնց միմիայն ուժը կարող է սանձել. իսկ այդ ուժը չէր գործադրվում ոչ դուրսը՝ թշնամու դեմ, որի թնդանոթին եղբայրական խոսք էին ուղղում, և ոչ ներսը՝ խառնակիչների դեմ, որոնց ուզում էին համոզելով կարգի հրավիրել: Արդյունքն եղավ այն, ինչ որ տեսնում ենք:

Ժողովրդի ամենատարրական և ստորարժեք ապրումները արած հեմարան, հեռու միջազգային կացության լուրջ ըմբռնումից, պետության ապագայի հանդեպ անտարբեր, շոյելով դասալիքի վախկոտությունը և ժողովրդի հոգնածությունը, վառելով ստորին խավերի ավարատենչ ախորժակները-դուրս եկան ազատությանն անարժան տարրեր, որ վա-

րակեցին բովանդակ երկրի ամեն անկյուն իրենց տմարդի քարոզներով, գորքի մի սովոր մասը դարձրին անպետք որևէ հանրագուտ գործունեության և դրանով ջլատեցին կառավարության ուժը արտաքին և ներքին թշնամու դեմ:

Երերում է պետության բովանդակ կյանքը այդ անիշխան և հանցավոր տարրերի ձեռքին և սպառնում է երկրի մոտիկ ապագան թաղել ազգամիջյան և քաղաքացիական ընդհարումների շեղջակույտի տակ: Այս խառնակությունները եթե չսանձվեն համառ ու հզոր բազուկով՝ սպառնում են մեր բոլոր ճակատների հաջողության, դրա հետ միասին և մեր պետության միջազգային դիրքին և առանց կարողանալու ազատել մեզ պատերազմից՝ տանում են դեպի նոր և ահավոր ընդհարումներ:

Այսօրվան ռազմատյացը, որ հնչուն բառերով քողարկում է իր դասալիքությունն ու տմարդությունը, հասարակության տականքը, որ իր ավարատենչ բնազդներին ելք է որոնում հանուր շփոթի մեջ, հին կարգի սպասարկուն, որ հույս ունի պղտոր քրի մեջ միապետության կորած ծուկը որսալու, բոլորը ստիպված կլինին կամ նոր ճակատներ դիմելու կռվի կամ կընկնեն գնդակահար ավելի առողջ և հայրենասեր անձանց գնդակից: Հրժիգներն իրենք ամենից առաջ կայրվեն իրենց հրդեհած շենքի մեջ, ապա թե մոխիրների վրա կիշխե մի նոր ուժ - դիկտատուրան: Կարծամիտներն արժանի չեն ուրիշ վիճակի:

Բայց քանի դեռ ուժ և իշխանություն կա Ռուսաստանի առողջ ռամկավարության ձեռքին, պետք է եռանդի արտակարգ լարումով դիմագրավել անիշխանության ահագնեցիկ վտանգին, որ անգծելի չափեր կառնի ճակատների թուլացման հետևանքով և արյունի մեջ կխեղդի մանավանդ մեր Կովկասը, ուր հեղափոխության ճշմարիտ բարեկամներն այնքան քիչ են և թշնամիներն այնքան հզոր...

Հորիզոն, 1917, № 141

Ռամկավարություն և իշխանություն

Եթե ռուս ռամկավարությունն իր գերիշխանության օրերից ձեռք չէր առնում խիստ միջոցներ այն բոլոր քայքայիչ քայլերի դեմ, որոնց դառն պտուղներն եղան Պետրոգրադի զինված ցույցերը և ճակատի թուլացումը - դրա պատճառներից մեկն էլ այն հոռի կարծիքն էր, թե իշխանության խստությունն ու ռամկավարությունը անհարիր գաղափարներ են:

Բայց ի՞նչ բան է իշխանությունը, եթե ոչ այն միջոցները, որոնցով հարկադրում են ստահակներին և ըմբոստներին խոնարհել օրենքի պահանջի առաջ. օրենք, որ ռամկավար երկրներում մեծամասնության կամքի ձևակերպությունն է: Իշխանությունը մի սուր է. որքան կտրուկ՝ այնքան ազդեցիկ: Եվ երբ խոսում են իշխանության մասին, հարցն այն չէ՝ **թե՛ կտրուկ է այդ սուրը** - նա միշտ և ամեն տեղ պետք է կտրուկ լինի ազդելու համար - այլ հարցն այն է, **թե ո՞ւմ ձեռքին է այդ սուրը և ի՞նչի համար է գործ դրվում:** Բայց կարճամիտներն ու չարամիտները շփոթում են դիտմամբ կամ հանգետս սուրն ու նրան գործածող ձեռքը և թուլացնում ու զուլացնում սուրն ու ձեռքը միանգամայն - ռամկավարությունն ու նրա իշխանությունը:

Վերջին դեպքերը ծանր հարված տվին այդ կարճամիտ ու չարամիտ հայացքին և ստիպեցին հասկանալու, **թե իշխանությունը չպետք է դադարի իշխանություն լինելուց նույնիսկ այն ժամանակ, երբ միահեծան թագավորից նա անցնում է ռամկավարության ձեռքը:** Ոստիկանությունը նույնքան կարգապահ պետք է լինի, հակախուզարկությունը նույնքան արթուն, զորքը նույնքան հավատարիմ և անձնվեր, վարիչ մարմինները նույնքան համարձակ ու փութկոտ, որքան հին կարգի ժամանակ: Եվ ավելի, քան այն ժամանակ, որովհետև հին կարգը գործ ուներ հլու հպատակների հետ խաղաղ օրերին, երբ հաց ուներ ժողովուրդը, իսկ ռամկավարությունը գործ ունի ազատ քաղաքացիների հետ ավերիչ պատերազմի օրերին, երբ բավարար չէ նրանց պարենը, երբ շատերն ազատություն և սանձարձակություն համարում են նույնիմաստ, երբ ոչ միայն խոսում են խելքին փչածը, այլև անում են մտքին եկածը:

Մի կառավարություն, որ վայելում է երկրի վստահությունը, որ շիտակ ու վճռական՝ խորտակում է հին կարգի ամեն մնացորդ, որ ջնջում է անխնա բոլոր անարդար կարգերն ու օրենքները. մի կառավարություն, որ ստեղծում է ամենից ազատ վարչաձևն ու զորքն աշխարհում, մարմին է տալիս ամենից համարձակ հղացումներին, աշխատավոր ժողովրդի շահերը գերադասում է ամեն բանից և հրավեր է կարդում լուսավոր մարդկության համախմբվել լավագույն ապագայի համար - այդպիսի կառավարությունն իրավունք ունի գործադրելու լրիվ իշխանություն և անողոք ու կտրուկ լինելու կարճամիտների և չարամիտների հանդեպ, որոնք կամ չեն ըմբռնում ժամանակի հրամայական պահանջները և իրենց զառանցական մտածումը գերադասում են համայն ժողովրդի խավաքական իմաստությունից, կամ պարզապես ծախում են իրենց գրիչը, խոսքն ու գործը թշնամուն և կամ երկրի մեջ ստեղծում են շփոթ

230

հին կարգը վերականգնելու սին հույսերով:

Թույլ տալ, որ դասալիքը առաքինություն հռչակե իր տմարդությունը և դավեռազմի ճակատում. թույլ տալ, որ զառանցողը կամ դավաճանը զինված խմբերի գլուխն անցած՝ թուլացնե երկրի դիմադրական կորուվը՝ շփոթ ստեղծելով ամենուր. թույլ տալ հնչուն բառերով սնգուրել դավաճանության երեսը և վտանգել հեղափոխությունն ու ազատությունը - նշանակում է շիլ ըմբռնում ունենալ ռամկավարության և իշխանության մասին:

Ռամկավար կարգերն ինքնըստինքյան անարժեք են, եթե չեն բերում ազատություն և հաց: Եթե հանուն հեղափոխության մեր երկիրն ու մենք պիտի ստրկանանք գերմանական բռունցքին, եթե հանուն ռամկավար կարգերի մենք տեր չենք լինելու մեր անձին, գույքին ու պատվին, եթե հանուն ազատության պետք է կորչենք սովամահ - այն ժամանակ ո՞րն է տարբերությունը բարբարոս Թյուրքիայի և ազատ Ռուսաստանի միջև:

Ազատությունը, ապահովությունն ու հացը միմիայն ուժով կարելի է ձեռք բերել և պահպանել: Այդ ուժն այսօր գտնվում է ռամկավարության ձեռքին և այդ ուժը պետք է գործե կտրուկ, շիտակ և անողոք: Թուլությունը մահ է բերում ազատության և ռամկավարության վարկին. իսկ երբ վարկաբեկ լինի ռամկավարությունը՝ անգույն բազմության միտքը կդառնա դեպի հին կարգերը և այդ տրամադրությանը հենված՝ բոլոր բորենիները դուրս կգան իրենց բներից իշխանության գլուխն անցնելու համար:

Փոխված է իշխանության սուրը բռնող ձեռքը. նա վայելում է երկրի մեծամասնության լիակատար վստահությունը: Այդ սուրը պետք է միշտ կտրուկ պահել, որ աշխատավոր դասերի կարճամիտ ու չարամիտ թշնամիները սարսեն և վերջ տան իրենց դավերին:

Հորիզոն, 1917, № 145

Ռուսաստանի վերագրավումը

Ժամանակավոր կառավարությունը Ռուսաստանում կարծեք օտար կառավարություն լինի թշնամու երկրում՝ այնքան շատ թշնամիներ ունի: Թեև զորքի և ժողովրդի մեջ կան բազմություններ, որ համակիր են նրա ընթացքին, բայց այդ համակրությունն այնքան զորավոր ու անվերապահ չէ, որ կարողանա ինքնովին, առանց հարկադրիչ ուժի աջակցության՝ հաստատուն հենարան դառնալ ազգընտիր կառավարության:

Ժողովրդի մի շատ ստվար բազմություն որոնում է հանգիստ և պա-

րեն: Նրա համար գնահատելին կարգն է ամենից առաջ: Ինքնին անդեմ ու անգույն՝ այդ բազմությունը վճռական դեր է կատարում պատմության մեջ: Նա միշտ թեքվում է հաղթողի կողմը, պայմանով, որ ստանա օրապահիկ և հանգիստ: Նա չի հանդուրժում երկարատև աղմուկ ու շփոթ. նա պատրաստ է ձեռք մեկնելու ամեն ուժի, անկախ նրա որակից՝ միայն թե կարգը վերահաստատվի: Նա պատրաստ է բարձրացնել ամեն դրոշ, աղաղակել ամեն նշանաբան, ծափահարել ամեն անձ ու գործ – որչափով այդ անուն է մեծամասնությունը և տևապես չի խանգարում նրա հանգիստը: Մի երկու օր, մի քանի ամիս նա դեռ կարող է դիմանալ վերուվարումի, բայց բուք համառությամբ և ցուլի արնալից աչքով նա կարող է հանկարծ վեր կենալ պոզահարելու ամեն խմբակ ու անհատ, որ կլցնեն նրա համբերության չափը: Պատմության հարցերը դնում ու լուսաբանում են մի ժողովրդի գիտակից աչքը, ծախս ու կենտրոնը, բայց վճռում է այդ անգույն և համբերատար բազմությունը՝ թեքելով նժարը այս կամ այն կողմը:

Քանի դեռ այդ բազմությունը չի դուրս եկել զազազած և հենարան չի դարձել ուժերի, որ տենչում են խորտակել հեղափոխությունն ու ազատությունը՝ ժամանակավոր կառավարությունը պետք է նորից վերագրավե Ռուսաստանը՝ իր ձեռքում պահելու համար և այդ անկայուն բազմությունը: Ջորջի մեջ կա մի պատկառելի քանակ՝ անկեղծորեն հեղափոխական և ռամկավար. դա է միակ և իրական հենարանը, որ կարող է նեցուկ դառնալ ժամանակավոր կառավարության իր երերման պահերին: Մի քանի զորամասեր լիովին ազատ այնպիսի հանցավոր ու մեղկ արատներից, որ սնուցանում են դասալիք ու դավաճան՝ բավական են կազմելու այն ուժը, որով կարող է կառավարությունն սկսել վերագրավումը. դա կլինի Իվ. Կալիտայի այն համեստ Մոսկվան, որ թթխմորի պես շաղախեց մեծ Ռուսաստանը:

Այդպիսի զորամասերին համագոր ուժեր չկան և չեն կարող լինել զորքի մեջ. նա պառակտված է հուզարարների հանցավոր գործունեությամբ և եթե իր մեջն ունի նոր կարգի թշնամիներ, ունի նաև բարեկամներ, բայց մանավանդ մի անդեմ ու անգույն բազմություն, որ պատկառում է կարգապահ ուժից: Միատարր, միհոգի և կարգապահ գունդերի դիմաց մնացած զորամասերը հորդաներ են անկազմակերպ և անկարգ, որոնք անկարող են դիմադրել տևապես կամ հետապնդել մի որոշ և ընդունելի նպատակ: Կարգապահ և միատարր զորքի այդպիսի մի հատված կիրապուրե և կզանգե մյուս զորամասերի առողջ տարրերը և կստեղծվի մի ուժ, հուսալի մի հենարան, որով ժամանակավոր կառա-

վարությունը կարող է վստահորեն սանձահարել ամեն անիշխանություն: Այդ տեսակ զորքի և կառավարության շուրջը կբոլորեն ռամկավարության և երկրի բոլոր առողջ և հայրենասեր տարրերը, որոնք պետք է ավելի աջակից լինին, քան վարիչ. խորհրդատու ավելի, քան ղեկավար: Առժամապես պետք է թողնել կառավարությանը, որին վստահում ենք, տեսնե իր գործը, վերագրավե ապստամբ Ռուսաստանն ու զորքը և բերե հնազանդության՝ ռամկավար կարգերին: Վտանգն սպառնում է երկրին և հեղափոխության. անհրաժեշտ է անձնվիրություն ու զոհ: Ռազմիկը զոհում է իր կյանքը. ժողովուրդն իր զավակներին և բարեկեցությունը. դասակարգերը, կուսակցությունները ու նրանց վարիչները պետք է զոհեն իրենց ինքնասիրությունն ու սնափառությունը, որ կուրացնում է հաճախ և կորցնել տալիս հազիվ շահածը:

Աշխարհին և մեզ անհրաժեշտ է ռամկավար և հզոր Ռուսաստան: Ունինք ժամանակավոր կառավարություն, բայց նրանը չէ Ռուսաստանը. այդ երկիրը պետք է վերագրավել ներքուստ՝ արտաքուստ պաշտպանել և վերագրավել կարենալու համար: Այդ հնարավոր է առողջ ու կարգապահ զորքի միջոցով և լիազոր կառավարության: Ժամանակավոր կառավարությունը, որ ռամկավարության զավակն է, պետք է վայելե անվերապահ վստահություն ոչ շրթունքով, այլ գործով, որ կարենա իշխել ու բռնադատել: Անհրաժեշտ է զորեղ Ռուսաստան մանավանդ Կովկասին, որի ափերը լիզում են խավարին և ոճրամետ հորձանքներ:

Հորիզոն, 1917, № 151

Իշխանության տրագիզիա

Պետրոգրադի դեմոկրատիկ խորհրդակցության դրական արդյունքները հետզհետե սկսում են արտահայտվել. կազմակերպվում է նախապառլամենտը, որ փաստորեն պառլամենտի դեր է կատարում, և արդեն կազմված է կառավարությունը՝ կոալիցիոն սկզբունքով: Կառավարության մեջ մտել են դեմոկրատիայի և առևտրաարդյունաբերական դասակարգի ներկայացուցիչները: Մինիստրների անունների ցանկից երևում է, որ նոր կառավարությունն ուզում է լինել գործի, շինարար աշխատանքի կառավարություն: Այդ բովանդակությունն էլ տրված է մինիստրության առաջին ղեկավարացիային:

Այդ ղեկավարացիայի մեջ նոր կառավարությունն առանձնապես երկար կանգ է առնում այն անիշխանության և քայքայման պրոցեսի վրա,

որ երթալով սպառնական է դառնում պետական արտաքին և ներքին կյանքում: Յուրաքանչյուր իշխանություն, որ կամենում է երկրին իրական դարձան բերել, նախևառաջ վերջ պետք է տա այդ անիշխանության: Սակայն հնարավոր է այդ:

Հեղափոխական Ռուսաստանի տրագիզիան հենց այդտեղ է: Մինչև այժմ եկած ու գնացած բոլոր կառավարություններն ամենից ուժգին բողոքել ու մաքառել են օրավուր աճող քայքայման դեմ և շատ քիչ արդյունքների են հասել հենց այդ խնդրում: Մինիստրների անհաշիվ ճաներն ու սպառնալիքները, կառավարության բազմաթիվ հրահանգներն ու հրամանները, Կերենսկու գերբնական ճիգերը համարյա միշտ մնացել են անլսելի, ծայն բարբառո հանապատի: Եվ այսուհետև էլ կմնան, եթե կառավարական մեքենայի վերակազմության գուզընթաց չվերակազմվի նաև հասարակական հոգեբանությունը: Ներկա Ռուսաստանի ներքին անուժության պատճառը այս կամ այն կազմն ու գույնը ունեցող կառավարությունից չէ բխում, այլ ամենից առաջ այն իներտ, հաճախ ապուլիտիկ կամ անիշխանական տրամադրությունից, որ թագավորում է մասսաների գլուխների մեջ:

Վեց ամսվա հեղափոխություն, և որքան ցնցող օրինակներ տգիտության, քաղաքական տհասության ու հակապետական տրամադրությունների: Կրոնշտադթ, Ցարիցին, Տարնոպոլ, Տաշկենտ, բուլշևիզմ, հուլիսի 3-5, Կոռնիլովյան ավանտյուրա, երկաթուղային գործադուլ — սրանք են գլխավոր պատճառները, որ հեղափոխական Ռուսաստանում բացակայում է կարգն ու օրենքը: Հազար հեղափոխական կառավարություն նշանակեցեք, եթե հանրությունը չի ցանկանում լսել նրան, ընդունել նրա իշխանությունը, ենթարկվել նրա կարգադրություններին ու սահմանած օրենքներին, ոչ մի դրական հետևանքի չեք հասնի:

Չի կարելի ուրանալ, որ մեր սոցիալիստական կուսակցությունների խղճի վրա ահագին մեղք կա այդ տեսակետից: Մենք շատ ենք խոսել մասսաների անունից, բայց քիչ ենք աշխատել նրա մտավոր-հոգեկան դաստիարակության, նրա քաղաքական մշակության վրա: Ռուսական հեղափոխական միտքը ավելի շատ զբաղվել է տեսական մարզանքներով, քան գործնական աշխատանքներով: Եվ եթե այսօր Տարնոպոլում ռուս տգետ զինվորը գազանացած կտրտում է գթության քրոջ ստինքները կամ լլկում-պղծում է երեխաներին, կամ թե չէ Սամարայի ու Սարատովի գյուղացին հրդեհում է կուլտուրական թանկարժեք հարստություններ ու փչացնում է անտառներն ու կալվածները, դրա հանցանքն ընկնում է և ռուս հեղափոխական կուսակցությունների վրա, որոնք այ-

սօր էլ դեռ ավելի ուժ ու եռանդ են սպառում հատվածական իրերակերության, քան թե լայն զանգվածների դաստիարակության վրա:

Մենք ողջունում ենք նորաստեղծ կառավարության նոր ձգտումը ուժեղ ու հեղինակավոր լինելու, բայց և համոզված ենք, որ առանց մասսաների լայն ու գործոն աջակցության, առանց երկրի ընդհանուր օժանդակության ոչ մի իշխանություն չէ կարող վերջ տալ այն սարսափելի քայքայումին, որ ծայր է տվել Պետրոգրադից սկսած Վլադիվոստոկ և Արխանգելսկից մինչև Ջուլֆա:

Հորիզոն, 1917, № 209

< Անգլիական կապիտանը չգիտե... >

Պարոններ, կառավարությունը իր զեկուցման մեջ հայտնեց ձեզ անգլիական կապիտանի առաջարկած պայմանները, ուր կարելի է նկատել մի նախագիծ այն հիմունքների, որով կարելի է խաղաղությամբ լուծել այս խնդիրը: Այդ կետերից մեկը՝ մեր զորքերն անմիջապես հետ քաշելն է այն վայրերից, ուր նոքա գտնվում են կամ գտնվելու են վաղը: Այս կետն առաջարկված է միայն այն նպատակով, որ անգլիական կապիտանը բնավ ծանոթ չէ այն պայմաններին և երկրին, ուր նա գտնվում է: Նա չգիտե այս երկրի պատմական անցյալը և այն փոխհարաբերությունները դրացի երեք ժողովուրդների միջև և եթե նա ծանոթ լիներ, դժվար թե նա այդպիսի առաջարկություն աներ: Ես սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ մեր հարևանների դերը մանավանդ այս պատերազմի ընթացքին երկդիմի էր և անկեղծ չէր դեպի այն պետությունը, որի քաղաքացիներն էին և դեպի այն դատը, որ վարում էին դաշնակիցները: Կամավորական խնդրի ժամանակ նրանք չխնայեցին ոչ մի ջանք, որպեսզի արգելեն հայ կամավորական շարժումը: Կամավորական այդ շարժումը ուրիշ բան չէր, այլ սոսկական մի պարտք, որ մենք պատրաստ էինք տալ Ռուսաստանին իբրև քաղաքացիներ և իբրև մեր դատը պաշտպանողի: Այս ամենը չգիտե անգլիական կապիտանը, եթե գիտենար նա, այդ առաջարկը չպիտի աներ: Եկավ Ռուսաստանի հեղափոխությունը. այստեղ տեղը չէ առաջ բերելու այն բոլոր պատճառները, որից առաջացավ Ռուսաստանի այնքան ցավալի քայքայումը: Մենք տեսանք, որ մեր հարևանները, որոնց հետ մենք այսօր դժբախտություն ունինք զենքով կոխ մղելու, նրանք ի գործ դրին այն ամենը, որով կարենան ոչնչացնել

մեր իրավունքը մեր երկրի վրա: Վրացիք և ադրբեջանցիք չէին կարող հաշտվել, որ այստեղ արթնացել է մի երրորդ ժողովուրդ, որը պաշտպանում է իր հայրենիքը թե մեկից և թե մյուսից և նրանց այդ համաձայնությունը ուրիշ նպատակ չունեն, քան ջլատել հայ ժողովրդի դիմադրական կորովը: Այս բաները չգիտե անգլիական կապիտանը և եթե գիտե՞նար, նա բոլորովին նման առաջարկներ չպիտի աներ: Բացի այդ, այն ժամանակ, երբ թուրք զորքը սահմանի այն կողմում ութ հարյուր հազար հայ կոտորելուց հետո գալիս էր այս շրջանը ևս կոտորելու, ահա այդ նույն ժամանակ նորից միացան մեր հարևանները մեզ ջախջախելու համար: Նոքա ոչ մի առաջարկություն չարին պաշտպանելու այն ֆրոնտը, որ համառուսական էր, որի ջախջախելուց հետո պիտի տուժեին և նրանք: Երբ այդ անհավասար կռվի մեջ հայ փոքրաթիվ ժողովուրդը այնքան ստոր դավադրություններով շրջապատված մենակ մնաց, որի համար ընկան Երզնկան, Էրզրումը և Կարսը, երբ հայ ժողովուրդը փախչում գալիս էր Վրաստան, այն խոր հավատով, թե հյուրընկալություն է գտնելու, սակայն հարևան ժողովրդից նա սառն վերաբերմունք ստացավ և նույնիսկ հալածանք, որի ապացույց կարող էին լինել Նուխին, Բակուրիանին և այլն: Այդ բոլոր սարսափները ձեզ համար դեռ թարմ են և ես ավելորդ եմ համարում կանգ առնել մանրամասնությունների վրա: Այդ բոլորի նպատակն էր թուլացնել այն տարրը, որ կարող էր մրցորդ լինել, բայց նրանց հաշիվը սխալ դուրս եկավ: Այդ բոլորը չգիտե անգլիական կապիտանը և եթե գիտե՞նար, այդ առաջարկությունները չէր անի: Հիմա բանից դուրս է գալիս, որ մենք այնքան ջարդված էինք, որ չէինք կարող պաշտպանել մեր իրավունքը և մեր հարևանը եկավ, գրավեց մեր երկիրը, որպես մեր շահերի պաշտպան: Հասել է ժամանակը, որ մենք մեր իրավունքը ճշտենք, ինչու՞ համար ենք մի սահմանակից ժողովրդի զենքով դուրս քշում մեր հողից: Ինչու՞ համար նոքա ուզում են զենքով իրենց իրավունքը հաստատել այն հողի վրա, որ իրենց չի պատկանում: Մենք ոչ մի թիզ հող օտարի ձեռքից չենք խլել և մտքներովս անգամ չի անցել որևէ ժողովրդի շահերին դիպչել և եթե կարողանանք մեր իրավունքները պաշտպանել, այդ էլ մեծ բան է մեզ համար: Մենք այսօր առաջ էինք խաղում մեր հողի վրա և երբեք չենք հասել մեր հողի իսկական սահմաններին: Երբ որ հասնենք այդ սահմաններին, մենք կանգ կառնենք և այնուհետև թույլ չէինք տա, որ որևիցե մեկը մեր իրավունքները ոտնակոխի: Մենք առանց այդ էլ բավականաչափ հող և ժողովուրդ ենք թողել նրանց: Մենք հեռու ենք օտարի հողը գրավելու մտքից, բայց չենք էլ կարող օտարին թողնել մեր հողի վրա: Եթե այդ հո-

ղը գրավեր մի հզոր ուժ, օրինակ մեր դաշնակիցները, մենք ոչինչ չէինք անի, նկատելով, որ թերևս նպատակահարմարը այդ կլիներ: Վեց ամիս շարունակ վիճում էին այն երկրի մասին, որ մերն է, և քանի որ մերն է, մի՞թե չի կարելի թողնել այնտեղ մեր զորքը, մինչև դրությունը պարզվի: Անգլիական կապիտանին պետք է այս բոլորը հասկացնել: Կառավարությունը պետք է մի պատգամավորություն ուղարկի, որ ամեն ինչ հասկացնի մեր բարեկամ պետության ներկայացուցչին, որ ասի նրան, թե իր պայմաններից մեկը որոշ հիմունքներով չենք կարող կատարել, ոչ թե չենք ուզում, այլ աննպատակահարմար ենք համարում և վստահ եմ, որ նրանք էլ չեն պնդի: Ես այնքան վստահ և համոզված եմ, որ մեր դաշնակիցները, որոնց համար մենք այնքան արյուն թափեցինք և տառապեցինք, չեն կասկածում, որ անտես առնին մեր իրավունքները: Մենք բավական ուժ ունինք այդ երկիրը մեր ձեռքին պահելու, եթե այս ընդհարումներին վերջ տալու ձգտում է այն մտահոգությամբ, որ երկաթուղագծի վրա խաղաղություն տիրե, ես պիտի ասեմ, որ խաղաղությունը այն ժամանակ կլինի, երբ այդտեղ հայ զորք լինի, որովհետև մենք տեսանք, թե ի՞նչ է նշանակում վրացական զորքերի ներկայությունը Լոռում: Ուրեմն եթե կապիտանի միտքն այդ է, ապա ուրեմն պատգամավորությունը պիտի հասկացնի, որ երբ այդտեղի ժողովուրդը հայ է, վարչությունը հայկական է, մենք չենք կարող հեռացնել մեր զորքերը, առանց վնասելու մեր երկրի դատին: Մենք երբեք չենք ցանկացել կռվի դիմել, մեզ ստիպել են այդպես վարվել, և այսօր, ինչպես էլ միշտ պատրաստ ենք բանակցությունների դիմել և կարող ենք վստահություն տալ մեր պատգամավորներին, որ նրանք բանակցություն վարեն և վրացիների հետ: Մեր պայմանն այդ է, մենք մեր զորքերը չենք քաշի մեր հողերից, որովհետև մենք չենք կարող թող տալ, որ ուրիշները ոտնահարեն մեր իրավունքները: Այս նկատառումներով Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիան առաջարկում է հետևյալ բանաձևը՝ «Լսելով կառավարության ձեռք առած միջոցները Ախալքալակի և Բորչալուի շրջաններից վրաց զորքերը հեռացնելու և Բորչալուի հայ ազգաբնակչությունը վրաց զորքի բռնություններից ազատելու մասին՝ խորհրդարանը հավանություն է տալիս կատարված քայլերին: <Ապա>՝ միշտ կողմնակից լինելով հայ վրացական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և սկզբունքով համաձայն լինելով կապիտան Գրինի առաջարկին՝ Հայաստանի խորհրդարանը անհնարին է համարում մեր զորքերի հեռացումը, մինչև որ չիրագործվի Հայաստանի անվիճելի մասը կազմող Բորչալուի հայկական բաժնի և Ախալքալակի գավառի ապահովությունը վրաց զորքերից:

Խորհրդարանը հրահանգում է կառավարության այս հիմքերի վրա, հատուկ պատվիրակության միջոցով բանակցություններ վարել կապիտան Գրինի և եթե հարկ լինի, նաև Վրաստանի կառավարության հետ:

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, քք. 49-51

Քեռին (Հուղարկավորության առթիվ)

Համեստ էր, լռակյաց: Ձգացվում էր նախկին արհեստավորը - աշխատասեր, խոհուն, գլուխը կախ իր բանին: Քայլում էր հանդարտ, հայացքն ինքնամոխ, հագուստը շատ համեստ. արհեստավորի արտաքին ու պահվածք: Ոչ մի ցուցադրություն, ոչ մի ճիգ տպավորության:

Ժողովներին կնստեր մի անկյունում, ուշադիր կլսեր ու լուռ կծխեր: Հաշտված էր այն բանին, որ մի խնդիր վճռելիս մտավորական ընկերները պետք է նախապես բավական աղմկեն: Համբերությամբ կսպասեր գործնական որոշման. մեծ ուշադրությամբ կլսեր իրեն բաժին ընկած գործի մասին. որոշապես ու վերջնապես կպարզեր այն պայմանները, որ կապ ունեին իր պարտականության հետ, և կերթար իր գործին: Քիչ կխառնվեր ընդհանուր որոշումներին. ոչ թե հորիզոն չուներ, այլ հանդուգն էր, որ եթե ամեն մեկն իր գործը լավ կազմակերպե և հաջող վարե, ամեն բան լավ կերթա: Երբ համակարծիք չէր որոշման՝ չեզոքանում էր, առանց խանգարելու:

Իր ուժերու ճշմարիտ գիտակցությունն ուներ և իր արժեքների իսկական ըմբռնումը. անծանոթ էր իրան ինչպես հոխորտանքը, այնպես էլ նվաստությունը: Չափած, կշռած, խոհուն ու նստած մի մարդ: Իր կարծիքները, դիտողություններն ու հարցումները մատնում էին երկարամյա փորձառություն և ուշադիր նկատառում: Աչքի տակով դիտում էր ամեն քայլ, ականջի ծայրով լսում էր ամեն խոսք և մինչդեռ կարծում էր անտարբեր՝ երևում էր ուշադիր և կշռադատ: Անպայման խելոք մարդ էր: Գիրքը ծավլում էր իր մտքի առջև, նա կյանքից էր գալիս և կյանքից խոսում, ուստի վճիռները սակավ էին, բայց ճիշտ ու տեղին. իր մտքերը միջուկով և պարզ ու որոշ, ինչպես կյանքի ճանապարհները:

Այս լռակյաց ու համեստ մարդը սիրում էր իր շուրջը տեսնել վաղեմի ընկերներ, իր նման արհեստավոր դասից, համեստ ու փորձառու և անձնավեր, շիտակ ու մաքուր պատանիներ և դեռատիներ, որոնց թարմ ուժն ու անշահախնդիր ազնվությունը ստեղծում էր մի մթնոլորտ, որով

սիրում էր շնչել: Իր խելացի աչքերի մեջ միշտ մի կայծ կար նրանց համար, իր ծայնի մեջ մի մեղմություն, իր վարմունքի մեջ հայկական խնամածու հոգածություն, և գոհանում էր նրանց հաջող արածով ու ասածով: Նրանց խիզախությունը, որդիական զգացումը, սրտաբաց խոսքն ու պատրաստակամ բարքը գրավում էին նրան: Կարծես նրանցով սնվում էր իր հավատը դեպի ապագան և աշխուժանում էր կորովը:

Ծանր էր իր ձեռքը, որ հարվածում էր անողոք, բայց բնավ անարդար: Չարմանալի ճշտությամբ ըմբռնում էր հնարավորի սահմանը և ներողամիտ էր դեպի ամեն տրտունջ, բայց միայն այդ սահմանում: Մեծամիտը, հոխորտացողը, ծուլը, պահանջկոտը, փափկասունը, վախկոտը, գողն ու մատնիչը ճաշակել են նրա բռունցքը: Նրան անծանոթ էր ոգու և մարմնի թուլությունը և չափազանց ատելի. պահանջում էր, որ դեռատին նույնքան տոկուն ու չարքաշ լինի, որքան ինքը: Միշտ ձգտելով լավացնել իր խմբի դրությունը՝ ստիպում էր, որ ընկերաբար գոհանան եղածով:

Հայրուկի երկարամյա չարատանջ կյանքը վարժեցրել էր նրան նախատեսության. լայն օրերին մտածում էր նեղ օրվան մասին: Ղեռ հացն ու դրամը չհատած՝ ամենուրեք հայտնում էր սպառումը և միջոցներ ձեռք առնում:

Կաշվի մի կտոր, որ նետվում էր անպետք, պայտի մի գամ, մի հագուստ, մի գործիք՝ հավաքել ու պահել կտար, որ անփորձների անհոգության երեսից փորձանքի մեջ չմնա: Հաճախ ինքն իր ձեռքով հաց ու հագուստ կբաշխեր: Իր ծախսերը կիջեցներ նվազագույն չափերի և ընկերներին կանչելով՝ տնտեսած դրամից մաս կհաներ նրանց ընտանիքներին ուղարկելու տոներին: Չէր սիրի պարապ նստել. միշտ կմտմտար, մեկի թամբը պիտի կարկատեր, մյուսի հրացանն ուղղեր, երրորդին տրեխը շինել սորվեցներ...

Ամբողջ կյանքը համարյա ապրեց ամուրի. եղավ շատ զուսպ ամուսին, ավելի հյուր, քան և անտեր, միտքը միշտ դուրսը, հանրային գործերին:

Բայց այս լուռ ու համեստ մարդու մեջ ապրում էր մի հերոսական ոգի, որ անշուք գորշության միջից փայլատակում էր իր ժամին և հիացք ու պատկառանք ազդում մերձավորին և օտարին:

...Աշրադ Դովլեն միապետական ուժերի գլուխն անցած մոտենում էր Թեհրանին: Մի բուռ հայերի և բախտիարցիների հետ Քեռին ուղարկվեց նրա դեմ: Թշնամին բռնել էր ապառաժոտ լեռան ծերպերը և գնդակով ծում էր շարունակ: Տասնութամյա պատանու աշխուժով Քեռին բարձրանում է դեմ՝ թափահարելով իր մտրակը և վարակելով հետևորդներին: -Ովքե՞ր են դրանք, որ հրացան պարպենք,- կանչում է ցատկելով

առաջ,- դրանց մտրակով պետք է քշեն: Եվ քշում է: Գերի Աշրադը խոստովանում է, թե զորքը չէր, որ նրան հաղթեց, այլ մտրակով ծերունին, և ցանկանում է նրան անձնատուր լինել...

...Օլբու շրջանում հարձակում է թյուրքերի դեմ, հրացանածիզը քար է որոնում ետևն անցնելու. Քեռին նստած իր ձիուն՝ դեկավարում է կռիվը թշնամուն ի տես: Գնդակները սուլում են ականջին, դեռատիները հրավիրում են թագստի, բայց Քեռին համդարտ ցուցմունք է տալիս. մի անպատկառ զնդակ միայն համարձակում է տողել ձիու փորը...

Եվ որքան նման դիպվածներ...

Հասկանալի է այն հմայքը, որ ուներ ծերունին մարտիկների նոր սերունդի մեջ. նրանք տեսել ու լսել կամ զգում էին այն բոցեղեն ոգին, որ ապրում էր այդ գորշ արտաքինով - և նեղությունը ոչ թե խզում, այլ ամուր շղթայում էր խուսմբն իր անվեհեր խմբապետին...

Ազգային ավանդությունը մեր նախահորը՝ Հայկին պատկերում էր իբր ռազմիկ ու շինարար. նա կանգնեց Բելի դեմ և շինեց գյուղ և ավան: Դարերի չարաղետ ընթացքը կործանեց ռազմիկին և անոք թողեց մշակին: Մարտիկի բազուկը կարկանդեց և շինարարի ստեղծագործ կորովը դարձավ մշակի ջանասիրություն, ու խաթարվեց հայի ազգային նկարագիրը:

Հայության զարթոնքի մի կիզիչ տենչ՝ սրբագրելու մեր ազգային նկարագիրը, ալիքածև անցավ միշտ նոր ու նոր սերունդների երակներով և իբրև մի երազ շողաց Գամառ-Քաթիպայի և Ռաֆֆու հոգում ու երկերում: Ու, վերջապես, «բանն մարմին եղեւ և բնակեցաւ ի մեզ», տալով իր առաջին պտուղները, մարտիկների մեր հին սերունդը:

Դանդաղորեն՝ ատելության, ծաղրի ու պարսավի միջով՝ ստեղծվում է կատարյալ հայի տիպար, որ օտարածին չէ, այլ բնածին, հավատարիմ շառավիղ ու պատկեր իր նախահոր, մարմնացում ավանդական, բայց և հավետ գեղեցիկ իդեալի- ժողովուրդ, որ գիտե աշխատել և կռվով ապահովել իր աշխատանքը: Լինելով հին երազի մարմնացում՝ Քեռին կոչված է օրինակ դառնալու հետնորդ սերունդներին, ինչպես եղավ իր զինակիցներին: Քեռին վերածնվող հայ ժողովրդի լավագույն և առողջ մարմնացումներից մեկն է: Հավատարիմ իր ժողովրդին, անձնվեր մարտիկ նրա դարավոր դատի, անծանոթ սահմանափակ նեղամտության, ազատության սիրահար, առանց աղմուկի, համեստ, խոհուն ու խելացի- հեռու սնամեջ կանչերից և իմաստակ դատումներից - նա իմացավ անձնվիրության սիրել իր ազգն, իբր հայ և մարդկությունն՝ իբր մարդ:

Ամբողջական երկեր, հ. III, էջ 326-329

Յ. Յ. Դաշնակցության մասին

Մինչև 1921 ապրիլի 2 դաշնակցությունը երեսուն տարի ապրել ու գործել է Հայաստանում: Արտասահմանի մեջ նա այսօր իսկ մեծազանգված կազմակերպություն է, բայց մանավանդ՝ լայնատարած մտայնություն: Իր գործն անցել է պատմության և ոչ մի մարդկային ուժ կարող է ջնջել այն էջերը, որ նա գրել է մեր պատմության մեջ անձնվիրության և արյունով: Առնվազն երեք սերունդ գործել ու մեռել են նրա դրոշի տակ և այդ դրոշը դեռ ծածանում է հայության վրա, ներսն՝ այլափոխված, դուրսը՝ գունաթափ: Մեզ համար, որ կերտել ենք նրա գործն ու փառքը՝ դժվար է հիմա խոսել նրա մասին: Երեսուն տարվա մեր քաղաքական և հանրային կյանքը գունավորել է Դաշնակցությունը: Իր ազդեցությունը մեծագոր է եղել մեր ազգային գործունեության բոլոր մարզերի վրա և դեռ շարունակում է թե՛ բուն երկրում, թե՛ դուրսը: Ոչ ոք կարող է համարձակիլ այդ ազդեցության բովանդակ հաշվեկշիռը կազմել այսօր. դրա համար պետք էր հատուկ և երկարամյա հետազոտական աշխատանք: Երբ մենք և մեր հակառակորդները գերեզման իջնենք և խոտ բուսնի մեր հողի վրա, այն ժամանակ կերևան նոր Հայեր, «որ չեն պղծած իրենց լեզուն անեծքով» և կգրեն Դաշնակցության և իր գործի մասին: Միայն մեկ ժամվան ասպետներն են, որ միամտաբար կարծում են, թե աղմկալից հայիուչով կարելի է պատմական գործերն այլափոխել կամ եղածը չեղած հռչակել:

Հավակնություն չունիմ Դաշնակցության բովանդակ գործը ցուցադրելու: Մեկ գիծ կուզեմ թանձրացնել, որ նկատելի դառնա նայողին: Ութսունական թվերին Գամառ - Քաթիպան գրում էր.

Մարմինը զորեղ, և առույգ է հայի,

Բայց ափսո՛ս թմրած է նրա հոգին.

Թե մի օր զարթնե՛ր նրա վե՛հ հոգին ...

Ինքն ու Ռաֆֆին անդուլ աշխատանքով զարթեցրին այդ հոգին և Դաշնակցությունը մարմին տվեց այդ հոգուն, որ խոյացավ իբր Անդրամիկ, Սեպուհ և Քեռի, Արամ և Իշխան և նրանց ընկերները: Հերոսական այս սերունդը, որ կատարեց հերոսական գործեր և անմահացավ հայոց պատմության մեջ՝ Դաշնակցության կերտածն էր: Դաշնակցությունն ստեղծեց մի նոր հայություն - գիտակից և մարտունակ - որով մեր ազգը պատկառելի դարձավ հարևանին և թշնամուն: Այս հիմնական հեղաշրջման մասին կարող են վկայել նրանք, որ ապրած են ութսունական

թվերին և մեծցած են մեր զարթոնքին զուգահեռ: Հիմա մենք ունինք մի ռազմունակ ու առողջ հայություն մեր Հայրենիքի մեջ: Այդ հայության հոգին առողջացավ և հլու ռազմիկ դարձավ Դաշնակցության դրոշի տակ: Դրոշը հիմա փոխված է այնտեղ, բայց դրոշակիրը աշակերտն է «դավաճան» Դրո-ի և «հայրենատյաց» Դաշնակցության: Մեր համար դրոշակիրն է կարևորը, որ նոր հայն է և մեր կերտած սերնդի զավակը: Ապահովված է հայությունն իբր պատվախնդիր և մարտունակ զանգված: Նա կարող է մեռնիլ, մինչև իսկ չքանալ, բայց զենքը ձեռքին և կրծքից զարկված: Այս հրաշքը Դաշնակցության գործն է. խիզախ և ռազմունակ հայությունը Դաշնակցության զավակն է և զուր են ջանքերը հայրը որդուց բաժանելու:

Հանգիստ խղճով և պայծառ հայացքով նայում են կուսակցությանս անցյալին: Կորած ու մոլորած մի ժողովուրդ դարձնել ռազմունակ մի ազգ և քաղաքական կյանքով ապրեցնել ծխականին, տալ նրան հայադեմ հայրենիք ու պետություն, դնել նրա ապագա մշակույթի հիմնաքարերը – սրանք գործեր են, որ կատարեց Դաշնակցությունը համառորեն և անթիվ զոհերի գնով: Նա կատարեց իր պատմական պարտականությունը. եղավ ազնիվ, անձնվեր և հավատարիմ վաստակավոր. չվարանեց ոչ մեկ զոհողության առջև և հիմա հանգիստ նայում է իր գործին, որ զարգանում է Արարատի շուքի տակ: Իր ոգին ապրում է Հայաստանում: Երբ ժամը հնչե, այդ ոգին իբր ուժանակ պիտի ծավալի դեպի արևմուտք և հարավ, հասնելու համար այն սահմաններին, որ գծած է Դաշնակցությունն իբր բնավայր հայ ժողովրդի: Ուրիշ դրոշով, բայց մեր ոգին է, որ պիտի ամբողջացնե մեր ձեռնարկած մեծ գործը:

Ամբողջական երկեր, հ. III, էջ 441-442

Ուղերձ Բարսեղ Կանաչյանին

Իր քառասնամյա հոբելյանին առթիվ՝
հանուն հայ մտավորականության

Սիրելի Կանաչյան,

Մեծ պատիվ է ինձ համար քո հոբելյանի առիթով խոսիլ քո մասին հայ մտավորականության անունից: Զգիտեմ համամի՞տ պիտի գտնվին իմ կարծիքին, թե՞ պիտի համարեն նվազ կամ առավել, բայց ես պիտի իմ մտածումն արտահայտեմ քո գործի մասին այնքան պայծառ ու որոշ, որքան կզորե իմացությունս:

Քո գործը, սիրելի Կանաչյան, երկու երես ունի, երկուսն ևս մեծար-

ժեք, բայց մինն անցավոր, մյուսը՝ մնայուն: Մեծ վարդապետի աշակերտն ես դու, որի հոգին մշտապես հսկեց անձիդ ու գործիդ: Նրանից սովորեցիր հայ երգը տարբերել համաշխարհի բոլոր երգերից և այդ երգը դարձնել հանրության սեփականություն: Եվ ուրիշ հայ երգահանների գործերի մեջ գնահատեցիր այն երգը միայն, որ զուգընթաց էր հայոց բուն երգին: Կարծեցիր, և իրավամբ, որ հայերը հայ կմնան, որչափ իրենց բուն երգով սնանին, ուստի ջանացիր ամեն տեղ հայ երգի վայելքին մասնակից անել հայ հանրությունը: Դրա համար քեզ պետք էր մի ճկուն ու հնազանդ գործիք - մի երգչախումբ - որ դու հաջողեցիր ամեն տեղ կազմել մեծ համբերությամբ և մեծ վարպետությամբ, մինչև եվրոպական նուրբ ճաշակները գոհացնելու աստիճան: Այդ խումբի մեջ մեծարժեք եղավ «Գուսան» երգչախումբը, որովհետև հմար ունեցար երկար ժամանակ աշխատելու նրա պատրաստության վրա և ցուցադրելու խմբավարության քո մեծ կարողությունը լիովին: Եգիպտոս, Կիպրոս, Սուրիա և Լիբանան երախտապարտ են այն բարձր և ազնիվ վայելքի համար, որ դու տված ես քո մարգած երգչախմբերով, և այն հայեցի հոգու և հայրենական զգացումի համար, որ ներշնչած ես վարդապետի երգերով: Մեծ է այս մարգի մեջ քո վաստակը, բայց ավաղ, անցավոր: Ոչ ավելի, քան մի մեծատաղանդ դաստիարակի կամ դերասանի գործ: Անշուշտ, ով բախտն ունեցած է ունկնդրելու քո համերգներին՝ մինչև խորին ծերություն պիտի զգա նրանց հմայքն ու հետքն իր հոգում, բայց հրաշագործ ձեռքիդ շարժումի հետ դադարելու է և հրաշագործ վարպետիդ ազդեցությունը: Մենք եկած ենք, սակայն, տոնախմբելու նշանավոր խմբավար Կանաչյանի հոբելյանը, որ իր համերգները դարձուցած է ազգապահպանության և ազգային գիտակցության մի զորավոր ազդակ և որ նկուն հային ներշնչած է ազգային հպարտանք սեփական երգի հարստության հանդեպ և օտարներին պարտադրած է մեծարանք ու հարգանք հայ երգի համար: Ոչինչ կարող էր միացնել կոտորակված հայությունը, քան միևնույն հայ երգը, որ ներշնչում է բազմազան ոգիներ և միապես հուզում է այլամետ սրտեր: Ոչինչ կարող էր սիրտ տալ տարագիր հայության, որ ճողոպրած էր ստույգ մահից, որ կրած էր քաղաքական խորին հուսաբեկություն՝ քան հաղորդությունը հայ երգի, որ նույն է թե՛ հայ հոգու: Այդ երգի մեջ նա տեսավ իր ինքնությունը, իր անմար անցյալն ու հուսալից ապագան և կքած ծունկերը զորացան և լքված սիրտը նորից հուսով բաբախեց, թև առավ հայ հոգին և այսօր կենդանի է հայությունը, Սասունցի Դավթի պես, որ դուրս է եկած ոսոխի փորած քառասուն զազ հորից: Հայ հոգեբանության այս վերափոխության մեջ

մեծ է քո և քո վարած երգչախմբերի դերը, սիրելի Կանաչյան:

Բայց դու իմ աչքին շատ ավելի մեծ ես՝ քան մի մեծատաղանդ խմբավար: Դու ստեղծագործ ես և ոչ հետևակ: Դու ոչ միայն մշակույթն ես հանրացնում, ինչ որ մեծ գործ է, այլև հարստացնում ես այդ մշակույթը: Մեծ վարդապետը գտավ հայ երգը ու բազմաձայնեց: Բազմաձայնելու իր արվեստը եղավ անձնական և կհամարձակվիմ ասել՝ հայկական, իսկ երգերը պահեցին իրենց տոհմիկ բնույթը: Նա ժամանակ չունեցավ հայ երգի հետքերով հեռուները գնալու և նոր նվաճումներ անելու: Անկոխ էին ճանփաները, բայց դու խիզախեցիր առաջ անցնել և հայ երգի զուսպ տվիքը լայնորեն բանալ և նրա թաքուն կարողությունները երևան հանել՝ նորահնար, բայց հայատիպ դաշնակությանց մեջ, հորինելով նոր խմբերգ և ծավալուն քերթվածքներ ծայնական: Վարդապետը քեզ իր երգով խորապես և նորապես հայացուց և դու երաժշտապես հայացած՝ իբրև հայ մարդ ստեղծագործեցիր նոր արժեքներ, դաշնավոր և հայատիպ: Դու նոր գանձեր բերիր՝ մեր երաժշտական մշակույթին: Եթե իբրև խմբավար մեծարժեք, բայց անցավոր է քո գործը, իբրև երգահան քո գործը մնայուն է և անունդ անկորուստ: Մեծ բարեբախտություն է մեզ համար վկայել այդ մասին և կարծեք հաղորդվիլ հայ մշակույթի հավերժության: Այս արժեքների ստեղծագործության մեջ դու երևացիր իբր մի կենդանի արվեստագետ, հաղորդակից ազգի ապրումներին և ճակատագրին: Օրորի մեջ հայ անձնվեր մոր պատկերն ես գծած ձայների վրձինով. հայոց մայրը, որ հավերժությունն իսկ է իր ծնունդներով և անձնվեր հոգածությամբ: Հայ ժողովրդի սերն ես ցուցադրած քո Հոյնարի և Տալիո-ի մեջ: Դու հեղինակած ես հայոց լավագույն քայլերգը, որ շնչում է իրապաշտ կորով ու վճիռ, վերջապես քո Նանորը հոյակապ իղձն է Սփյուռքին և բովանդակ հայության իր վերջնական հայրենիքը դառնալու և իր հազարամյա սուրբից իր իղձերին կատարած աղերսելու: Իբրև հայ մարդ և հայ երգով հայացած՝ դու սփռած ես հայության հայոց բուն երգը, բայց իբրև երգահան դու նույն հայացած հոգով ապրած ես հայ մարդու ճակատագիրը, սրտիդ ձայներով արծազանք տված ես նրա վշտին, տրտմության, հաղթանակին և լուսին, ձայների հմայիչ դաշնակությամբ արտահայտած ես նրա իղձերը: Դու ձայներով պատմագրած ես մեր ժամանակը, այդ ժամանակի հետ միասին քո գործն ու անունը պետք է մնան հայոց մշակույթի պատմության մեջ:

Մեծ է քո ծառայությունը՝ մատուցված Սփյուռքին, բայց քո տեղն այստեղ չէ, այլ այնտեղ, ուր հանգչում են վարդապետի ոսկորները, ուր ապրած է այն ժողովուրդը, որ վարդապետին հայացուց իր երգով և շարունակ

կում է հայրենն ապրել և զգալ: Քո գործն այնտեղ շատերին կարող է հրահանգել և ավելի շատերին հեռու պահել սայթաքումից: Այնտեղ պիտի տեսնեն քո շնորհիվ, թե որքան մեծ կարողական փարթամություն կա հայոց գեղջուկ եղանակների մեջ և թե համազգաց վարպետի մի ձեռք, որ քունն եղավ, որքան դաշնակություն հանած է այդ պարզուկ մեղեդիներից և որքան դեռ կարող է հանվել: Մեր ծայրը չի հասնում Հայաստան և ոչ նրա ծայրը հասնում է մեզ: Ով պետք է ներշնչել կարենար նրանց այն գաղափարը, թե այստեղ, մեր մեջ ապրում է մի մեծարժեք երաժիշտ, ամենից հավատարիմը վարպետի աշակերտներից, ամենից հայոգին մեր երգահանների մեջ, որի գործերը պետք է խնամքով հրատարակվեն և որի անձը պետք է համազգային հոգածության արժանանա: Իցիվ թե այս փառաշուք հանդեսի արծազանքը հասնի Հայաստան և դու, բարեկամ, հրավիրվիս ապրելու այնտեղ, որի մեծարժեք քաղաքացին ես արդեն քո հայեցի հոգով և հայաշունչ գործով: Այն ժամանակ այս փառաշուք հանդեսը կդառնար մի համեստ նախատոնակ այն մեծաշուք հանդեսի, որ կկազմակերպեր Հայաստանի երաժշտական աշխարհը հայ երգի և դաշնակության վարպետի պատվին: Ամեն, եղիցի, եղիցի:

Մշակույթ. 1989, № 2-3, էջ 119-120

Մտածումներ ազգի և դավանանքի մասին

Ցրված ենք իրարից հեռու, գաղթաշխարհի մեջ, տարբեր մշակույթների միջավայրում, բայց ունինք ավելի կամ նվազ գիտակցություն մեր ազգային ուրույնության: Շատերը հայ լուսավորչական են, ուրիշները կաթոլիկ, ոմանք բողոքական, բայց ամենը ավելի կամ նվազ չափով հայ են զգում իրանց: Այս զգացումը ամեն օր շեշտվում է հակադրությամբ այն միջավայրի, ուր ապրում ենք: Հալածանք, թե պաշտպանություն միշտ նկատի ունեն հայը, որով նպաստում են մեզ զանգվածների ազգային գիտակցության պահպանումին: Օտարի վերաբերումը շեշտում է մեր ուրույնությունը, առանց սակայն նպաստելու նրա զարգացման և պայծառացման: Այս աշխատանքը մենք ինքներս պիտի կատարենք: Օտարին հակադրվելով՝ մենք ամեն օր զգում ենք, թե հայ ենք, այսինքն ուրույն ժողովուրդ, քան օտարները, բայց մեր հավաքական ճիգով միայն կարող ենք բովանդակություն տալ «հայ» գաղափարին:

Այս աշխատանքը կազմակերպված չէ, մինչդեռ նրա կազմակերպությունը բարձրորեն անհրաժեշտ է մեր ուրույն գոյության համար: Քանի

դեռ չունինք հայրենիք, ուր բոլոր հայերը խմբիլ կարենան՝ մենք ստիպված ենք մնալ օտար միջավայրերի մեջ: Օտար միջավայրը նյութական, իրավական ու բարոյական ամեն հնար ունի մեզ կլանելու՝ մինչև իսկ առանց հատուկ հետապնդումի: Ապրուստի հոգը, զավակների ապագան, ապահով կենցաղի պահանջը և քաղաքակրթական հակումների գոհացումը անզգալապես մղում են հայ մարդուն ուժանալու իր ազգային զանգվածից և անձամբ տնօրինելու իր անձնական կյանքը, որ աստիճանական ծուլունով միայն կարող է դառնալ բնականոն: Երբ ամեն մի հայ դառնա այն երկրի քաղաքացին, ուր ապրում է, իր զավակներին տա այն երկրի կրթությունը, ուր ապաստան է գտած, ապրե այն պետության քաղաքական կյանքով, որի քաղաքացին է դարձած և գոհանա այն մշակույթով, որ ծաղկում է իր շուրջը - բոլոր խնդիրները կլուծվին և բոլոր խոչ ու խտրերը կհարթվին, բայց միաժամանակ կչքանա և հայ զանգվածը իբր ուրույն ազգություն, ուրույն բարք ու լեզու և ուրույն հոգեբանություն: Անհատական տեսակետով բոլոր խնդիրները կլուծվին լավապես, բայց ազգային տեսակետով վատթար հետևանքների կհասնենք: Որքան անգիտակից լինի հայ զանգվածն իբր հայ, այնքան դյուրին կընթանա յուր ծուլումը, որքան պակսի կամքը հայ մնալու, այնքան ավելի շուտ նոր սերունդը կօտարանա, որովհետև թեև ծնողը կոժժարանա իր ժառանգած ազգային կերպարանքը փոխելու, բայց արգելք չի կարող դառնալ զավակների ապազգայնացման, եթե, կրկնում ենք, պակսի հայ մնալու կամքը և անձնական բարեկեցության անտահոգությունը հաղթե ազգային կերպարանքի պահպանության պահանջին: Այսպիսով իրենց խորքի մեջ լավ հայեր՝ կատարած կլինեն ազգային վատ գործ, միշտ ազգ ու հայրենիք մտորելով և ավաղելով՝ իրենց զավակներին օտարացման կմղեն իրենց իսկ ձեռքով, ասելով թե, նախ՝ «միջոց չունեն» և ապա «ապրել պետք է»:

Այս վիճակի համար է ասված, թե «ոչ կարեք Աստուծո ծառայել և մանոնայի»: Կարելի չէ հայ մնալ առանց զրկանքի և ոչ զրկանքից ազատվել առանց հայությունը խաթարելու և ապա կորցնելու: Միայն սակավել մարդիկ՝ զորավոր ազգային գիտակցությամբ՝ կարող են ամեն ինչ զոհել հայ մնալու համար: Բայց մի քանի մարդ ազգ չեն և լինել չեն կարող, որքան և բարձրորեն գիտակից հայ լինեն և վճռեն հայ մնալ մինչև իսկ հետին նեղության մեջ: Կացությունն ինքնին ծնունդ է տալիս պատեհապաշտ բարքի և հոգեբանության և աստիճանաբար մշակում է լեանտենի տիպարը: Ոչ ոք կարող է խորապես հայ մնալով հաջողել օտար աշխարհի մեջ, եթե մենակ է կամ սակավաթիվ համամիտներ ու-

նի: Միայն միատեսակ տենչ ու կամք ստեղծելով զանգվածների մեջ՝ կարելի է կղզիացած հայություն պահել օտար ազգերի ծովերում: Այսպիսով ազգային գիտակցության պայծառացումը և նրա տարածումը զանգվածների մեջ միակ միջոցն է ազգի պահպանության մինչև այն օրը, երբ բավական ընդարձակ հայրենիք ունենանք, որ կարենա իր տարագիր զավակներն ընդունել և այդ հայրենիքը բավարար պայմաններ ունենա՝ իր զավակներին մարդավայել կյանքով ապրեցնելու:

Այս ուղղությամբ աշխատելու բավական ազդակներ ունենք մեր տրամադրության տակ, որ ժառանգած ենք մեր նախորդներից. եկեղեցին, լեզուն, որ դպրոց ասել է, ազգային ինքնավարության մնացորդներ (սահմանադրություն) և ցեղային զորավոր զգացում, այսինքն՝ հատուկ բարք ու սովորույթ և խորշանք օտար կենսածներից: Իսկ ազգի գիտակից խավերը այս ամենի հետ ունեն ազգային ուրույն պատմության ծանոթություն և քաղաքական գիտակցություն:

Ժողովրդի զանգվածը իր ազգային եկեղեցու մեջ մնալով՝ արդեն զգում է իր տարբերությունն օտար համայնքներից և այդքանը բավական է իբր հիմք ազգային ավելի բարձր գիտակցության հասնելու և գիտակցական գատորոշման համար՝ օտար զանգվածներից: Այլադավան հայերի համար հայոց լեզուն բավական զորավոր կապ է իր ազգայնությունը պահելու համար, ուստի անհրաժեշտ է, որ նրանց կրթությունը և պաշտամունքը հայոց լեզվով կատարվին: Նրանք ձեռքե տված են ազգային եկեղեցին հանուն ազատ և անձնադատ կրոնական մտածման կամ հանուն տիեզերական կրոնական միության, բայց ազգային տեսակետով մեծ չէ այս այլամետ ընթացքը, եթե լեզուն և ազգային միության զգացումը պահվի: Այլադավան հայությունը իր ինքնությունը պահելով իբր հայաբարբառ համայնք՝ դրանով իսկ նպաստած կլինի ազգային միության: Այլադավան հայությունը այն ժամանակ վտանգ կդառնա մեր համազգային գոյության, երբ իր հոգու փրկության ներելի մտահոգությանը ստորադասե համայն հայության դատը: Նրանք, որ դավանանքը գերադասում են ազգից՝ դրանով իսկ քայքայում են ազգային միությունը. նրանք, որ իրենց հոգին փրկելու մտահոգությամբ անտարբեր են դեպի ազգն ու նրա քաղաքական ճակատագիրը՝ դրանով իսկ խորապես եսական են, ապազգային կամ հակազգային: Աստված ամենագետ է և ամենմիաց. այսպես են դավանում եկեղեցիները. արդ, այն Աստվածը, որ լեզուներ շնորհեց վերնատանը նստողներին՝ դրանով իսկ կամեցավ, որ իր պատգամը հաղորդվի բոլոր ազգերին նրանց սեփական լեզվով: Աստված կարող է նաև հայրենն աղոթքը լսել և փառավոր-

վել նաև հայ պաշտամունքով: Կառչել Աստծուն և ուրանալ մայրենի լեզուն՝ ազգադավություն է, մտահոգվիլ հոգու փրկությամբ և անտես անել ազգի ազատությունը՝ նույնպես:

Ազգային-քաղաքական տեսակետով ամեն մի հայ մի ուժ է հայության համար՝ անկախ իր դավանանքից: Դավանանքը անհատական խղճի գործ է, մինչդեռ ազգային-քաղաքական գիտակցությունը պարտադրանք է, որից խուսափողը հայրենի ցանկը քանդող պիտի նկատվի՝ բոլոր դավանությանց պատկանող հայերի աչքին: Հարանվանական գիտակցությունից վեր պիտի տիրաբար իշխե ընդհանուր և համազգային մի ուրիշ գիտակցություն՝ ազգային-քաղաքական:

Մեր առջև գործունեության ընդարձակ հորիզոններ կան բացված, տարադավան հայերին բերել այն գիտակցության, որ բոլորը միևնույն հին ազգի զավակներն են և բոլորը ստորադաս վիճակ ունին այս աշխարհի մեջ՝ ազգային եկեղեցու զավակներին հավասար: Որ բոլոր հայերը ստորադաս են ոչ թե որովհետև տարադավան են, այլ որովհետև ազգային ազատություն չունեն. հետևապես բոլորի պարտականությունն է մտահոգվիլ բովանդակ ազգի քաղաքական ազատության համար առնվազն այնքան, որքան մտահոգ են իրենց հոգիների փրկության համար իրենց դավանանքի միջոցով: Ազգային գիտակցության այս բարձունքին պետք է հասնեն բոլոր դավանությանց պետերը և այս ոգով պետք է դաստիարակեն այն հոտը, որ վարում են իբր կրոնական պետեր: Դավանանքը կարող է արդյունք լինել ազատ քննության, ինչպես ավետարանական եկեղեցու մեջ, եկեղեցին կարող է ազատ համայնք լինել, կամ խստորեն կարգապահ և հնազանդ մի գերագույն պետի, բայց այս հանգամանքը պետք չէ արգիլել, որ բոլոր հայերը գիտակցեն իրենց քաղաքական իրավագրկունը և ձգտեն, իբր ուրույն ազգ, նույնի-րավ անդամը դառնալ մարդկային մեծ ընտանիքի, ունենալով իրենց սեփական հայրենիքը և ազգային պետությունը: Եկեղեցական տեսակետով, եթե ոմանք անիշխանական են, ոմանք տարիշխանական՝ ազգային տեսակետով ամենքը պետք է դառնան հայիշխանական: Այս ուղղությամբ հայությունը դուրս կգա հարանվանական նեղ սահմաններից, ուր նա դավանակից է միայն, և կբարձրանա քաղաքական մտածության ոլորտը՝ դառնալով քաղաքացի հայոց տենչալի պետության: Այդ պետությունը ստեղծվել չի կարող, մինչև ամեն հայ նույնքան զորապես չզգա քաղաքացիության պահանջը, որքան զորավոր է իր հոգու փրկության տենչը: Աշխարհն անցավոր է անշուշտ և ամենքս մահկանացու. ներելի է, որ մարդ մտահոգ լինի իր հանդերձյալ կյանքի մասին, բայց

ազգն իբր հավաքական գոյությունն ապրում է այս անցավոր աշխարհում և պետք է որ ապրի մյուս ազգերին նույնի-րավ:

Մարդկային մշակույթը՝ լինի կրոն, գիտություն, արվեստ, թե պետություն, բարք թե տնտեսություն, ազգային կերպարանք ունի այս աշխարհում. որդեգրել օտար մշակույթ օտար կերպարանքով ոչ թե ժխտումն է այս ընդհանուր օրենքի, այլ անգիտացումը և ուրացումը սեփական կերպարանքի: Նա, որ ազգային մշակույթի կրողը չէ, կրողն է այլազգի մշակույթի: Հավերժություն խոկալով անցավորն անտես անել և անցավոր ձևերի տարբերությանը կարևորություն չտալով՝ սեփականին անփույթ գտնվիլ, նշանակում է ազգային մշակույթը քայքայել, առանց մշակույթների ազգային կերպարանքը վերացնելու, որովհետև մարդկությունը վերացական գաղափար է. կան միայն ազգեր ու ցեղեր իրենց ուրույն կերպարանքով:

Դատողությանց այս շարքից ինքնին հետևում է, որ պետք է ազգային գիտակցությունը պայծառացնել, տարբեր ազգակների դերը ճշտել այս համազգային գործի մեջ և մեր ժամանակի ազգային գիտակցությունը արմատացնել հայության բոլոր խավերի մեջ: Այդ հնարավոր է միմիայն անդուլ և ծրագրված աշխատանքով, որ պիտի կատարեն բոլոր գիտակից հայերը:

Երկու հիմնական գաղափարներ կան, որ ազգային գիտակցության հիմնաքարերը պիտի կազմեն. կրթություն մայրենի լեզվով, կրթություն ազատության համար, հետևապես, ազգային-քաղաքական տենչերի արժարժում կրթության միջոցով և նոր հայության պատրաստություն: Նոր սերնդին պիտի ներարկել զորավոր ազգային գիտակցություն քաղաքական իմաստով: Նրան պետք է ներշնչել, որ ինքը հայ է, ուրեմն տարբեր ազգի զավակ, քան այն մարդիկ, որոնց երկրի մեջ ապրում է այսօր, որ նա ունի մի բնիկ հայրենիք, որ պետք է ազատագրվի: Նրան պետք է ներշնչել, որ իր ազգը ընդունակ է հանրօգուտ ազգային մշակույթ ստեղծելու, որի ապացույցը տված է դարերի ընթացքին, և որ այդ մշակույթը կարող է զարգանալ և արմատանալ միմիայն ազատ պայմանների մեջ և սեփական հայրենիքում: Նրան պետք է համոզել, որ այս մեծ գործի համար անհրաժեշտ է, որ նա հայ մնա և հայ պահե իր սերունդը և, եթե ինքն ու իր ընկերները չկարենան ստեղծել ազատ հայրենիք ու պետություն՝ այդ սրբազան տենչը պետք է փոխանցեն իրենց զավակներին: Պետք է սովորեցնել խստորեն տարբերել ազգությունը դավանանքից, հասկացնելով, թե ազգությունը մեկ է, մինչդեռ դավանանքները կարող են մի քանի լինել, որ կրոնը մարդու կապն է իր Աստծո հետ,

իսկ ազգությունը մարդու կապն է իր հայրենիքի և մշակույթի հետ, որ երկուսն ևս նկատի ունեն հավերժական կյանքը, բայց մեկն անձնական կյանքի տևողությունը հանդերձյալի մեջ, մյուսն ազգային կյանքի տևողությունն այս աշխարհում, որ մարդկային ինքնագիտակցության այս երկու ձևերը - դավանական և ազգային - իրար չեն ժխտում իբրև սկզբունք և նպատակ, որովհետև նրանք գոհացում են տալիս տարբեր պահանջների, մեկն անձնական է, մյուսը՝ հանրային. մեկը հավաքում է նույն դավանության անդամներին, մյուսը՝ նույն ազգության զավակներին. դավանական խմբակցությունները միասնական են, ազգը՝ հանրական, դավանական խմբերը ազգի ծոցի մեջ են ապրում և ազգի մասերն են կազմում, մինչդեռ ազգն իր դավանական խմբերով միասին համայն մարդկության մեկ ուրույն անդամն է և պետք է մյուս անդամներին լինի նույնիրավ: Ազգի քաղաքական նույնիրավությունը, որ ասել է՝ ազգի ազատությունն ու անկախությունը համազգային գործ է և վերաբերում է բոլոր դավանությանց անխտիր, ուստի ազգի քաղաքական ճակատագրի տնօրինումը պետք է լինի ազգի ձեռքին և ոչ նրա դավանությանց պետերի: Դավանությանց պետերը դավանությանց հետ գործ ունեն և ոչ ազգի լրության: Նրանց կոչումն է պարզել իրենց հոտի կրոնական գիտակցությունը և ոչ թե վարել ազգի լրության ճակատագիրը: Ազգային ճակատի ղեկավարությունը աշխարհիկ և քաղաքական գործ է և ոչ հոգևոր-դավանական և ամեն մի հայ դավանապես ստորադաս լինելով իր հոգևոր պետին, իբրև ազգի անդամ՝ պետք է ստորադաս լինի իր ազգության: Թե՛ ազգ, թե՛ եկեղեցի իրենց պահանջն ունեն մարդուց. այս պահանջներն իրենց խորքի մեջ և էության չեն կարող բնավ իրար հակասել, որովհետև եկեղեցին ազգայնության կրոնական արտահայտությունն է: Գերազգային եկեղեցիները - ինչպես պապականը, - կարող են վարել տարբեր ազգերի պատկանող մարդկանց խիղճն ու դավանական միտքը, բայց նրանք չեն կարող և պետք չէ վարել այդ ազգերի քաղաքական ճակատագիրը: Միշտ պետք է հիշել, որ դավանական մաքուր ջրերին հաճախ խառնվում են քաղաքական անմաքուր ջրեր և շատ անգամ դավանակցությունը դարձնում են խարիսխ քաղաքական ազդեցության: Այս դեպքում ծագում է երկընտրանք - դավանա՞նք, թե՞ ազգություն. այս երկընտրանքի մեջ պետք է հաղթանակե ազգությունը, որովհետև երկնավոր հոր և իր զավակների մեջ չկա և լինել չի կարող քաղաքական հարաբերություն:

Ազգային գիտակցություն մշակել և մշակածը ներարկել - տարբեր գործեր են. մշակումը պետք ունի ստեղծագործ կարողության, իսկ նե-

րարկումի համար բավական է մշակածի ըմբռնումը և հանրացումը: Բնորոշել ազգային «ոգին», այսինքն մտածումի, գգացումի և կամեցողության այն ուրույն կերպերը, որ հատուկ են հայության՝ գիտունի, արվեստագետի և քաղաքագետի գործն է: Գիտունն է, որ հետախուզելով այդ «ոգին» իր արդեն իրացած ձևերի մեջ - բարքի, պատմության, իրավունքի, հավատքի, արվեստի և տնտեսության՝ զատորոշում է բուն ազգայինը եկամուտ ազդեցությունից: Արվեստագետը սնվելով այն բարձունքներից, ուր հասած է ազգային «ոգին»՝ ստեղծագործում է նորը, բայց միշտ նույն «ոգով», որ փչում է ազգի ապրում կամ ապրած երկերի մեջ՝ լինին նրանք մվագ, թե երգ, շենք, թե քերթվածք, նկար, թե զարդ: Քաղաքագետը հետազոտելով ազգի անցած ուղիները և նրա առձեռն կարողությունը՝ ստեղծում է նոր հարմարություններ տիրող կացությանց և ընթացք է տալիս ազգի հավաքական ճիգին: Ժողովրդի գիտակից խավերը, որ ընդունակ են ըմբռնելու, բայց ոչ ստեղծագործելու՝ յուրացնում են յուրացնելին և ծավալում հանրության մեջ, ստեղծելով նոր բարք և նոր մտայնություն և նոր պահվածք ու վարմունք հանրային և մասնավոր կյանքի մեջ: Այստեղ դեր ունեն և ազգային եկեղեցու ստեղծագործ վարիչները, որ ավանդական դավանանքին տալիս են նոր մեկնություն և եկեղեցական կյանքին նոր ձևավորում, բայց միշտ այն «ոգով», որ իրացած է պատմության մեջ իր ժամանակին հարմար ձևերով: Մշակելով ավանդության մեջ հասածը, որ ասել է՝ նորն ստեղծելով, ազգի գործերը - լինի ստեղծագործություն, թե ստեղծածի հանրացում - պիտի կատարվեն մի գերագույն հրամայականի ստորադաս, որ է ազգի գոյության և ուրույնության պահպանությունը և պաշտպանությունը: Որքան հայն իրան զգա հայ և ուրույն ազգ, քան մյուս ազգերը, այնքան պակաս կարևորություն կստանա այս կամ այն ավանդական պիտակը, որովհետև մանուկը չի դադարում նույն մարդը լինել, թեև արդեն մազ ու մորուք ունի և տարբերվում է իր նախորդ վիճակներից. նույն ոգին է նա և նույն մարմինը՝ բարզավաճ, թե ազազուն, նայած կյանքի պայմաններին:

Այս հիմնական գաղափարների վրա պետք է կառուցվի մեր ժամանակի ազգային կյանքը և այս սկզբունքներով պետք է ղեկավարվի մեր հանրային գործունեությունը:

Ամբողջական երկեր, հ. 3, էջ 309-315

Դիտողությունների հայոց լեզվի մասին

Մեր մարմինը մենք բերում ենք անհիշելի դարերից:

Այսօրվան գեղադեմ տիկինը և բարեկազմ պարոնը սերում են հին այրաբնակ և ծառաբնակ կենդանակերպ գույգից: Նյուտոնի համճարը իբր կարողական գորություն արդեն նստած էր քարի շրջանի մարդու գլխի մեջ, մեկը մյուսի բնական զարգացումն է:

Մարդկային մտածումը գործում էր և այն ժամանակ, երբ կենդանաձև մարդն առաջին անգամ անողորկ կայծքարն սկսեց իբր զենք գործածել:

Նույն մտածումն էր, որ կապվեց այս ու այն ձայնախմբին և ստեղծեց բառեր ու լեզու: Մեր այսօրվան հողավոր լեզուն իր տարերքն առած է կենդանաձև մարդու անորոշ ձայներից:

Լեզուն այլ բան չէ, քան ձայնական նշանների մի համակարգ, որ արտահայտում է մտքեր, զգացումներ ու կամք: Նա մտավորական ճիգի արդյունք է. և հեռավոր սերունդների մտավորական աշխատանքը խտացած է այսօրվան լեզվի մեջ, ինչպես մեր մարմնի և հոգեկան կարողությանց մեջ խտացած է անհամար սերունդների քաղաքակրթական ճիգը:

Ամեն մի նոր սերունդ փոփոխում է լեզուն՝ ձգտելով հավատարիմ մնալ ավանդաբար ստացածին: Ոչ ոք կարող է տեսնել մազի կամ եղունգի երկարանալը, թեև ամենքը կարող են նկատել, թե մազն ու եղունգը երկարացած են: Երևույթի ընթացքը հաճախ մեզ չի երևում, բայց արդյունքը դյուրին է տեսնել:

Մարդկային աչքն ու ականջը սահման չունեն: Լարի թրթռումները պետք է որոշ քանակ ունենան, որ ձայն համարվին և երանգները պետք է որոշ գորության հասնեն, որ գույն նկատվին:

Բայց այս չի նշանակում, որ նկատելի աստիճանների հասնելու համար ձայնն ու երանգը աննկատելի աստիճաններով չեն անցած: Այդպես է և լեզուն. նա փոխվում է ամեն օր, ամեն ժամ, ամեն տեղ, բայց աննշմար չափով, աննկատ, մինչև տարիներ հետո նկատում ենք, որ լեզուները տարբեր են արդեն: Հին **աւ**-ը մենք հիմա հնչում ենք մաքուր **օ**. հին **աւ**-ը—**օր**: Բայց թե ե՞րբ և ինչպե՞ս **աւ**-ը **օ** դարձավ՝ ոչ ոք կարող է ասել:

Գիտենք, որ մեր գրիչները ժԲ դարից որդեգրեցին օտարի **օ** տառը. այդ քայլը նշան է, որ այն ժամանակ **աւ**-ն **արդեն օ** էր: Իսկ դրանից առաջ՝ Ոչ ոք գիտե: Հայտնի է մեզ Ե դարի **աւ**-ն և ժԲ դարի **օ**-ն. միջոցն անհայտ է:

Միևնույն լեզվով գրի առնված գրականությունը նույն այդ լեզվի դարավոր հոլովության հաջորդական փուլերն է տալիս: Նույն հայոց լեզվով է գրված և՛ Եգնիկի **եղծը**, և՛ Նարեկացու **Ողբերգության մատյանը**, և՛ Շնորհալու **Հիսուս որդին**, և՛ Առաքել Դավրիժեցու **Պատմությունը**. բայց ի՞նչ տարբերություն լեզվի և մտածության:

Երբ Կորյունի գրքում կարդում ենք. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհն հայոց անպայման սքանչելի լիներ, յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց (տպ. օրէնսուսոց) Մովսէս՝ մարգարեական դասուն և յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական զնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւատացելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»¹,— մենք տեսնում ենք մեր հին լեզուն իր զարգացման որոշ աստիճանի վրա:

Սա մեր լեզվական մտածողության հին կերպն է, որ գրի շնորհիվ դարձած է կայուն: Այստեղ մեռած ու քարացած, բայց և անկորուստ մնում են հոլովման, խոնարհման և խնդրառության ձևեր և շարադասության մի կարգ, որ չկան արդեն:

Ի՞նչ կերպարանք ուներ մեր լեզուն Կորյունից առաջ, չգիտենք: Մեր լեզվի հնադարյան զարգացումը անհայտ ու մթին ժամանակներից հասած է որոշ աստիճանի և Մեսրոպյան գրի շնորհիվ դարձած է կայուն:

Տիեզերական ստեղծագործ ուժը սակայն՝ շարունակած է ազդել. և կենդանի լեզուն, սերունդների բերանում դառնալով շարունակ՝ ստացած է այսօրվան կերպարանքը:

Ներգոյականը հիմա դրականով չի կազմվում, այլ ուղղականի ձևն ունի, մենք չենք ասում «յայնմ ժամանակի», այլ «այն ժամանակ»: Հատկացուցիչը հիմա հատկացյալից առաջ ենք դնում և ասում ենք «հայոց աշխարհը» և ոչ «աշխարհն հայոց». «ուրեմն» մեզ համար պատճառական մակբայ է միայն և ոչ տեղական. «դաս» բառի գործիականը հիմա «դասով» է և ոչ թե «դասու» և միայն դարաբաղցին է, որ շարունակում է գործիականը **աւ** կազմել՝ ասելով **տնաւ, տեղաւ**, մենք ասում ենք «աւետարանով» և ոչ «աւետարանաւ». նախդրիվ տրական «ի ձեռն» հիմա

¹ Պատմություն վարուց և մահուան Սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, 1894, էջ 22:

դարձած է «ծեռքով» (գործիական) և բառերը *ոյ* հոլովում չունին. այլևս չենք ասում «հաւասարելոց», այլ «հաւասարածների». «գտան»ը, որ հին մարդու համար կրավորական է և նշանակում է «գտնուեցան», մեզ համար հիմա ներգործական է, իսկ նրանց ներգործականը՝ «գտին», մեզ համար չքացած է առհավետ: Թվականը հիմա չի համաձայնում գոյականի հետ ոչ թվով, ոչ հոլովով և չենք ասում «երկուց հաւասարելոց», այլ «երկու հաւասարածների»: Շատ բառեր նույնն են մնացել, բայց փոխել են իրենց իմաստը: «Գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ», - ասում է Առաքյալը (Բ. Կորնթ. 9.6): Շեղելով այս խորին իմաստը իր բուն առիթից՝ կարող ենք գործ ածել մեր քննած երևույթը որակելու համար և ասել. գիրն սպանել է դասական մտածության ձևը, բայց և պահել է անկորուստ, իսկ ոգին կեցուցանելով՝ փոփոխել է մեր դասական լեզուն և նրան տվել է նոր կերպարանք:

Եթե Կորյունի հատվածը քննենք մի ուրիշ տեսակետից՝ կտեսնենք, որ «ժամանակի» և «Քրիստոսի» մեզ համար նույնպես սեռ. տրական են, ինչպես Կորյունի համար. բայց մենք չենք պահում «հայ» բառի հոգ. ուղղականը «հայք», թեև գործ ենք ածում հոգ <...>. «հայոց»: Մեզ համար «զնդով» <.....> ինչպես Ե. դարի մարդու համար, բայց «հայ» և «զունդ» բառերը սեռականը կազմում են *ի* հոլովելով-*հայի, զնդի*. մենք պահել ենք «լինել» ձևը, բայց Կորյունի համար նա անց. անկատար ժամանակ է. (լինում էր, կ'ըլլար), իսկ մեզ համար ստորադասական է. (թող լիներ, ըլլար): Ուրեմն կան ձևեր, որ մնացած են անփոփոխ, բայց փոխած են իրենց իմաստը. կան ձևեր, որ ավելի տարածված են (սեռ. *ի*), քան հին ժամանակ, կան ձևեր, որ մեռած են կամ գավառական են միայն (գործիական *ալ*):

Կարելի է առաջուց ասել, որ գրի առնված ամեն լեզվի մեջ մենք անխուսափորեն հանդիպելու ենք երեք կարգի երևույթներ.

1. Լեզվական ձևեր, որ տիրական են լեզուն գրի առած ժամանակ (օրինակ, նախդիրով բացառականը):

2. Ձևեր, որ հաղթահարված մնացորդն են երբեմն տիրական ձևերի (օրինակ, ց-ով հոգ. սեռականները մեզ համար. հայոց, տեղեաց և այլն):

3. Ձևեր, որ նոր են ծիլ արձակած և տիրաբար պետք է իշխեն մի քանի դար հետո (օրինակ՝ *եր* և *ներ* ածանցները, որ հոգնակի են կազմում և շատ սակավ են պատահում Ե. դարում, մինչդեռ այսօր իշխում են տիրաբար):

Ինչպես տեսնում եք, լեզուն փոխվում է շարունակ և իր տարերքը-հնչյուն, բառ, ձև, թե կարգ - փոփոխվում են անհավասար արագությամբ

ու չափով: Բոլոր բարբառներն ասում են «Չայր մեր», բայց ոչ մեկը չի ասում «հայրս տուն եկավ», այլ կան *հրս* կամ *հարս* տուն եկավ:

Ահա մի բառ, որ որոշ կապակցության մեջ մնում է անփոփոխ, իսկ ընթացիկ խոսքի մեջ ձևափոխված է սաստիկ: Ու թեև կարող ենք օրենք բանաձևել, թե *այ-ը* դառնում է կամ *է* կամ *ա*, բայց մենք տեսնում ենք, որ *միևնույն* բառի *այ-ը* մի դեպքում փոխվում է, մի ուրիշ դեպքում մնում է անփոփոխ:

Այս հանգամանքը շատ մեծ նշանակություն ունի լեզվի հետազոտության համար, և երբ ասում ենք «լեզվական օրենք», «հոլովույթի կանոն»-միշտ պետք է նկատի ունենանք այս հանգամանքը:

Մեր հայտնած գաղափարները լեզվի փոփոխության մասին՝ շատ պարզ են և հասկանալի և հավանորեն այդ պարզության պատճառով մոռացվում են շարունակ. ինչպես պարզ է, որ ամենքս պիտի մեռնենք, բայց հազիվ թե տարին մի քանի անգամ հիշում ենք այդ մասին:

Մեր հիմնական հայացքն այս մասին, թե լեզուն փոփոխական երևույթ է՝ ինքնին թելադրում է հետազոտության որոշ եղանակ: Գրի առնված լեզուն, ինչպես մի դարավոր ծառ, կարելի է կտրել ու հետազոտել հորիզոնական հատվածներով. առնել հաջորդական դարերի գրականությունը - Ե., Ձ., Է., Ը. և այլ դարերի - և զատ-զատ հեղինակների լեզուն ուսումնասիրելով՝ կազմել նրանց քերականությունն ու բառգիրքը և այդ հիման վրա հորինել Ձ., Է., Ը., Թ և այլ դարերի հայոց լեզվի քերականություններ: Այնուհետև տարբեր դարերի քերականություններն իրար հետ բաղդատելով՝ կազմել մեր լեզվի բաղդատական և պատմական քերականությունը:

Հետազոտության այս կարգը մեզ կտա ամեն մի դարի հայոց լեզվի կացությունը, կայուն վիճակը. իսկ պատմական քերականությունը մեզ կտա տարբեր դարերի կացությանց շարքը, լեզվի փոփոխության հաջորդական փուլերը: Նա մեզ կասի, թե լեզվական որևէ ձև ո՞ր դարին հատուկ էր. հոլովումն ու խոնարհումը ի՞նչ կերպարանք ունեւր այս ու այն դարում. այս ու այն բայերը ի՞նչ հոլովով էին խնդիր առնում մեկ և մյուս դարում և շարահարության կարգն ինչպե՞ս էր հաջորդական դարերի ընթացքին:

Այս սահմանների մեջ քերականությունը *նկարագրական* է. նա մեզ ասում է, թե կացությունն ինչպես է այսօր և ինչպես էր երեկ: Նա պատասխանում է «ի՞նչպես» հարցումին: Նա լեզվի բնապատմությունն է և բրածաբանությունը:

Նկարագրել որևէ երկրի այսօրվան կենդանիներն ու բույսերը և նույն երկրի բրածո բույսերն ու կենդանիները - մտավորական նույն աշխատանքն է պահանջում: Գիտունը դիտում է, դիտածը խմբում և հորինում ընդհանուր պատկերը կացության: Նույն աշխատանքն է կատարում և այն գիտունը, որ դիտում է այսօրվան կամ անցյալ դարերի լեզուն և դիտածի հիման վրա հորինում ներկա կամ անցյալ կացության պատկերը: Սա գիտության առաջին քայլն է և առանց այդ նախնական աշխատանքի անհնարին է առաջ շարժվել:

Սակայն, բնապատմությանը հաջորդած է կենսաբանությունը, որ ձգտում է եղածը մեկնել, բացատրել. նա ձգտում է պատասխան տալ «ինչու»՝ հարցումին: Նա չի գոհանում իմանալով, որ տղամարդը մորուք ունի, իսկ կինը ոչ, նա աշխատում է իմանալ, թե ինչու՝ այդպես է:

Լեզվի բնագավառում կենսաբանի հետաքրքրություն ունի այն մարդը, որ չի գոհանում իմանալով, թե միևնույն դասական «հայր» բառը արևմտյան բարբառներում այսօր դարձած է «հար», իսկ արևելյան բարբառներում «հէր». նա աշխատում է պարզել, թե ինչու՝ համար այդպես է կացությունը:

Իմ նպատակն է այս կարգի խնդիրներ հուզել և նրանց պատասխանը գտնելուն հետամուտ լինել: Ինձ թվում է, որ շատերի համար կարող է հետաքրքրական լինել այս աշխատանքը: Պարզել մթինը գրավիչ է մարդու համար. մի տեսակ ճամփորդություն է անկոխ աշխարհների մեջ, ուր ամեն քայլափոխին նոր տեսարան է բացվում մարդու առջև:

Ինձ թվում է, որ կլինեն ընթերցողներ, որ կհետևեն իմ խարխափումներին և կուրախանան ինձ հետ, եթե հաջողեմ գյուտեր անել:

Այս հետազոտության ընթացքին ես իբր հիմնական և ղեկավար սկզբունք ունեմ լեզուների փոփոխության անվիճելի փաստը: Լեզվի դարավոր հոլովությոյն այն հիմնական սկզբունքն է, որ շարունակ, արթուն պահակի պես՝ հսկելու է հետագա աշխատանքիս:

Ստանությանս այդ տրամադրությունը կարելի է ձևակերպել այսպես. որևէ գրի առնված լեզու նույն այդ լեզվի փոփոխման մի փուլն է, որ դարձած է կայուն. նույն այդ լեզվի լուսանկարն է որոշ հասակում: Այդ փուլից առաջ լեզուն ապրած և փոփոխված է դարեր շարունակ:

Մեր այսօրվան լեզվի մեջ այս կամ այն ձևի տակ դեռ հնչում է մեր վայրենի նախահոր բարբառը, ինչպես մեր այսօրվան նրբագույն կերպարի մեջ տրոփում է հին մարդու կոշտ հյուսվածքն արտադրող ճիգը: Բոլոր գրի առնված լեզուների մեջ մենք հանդիպում են մեռնող, տիրական և նորածիլ ձևեր, ինչպես այս վայրկյանին մարդկային սերունդը

կազմող բազմության մեջ հանդիպում ենք զառանածներ, առույգներ և նորածիլներ:

Այս բարձունքից նայելով՝ լեզուն մեզ կերևա փարթամ մի ծառ, որի արմատները թաղված են խորին և մթին անցյալում:

Չայոց լեզվի շեշտը

Քերականները մեզ ասում են, որ հայոց լեզվի շեշտը վերջին վանկի վրա է: Նրանց կարծիքով այս օրենքը շատ քիչ բացառություն ունի:

«Չայերեն բառ մ որ շեշտել պետք ըլլա, առհասարակ վերջին վանկն է շեշտ առնող», - գրում է Գ. Ա. Այտընյան (Քերականություն հայկազյան լեզվի, 1885, էջ 504):

«Բառի շեշտ ունին բոլոր բառերը քիչ բացառությամբ: Այս շեշտը գրաբարում գտնվում է բառի վերջին վանկի վրա», - գրում է Ս. Մալխասյան (Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, 1891, էջ 6-8):

Ինչպես տեսնում եք, երկուսն էլ նույն կարծիքն ունեն մեր լեզվի շեշտադրության մասին. միայն Գ. Ա. Այտընյան կարծում է, թե **առհասարակ ամեն մի հայ բառ** շեշտն առնում է վերջին վանկի վրա, իսկ Ս. Մալխասյանը, ապրելով Կովկաս, ժողովրդի մեջ և տեսնելով, թե արևելյան կենդանի լեզուն շեշտադրության տարբեր կարգ ունի՝ սահմանափակում է իր պնդումի ոլորտը և խոսում է **միմիայն գրաբար** լեզվի մասին:

Միջին տեղ է գրավում Գ. Աճառյանը՝ գրելով. «Մինչդեռ հին հայերենը և **կը ճյուղին** բոլոր բարբառները (այսինքն այն բարբառները, որ բայերի ներկա ժամանակը կազմում են **կը** մասնիկով. կըսես, կը տեսնես և այլն. - Ն. Ա.) առանց բացառության՝ շեշտը վերջավանկի վրա կդնեն, երևանի բարբառը վերջընթեր վանկի վրա կշեշտեն»²:

Ճիշտ է Գ. Աճառյանի դիտողությունը երևանի բարբառի մասին, որով ինքնին հերքվում է Գ. Ա. Այտընյանի կարծիքը, որ իբր թե «հայերեն բառ մ որ շեշտել պետք ըլլա, առհասարակ վերջին վանկն է շեշտ առնող»:

Մենք տեսանք մի հայերեն մեծ բարբառ, որ շեշտը դնում է բառերի վերջընթեր վանկի վրա: Ինչ վերաբերում է գրաբար լեզվին՝ Գ. Աճառյանը նույն կարծիքին է, ինչ որ Գ. Ա. Այտընյանը և Ս. Մալխասյանը:

Թե ի՞նչ հիման վրա հիշյալ երեք գիտունները և շատ ուրիշներ-ինքնաբերաբար կամ իրար հետևելով - կարծում են, որ գրաբար լեզվի

² Գիրքը, որից քաղած են այս վկայությունը, կող չունի, ուստի վերնագիրը դնել չեմ կարող. գիտեմ, որ էմիենան Ազգագրական ժողովածուի հատորներից մեկն է. բայց ո՞րը չեմ կարող ասել: Տես էջ 40:

շեշտն եղած է բառերի վերջին վանկի վրա - հայտնի չէ: Որևէ հիմք իրենք չեն բերում և մենք չգիտենք: Թվում է, թե սովորել ու տեսել են այդ շեշտադրությունը և բանաձևել են սովորույթը:

Գրաբարի շեշտադրությունը մի չքացած երևույթ է: Թե ինչպես էին շեշտում բառերը Ս. Սահակ և Ս. Մեսրոպ մենք չգիտենք: Այս մասին կարելի է միայն ենթադրություններ անել և դատողական ճամփով որևէ եզրակացության գալ: Ա. Մեյնեն և Ն. Մառը ընտրած են այս ճամփան:

Համեմատելով հայերեն բառերը հնդեվրոպական ուրիշ լեզուների բառերի, ինչպես և նրանց ենթադրական մախաձևերի հետ՝ Ա. Մեյնեն կատարում է, որ հայոց բառերը մի վանկով կարճ են, քան օտար բառերը: Նկատում է նաև, որ այդ բառերի կերպարանքը էական փոփոխությանց ենթարկված է հայ հողի վրա:

Այս երևույթներին կոթնած՝ նա հորինում է իր տեսությունը հին հայերենի շեշտադրության մասին. «Հնդեվրոպական բառերի կերպարանքը էական փոփոխությանց է ենթարկված հայ հողի վրա շեշտի շնորհիվ: Պատմական շրջանից բավական առաջ հայերենի մեջ հաստատված է ուժգնության մի շեշտ - անկասկած գորեղ - հնդեվրոպական բառերի վերջնաթեր վանկի վրա»: «Այս ուժգնությունը երկու գլխավոր հետևանք է ունեցած». նախ՝ հնդեվրոպական բառերի վերջին վանկի ծայնավորները սղված են, որի հետևանքով այդ բառերն սկզբունքով մի վանկ պակաս ունեն հայերենի մեջ: Օր. սանսկրիտ *panca* (երկու վանկ) հայերեն *հինգ* (մի վանկ): Սրա հետևանքով բոլոր հայերեն բառերը շեշտված են մեկ պատմական շրջանից առաջ. - Ն. Ա.) և այս շեշտադրությունը շարունակում է մնալ բարբառների մեծ մասի մեջ: Նոր լեզվի մեջ սակայն, ասում է նա, նկատելի է մի երկրորդական շեշտ, որ զարկում է առաջին վանկին. այս երկրորդական շեշտը բավական հին է. Կիլիկյան հայերենի «հաւտամ» ձևը, որ ծագած է հին «հաւատամ» ձևից՝ կարող էր կազմվել այն դեպքում միայն, եթե «հաւտամ» բառը շեշտվեր նաև առաջին վանկի վրա իբր «հաւտամ»:

Վերջնաթեր վանկը շեշտելու երկրորդ հետևանքն այն է, որ շեշտված վանկին նախորդող վանկի ծայնավոր տարրերից մի քանիսը ենթարկվում են փոփոխության, ինչպես *ի* և *ու*, որ դառնում են *ը* և այլն: Ա. Մեյնեի ասածն այն է, ուրեմն, թե նախքան գրերի գյուտը հայ բառերն ուրիշ կերպարանք ունեին՝ մի վանկով ավելի երկար էին և շեշտում էին վերջն-

թեր վանկը. սրա հետևանքով վերջնաթեր վանկերը սղվեցին կամ չքացան և դասական շրջանում բառերի շեշտը վերջին վանկի վրան էր արդեն: Այսինքն՝ սա ևս նույն կարծիքին է, ինչ որ մեր երեք գիտունները: Բայց նոր է իր այն կարծիքը, թե հայերեն բառերը հետագային ունեցած են և մի ուրիշ, երկրորդական շեշտ, որ զարկում էր առաջին վանկին³:

Ն. Մառ անշուշտ նույնպես լսած ու կարդացած էր, թե հայերեն բառերի շեշտը վերջին վանկի վրա էր: Բայց նա դիտում է մի շարք երևույթներ, որ դժվար է բացատրել այդ տեսությամբ: Նա հորինում է իր տեսությունը հին հայերենի շեշտադրության մասին, կարծում են Ա. Մեյնեից անկախ, որովհետև երկուսն էլ իրենց քերականությունները լույս են ընծայել միևնույն տարին (1903): Նա գրում է. «Հին հայերենի մեջ շեշտը դրվում է վերջնաթեր վանկի վրա: Եթե որևէ ձև կազմելու համար բառը երկարած է մեկ կամ ավելի վանկով, ապա շեշտն ևս դրա համեմատ փոխադրվում է նոր տեղը, բայց նա այնուամենայնիվ դրվում է վերջնաթեր վանկի վրա՝ հաշվելով վերջից»:

«Հասկանալի է, - շարունակում է Ն. Մառ, - ասելով վերջից երկրորդ կամ վերջնաթեր վանկ՝ պետք է պատկերացնել բառի նախավոր կերպարանքը: Հետագային վերջին վանկը շեշտ չունենալով, ոչ միայն թուլանում էր և եթե ծայնավորը սղելով դառնում էր *ը*՝ վանկն իր հերթին դառնում էր ծածուկ (այսինքն չգրվող *ը*-ով վանկ. ինչպես՝ ոսկ(ը)ր, գառ(ը)ն և այլն. - Ն. Ա.), այլ երբեմն բոլորովին չքանում էր, ուստի և վերջից երկրորդ վանկը դառնում էր վերջից առաջին վանկ, այսինքն՝ վերջին վանկ: Այնուամենայնիվ հայոց շեշտադրության նախավոր տեղը-վերջնաթեր վանկը - մթագնած չէ դեռևս գրաբար լեզվի մեջ. դեռ ավելին՝ հայոց շեշտադրության այս հիմնական դրությամբ միայն բացատրելի են ամենից ավելի բնորոշ երևույթները. գրաբարի քերականության»⁴: Այնուհետև նկատում է, թե հին հայերենի շեշտադրական կարգը պահված է Ղազախի բարբառում, որ շեշտում է բառերի վերջնաթեր վանկը. բայց դա արդեն գրաբարի վերջնաթեր վանկը չէ, որ դարձած էր վերջին, այլ շեշտը մի վանկ առաջ է քաշված: Եթե, օրինակ, հին ձևը «քաղաք» բառի «քաղաքի» էր (համ. վրացերեն «քալաքի»)՝ գրաբարը շեշտում էր վերջնաթեր վանկը - «քաղաքի», ուստի բառը իր վերջին անշեշտ ծայնավորը կորցնելով՝ դարձած էր «քաղաք». իսկ Ղազախցին այս նոր բառի վերջնաթեր վանկն է շեշտում ասելով «քաղաք», որ հնագույն «քաղաքի» ձևի վերջինից երրորդ վանկն է և ոչ թե երկրորդը:

³ *St'u A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, էջ 1-2:*

⁴ *Ն. Մառ, Քերականություն հին հայերեն լեզվի (ռուսերեն), էջ 34-35:*

Այսպիսով մեր շեշտադրության կարգը Մառի ասելով եղած է վերջընթեր վանկը շեշտել. ժողովուրդը պահել է այդ կարգը. հին հայն ուներ «քաղաքի» բառ, ուստի ասում էր «քաղաքի» (վերջընթերը շեշտած), նոր հայն ունի «քաղաք» բառը և ասում է «քաղաք»- (կրկին վերջընթերն է շեշտած): Բառն է փոխված և ոչ թե շեշտի կանոնը: Ըստ եւթյան սակայն Ն. Մառն ևս ընդունում է, որ գրաբար բառերի վերջին վանկն է շեշտված, որոնք երբեմն վերջընթեր էին: Բայց նա ևս մի նորություն է ասում. այսինքն՝ սղած վանկերը բոլորովին մթագնած չէին հին հայերենի մեջ. և գրաբարի քերականության շատ բնորոշ երևույթները այդ համագամանքով կարելի է բացատրել:

Ամփոփելով գիտունների մտածումը՝ կարող ենք ասել, թե նրանց կարծիքով հնագույն հայերենի մեջ շեշտը վերջընթեր վանկի վրա էր. դրա հետևանքով բառերը կորցրին իրենց վերջին վանկերը և ե. դարում՝ երբ գրի առնվեց գրաբար լեզուն՝ մեր բառերը շեշտվում էին վերջին վանկի վրա: Հետագայում հայոց բառերը երկրորդական շեշտ ունեցան (Մեյե), իսկ սղած հին վանկերը բոլորովին չմթագնեցին (Մառ):

Նախքան առաջ անցնելը շտկենք այստեղ Մեյեի տեսությունը երկրորդական շեշտի մասին:

«Նոր հայերենի մեջ, - ասում է նա, - բացի գլխավոր շեշտը, որ զարկում է բառի վերջին վանկին, նկատելի է մի երկրորդական շեշտ, որ զարկում է առաջին վանկին. այս երկրորդական շեշտը ավելի առաջ գոյություն ուներ, քան բառամիջի *ա*-ի անկումը, որ առաջ եկավ դասական լեզվի հաստատումից հետո. և իսկապես *ա*-ն ընկնում է այն ժամանակ, երբ նա գտնվում է առաջին և վերջին ձայնավորի միջև»: Եվ բերում է «հաւատամ»-«հաւտամ» օրինակը:

Երկու կողմից պետք է սահմանափակել այս կարծիքը. նախ ժավալի տեսակետով: Թեև ճիշտ է, որ արևմտյան բարբառների մեջ «թագաւորը» դառնում է «թագւոր» և «հաւտամը»՝ «հաւտամ», բայց օրինակ Ղարաբաղի բարբառում նույն բառերը դառնում են «հըւտամ» և «թքաւեր», ուրեմն Մեյեի դիտած երևույթի ազդեցությունը բովանդակ հայ լեզվի վրա չի տարածվում: Երկրորդ՝ այդ օրենքները պետք է ճշտել ժամանակի տեսակետով. ոչ միայն դասական լեզվից հետո, այլև առաջ գործած է նույն օրենքը. այսպես՝ դասական «յիսուն» բառը նույն ինքն Մեյեի կարծիքով ծագած է մի նախաւոր «հինգիսուն» ձևից (Gram., էջ 73), արդ՝ եթե միջին վանկն ընկնում է այն պատճառով, որ գտնվում է առաջին և

վերջին շեշտած վանկերի միջև, ապա «հինգիսունը», որ «հաւտամի» պես եռավանկ է «յիսուն» դառնալու համար, որ «հաւտամ»ի պես երկվանկ է, պետք է իր առաջին վանկը շեշտած ունենար, հոգ չէ, թե «երկրորդական» շեշտով:

Այսպիսով երկրորդական շեշտը գործած է և նախագրական շրջանում. նա ոչ թե նոր լեզվի, այլ հայոց լեզվի հիմնական երևույթներից մեկն է: Այս մասին դեռ առիթ կ'ունենամ խոսելու. միայն իբր նոր ապացույց առեք «տայցեմ» ձևը. անշուշտ սա նախապես եղած է «տաիցեմ»-այսինքն՝ երեք վանկ. անհրաժեշտ է, որ առաջին ու վերջին վանկը շեշտած լինեին, որ *ի*-ն կարողանար սղվել և կիսածայն *յ* դառնալով՝ բառը դարձներ երկվանկ-«տայցեմ». օրինակներն անհամար են. բայց եղածն էլ բավական է ցույց տալու համար, որ հին ժամանակ մեր բազմավանկ բառերը մի քանի շեշտ ունեին: Ես առիթ կ'ունենամ նրանց տարազները տալու:

Որքան ճիշտ է այն բնաբանը, որ Հ. Ա. Այտընյան դրած է իր «Քննական քերականության» ճակատին, թե «ներկան անցածով լուսավորելու է». նույնքան և ավելի ճիշտ է, եթե ասենք, թե անցածը ներկայով պետք է լուսավորել: «Այսօրվան» ջրի վերլուծությունը և «ներկա» մետաղների գոլորշիացման աստիճանի որոշումն է, որ հիմք են դարձած հորինելու մի տեսություն տիեզերքի «անցյալ» գազային վիճակի և նրա աստիճանական սառուցման մասին: Տիեզերքի «անցյալը» նրա «ներկայով» է լուսաբանված: Մեր «այսօրվան» ականջի արտաքին խխունջի անկյունածև փոթը հիմք է դարձած Դարվինի համար «անցյալ» դարերի մարդու ականջները երկար համարելու:

Պատմական գիտությունները ուրիշ հնար չունեն անցածը հասկանալու և վերակոչելու, քան ճանաչել և օգտագործել ներկան: Լեզուն պատմական երևույթ է. նրա անցյալը հասկանալու համար պետք է դիմենք նրա ներկային. բարբառների ձայնաշրջման օրենքները մենք պետք է նախ ուսումնասիրենք և ապա կիրարկենք հին լեզվի վրա՝ տեսնելու համար, թե արդյոք այդ օրենքները չե՞ն գործած նաև հեռավոր անցյալում և չի՞ կարելի բառերի և ձևերի հոլովույթը նրանց միջոցով պարզել, այդպես նաև շեշտադրության երևույթը քննության ժամանակ: Կենդանի բարբառների շեշտադրությունը կարող է մեզ հիմքեր տալ գրաբար լեզվի շեշտադրության կարգը հասկանալու համար:

Մեր կենդանի բարբառների շեշտադրության մասին ամենից ավելի խոսել է Հ. Աճառյանը: Նկարագրելով մի շարք բարբառներ և ավելի կամ

պակաս մանրապատում խոսելով նրանց հնչափոխական և ձևաբանական երևույթների մասին՝ նա տեղ-տեղ խոսք է անում և նրանց շեշտադրության մասին:

Թվում է, թե շեշտադրության երևույթները նրա ուշադրությունը չեն գրաված այն չափով, որին արժանի էին: Իր կարծիքները շփոթ են, հակասական և տեսությունները կարոտ են վերաստուգման: Լեզուների շեշտադրությունը հիմնական երևույթ է: Տեսանք, թե Մեյեն մեր բառերի արտասովոր կերպարանքը քույր լեզուների համեմատությամբ համարում է մեր շեշտադրության արդյունքը:

«Ուժգնության շեշտը,- գրում է նույն Մեյեն,- որի բովանդակ ուժը հայտնաբերում են այսօրվան գերմաներենն ու անգլերենը, շատ մեծ ազդեցություն է արած» (այդ լեզուների վրա)⁵:

«Շեշտի երևույթը տիրապետում է ձայնավորների պատմական ձայնաբանության վրա թե՛ ֆրանսերենի և թե՛ ուրիշ ռոմանական լեզուների մեջ», - գրում է Լ. Կլեդատ⁶:

Նկատի ունենալով շեշտադրության մեծ կարևորությունը լեզվական երևույթների բացատրության համար՝ մենք մանր քննության կենթարկենք Հ. Աճառյանի կարծիքները հայոց կենդանի բարբառների շեշտադրության մասին:

Հայրենիք, 1928, № 4, էջ 79-85

Նորից շեշտի մասին

Մեր կենդանի լեզվի շեշտադրությունը հետազոտելով, կարող ենք մի մոտավոր գաղափար կազմել մեր շեշտադրության հնագույն եղանակի մասին: «Հաց, միս, թեև» և սրանց նման հազարավոր բառեր Ս. Մեսրոպի օրերից գալիս են մինչև մեզ՝ առանց փոփոխության: Ներելի է մտածել, որ նրանցից մի հարյուր կամ ավելի տարի առաջ այդ բառերը նույն կերպարանքն ունեին:

Այս հիման վրա հանդգնություն չի համարվի, եթե ասենք, որ այսօրվա շեշտադրության եղանակն ևս առնվազն նույնքան հին է, որքան այդ կարգի բառերը:

Շեշտը մեծ ավերածություն է կատարած մեր լեզվի մեջ. մեր բառերի

⁵ A. Meillet, *Caracteres généraux des langues germaniques*, էջ 71:

⁶ L. Clédat, *Manuel de Phonétique et de morphologie historique du Français*, էջ 1:

և ձևերի այսօրվա կերպարանքը մեծ մասամբ պարտական ենք նրա կործանարար և շինարար ազդեցության:

Հետագային կտեսնենք, որ մեր բառերն ու քերականական ձևերը իրար վրա դիզված ու ծանրացած տարբեր խավերի կույտեր են, որ մի տեսակ լեզվագիտական պեղումների կարիք ունին՝ իրենց կերպարանքը լույս աշխարհի բերելու համար: Որևէ հնագույն մի ձև նորոգվելու, նորից մաշվել, նորից կարկատվել և այդ վերջին ձևով հասել է Ս. Մեսրոպին կամ մինչև մեր օրերը:

Անհրաժեշտ է վերականգնել նախավոր ձևերը՝ մեր լեզվի հոլովությամբ գծելու համար: Այս աշխատանքի համար անհրաժեշտ է մեր շեշտադրության եղանակը պարզել, գտնել մեր կշռույթի հիմքերը, մեր ձայների պահվածքը իրար հանդեպ. մի խոսքով պարզել մեր բառակազմության և ձևաշինության մեքենական կողմը: Ամեն մի բառ ու ձև մի պատրաստի գործիք է, որ շինված է հատուկ ծրագրով: Լեզվական բառամթերքի թանգարանի մեջ դեռ պահվում են մի քանի նմուշներ հնագույն բառակազմության և ձևաշինության: Նրանց ուշադիր քննությամբ կարելի է հասկանալ հին վարպետների գործունեության եղանակը, նորանոր մտադրությունները, նույն պետքը գոհացնելու համար կատարված տարբեր փորձերը, այն «ապրանքները», որ մի ժամանակ շատ լավ են ծախվել, բայց հետո պահանջների և ճաշակների փոփոխության պատճառով դուրս են եկած հրապարակից. - վաղեմի դարերի ավեր և անբնական ամրոցներ կամ ժանգոտած աշտեններ այս ու այն գավառում. ամրոցներ, ուր երբեմն եռում էր ազնվական կյանքը և աշտեններ, որ փառք էին վաստակում մարտի դաշտերում...

Մեր շեշտադրության հետազոտությամբ հնարավոր է կորած ձայները գտնել, սղած ձայնավորները վերականգնել և հասնել հնադարյան հայերենի առնական կերպարանքին՝ առանց նկունքների և անշքացած ամփոփման: Անհիշատակ պայքարների մեջ, ճակատելով բազմազան լեզուների դեմ, տոկալով պատմական բախտի չար հարվածներին՝ ընկճված է հնագույն հայերենի վես կերպարանքը, որ այսօրվա բարբառների մեջ հասած է հետին անշքության՝ նրանց տեր ու պահապան գեղջուկի նման: Սակայն ինչպես տերը, այնպես էլ և իր լեզուն հավատարիմ, բայց նկուն գարմն են մեծագոր Հտտերի և Ուրարտացի անվեհեր ռազմիկների և նրանց մեծագոռ բարբառի խուլ արծազանքն է, որ դեռ հնչում է մեր գրաբարի և աշխարհաբարի մեջ...

Մենք այստեղ գրի կառնենք այն դիտողությունները, որ արած ենք հայոց լեզվի և հատկապես **ուժ** բարբառների շեշտադրության մասին:

Մի կողմից մենք պիտի տանք շեշտադրության այսօրվա կացությունն այն կերպարանքով, որ նա ունի **ուժ** բարբառների մեջ. մյուս կողմից բառերի և ձևերի այսօրվա կերպարանքը քննության առնելով՝ պիտի ջանանք գծել այն ուղին, որով նրանք հասած են այդ կերպարանքին, արդյունքից մակաբերելով արարչագործ պատճառի բնույթը:

Մեր դիտողությանց մի մասը հարկադրաբար պետք է հետաձգենք. նրանց բանաձևելու համար անհրաժեշտ է նախապես պարզել մեր հայացքը մեր լեզվի հնչյունների մասին. այդ պայմանով միայն մեր դիտողության մի մասը կարող է հասկանալի դառնալ:

Առայժմ մենք կխոսենք այն շեշտադրական երևույթների մասին, որ կարելի է բանաձևել առանց խնդիր հարուցանելու մեր հնչյունների մասին:

Նախ ուշադրության առնք հետևյալ պարագան. եթե արտասանենք մի շարք միավանկ արմատներ կամ բազմավանկ բառեր, որ վերջանում են բաղաձայնով՝ կնկատենք, որ մի նշմարելի **ը** են կցում իրենց վերջավորության: Շանոթության մեջ ես բերած են բազմաթիվ բառեր, բոլորը միավանկ, որ ունին մեր հիմնական ձայնավորները և վերջանում են մեր **բոլոր** բաղաձայներով: Վերջին պարագան ցույց է տալիս, որ մեր դիտածը ճշմարիտ է մեր **բոլոր** բաղաձայների համար: Գալով ձայնավորների բնույթին, լինին նրանք պարզ, թե երկբարբառ՝ դրանով մեր դիտած երևույթը չի փոխվում: Չի փոխվում երևույթը նաև այն դեպքում, երբ բառերը վերջանում են ոչ թե մեկ, այլ երկու բաղաձայնով, ինչպես՝ «որբ, կորդ, արդ, զարդ, ականջ, ճանկ, խինչ, պինդ» և այլն¹:

Դյուրին է մեր դիտած երևույթին անձամբ վերահասու լինել: Դրա հա-

¹ Ահավասիկ միավանկ բառերի մի ճոխ հավաքածու:

Ա ձայնավորով. - գար (մի տեսակ ունելիք է), թագ, բաղ, վագ, կաթ, խած, հալ (ծյունի, յուղի), վախ, խած, խակ, կահ, ծած (ծածեն բայի արմատը, որ նշանակում է ժողովել), խաղ, մած, կամ, բան, խաշ, խաչ, տապ, աջ, առ, թաս, բավ, վատ, քար, հաց, ափ, տաք: Ի ձայնավորով. - բիբ, ճիգ, հիդ, (Թիֆլիսի բարբառով նշանակում է հետը, միասին), կիգ, կիթ, բիժ (աչքի ճպուռ), բիլ (կապույտ), միխ (Թիֆլիսի բարբառով՝ մեխ, գամ), բիծ, տիկ, վիհ, շիդ (շյուռ), խիծ, իմ, գիմ, վի՜շ, ծակիչ, կիպ, բջիջ, թիռ, միս, թիվ, միտ, հիր, կից, քիփ (կիպ), իք (մի գատ, մի բան):

Ու ձայնավորով. - գուբ, սուգ, ուղ (երաժշտական մի գործիք է), կուգ, թուփ, կուժ, կուլ, թուխ, ծուծ, ծուկ, ուհ, Աստուծ (Թիֆլիս), մուղ (ջրմուղ), գուժ (ծունկի ծալը դրսից), ո՛ւմ, տուժ, ուշ, կուչ (գալ), հուպ (մոտ, կից), քուջուջ (հավերհ), ուռ, ուս, կուտ, ուր, խուռ, խուփ (աման), թուրք:

Ո ձայնավորով. - Դակոր, ոլոգ, հող (այդտեղ), .խոգ, կոթ, բոժոժ (շերամի), հու (խաղալիք), դիս, կոժ, բոկ (ոտաբաց), գոհ, օժ, տող, ոժ, գոժ, կոն, կոտոշ, պոչ, հոպ, որոջ (ոչխար), բոռ (ուռկան), փոս, բով, տոտ (վարտիկի), փոր, գոց, խոփ:

մար լսելի ձայնով արտասանեք. «քիթ, մեծ կետ, տակ, զուր» և այլն, ընտրելով մեր ցանկից կամ ինքներդ հիշելով. - դուք պիտի տեսնեք, որ իսկապես տարբերում եք մեծը, քիթը, կետը, տակը, զուրը և այլն: Վերջին **ը**-ն շա՛տ սուղ է, հազիվ զգալի, բայց ուշադիր դիտողի համար բավական նշմարելի բնույթ ունի: Այս **ը**-երը բոլորովին նշմարելի կդառնան, եթե ձայնավորներն արտասանեք ոչ թե կարճ ու հատու, այլ երկար, ծոր տալով. այսպես՝ քի՛թ, մե՛ծ, կե՛տ, տա՛կ, զու՛ր, դուք այն ժամանակ շատ պարզ կնկատեք, որ իրոք արտասանում եք քի՛թը, մե՛ծը, կե՛տը, տա՛կը և այլն:

Թվում է, թե երկու բաղաձայն դուրս են այս կանոնից. դրանք են **ճ** և **մ**: Բայց թվում է միայն: Իրոք նրանք ևս ենթակա են ընդհանուր օրենքին: Նախ՝ եթե ձայնավորներն արտաբերեք ծոր տալով՝ այդ երկու՝ հնչյունն ևս իրենց հետևից քաշում են **ը**- եր. այսպես՝ «քե՛ն, քա՛ն, քու՛ն, գո՛ն(կան), գի՛ն, ասե՛ն, տո՛ն». կամ թե՛ «հա՛մ, բե՛մ, գո՛մ, գի՛մ (գ տառի անունը), հու՛մ, կե՛մ (կեռ փայտ է, որով գութանի փոկին կապ են տալիս)»:

Միայն հատու շեշտով արտասանելու ժամանակ է, որ պատրանք կունենաք՝ իբր թե նրանց հետևը սուղ **ը**- եր չկան: Դրա պատճառն այն է, որ այդ երկու ձայները ռնգային են և մենք կարող ենք նրանց **կորցնել** մեր բերանի խոռոչի մեջ: Եթե արտասանենք **բան** և մեր լեզուն չգատենք քիմքից, կամ արտասանենք **գամ** և մեր շրթուքները հավաք պահենք՝ այն ժամանակ մենք կունենանք **ճ** և **մ** ձայների ընդհանուր երանգը, բայց չենք իմանա նրանց ընդհանուր արժեքը, այսինքն կերևա որ մեր լսածը ռնգային ձայներ են, բայց ինչ են իրոք՝ **ճ** թե **մ**, շատ որոշ չենք կարող զգալ: Կարծում են՝ այս կարգի արտասանությունն է պատճառ, որ բոլոր լեզուների մեջ այդ երկու ձայները լծորդ են և փոխարինում են իրար: Այդ է պատճառը, որ մեր գրաբարի «ասենքը» դարձել է «ասենք» և քույր լեզուների dom-ը հայերեն եղած է «տուն»:

Եթե կամենանք սակայն այդ երկու ձայների իսկական բնույթը պարզել՝ պետք է լեզուն հետ քաշենք քիմքից և բանանք մեր շրթուքները. այն ժամանակ մենք շատ որոշակի կլսենք **ճ** և **մ**, որ իրենց հետևից անխուսափելիորեն կբերեն **սուղ ը**- եր. և մենք կունենանք «բանը, գամը»:

Նկատենք այստեղ, որ պայթուցիկ ձայնավորներն ավելի շատ են ցուցադրում այս երևույթը, քան մյուս բաղաձայները: Սուղ **ը**- երը ավելի նշմարելի են «հատ, բաղ, կաթ, կապ, գար, կափ, մուկ, թուք, հոգ» բառերի վերջում, քան, օրինակ, «քար, լար, խող, քոս» և նման բառերից հետո: Իսկ պայթուցիկների մեջ լերկերն ավելի զորավոր են այս տեսա-

կետից քան մյուսները. այսպես՝ **պ, տ, կ**: Սուղ **ը**-ը **խ** ձայնից հետո ավելի լավ է զգացվում քան **հ** ձայնից հետո. այսպես՝ «գոհ, զոխ, կահ, կախ»:

Ավելի մանր դասակարգումներս ավելորդ են համարում հիշատակել այստեղ:

Այս սուղ **ը**-երը երևում են այն ժամանակ, երբ բառերը հնչում են զատ-զատ, իբր ուրույն միավոր: Շարակցության մեջ նրանց պահվածքը տարբեր է: Եթե բաղաձայնով վերջացող բառին հաջորդում է մի ձայնավոր հնչյունով սկսվող բառ, այն ժամանակ նախորդ բառի բաղաձայնը հենվում է հաջորդի ձայնավորին և սուղ **ը**-ն չքանում է. օրինակ՝ «կաթ է, հաց առա», որ արտասանվում է իբր՝ «կա-թե, հա-ցա-ռա»: Իսկ եթե հաջորդ բառն ևս բաղաձայնով է սկսվում. այն ժամանակ սուղ **ը**-երը զգացվում են, սակայն շատ թեթև. այսպես՝ «կաթ բերի, հաց տվի», ուր **կաթ** և **հաց** բառերն արտասանվում են խուսափուկ **ը**-երով, իբր կա-թըբերի, հացը տվի:

Եթե փորձենք բառավերջի բաղաձայներն արտասանել, որ խուսափուկ **ը**-երը չզգացվին, այն ժամանակ բաղաձայների բնույթը կադուտանա և նրանք կբռնեն չքացման ճամփան: Վերի խոսքերն, օրինակ՝ կհնչվին իբր՝ կա՛ բերի, հա՛ տվի: Այս ճամփին են չքացած մեր բայերի երրորդ դեմքի **տ-երը, գործե, գործեն**, երբեմն եղած են **գործես, գործենս**: Այդ ճամփին են չքանալու ֆրանսացվոց բայերի երրորդ դեմքի **է**-երը, որ առայժմ չքանում են միայն բաղաձայների առջև, բայց դեռ արթնանում են ձայնավորի հանդիպելիս. գրում են *il dit*, բայց արտաբերում են **իլ դի**: Սակայն սրանց վերջին **է**-ն մերիմի պես չքացած չէ, այլ թմրած. *il dit a moi* -հնչում է **է** -ի լիակատար արժեքով իբր՝ **իլ դի տա մուա**:

Եթե բառերի վերջին վանկը ծածուկ է և **ն**-ը է կազմված՝ այն ժամանակ սուղ **ը**-երը լավ չեն լսվում, որովհետև լեզուն քիմքից ուշ է զատվում՝ մանավանդ ձայնավորը ծոր տալու ժամանակ. իսկ երբ այդ կարգի բառերը հատու շեշտով են հնչում, այն ժամանակ լսվում է մի խուսափուկ **ը**. օրինակ՝ «սե՛րմն, գե՛ղմն, հա՛րսն» և «սե՛րմն, գե՛ղմն, հա՛րսն» և այլն: Եթե ծածուկ վանկերը կազմված են ուրիշ բաղաձայներով, այն ժամանակ լսվում է խուսափուկ **ը**. ինչպես՝ մանր, աստղ: Այս կարգի ձևերի մեջ խուսափուկ **ը**-երը զգացվում են թե՛ այն ժամանակ, երբ ձայնավորը ծոր ենք տալիս և թե՛ այն դեպքում, երբ արտաբերում ենք հատու:

Ի՞նչ են այս սուղ և խուսափուկ **ը**-երը: Արդյոք սրանք նվաղած մնա-

ցո՞րդն են երբեմնի առույզ ձայնավորների, թե՞ բաղաձայն ասածդ ուրիշ կերպ արտասանվել չի կարող: Մեր դիտած երևույթի տարրությունն ավելի ընդարձակ է, քան հայոց լեզվի սահմանները: Ֆրանսացին եթե ձայնավորով չպաշտպանե իր բառավերջի բաղաձայնը՝ նրա բնույթը վտանգի կենթարկվի և անորոշ բան կդառնա. ավելի մի միտում, քան մի իսկական հնչյուն: Նա գրում է *grand* և արտասանում է *gran*. «գրանդ» արտաբերելու համար նա պետք է բառի վերջին կցե մի **e** և արտաբերե մի շատ նշմարելի **ը**, ինչպես անում է իգականի մեջ, բայց մանավանդ ոգելու և երգելու ժամանակ:

Ռուսն իր բաղաձայները պաշտպանում է երկու գնով՝ մեկը կոշտ, իսկ մյուսը փափուկ արտասանության համար: Նրանք այսօր արտասանության համար պարզ նշաններ են դարձած. նրանցից մեկը (կոշտը) մինչև իսկ չեն գրում: Բայց նրանք երբեմն ձայնավոր էին. կոշտը մոտավորապես մեր **ը**-ի արժեքով, իսկ փափուկը՝ մեր **ը**-ի նման:

Գերմանացիք մեզ նման անպաշտպան են թողնում իրենց ձայնավորները և արտասանում են մերիմի պես խուսափուկ **ը**-երով. *gieb, Tag, Buch* և այլն: Այնպես է թվում, թե բոլոր բառերը ժամանակին ձայնավորով են վերջացած, որ հետագային սղած են, մնալով անշեշտ:

Մեր հետազոտության ճամփի այս կետում հանդիպում ենք **Ն**. Մառին, որ ուրիշ կողմից գալով հասնում է նույն տեղը: Այնուհետև մեր ճամփաները նորից բաժանվում են: Ոչ մեկը մեր քերականներից այնքան ընդարձակորեն խոսած է մեր շեշտադրության և մեր հնչյունների փոփոխության մասին, որքան **Ն**. Մառ, ուստի արժե, որ ուշադրությամբ լսենք նրան: Իր «Հին Հայերենի Քերականութեան» մեջ, որ գրված է ռուսերեն, նա հորինում է հատուկ տեսություն, որ մերձուստ շոշափում է մեր քմնած խնդիրը (էջ 46-47, § 62, a): Նրա կարծիքով հին հայերենի մեջ մեր պարզ ձայնավորները բառավերջին սղելով դարձած էին **ը**, որ հիմա չեն հնչում, հետևելով նոր հայերենի արտաբերության կարգին:

Հին հայերը սակայն հնչում էին այդ **ը**-երը, որ **ա, ե, ի, ո** և ու ձայնավորների սղումից էին առաջ եկած: Երբեմնի **կարգա, մարդո, մոգու, ախտի** բառաձևերը դարձած էին «կարգ, մարդ, մոգ, ախտ», որ դասական շրջանում արտասանում էին «կարգը, մարդը, մոգը, ախտը»: Սղում էին ձայնավորները նաև փակ վանկում և «եզան, մուկան, գառան» դարձած էին «եզն, մուկն, գառն»: Նկատենք սակայն, որ փակ վանկերի այդ **ը**-երը արտասանում են նաև այսօր և չեն կարող չարտասանել, «մուկըն, եզըն» և այլն: Քանի դեռ վերի բառերը արտասանվում էին իրենց որոշ **ը**-երով, նրանց բաղաձայները, ասում է **Ն**. Մառը, չէին փոխում

իրենց երանգը և «կարգ» բառը հնչվում էր գ-ով և ոչ այսօրվան պես «կարք»ի և «մարդ» բառը իրոք **դ** ուներ և ոչ թե **թ** –մարթ: Բայց երբ սովորություն դարձավ՝ նոր լեզվի արտասանության կարգով՝ այդ **ը**- երը չարտաբերել, այն օրվանից բառավերջի բաղաձայնները սկսեցին թավանալ և հնչողի բերանում **գ**-ն դարձավ **ք**, իսկ **դ**-ն՝ **թ**: Այդ **ը**- երը չէին գրում հին ժամանակ, իսկ նորերը գրել չէին կարող, որովհետև **ը**- ն նոր լեզվում որոշիչ հոդ է և եթե գրեին «կարգը» կհասկանային մի որոշ, հայտնի «կարգ»: Եվ հետո՝ նա կարծում է, որ մեր **ը** գիրը հնարած են հետագային: Իբր ապացույց իր տեսության նա բերում է «մոգ» բառը, որ Ավետարանի թարգմանության ժամանակ մեր լեզվից անցած է վրացերենին, սակայն «մոգու» ձևով:

Վրացիները չունին ոչ **ը** գիրը, ոչ հնչյունը. լսելով հայերեն «մոգը», վրացին այդ **ը**- ն արտահայտած է այն գրով, որի սղումն է այդ **ը**- ը և գրած է «մոգուի», իր գոյականի սովորական վերջավորությունը (**ի**) դնելով մեր բառի վրա. եթե հին վրացին հին հայի բերանից «մոգ» լսած լիներ, այն ժամանակ պետք է այդ բառի ուղղականը գրեր «մոգի», բայց նա գրում է «մոգուի», հետևապես նա լսած է ուրիշ բան, քան պարզապես «մոգ»:

Դժվար չէ հերքել այս տեսությունը: Նախ ինչու՞ ենթադրել, որ վրացին լսած է «մոգը» և գրած է «մոգուի». ինչու՞ չէր կարող պարզապես լսած լինել «մոգու»:

Մոտ 900 բառ մեր լեզվից անցած է վրացերենին: Սրանց մասին հետազոտություն ունի վաստակավոր լեզվաբան Զ. Աճառյանը: Այդ բառերի շարքին են պատկանում. «կալ, շյուղ, ծեփ» և ուրիշ բառեր, որ վրացին տառադարձած է իբր «կալօ, շուլօ, ծեբօ»: Այդ բառերն անշուշտ՝ Ն. Մառին լսելով՝ պիտի արտասանվեին հայերեն «կալը, շյուղը, ծեփը», բայց վրացին չի գրում «կալուի, շուլուի, ծեբուի», ինչպես գրում է «մոգուի», այլ «կալօ, շուլօ, ծեբօ»: Այս հիման վրա կարելի է ասել, որ նա լսած է «մոգու» և ոչ թե «մոգը»: Ուրիշ խոսքով այն, ինչ որ հիմա խուսափուկ կամ սուղ **ը**- է, մի ժամանակ նշմարելի ձայնավոր էր մինչև իսկ օտար ականջի համար: Ոչ մի հիմք կա ենթադրելու, թե մեր **ը**- ն հնարված է Ս. Մեսրոպից հետո. ի՞նչպես էին ուրեմն գրում «ընդ նմա», «ըստ օրինաց», «ընկալ» և այլն...

Բաղաձայների փոփոխությունը կապ ունի այդ **ը**-երի հետ, որ իբր չեն հնչում մեր նոր լեզվի մեջ: Մենք տեսանք, որ այսօր իսկ այդ հնչյունը լսվում է բառավերջի բաղաձայնից հետո իբր սուղ կամ խուսափուկ **ը**: Դձայ մարդու բերանը չի կորցրել **դ**, **գ** և նման գրերի ճիշտ արտասանու-

թյան ունակությունը՝ Ն. Մառի մատնանշած դիրքերում: Նախ՝ կան բարբառներ, ուր այդ ձայների արտաբերումը ոչ մեկ խաթարում ունի, չնայած որ դարեր սահած են Ս. Մեսրոպից մինչև այսօր. այդպես է Գողթան բարբառը: Դետո նույն այդ գեղջուկի բերանը, որ «մարդը» «մարթ» է արտասանում, շատ որոշակի արտասանում է «մարդ», երբ այս բառը նշանակում է մեծահոգի, առատածեռն, ազնիվ. «ես քեզ ասում եմ՝ էն մարթը *Մամարդ* չի. նա որ կա՝ *մարդ* մարթ ա, *մարդ*»: Նա շատ որոշակի արտասանում է «թագ», թեև արտաբերում «թաքավոր». ասում է «մարգ», բայց Մարքար:

Մառի տեսության մեջ ամենից արժեքավորը բառավերջի ձայնավորի ըթացումն է (**ը** դառնալը), որ արժանի է հատուկ ուշադրության: Մենք տեսանք հայերենից փոխ առած բառերի կերպարանքը վրացերենի մեջ: Կարծում են նրանք այն ձևով են երևում, ինչ ձևով հնչում էին հին ժամանակ: Այդ փոխառությանց մի մասն անշուշտ շատ հին են, քան Ս. Գրքի թարգմանությունը, գոնե այն բառերը, որ տարբեր վերջավորություն ունին, քան **ի**:

Ճիշտ է, վրացիներն իրանք շատ բառեր ունին, որ վերջանում են **օ** (**ո**), բայց օտար բառերը սովորաբար ազգայնացնում են՝ վերջը կցելով մի **ի**:

Արդ՝ մեր բառերը վրացական փոխառության մեջ հնչում են իբր «մոգու, չուլօ, ծեբօ, քուրիմա (քուրմ), կալօ, ծալիկա (ծաղիկ)², ավազակի, ճշմարիտի և այլն: Ի՞նչ են այս ձևերը: Սրանք մեր բառերի սեռականներն են և գալիս են հաստատելու մեր տեսությունը սեռական հոլովի կազմության մասին, որ երկարորեն բացատրեցի նախորդ հոդվածիս մեջ: Մեր տեսությունն այն էր, թե *սեռական հոլովը ուղղական է՝ շեշտը փոխած*: Անկասկած վերի բառերը հին ժամանակ արտասանված են «մո՛գու, շյո՛ւղոյ, ծե՛փոյ, քու՛րիմա, կա՛լոյ, ծա՛ղիկայ»: Այս արտասանության հետևանքով նրանք պիտի սղեին իրենց վերջին ձայնավորները՝ դարձնելով հետագային պարզ **ը**-երը: Վրացիների փոխառության ժամանակ նրանք հնչած են այնպես, ինչպես մեր *ու՛մ* բարբառներում արտաբերում ենք՝ «գա՛րի, մարդու» և այլն, ուր թեև շեշտը վերջընթեր վանկի վրա է, բայց հետագա ձայնավորը դեռ պահում է իր բնույթը, թեև անշեշտ է:

Վերի հնագույն ձևերը դասական շրջանում արդեն դարձած էին «մո՛գ, շյո՛ւղ, ծե՛փ, քու՛րմ, կա՛լ (ցորեն կալսելու կալն է սա), ծաղիկ. բայց սեռականի մեջ վերստանում էին իրենց նախավոր կերպարանքը,

² Են Գ. Գ. Տաշյան, ուսումն դասական Գայերեն լեզվի, էջ 490:

երբ շեշտի հարվածից արթնանում էին թմրած ծայնավորները՝ և դառնում էին. մոզու՛, ծեփո՛, քրմա՛ց, կալո՛, ծաղկա՛ց, աւազակի՛, ճշմարտի՛:

Կարելի է ուրեմն ասել, որ մեր բառերը հնագույն շրջանում ավելի երկար էին և վերջանում էին ծայնավորով: Այդ շարքի մեջ էին գուցե նաև ծածուկ վանկով վերջացող բառերը: Այդ ծայնավորների խուլ արծագանքն է, որ այսօր հնչում է իբր՝ սուղ կամ խուսափուկ **ը**: Դրանք են, որ շեշտի հարվածն առնելով՝ արթնանում էին և կազմում մեր սեռական հոլովները: «Չոլովիչ ծայնաւոր» կոչվածն, այսպիսով, մի եկամուտ տարր չէ, այլ բառերի վերջին ծայնավորն է, նրա անբաժան մասը, որ սակայն թմրած է և թվում է չբացած: Նա մի բացարձակ զերո չէր, այլ մի նվաղած մեծություն: Ջսպված ուժեր էին, որ շեշտի սուրով ազատագրված՝ ելնում էին ոտքի՝ իրենց նախավոր կերպարանքով, իբրև լիակատար ձևեր նրանք ապրում էին խոսողի ենթագիտակցության մեջ. նույն ենթագիտակցության մեջ ապրում էին բառերի հապաված ձևերը: Մտքի պահանջին համեմատ «գիտակցության շենքից» անցնում էր մեկ կամ մյուս ձևը իրան հատուկ շեշտով և այդ շեշտի կատարած ձևափոխություններով:

Երկար ժամանակ ապրելով խոսողների ենթագիտակցության մեջ և լեզվական գիտակցության մթազնումի հետևանքով՝ նրանց կերպարանքները շփոթվում են: Երբ ածանցները կորցնում են իրենց իմաստաբանական արժեքը և խոսողները գոհանում են մի կամ մի երկու ձևով՝ արտահայտելու համար իրենց գաղափարը, որի համար երբեմն բազմազան ձևեր գոյություն ունեին՝ այն ժամանակ հաճախակի գործածվող ձևերը դառնում են կաղապար, որոնց կերպարանքով կազմվում են մնացած բազմազան ձևերը և սրանով ստեղծվում են մանական կազմություններ:

Այստեղ մեծ դեր է խաղում **ուժի խնայողության ամենազոր օրենքը**: Քերականական ձևերի պարզությունը հոգեբանորեն նվազ ճիգ է պահանջում, քան նրանց բազմազան բարդությունը: Միևնույն առնչության գաղափարն արտահայտելու համար անշուշտ ավելի դյուրին է հիշել ու արտաբերել «մարդի, սերմի, գանձի, աստղի, Մեսրոպի», քան «մարդոյ, սերման, գանձու, աստեղ, Մեսրոպայ»: Գրաբարի բազմազան սեռականները, լեզվական գիտակցության³ մթազնումի հետևանքով, հետևած են «բան, բանի» հոլովական կարգին և «գանձու»-ն դարձած է

³ Չետագային մենք շատ առիթ կունենանք գործածելու «լեզվական գիտակցություն» բացատրությունը: Դա գիտակցության այն տեսակն է, որով մենք քերականորեն ուղիղ ենք խոսում ու հետևապես՝ գրում: Մեզ թվում է, որ խոսելու ժամանակ (ինչպես նաև գրելու), մեր միտքը իմաստին է հետամուտ և ձևը տեղ չի բռնում մեր գիտակցության մեջ. բայց բավական է, որ մեկն ասի. «ես գնաց» կամ մենք գրենք «նա ուզում ես», որ իսկույն նկատենք

«գանձի», որով ձեռք է բերված ուժի մեծ խնայողություն: Սա մի երևույթ է, որ իշխում է մարդկային լեզվի հոլովությին:

Չագարավոր օրինակներ վխտում են բոլոր լեզուների մեջ:

Վրացիների փոխ առած մեր բառերի հնագույն կերպարանքը դիտելով, մենք կարող ենք մի գաղափար կազմել նրանց վաղեմի շեշտադրության մասին: Օրինակ մեր **ծեփ** բառը: Պարզ է կարծում են, որ այդ բառը հին ժամանակ եղած է * ծեփոյ. նրա վերջին վանկը գուցե արտաբերված է ոչ շատ որոշակի, այլ մեր այսօրվա **ը**-ին մոտ երանգով, բայց այդ **ը**-ն պետք է որ բավական մոտ լիներ **ո**-ին, եթե վրացու ականջը ըմբռնած է իբր **օ**:

Պարզ է, կարծում են, որ այդ բառի շեշտն եղած է առաջին վանկի վրա, այսինքն նա ունեցած է ճիշտ այն շեշտադրությունը, որ այսօր ունին երկվանկ բառերը **ուժ** բարբառներուն, ինչպես՝ «կացին, կարագ, գութան» և որի տարազն է - - : Այս պատճառով է, որ բառի վերջին ծայնավորը դալկացած է և հետագային դարձած է խուսափուկ **ը**՝ բառին տալով **ծեփ** ձևը:

Տարբեր շեշտադրություն ունեցած են «քուրմ» և «ծաղիկ» բառերը: Նրանց նախավոր ձևերն եղած են * քուրիմայ և *ծաղիկայ: Պետք է կարծել, որ նրանց շեշտն եղած է առաջին վանկի վրա, ինչպես «աւասիկ» բառի շեշտն է և որի տարազն է - - - :

Այս շեշտադրության հետևանքով նրանք պիտի սղեին իրենց վերջին ծայնավորները և դառնային* քուրմ, ծաղիկ, պահելով անշուշտ մի բավական զգալի վերջավոր **ը**:

Այնուհետև նրանցից առաջինը ենթարկված է կրկնակի սղման, սղելով իր վերջին վանկի ծայնավորը և դառնալով «քուրմ», որ հավանորեն հնչում էր իբր «քուրըմը»: Սրանց հոգնակի սեռականը ցույց է տալիս, որ մեր ենթադրությունը ճիշտ է. «*ծաղիկաց» ձևից կարող էր ծագել «ծաղկաց» սեռականը. որի տարազն է - - - և «քուրիմաց» ձևից կարող էր առաջանալ «քրմաց» ձևը, որ նույն տարազն ունի: Սրանց եզակի սե-

թե սխալ ձևով է խոսքը կազմված: Լեզվական գիտակցությունն է, որ նկատում է վրիպումը և ամմիջապես շտկում է ձևը: Բայց լեզուն հասկացնելու մի գործիք է. եթե մեր գիտակցությունն սկսում է տարբերություն չդնել «ի քաղաքէն» և «քաղաքէն» ձևերի միջև. եթե լսողը երկուսն էլ հասկանում է բացառական իմաստով, այն ժամանակ ի նախդիրի արժեքն ընկնում է և գործածությունից դուրս մնում: Սրանով գրաբարի բացառականը «պարզվում» է: Այս ճամփով գնում է և «ի գործոյ» բացառականը. ձգում է ի-ն և առնում է են ու դառնում «գործէն»: Լեզվական գիտակցությունը չի բողոքում դրա դեմ և լեզուն գնալով փոփոխվում է

ռականները եղած են * քրմայ, *ծաղիկայ: Իրենց սեռականների բազմազանությունը ապացույց է, որ նրանք բավական դեզերած են հին բարբառների մեջ, հարելով հոլովական այս ու այն կարգին: «Քուրմ» բառի հոգնակի ուղղականը է «քուրմունք», իսկ «ծաղիկ» բառինը՝ «ծաղկունք»: Այս ձևերը ենթադրում են ***քուրմն** և ***ծաղիկն** եզակիները և **քրմանց** և ծաղկանց հոգնակի սեռականները:

Եվ իրոք կան այդ սեռական ձևերը: Դեռ դասական շրջանում նրանց եզակի ուղղականները մաշված էին արդեն. փոխանակ ***քուրմն** և **ծաղիկն** ձևերի՝ մենք ունինք **քուրմ** ու **ծաղիկ**. նրանք կորցրած էին իրենց հնագույն **Մ**-երը ճիշտ այնպես, ինչպես դասական շրջանի «հարսն» և «մատն» բառերը կորցրած են իրենց **Մ**-երը հետագային և դարձած են «հարս, մատ»: ***Քուրմն** և ***Ծաղիկն** ձևերը ենթադրում են ***քրման** և **ծաղկան** սեռականները, որ սակայն միայն ծաղիկ բառն է պահած. մյուսն ուրեմն կորած է դասական շրջանից առաջ: Չեն մնացած և *քրմայ և *ծաղկայ սեռականները, որ ենթադրելի են «քրմաց և ծաղկաց» հոգնակի սեռականների հիման վրա: Եզակի սեռականները հետևած են «բան, բանի» հոլովական կարգին և դարձած են «ծաղկի, քրմի». բայց «ծաղիկ» բառը զնացած է և ուրիշ շավղով, որով ձևացած են «ծաղկոյ, ծաղկոց» սեռականները: Հիմա դժվար է որոշել, թե այս ձևերից ո՞րը որ գավառից է մտած գրաբար լեզվի մեջ:

Դժվար է և մի կտրուկ կարծիք կազմել այս բազմազան ձևերի անցումների մասին: Ի՞նչ են սրանք. տարբեր հոլովական կարգերի մոտայնե՞ր են, թե նույն հոլովական կարգի հաջորդական փոփոխություններ: Մի նախավոր ձևի շառավիղներ են հորիզոնական ուղղությամբ, թե՞ մի ձևի հոլովույթ են ձգված դեպի մեզ: Մանր քննություն է պետք այս խնդիրը լուծելու համար: Գրաբար լեզուն մի հին բարբառ է գրի առնված: Նրա կողքին մեր երկրի հեռավոր ու մերձավոր գավառների մեջ խոսվում էին տարբեր բարբառներ: Ո՞վ կարող է պնդել, թե այն բարբառների մեջ, որ գրականություն չունեցան, տարբեր հոլովական կարգ չկար, քան գրաբարի մեջ: Այսինքն ո՞վ կարող է պնդել, որ «մարդոյ» ձևից է առաջ եկած հետագա «մարդի» ձևը և ոչ թե երկուսն ևս ժամանակակից են, միայն թե մեկը գրի առնվեց ու դարձավ «գրաբար», իսկ մյուսը գավառական անշքության մեջ ապրեց մինչև մեր օրերը: Ահավասիկ Արցախի բարբառը. գրաբարն ասում է. «հացիւ, գործով, ժամու, տամբ». դարաբաղջին անխտիր ասում է. «հացաւ, գործաւ, ժամաւ, տնաւ»: Այս գործիական ձևերից ո՞ր մեկն է նախնականը: Գրաբարն ունի Արցախի գործիականը՝ «կարգաւ, Մեսրոպաւ»: Ուրեմն Արցախի գոր-

ծիականը՝ իբր ձև՝ նոր չէ. նա ավելի հին է, քան գիրն ու գրականությունը: Բայց ինչու՞ մի տեղ գործիական ձևերն այնքան բազմազան են, իսկ մի ուրիշ տեղ այնքան միակերպ. արդյոք Ղարաբաղի բարբառն է աղքատացած մմանած կազմությամբ, թե Ոստանիկ բարբառն էր ճոխացած տարբեր բարբառական գործիականներով. ձևեր, որ շփոթ ստեղծելով Ոստանիկ բարբառին հատուկ հոլովական կարգի մեջ՝ իրենց բնավայր գավառներում իշխում էին միահեծան և տիրաբար ինչպես **աւ** ածանցը Արցախում:

Սրանք խնդիրներ են, որոնց պարզաբանության համար անհրաժեշտ է նախապես մեր շեշտադրությունն ուսումնասիրել և հնչյունների փոխանցումները բանաձևել:

Մենք մի շարք բառեր ունինք, որ երկու կերպ են արտասանվում. այսպես՝ «մանըր, ծանըր, բարձըր» և այլն, որ արտաբերվում են նաև իբր «մանրը, ծանրը, բարձրը»: Այս արտասանությունը կախում չունի այդ բառերի **ըր** ձևն ունեցող ծածուկ վանկերից: Դարաբաղջին ասում է նաև «եզը, հարսնը, ոննը (ոտնը), մաննը (մատնը)» և այլն: Ուրեմն սա վերջին ծածուկ վանկերն արտասանելու մի կարգ է:

Այս կարգի բառերն ուրիշ բարբառների մեջ ավելի որոշ են հնչում իրենց խուսափուկ **ը**-երը, թեև կորցրած են վերջին **Մ**-երը:

Օրինակ, ասում են (Երևան, Թիֆլիս և այլուր). «Ինձ համար մի գառը բեր», բայց չեն ասում. «մի ծառը կտրի», այլ՝ «մի ծառ կտրի»: Ասում են՝ «Մի մատը մեղրը դառանք աշխարհքում», այսինքն՝ խոսք ու զրույցի մյուս դարձանք, ծաղր ու ծանակ եղանք. բայց չեն ասում. «մի հատը գուլպա գործեց», այլ՝ «մի հատ գուլպա գործեց»:

Այս հատուկ արտասանության պատճառն այն է, որ ժողովրդի գիտակցության մեջ դեռ վերջապես իր հոգին չի ավանդել այդ բառերի հին «գառն, մատն» ձևը. թեև վերջին կորցրած՝ բայց նրանք դեռ մնում են իբր «գառը, մատը». իսկ «ծառ» և «հատ» բառերը ծածուկ վանկ չեն ունեցած, ուստի նրանք արտասանվում են սովորական խուսափուկ **ը**-երով: Այդպես ասում են նաև՝ «մի բեռը գարի, մի լավ սերմը, մի սիրուն հարսը»: Տեղ-տեղ այս վերջին հետքն անգամ կորչելու վրա է և արտաբերում են «մի բեռ գինի, մի սիրուն հարս, մի մատ մեղր, մի լավ գառ» և այլն:

Արտասանության այս կարգը կարելի է համարել ձայնավորի պարզ տեղափոխություն, ինչպես կա բաղաձայների տեղափոխություն. «ականջ, անգաճ, անջակ»: Այս հաշվով՝ «մանըր»- «մանրը»: Բայց նկա-

տի ունենալով մեր ասածն այն մասին, թե մեր բառերը հին ժամանակ ծայնավորով էին վերջանում, ինչպես վրաց բառերն են այսօր, կարելի է այս երևույթին տարբեր բացատրություն տալ:

Գրաբարում մենք ունինք վերը բերածս բառերի սեռականները «մեղու, բարձու, փոքու, մանու» ձևով: Ուղղակամի մեջ շեշտն առաջին վանկի վրա լինելով՝ այս բառերը բնական կարգով պիտի սղեին իրենց վերջին վանկի ծայնավորները և դառնային «մեղր, բարձր, փոքր, մանր» և այլն, իսկ սեռակամի մեջ շեշտը վերջին վանկին զարկելով՝ պիտի տար «մեղուր, ծանուր, մանուր»: **Ր** հնչյունի կորուստը տարբեր երևույթ է և կապ չունի մեր քննած խնդրի հետ:

Բայց մենք ունինք «մեղրը, ծանրը, մանրը, թանձրը» ձևով արտասանություն: Մեզ թվում է, որ այդ ձևերը այն խավն են, որ ընկած են «մեղր, մանր, ծանր» և սրանց նման ձևերի տակ: Դրանք պիտի լինեին իբր * մեղուրու, * մանուրու, * ծանուրու և այլն: Այս հնագույն ձևից կարող էին առաջ գալ թե՛ մեկ և թե՛ մյուս արտասանության կերպը: Նրանց շեշտադրության տարազը պետք է լիներ մի տեղ — V- և մյուս տեղ՝ -V. առաջինը պիտի սղեր միջինը **ը**-ը, երկրորդը՝ վերջինը **ը**-ը և պիտի մեկը դառնար մեղ(ը)ր ու մյուսը մեղուր(ը): Այս ձևի տակ իբր երկվանկ բառեր, որ շեշտված են — V- տարազով, պիտի սղեին իրենց երկերդ վանկերը և մեկը դառնար մեղրը, մյուսը՝ մեղըր-մեղր: Եվ սա հավանական է, նկատի ունենալով նրանց հոգնակի ուղղական ձևերը. «մանունք, ծանունք, բարձունք» և այլն: Այս ձևերը ենթադրում են «*մանրն, ծանրն» և այլն ավելի հին ձևեր, որ ամփոփում են սրանցից ավելի հին *մանուրուն, *ծանուրուն ձևերի: Կորցնելով **Մ**, սրանք պիտի դառնային *մանուրու, *ծանուրու, այսինքն ճիշտ այն ձևերը, որ մենք ենթադրեցինք. հետագա երկշավիդ սղման հետևանքով՝ մի գավառի մեջ պիտի դառնային «մանըր», մի ուրիշ գավառի մեջ՝ «մանըր», «*ծանրը և ծանըր»: Վերջին **Մ**-երի կորուստը հին երևույթ է. նա մի օրենք է, որ ազդած է նաև դասական շրջանից առաջ. դրա ապացույցները տեսանք **քար, ծաղիկ** և նման բառերը քննելու ժամանակ, որոնք **քարամբ, ծաղկամբ** գործիական և **քարանց, ծաղկանց** հոգնակի սեռական կարող էին ունենալ այն պայմանով միայն որ եզակի ուղղականի մեջ հնչեին իբր **քարն, ծաղիկն**:

Լեզվաքննի մարդը միշտ պետք է հիշե Լիթ թագավորի այն խոսքը, որ ասաց իր կրտսեր աղջկան, երբ սա, խուսափելով շոյել իր հոր հիվանդոտ ինքնասիրությունը՝ չկամեցավ փքուն խոսքերով իր սերը հայտնել, այլ գոհացավ ճշմարիտ ու անկեղծ, բայց անշուք խոսքերով: -Ուրիշ ոչինչ. հարցրեց հայրը. -Ոչինչ, պատասխանեց ազնիվ աղջիկը. - **Ոչնչից**

ոչինչ դուրս կգա, ասաց զայրացած հայրը: Ահա խոսքը. այո՛, ոչնչից ոչինչ դուրս կգա: Իսկ եթե մենք նկատում ենք որևէ «ինչ», թեկուզ մի աննշան, հազիվ նշմարելի երևույթ լեզվի քննության ժամանակ, պետք է հետապնդենք տեսնելու, թե ո՞րն է այն նախավոր «ինչը», որից կարող էր առաջ գալ մեր քննած կամ դիտած «ինչը», որովհետև սա «ինչ» լինելով՝ չէր կարող «ոչնչից» դուրս գալ: Եթե մի տեղ արտասանում են «ծանըր», մի ուրիշ տեղ՝ «ծանրը», սա չի կարող առանց պատճառի լինել: Եթե վերջին բաղաձայներից հետո լսվում են խուսափուկ **ը**-եր- սա նույնպես չէր կարող ոչնչից ծագել: Ասում ենք. **թերեմ** և վերջին **մ**-ն արտասանում ենք խուսափուկ **ը** -ով: Եվ շատ հասկանալի է. այդ ձևը կշռում է սանսկրիտի Charami ձևին, որ ինչպես տեսնում եք վերջանում է *i*. այդ *h*-ն է, որ սղած է և խուսափուկ **ը** դարձած⁴: Մենք ևս ժամանակին արտաբերած ենք բերեմի, որ հետո դարձած է բերեմ(ը): Կամ ասում ենք. **տամբ** և արտաբերում ենք **տամբ(ը)**:

Այդպես էլ պետք է լիներ. սանսկրիտի գործիականը վերջանում է *-bhih*, որի վերջին *h*-ն մի խուլ շունչ է⁵: Մենք ևս մի ժամանակ ասած ենք տամբի, այս վերջին *ih*-ն է, որ դարձած է խուսափուկ **ը**: Պահլավերենից մենք ժամանակին փոխ ենք առած **ախտ** և **խրատ** բառերը, որ ենթադրում են, թե այնտեղ եղած են *axti* և *xratu* ձևերով⁶: Շեշտն առաջին վանկի վրա լինելով՝ նրանց վերջին *i* ևս ծայնավորները սղած ու դարձած են խուսափուկ **ը**-եր, բառերին տալով ախտ և խրատ կերպարանքը: Բայց սեռական հոլովի շեշտը զարկվելով խուսափուկ **ը**-երին՝ արթնացնում է նրանց իսկական կերպարանքով և մենք ստանում ենք ախտի՛ և խրատո՛ւ սեռական ձևերը գրաբարի մեջ: Յնագույն գործիականի մի թանկագին մնացորդ է մեր արամբի բառը, որ նշանակում է մարդ ունեցող կին, ոչ այրի: Այդ բառն այլ բան չէ, քան մեր «այր» բառի հնագույն գործիականը, որ հետո ստանալով ուրույն նշանակություն՝ պահած է իր հին կերպարանքը, մինչդեռ **արամբի** բառը՝ իր սովորական իմաստով իբր «մարդով»՝ սղած է իր վերջին *h*-ն և դասական լեզվի մեջ երևում է իբր **արամբ**, ինչպես ենթադրական ***տամբի** ձևը դարձած է **տամբ**: «Արամբի» նշանակում է «մարդով». այսինքն՝ մարդով կին և ոչ անմարդ:

Ճիշտ նույն հիմքերով մեր «մանրը» և «մանըր» կրկին արտասանու-

⁴ St'u A. Mollot. *Esquisse, d'une grammaire compare de l'armenien classique*, t² 88:

⁵ St'u A. Mollot. *Esquisse*, t² 47. նաև նույն Մեյնի *Introduction a l'etude comparative des langues indo-europeennes*, t² XVII, h հնչման համար:

⁶ St'u A. Mollot. *Esquisse*, t² 5:

թյան մեջ երևում են միևնույն հնագույն ձևի տարբեր ամփոփումները, որ տարբեր բարբառական հոլովույթների արդյունք են:

Այս դիտողություններից մենք կարող ենք մի քանի մեթոդական ցուցումներ բանաձևել մեր հետագա հետազոտության համար:

1. Բառերի նախավոր կերպարանքը գտնելու համար պետք է առնել նրանց եզակի գործիականը և հոգնակի սեռականը առանց հոլովակերտ ծայրերի: Եզակի սեռականները հաճախ նմանական կազմություններ են. համեմայն դեպս ավելի հաճախ կարող են մուլորանքի մատնել մեր խուզարկու միտքը: Այսպես՝ «գառն» բառի նախավոր ձևը գտնելու համար պետք է առնել ոչ թե «գառին» եզակի սեռականը, այլ «գառամբ» գործիականը, որ է **գառան-ք** և հոգնակի սեռականը, որ է **գառան-ց**, հապավելով գործիականի և սեռականի հոլովակերտ **ք**-ն ու **ց**-ն:

2. Երկու բաղաձայների միջև՝ մեր համոզումով՝ միշտ սղած կամ կորած է մի նախավոր ձայնավոր, որ պետք է վերականգնել՝ հենվելով նույն բառի օտար համարժեքների կամ բարբառական տարբերակների վրա. այսպես «քուրմ», ուր **քմ** բաղաձայների միջև երբեմն եղած է մի ձայնավոր **ի**, ինչպես երևում է «քուրիմա» վրացական ձևից. այս բառը ասորական փոխառություն է համարում Յ. Յյուրշման և նրանց *kumra* բառն է⁷: Բաղաձայները տեղափոխված է համարում հայի բերանում: Սա արգելք չէ, որ ասորական բառի նախավոր ձևն ևս *kumra* եղած լինի, որից՝ մեր հին «քուրմիա» ձևը: Եթե չկան պահված հին ձևեր մեր բարբառներում կամ քույր և օտար լեզուների մեջ՝ այն ժամանակ չքացած կամ սղած ձայնավորները պետք է **կռահել**, հիմնվելով ձայների սղման և կորուստի ընդհանուր օրենքների և մեր լեզվի մասնավոր կանոնների վրա: «Ընկալ» բառի **ք**-ն օրինակ մեր լեզվի կանոններով կարող է **ա**, **ի**, կամ **ու** ձայնավորի սղում լինել և ուրեմն մի նախավոր *անկալ, *ինկալ կամ *ունկալ ձևից առաջ գալ, ինչպես «ընկնելը- անկանելի ամփոփումն է. ընծուղտը- ինծուղտի և բնոյթը-բունոյթ է»:

3. Միևնույն նախավոր ձևը տարբեր շեշտադրության հետևանքով կարող է տարբեր ձևերի ծնունդ տալ: Այսպես՝ ***կոտ** արմատը, որից կազմված է «կոտոր» բունը ճիշտ այնպես, ինչպես «բեկ» արմատից կազմված է «բեկոր» բառը: «Կոտոր» ձևը առանձին ունինք և նշանակում է՝ կտոր, պատառ: Արդ այս երկվանկի շեշտվելով իբր՝ - V կոտոր, պիտի տար կոտոր ձևը, որ կա մեր լեզվում և «ընկնել» բայի հետ կազ-

⁷ Յ. Յյուրշման, *Սեմական փոխառյալ բառերը Հին Հայերենի մեջ*, էջ 48:

մում է «կոտոր ընկնել» ասույթը, որ նշանակում է սնանկանալ: Շեշտվելով իբր՝ V - կոտոր, պիտի դառնար «կտոր», որ շատ սովորական բառ է մեր լեզվում: «Կոտոր» բունից է կազմված կոտորել բայը, որ հայտնի է ամենքիս: Շեշտվելով իբր՝ - V - նա դարձած է կոտորել «կոտրել»: իսկ արտաբերվելով իբր՝ V - - եղած է * կտորել՝ «կտրել», որ բարբառական է: Իր անցյալ դերբայն է «կոտորած», որ բարբառի մեջ դառնում է «կտորած», ինչպես նաև «կոտրած» կոտրել բայից: Հատանել բայի մերկ արմատով, որ է **ատ**, «կոտոր» բունից կազմվում է «կոտորոտ» մի ձև, որ առանձին չենք գործածում: Սրանից կազմված բայն է «կոտորատել», որ հաճախական իմաստ ունի. նշանակում է մի քանի կտոր անել մի քանի անգամ կտրելով: Շեշտվելով իբր՝ - V - - դառնում է կոտորատել՝ կոտրատել. իբր՝ - VV - լինում է կոտորըտել՝ կոտրըտել. իբր՝ V V V - դառնում է կտրըրըտել՝ կտրըտել. իբր՝ VV - կազմում է կտրըրատել՝ կտրատել:

Այս բոլոր ձևերը կան մեր լեզվի մեջ և տարբեր շեշտադրության հետևանքով՝ ստացած են տարբեր ձև և իմաստ: «Կտոր» ձևը իբր բարբառականը «կտոր» ձևի (Թիֆլիս) և «**աղեկտուր**» բառի մեջ, որի հին կերպարանքն է «աղեկտոր», - մի տարբերակն է «կտոր» ձևի և կազմուած՝ կարծում են այնպես, ինչպես հնամենի և ենթադրական* մանուր ձևը, որից «մանր» կամ ինչպես «փետուր, թափուր» և այլն: Այսպիսով պետք չէ խաբվել ձևերի բազմազանությունից: Շատ հաճախ նրանք միևնույն նախավոր ձևի զավակներն են, որ շեշտադրական տարբեր կրթության հետևանքով փոխած են իրենց կերպարանքը, բայց պահած են ժառանգական բնավորությունը, այսինքն նույնիմաստ կամ մերձիմաստ են իրենց հիմնական ձևին:

Հայրենիք, 1929, № 8, էջ 87-86

Տեսությունն ձույլ բաղաձայների*

Ուշադիր քննելով մեր հին, միջնադարյան և նոր գրական լեզուն, ինչպես նաև մեր բարբառները, ես արած եմ մի քանի դիտողություններ, որ ընդհանրացնելով՝ հորինած եմ տեսական ուրվագծեր: Այսպես՝ տեսնելով, թե մեր հին գրականության մեջ մեր այսօրվա օ ձայնը արտահայտած են երկու գրով - աւ՝ ես ենթադրած եմ, որ դասական շրջանին մեր հայրերը չեն ունեցած օ հնչյունը, հետևապես այդ հնչյունը ձևացած է եղարից հետո և որոշապես պարտադրած է իրան ժԲ. դարում, երբ մեզանում մտած է օ գիրը: Այսպիսով այսօրվա օ-ն, որ մի պարզ ձայն է՝ տասնհինգ դար առաջ եղած է երկբարբառ՝ աւ: Այստեղից պարզ է, որ 1. օ-ն հոլովույթի արդյունք է. և ուրեմն 2. որ բարդ երկբարբառը կարող է դառնալ պարզ ձայնավոր: Այնուհետև ես հարց եմ տված. արդյոք միայն օ ձայնն է, որ արդյունք է հոլովույթի: Իր օրինակը բավական է, որ ասենք, թե ձայները հոլովույթի ենթակա են: Այս ընդհանրացումը պարտադրում է սակայն հետազոտել մնացած ձայնավորները, տեսնելու համար թե՛ չկա՞ն ուրիշները, որ նույնպես ժամանակի ընթացքին ծագած լինեն, և որոշել նոր ձայների ծագման պայմանները: Այս աշխատանքը կատարած եմ տարիներ առաջ և արդյունքը՝ իբր համառոտ ուրվագիծ՝ հրատարակած եմ «Հանդես Ամսօրյա» ուսումնաթերթի մեջ¹: Այդ ուրվագծի մեջ ես մատնանշած եմ հիմնական երևույթները, առանց մանրամասնության իջնելու և տված եմ հոլովույթի գլխավոր տարազները, առանց շեղումներին նայելու: Իմ տեսությունը հիմնավորած եմ մի քանի ցայտուն օրինակներով, առանց սպառելու բավական նյութը:

Իմ տեսությունը համաձայն չէ հնդեվրոպական լեզվագիտության: Նրա համար օ և ե ձայներն, օրինակ՝ հիմնական են և կազմում են համեմատությանց հիմք ու եզր, մինչդեռ ես կարծում եմ նրանք հետևանք են պարզ ձայների ձուլման: Բայց հնդեվրոպական լեզվագիտության

* Ես հույս չունիմ, որ կարենամ հորինել այն գիրքը մեր լեզվի մասին, որ մտադիր էի: Տարիներս անցած են. մտավորական երկարատև ճիգը հոգնություն է բերած և հին ու օտար լեզուների անազան ծանոթություն կասեցնում է վստահությունս: Բայց այդ շենքի կառուցման համար տարիների ընթացքին ես տաշած եմ քարեր և հավաքած եմ ատաղծ, որոնց լեզուն ե՛ս միայն կարող եմ հասկանալ: Դրանք կարող են պիտանի լինել հետագա կառուցողներին, ուստի որոշեցի գրի առնել մտածումներս և լույս ընծայել հատվածաբար: Պիտի խնդրեմ նրանց, որ առիթ կունենան օգտագործելու այս քարերն ու ատաղծը՝ չմոռանալ հիշատակել հավաքողին:

¹ Տե՛ս Հ. ա., 1930 թ., Սղած և չբացած ձայնավորներ, էջ 182-195. նույն, 1930 թ. Հնչաբանական դիտողություններ՝ 273-291. և շարունակությունը Հ. ա., 1931, էջ 352-359, 518-527, Հ. ա., 1932, էջ 298-310, 433-446:

մշակած տեսողությունը մարդկային իմացության վերջին խոսքը չէ և ընդհանրապես գիտության մեջ չկա և չի կարող լինել հարատև վերջին, բայց մանավաղ վերջնական խոսք, քանի դեռ մարդկությունն աճում է անընդհատ և նոր սերունդները իրերի բերումով նոր դիրքերի վրա կանգնելով՝ նոր տեսակետից են նայում կյանքին ու աշխարհին: Մեր պարտքն է անմիջաբար և հարատև շփում ունենալ կենսական փաստերի հետ, որոնց շարքին են պատկանում լեզվական հին ու նոր երևույթները, և մեր դիտողություններն ու կռահումները արձանագրել: Հավանականն այդ կռահումներից կհամարվի «վերջին խոսք», մինչև երևան նոր և ավելի հավանական «վերջին խոսքեր»: Աննախապաշար իմացության համար փաստերի ստուգությունը և դատումների ճշտությունը բավական են ինքնին: Գիտության համար կուռքեր գոյություն չունեն և պետք չէ, որ ունենան: Ինչ որ համոզիչ է՝ ընդունելի է: Ճշմարտության չափանիշը իր համոզական կարողության մեջ է: Ինձ թվում է, որ տեսություններս համոզական են: Նրանք կարող են հաստատվիլ, լրացվիլ կամ մերժվիլ. դրանից ես չեմ տուժի, իսկ ճշմարտությունը կշահի: Այս համոզումով է, որ գրի եմ առնում դիտողություններս ու կռահումներս, որ եթե չընդունվեն իսկ՝ գոնե առիթ կտան հերքումի, հետևապես նույն խնդիրները վերաքննելու, ինչ որ ինքնին մեծ շահ է մեր լեզվի ճանաչման համար:

Ձայնավորների տեսությունս ուրվագծելուց հետո, ես հիմա անցնում եմ բանաձևելու իմ տեսությունը մեր ձույլ բաղաձայների մասին: Նրանց շարքում ես նկատում եմ ձայներ, որ իմ կարծիքով նույնպես հոլովույթի արդյունք են, հետևապես ծագած են ժամանակի ընթացքին և ստացած են այսօրվան արժեքն ու կերպարանքը:

Մեր միջնադարյան ռամկորենի մեջ հանդիպում ենք մի քանի բառերի, ինչպես **պացխուն**, **արցունք**, որոնց դասական ձևն է **պատասխանի**, **արտասուք**: Այս բառերը մենք հանդիպում ենք ԺԳ դարի հեղինակների գործերում, հետևապես հին և ավելի հին կարող են համարվել, եթե նկատի ունենանք, որ նրանք գոյություն ունեին գրի առնելուց առաջ²: Արդեն վաղուց՝ նախ Յ. Կարստ, ապա՝ Հ. Աճառյան ընդունած են, թե այդ

² «Եվ նա (որդի Սանտալեի) լրբենի երեսօք ասէ, «Դու հայ մարդ ես և մեք հոռոմ իշխանք. ի՞նչ պացխուն տաս մեր թագաւորին, որ կու դատես գհոռում մարդ»: Յայնժամ բարկացաւ պարոն Թորոս և ասէ. «Եւ դուք որ գայր հզօր և զօծյալ թագաւոր սպանիք ի՞նչ պացխուն տայք հայոց ազգիս»: Սմբատայ Սպարապետի պատմութիւն. 1856, էջ 77:

բառերի ց ծայնը արդյունքն է **տ** և **ս** ծայների ծուլման³:

Խորանանք այս երևույթի քննության մեջ: Մենք տեսնում ենք, որ դասական **պատասխանի** և **արտասուք** բառերի ընդգծած վանկերը, կորցնելով իրենց միջև եղած ա ծայնավորը՝ եզերական **տ** և **ս** ծայներն իրար մոտ գալով՝ ծուլված են և տված են **ց**, որով այդ բառերը դարձած են պացխուն և արցունք: Բարբառների մեջ կենդանի է այս հոլովույթի միջին փուլը, ուր **տասս** վանկի ծայնավորը թեև սղած է, բայց դեռ չի չքացած և «արտասուք» բառը մշտեցին հնչում է «արդսունք», իսկ սալմաստեցին՝ «արտսունք»⁴: Բայց այս բառերի **տս** և **դս** ծայների միջև արտաբերում են մի թեթև **ը** և այդ թեթև **ը**-ն է, որ արգելում է այդ ծայներին ծուլվիլ իրար և **ց** դառնալ: Մինչդեռ այն տեղերը, ուր այդ թեթև **ը**-ը չքացած է՝ ծուլումը կատարյալ է. այսպես է գավառական **արցունել** բառը, որ ծագում է «արտասուել» բայի ամփոփման հետևանքով. արտասուել > արտսուել > արցունել: Կարող ենք ուրեմն որոշապես ասել, որ այս դեպքում **ց** ծայնի գոյացման պայմանը ծայնավորի չքացումն է: Նրա սղունը բավական չէ. նա պետք է չքանա, որ եզերական **տ** և **ս** ծայներն իրար մոտենան ու ծուլվին քիմիապես, տալով մի նոր ծայն, որ ո՛չ **տ** է, ո՛չ **ս**, այլ նրանց ծուլվածքը, ինչպես ջուրը, որ ոչ H₂ է, ո՛չ O, այլ մի նոր մարմին, որ նրանց ծուլումի արդյունքն է:

Մենք տեսանք, որ մեր օրինակների մեջ չքացող ծայնավորը **ա** էր: Արդյոք այս հանգամանքը մի արժեք ունի՞ **ց** ծայնի ծագման համար. այսինքն՝ եթե այդ ծայնավորը ոչ թե **ա** լիներ, այլ, օրինակ՝ **ի** կամ **ու** և չքանար **ա**-ի պես, այն ժամանակ **ց**-ն և **ս**-ն նորից չէի՞ն մոտենա իրար և նորից չէի՞ն ծուլվիլ և **ց** դառնա: Պարզ է՝ կարծում են, որ այստեղ նշանակություն չունի ծայնավորի երանգը. կարևորը ոչ թե ծայնավորի երանգն է, այլ նրա չքացումը: Մենք չզիտենք օրինակ, թե որ մի ծայնավորն է սղած կամ չքացած մեր **կրտսեր** բառի **տս** ծայների միջև, բայց այդ հանգամանքն արգելք չէ, որ **տ** և **ս** ծայներն իրար ծուլվին և մենք այդ բառն ունենանք նաև **կրցեր** ձևով⁵: Այսպես ուրեմն՝ կարող ենք վստահորեն ասել, թե ամեն անգամ, երբ **տ** և **ս** ծայներն իրար ծուլված են՝ տված են **ց**, անկախ այն հանգամանքից, թե այդ երկու ծայների մեջ ո՞ր մի ծայնավորն է չքացած: Սա նշանակում է, թե լինել վանկը **տասս**, **տիս** կամ **տուս**, բավական է, որ նրանց ծայնավորը չքանար և եզերական **տ**

³ Dr. Josef Karst. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, 1900, էջ 105: **Չ. Աճառյան**, Արմատական բառարան, հտ. Ա, էջ 767-70, արտօսք բառի տակ:

⁴ **Չ. Աճառյան**, Արմատ. բառ., Ա. հ., 770:

⁵ **Չ. Աճառյան**, Արմատ. բառ., հատոր 7, 1485:

և **ս** ծայներն իրար մոտ գալով ծուլվեին, որ մենք տեսնեինք **ց** ծայնի ծագումը: Այսպիսով մենք գտանք **ց** ծայնի ծագման երկու հիմնական պայմաններ. 1. **տ** և **ս** ծայների միջև պետք չէ ծայնավոր լինի. 2. **տ** և **ս** պետք է իրար հետ ծուլվին:

Տեսնենք հիմա, թե բառի շեշտը դեր ունի՞ այս ծուլման մեջ: Մեր բառերն արևելյան հայերն արտաբերում են իբրև պատասխան, արտասունք, շեշտելով միջին ծայնավորը: Գիտենք թե շեշտված ծայնավորը չի սղում. հետևապես **պացխուն** և **արցունք** բառերը այնպիսի միջավայրի մեջ են կազմված, որ այդ բառերի միջին ծայնավորը չէր շեշտվում, այլ արտաբերվում էր պատասխան կամ պատասխան⁶, այսինքն՝ միջին ծայնավորն անշեշտ թողնելով՝ լրիվ շեշտում էր ծայնավորներից առաջինը կամ երրորդը և թերի շեշտով արտաբերում էր նույնպես առաջինը կամ երրորդը: Արևելյան բարբառներից Արցախինը, որ բառի շեշտը պահած է միջին ծայնավորի վրա՝ առաջին ծայնավորը սղած է և արտաբերում է **պըտասխան**, **ըրտասունք**, որով պարզ է, թե իր առաջին ծայնավորը անշեշտ է եղած, երկրորդը լիաշեշտ, ինչպես որ է նաև այսօր, և երրորդը, թեև անշեշտ, բայց տոկուն ծայնավոր է: Կարող ենք ուրեմն **ց**-ի ծագման երրորդ պայմանը բանաձևել այսպես. **ց**-ն ծագում է այնպիսի վանկերից, որոնց եզերական ծայներն են **տ** և **ս** և որոնց միջև ծայնավորն անշեշտ լինելով՝ նախ սղած և ապա՝ չքացած է և եզերական ծայներն իրար ծուլված են:

Մեր դասական երկու բառը հիմա տրոհենք այսօրվան կարգով. -պատասխան, ար-տաս-սուք: Մենք տեսնում ենք, որ առաջին բառի ընդգծած վանկը փակ է, իսկ երկրորդ բառի **տա** վանկը բաց է և նա դառնում է **տասս**, առնելով հաջորդ վանկի **ս**-ն: Կարող ենք ուրեմն ասել, որ **ց** ծայնի ծագման համար անհրաժեշտ է, որ գոյանա եզերական **տ** և **ս** ծայներով մի խումբ, նրա մեջ եղած ծայնավորը չքանա և եզերական ծայները ծուլվին: Այդ խումբը անկախ վանկ է, թե կազմված է փոխ առած ծայնով՝ նշանակություն չունի **ց**-ի ծագման համար:

Մինչև այստեղ մենք դուրս չեկանք մեր ընտրած բառերի սահմանից և աշխատեցինք որոշել այն պայմանները, որ ծնունդ են տված **ց** ծայնին մեր միջնադարյան մի քանի բառերի մեջ: Մենք տեսանք, որ այդ բառերի մեջ **ց**-ն բաղադիր է: Բայց ի՞նչ է հայոց լեզվի **ց** ծայնի ներքին բնույթը: Այս մասին որոշ է գիտության կարծիքը: Մեծամուն Ա. Մեյե ասում է, թե «**ց**-ն և **չ**-ն բաղաձայների մի խումբ են միշտ» և իրենց ծագումը

⁶ Այս՝ նշանը ցույց է տալիս շեշտի լրիվ զարկը, իսկ բուբը՝ շեշտի թերի զարկը, որ կոչվում է երկրորդական շեշտ, հակադրությամբ առաջինի, որ գլխավոր շեշտ է կոչվում:

հնդեվրոպական նախալեզվի ծայներին չի հասնում, այսինքն այդ ենթադրյալ լեզվի մեջ չկար մի ծայն, որի ձևափոխությունը կամ կշիռը լիներ մեր **g**-ն. նա ուրիշ նախնական ծայների մի խումբ է⁷: Մենք տեսանք, թե միջնադարյան մեր բառերի մեջ **g**-ն, **տ** և **ս** ծայների մի ծուլվածք է: Այսպես է **g**-ն հայոց լեզվի մեջ:

Իսկ ի՞նչ է **g**-ն հնդեվրոպական լեզուների մեջ առհասարակ: Սրա պատասխանը տալիս է փորձառական ծայնաբանությունը, ուր ո՛չ թե հետազոտողի սխալական ականջն է, որ տարրորոշում է ծայները, այլ անվրեպ ծայնագիր մեքենան: Փորձը ցույց է տալիս, որ մեքենայի նիշած **g** և **չ** ծայները, երբ գլանի ընթացքը շրջում ենք՝ հնչում են իբր **տս** և **տշ**, որով պարզ է, թե **g**-ն և **չ**-ն պարզ ծայներ չեն, այլ ծուլ ծայներ են, երկու բաղաձայների խմբավորում, իրար հարմարած⁸: Ուրեմն այն կարծիքը, որ հայտնում է Ա. Մեյե մեր **g**-ի և **չ**-ի մասին՝ հիմնվելով իր հնչական համեմատությանց վրա, ծայնագիր մեքենան հաստատում է ո՛չ միայն մեր **g**-ի և **չ**-ի, այլ և առհասարակ մարդկային լեզվի **g**-երի և **չ**-երի մասին: Այսպես ուրեմն՝ մեր **g**-ն որևէ նախնական պարզ ծայնի տարատեսակ արտաբերություն չէ, որ հատուկ է միայն հայ բերանին, այլ **տ** և **ս** ծայների ծուլվածք է, ինչպես հաստատում են ծայնագիր մեքենան և մեր դասական բառերի միջնադարյան կերպարանքը:

Մինչև այստեղ մենք գնացինք գիտության հետ ոտն առ ոտն: Ես հիմա հարց եմ տալիս. արդյոք **g** ծայնը մեր միջնադարյան բառերի մեջ առաջին անգամ ժԳ դարի մե՞ջ է երևցած, թե՞ դրանից առաջ: Անշուշտ դրանից առաջ, քանի որ այդ բառերն առնված են խոսուն բարբառից և ոչ թե հնարված են: Եվ հետո՝ պետք է այդ բառերը լինեին, որ գրի առնվեին: Այդ բառերն եղած են ժԳ դարից առաջ. բայց ե՞րբ են կազմված, քանի՞ դար առաջ: Ոչ ոք կարող է որոշապես ասել: Մի բան որոշ է սակայն, հայերեն մի բարբառ ժԳ դարից առաջ ունակություն է ունեցած անշեշտ վանկի ծայնավորը կորցնելու և եզերական **տ** և **ս** ծայներն իրար ծուլելով՝ **g** կազմելու: Հիմա ես տալիս եմ երկրորդ հարցումս. արդյոք ծայներ ծուլելու այդ ունակությունը նո՞ր էր սկսած, թե հիմ ունակություն էր այդ բարբառի համար: **Պագխուն** և **արցունք** բառերը վերջինն են, որ **տ** և **ս** ծայները ծուլելով հորինած են **g**, թե՞ դրանք առաջին նմուշներն են: Եվ հետո. արդյոք Կիլիկյան բարբառը միա՞կն էր, որ ուներ այդ ունակությունը, թե՞ այդ հատկությունն ունեին և մեր մյուս

⁷ A. Meillet. *Esquisse d'une grammaire comparée de l'Armenien classique*, 1903, էջ 17, «14, III :

⁸ Տե՛ս M. Grammont. *Traité de phonétique*. 1933, էջ 105-108 և այլուր:

բարբառները, ինչպես ունեցած են շատ օտար լեզուներ, որ իրենց ծայնաշարի մեջ **g** ունեն: Եվ ավելի ընդհանրացնելով հարցումս՝ ես ասում եմ. արդյոք բովանդակ հայոց լեզվի հատկությունը չէ՞ **տ** և **ս** ծայներն իրար ծուլել և **g** կազմել, երբ նրանք անընդմիջաբար գալիս են իրար մոտ. որ նշանակում է. արդյոք մեր լեզվի բոլոր **g**-երը մի ժամանակ **տս** խումբը չէ՞ն եղած, իսկ ավելի հին ժամանակ՝ լիահնչուն անշեշտ վանկեր, որոնց ծայնավորները չբացած են և եզերական **տ** և **ս** ծայներն իրար ծուլվելով՝ տված են **g**:

Անվիճելի է, որ **պագխուն** և **արցունք** բառերի մեջ **g**-երը նախնական չեն, այլ հետագա հոլովույթի արդյունք են: Դրա ապացույցը **պատասխանի** և **արտասուք** նախնական ձևերն են, որ մեզ ավանդած է դասական լեզուն և մնում են շատ բարբառներում առանց միջի ծայնավորը չբացնելու և **g**-երը կազմելու: Եթե չլինեին **պատասխանի** և **արտասուք** բառերը՝ մենք որտեղի՞ց կարող էինք իմանալ, թե **պագխուն** և **արցունք** բառերի **g**-ն վաղեմի **տասս** լիաձայն վանկի եզերական ծայների ծուլումից է ծագում: Այն հանգամանքը, որ մեր **g** ունեցող անհամար բառերի նախավոր ձևերը չունինք՝ բավարար հի՞մք է պնդելու, որ մեր **g** ծայնն ընդհանրապես հիմ ծուլումի արդյունք չէ: Անկասկած ո՛չ: Մեր լեզվի բարբառներից մեկը - կիլիկյանը - ծուլած է **տս** խումբը և տված է **g**: Ո՛չ մեկ հիմք կա կարծելու, որ ծուլման այդ ունակությունը չեն ունեցած և մեր մյուս բարբառները: Մենք իրավունք ունինք ենթադրելու, որ բովանդակ հայոց լեզուն ունեցած է այդ ունակությունը և եթե դասական լեզուն մեզ չի տալիս **պագխուն** և **արցունք**՝ դրա պատճառն այն է, որ նա պահած է **տասս** վանկի ծայնավորը. եթե չբացներ այդ ծայնավորը՝ նա՛ նույնպես կծուլեր **տ** և **ս** եզերական ծայները և կտար **g**, որովհետև, ինչպես տեսանք, առաջ է գալիս այն ժամանակ, երբ **տ** և **ս** ծայներն անմիջաբար դառնում են կից և ծուլվում են իրար: Մենք տեսանք, որ ծայնագիրը հաստատում է, թե բոլոր **g**-երը բաղադիր ծայներ են, հետևապես **տ** և **ս** ծայներ ծուլելու ունակությունը մարդկային լեզվին հատուկ է, ուրեմն ենթադրելի է նաև մեր լեզվի համար: Հ.Վ. Հացունու կազմած զուգադրության մեծարժեք ցանկի մեջ մենք չենք հանդիպում տս զուգադրությանց⁹: Այս հանգամանքն անուղղակի ապացույց չէ՞, որ

⁹ Տե՛ս Հ. Վ. Հացունու, *Ուղղագրություն և առոգանություն հայերենի*, 1933, էջ 367 և էջ 216, ուր բերված են երեք բառ. *կրտսեր*, որ ինչպես տեսանք՝ ունինք և կրցեր ձևով. *պատըսպարել*, որ արտաբերում ենք *պատըսպարել*, որով **ը-ը** արգելք է դառնում կցման ու ծուլման, և *աղքատսիրություն*, ուր լեզվական գիտակցության համար դեռ շատ որոշ են բաղադրիչ մասերը՝ *աղքատ* և *սիրություն*, ուստի արտաբերում ենք *անղքատ*, հետևապես **տ** և **ս** անընդմիջաբար չեն գալիս իրար մոտ և ծուլման պայման չի ստեղծվում:

մեր լեզվի բոլոր **տս** զուգադրությունները գրական շրջանից շատ դարեր առաջ արդեն ձուլված ու դարձած էին **ց**:

Տեսանք, որ **ց**-ն նախնական ձայն չէ. նա պատմական հոլովույթի արդյունք է: Տեսանք, որ նա բաղադիր ձայն է և **տ** և **ս** ձայների ձուլման հետևանք է: Պարզ է, որ **տ** և **ս** ավելի հին ձայներ են, քան **ց**-ն, քանի որ վերջինը կարող էր ծագել, երբ առաջինները կային արդեն, ինչպես թթվածնից և ջրածնից առաջ ջուր չէր կարող գոյություն ունենալ: Եղած է ուրեմն մի ժամանակ, երբ **ց**-ն գոյություն չուներ: Քանի որ այսպես է՝ մենք կարող ենք ուրեմն լուծելով **ց** ձայնը իր բաղադրիչ տարրերի՝ վերականգնել բառերի այն ձևը, երբ նրանք **ց** չուներին և լեզվի այն վիճակը, երբ **ց**-ն երկու ձայնի ձուլվածք է և քանի որ այդպես են բոլոր **ց**-երը թե մեր և թե օտար լեզուների մեջ, ուրեմն **ց**-ի լուծուձուլով նախնական վիճակի վերականգնումը կարելի է փորձել և մնացած լեզուների համար, որով մեր աշխատանքի մեթոդը կիրարկելի է և այլուր: Մեր **պագխուն** և **արցունք** բառերի **ց**-երի ծագման պարագաները, **ց**-ի բաղադիր տարրերի բնույթը, որ պարզում են այդ օրինակները, և փորձնական ձայնաբանության տված արդյունքը, որ զուգահեռ է պատմական իրողության՝ նույնիսկ իրավունք են տալիս հետազոտության այս նոր եղանակը կիրարկելու: Վերացական դատողությունը, պատմական իրականությունը և մեքենական փորձը իրար ստուգում են և հաստատում: Փորձենք ու տեսնենք, թե ի՞նչ արդյունքի կհասնենք:

Առնենք, օրինակ, մեր հաց բառը, որ մի **ց** ունի և որի շեշտը իր միակ ձայնավորի վրան է: Մեր վարկածով այդ բառի **ց**-ն պիտի ծագած լինի **տս** խմբի ձուլման հետևանքով և ուրեմն այդ բառը երբեմն եղած է * **հատս**¹⁰: Մենք տեսանք սակայն, թե **տ** և **ս** ձայները երբեմն եղած են եզերական, այսինքն՝ մի լիաձայն վանկի մաս են կազմած՝ գրավելով ձայնավորի երկու կողմերը, իրենց ձայնավորի չբացումից հետո միայն նրանք եկած են իրար մոտ և ձուլումով տված են **ց**: Տեսանք նույնպես, որ այդ ձայնավորի երանգը նշանակություն չուներ. կարևորը նրա չբացումն էր, հետևապես մեր վերականգնած բառի ավելի հին վիճակը տված կլինենք, եթե գրենք. **հաց = հատ + ց + ս**, ուր մեր **ց** գլխագիրը միշտ է մի ձայնավոր և ուրեմն մեր բառը մի ժամանակ կարող էր լինել * **հատիս**, * **հատուս** և այլն: Այս վիճակի մեջ բառը երկվանկ պիտի լիներ և հարաշեշտ, այսինքն՝ պետք է շեշտեր իր առաջին վանկը: Գիտունների կարծիքով նախագրական հայերենի շեշտը շատ զորավոր է

¹⁰ Բառերի վերն ու առջև դրած այս նշանը ցույց է տալիս, թե նրանք այդ ձևով ավանդված չեն, բայց ենթադրելի են:

եղած (A. Meillet, *Esquisse...*, էջ 1): Այս զորավոր շեշտի ազդեցության տակ մեր վերականգնած բառի երկրորդ վանկի ձայնավորը պիտի սղեր ու չբանար և եզերական **տ** և **ս** ձայներն իրար մոտ գալով՝ ձուլվեին և դառնային **ց**: Մենք տեսանք, թե անշեշտ վանկի ձայնավորն է, որ սղում է և չբանում: Մեր վերականգնած բառի մեջ անշեշտ վանկի ձայնավորն է չբացած, հետևապես ձուլման պայմանն իրացած է:

Բառերի վերջին վանկերը տոկունության տեսակետով սովորաբար այն արժեքը չունեն, ինչ որ նրանց մյուս վանկերը. նրանք ավելի շատ են ենթակա փոփոխման: Սանսկրիտ լեզվի մեջ օրինակ բառերի վերջին տ ձայնը դառնում է մի պարզ հունչ, որ միշտ է **հ** գրով՝ տակը մի կետ¹¹: Այս հունչը դյուրավ կարող է ցնդել և ձայնավորը մերկանալ, որով մեր հին¹² **հատիս** բառը պիտի դառնար **հատի**: Սա մեր հատ բառի սեռականն է, որ ժամանակի ընթացքին ձգած է իր **ի**-ն և դարձած է **հատ**, ինչպես մեր դասական **պատասխանի** բառն այսօր դարձած է **պատասխան**: Ուրիշ տեղ ես ցույց եմ տված՝ մեր նախագրական լեզվի մեջ եզակի ուղղական ու սեռականը միևնույն ձևն ունեին և նրանց նշանակությունը տարբերվում էր շեշտով միայն¹³: Միևնույն **հատի** բառն օրինակ՝ ուղղական էր, երբ շեշտում էր իր առաջին վանկը՝ **հատի** և սեռական՝ երբ հնչում էր իբր **հատի**: Բնական է, որ առաջին դեպքում **ի**-ն անշեշտ մնալով՝ պիտի չբանար, որովհետև բաց վանկ էր կազմում: Եթե նա բաղաձայնով փակվեր՝ կսղեր և կդառնար **ը**. այսպես՝ ուղղ. **սե՛րման**, որ դարձած է **սերմն**, ուր **ը** չի գրվում, բայց հնչվում է: Այսպիսով մեր **հատիս** բառը նախ պիտի դառնար **հատիհ**, ապա **հ-ի** ցնդումով՝ **հատի** և ուղղականի մեջ **ի**-ի չբացումով՝ **հատ**: Բառերի սեռականը վերականգնում է նրանց նախագրական ձևը:

Այսպիսով մեր վերականգնած * **հատիս** բառը հայ միջավայրի մեջ տարբեր բառարաններում տարբեր հոլովույթի ենթարկված է. մի տեղ նա չբացնելով իր վերջին վանկի ձայնավորը և եզերական **տ** և **ս** ձայներն իրար ձուլելով՝ տված է **ց** և բառը դարձած է **հաց**. մի ուրիշ լեզվական միջավայրում միևնույն * **հատիս** բառը վերջին **ս**-ն հնչելով իբր **հ**՝ ցնդած է և մնացած է մերկ ձայնավորը, որ շեշտի ազդեցության տակ սղած ու կորած է ուղղական ձևի մեջ և երևում է նորից, երբ սեռական

¹¹ A. Meillet. *Introduction a l'etude comparative des langues Indo-Europe'ennes*, 1924, էջ 107-8.

¹² Տպարանը հատուկ գիր չունենալով սանսկրիտի վիսարգա հնչյունի համար, նրա փոխարեն դրած է լատինական **h**:

¹³ Տես՝ Հայերենից ամսագիր, 1928 թ.:

ծևը իր շեշտը զարկում է նրան. **հա՛նտ(հ)- հատի՛**: Այնուհետև ցեղերի խառնուրդով այդ երկու բառերը, որ տարբերացած են և որ սակայն նույն ծագումն ունեն, մտած են հայոց լեզվի գանձարանը և լեզվական տնտեսությունը նրանց տված է տարբեր պաշտոններ, որով **հատ** նիշած է ցորենի հատիկը և հաց՝ այդ ցորենից պատրաստած հացը:

Ինչպես հնչաբանորեն նրանք ծագում են միևնույն նախաձևից, իմաստաբանական տեսակետով նույնպես նրանք նույն ծագումն ունեն: **Հատ** և **հաց** բառերի նախագրական նույնացումը մեզ փոխադրում է մշակութային պատմության մի շրջան, երբ մարդիկ դեռ հաց պատրաստել չգիտեին և նրանց հացը հատն էր, այսինքն հացահատիկը: Թափառական մի հայ ցեղ, լեզվական տարբեր հոլովույթի հետևանքով, իր անջատ միջավայրի մեջ վաղնջական **հատիս** բառը վերջին ձայնավորի սղունով և եզերական **տ** և **ս** ձայների ձուլումով դարձրեց **հաց**, իսկ մյուսը՝ վերը բացատրածս փոփոխությամբ՝ կազմեց **հատ** (հ). մշակութային զարգացումը իր կարգին ստեղծեց երկրագործություն և երկանք, հատից այլուր պատրաստել կարողացան և այլուրից հաց, որով հացն ու հատը անջատվեցան իրարից իբր տարբեր իրեր և ցեղերի խառնուրդով՝ լեզվի մեջ մտած երկու բառերից մեկը նիշեց ցորենի կամ գարու **հատը** և մյուսը՝ նրանց այլուրից պատրաստած **հացը**: Կարելի է ասել, որ առաջին անգամ հաց պատրաստեց այն հայ ցեղը, որ վաղեմի **հատիս** բառն ամփոփեց իբր **հաց**, որ և դարձավ մեր կերած հացի անունը: Մենք տեսնում ենք, թե ի՞նչ արդյունքի հասցրեց **g** ձայնի լուծումն իր բաղադիր տարրերի: Նա ո՛չ միայն մեկնեց այդ բառի հոլովույթը, ո՛չ միայն ցուցադրեց **հաց** ու **հատ** բառերի վաղնջական նույնությունը, այլև մի պատուհան բացեց մեր մշակույթի հնագույն պատմության վրա:

Առենք հիմա մեր հունցել բառը, որի բունն է հունց և որ ունի մի **g**: Հունցել նշանակում է ձեռքերը բռնեցք արած՝ զանգել շաղված խմորը և թանձրացնել: Այդ բունի **g-ն** լուծելով՝ մենք կստանանք բառի հին ձևը՝ * **հունտիս**, որ ամփոփումն է մի ավելի հին * **հունտիս** ձևի և որ վերջին **ս-ի** հունչացումով ու չքացումով՝ պիտի տար **հունտի**, այսինքն մեր **հունտ** բառի վաղեմի ուղղականը և այսօրվա սեռականը: Այս լուծումով մենք նորից տեղափոխվում ենք մշակութային պատմության այն շրջանը, երբ մարդիկ ապրում էին հունտով և հատիկով: Հունտերը կապիճներից հանելու համար կանայք իրենց բռունցքներով ճեղքում էին կապիճները և այդ գործողությունն է, որ համարված է հունցել, այսինքն՝ հունտել՝ եթե կամենանք մի նոր բառ շինել: Հավանական է, որ նրանք

հունտերը կապիճներով հավաքում էին և տանում իրենց բնակարանը և մաս առ մաս հունտում և ուտում: Հունտելը կապվում էր այսպիսով ուտեստի գաղափարին և հետագային խմոր հունցելը, որ իբր գործողության մասն էր հունտելուն՝ այդ բառով նշվեց: Միևնույն նախավոր ձևից՝ արտաբերական տարբեր հոլովույթով՝ տարբեր լեզվական միջավայրերի մեջ կազմված ու տարբերացած բառերից **մեկը-հունտ** (հ) մնաց հունտը նիշելու համար, իսկ մյուս բառը **հունց**՝ իբր անկախ բառ չքացավ, բայց իբր բայի բուն՝ կազմեց **հունցել** բայը: Այս տարբերացած բառերը մտած են հայոց լեզվի գանձարանը հայ ցեղերի նախապատմական խառնուրդի ժամանակ և լեզվական տնտեսությունն է, որ որոշած է նրանց նոր իմաստը:

Անջատ բառերի սահմանից՝ անցնենք բայական ձևերի աշխարհը: Լատին լեզուն երկու բայ ունի. **Lino** և **sino**, որոնց բայածականն է **lītus** և **sītus**: Այս ձևերը հին են և ծառայում են իբր կրավորական անցյալ դերբայ¹⁴: Եթե այս դերբայները հայ լեզվական միջավայրի մեջ կազմվեին՝ շեշտելով իրենց առաջին ձայնավորը մեր վաղեմի զորավոր շեշտով՝ նրանց երկրորդ ձայնավորները պիտի սղեին և չքանային և եզերական **տ** և **ս** ձայներն իրար ձուլելով՝ տային **g** և այդ դերբայները հնչեին իբր * **լից** և * **սից**: Թեև տարբեր նշանակությամբ, բայց միևնույն կազմությամբ երկու բայ ունի և հայոց լեզուն. **լնում** և **խնում**, որ ամփոփված են * **լի-ն-ում**, **խի-ն-ում*** վաղեմի ձևերից՝ սղելով իրենց ձայնավորը: Սրանց արմատն է **լի** և **խի**, իսկ **ն-ն** ածանց է: Եթե այս բառերը իրենց կրավորական անցյալ դերբայը լատին ձևով կազմեին՝ պիտի տային **լի.տոու** և **խի.տոու**, որ հայ միջավայրի մեջ ամփոփելով՝ պիտի դառնային **լիտու** և **խիտու**, իսկ իրենց վերջին բաղաձայները ձուլելով՝ պիտի տային **լից** և **խից**: Եվ իրոք մենք ունենինք այս ձևերը, որ **լնուլ** և **խնուլ** բայերի կատարյալ ժամանակի բուններն են. համ * **լից-ի՛**, **լցի՛**. * **խից-ի**, **խցի՛**: Նայելով այս զուգահեռին՝ ես ասում եմ. ո՛չ մեկ հիմք կա պնդելու, թե մեր **լից** և **խից** բայաբունները նախապես չեն եղած **լիտ-Չ-ու** և **խիտ-Չ-ու**, այսինքն՝ որ այդ ձևերի **g-ն** նախապատմական շրջանին չի եղած մի լիաձայն վանկ, մի **տիս** կամ **տոու**: Այս հաշվով՝ մեր բոլոր բայերի կատարյալ ժամանակի բունները, որոնք **g** ունին՝ այս կարգի կազմություն կարող ենք համարել և հետևապես կատարյալի դիմավոր ձևերը կազմված համարել մի վաղնջական անցյալ դերբայից և դիմակերտ ածանցից. այսպես՝ **ասաց-ի** (գավառական և հնագույն ձևը **ասացիմ**), * **գրի-աց-ի**, որ **ի** և **ա** ձուլելով իբր **ի՛** դարձած է

¹⁴ A. Ernout. Morphologie historique du Latin, էջ 347:

գրեցի և այլն: Լուծելով **ասաց** և **գրեց** բունների **g-ն** և վերականգնելով սղած ձայնավորները՝ մենք կստանանք. **աս-ատ-խ, գիր-ի-ատ-խ**, որ հնդկերկրյալական լեզուների մեջ այնքան սովորական **is** վախճանով են երևում: Նկատելով, որ հնդեվրոպական նախալեզուների մեջ ներգործական բաղկացություններն իրենց շեշտը վերջին վանկի վրա ունեին, իսկ կրավորականները՝ շեշտը վերջին վանկից դեպի հետ էին մղում՝ մենք կարող ենք ասել, թե մեր վերականգնած ձևերը կրավորական դերբայներ էին, ինչպես են լատին ձևերը¹⁵: Եվ այդ շեշտի հետևանք պետք է համարել վերջին բաղածայների չբացումը, որով **տ** և **ս** ձայները հնար ունեցած են մոտենալու և ձուլվելու՝ տալով **g**:

Մյուս կողմից եթե մեր վերականգնած ձևերի վերջին **u-ն** հապավենք՝ մենք կստանանք **աս-ատի** և **գիրի-ատի**, ուր բուններից մեկը արմատ և բուն է միաժամանակ **աս** հմ. սնսկ. *ah*, որ նշանակում է «ասել» և այդ ձևով մնացած է մեր Գողթան բարբառի մեջ. **անալըմ-ասել եմ**, իսկ մյուսը ածանցավոր բուն է - **գիր-ի**, որ կարող ենք **հիմ** ուղղականը համարել **գիր** բառի, որ **ի-ն** պահած է (հմ. ուղղ. **գիր** (ի)- սեռ. գիրի՛, գրի՛. գրաբարն ունի **գրոյ**): Այս ձևերը նման են մի կողմից սլավ լեզվի անորոշ դերբային, մյուս կողմից սանսկ. ներկա 3-րդ դեմքին. հմ. սլավ. **ս-պաս-ատի** = փրկել. **մենիատի** = փոխել, փոխանակել. և սնսկ. **դադիատի** = տալիս է. և 10դ. կարգի բայերը **կամայատի-սիրում** է: Այսպիսով ձևեր, որ համեմատության եզր չունեին քոյր լեզուների հետ՝ **g-ի** լուծումով և նրա ծագման արժեքավորմամբ գտնում են այդ եզրերը և մեկնության դուռ է բացվում լեզվախոյզի առջև:

Մեր նպատակը չէ այստեղ մանր քննության ենթարկել այդ ձևերն ու առնչությունները. մեր նպատակն է ցույց տալ, թե **g-ի** բաղադիր ծագումն ընդունելով և այդ հիման վրա բառերի նախավոր կերպարանքը վերականգնելով՝ մենք **ի՞նչ** արդյունավոր հետևանքների կարող ենք հասնել:

Բայց իմ պրակը վերջացավ և ես ընդհատում եմ: Հուսով եմ հնար ունենամ խոսքս շարունակելու:

Մեր առաջին հուշագրի մեջ տեսանք, թե **g-ն տ** և **ս** ձայների ձուլման արդյունք է¹⁶: Այս ձուլումը կայուն է ընդհանրապես: Բայց կան դեպքեր, երբ նա քայքայվում է կարծեք: Դրա մի պայծառ օրինակ է **գրեցից-գրես-ցես** հակադրությունը: Այս ձևերից երկրորդը առաջին ձևից է կազմվում

¹⁵ Sté A. Karnoy. *Gramm. E'le'ment. de la langue sanscrite*, 1925, էջ 182:

¹⁶ Ձատ գրերը պետք է իրենց անունով կարդալ. այսպես՝ «ցոն՝ տիվն և սե ձայների ձուլման արդյունք է». «Ի՞նչ է այս սեմ, որ անցնում է ցոյի տեղ» և այլն:

իբր **գրեցից- գրեցից-ն**, ուր շեշտը վերջին վանկին անցնելով նախորդ ձայնավորը չբանում է, բայց բառը փոխանակ ամփոփելու իբր **գրեց-ցես**՝ երևում է **գրեսցես** կերպարանքով, ուր **u-ն** փոխարինում է **g-ին**: Ի՞նչ է այս **u-ն**, որ անցնում է **g-ի** տեղ: Եթե փոփոխության ենթարկվող **g-ն** գրեք իր այն վիճակով, երբ ձայնավորը չբացած է, բայց եզերական ձայները դեռ չեն ձուլված՝ (ինչպես **պատսխան** գավառական ձևի մեջ)՝ մենք կստանանք * **գրեսցես** և կտեսնենք, որ **u-ն g-ի** երկրորդ բաղադրիչն է: Արտաբերողն շտապում է կարծես վերջին շեշտած վանկին հասնելու, որ խտացնում է բայածակ տարբերացումը իմաստի տեսակետով, և իր աճապարանքի մեջ՝ թողնում է **տ-ը** և առնում միայն **u-ն**, որով արտաբերում է **գրե(տ)սցես**: Պայթուցիկ անկումը **u-ից** առաջ սովորական երևույթ է լեզուների մեջ: Այսպես սլավ ձևը **վես-վարեցի**, առաջնորդեցի՝ ներկայի մեջ հնչում է իբր **վեդ-ոն** (կամ՝ ոն)¹⁷ հետևապես առաջին ձևը պետք է լիներ **վեդս**, ուր սակայն ընկած է **դ-ն**, որ հին **տ-ի** համարժեքն է. նաև սլավ՝ **չիս-** հաշվեցի, հակադրաբար **չիտ-ոն (մ)** ձևին, որ պիտի տար **չիտս**, բայց **տ-ն** ընկած է **u-ի** առջև¹⁸: Այսպես լատ. ներկա դերբայ *ferens*, որ ծագում է * *ferents* ձևից և որի սեռականն է *ferentis*, ուր տեսնում ենք, թե ընկած է **t-ն**¹⁹: Այսպես մեր **ստիմ** բառը, որի կշիռն է պարսկ. **փսբան=ստիմք**. կամ **սաղմոս** բառը, որի հունարենն է **psalmo's** և ուր տեսնում ենք, թե ընկած են **փ** և **p**²⁰: Վերջին բառերն այդ կերպարանքը չէին ունենա, եթե հայերենը **u-ի** առջև պայթուցիկը ձգելու ունակություն չունենար: Այսպիսով **u-ն**, որ տեսնում ենք **գրեսցես** ձևի մեջ, ո՛չ թե **g** ձայնի արտաբերության մի տարբեր եղանակ է, այլ այդ **g** ձայնի տարրերից մեկն է: Բաղադիր **g-ն** քայքայված է այդ բառի մեջ:

Կարող ենք հիմա ամփոփել մեր տեսությունը **g** ձայնի մասին և ասել. **g-ն** բաղադիր ձայն է. նա **տ** և **ս** ձայների ձուլման հետևանք է, որ պատահած է մի վաղեմի լիաձայն վանկի ձայնավորի չբացման և եզերական ձայների սերտ ներծեցման պատճառով: Վաղեմի լիաձայն խումբը՝ տարբեր միջավայրի մեջ հունչի վերածելով ցնդած է վերջին **u** ձայնը և վերջին ձայնավորը չբացնելով՝ թողած է **տ-ը**: Քայքայման դեպքում **g-ն** ձգում է իր բաղադրիչ **տ-ը** և պահում է **u-ն**: **S** և **u** ձայներ ունեցող

¹⁷ Այս վանկը սլավ լեզուն տառադարձում է մի գրով, որ կոչվում է «մեծ իվս» և որի ճնշումը կարծում են թե եղած է ոն կամ ոն: Տես Պ. Սմիրնովսկի. *Քերականություն հին եկեղեցական սլավերենի (ռուսերեն)*, էջ 6:

¹⁸ A. Meillet. *Le sclave commun*, 1924, էջ 112.

¹⁹ A. Ernout. *Morphologie historique du Latin*, 1927, 15 93-4.

²⁰ Ն. Սառ Բերականություն հին հայերեն լեզվի (ռուսերեն), 1903, էջ 33:

բառերն այսպիսով կարող են կշռի գալ մեր **g** ունեցող բառերի և ձևերի հետ: Այս տեսությունն արժեք ունի և օտար **g**-երի համար: Պետք է նախ վերականգնել **g**-երի նախնական վիճակը և ապա միայն բառերն ու ձևերը համեմատել իրար հետ և գծել նրանց հոլովույթի ծիրը:

Բանասերի հուշագիր, պր. Ա և Բ, Բեյրութ, 1937, էջ 1-17, 21-23

Ձիւն ձմեռն

4. Բրուզման մեր «ձիւն» բառը կշռում է մի շարք օտար բառերի հետ, որ «ձմեռն» են նշանակում (Տե՛ս՝ Gramm. Comp., էջ 165):

Եթե օտարի «ձմեռն» մեզ համար «ձիւն» է դարձած՝ անհնարին չէ, որ մեր իսկ լեզվի մեջ այդ երկու բառերն արմատակից լինեն:

Ա. Մեյյեն նկատում է, թե իսկապես «ամեն մի բառ իր պատմությունն ունի» (Introduction, էջ 14): Ես մտադիր եմ մեր «ձիւն» ու «ձմեռն» բառերի «պատմությունն անել» և ցույց տալ, որ նրանք արմատակից են: Միաժամանակ ես պիտի պարզեմ մի քանի հարակից լեզվական երևույթներ:

«Ձիւն» բառի սեռականն է «ձեան», իսկ «ձմեռն» բառինը՝ «ձմերան»: Ժողովուրդն արտաբերում է «ձմեռ», թեև բարդությանց մեջ պահում է «ձմեռն», օրինակ՝ «ձմեռնամուտ»: Աշխարհաբարի մեջ «ձմեռն» բառը տալիս է տարատեսակ սեռականներ. ձմեռվա, ձմեռվան, ձմռան, ձմեռան: Հին բարդությանց մեջ այդ բառը մտնում է երկու ձևով, իբր «ձմեռն» և «ձմեր», այսպես՝ ձմեռնական, ձմեռնային և ձմերական, ձմերային, ձմերոց: Բառի բուն ձևն անշուշտ «ձմերն» է, ն-ի հարևանությունն է պատճառը, որ արմատական **ր**-ն դարձած է **ռ**:

Ի՞նչ են եղած «ձիւն» ու «ձմեռն» բառերի նախավոր ձևերը: Մեր «ձմեռն» բառի «**ձմ**» զուգածայնի մեջ անկասկած սղված է մի հին ծայնավոր: Հիմնվելով օտար համարժեքների վրա, մենք կարող ենք ասել, թե այդ ծայնավորը եղած է մի վաղեմի **h**. (համ. հ. սլ. Zima., սնսկ. hiemas, լատ. hiems, գեմը, Zima-): Ուրեմն մեր բառը կարող ենք վերականգնել իբր «ձիմեռն»: Վերջին ծածուկ վանկի մեջ թմրած է մի հին ծայնավոր, որ երևում է սեռականի մեջ և է **ա: ր**-ին իր նախավոր արժեքը տալով՝ մենք կարող ենք վերակազմել բառի հին ձևն իբր ««ձիմերան»»: Այս

ձևի մեջ **ե**-ը ես համարում եմ մի վաղեմի **h**ա:

Հետագային կտեսնենք, որ իրոք այդպես է: Հաշվի առնելով այս համագամանքը մենք կարող ենք մեր «ձմեռն» բառը մի նոր ձևով վերականգնել, իբր «ձիմիարան»: Այս հնագույն ձևը իբր քառավանկ բառ՝ կարծում եմ երկու շեշտ ունենալու այս տարազով՝ - - - - ձիմիարան: Այս շեշտադրության հետևանքով անշեշտ **ի**-ն զոդված է հետևորդ և զորեղապես շեշտված **ա**-ի հետ և տված է **ե**, որով բառը դարձած է եռավանկ իբր «ձիմերան»: Ինչպես նախորդ, նույնպես էլ այս ձևի մեջ շեշտերը համազոր չեն եղած. երկրորդը շատ ավելի զորեղ էր, քան առաջինը: Եռավանկ դառնալուց հետո բառը շեշտված է եռավանկ բառերի շեշտադրական տարազներից մեկի համեմատ, որ է - - - ձիմերան:

Այս շեշտադրության հետևանքով բառի առաջին և վերջին ծայնավորները սղված են և բառը դարձած է «ձմեռնը», ինչ որ նրա դասական և այսօրվա արտասանությունն է:

Ս. Մեսրոպ հրահանգած չէ ծածուկ վանկերի **ը**-երը գրել, ուստի բառն արտաբերվում է վերի ձևով, բայց գրած են և գրում են «ձմեռն»:

Մեր վերականգնած հնագույն ձևը, որ է «ձիմիարան», ես բաժնում եմ երկու մասին, իբր «ձիմի-արան»:

Այս մասերից առաջինը ես համարում եմ ածանցավոր կազմություն: Հետո կտեսնենք, որ իրոք այդպես է: Մենք կունենանք ուրեմն «ձիմ-ի»: Բառի մյուս մասը նույնպես բաղադրյալ է. նա կազմված է «**ար**» արմատից և «**ան**» ածանցից:

Այսպիսով «ձմեռն» բառը անդամատելով՝ կստանանք «ձիմ-ի-արան», ուր «ձիմ» այդ բառի արմատներից մեկն է, մյուս արմատն է «**ար**» և ուրեմն «ձմեռն» մի հին բարդ բառ է, որ ամփոփված է ժամանակի ընթացքին և նախքան գրերի գյուտը:

Միևնույն միջատի համար մենք երկու բառ ունենք. «մրջիմն» եւ «մրջուն»: Սրանք միևնույն բառի հոլովույթի տարբեր աստիճաններն են, որ քարացած ձևով հասել են մեզ: Ժողովուրդն այսօր ասում է «մրջիմ»: Այս բառերից մեկի սեռականն է «մրջման», մյուսինը՝ «մրջեան»: Մեր «ձիւն» բառը իր տեսքով նման է «մրջիւն» բառին, իսկ իր սեռականը, որ է «ձեան», նման է «մրջեան» ձևին: Հենված այս զուգահեռին՝ կարելի է «ձիւն» բառի համար վերակազմել մի վաղեմի ձև իբր* «ձիմն»:

Այս ձևի վերջին ծածուկ վանկի մեջ խամրած է մի հին ծայնավոր. իմ կարծիքով մի վաղեմի **ա**, որով «ձիմն» ձևը կարելի է վերականգնել իբր

«ծիմ-ան»: Սա ածանցավոր կազմությունն է. իր արմատն է **«ծիմ»** և ածանցը **«ան»**:

Մենք ստացանք նույն արմատը, ինչ որ գտանք «ծմեռն» բառի մեջ, որ է **«ծիմ»**:

Մենք ունենք հիմա «ծիւն» և «ծմեռն» բառերի հնագույն ձևերը. կարող ենք նրանց զուգադրել, մանր քննության և համեմատության համար.

* ծիմ-արան =ծիւն

* ծիմ-ի-ար-ան=ծմեռն:

Այս ձևերից առաջինը նույն կազմությունն ունի, ինչ որ խած-ան, վազ-ան և այլ բառերը: Ուրեմն «ծիմ-ան» նշանակում է «ծիմ» անող*, ծիմարար: Իր հոլովության հետագա փուլն է «ծիւ-ան», ուր **մ-ը** դարձած է **ւ**: Այս ձևի մեջ բառը նշանակում է «ծիւ» անող*, ծիւարար:

Այստեղ «ծիմ» և «ծիւ» նույնիմաստ են և համարժեք: Հնագույն ձևն է «ծիմ», ինչպես ցույց են տալիս օտար համարժեքները, որ **մ** ունեն և այդ ձևով հայտնի են Քրիստոսից ավելի քան հազար տարի առաջ: «Չիմ» և «ծիւ» արմատների միջև ավելի քան 1500 տարի է սահած, քանի որ մեր «ծիւն»ը դասական բառ է:

Այդ տասնուհինգ դարերի ընթացքին է, որ ենթադրածս, բայց անգործ **«*ծիմն»** ձևը դարձած է «ծիւն»: Մոտավորապես նույնքան դարերի ընթացքին դասական «մեծ» բառը դարձած է գավառական «վեմծ»: Որոշածս ժամանակն ուրեմն բավական էր «ծիմ»ի **մ-ը** **ւ** դարձնելու համար: Այս անդամատումից երևաց, որ **«ծիմ-ան. -ծիւ-ան. -ծիւն»** ներկա դերբայ է:

Ներկա դերբայի իմաստ ու ձև ունի նաև «ծիմ»-ի-ար-ան» վաղեմի բառը: Բայց այս ձևը **կրկնակի** դերբայ է: Ինչպես ունենք կրկնակի հոգնակիներ. հոն-ք-եր, կամ-ք-եր. կամ ինչպես եղած են կրկնակի սեռականներ, օր. նոցուց. այնպես էլ ունենք հազարավոր կրկնակի ներկա դերբայներ: «Չիմ-ի-ար» ձևն ինքնին ներկա դերբայ է, որ ամփոփումով տված է «ծմեր»:

Տեսանք, որ սա մեր մի շարք բարդ բառերի բաղադրիչներից մեկն է. մյուսն էր «ծմեռն»: «Չիմ-ի-ար» ձևի երկրորդ բաղադրիչը «ար», ես համարում եմ «առնել» բայի պարզ արմատը, որի կրկնավորն է **«ար-ար. -արար»**: «Առնել» բայը պետք է վերականգնել իբր «ար-ան-ել»: Սրա շեշտը առաջին վանկին է զարկած, որով երկրորդ վանկի **ա-ը** սղած է և **ր-ն** մոտենալով **ւ-ին**, դարձած է **ւ. -ար-ան-ել. -ար-ըն-ել. -առ-ն-ել**: «Ար-ան-ել» բայը կազմված է ճիշտ այնպես, ինչպես «հատ-ան-ել. մեռ-ան-ել.

կործ-ան-ել» և սլանց նման բայերը: Միայն թե դեռևս նախագրական շրջանում «ար-ան-ել» ձևն արդեն ամփոփված էր. մյուս երկուսը ամփոփվեցին հետագայում դառնալով «հատ-ն-ել, մեռ-ն-ել»: իսկ «կործանել» բայը դեռ շարունակում է տոկալ ժամանակի ծախիչ ուժին և մնում է անփոփոխ:

Այսպիսով «ծիմ-ի-ար.-ծմեր» ձևը նույն արժեքն ունի, ինչ որ «ծիմ-ան» ձևը և հազարավոր հին բառերի **ար** բաղադրիչը նույնարժեք է **ան** բաղադրիչին: Ինչպես **«ար»** արմատից ունենք «ար»-ան-ել-առնել, այնպես էլ «ան» ածանցից ունենք ան-ել.-անել: «Առնել» բայը զատ ձև է և ոչ թե «առնել» բայի մի ձևափոխությունը: «Առնել» բայից է ծագած գավառական «էնել» բայը, որ լսում ենք ժողովրդական երգի մեջ.

Իմալ էնիմ, իմալ էնիմ,

Գեադուկ ծուռն ա, շիվարեր իմ.

Այդ բայի հոլովության փուլերն են. ար-ան-ել.-այ-ան-ել.այ-ն-ել.- է-ն-ել.-է-նել:

«Ար» բաղադրիչով հազարավոր բառեր կան մեր լեզվի մեջ: Նա ավելի հին է, քան «ան» բաղադրիչը: Դեռևս շատ հին ժամանակ նա մաշված էր արդեն իբր իմաստասիրական արժեք և չէր գիտակցվում իբր «արար», այսինքն՝ անող: Երբ հնագույն հայերը դադարեցին «ար»ը գիտակցել իբր «անող»՝ նրանք հին ձևերը նորոգեցին «ան» ածանցով, որի իմաստը որոշապես գիտակցում էին իբր «անող»: Այդ շրջանում է «ծմեր» ձևը դարձել «ծմերան»: «Չմեր» ձևը, որ արդեն դադարած էր իբր «ծիմ-ի-ար» գիտակցվել, իր վաղեմի իմաստը տալու համար պետք է նորոգվեր: Այդ նորոգումը կատարված է «ան»-ի կցումով հին ձևին:

Ժողովուրդն այսօր չի ասում «ծմեռն», այլ «ծմեռ»: Այս ձևը կարելի է մեկնել **ւ-ի** անկումով, որ պատահած է նաև նույնանման ուրիշ բառերի. հարսն-հարս. մատն-մատ. ոտն-ոտ և այլն: Բայց կարծում եմ, որ այդ ձևին կարելի է ուրիշ մեկնություն տալ. ո՛չ թե համարել մի դասական ձև, որ կորցրած է **ւ-ն**, այլ մի հին և ուրույն ձև, իբր մի տարբերակ հնագույն **ծիմիար.-ծմեր** ձևի: Պետք է ենթադրել, որ հին ժամանակ մենք ունեցած ենք մեր քննած բառի մի նախավոր ուրիշ ձև, իբր «ծիմ-ի-արար», որ իր կազմությամբ նման է խաղաղարար, աղոթարար, ներկարար և այլ բառերին: Շեշտը վերջընթեր վանկին զարկելով՝ վերջին վանկի ձայնավորը պետք է սղեր և հին ձևն ամփոփելով դառնար «ծիմ-ի-արր», որից երկու **ր-ի** զոդումով պիտի առաջ գար «ծմեռ» ձևը: Եվ ժողովուրդը չի ասում «ծմեռուայ», այլ՝ «ծմեռուայ»: «Չմեր» ձևի **ր-ն** գալիս է վաղեմի

«ար»-ից, իսկ **Զ-Մ** հին «արար»-ից:

Այս կարգի կազմություններ են «պայծառ, կայտառ, պայտառ» բառերը, որ պետք է վերականգնել իբր «պայծ-արար, կայտ-արար, պայտ-արար»: Այս բառերի առաջին բաղադրիչները մնացած են ժողովրդի բերանում, բայց օրինապես սղված ձևով: Դրանցից «պայտ»-ը մոռացված է շատ տեղ: Իսկ «պայծ»-ը դարձած է «պէծ» և «կայտ»-ը՝ «կէտ»: «Պէծ» նշանակում է խարույկի վառ ցայտ. «պէծին տալ» - նշանակում է փայլել: Աշխույժ երեխայի համար ասում են «կրակ ու պէծ է»: Իսկ «կէտ», որ է «կայտ», նույն է, թե «կայթ», այսինքն ցատկել, տրտինգ տալ: Հովի. Թումանյանը իր «Պողոս-Պետրոս» լեզունդի մեջ աշխույժ ու կայտառ հորթերի մասին գրում է.

Կէտ առին փախան, ընկան սար ու ձոր

Անհանգիստ հորթեր, ամառուան շոգ օր,

«Կէտ-արին»-այսինքն՝ կայտ արին. ծատկրտելով, տրտինգ տալով փախան: Այսպես ուրեմն. «պայծառ» - նշանակում է կայծ անող, պէծին տվող, իսկ «կայտառ» - կոյտ անող, ցատկրտող, տրտինգ տվող: Սրանից հետո պարզ է և «պայտառ» բառի բուն իմաստը, որ նշանակում է պայտ անող, այսինքն՝ շինող: Այս հիման վրա **ծիմ-ի-ար.**-**ծմեր** և ծիմ-ի-արար.-ծմեր նշանակում են **ծիմ-ի անող**:

Արդեն ուրիշ անգամ («Հայրենիք» ամսագիր, 1928, № 6) ես պարզած եմ իմ տեսությունը մեր սեռական հոլովի կազմության մասին: Ես ապացուցած եմ, որ մեր սեռական հոլովը մեր ուղղականն է, միայն տարբեր շեշտադրությամբ: Այս տեսության համաձայն մեկնենք «ծիւն» ու «ծմեռն» բառերի սեռական ձևերը, որ են «ծեան» և «ծմերան»:

Տեսանք, որ «ծմեռն» բառի հնագույն ձևերից մեկն էր «ծմերան»: Այս ձևը շեշտված էր իբր - - - «ծմերան», որի հետևանքով առաջին և վերջին անշեշտ ձայնավորները սղած են և բառը ստացած է «ծմեռն» ձևը, որ մեր ուղղականն է: Սեռականի մեջ միևնույն հին ձևը շեշտն առնում էր վերջին վանկի վրա, իբր - - -, որի պատճառով սղած է առաջին վանկը և բառը դարձած է «ծմերան»: Այս ձևի առաջին սուղ վանկը թույլ շեշտ ունի, միջին վանկն անշեշտ է և վերջինը զորեղապես շեշտված: Այս պատճառով հետագայում միջին վանկն ևս սղած է ու կորած, և հին սեռականը մեզ երևում է իբր «ծմ(ե)րան.-ծմրան»:

Այս երևույթը մշտապես եղած է մեր լեզվի մեջ. դրա ապացույցն են

«ասղան», «թիթղան» ձևերը, որ անշուշտ, մի ժամանակ եղած են «ասեղան», «թիթեղան», ինչպես մեր «ծմրան» ձևն եղած է «ծմերան»: Ուղղական և սեռական միևնույն հին ձևերն են, բայց տարբեր շեշտադրությամբ, որի պատճառով նրանք տարբեր կերպարանք են առած:

Ունինք ուրեմն՝

Ուղղակ. ծմերան.-ծմեռն.

Սեռակ. ծմերան.-ծմրան:

Գալով «ծիւն» բառին՝ նրա սեռականն է «ծեան»: Մեր տեսության համաձայն, նրա ուղղականն ևս պետք է լիներ «ծեան», բայց մենք ունենք «ծիւն»: Ինչպե՞ս մեկնել այս «հակասությունը» մեր բանաձևած օրենքին:

Ապացույցները թողնելով ուրիշ տեղի և ժամանակի՝ ես ասում եմ. ամեն անգամ, երբ երկու ձայնավորի միջև չքանում է մի բաղաձայն, նրա տեղը բռնում են **յ-ն** կամ **ւ-ը**, որ լծորդ են:

Այսպես՝ վաղեմի «մա'տար» և «հա'տար» ձևերը դարձած են նախապես «մայար» և «հայար»: Շեշտն առաջին վանկի վրա գալով՝ երկրորդ վանկերը սղած են և բառերը ստացած են «մայրը» և «հայրը» ձև: Այսօր մեզ համար այդ բառերը մի վանկ ունին, իբր «հայր, մայր», բայց որ երբեմն հնչված են իբր մայրը, հայրը, երևում է «հայր» բառի ժողովրդական արտաբերումից, երբ այդ բառը գործ է ածվում Տերունական աղոթքի համար. նա ասում է. «Հայր մեր» և ոչ թե «Հայր մեր»: Այս և սրանց նման մի քանի շատ հին բառերի սեռականները - հոր, մոր - մեզ տանում են մեր լեզվի պատմության հնագույն շրջանը, երբ սեռական հոլովը կազմում էր ոչ թե շեշտի փոխադրությամբ, այլ արտաբերության տարբերությամբ, ուր ուղղականի **յ-ն** սեռականի մեջ հնչում է իբր **ւ-:**

Այսպես՝

Ուղղական հա'յար, մա'յար.-հայրը, մայրը.-հայր, մայր.

Սեռական հա'ւար, մա'ւար.-հա'ւրը, մա'ւրը.-հոր, մոր:

Բաղաձայնների այս անկման շրջանին է, որ «մրջիման» դարձած է «մրջիւան.-մրջիւն» և ծի'ման» դարձած է «ծիւն»:

Նույն երկու կիսաձայների միջոցով հին հայը տարբերում էր տեղ-տեղ անց. անկատար ժամանակի եզ. 3-րդ դեմքի կրավորականն ու ներգործականը, այսպես.

Ներգործակ. տեսանեյր.-տեսաներ.

Կրավորակ. տեսաներ.-տեսանիր:

Ահա այս հնագույն հոլովական կարգով է փոխվում և «ծիւն» բառը, որ ինչպես տեսանք եղած է երբեմն «ծիման»: Ահավասիկ զուգահեռը.

Ուղղակ. ծիւնան.-ծիւան.-ծիւն.

Սեռական ծիւան.-ծիւան.-ծեան:

Այս ձևերի տարբերությունը «հայր-հար» ձևից այն է, որ այստեղ ոչ միայն լծորդ կիսածայներն են իրար փոխարինում, այլև շեշտերն են տեղափոխվում:

Մյուս տարբերությունն այն է, որ մինչդեռ «հայր-հար» ձևերի մեջ ուղղականն է, որ *յ* ունի և սեռականն է, որ կազմված է *ւ*-ով, «ծիւն» բառի մեջ հակառակն է: Բայց, որ երբեմն «ծիւն» բառն ևս ուղղականի մեջ ունեցած է *յ*, դրա ապացույցն է այդ բառի գավառական ձևը, որ է «ծիւն».
«Չիմն եկել, դիզվել, սար ու ծոր բռնել էր», այսպես է սկսում Խ. Արվյանն իր «Վերջ Դայաստանին»: Այս ձևը վերականգնելի է իբր մի վաղեմի «ծիւրն», որ *յ*-ն ձուլված է իր նախորդ *ի*-ի հետ և բառը դարձած է «ծիւն.-ծիւն»:

Այս ձևով կարելի է և պետք է մեկնել մեր «թիւն-թեան» վերջավորությունները. այսպես՝

Ուղղ. Գիտութիւնան.-գիտութիւնան.-գիտութեան

Սեռակ. Գիտութիւնան.-գիտութիւնան.-գիտութեան:

ժողովուրդն արտաբերում է գիտութիւն, ինչպես ասում է ձիւն:

Այսպիսով կարող ենք ասել, ամեն անգամ, երբ պատահում են իրար *ի+յ+ա* մեզ տալիս են *եա* և ուր հանդիպենք *եա*, պետք է լուծել իբր *ի+յ+ա*: Մեջընթաց *յ*-ն կարող է զանազան ծագումներ ունենալ, այդ հանգամանքը նշանակություն չունի *եա* բաղադրության կազմության համար:

Հիմա, որ պարզեցինք «ծիւն» ու «ծմեռն» բառերի վաղնջական կազմությունը և ձևաբանական հոլովույթը՝ կարող ենք դառնալ նրանց իմաստաբանական մեկնության: Տեսանք, որ «ծիւն» նշանակում է «ծիւն» անող, իսկ «ծմեռն»-«ծիւն-ի» անող: Ի՞նչ է «ծիւն» և ի՞նչ է «ծիւն-ի»: Երկրորդ ձևի մեջ *ի* ածանցը նույն արժեքն ունի, ինչ որ վրացերենի անվանակերտ *ի* մասնիկը. այսպես՝ *բաւ-ի*, *պիր-ի*: Գլուխ, բերան և այլն: Այդ ածանցով մենք ևս բազմաթիվ բառեր ունենք, ինչպես՝ բար-ի, կար-ի, չար-ի (ք):

Նկատենք, որ մեր լեզվի մեջ *ծ*, *ծ*, *ց* լծորդ են, այսպես՝ ձիւն- Ղարաբաղ և Գանձակ արտաբերում են *ծ* ի-ն. մաղծ-գավառական՝ *մախց. ձմ-գիւծ-ծնկիւծ. ձլել*, որ նշանակում է հողը պատռել, և՛ *ցել, ցելել* (հմ. գրաբար ցելուլ), որ նշանակում է հողը հերկել, իսկ ցել=վարած հող, հերկ: Այս հիման վրա «ծիւան.-ծիւն» կարող է մի արմատ լինել, որ ունենար

երբեմն «ցիւ» կամ «ծիւ» կերպարանքը, բայց գրաբարի հիմքը կազմող բարբառի մեջ արտաբերվել իբր «ծիւ», ինչպես «ծնկել» արտաբերված է նաև իբր «ծնգել» և «ցելել»ը- «ձլել»:

Արդ այս արմատը մենք գտնում ենք վրացերենի մեջ, որ է *ցիւ* (վ) և *ցիւ-ի* և նշանակում է ցուրտ, սառն, պաղ: Իր կրկնավորն է *ցիւցիւի*, որ նշանակում է պաղ-պաղ, ցուրտ-ցուրտ. Օրինակ՝ *ցիւցիւի ծղալի-պաղ-պաղ* ջուր, սառ ջուր: Անհնարին չէ, որ վրացերենի մեջ պահված լինի այս արմատի վաղեմի *ցիւ* և *ցիւ-ի* ձևերը, որ պիտի կշռեին մեր *ծիւ* և *ծիւ-ի* արմատներին: Բառ-գիրք չունեն՝ ենթադրությունս ստուգելու համար: Հայերենի մեջ այս արմատը կարող էր հնչել իբր ծիւ, և իրոք մենք տեսանք, որ Ղարաբաղ և այլուր ասում են *ծիւն*. կարող էր հնչել և ձիւ, ինչ որ իրոք տեսնում ենք գրաբարի և նոր բարբառներից շատերի մեջ:

Այս հաշվումով ուրեմն «ծիւն», որ է «ծիւան», նույն է թե *ցիւ-ան*, այսինքն *ցիւ* անող, հետևապես ցուրտ անող, պաղ անող, սառնարար: Իսկ «ծիւն-ի-արան», որ է «ծմեռն», նույն է, թե *ցիւ-ի-արան*, այսինքն կրկին ցուրտ անող, սառ ու պաղ անող, ցրտարար: Ահա թե ինչու «ծիւն» ու «ծմեռն» ոչ միայն արմատակից են, այլև իմաստակից են: Ահա թե ինչու «ծմեռն» բառը պետք է տրոհել իբր «ծիւն-ի-արան», որովհետև ունիք *ցիւ-ի* արմատը:

Ահա նաև թե ինչու «ծմեռն» բառի *ե*-ը մի նախավոր *իա* է. *Յիւն-ի-արան*: Ահա նաև թե ինու մեր գյուղացին այդ երկու բառերն իրար կցած է գործ ածում հաճախ, երբ ուզում է «ծմեռ» ասել.-«ծիւն-ծմեռ է».
«էս ձիւն-ծմեռն ու՞ր գնամ» և այլն:

Սրանով պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ օտարի «ծիւնը» մեզ համար «ծմեռն» է և մեր «ծմեռն» օտարի համար «ծիւն» (Համ. հուն. xion-ծիւն, սանսկ. him-a-ծիւն, որից hima-laya-բնավայր ձիւնի: Նկատեք նաև, որ հուն. xeimon-ծմեռ, իսկ xeima-վատ եղանակ, փոթորիկ, մրրիկ ու նաև *ցուրտ*):

Կարծում եմ այս ընտանիքի բառ է և վրացերեն *ծվիւն-ա*, որ նշանակում է անձրև: Այս բառը ես համարում եմ մի վաղնջական ձևի ամփոփում, որ պետք է լիներ* *ծիւիւն-ա*: Մեր «ծիւն-ան.-ծիւ-ան» փոփոխության հիման վրա՝ ենթադրածս * *ծիւիւն* - ա ձևը պետք է, որ նախևաբար եղած լիներ *ծիւիւնա*:

Այս նոր ձևով բառը կրկնավոր է և Հ. Աճառյանի մատնանշած հինգերորդ ձևի կազմություն ունի, այսինքն թեթևցրած է իր երկրորդ բաղադրիչը, ինչպես մեր *հեղեղ, հազազ, հոպոպ* բառերը, որ եղած են երբեմն *հեղ-հեղ, հազ-հազ* և այլն (Տե՛ս Հանդ. Ամս., 1889): Այս հիման վրա մեր

վերականգնած վրացերեն կրկնավոր բառն եղած է անշուշտ* **ծիմ-ծիմ-ա**, որից* *, սրանցից* **ծիւ-իմ-ա**, իսկ սա **ծիւմ-ա**:

Այստեղ մենք հանդիպում ենք մեր **ծիմ** և **ծիւ** արմատներին, բայց ոչ **g-ով**, այլ **ծ-ով**, որ սակայն նշանակություն չունի, քանի որ **ծ=ծ=g**: Վրացերենի **ծիմ** արմատը մնացած է մեր լեզվի մեջ. կարծում են այդ արմատով է կազմված մեր **ծմ-ակ** բառը իբր **ծիմ-ակ**, որ նշանակում է մի կողմից արևելյան հողմ, մյուս կողմից արև չեղած՝ շուք տեղ լեռների մեջ և վերջապես՝ **պաղուկ** ու **բաց** ձոր: Նկատենք մեր կողմից, որ այդ բառը նշանակում է նաև թանձր ու խոնավ անտառ:

Այսպիսով կապվում են իրար ցուրտ, խոնավ, թաց, անձրև, փոթորիկ, մրրիկ, վատ եղանակ գաղափարները: Չմրան գաղափարն այսպիսով ճառագայթած է տարբեր ուղղությամբ թե՛ լեզվական ձևերի և թե՛ տարրնթաց գաղափարների մեջ, որ սակայն նույն արմատն ունին:

Կարող ենք ասել, որ վրացերենի **ցիւ** և **ծիմ** արմատները, որ կշռում են մեր **ծիւ** և **ծիմ** արմատներին, հնդեվրոպական են, քանի որ նույն արմատն է նաև մեր քույր լեզուների մեջ:

Չեմ ուզում փաստերից առաջ անցնել, բայց հուսով եմ ժամանակին հազարավոր փաստեր բերելու, որոնք պիտի հաստատեն, թե հայերենն ու վրացերենը մի շատ հին հնդեվրոպական լեզվի բարբառներ են: Դարեր ու դարեր ապրելով Հայաստանի և Վրաստանի մթին ձորերում, խորին փոփոխությանց ենթարկվելով անջատորեն և շատ ուշ գրի առնվելով՝ նրանք այսօր թվում են անհունապես տարբեր լեզուներ: Առայժմ գոհանում եմ այս հայտարարությամբ:

Սրանով վերջանում է «ծիւմ» ու «ծմեմ» բառերի հնադարյան պատմությունը:

Հայրենիք, 1929, № 2, էջ 134-139:

Կրթություն

Հայ վարժապետը

«Ոչ է աշակերտ առավել քան զվարդապետ իւր», - ասում է Ս. Գիրքը և հետո, թե «շատ է աշակերտին», եթե «եղիցի իբրև զվարդապետ իւր» (Մատթ., ժ. 24)»: Եվ ճիշտ է ասածը. քանի դեռ մեկն աշակերտ է՝ աշակերտած ճյուղի մեջ բնավ չի կարող առավել լինել, քան իր վարդապետը, և արդեն շատ մեծ բան կլինի, եթե նա իր աշակերտ տեղով հավասարեր իր վարդապետին: Ավելի վեր գնալու համար նա պետք է որոնի ավելի մեծ վարդապետ և հին պատմությունը նորից սկսի:

Մյուս կողմից Լ. Տոլստոյը նկատում է, թե կրթությունը մի գործունեություն է, ուր կրթողն աշխատում է, որ իր կրթածը հավասարի իրեն: Ս. Գրքի խոհուն ընթերցման մի արծագա՞նք է այս միտքը, թե՞ անձնական հղացում - չգիտեմ. պարզ է սակայն, որ այս գաղափարը նույն ոլորտի մեջ է թևածում, ուր սավառնում է Ս. Գրքի մտածումը:

Իմացող ու չիմացող, հմուտ ու համբակ երկու կողմեր են՝ տարիքով հաճախ ավագ ու կրտսեր, բայց գիտությամբ ու հմտությամբ միշտ անհավասար՝ իմացության ու վարժության այն ճյուղի մեջ, ուր հանդիպում են իրար իբր աշակերտ ու վարդապետ: Եվ աշակերտի ուսումը վերջանում է այնտեղ, երբ ուսանելի նյութի հանդեպ երկու կողմերը գալիս կանգնում են նույն հարթության վրա: Աշակերտը, որ մինչ այդ առավել չէր իր վարդապետից, հիմա դառնում է «իբրև զվարդապետ իւր»:

Եթե մեծ իմաստասերի և մեծագույն Գրքի ասածները ճշմարիտ են, ապա մեծ նշանակություն ունի աշակերտի համար, թե ո՞վ է իր վարդապետը, և ավելի մեծ նշանակություն ունի հանրության համար, թե ո՞վ է այն վարդապետը, որից սովորաբար առավել չի լինում աշակերտը - և որին հավասար լինել շատ իսկ է նրա համար:

Այսպես ուրեմն՝ կրթության գործում վարժապետն ավելի կարևոր է, քան աշակերտը: Անշուշտ առանց աշակերտի ո՛չ վարժարան կարող է լինել և ո՛չ վարժապետ, բայց թե ի՞նչ է այդ վարժարանը, վարժապետից է կախված: Եթե վարժապետն ինքը խեղճ մարդու մեկն է - թե՛ իբր բնույթ, թե՛ իբր պաշար - ապա չի կարելի մի մեծ բարիք նկատել, որ աշակերտը դարձած է վարժապետին հավասար, և ոչ էլ մի մեծ չարիք համարել,

որ նա ավելի չէ, քան իր վարժապետը:

Ահա թե ինչու՝ բարձրացնել վարժապետի նկարագիրն ու խորացնել նրա հմտությունը՝ նշանակում է ազնիվ ու գիտուն աշակերտներ ունենալ, իսկ ազնիվ ու գիտուն աշակերտ պատրաստել՝ նշանակում է համայնքը զորացնել: Այսպիսով վարժապետը ազդակներից մեկն է համայնքի մտավոր ու բարոյական բարեշրջման: «Ինչպես տերտերը՝ այնպես էլ ծուխը», - ասում է ռուս առածը:

Յուսաբեր, 1954, № 218

Հայաստանի համալսարանի բացումը*

Չնայած որ մեր երկիրն ավերված է ... մեր ժողովուրդը աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան: Այն, ինչ որ մենք ունենք այսօր, ձեռք է բերված սերունդների արյունով, հարզենք նրանց հիշատակը (ամենքը լուռ ոտքի են կանգնում.- խմբ.): Մենք վերաշինում ենք մեր տունը և հիմնում կրթության տաճարներ՝ առանց խորհելու, թե ի՞նչ են մտածում մեր մասին մեր թշնամիները, որոնք միշտ քանդել են մեր շինածը. մեր մեջ հավատ կա, որ այս անգամ հայոց ազգի նավը դուրս կգա փոթորկից անփորձանք: Մեր թշնամիները չեն հաջողելու, և այն ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի և կլուսավորե Առաջավոր Ասիան: Անցնում է մղձավանջը և պայծառանում Հայաստանի երկինքը: Դեռ մեզ համար բոլոր վտանգներն անցած չեն, դեռ մեկ ձեռքում սուր պիտի ունենանք, բայց արդեն ժամանակն է, որ մյուս ձեռքում գրիչ բռնենք**:

Խորտակվում է արդեն թուրքիան և թող շուտ հասնի նրա խորտակման ժամը, որովհետև այդ պետությունը կործանել է քաղաքակրթություններ՝ արաբական, բյուզանդական, հայկական, վրացական և այլն, որովհետև ճիշտ են ասել մեր պատմիչները, թե մաշեցին նրանք մեր ժայռերը և տեղը թողին անապատ: Չկա նաև Ռուսաստանի բռնապետությունը, և այս երկու բռնապետությունների խորտակումից նոր հորիզոններ են բացվում մեզ, մենք պետք է հաղորդակցության մեջ մտնենք արևմուտքի հետ:

* Յտաք, 1920, Երևան, № 26-27... Հանդեսը բաց արավ համալսարանի տեսուչ պրոֆ. Իվ. Դամբարյանը, որից հետո ընդարձակ ճառ խոսեց հանրային կրթության նախարար և Աղբալյանը:

** Ապա հիշելով դաշնակիցների հաղթությունը՝ շարունակում է.

Արևմուտքի հետ մենք կապվելու ենք ոչ միայն տնտեսապես, այլև քաղաքական ու գիտական իմաստով: Արևմուտքի պետությունների հետ պայքարելու կարողություն չունենք մենք. շատ իսկ է, եթե ընթացանք նրանց ճանապարհով: Մենք պետք է արտադրենք հում նյութ, և թող Եվրոպան մշակե այդ: Եվ քանի շուկա լինենք հում նյութի, միշտ կլինենք քաղաքակիրթ պետությունների հետ, և այդ արդեն իսկ պատիվ է մեզ: Եթե մենք կարողանանք այդ մեծ քաղաքակրթության մեր փոքրիկ մուրճը խփել, այդ իսկ պատիվ է մեզ: Եվ այս հիմնարկությունը հաստատելով, մենք հիմնում ենք մի աշխատանք, ուր մեր միտքը պիտի աշխատակցի եվրոպական մտքերի ղեկավարությամբ: Կգա ժամանակ, երբ մենք էլ ի վիճակի կլինենք մի քանի գաղափարներ արտաբերելու մարդկության համար, հայ ժողովուրդը ընդունակ է դրան: Մեր համբավված ջանասիրության շնորհիվ մենք կհասնենք այն օրվան, երբ ընկերներ կլինենք քաղաքակիրթ ազգերի: Եվ երբ կվերանա ամեն տեսակ անհավասարություն, այս հիմնարկությունն էլ նպաստած կլինի դրան: Եվ կստեղծվի համամարդկային մի միություն, երբ բոլոր ազգերը կաշխատեն կողք-կողքի և այսօր մեր սահմաններում կեցած բանակների տեղ մենք կստեղծենք նոր բանակներ մեր երկրի տգիտության և խավարի դեմ*:

Մինիստրների Խորհրդին

Մինիստրությունս սկսած անցյալ տարվա աշունից հատուկ ուշադրություն է դարձրել մեր դպրոցական սիստեմի վերակազմության վրա: Մշակած առաջարկը քննության է առնված մինիստրությանս կից դպրոցական խորհրդակցության մեջ, այնուհետև շրջանային տեսուչների կարծիքին է առնվել տարրական դպրոցների դասատախտակի և ուսման տևողության մասին և հավանություն է գտած այդ երկու մարմինների կողմից:

Ըստ հավանություն գտած առաջարկի տարրական ուսումը տևելու է վեց տարի և ավանդվելու է մայրենի լեզվով. այդ վեց տարին բաժանվելու է երկու եռամսյակի. մանր գյուղերում ուսումը պետք է տևի երեք տա-

* Ապա կանգ ի առնում պատմալեզվաբանական բաժնի վրա, որից կազմված է լինելու առայժմ համալսարանը, և անում է մի քանի բարեմաղթություններ, որ այս համալսարանում միտքը լինե մատչելի ամենքի համար. մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ծրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքի:

րի, իսկ կենտրոնական գյուղերում վեց տարի: Այն աշակերտները, որ հնար չեն ունենա վեցամյա ուսումը ստանալու, նրանց կավանդվի լրացուցիչ չորրորդ տարվա ուսում: Վեցամյա տարրական դպրոցն ավարտողը առանց քննության կարող է մտնել միջնակարգ դպրոցի առաջին դասարանը, ուր ուսումը տևելու է 5-6 տարի: Այսպիսով տարրական դպրոցը բաժանվելու է միջնակարգ դպրոցից. առաջին վեց տարին ուսումն ավանդվելու է տարրական դպրոցում, իսկ վերջին 5-6 տարին միջնակարգ դպրոցում: Այն աշակերտները, որ հնար չեն ունենա վեցամյա դպրոցն ավարտելուց հետո մտնել միջնակարգ դպրոց, նրանց կտրվի լրացուցիչ կրթություն՝ յոթերորդ տարվա ուսում:

Նկատի ունենալով դասախոսների սակավությունը և մեր գյուղերի փոքրությունը կարելի է ասել, որ Հայաստանի ընդհանուր կրթությունը դեռ շատ երկար ժամանակ կարող է լինել ամենաշատը չորսամյա, այսինքն երեք նորմալ տարի և մի լրացուցիչ: Հայաստանը ունի մոտ երկու հազար բնակված վայր և այսօր ոչ ավել քան հինգ հարյուր դպրոց ընդամենը: Եթե ամեն վայրում իրար վրա երեք դասատու ենթադրենք կստանանք 6000 դասատու, իսկ մենք ունենք այսօր ոչ ավել, քան 1.300 դասատու: Տասնյակ տարիներ պետք են ամեն վայրում մի քառամյա դպրոց պահելու համար երեք երկու դասատուներով: Մենք ունենք միայն մի ուսուցչական սեմինար, դեռ նոր սկսված, որ երկու տարի հետո միայն կարող է տալ մեզ 25-30 դասատու: Այս իրողությունները նկատի առնելով՝ պետք չէ զարմանալ, որ միմիստրությունս տարրական կրթության համար սահմանած է ամենաշատը 7 տարի (վեց նորմալ և մեկ լրացուցիչ) և առայժմ այդ կրթության առաջին չորսամյակը իրագործել: (Երեք նորմալ և մեկ լրացուցիչ դասարան այն էլ ոչ ամեն վայրում):

Տարրական դպրոցներում դասավանդվելու են հետևյալ առարկաները. հայոց լեզու, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, առողջապահական գիտելիքներ, նկարչություն, երաժշտություն, մարմնամարզ, ձեռքի աշխատանք: Ամեն առարկայի հատկացված ժամերը կարելի է տեսնել <...> զետեղված տախտակի վրա: Լրացուցիչ դասարաններում ուժ է տրվում <...> լեզվին և թվաբանության, միակ գիտելիքները, որ ամենից ավելի գործադրվում են կյանքում ձեռքի աշխատանքին հավասար և որոնց հմտացնելը պետք է դառնա տարրական դպրոցի գերագույն նպատակը: Օտարագի դպրոցները կունենան հատուկ ծրագիր, քանի որ այնտեղ մտնելու է մի նոր առարկա՝ օտար լեզվի ուսումը, որի պատճառով փոփոխության կենթարկվի դասատախտակը սկսված ուսման երրորդ տարվանից: Մինչև

այդ ուսումը կավանդվի մայրենի լեզվով և մեր դպրոցների դասաբաշխման համեմատ:

ԴԱՍԱՏԱԽՏԱԿ

Պետական տարրական դպրոցների

<u>Առարկաներ</u>	<u>Դասարաններ</u>
Հայոց լեզու	1 2 3 4 5 6
Թվաբանություն	6 6 6 6 6 6
Պատմություն, բնագիտություն, աշխարհ, առողջապահ. գիտ.	4 4 6 6 3 3
Երգեցողություն	2 2 2 2 2 2
Նկարչություն	3 3 3 3 3 3
Ձեռքի աշխատանք	4 4 4 6 7 9
Մարմնամարզ	ամեն օր կես ժամ
	24 24 23 30 30 32

Դպրոցական հիշյալ կարգը և ավանդվելիք առարկաների ցանկը պետք է լինի հանրային կրթության նպատակը, որից թերևս կյանքի բերումով ստիպված լինեն ինչ-ինչ շեղումներ կատարելու: Համեմայն դեպս օրինական ուժ պետք է տալ տարրական կրթության այդ կարգին: Այս նկատումներով խնդրում եմ ընդունել և Պառլամենտի հավանությանն առաջարկել սրանց կից օրինագիծը:

Հանրային կրթության և արվեստի միմիստր
Դիվանապետ
ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, ք. 98

12 սեպտեմբերի 1919 թ.

Հայ նկարիչների ընկերության

Հայ արվեստի զարգացման հիմունքները դնելու և արվեստի բարիքը հանրությանը բաշխելու դիտումով Միմիստրությունս մտադիր է արվեստի մյուս ճյուղերին զուգահեռ ու հավասար զարկ տալ և նկարչության ու քանդակին: Առաջին նվազ անհրաժեշտ է ունենալ մի վարժարան, որ

մեզ մատակարարեր նկարչության և ծեփի (лепка) դասատուներ, ինչպես և այդ առարկաներն ավանդեր ցանկացողներին:

Այս գործի կազմակերպության մեջ ընկերությունը կարող է մեծապես նպաստել Մինիստրության: Կխնդրեի պատրաստել մի ծրագիր նկարչության և ծեփի բացվելիք վարժարանի համար և Ձեր դիտողություններն այդ արվեստների տարածման մասին մեզանում՝ հաղորդել ինձ գրավոր:

Ձեր գրության մեջ ցանկալի էր պատասխան գտնել հետևյալ հարցումներին. 1) Հնարավո՞ր է մեր առձեռն ուժերով այդպիսի մի վարժարանի հիմունքը դնել. 2) Քանի դասատու և որքան ծախս կպահանջվեն առաջին տարին և ինչ հողվածներով (դասատու, գործիքներ, շենք, դիվան, տնտեսական և այլն ծախսեր). 3) Քանի տարվան ուսում պիտի ավանդել, ինչ առարկաներ և քանի ժամով:

Ծրագրի մշակության ժամանակ կխնդրեի միշտ նկատի ունենալ այս ձեռնարկության հիմնական նպատակները, որ երկու են.

1) Նպաստել հայոց ազգային արվեստի զարգացման 2) Պատրաստել ծեփի և նկարչության դասատուներ:

Հուսով եմ, թե ընդհուպ պիտի ջանաք մշակել խնդրածս ծրագիրը և Ձեր գրավոր զեկուցումը շուտով հասցնել ինձ:

Հանրային կրթության և արվեստի
մինիստր
Դիվանապետ
ՀԱԱ, Ֆ. 207, ց. 1, գ. 218, ք. 118

11-ը սեպտեմբերի 1919 թ.

Մինիստրների խորհրդին

Թատերական գործի կազմակերպությունը բանավոր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է հիմնել թատերական վարժարան (ստուդիա), որ հանրապետությանս մատակարարեր կիրթ դերասաններ: Այդ ճամփով հնարավոր է միայն փրկել թատրոնն անկումից և հասնել մինչև արվեստի բարձունքը: Վերջին տարիները Կովկասում, բայց մանավանդ Պոլսում երևացել են թատերական թարմ ուժեր, որ կարող են կենդանություն բերել մեր բեմին, եթե խնամվեն, ստանալով հատուկ թատերական կրթություն:

Այս նպատակով մտադիր եմ երկու հմուտ դերասան ուղարկել Պոլիս, մեկը բեմական արվեստի դասավանդման, մյուսը ծայրի կանոնա-

վորման, որ համախմբեն այստեղի թարմ ուժերը, կրթեն նրանց ու պատրաստեն ծրագրածս պետական թատրոնի և թատերական վարժարանի համար իբր սկսնակ դերասաններ ու սաներ: Այս գործը Պոլսում սկսելն ունի այն առավելությունը, որ 1) դրանով մեր և արևմտահայ ուժերն ու արվեստը շփման մեջ կդրվեն, 2) նրանց հայախոսությունը և բարեձև պահվածքը կպատվաստեն մերոնց, 3) փոխանակ պատահական անձեր հրավիրելու, հնար կունենանք լուրջ ընտրություն անելու մի բազմության միջից, 4) նրանց ապրուստի ծախսերից կազատվենք պատրաստության շրջանում և վերջապես 5) գործի հիմունքը դրած կլինենք և այս տարին ապարդյուն չի անցնի:

Թատերական գործ կազմակերպել երևանում այս տարի, երբ թատրոնի շենքում Պառլամենտի նիստեր են լինում՝ միանգամայն անհնարին է:

Հիշյալ նպատակի համար մենք ծախս կունենանք

Գ. Գ. ըստ կարգի	Պաշտոններ	Ամսական	9 ամսվան հոկտ. - հուլիս	3 ամսվան հոկտ. - դեկտ.
1.	Բեմական արվեստի դասատու և գործի վարիչ	7000	63.000	21.000
2.	Զայնի մարզիչ	5000 12000	45000 108.000	15.000 36.000

Միանվագ ծախսեր.

Ճամփու ծախս երկու հոգու մինչև Պոլիս 10.000
Բնակարանի հարդարման և այլ ծախսեր 10.000
56.000 ռ.

9 հոկտեմբերի 1919 թ., Երևան

Մինիստրների խորհրդին

Հայաստանի տերիտորիայում գտնվող տարրական դպրոցներում կարող են լինել մոտ 1000 հոգի աշակերտ, որոնք իբրև ազատագրության կռվում զոհված անձանց զավակներ, կարիք են զգում նպաստի:

Ամեն մի աշակերտ դասական պիտույքներով ապահովելը կնստի տարեկան -140 ռ.

3 դասագիրք	50 ռ.
12 տետր	36 ռ.
3 մատիտ	12 ռ.
2 գրչակոթ	8 ռ.
18 գրչածայր	18 ռ.
1 նկարչ. տետր	7 ռ.
1 թանաքաման	3 ռ.
թանաք	6 ռ.
	140 ռ.

Նկատի ունենալով, որ միջնակարգ դպրոցի ամեն մի աշակերտին դասական պիտույքներով ապահովելը կնստի 300 ռ. տարեկան.

6 դասագիրք	150 ռ.
24 տետր	72 ռ.
4 մատիտ	16 ռ.
2 գրչակոթ	8 ռ.
24 գրչածայր	24 ռ.
2 նկարչ. տետր	14 ռ.
1 թանաքաման	3 ռ.
թանաք	13 ռ.
	300 ռ.

Եվ հաշվելով, որ 200 աշակերտ իբրև ազատագրության կռվին զոհ գնացած անձանց զավակներ, կարիք կզգան նպաստի, կպահանջվի 300 ռ. x 200 = 60.000 ռ.- ընդամենը- 200.000 ռուբլի:

Հանրային կրթության և արվեստի մինիստր
Գիվանապետ

Օրինագիծ

15 մանկապարտեզ բանալու և այդ նպատակի համար Հանրային կրթության և Արվեստի Մինիստրության անունով 222000 ռ. վարկ բանալու մասին:

Հոդ. 1. Թույլ տալ Հանրային կրթության և Արվեստի Մինիստրության բանալ 15 մանկապարտեզ:

Հոդ. 2. 15 մանկապարտեզի ծախսերը հոգալու համար Հանրային կրթության և արվեստի մինիստրության անունով բանալ վարկ 1) 45000 ռ. դեկտեմբեր ամսվա ընթացիկ ծախսը հոգալու համար, 2) 177000 ռ. միանվագ ծախսերը հոգալու համար:

Մինիստր նախագահ
Հանրային կրթության և արվեստի մինիստր

Կրթության գործը գաղութներում մեջ*

Ա

Կրթությունը,- ըսավ ընկեր Աղբալյան,- ազգային և դասակարգային տիրապետության զենք է:

Մեր ներկա հասարակական կազմը այնպես մը եղած է, որ ուրիշ առանձնաշնորհումներու կարգին, կրթությունն ալ մենաշնորհը դարձած է քաղքենի, պուրժուա դասակարգին ձեռքը: Ան է, որ իր զանազան միջոցներովը կտիրանա կրթության, ան է, որ կկատարելագործե գայն, իսկ հանրային կրթությունը իբրև փշրանք կտրվի ժողովրդական տարրերուն, աշխատավորներուն: Որովհետև տիրող կարգերուն համար հաճելի չէ, որ բանվորն ու աշխատավորը ուսյալ ըլլան: Չէ՞ որ տիրելու զենք մըն է կրթությունը:

Ազգերու պայքարին մեջ ալ կրթությունը մեծ դեր կկատարե: Համաշխարհային մրցումին մեջ գերազանց զենք մըն է գիտությունը: Հարուստը, ինչպես անհատական, նմանապես նաև ազգերու կյանքին մեջ միշտ հաղթական է, հարուստ դրամով, արդյունաբերությամբ և գիտությամբ:

Իսկ հարուստ ըլլալու համար իբր արդյունաբերող և իբր պատերազմիկ, անհրաժեշտ է դարձյալ կրթված բանվոր և զինվոր ունենալ:

Այսօր մենք գաղութներու մեջ տիրապետության խնդիր չունինք. ըլլա թվով, ըլլա իրավական վիճակով թույլ ենք մենք: Մեր միակ խնդիրը գոյության և ապրուստի հարցն է:

Բայց թերի է միայն ապրելու մասին մտածելը, որովհետև ո՞վ չի գիտեր, որ մեր ապրած միջավայրին տարրերուն հետ ձուլվելով, կրնանք ավելի դյուրությամբ ապահովել մեր ապրուստը, ո՞վ չի գիտեր, որ այդ կերպով հազար ու մեկ հոգերն ազատած կըլլանք: Այնպես որ հոս խնդիրը ոչ թե ապրուստի հոգովը կներկայանա, այլ հայ մնալու: Էականը այն է, որ մենք ապրինք, հայ մնալով ապրինք:

Կրթությունը, որ մենք կուզենք ունենալ, զենք է նույնպես այս տեսակետն, զենք՝ ազգայնորեն հարատևելու համար: Հետևաբար մեր

* Շաբաթ իրիկուն, Ամեր. Միչընի սրահին մեջ, ընտրյալ բազմությանը առջև տեղի ունեցավ ընկ. Նիկոլ Աղբալյանի բանախոսությունը՝ «Կրթական գործը Գաղութներու մեջ» հետաքրքրական նյութի շուրջ:

Ընկեր Աղբալյան պարզ ու հստակ եղանակով մը անմիջապես նյութին անցնելով, պարզեց գայն բազմակողմանի կերպով մը, որ կրնա կրթական ծրագրի մը նախատարերքը կազմել: Նկատի ունենալով մասնավորաբար գաղութներու կրթական կյանքի կազմակերպման անհրաժեշտությունը, կներկայացնենք այս գեղեցիկ բանախոսությունը, որքան հմար է իր գլխավոր գիծերուն մեջ:

կրթությունը պետք է ունենա երկու էական հատկանիշ-ազգային և գործնական:

Ազգային բառը շփոթ է շատերու մտքին մեջ: Ազգությունը զանազան խավերն կազմված է, բայց փոքրամասնություն կազմող խավը, քիչը, երբեք ազգ չի կազմեր. ազգը մեծամասնությունը, շատն է, այսինքն աշխատավոր զանգվածը.- բանվոր, արհեստավոր, պաշտոնյա, մանր առևտրական: Եվ երբ կսենք **ազգային** կրթություն, ատով ըսել կուզենք, որ մեր կրթությունը պետք է համապատասխանի աշխատավոր զանգվածի շահերուն, անիկա աշխատավորության հաջողության զենքը պիտի ըլլա, անոր ազգայնորեն հարատևելու միջոցը: Եվ այդ զանգվածը կրթության իրավունք ունի, ոչ միայն իր ճնշող թիվովը, այլ որովհետև կրթվելու նյութական միջոցներն ալ չունի:

Բայց բավական չէ ապրուստ և կրթություն տալ գաղութի մը հայության: Անհրաժեշտ է, որ այդ կրթությունը ըլլա որոշ ուղղությամբ, որոշ նպատակով: Պետք է կրթությունը ձգտի ոչ միայն ազգայնության պահպանման, այլև պետք է գաղութը կապե հայրենիքին ու անոր գաղափարին: Առանց այս վերջին նպատակին կրթությունը կմնա թերի:

Արդ, հոս էական խնդիր մը կներկայանա, գաղութներու հայությունը ինչ պիտի նկատե ինքզինքը իր ապրած միջավայրին մեջ.- պանդուխտ, թե քաղաքացի. այսինքն պետք է մենք մեզ նկատենք իբր ժողովուրդի մը մեկ մասը, որ դժբախտ պարագաներու բերումով, մեր հայրենիքեն հեռացեր ենք, և լավ օրերու կսպասենք վերադառնալու համար, թե՞ քաղաքացիներ այդ երկրին, ուր կապրինք: Պիտի հրաժարի՞նք մեր տենչերեն, մեր կարոտեն ու հայրենիքեն, թե իբրև ժամանակավոր հյուրեր մեր եղած տեղերը, պիտի պատրաստվինք մեր բուն հայրենիքին համար: Պարզ է, որ մեր հայրենիքը, այն, որ կա այսօր, և այն, որ վաղը պիտի ըլլա, մեր նպատակը պիտի կազմե. անոր համար աշխատիլը մեր պարտականությունը պիտի կազմե և անոր մասին հոգածությունը մեր կյանքի բովանդակությունը: Մենք, գաղութի հայերը պետք է դառնանք քաղաքական ազդակ մեր հայրենիքին համար, ուժի, օժանդակության մթերք՝ անոր զարգացման համար:

Մեր կրթությունը պետք է նկատի առնե այս պարագան և ձգտի այս նպատակին: Մեր կրթությունը պետք է պատրաստե հայ մանուկ սերունդը իբր քաղաքական ազդակ, ոչ թե միայն իբր պարկեշտ մարդ, պարկեշտ հայ, վերացականորեն: Եվ այսպես մեր կրթությունը պետք է հետապնդե այնպիսի նպատակ մը, որ պատշաճի, ոչ թե օտար միջավայրի քաղաքացի հայուն, այլ հայրենատենչ պանդուխտին: Հայրենատենչ

պանդուխտ հայուն ոգին է, որ պետք է վառ պահել և մշակել, այս է մեր կրթության տեսական ծրագիրը:

Սակայն անհրաժեշտ է նախ ապրիլ, մեր նյութական գոյությունը պահել, ուստի կրթությունը պետք է ըլլա գործնական, այսինքն հաջողության նպաստող: Կրթությունը ընդհանուր պատրաստության հետ գործ ունի, կյանքը բազմազան է և մենք հարկադրված ենք կյանքին համապատասխան պարտադրություն ունենալ: Ուստի պետք է արթուն միտք ունենան մեր սերունդները և ձեռական աշխատանքի տարրական հմտություններ: Այսպես ծշտելով կրթության նյութն ու մեթոդը, ընդհանուր կերպով, կրնանք քիչ մը ավելի մանրամասնության իջնել: Գործնական հաջողության համար անհրաժեշտ են լեզուներ և գիտություն, աշխատանքի վարժություն, արվեստ և առողջություն:

Լեզուներեն գոնե երեքը անհրաժեշտ են, մայրենի լեզուն՝ ազգայնության պահպանության համար, տեղական լեզուն՝ գործի հաջողության և քաղաքական օգտակարության համար և օտար լեզուն՝ (անգլ., ֆրանս., գերմ. և այլն) ընդհ. քաղաքակրթության հետ շփում ունենալու համար քանի որ անբավական են մեր մայրենի լեզուն և մշակույթը:

Աշխատանքի վարժությունները ոչ միայն իբր արհեստ արժեք ունին, այլև ընդհ. զարգացման իբր միջոց: Ձեռքի վարժությունը մտքի զարգացման նախապայմանն է: Քաղաքակրթությունը ոչ միայն հղացում է, այլև մանավանդ կատարում, իրագործում: Ինչպես լեզուն իմացական կրթության հիմն է, այնպես ալ աշխատանքը նյութական կատարման հիմն է: Այնպես որ աշխատանքը իբր հիմնական առարկա պետք է ուսուցվի: Ասիկա ոչ միայն պարզ վարժություն է, այլև ծանոթություն, զարգացման տարր, ոչ թե բառական, այլ գործնական իմաստով:

Արվեստի ուսուցումն ալ էական տեղ պետք է ունենա մեր կրթության մեջ: Արվեստը հանրակեցության, հավաքական կյանքի ազդակներն են: Նվագ, երգ, պար, նկարչություն և այլն կնպաստեն այդ ոգիի զարգացման: Մարդկային հոգիին բերանը միայն լեզուն չէ, այլ և մարմնի մյուս մասերը: Արվեստն ալ լեզու մըն է, որ կյանքը ավելի դյուրին և հաճելի կդարձնե, ան ալ հարատևելու պայման մըն է:

Նույն նպատակին կծգտին նաև մարզանքն ու խաղը, որոնք միացած աշխատանքին, կկազմեն աշակերտին բնավորությունը, կնպաստեն հավաքական ոգիի զարգացման ինքնիշխանության, կարգապահության և առողջության զարգացման:

Ահա հիմնական պայմանները մեր ըմբռնած կրթության: Բայց կա դեռ մեթոդը:

Պետք է նկատի ունենալ, որ բոլոր հմտությունները գործնական են: Իմացական կրթությունն ալ պետք է ընթանա գյուտի ճամփով, ոչ թե պետք է ծանոթություններ ավանդել, այլ գտնել տալ: Աշակերտը ընդունարան, շտեմարան չպիտի ըլլա. ոչ թե թութակ պետք է պատրաստել, ինչպես այսօրվան ընդհանուր եղանակն է, այլ գործող և գտնող անհատ. և ասիկա կըլլա գործադրել, կիրարկել տալ սովորեցնելով:

Այնպես որ կրնանք ամփոփել մեր ըսածները հետևյալ բանաձևով. Կազմակերպել գաղութներու կրթությունը, նպատակ ունենալով ազգայնորեն հարատևել հայությունը գաղութներու մեջ, տալով անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ ստեղծական մեթոդով:

Բ

Այս տեսական և գործնական կրթությունը իրագործելու համար անհրաժեշտ են կարգ մը նախապայմաններ:

Առաջին կարգին վրա կուգա ուսուցչին խնդիրը:

Մեր կյանքին մեջ ուսուցիչներուն մեծ մասը պատահական տարրերէ կազմված է: Հազվագյուտ են այն անձերը, որոնք միմիայն ուսուցչության ասպարեզին համար պատրաստված ըլլան: Անշուշտ փորձառությունը իր արժեքը ունի և գնահատելի է, բայց անհրաժեշտ է տեսական և գործնական մասնավոր պատրաստություն: Ասոր համար անհրաժեշտ է, որ վարժապետանոց մը հաստատվի, ուր հայ ուսուցչության նվիրվողները գան՝ պատրաստվելու: Ուսումը պետք է ծրի ըլլա ապագա հանձնառություններով փոխարինված: Բայց որպեսզի տեսական արդյունքի մը կարելի ըլլա հասնիլ, որպեսզի վարժապետանոցը դատարկ չմնա, և ուսուցչությունը իսկապես ընտրյալ ասպարեզ դառնա, պետք է, որ ուսուցիչը բավարար չափով վարձատրվի, անոր աշխատանքը տարիներու ընթացքին, օր. հնգամյակե հնգամյակ ավելի բարձր գնահատվի և վերջապես ծերության օրերուն կենսաթոշակ սահմանվի, ազատ մնալով քմահաճույքներէ: Ուսուցիչը միայն մեկ պատճառով պետք է պատժվի, իր արհեստագիտական, իր ասպարեզին հատուկ հանցանքին համար, ուրիշ որևէ պատճառ չի կրնա ըլլալ:

Վարժարաններու շենքերն ալ, պարզ է, որ պետք է հարմարցվին առողջապահական և մանկավարժական պահանջներու: Արդեն եղածները պետք է սրբագրվին, իսկ նորերը պետք է կառուցվին շատ զգուշությամբ:

Դպրոցական կյանքին մեջ շատ կարևոր տեղ մը կգրավեն մալ դասագիրքերը: Ո՞վ չի գիտեր, որ մենք դասագիրք չունինք, շատ ունինք, բայց պետք եղածը կպակսի: Մեր դասագիրքերը պատրաստված են

հաճախ պատահականորեն և զուրկ են նորագույն ու առողջ սկզբունքներու համապատասխան հանգամանքէն: Դասագիրքեր ունինք, որոնք փոխանակ բան սորվցնելու, կշիռեցնեն աշակերտը և բռնի տգիտության կդատապարտեն: Անոնք պետք է ըլլան պարզ, հասկանալի և ամփոփ: Բայց որպեսզի կրթական ծրագրի միություն գոյանա, և կրթական կյանքը իսկապես բարգավաճ ու ազգային հանգամանք մը ունենա, անհրաժեշտ է ստեղծել մեկ քանի կրթական տեսչություններ: Այսպես՝ Եգիպտոս, Սուրիա, Պալեստինա և Ամերիկա ամենայն հարմար վայրերն են իբրև հոծ հայության կենտրոններ, ուր կարելի է գործադրել այս ըսածները:

Բայց մինչև այժմ մենք խոսեցանք տարրական կրթության մասին միայն: Տարրական կրթություն (նախակրթությունը) անբավարար է սակայն թե անհատական և թե մանավանդ ազգային տեսակետով:

Նկատի առնենք, որ մանուկը 12-16 տարեկանին կավարտե մեր նախակրթարանները և հետո կերթա օտար կրթարաններ կամ կյանքի մեջ, որոնց ոչ մեկին համար պատրաստված է: Անիկա ազգային տարրական վարժարաններուն մեջ իր մանկությունը, իր անգիտակից շրջանն է, որ անցուցած է. բայց ճիշտ այն տարիքին, ուր իր մեջ կարթնանան ուժգնորեն իր զգացումները, իր գիտակցությունը, իր հակումներն ու ցանկությունները, պատանության ամենեն խանդավառ տարիներուն օտար վարժարան կերթա ան և կենթարկվի օտար շունչին, օտար դաստիարակության: Որպեսզի իզուր չկորսվին մեր ջանքերը, և պատանությունը մեր ազդեցության տակ ունենանք, պետք է երկրորդական կրթությունը մենք կազմակերպենք. պետք է առնվազն երեք երկրորդական վարժարաններ ունենանք, հարմար կենտրոններու մեջ, գիշերօթիկ բաժինով և անհրաժեշտորեն մալ հետևյալ մասնագիտական ճյուղերով - մանկավարժական, արհեստագիտական և առևտրական:

Ուսուցչի հարցը նորեն կներկայանա. ծրագիրները մեռյալ տառ կմնան, եթե չունենանք զանոնք գործադրողները: Պետք ունինք այս ճյուղերը դասավանդող ուսուցիչներու. այդ պատճառով ալ պետք է միջոցներ ստեղծենք ուսանողներ պահելու համար արտասահմանի մեջ, որպեսզի կարենանք հատկապես այս ասպարեզին և որոշ ճյուղերու համար պատրաստված ուսուցիչներ ունենալ թե՛ վարժապետանոցի, թե՛ արհեստագիտական և դպրոցական աշխատանքին համար և թե՛ առևտրական գիտությանց համար:

Այս ընդարձակ ծրագրին գործադրությունը ժամանակի կկարոտի: Կարելի չէ մեկ անգամեն կյանքի կոչել զայն. բայց մեր անհետաձգելի

նպատակը պետք է ըլլա ան, և մենք ամեն ջանք պետք է թափենք զայն իրագործելու համար, իբրև ազգային ձեռնարկ: Սակայն, կրնանք այժմեն իսկ անոր կարգ մը մասերը կիրարկել: Բուրբ աշակերտները երկրորդական կրթություն չեն ուզեր անպատճառ, կրնանք հետամնացներուն և փափաքողներուն արհեստագիտ. հմտություն տալ. կրնանք աշակերտներու մեկ մասին հայերենի և հաշվի դասավանդություն ընել միայն և մնացյալ ժամանակը հատկացնել արհեստագիտության, կամ սեփական արհեստանոց հիմնելով և կամ արդեն եղած արհեստանոցներու մեջ տեղավորելու աշակերտները: Այդ արհեստներու ընտրության մեջ երեք հիմնական նյութեր կրնան առաջնորդել մեզ,- փայտ, կաշի և երկաթ, որոնք բավական են ամենեն գործնական և շահաբեր արհեստները ուսուցանելու համար մեր աշակերտներուն: Ասոնք համեմատաբար մեծ գաղութներուն համար: Ինչպե՞ս պետք է կազմել փոքր, քանի մը տասնյակ տնվոր գաղութներու կրթական կյանքը:

Գ

Բավական չէ մտածել հոծ գաղութներու մասին: Մենք ունինք փոքրաթիվ գաղութներ, հոս հոն ցրված, ինչպես Եգիպտոսի մեջ, օր. Թամթա, Ջակագիկ և այլն. ուր հայ մանուկներ կան և կարոտ են հայ դպրոցի:

Այս տեսակ վայրերու մեջ կարելի չէ առանձին դպրոց պահել, բայց կարելի է այնպես մը կազմակերպել գործը, որ շրջուն ուսուցիչներ նշանակվին և վեց ամիս տեղ մը, վեց ամիս ուրիշ, մոտակա տեղ մը դասավանդություն կատարեն, տարրական դասընթացքով անշուշտ և միացյալ բաժիններու դրությամբ: Այս կերպով կարելի կլլա մեկ ուսուցիչով մեկն ավելի բաժիններ կառավարել և որոշ չափով օգտակար ըլլալ: Այս մեթոդը անհրաժեշտ է մասնավորաբար Ամերիկայի մեջ, ուր հայությունը ավելի ցրված է: Բայց պետք է այնպիսի միջոցներ ձեռք առնել, որ կրթությունը շարունակվի ընթերցումով: Այս տեսակետով անհրաժեշտ է գրադարաններ բանալ ժողովուրդին համար. թե՛ հաստատուն և թե՛ շրջուն գրադարաններ՝ ուսուցիչներուն հետ միասին. պետք է մասնավոր շենքեր ունենալ և վճարված պաշտոնյա, ինչպես քահանան:

Մեծ ուշադրության առարկա պետք է ընել հասարակության կրթության խնդիրը: Հասարակության մեջ կան երկու խավեր, անգրագետներ և ուսումնատենչներ, որոնցմե առաջիններուն պետք է, տևական դասընթացքի ձևով, ավանդել գեթ հայերեն ու հաշիվ, իսկ երկրորդներուն գիտություններ և լեզուներ:

Բայց չի բավեր ծրագիր կազմել: Կարևորը անոր իրագործումն է և

կազմակերպումը: Տարակույս չկա, որ համազաղութային համագումարի մը մտահոգություններեն մեկը պիտի ըլլա կրթական այս կարևոր խնդիրը: Բայց, եթե նույնիսկ ատենի մը համար կարելի չլլա համագումարի մը հրավիրումը, պետք չէ անգործ նստիլ: Պետք է դիմել ուրիշ միջոցի: Այսպես տեղական ազգային իշխանությունները, իրենց շրջանին գործերը կարգադրելու համար կրնան համագումար կազմել և ընթացք տալ օրվան այս կենսական հարցերուն լուծման:

Իրագործման պայմաններեն մեկն ալ նյութական միջոցներու ստեղծումն է: Պետք չէ հուսահատիլ սակայն, քանի որ կարելի է գտնել զանոնք: Նախ ունինք ազգային եկամուտներ, որոնք տևական հասույթներ են: Մասնակի հանգանակություններ ալ կարելի է ընել, որոնց հաջողության կրնան նպաստել հայրենակցական միությունները: Ասկե զատ կարելի է օգտագործել արդեն եղած կտակները և կամ նոր կտակներու կազմության ատեն ներշնչել կրթական կյանքի զարգացումին ու սաներ պահելու անհրաժեշտության գաղափարը: Փոքր գաղութներն ալ անշուշտ իրենց աջակցությունը պիտի բերեն: Ասոնցմե զատ դեռ կարելի է օտար պետությանց օժանդակությունը ապահովել, դյուրատար պայմաններ ձեռք բերելու տեսակետեն:

Ինչպես կտեսնեք, մեծ գործ կա և անհրաժեշտ է. մեծ ճիգ թափել շուտափելի արդյունքի հասնելու համար:

Մեզի համար էականը ազգայնության պահպանությունն է: Ազգը, սակայն ոգի է, որ պետք է սնանի, եթե կուզենք, որ ապրի ու շնչի: Այս տեսակետեն անհրաժեշտ է ազգային լեզվի ուսուցումը: Ազգային լեզուն և գրականությունը մեր օրերուն, վճռական նշանակություն ունին հայ մանուկին ու հայ մարդուն պահպանման, հայ ազգայնության զարգացման տեսակետեն: Լեզուն կպատրաստե մտածողությունը, ոգին. օտար լեզուն, վստահ եղեք, որ կպատրաստե օտար մտայնություն և օտար ոգի: Այս պատճառով է, որ կսենք, թե ոչ միայն նախակրթությունը, այլև երկրորդական ուսումը պետք է տանք հայ դպրոցներու միջոցով: Հայ ժողովուրդը մինջև այժմ ավանդական կապերով մնացել է առավելապես. այժմ այդ կապերը, եկեղեցին օրինակ, բավական չենք, պետք է գիտակցական դարձնել զանոնք, ինչ որ կարելի է դպրոցով և հայ գրքով:

Գիտենք, թե ծուլման հակումը երթալով կշեշտվի մեր վրա, շնորհիվ տիրող պայմաններուն: Հայ ըլլալեն գործնական օգուտ չեն տեսներ անհատները, ընդհակառակը: Հետևաբար պետք է զորավոր նկարագիրներ պատրաստել և կրթական այնպիսի հաստատություններ ունենալ, որ նպաստեն ոչ միայն ազգային ոգիի զարգացման, այլև կյանքի մեջ

հաջողելու: Եկեղեցին բավարար չէ առանձին. ազգայնությունը զորաց-
նելու համար. տարրական վարժարաններն ալ անզոր են, անոնց կող-
քին երկրորդական վարժարանը անհրաժեշտություն մըն է այլևս: Եթե
գոյություն չունենային Ներսիսյան, Կենտրոնական ճեմարան, Սանա-
սարյան երկրորդական վարժարանները, մեր մշակույթը շատ տկար պի-
տի մնար:

Դժբախտաբար հայրենիքեն հեռու ենք: Այնտեղ պետք չունիք ծուլ-
ման վտանգին համար մեծ ճիգեր թափելու, որովհետև հայրենիքի ամեն
մեկ քարը հայ կպատրաստե արդեն: Հայրենիքեն դուրս, օտար հորի-
զոններու տակ այնպես չէ, ծուլումի վտանգը ամեն կողմէ կա ու կմեծ-
նա. մենք պետք է հակազդենք. պետք է ազգայնորեն կարծրանանք
չլուծվելու համար: Այս բարերար կարծրացումը կիրագործվի, եթե հա-
վաքականորեն զիտակցինք կրթական կյանքի, ազգային ոգիի մշակ-
ման այս անհրաժեշտությունը և հավաքական ճիգերով ալ ընդառաջ եր-
թանք այս նպատակին իրագործման:

Յուսաբեր, 1924, № 15-17

Մի խումբ ուսուցիչներ, «Մեր դպրոցը», Ա. տարի*

Այս նոր դասագիրքը ձգտում է գոհացում տալ դասավանդության նո-
րագույն պահանջներին: Ամբողջ այբբենական մասը կազմված է ձեռա-
գիր օրինակներով և համեմատաբար փոքր տեղ է բռնում (28 էջ): Գլխա-
գիր և փոքրատառ այբուբենն ամբողջովին անցնելուց հետո է, որ աշա-
կերտներն այս դասագրքով պիտի սովորին տպագիրը ճանաչել ու կար-
դալ: Տպագիր այբուբենի վարժությունները, որ ընթանում են ձեռագրին
զուգահեռ՝ նույնպես մեծ տեղ չեն բռնում. ընդամենը 10 էջ: Բոլոր ձեռա-
գիր վարժությունները ուղղահայաց գրություն ունին. վերջերս այդ տե-
սակի գրության սկսել են առավելություն տալ: Ամբողջ դասագրքում ձե-
ռագիր և տպագիր հատվածները համարյա կես առ կես են, այն տարբե-
րությամբ միայն, որ սկզբում բացառապես իշխում է ձեռագիրը, իսկ վեր-
ջում գերակշռում է տպագիրը: Ընթերցանության հատվածներից շատե-
րը գրված են ձեռագրով, որ շատ կնպաստե արտագրության, թելադրու-
թյան և վայելչագրության գործին: Այդ ձեռագիր հոդվածները ավելորդ

* Պատկերազարդ ձեռագիր այբբենարան և ընթերցարան արտագրության ձեռագիր
օրինակներով, Թիֆլիս, 1913, 80 էջ: Նվիրվում է հայ գրերի գյուտի 1600-ամյակի և տպագ-
րության 400-ամյակի տարեդարձին:

են դարձնում արտագրության և թելադրության հատուկ օրինակների
գործածությունը՝ գոնե առաջին տարին:

Դասագրքի կազմողները «մի խումբ ուսուցիչներ» լինելով աշխատել
են օգտվել իրենց փորձառությունից. և իսկապես դասագրքի մեջ ոչ այն-
քան տեսական մանկավարժների սիստեմամտություն է նկատվում, որ-
քան գործնական մանկավարժների դիտողության ու փորձի արդյունք:
Դասագիրքն առատորեն պատկերազարդված է՝ բառ ու պատկեր իրար
հետ կապելու ձգտումով: Հոդվածների և օրինակների լեզուն ու բովան-
դակությունը ընդհանուր առմամբ պարզ է և մատչելի մանուկների հաս-
կացողության: Փորձը ցույց կտա, թե որքան հետաքրքրական է հատ-
վածների բովանդակությունը, որովհետև մանուկների ճաշակն ու պա-
հանջները տարբերվում են մեծերի ունեցածից: Համեմայն դեպս բոլոր
հատվածների մեջ պահպանված է մի ընդհանուր հատկություն, որ կա-
րող է հաջողության գրավական լինել. նկարագրությունն ու խրատը
աննշան տեղ են բռնում, գործողությունն՝ առաջնակարգ: Մանուկները,
որ առողջ բնագոյ ունեն, սիրում են գործերն ավելի, քան մտքերն ու շա-
տախտությունը:

Ընթերցարանի հատվածները մանր են, ինչ որ մի առավելություն
պետք է նկատել, քանի որ կարելի է մի դասում լրիվ ավանդել տրված
նյութը:

Հոդվածները դասավորված են ըստ եղանակների: Հորինողները
դրանով ձգտել են գոհացում տալ դասատվության այն պահանջին,
որով ավանդած նյութերը պետք է համապատասխան լինեն ավանդման
ժամանակին: Մի ժամանակ՝ և ֆրանսական դասագրքերից շատերում
մինչև այսօր՝ հոդվածները հարմարեցնում էին հինգ զգայարանքներին,
այսօր տարվա եղանակներին համապատասխան դասավորություն են
տալիս: Մենք չենք մտնում այս համակարգերի քննության մեջ, մենք ու-
զում ենք միայն ասել, որ հոդվածների դասավորության մեջ որոշ կարգ
կա պահպանված:

Ենթադրելով, որ մինչև հունվար աշակերտները վերջացրած կլինին
դասագրքի այբբենական մասը, ընթերցարանն սկսվում է ձմռան եղա-
նակին հարմար նյութերով:

Բայց հորինողներն այնուհետև դրել են մնացած երեք եղանակներին
հարմարցրած նյութեր, որ նշանակում է, թե առձան և աշման նյութերը
երեխաները պետք է անցնեն գարնան սկզբին ու վերջերին, ինչ որ
խախտումն է ընդունված սկզբունքի: Մեր կարծիքով դասավանդության
առաջին տարին կարելի էր գոհանալ ձմռան և գարնան նյութերով, աշ-

նան և ամռան նյութերը թողնելով երկրորդ տարվան առաջին կիսին, եթե հորինողները մեծ նշանակություն են տալիս պարապմունքների նույն-ժամեության սկզբունքին:

Այս դասագիրքն ունենալով մանկավարժական առավելություններ, ամթերի չէ լեզվական և հմտության կրկին տեսակետներից: Վարժու-թյունների մեջ պատահում են այնպիսիները, որ անկարելի է հաջող հա-մարել: Օրինակ՝ էջ 9 կարդում ենք. «Ընտանի կատուն կտաս կուտի պատի տակ, սպաս կուտի պատի տակ, սպաս կուտի, պաս ու ուտիս պաս կուտի»: այս հատվածը գուցե վատ չէ իբրև վարժություն, բայց իբրև բովանդակություն ու լեզու անհաջող է և մինչև իսկ անիմաստ: Ան-միջապես դրա տակ կարդում ենք. «**Մուկը** ասավ մըկանը»: Շատերը նկատած կլինեն, թե ինչպես երեխաները դժվարությամբ սովորում են բառերն իրար կցել, նախորդի բաղաձայնը հաջորդի ձայնավորի հետ արտասանելով: Վերը բերված օրինակը նրանց ավելի համառել պիտի տա իրենց հոռի արտասանության վրա: Հետևյալ էջում եզանն ուզում են «արտը տանել», որ այնտեղ «պոկի և ուտի»: արտը եզան ուտեցնե-լը չպետք է սիրո նշան համարել և եթե այդ հակումը լինի իսկ երեխանե-րի մեջ, պիտի արմատախիլ անել: Հետևյալ վարժությունը, որ լուսնին է վերաբերում, նույնպես անհաջող է, ինչպես և հաջորդը, ուր շուն ու կա-տու սիրով ընկերներ են երևում, ինչ որ հակառակ է իրականության: Դրանից հետո եկող վարժությունը մութ է բավական. հատկապես այն խոսքը, թե «մեր շունը տասն է, սա (էջը) մեկ»: էջ 12-ում մանը իր թո-ռանն անվանում է «ուրուր»: որքան գիտենք ռուս մամիկներն են իրենց թռռներին *сорок* անվանում, մենք գոնե նման փաղաքշանք լսած չենք հայ նամերից: Արորին վերաբերող վարժության մեջ ակնհայտնի սխալ-ներ կան. «օրոր-շորոր վար արա»,- ասում են արորին, որ մաճկալի ճնշման տակ չպիտի համարձակի օրորվել. «ուր-մուր ակոս շարի»,- ասում են նրան, մինչդեռ ակոսների ուղիղն է գերադասելին ու ցանկա-լին: Հետևյալ հատվածում ծիտը կոչվում է «ծըվծըվան», որ ավելի մկան համար կասեն, քան ծտի: Այդպիսի լեզվական և հմտության պա-կասներ նկատվում են և «Բզեզի երգում» (էջ 19), «Ճուտիկի» մեջ (էջ 21), «քթոցի» մեջ (էջ 23), «համբույր» հատվածում (էջ 25): «Ծառի ճյուղին» վարժության մեջ կարդում ենք (էջ 27), որ սոխակը բուն է հյուսել ու «կախ արել ծառի դալար ճյուղերից»: Հմտության պակաս. արևադար-ձային երկրներում միայն կարելի է հանդիպել թռչունների, որոնք կախ-ված բներ են շինում: 29 էջում կարդում ենք. «պստիկ Իսակ, Սիսակ, Մի-սակ, պըտ-պըտուրիկ իրար տեսակ», որի միտքը պարզ է անշուշտ մի-

միայն հորինողների համար: Ընդհանրապես դասագրքի մեջ նկատելի է հանգի գերակշռությունը իմաստի վրա, ինչ որ մեծ պակասություն պետք է նկատել: Նմանաձայն և նույնահանգ բառերի հակումը առաջ է բերում անհաջող հատվածներ, ինչպես «խոտն ու խուրման» (էջ 32), «ա՛յ փեսիկ» (էջ 36): Մի տեղ (էջ 37) մանուշակը կոչվում է «նուբար». «նուբարը», որ պարսկերեն, բառացի նշանակում է «նոր պտուղ» և չի կարելի ծաղիկների համար գործ ածել: Հազիվ թե մանուկները ըմբռնել կարողանան այսպիսի դիմում աղբյուրին (էջ 38). «դու կյանք ես նաշ-խում». սա մի իմաստասիրություն և մի անհաջող պատկեր է միանգա-մայն:

«Ընթերցարանի» հատվածների մեջ կան հաջողները, բայց պակաս չեն և անհաջողները. այսպես են մեր կարծիքով «Կաչաղակը» (41), «Դե-պի դարոցը» (42), որ մանուկին տրամադրում է դասի կեսը առավոտյան պատրաստել, «Տատմեր աղվեսը» (45), որ բացատրության կարոտ բա-ռեր ու արտահայտություններ ունի և այլն:

Դասագրքում տեղ են գտել մի-երկու ժողովրդական նյութ, ինչպես «Ուր զնամ» (43), «Լազլազ» (67), «Բյուրեղ» (71), որոնց իմաստը հա-զիվ թե մատչելի են ոչ միայն մանուկներին, այլև նրանց ուսուցիչներին: Մեր ժողովրդական բանահյուսության այդ հատվածները, որ հնադար-յան դրոշմ են կրում, կարոտ են մանրապատում մեկնության: Ժողովրդա-կան նյութերից պետք է ընտրել ամենամատչելիները կամ սրանց բոլո-րովին մատչելի մշակում տալ:

Չնայած իր պակասություններին, այս դասագիրքը մեր կարծիքով կարող է հաջողությամբ գործածվել դպրոցներում: Հմուտ և բանիմաց ուսուցիչների նկատողությունները ուշադրության առնելով, հորինողնե-րը հետագա տպագրությունների ժամանակ կարող են ավելի հմտու-թյուն հանդես բերել, քան այս անգամ: Դասագիրքը կազմակերպողները պետք է գիտական և ազգագրական մեծ պատրաստություն ունենան, մանուկների հոգեբանության ծանոթ լինեն նաև տեսականապես և զու-գորդեն իրար անձնական փորձառությունն ու տեսական պատրաստու-թյունը:

Մի քանի խոսք Թ. Յ. Ն. մասին

Հայտնի է, որ մեր աղջիկները սկզբնական կրթություն ստանալով ծխական դպրոցներում, միջոցներ չունեն իրենց ուսումը շարունակելու որևէ ուրիշ միջնակարգ, չեն ասում բարձրագույն հաստատության մեջ, ինչպես մեզ հայերիս համար թեմական դպրոցներն են: Ծիշտ է՝ ավարտողների մի շատ փոքր մասը մի կամ երկու տարի պատրաստվելով մտնում է իզական գիմնազիոնը կամ պրոգիմնազիոնը, սակայն այդ մտնելը մեծ ծախսեր է պահանջում, ուրեմն դրանից կարող են միայն հարուստ վաճառականներ ու լավ ռոճիկ ստացող պաշտոնյաների աղջիկներն օգտվել, այս մեկ, և երկրորդ՝ օգտվողները մեծ մասամբ այն տեղացիները կլինեն, ուր կա իզական գիմնազիա կամ պրոգիմնազիա, իսկ հայտնի է միևնույն ժամանակ, որ այդ հաստատությունները մեր շատ քիչ գավառական քաղաքներում կան:

Ասածիցս հետևում է, որ գավառական քաղաքների, լինեն դոքա թե՛ գիմնազ կամ պրոգիմնազ ունեցող, թե՛ չունեցող միևնույն է - սկզբնական դպրոցներում ուսումն առած աղջիկները մեծ մասամբ զրկված են ուսում շարունակելու միջոցներից մասամբ չունևորության պատճառով, իսկ գյուղերում ծխական դպրոցներն ավարտած բոլոր աղջիկները զրկված են իրենց ստացած ուսումը գործադրելուն նպաստող բոլոր բարեհաջող պայմաններից:

Այս վիճակի մեջ միայն աղջիկները չեն, <համարյա> գյուղերում սովորող բոլոր երեխաները և թեմական դպրոց ունեցող քաղաքների սկզբնական ուսումնարանում սովորողների մեծ մասը անկարող է շարունակել յուր ուսումը - գյուղերից և ունևորների, իսկ թեմ <ական> դպրոց ունեցող քաղաքներից միջակ և մասամբ ստորին դասի երեխաներն են ուսանողների մեծ մասը կազմում: Մնացած աշակերտների ահագին մեծամասնությունը զուրկ է առաջ գնալու միջոցներից:

Երբ չկան ուսումնարաններ և նպաստող հանգամանքներ, որոնց շնորհիվ չառաջադիմելու դատապարտված է մատաղ սերունդը համարյա ամբողջապես, մնում է դրա առաջն առնել ուրիշ միջոցներով, որոնք բավականություն տան թե՛ ժամանակի և թե՛ այդ միջոցներից օգտվողների պահանջներին: Ընթերցանության սեր ու պահանջ զարթեցնելուց ավել առ այժմ մենք ոչին չունենք, դեռ գյուղերում, նույնիսկ երկար ժամանակ դպրոց ունեցած գյուղերում չկա ինտելիգենցիա, այնքան պատրաստություն ունեցող, որ կարողանա <գիտակցորեն>

դպրոցների կամ դասախոսությունների հոգսն ու ղեկավարելը յուր վրա առնել, այդպիսի «բարիքներից» զուրկ են նույնիսկ մեր գավառական քաղաքները: Դրանց վրա պետք է ավելացնել և մի քանի ուրիշ աննպաստ պայմաններ... (Մեզ թվում է, թե հրատարակչական ընկերությունն այդ միտումներով է առաջնորդվել, այդ կարիքն է աչքի առաջ ունեցել, որը սակայն մինչև այսօր էլ, մնում է կարիք, որին շատ չնչին չափով բավականություն է տվել հրատարակչական ընկերությունը):

Հառաջադիմելու ամենահուսալի ճանապարհն անշուշտ ինքնակրթությունն է: Այդ մտքով մի անգամ տոգորված նրան հետևող մարդը անդադար առաջ է գնում հարթ մակերևույթի վրա գլորվող գունդի նման, որին խթան տվել են ուսումնարանում: Սակայն այդ ձգտումն ունեցող մարդիկ միշտ շատ քիչ կան: Դրա պատճառները պետք է որոնել մեր դպրոցական գործը ղեկավարողների դեպի իրենց պարտավորությունն ոչ լուրջ ու բարեխիղճ վերաբերմունքի մեջ: Մեր թեմական դպրոցներում նույնիսկ սովորողները դպրոցից այդ ձգտումը չեն դուրս բերում, ուսուցիչները այդ մոռացության են տվել, ուր մնաց ծխական դպրոցներում: Ես իմ ամբողջ ուսումնարական կյանքում չեմ հիշում որևէ ուսուցչի, որ ասեր ու բացատրեր ինքնակրթության մեծ օգուտը, այդ կիսստովանեն և շատ շատերը, բախտի բերմամբ եթե հաջողում է մեկն ու մեկին պատահել որևէ գրքի կամ որևէ մարդու, որ նրան խթան լիներ և առաջ մղեր ինքնակրթության ճանապարհով... լավ, թե չէ, մեծ քանակությամբ մարդիկ են ճանաչում, որոնք ուսումնարանից դուրս գալուց հետո բացի լրագրից ոչ մի գիրք չեն առել ձեռքերը:

Այս հաջողությամբ կարելի է <գլուխ> բերել թեմական դպրոցներում, ծխական դպրոցներում դա անկարելի է, այնտեղ ամենամեծ խնդիրը ընթերցանության սեր զարթեցնելն է, որին ապա կհետևի և որոշ չափով մտավոր ու բարոյական զգացում: Ինձ գալով, ես ծխական դպրոցների նպատակը կսահմանեի այսպես. նոցա նպատակն է զարթեցնել - ընթերցանության սեր և բաց թողնել: Հոգվածս ես դիտմամբ աղջկերանց կրթության պակասի վրա ուշադրություն դարձնելով սկսեցի: Մենք շատ սիրում ենք կրկնել յուրացրած կամ չյուրացրած մտքեր, բայց շատ քիչ մտքեր և շատ դանդաղ կերպով են իրագործություն գտնում: Ինչ էլ լինի կնոջ մասին մեր ունեցած հայացքը, ինչպես էլ նայելու լինենք նրա իրավունքների, դիրքի, կոչման և <այլնի> վրա, մի խոսքով որ կողմից էլ քննելու լինենք «կանանց խնդիրը», մի բան մեզ համար անկասկած է. այդ այն է, որ հասարակական այժմյան կազմակերպության մեջ կինը ծնում է և դաստիարակում յուր երեխաներին, նա մայր է: Եվ բոլոր այն

հարցերի շղթան, որ կախված է կանանց խնդրից, այժմ, ներկայումս և դեռ բավական հեռու ապագայում այդ մտքից պիտի կախումն ունենա: Մենք պետք է պատրաստենք լավ մայրեր- թեև դա իհարկե չի բացառում այն, որ մայր լինելուց առաջ նոքա պիտի լինեն լավ մարդիկ և իրենց ամուսնու լավ ընկեր:

<...> սերը չէ, որ մեզ ստիպում է ուսում տալ աղջիկներին, այլ նոցա ավելի օգտակար և արդյունավոր դարձնելու ընտանեկան և հասարակական ասպարեզում, ցանկությունն ու դրան իրականացնելու ձգտումը: Ամեն տեղ որևէ ազգի կրթությունն սկսում են տղաներից, թեև ավելի խելացի պիտի լիներ սկսել աղջիկներից: Ինչ էլ որ լինի, այնուամենայնիվ, կանայք մեր ուշադրության գլխավոր առարկան պիտի կազմին և մենք ավելի պիտի կենտրոնանանք նոցա վրա, քան մարդոց, որովհետև նոքա են մանուկներ ծնողն ու դաստիարակողը: Նոցանից լավ մայրեր, իսկ տղաներից լավ հայրեր և երկուսից լավ ամուսին ընկերներ <...> և լավ <հասարակության> անդամներ պատրաստելն է մեր նպատակը լինելու:

Այս ընդհանուր դատողություններից անցնենք այն միջոցներին, որոնց մենք ունինք մեր ձեռքին և նոցա՝ որոնց ցանկալի կլինեն ունենալ մեր ձեռքում մեր վերոհիշյալ նպատակին հասնելու համար: Ես վերը ուսումնարանի նպատակը սահմանել ցանկացա այսպես՝ կարդալ գրել սովորեցնել, ընթերցանության սեր գարթեցնել և բաց թողնել: Այստեղ իսկույն մի հարց է ծագում - ասենք թե ընթերցանության աղի ջուրը խմած մարդ դուրս է եկել ուսումնարանից, որտե՞ղ նա կարող է հագեցնել յուր ծարավը և ինչ միջոցներով, ինչպես <...> ուսումնարանից դուրս եկած <գավառական> քաղաքների և գյուղերի աղջիկներն ու տղաները: Մեր դպրոցների մեծագույն մասը մի դասյան են, երեք բաժանմունքներով, որտեղից դուրս են գալիս կարդալ գրել իմացող աղջիկներն, իսկույն դառնում են ընտանիքի աշխատավոր անդամ, նոքա ավելի լավ պայմանների մեջ են գտնվում համեմատաբար գավառական քաղաքներում, ուր նոքա գոնե մինչև 16-18 տարին մնում են տանը, գյուղերում ավելի շուտ են ամուսնանում, դպրոցների 5-րդ բաժանմունքներում մեզ 15-ից ցած աղջիկներ չեն պատահել, ուրեմն մի դասյան դպրոցներից նոքա 13 տ. են դուրս գալիս: Գավառական քաղաքներում նոքա օրական մի կամ 2 ժամ ազատ ժամանակ միշտ կարող են գտնել, մանավանդ. եթե սիրում են ընթերցանությամբ պարապիլ, իսկ ամբողջ տարվա 1 դասերի գումարը նոցա, <Մորլեի> ասելով, 4-5 լավ գիրք ուշադրությամբ կարդալու միջոց կտա. իսկ մեր գրքերից նա ավել-

լի շատ կկարդա, որովհետև այն ասված է լուրջ և մեծ գրքերի համար: Այստեղ կան և ուրիշ պայմաններ, հոր և մոր կամայականությունը, ընտանեկան ավելի անբարեհաջող պայմաններ, սակայն նոցա առաջն էլ կարող է առնել կամ մասամբ նոցա ազդեցությունը չեզոքացնել այն ինտելիգենցիան, որ հավակնություն ունի կարծելու, թե մեծ գործ է կատարում, բայց առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրների վրա ուշադրություն չի դարձնում- եթե նա փոքր ի շատե սրտանց կպչի այսպիսի մի բեղմնավոր գործի, այն ժամանակ անկասկած գործը փոքր չափերից մեծ չափեր կընդունի և գործնական օգուտներով ցույց կտա յուր կենսունակությունը: Համարյա նույնը կարելի է ասել և մեծ գյուղերի մասին- փոքր գյուղերի թե՛ աշակերտները և թե՛ աշակերտուհիները շատ քիչ ժամանակ ունեն դրանց նման բաներով զբաղվելու, մանավանդ աշակերտուհիները, որոնք շուտ են կյանքի հոգսերին ու ցավերին մասնակից լինում, աշակերտները միջոց ունեն ծնունդ երկար գիշերները ընթերցանությամբ զբաղվելու, այդտեղ էլ պակասում են դեկավարները... Այսպիսի պայմաններում են գտնվում մեր ծխական դպրոցների ավարտածները: Վերևն ասածից երևում է, որ եթե կա անելու անհրաժեշտ բան, այդ կարելի է անել մեծ գյուղերի և գավառական քաղաքների մոտ սերունդի հետ, որոնք ինչ գործի էլ մտնելու լինեն, միշտ մի կամ երկու ազատ ժամ ունեն <...> ընթերցանությամբ պարապելու պահանջին բավականություն տալու:

Դառնամք մեր միջոցներին, որ մենք ունենք և որ ցանկալի է ունենալ: Ժողովրդական ընթերցանության համար մեզ մոտ շատ քիչ գրքեր կան, որոնք զանազան ուղղության են պատկանում և զանազան իրար հակասող «տեմդեցիաներ» ունեն: Այդպիսի գրքերի հրատարակությամբ մեծ մասամբ զբաղվում է մեր ընկ.: Մենք հրատարակչական գործունեության համար երեք նպատակ կորոշեինք, որոնցից մեկը նա բացորոշ ունի, իսկ մյուսները ցանկալի կլինեն, որ ունենար: Դոքա են. 1. Հրատարակել հուն նյութեր մեր ժողովրդական կյանքի վերաբերյալ, դրանք հետաքրքրվողների շատ փոքր մաս ունեն, 2. Հրատարակել ժողովրդական գրքեր, 3. ինքնակրթության նպատակով գրքեր: Առաջին տեսակի գրքերն աչքի առաջ ունեն հետավոր, սպասելի օգուտ, երկրորդ տեսակի գրքերը՝ մոտ, կենսական անհրաժեշտ օգուտ, անձնական և հասարակական բարօրություն: 3. Նպատակ ունեն զարգացած անհատներ պատրաստելու: Մենք մանրամասն կանգ առնենք վերջին երկուսի վրա, որովհետև նոքա մեզ հետաքրքրող խնդրի հետ շատ մոտ առնչություն և ուղղակի կապ ունեն:

<...> պայմանները, որոնց մեջ մենք գտնվեինք, վերին աստիճանի բարեհաջող լինեին, այսինքն, օր., մենք և բավականաչափ ազատ ժամանակ ունենայինք և գիտենայինք օտար լեզուներ, և անհրաժեշտ գրքեր հեշտությամբ ձեռք բերելու միջոցներ: Ես վաղուց եմ հետաքրքրվում այս գործով և նյութեր եմ հավաքում նրա վճռի համար- թե ինչպես է հասկանում ինքը՝ երիտասարդությունը ինքնազարգացման նպատակը և որոնք են այն սովորական միջոցները, որոնցով նա գործնականի մեջ վճռում է ինքնազարգացման խնդիրը: Այս հարցն այնքան էլ հասարակ հարց չէ: Ամեն մի գործի, մանավանդ փոքրի շատ է <...> գործի հաջող ընթացքի համար լավ կազմակերպության բացակայությունը միօրինակ կործանիչ նշանակություն ունի ամեն այն տեսակ պարապմունքի համար, որոնց նպատակների իրագործությունը պահանջում է շատ ժամանակ, շատ ճիգ և աշխատանք և այսպես ասած, հայտնի փորձառություն:

Համեմատելով ուսումնարանի տված զարգացումը, որքան էլ նրա կազմակերպությունը պակասություններ ունենար, ինքնազարգացման հետ, նա ավելի լավ պայմանների մեջ է դրած, քան վերջինը այն պահանջների վերաբերմամբ, որոնց պիտի բավականություն տա, վերը հայտնված մտքով, ամեն մի գործ, որ նպատակին փոքր ի շատ հաջող հասնելն ունի ի նկատի:

Սկսենք ամենազխավորից- այսինքն այն նպատակի դնելուց, որ աչքի է առնում երկու դեպքում էլ ուսումնարանական զարգացման թե ինքնազարգացման՝ մեր ասած մտքով, այսինքն որ, բոլոր այն <տեղեկագրերի> և սովորութքների (habits) ձեռք բերելու մտքով, որոնց կարող է տալ և այս կամ այն ուսումնարանը:

Ամեն ուսումնարան ունի յուր բոլորովին որոշ ծրագիրը, որի կազմողները իհարկե այնտեղ մտնող և իրենց զարգացումն ստացող սաները չեն, ինչպիսին էլ լինի նոցա ստացած զարգացումը՝ ստորին, միջին, թե բարձր, ընդհանուր, թե մասնագիտական: Ուրիշ բան է ինքնազարգացումը. այդ շրջան մտնողի դրությունը մոտավորապես նման է այս կամ այն ուսումնարանը նոր մտնող աշակերտի դրության, որովհետև երկուսն էլ մտնում են իրենց անիմանալի մի շրջան, ուր երբեք չեն եղել և որը նոցա բոլորովին անծանոթ է միայն այն էական զանազանությամբ, որ այս կամ այն ուսումնարանի աշակերտի հոգսը չէ, թե ուր կհասցնեն նրան, մինչդեռ ինքնազարգացմամբ պարապել սկսող մարդուն հարկավոր է իմանալ, թե նա ինչ բանի պիտի հասնի: Բայց հարցնում ենք, կարո՞ղ է միթե նա բոլորովին ճիշտ և, որ զխավորն է, բոլոր

ովին կանոնավոր կերպով որոշել նրա վերջնական նպատակը, որին կարելի է մտքի առաջ պատկերացնել ավելի կամ պակաս որոշակի գծերով և յուր բոլոր մանրամասներով միայն այն ժամանակ, երբ արդեն այդ նպատակին շատ մոտ ես գտնվում, երբ իրավունք ունես համարել քեզ նրան հասած կամ համարյա հասած?

<...> առաջնորդություն: Ով դեռ նոր է միայն փնտրում գիտություն, չի կարող ունենալ գիտություն, ուստի ոչինչ զարմանալու չկա այն բանում, որ ուսանող երիտասարդության ահագին մեծամասնությունը ինքնազարգացման նպատակի մասին չունի բոլորովին պարզ և բավականաչափ լայն հասկացողություն: Բավական է, որ նա զգում է նրա պահանջը, հասկանում է նրա անհրաժեշտությունը, նրա մասին մտածում է, խոսում և վիճում, ձգտում է դեպի նա և նրանով պարապում- վատ է միայն այն, որ նա շատ անգամ ստիպված պիտի լինի թափառել ինչպես խավարում, գնալ տփտփելով և <...>(քայտա), ընկնելով այնպիսի ճանապարհների վրա, որ չի տանում դեպի մտադրած նպատակը, և դուրս գալ հարկավոր ճանապարհից: Սակայն այս բոլորը ... միշտ չէ: Թողնված ինքն իր հոգածության, շրջապատի պատահմունքների և ժամանակի, բերմունքի, կամայականության հանձնված, նա իհարկե անկարող է յուր ուժերով մշակել ինքնազարգացման կանոնավոր կազմակերպություն: Իսկ կողմնակի մարդկանցից այդ գործում նրան օգնության համարյա ոչ ոք չի հասնում: Ինչ կասկած, ցանկալի է, որ ինքնազարգացումը մնար բոլորովին ազատ - և ես հենց ցանկանում եմ նրան ըստ կարելույն շատ ազատություն - բայց միևնույն ժամանակ, որ նա դուրս գա այն ճշմարիտ ու քառական դրությունից, որի մեջ նա մինչև այժմ գտնվում է՝ զուրկ լինելով որևէ խիստ մշակած և հանրաճանաչ առաջնորդող գաղափարից: Երիտասարդությունը ոչ միայն այս բանի կարիքն ունի, այլև ինչպես հետո կտեսնենք, ինքը զգում է դրա պահանջը. իսկ ամենաառաջին և ամենազխավոր առաջնորդող գաղափարը պիտի լինի նպատակը: Այժմ ավելի հեռուն գնանք. ուսումնարանական զարգացումը միշտ կատարվում է որոշ ծրագրով և հայտնի համակարգությամբ, որոնք հայտնի դեպքերում կարող են լավ կամ վատ լինել, բայց առանց որոնց կատարելապես աներևակայելի է որևէ ուսումնական գործ, և այս ինքնըստինքյան հասկանալի է: Բավական է, որ զարգացումն ունի որոշ նպատակ, մեջ է գալիս միջոցների և ճանապարհների հարցը, որոնք տանում են այդ նպատակին, հաստատում է գիտությանց այս կամ այն շրջանը, որոնք անհրաժեշտ են համարվում դրած նպատակը աչքի առաջ ունենալով: Հաստատվում է այն կարգը, որով այդ գիտու-

թյունները պետք է և կարող են խորացնել աշակերտները: Ինքնազարգացումն ևս չի կարող առանց ծրագրի և սիստեմի յուր գնալ, դոքա պիտի առաջ գան նախ՝ այն նպատակից, որին հետևում է նա, և երկրորդ՝ այն կապից, որ ունեն իրար մեջ զանազան գիտություններ, որոնք ամենամեծ հաջողությամբ և ամենամեծ օգուտով կարող են իրացվել միայն հայտնի հետևողականությամբ, բայց բանն այն է, որ ինքնազարգացման դեպքում այդ տեսակ ծրագրի և սիստեմի հարցը բավականին դժվարանում է: Նախ՝ ուսումնարանական զարգացման կազմակերպությունը հին բան է, որ ունի յուր պատմությունը....

Նամակներ

Սիրելի մայրիկ !

Այսօր ստացա քո նամակը և չուչխելը, շատ ուրախացա, բայց և շատ ցավեցա, որ իմ ասածներս չեք կատարում, ես գալիս ասի, որ ոչինչ միջ ուղարկի, հարկավոր չէ՝ իսկ դուք հանկարծ չուչխել եք ուղարկում: Կարծիք չկա, որ շատ սիրելուց ես ուղարկել, բայց ավելի լավ կլիներ, որ չուղարկեիր: Բայց չնեղանաս, ինչ արել ես - արել - հիմի կմտածես, թե Նոր տարուն էլ հարկավոր է մի բան ուղարկել, Աստված է վկա շատ կնեղանամ, որ ուղարկեք-հիմի կասես, թե ուրիշների մայրերը կամ բարեկամները կուղարկեն, կտեսնի նոցա ուտելիս, սիրտը կուզի: Էդպես բան իսկի մի մտածիլ, նախ իմ ընկերները ինձ էնքան սիրում են, որ մի բան առանց ինձ չեն ուտում - հենց հիմի իմ ընկերներիցս մեկը մի տանձ ուներ - մի տանձն ինչ է, բայց բաժանեց ինձ հետ և երկրորդ, ես ոչ շատ մտիկ եմ անում, թե ինչ եմ ստանում և ոչ էլ հետաքրքրվում: Էնպես որ թե ինձ սիրում ես ոչինչ մի դարկիլ-հո գիտես, որ ես քեզ շատ եմ սիրում, քան աշխարհումս մի բան, թե ուզում ես, որ միշտ սիրեմ, ոչինչ նեղություն մի քաշիլ դարկելու: Հիմի մտածում ես, թե որդիս էստեղ լիներ, մեր բաղի խաղողը կուտեր, կուրախանար: Դու կարծում ես, թե քի՞ խաղող եմ կերել, օր չի անցել, որ խաղող չուտեմք: Ես չի պիտի գրեի քեզ, թե փող է հարկավոր, բայց ինչ արած-ոչ կոնվերտ ունեի, ոչ թուղթ, շատ աշխատեցի մի ելք գտնել, չգտա-վերջը գրեցի: Էստեղ զանազան բաների համար փող եմ հավաքում, ես էլ գրված եմ իհարկե, մեկ էլ դրա համար է հարկավոր: Դու գրում ես, թե սպիտակեղեն հարկավոր չի՞ - ինչ սպիտակեղեն, էստեղ ամեն շաբաթ փոխում ենք, երեք օրը մի <ջեր> ձեռքի աղլուխներն ու ոտքի փաթաթաններն ենք փոխում: Երկուշաբթի թագա կարած շորերը կբաժանեն, Մասիսը ձնել է վաղուց <տակերը> սպասում եմ օր օր, թե երբ պիտի գա ձմեռը, ապա գարունքը, որ գամ մեր քաղաք:

Երբեմն գնում եմ դուրս, տեսնեմ Արագածի <տակերը> յա Արայի լեռը հո չի ձնել: Սաստիկ սպասում եմ ձմռան: Ես ցույց եմ տալիս էստեղ իբր թե իսկի այնուհետ չի գալիս քաղաք գնալ: Խաղալու զանգը սվել է, չեմ կարող շարունակել, պիտի գիմնաստիկա խաղանք...Մնաք բարև, ես լավ եմ...

Բոլորին բարև և քիչ նամակագիր<...>

Մնաք բարև քո՝ Ն. Աղբալյանց

1892/ նոյեմբեր 2

1900 թ. մարտ
Թիֆլիս

Հարգելի պ. Ավետիք

Այսօր պ. Հովհաննես Թումանյանն ինձ խնդրեց, որ հայտնեն ձեզ հետևյալը. մի պարոն, որ ցանկացել է անհայտ մնալ և որ վաղը այստեղից մեկնում է, ցանկություն է հայտնել Մուրճը գնելու և ուզեցել է այդ գործը միայն Հ. Թումանյանի միջոցով տեսնել. նա էլ ուզեցել է նամակ գրել, բայց ինձ որ տեսավ, ասավ թե՛ ես նամակ գրել չկարողացա, դու գնա և նրան (այսինքն Ձեզ) ասա: Մուրճ գնող պարոնը պատրաստ է այսօր իսկ բանը վերջացնել. նա ցանկացել է իմանալ միայն վերջնական գինը, որից այն կողմը ոչ մի սակարկություն չի կարող լինել, նաև այն պայմանները, որ Դուք կդնեք ծախելիս: Այս է բոլորը: Տանը չէիք, դրա համար էլ գրեցի. պատասխանն ուզում էին. պիտի «...» տանելի Թումանյանին. բայց կմնա, որ երեկոյան անցնեն և իմանամ:

Հարգանքով՝ Ն. Աղբալյան

1902 թ. հոկտեմբեր 2
Ս. Պետերբուրգ

Սիրելի Օհաննես,

Ինչ խոսք, որ գրում եմ առանց հուսալու, թե պատասխան կստանամ: Գրում եմ նրա համար, որ իմանաս, թե ինչպես է ապրում այստեղ վերնականը: Երգիչ եմ, ժամ եմ ասում, մոմ բռնում, գրակալ դնում և ստանում եմ ամսական 15 ռ., նաև հույսեր, որ հունվարից կստանամ 25 ռ: Ունեն մի դաս, որից հավանորեն կստանամ 15 ռ., գնի մասին չեմ խոսել, ուրեմն 30 ռ., հույսեր ունեն ուրիշ դաս գտնելու: Ուղիղ այդքան տալիս եմ սենյակի և ճաշի, մնացածը հոգում եմ իմ խնայած 40 ռ., որից 20-ը արդեն կերել եմ: Այնուամենայնիվ, տրամադրությունս լավ է, դեռ համալսարան չեմ մտել, բայց առանց այդ էլ խիստ կանոնավոր կյանք եմ վարում: Առավոտը 7-8-ին ոտքի վրա եմ. մարմնամարզություն սենյակիս մեջ՝ մերկ, ապա, թեյ+հաց ու պանիր, կարդում եմ որևէ ծանր բովանդակության գիրք, հետո գերմաներեն: Ժամը 11-ին գնում եմ գրադարան: Սկզբում կարդում եմ մաթեմատիկայից, կրկնում եմ առաջժմ անցածս, ապա ռուս գեղարվեստի պատմությունը 12 պրակ, Новинк-ու, ողորմելի գիրք ընդհանուր առմամբ, սակայն որից կարելի է երկու փոքրիկ հոդված շինել կամ երեք:

Ամփոփումներ անում եմ, ապա որևէ լրացուցիչ գիրք իմ իմացած բա-

ների վերաբերմամբ: Այս ամիս շատ տարված եմ գեղարվեստով՝ ճարտարապետություն, քանդակագործություն և նկարչություն, և այնպես լավ հասկանում եմ, թվում է ինձ (որովհետև տեսած բաների մասին ինչ կարդում եմ, տափակ ու անշնորհք եմ), որ փորձություն ունեն այդ կարգի գրադատականներ գրելու, բայց որտե՞ղ: Այստեղ կա «Աղեքսանդր III-ի թանգարան», ի՞նչ բաներ կան ռուս արվեստից, կհիանաս: Եվ, ինչպես հասկանում եմ, մի քանի բան մանավանդ: Սակայն առաջժմ իկոնների մասին եմ կարդում և իկոններ եմ նայում: Բաներ կան, բարեկամ, որ զգվելի են կարծես, բայց որ լավ դիտում ես, ճանաչում ես մարդուն, որ ստեղծել ու հղացել է այդ բաները... Շատ տպավորություն ունեն, բայց հաղորդել չեմ կարող, խառն եմ, բուռն ու անկերպարան: Բայց, եթե գրելու լինեմ այդ մասին մի բան, միտք ունեն նամակների ձևով գրելու և, հավանորեն, քեզ ուղղած: Այստեղ կա և մի էրմիտաժ, որտեղ կարելի է շատ լավ անցնել ամբողջ գեղարվեստի պատմությունը՝ Եգիպտոսից մինչև Եվրոպա: Բայց դեռ մանրամասն չեմ նայել: Այս բոլորի մասին կգրեմ, եթե լսեմ, որ նամակս տեղ է հասել...

Այստեղ է Թառայանցը: 400 էջից բաղկացած մի շքեղ, պատկերազարդ ու մեծադիր «Շիլլերի կյանք» է հրատարակում: Լավ բան դուրս կգա, հավանորեն, կարդացի առաջին թերթը: Մի թերթի մասին զրույց դարձավ մեր երկուսի և Դուրբախյանի մեջ, որ նույնպես այստեղ է (միասին եմ ապրում) և բարևներ է անում ձեզ: Հանձնեցին ինձ կազմել ծրագիրը, ես էլ կազմեցի, բայց դրամն է գլխավորը, իհարկե: Ծրագիր կազմելուն որ գա, շատ ավելի լավ ծրագիրներ ունեն պատրաստ, գլխիս մեջ: Թերթը՝ «Գրախոս» անունով, պիտի լինի կիսամյա, 300 էջ ամեն մեկը, նպատակը՝ զարկ տալ հայ գրականության զարգացմանն ու ծավալմանը: Միջոցներ՝ 1) Գնահատել տարվա ընթացքում լույս տեսած բոլոր հայերեն գրքերը. 2) Ծանոթացնել հայ աշխարհիկ գրականության անցյալի ու ներկայի հետ. 3) Ուսումնասիրել այն բոլոր պայմաններն ու հանգամանքները, որոնք նպաստում են կամ արգելում են հայ գրականության զարգացմանն ու ծավալմանը: Օժանդակ միջոցներ. ա) Հրապարակել հայ հին թերթերի բովանդակության ցանկը, բ) Տեղեկություն տալ օտար լեզվով լույս տեսած գրվածների մասին՝ հայ նոր գրականության վերաբերյալ. նշանակել հայ հեղինակի օտար լեզվով գրած աշխատություն և քաղել նրա մասին եղած օտար կարծիքները, նշանակել թարգմանությունները, որ լինում են մեր գրականությունից: Բոլոր կետերն աշխատել իրագործելու նաև տաճկահայ գրականության վերաբերմամբ: Այս բոլոր կետերն ավելի մանրամասն բացատրություններ ու-

նեն, բայց երկար կլինեն, որ գրեի: Ի՞նչ կասես: Բայց թե փող է պակասում, չկա: Ի՞նչ եք մտածում դուք, բան-ման ձեռնարկելու՞ եք, թե անցյալ և նախանցյալ տարվա նման: Ո՞նց է մեր Նահապետի քեֆը, ինչ խոսք, որ այժմ լավ է: Նրա տված 100 ռ. շատ լավ ժամանակ հասավ, մինչև այսօր էլ պետք է գալիս, շատ շնորհակալ եմ: Պատկերս հանել եմ, հարկավոր էր համալսարան մտնելու համար, կուղարկեմ: Արդեն գրել, պատրաստել եմ բայց դեռ փողս առատ չէ, թող մնա: Լսելու եմ բանասիրական բաժնում. առաջին կուրսից, հույս ունեմ, որ մի քանի տարի մնամ: Յուրաքանչյուր տարի ինձ հարկավոր է ունենալ միայն 150 ռուբլի, որ, կարծում եմ, թե չեմ գտնի: Այն ժամանակ նորից կգամ Թիֆլիս, գործ կգտնեմ, փող հետ կգցեմ և մյուս տարին նորից Ռուսաստան, և այսպես շարունակ... Ապրում եմ մեծակ, երկու մոտ ծանոթ ունեմ միայն, բայց կա գիրք, սենյակ, հաց և ժամանակ, ուրիշ ոչինչ չեմ ուզում: Դրանից հետո կուզեի մի թարմ խումբ ու թարմ թերթ, որ սրտանց գրես մեկ-մեկ: Շուտով պիտի գնամ, խմբական երգեցողության փորձ կա հայկական երեկույթի համար: Ուսանողներին դեռ լավ չեմ ճանաչում, բայց գաղափարական հոսանք չկա մեջները: Մի քիչ բան եմ մեր հոգևոր դպրոցից ելածները: Հետո կշարունակեմ, թեյ խմեմ, գնամ:

Հոկտեմբերի 8

Շարունակում եմ առանց կարդալու գրածս, բան է՝ թե Դերենիկն այդտեղ լինի, հայտնիի հասցես ու համբուրիի: Շանթին համբուրյր նույնպես, եթե հնարավորություն ունես, այսինքն, եթե այդտեղ է: Ասա որ մեկն եմ (Արասխանյանի ոճն է) նրա բանաստեղծական ժողովածուին անհամբեր սպասողներից: Քեզանից կուզեի նույնպես սպասել, բայց զուր է, անողը չես: Այս տարին էլ առանց Հ. Թումանյանցի մնամք: Կարդացի Լևոն Մանվելյանի «Դեպի վերը» մի ժամ առաջ: Լավ նյութ է, մեր ինքնուրույն գրականության երևույթներից մեկն է, թեկուզ մի քիչ Իբսեն լինի մեջը, բայց բանաստեղծի ավյունի թուլության պատճառով, թույլ էլ տպավորություն է անում: Առաջին տպավորությունս է, կան լավ հղացումներ ու հատվածներ: Ինձ միշտ թվում է, որ նա ավելի լավն է երևակայում և խորն է զգում, բայց արտահայտել չի կարողանում: Համենայն դեպս, տվածից ավելի կա իր մեջ:

Քո Նիկոլ

Նամակս այնքան ուշացրի, այսօր 15/X-ն է, որ դասիս փողն ստացա և կարող եմ ուղարկել պատկերս քեզ ու Նահապետին, եթե այդտեղ է Շանթը, գրի, որ նրան էլ ուղարկեմ: Շատ բարևս կնոջդ ու երեխաներիդ երամին: Մի բառ եմ շինել՝ «գնահատական» = рещепись:

ԳՎԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, Գ/ 236-2

Ավո ջան.

Նամակդ ստացել եմք վաղուց, պատասխանն ուշացնելը ոչ մի խելքը գլխին արդարացում չունի. էսօր-էգուց գցելով՝ այստեղ հասանք:

Նախ գործի մասին. խոսեցի պուշկինյան տպարանի հետ. 200 երեսնոց գիրքը միջակ դիրքով, Բուդուղյանի վերջին գրքի «Սիֆիլիս» թղթով (լավ թուղթ է) և տպարանի ունեցած բոլոր զարդարանքներից, շաբկանկարներից օգտվելու իրավունքով կարժենա՝

16 էջը եթե 1000 օրինակ տպվի	20 ռ.
- // - 2000 - // -	15 ռ.
- // - 3000 - // -	13.50

Տպարանն իր վրա է առնում և առաջին երկու սրբագրությունը:

Զգիտեմ հարմար գտար այս պայմանները, թե չէ, բայց կուզեի, որ շուտով մի քիչ ավելի մարդավարի ու լավ լույս տեսներ բանաստեղծություններդ. սպասում եմ:

Գալով ապրելուդ, այսքան կասեմ, որ ամենահամեստ և առողջապահության հետ չսակարկող ապրուստի համար այսպիսի բյուջե է հարկավոր.

- սենյակ ծառայի վարձով - 16-18
- ճաշ - 12-13.50
- թեյ և մանր ծախք - 6-7

այսինքն՝ 34-38.50 ռ. առանց հագուստի, գրքի, թատրոնի և այլն:

Թեև ավելի աժան էլ կարելի է ապրել, բայց դե 5-6 ռ. կարելի է ապրել. ես ապրում եմ 30 ռ. բայց ընկերով եմ. երբ մեծակ էի 40 ռ. էի ծախսում: Ինչ խոսք, որ ամենամեծ ուրախությամբ կընդունի մեր զույգը քեզ պես մի լավ բոսյակի. դու էլ որ գաս - Դերենիկը կլինի պակաս, որ մեր թիվը գոցվի. կարող ես՝ եկ, բա դու ի՞նչ գործ կարող ես գտնել, կամ առհասարակ ի՞նչ գործի ես ընդունակ, որ մեծ-մեծ էլ գրել ես նամակում. միջոցներ գտիր ու մի կերպ քեզ գցի այս կողմերը, կամ թեկուզ արտասահման, որ ավելի լավ կլինի. մի քիչ նստի ու պարապի: Այստեղից գրքեր ուղարկել հազիվ թե կարողանամք, վասն դրամական ինչ-ինչ նեղութանց:

-Օհանեսը գովքով էր խոսում յուր նամակում քո վերջին ոտանավորների մասին, որ սակայն ես չեմ տեսել. Մուրճ ձեռք չեմ զցում, շատ որ աշխատեմ, կարող եմ, բայց դե միտքս ուրիշ տեղ է: Եվ այդ ուրիշ տեղն է իսկապես, որ նամակիս նյութը պիտի կազմած լիներ. ահա ինչ եմ

անում: Կազմում են մեր պարբերական մամուլի նյութերի ցանկն ու դրան զուգահեռ մի քանի ուրիշ ցուցակներ, այն է. մի տեղ հավաքում են այն բոլոր տեղեկությունները, որ կա որևէ նշանակություն ունեցող անձի մասին մեր գրականության մեջ. առայժմ միայն տեղերն են նշանակում. այսպես, օրինակ՝ Գր. Արծրունի - տես Արծազանք, 1883, № 7, ներք. տես: Մի այլ տեղ - որևէ գրքի մասին ինչ տեղ ինչ կա գրած կամ հենց հիշած, թե ստացանք: Մի ուրիշ տեսրակում ցուցակագրում են որևէ հեղինակի գրածը առհասարակ՝ օր. Մանդինյան Սեդ., Վարժարան, 1882/3, № 4 «դասատվությունը»: Մի ուրիշ տեղ, թե ի՞նչ կա թարգմանած որևէ օտար հեղինակից. օր. Անդերսեն - «Որևէ անուն», տես Վարժարան, 1883/4, մանկական բաժին, էջ 34 և այլն: Այս՝ համարձակվում են ասել հսկա ձեռնարկությունը մի նախապատրաստական աշխատանք է իմ ապագա հոդվածների, կենսագրությունների, բնորոշումների և՛ իբր վախճան ու վերջնական նպատակ այս ամենի՝ «Հայոց նոր գրականության պատմություն»՝ եթե մի կերպ Վիեննա ընկա, և «Ռուսահայ գրականության պատմություն», եթե այս քանդված երկրում փտելու դատապարտվիմ վերջնականապես: Այս աշխատանքը ինձանից շատ տարիներ կուզի, իմ երիտասարդությունը՝ որ ես ամենայն պատրաստակամությամբ նվիրում եմ, միայն... ես պիտի մաև հաց աշխատեմ իմ ու ծնողներիս համար. ահա այս է մեջքս կորացնում օրը 4 ժամ հին ու մոռցած հայ թերթեր կարդալն ու շրջելը և քաղվածներ ու նկատողություններ անելը: Իմ այստեղ մնալը կապված է տարեկան 200 ռ. հետ, բայց համոզված եմ, որ չեմ գտնի, որովհետև ինժեներություն չեմ սովորում: Մայիսին կգամ Կովկաս և նորից մի տեղ պիտեմ կմտնեմ, որ գրող դառնալ կարողանամ. ոչ ոքից չեմ գանգատվում և ոչ ոքից էլ պահանջ չունեմ: Կանեմ այն, ինչ որ հնարավոր է, հնարավորություն չունենալով անելու այն, ինչ որ կարող եմ և ընդունակ եմ:

Դու ինչ բանի ես. մի քնի. հանճարը համբերություն է և աշխատանք, ասաց մեկը - համաձայն չեմ: Բայց առանց այդ երկուսի հանճար չի լինում. ուրեմն, ի գործ. մտածիր, որ կարող եմք կորցնել երկինքը մեր աչքերից. բարձրացիր և բարձրացրու, որովհետև կարող ես...

Համբույրս,

Քո Նիկոլ.

Հարգանքով բարևներս հիշիր մեր պատվական բարեկամ Լ. Մանվելյանին. բարևիր և նրանց, որոնց ճանաչում եմ:

ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, գ. 2638

Ով սիրելի Ֆիլիպ բարի,
Ինձ է չեղար այնքան արի,
Որ մնայիր մեր քաղաքում,
Ուր հրացան չի տրաքում,
Չի որոտում ոչ թնդանոթ,
Ոչ մահաբեր ուրիշ անոթ:
Ուր խմբերով եռուն ու ժիր,
Աղջիկ ու կին լարած ուժեր,
Վազվզում են, դրամ պոկում,
Գաղթականի վիճակ հոգում,
Կամ թե դառած քույր գթության՝
Վիրավորի ցավ ամոքում:

Ուր թե ուզես

Դու կարող ես

«Մի բաժակ թեյ» գնաս նստես,

Եվ հուզումով ու գողունի,

Դեմքը դիտես մի սիրունի,

Որ պչրանքով՝ թարմ ու մաքուր,

Աչքերի մեջ տեսնչեր ու հուր,

Մատուցում է խկույն ևեթ

Շող ու ժպիտ իր թեյի հետ:

Այստեղ բյուրոն մեծապատիվ

Տքնում է միշտ գիշեր ու տիվ՝

Ազգի բախտին նախանձավոր՝

Այնպես անել, որ ունևոր

Մեր հարգելի տասը կծծի

Համազգային մեր սուրբ գործի

Ծառան լինի խոնարհ ու հեզ

Եվ բռնրով ոսկի տա մեզ:

Կարող էի նույն ոգով և ուղղությամբ շարունակել, բայց տրամադրությունս լավ չէ, թեև Ձատիկ օր է այսօր: Օհանեսը իր գավակներից կազմել է մի ընկերություն «Մանուկ» անունով, հորինել է իմաստալից ու սրամիտ խաղեր մեր երեխաներին հայացնելու նպատակով: Շատ գովելի և օգտակար ձեռնարկություն է, արժանի ամեն խրախուսանքի: Հրատարակել է առայժմ 4 խաղ. մտադրություն ունի նույն ուղղությամբ

գործն առաջ տանելու՝ ծանոթացնելով մանուկներին հայոց լեռների, լճերի, քաղաքների, պատմության և գրականության հետ: Դերենիկը ռազմական աղմուկների մեջ ժամանակ է գտնում Շեքսպիր, Սուրբ Գիրք, Խայամ և միջնադարյան երգիչներին կարդալու և ուսումնասիրելու: Արշակը շարունակում է իր խմբագրի պաշտոնը. ձեռք է բերել վստահություն և հավատ. նյութականը քիչ լավացրել են. օգուտից % են նշանակել, երբ օգուտ չի: Ես էլ մնացել եմ Թիֆլիս. դարձել եմ միջնորդ զինվորական մարմնի և ազգային բյուրոյի միջև. ինձ են հանձնում դրամը և ինձանից հաշիվ պահանջում. մի տեսակ ելանտական նախարար եմ դարձել և օր ու գիշեր դրամի և հաշվի հետ գործ ունեմ, ուստի պիտի ներես երկար լռությունս:

Մերոնք լավ են. Կուկուն շարունակ զինվոր է խաղում. կապում է պապի դաշույնը, կախում է իր թուրը, գլխին դնում իմ մորթե փափախը, նստում է իր ծին և գնում Հայաստան Մեր Հայրենիք երգելով: Աչիկը որ մեծանա պիտի դպրոց գնա, ասում է, իսկ ես զինվոր պիտի լինեմ: Հրարփին չարչարվում է առաջվա նման: Ամենքս կարոտով հիշում ենք ձեզ և սիրով բարևում Մայրիկին, որ հուսով եմ թե առողջ է լիովին, Տիկնոջը, որի խնամքն ու հյուրասիրությունը երբեք չենք մոռանալու, երեխաներին, որոնք այնքան սիրում էին մեր փոքրիկներին, և քեզ, որ մեզ հետ միասին ապրում էիր մեր ընդհանուր և ընտանեկան ուրախությունն ու տրտմությունը: Սիրալիր բարևներ բոլորիդ. շնորհավոր Ձատիկ, քո Նիկոլ:

ԳԱԹ, Գոլի. Թումանյանի ֆոնդ, գ. 1653

Հարգելի բարեկամ

Շնորհակալ եմ այն աջակցության համար, որ ցույց եք տվել կնոջս Թիֆլիս եղած ժամանակ: Պիտի խնդրեի, որ աշխատանքիս վարձը այդ տեղ վճարեք քենակալիս, որից պարքտեր ունի արած կինս: Ժամանակին կգրեմ նրա հասցեն կամ կուղարկեմ նրան լիազորություն ձեզ ներկայանալու:

Լսեցի, որ Ձատիկից հետո մտադիր եք իմ հավաքածուն տպագրության տալու, կուզեիք օր առաջ ունենալ նախաբանս: Ձբաղված լինելով՝ այսօր միայն կարողացա ժամանակ գտնել գրելու և ահա ներփակ ուղարկում եմ:

Նորից խնդրում եմ ուշադիր եղեք դեպի սրբագրությունը, որի լավագույն ձևը կլինեի տպագրածը համեմատել ոչ թե ձեռագրի, այլ տպագրի հետ. (Սուրճում տպածը): Սրանով խուսափած կլինեք նաև այն սխալներից, որ անխուսափելի են արտագրության ժամանակ: Գիտեք,

որ այս կետում բժախնդիր եմ, չէի ցանկանա ինքս անփույթ երևան ընթերցողին, երբ հաճախ խոսել եմ ուրիշների անփութության մասին:

Հուսալով, որ հրատարակությունը կկատարվի խնամքով և ձեզ վնաս չի բերի, ցանկանում եմ հաջողություն ձեր գործին, որ այս անգամ նաև իմ գործն է:

Հարգանքով՝ Ն. Աղբալյան
20/4

ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, գ. 2644

1921, մարտ 15
Էջմիածին

Սիրելի Սիմոն,

Կխնդրեմ կարգադրես (եթե հնարավոր է), որ այստեղ ինձ տասն և հինգ (15) փութ գարի տան իմ ստանալիքի հաշվին: Այստեղ ես մի <կոմբինացիոն> արի - ինձ համար կցանեն: Թող ինձ այստեղ տան այդ գարին, հետո այդտեղից կուղարկեք: Հատուկ խնդրում եմ չմերժես կարգադրել, թեև գիտեմ ժամանակ կարող ես և չունենալ: Բայց ես էլ ստիպված եմ երեխաներիս հացի մասին հոգալ վաղօրոք. ո՞վ գիտե ինչ է սպասում ինձ:

Քո Ն. Աղբալյան (ստորագրություն)

P.S. Լսեցի, որ եր. Տեր Մինասյանին հեռացնում եք, թե <հեռացրել> եք իր պաշտոնից: Ցավում եմ, նախ որ ինձ չեք հարցնում, և երկրորդ, որ չեք գնահատում մարդկանց (եթե իհարկե լսածս ճիշտ է): Նկատի ունեցեք, որ այդ մարդը *միակ* ասորագետն է մեզանում և ասորական գրականության մասնագետ. *երկրորդ* և զուցե ըստ հմտության առաջին աստվածաբանն է մեզանում. աստվածաբան գիտական իմաստով, այսինքն հնուտ եկեղեցական պատմության, հնության և գրականության: Այսպես մի մարդ պետք է խնամվի և պաշտպանվի ամեն տեսակ կառավարության կողմից: Ամենքս մարդ ենք և ունենք պակասություն, բայց մարդկանց պետք է գնահատել նրանց առավելության համար. նրանք պետք է նկատվեն իբր քաղաքակրթական ազդակներ և ուժեր:

Քո Ն. Աղբալյան (ստորագրություն):

ԳԿՄՄ, Ն. Աղբալյանի ֆոնդ

Սիրելի Արտաշես,

Վերջին երկու նամակդ և 100 տոլարի չեքն ստացա նույն օրը հունվարի 25-ին: Դրամն անմիջապես փոխադրեցի տուն, ուր սեպտեմբերից սկսած ոչինչ փոխադրել չէի կարողացել ու չգիտեի, թե ի՞նչ օրում են:

Շնորհակալ եմ, լավ հասցրիր, հոգիս հանգստացավ առժամապես, կարող եմ հանգիստ աշխատել:

Պիտի իմանաս, որ սկսած դեկտեմբեր 1-ից մենք համարյա նպաստ չենք ստանում: Դեկտեմբերին ստացել ենք մարդագլուխ 7-ական, իսկ հունվարին՝ 4-ական թուման: Միաժամանակ մեզ հայտնել են, որ այսուհետև ոչ մեկ նպաստ ստանալու չենք: Հիմնել են դեկտեմբերից «պրոպագանդի դպրոց», ուր ես շաբաթն երկու ժամ խոսում եմ «սոցիոլոգիայից» և մի ժամ բացատրելու եմ Դաշնակցության ծրագիրը, դրա համար ստանում եմ անսական 10 թուման: Այդ է իմ բյուջեն:

Կարող ես երևակայել վիճակս, մանավանդ հոգեկան, երբ մտածում էի երեխաներիս մասին: Վերջապես, այս ծանր հոգսից առժամապես ազատվեցի:

Բացի վերը հիշված դասախոսություններս՝ սկսած նոյեմբերից ընկերների բազմության առջև ես շաբաթը «մի ժամ բացատրում եմ մեր ծրագրի տեսական մասը: Արդեն 15 ժամ խոսել եմ, այս Ուրբաթ կվերջանա: Նայելով կոնսպեկտներին, որ մի փոքրիկ բրոշյուր են կազմում, ես կարծում եմ, որ սա հարմար նյութ կլինի «Հայրենիք» լրագրի համար: Դրանք մի շաբթ տնյուղներ էին, որ կարող էին հետո առնվազն 16 բրոշյուր կազմել նվիրված հասարակագիտական խնդիրների և իբր բնաբան ունենալով մի հատված մեր ծրագրի առաջաբանից:

Եթե հարմար նկատես այսպիսի մի նյութ զետեղել լրագրի մեջ՝ ես հաճույքով կմշակեի, հետո դուք լրագրից արտահայտելով՝ կդարձնեիք «Ծրագրային մատենաշար»:

Ինչ խոսք՝ որ կարող եմ գրել և գրական նյութերի մասին: Մինչև ստանամ քո կարծիքն այս մասին, ես կշարունակեմ արտագրել սևագրածս հուշերը և պարբերաբար ուղարկել:

Իմ հավաքած նյութերից (ապստամբական շրջանի մասին) ես կարող էի զատել մի մասը և մշակել՝ օգտվելով նաև դատական արխիվի գործերից (Նժդեհի դատը) և Ջանգեզուրի կառավարության թղթերից, որ բարեբախտաբար բերված է Թավրիզ: Դա կլինեի «Մի դրվագ հայոց նորագույն պատմությունից. Միսական»: Կարող եր տպագրվել թե՛ «Հայրենիք»

ամսագրի և թե՛ լրագրի մեջ: Կարծիք հայտնիր նաև այս մասին:

Արդեն ուղարկել եմ Մարտին Շաթիրյանի հուշերը, ուղարկում եմ այս պոստով «Պապաշայինը»*: Այն հատվածները, որ ըստ իս և ըստ Պապաշայի ցանկության չեն կարող այսօր լույս տեսնել՝ առնված են փապագծերի մեջ:

Պապաշան կարծում է, որ իր կենսագրական տեղեկություններն անհարմար են տպագրության համար՝ համեստության տեսակետով: Հակառակ կարծիքն ունեմ, ինչպես և իր եղբայր Սամսոնը: Ասի՝ Ամերիկա ևս ընկերներ կան, ես կուղարկեմ, կգրեմ քո համեստության մասին, թող նրանք որոշեն՝ արժե՞ տպագրել, թե ոչ: մանավանդ որ իր կյանքի դեպքերն հաճախ այնպես կապված են Քրիստափորի կյանքի հետ, որ նրա մասին խոսածը հասկանալի կդառնա իր մասին պատմելով միայն:

Համենայն դեպս՝ խմբագրության գործը թողնում եմ քեզ:

Դու կնկատես, որ գրությանս մեջ ժլատաբան եմ՝ թե՛ ոճի և թե՛ այլ նկատառումներով:

Հետևյալ շաբաթվանից կսկսեմ մաս մաս ուղարկել Սամսոնի հուշերը, որ վերաբերում են Սալմաստի մեր գործունեությանը: Ինքս գրում եմ մեծ հետաքրքրությամբ: Կարծում եմ՝ նույնանման հետաքրքրությամբ էլ կկարդացվեն, քանի որ վեպ են, բայց իրական, բազմազան ու կենդանի: Անծեր ու գործեր են, որ չքացան, բայց պահում են իրենց բույրն ու հրահանգիչ արժեքը:

Շնորհակալ եմ, որ մտածել եք ինձ ապրուստի բավարար հնարավորություն տալ այստեղ մնալու և աշխատելու: Միայն մի խնդիր անորոշ է ինձ համար և բացատրություն չգտա քո երեք նամակում: Արդյոք որքան պիտի աշխատեմ, որ ստացածս հանգիստ ուտեմ իբր քրտինքիս վարձ: Տողո՞վ եք հաշվում, էջո՞վ: Այս մասին ևս խնդրեմ ինձ անդորր արա:

«Հայրենիք» ամսագրի Ա. համարն ստացա: Շնորհակալ եմ. կարդացի: Լավ է խմբագրված, արտաքինն էլ մաքուր ու խնամված գտա: Հոդվածիդ մասին ասելիքներ ունեմ, ներողամիտ եղիր, եթե զգուշացնեմ «ճամբին ընկնելուց», սոցիալիզմը մեր ծրագրին «կցան» համարելով՝ զգուշացիր, որ անզգալապես հեռուներ չգնաս: Արդեն մի անզգույշ խոսք թռել է գրչից՝ «հեռավոր ու թերևս ցնորական» գաղափարներ (էջ 55): Լավ հողված է, այժմեական և կենսաթրթիռ: Չգիտեմ ինչպես է այդ կողմերի տրամադրությունը, բայց կարծում եմ, որ այս խմորը շատ ջուր կվերցնի դեռ: Կսպասեմ վերջին:

Մեր կյանքն այստեղ անցնում է միօրինակ և մանրանում է՝ դրդում չառնելով շրջապատից: Ես պարապմունքների մեջ թաղում եմ օրս: Բայց

ոչ ամենքը կարող են այդ անել, ոմանք գրի ու գրչի մարդիկ չլինելով, ոմանք ներքին մղում չունենալով: Մանավանդ նպաստի դադարը ստեղծել է ծանր կացություն և մթնոլորտ: 125 հոգի են մնացել ցանկով, մի մասն աչքի ընկնող մարդիկ, որ ապրում են ծանր կացություն: Կանոնավոր և բավարար նպաստ (30 թուման և ավել) ստանում են 5 հոգի, կառավարությունն ու իր եռանդան վերստուգիչը. մնացածներն անկուտ են: Մի երեք-չորսի ինձ պես կապած են 10 թուման: Բնական է, որ մի խուլ դժգոհություն կա արտոնյալ 5-ի դեմ և նախկին սերտությունն ավերված է մի քիչ: Բայց փետրվարը նոր է սկսել, դժգոհություն կարող է աճել...

Ինձ թվում է՝ լավ կլիներ, որ մեր տարագիրներին հատկացված նպաստն այդտեղից ուղղակի փոխանցեիք այստեղ Կենտր. Կոմիտեին՝ առանց պատասխանատու մարմնի միջնորդության այդ կողմերում և կառավարությանն՝ այստեղ: Շատ է, թե քիչ՝ խնդիր չէ. ճամբին, ըստ ոմանց, հալվելով է տեղ հասնում:

Ապրում ենք «օջախի» հուսով և Թավրիզից վտարվելու սպառնալիքի տակ՝ Խորհրդային Հայաստանի պահանջով՝ Ռուսաց թևարկությանը՝ պարսից կառավարությունից: Երեք անգամ փորձ եղավ, հաջողությամբ խուսափեցինք: Այսօր նոր փորձի մասին լուր տարածվեց, չեն ստուգել, իբր թե խստորեն պահանջ են դրել տարագիրների մի մասին վտարել Թավրիզից: Իմանամ՝ կգրեն:

Նամակս երկարեց, բարևներս Տիկին Նադյային և ընկերներին:

Քո՝ Նիկոլ

ՀՀԿՄՍ, Ն. Ադրայանի ֆոնդ

1924 թ. III / 09

Սիրելի Աչիկ,

Առաջին նամակը ստացել եմ և պատասխան եմ գրել մի սիրուն բաց քարտի վրա. երկրորդն էլ հիմա ստացա. նկարածդ աղջիկը շատ հպարտ է երևում. թևը կանթել է կողքին և համարձակ նայում է հեռուն, չի տեսնում, որ ոտքի տակ մի սիրուն վարդ կա. թե՛ տեսել է, բայց չի հավանում. հուսով եմ, որ նա քեզ նման չէ. կամ դու նրա նման անուշադիր և անհավան չես: Հա, կուկլա էս ուզում, գրեցի Հրասուն մորթուրին, պատասխանեց, թե դժվար է ուղարկել. այստեղից էլ բերող չկա. ի՞նչ անեմ՝ չգիտեմ: Սպասենք, տեսնենք, գուցե մի հնար գտնվի, որ քո ուզածն ուղարկեմ:

Այս նկարը Ալեքսանդրիայի փարոսն է. գիտե՞ս ինչ է փարոս. դա մի բարձր աշտարակ է, որի գլխին գիշերները լույս են վառում, որ ծովի մեջ

եղած նավերը ճամփան չկորցնեն և ափի քարափներին չդիպեն: Իսկ այն ծովը, որ տեսնում ես նկարի վրա, Միջերկրական ծովն է. ասում են «Միջերկրական», որովհետև Աֆրիկայի, Եվրոպայի և Ասիայի մեջտեղն է: Ալեքսանդրիան Աֆրիկայի ափին է, իսկ դո՞ւ որտեղ ես. գրիր:

Համբույր, քո հայրիկ:

Ռոբեն որդու անձնական արխիվ

1924, III / 09

Սիրելի մանչուկ,

Շատ սիրով կարդացի քո նամակը. թատրոն գնալով դերասան չդառնաս, հա: Բայց դրա համար էլ մեծ ուսում պետք է, ես լավ իմանա: Լսեցի, որ տոնդ ուրախ է անցել, բայց դու հիվանդացել էս: Վնաս չունի: Ուրախ եմ, որ լավ ընկերներ ունես և իմ ուղարկած դրամն էլ ժամանակին հասավ, որ նրանց հյուրասիրես: Այս արձանը քաղաքի հրապարակներից մեկի վրա է: Չիավորը Մահմեդ Ալին է, որ Եգիպտոսի խտիվն էր (խտիվ՝ նշանակում է իշխան) մեզանից 80 տարի առաջ: Նա տաճիկ սուլթանի հետ կռիվ ունեցավ, հաղթեց նրան, քիչ էր մնում Պոլիսն առներ, բայց եվրոպացիք չթողին: Նա ազատեց Եգիպտոսը տաճիկների ձեռքից:

Բարի գիշեր, համբույր, քո հայրիկ:

1924, 12 Օգոստոս

Երուսաղեմ

Սրբազան Հայր,

Ձեր նամակը ստացել եմ սրանից մի ամիս առաջ, բայց իմ աշխատանքի ամենաեռուն ժամանակը լինելով՝ պատասխանել չկարողացա: Ռոռչեցի գրել Ձեզ Երուսաղեմից, ուր ապրում եմ այս քանի օրը, մտածելով, թե Սուրբ երկրից գրված նամակը Ձեզ ավելի հաճելի կլինի: Ութերորդ օրն է, որ այստեղ եմ և շարունակ այցելում եմ այս ու այն վայրը. վաղը պետք է գնամ Մեռյալ ծովի ափը, Հորդանանի ջուրը խմեմ, «...» տեսնեմ և Եղիսեի աղբյուրի մոտ ճաշելով՝ վերադառնամ Ս. Հակոբի վանքը: Պիտի թևիս դրոշմել տամ Ս. Հակոբի կապույտ նշանը և դառնամ մահտեսի: Երուսաղեմի մասին խոսելու համար մի հաստ գիրք պետք է գրել. Սողոմոնի տաճարի հին պատը, որի մոտ ուրբաթ օրերը լաց են լինում հրեաները՝ Սաղմոս կարդալով, Օմարի մզկիթը, որ արա-

բական ճարտարապետության մի սքանչելի նմուշ է, Ս. Հարության տաճարը՝ բյուզանդական ոճի մի հոյակապ մնացորդ, Բեթղեհեմի այրի վրա կառուցած եկեղեցին, որ նավի ձև ունի, Հուդայի թագավորների դամբարանը, որ փորված է միակտուր ժայռի մեջ, Գեթսեմանի պարտեզը և Չիթենյաց սարը, Երուսաղեմի բարձրադիր պարիսպները, որ մեծ մասով մնացած են անվնաս և արաբական տիրապետության մնացորդ են, անթիվ վանքեր ու մենաստաններ ամեն ազգերի, ամեն դավանությունների և երկու սեռի. կան կանանց վանքեր, ուր կույսերն ուխտած են տղամարդու երես չտեսնել, կան մշտատև պաշտամունքի կանանց վանքեր, ուր գիշեր-ցերեկ առնվազն երկու կույս աղոթում են լուռ, կա տղամարդկանց վանք, որի միաբանությունը լռակյաց է և նշաններով է խոսում. կան գիտուն դոմինիկյանների, ֆրանցիսկյանների և բենեդիկտյանների վանքեր: Ֆրանցիսկյանները, օրինակ, 65 վանք ունեն Սիրիա, Պաղեստին և Եգիպտոս, մեծ մասը Ս. Երկրում, ունեն իրենց կոչկակարանոցը, տպարանը, ատաղձագործարանը, դարբնոցը, ուր անընդհատ աշխատում են միմիայն իրենց վանքերի կարիքների համար: Անգլիական միջնադարյան ասպետների կարգը, որ աչքի հիվանդության դարման էր տանում, մնում է մինչև այսօր և ծրի բուժում է տեղացիների աչքերը: Այս սրբավայրերի և վանքերի միջև շատ պատկառելի տեղ ունեն հայերը. հաճախ հույներին հավասար և միշտ լատիներենից գերազանց. մարդ զարմանում է, թե ինչպես մերոնք կարողացել են այս հզոր մրցորդների դեմ պահպանել իրենց դիրքերը: Սիոն լեռան 1/5-ը հայերին է պատկանում իբր կալվածք. վանքն ունի բազմաթիվ շենքեր քաղաքի մեջ ու դուրսը՝ Բեթղեհեմում. միջազգային սրբավայրերի մեջ երկրորդ կամ երրորդ տեղում է Իրանը. ինքն իր կողմից հովանավոր է Ղպտինների և Ասորիների: Ս. Յակոբա եկեղեցին ինքը մի թանգարան է իր պատկերներով, կանթեղներով, սատապե դմներով, գորգերով և այլն և իր մեջ ունի մի հարուստ թանգարան, ուր պահում են պատմական հնությունները շատ արժեքավոր, Հեթում թագավորի մի գավազանը կա մոտ 1 1/2 արշին երկարությամբ և միջնամատի հաստությամբ միակտուր մի սաթ է՝ շատ նուրբ քանդակած գլխով ու ծայրով. մագաղաթ ոսկեկազմ Ավետարաններ կան մեր թագուհիների համար գրված, եկեղեցական զգեստներ կան սքանչելի նրբությամբ ասեղնագործած. ո՞ր մեկն ասեմ և ո՞րը թողնեմ: Քաղաքն ինքը մի հնություն է՝ միջնադարի կմիջով. մեղ փողոցներ, կամարակապ և լուսանցքներով. տներ, որ շինված են փողոցի երկու կողմերը միացնող կամարի վրա, մեղ պատուհաններով և գմբեթավոր կտուրով. ամեն քայլափոխին մի եկեղեցի, մանավանդ

Գողգոթայի ճանապարհին, մի տեղ Քրիստոսը սրբել է քրտինքը- եկեղեցի է շինված, մի ուրիշ տեղ կքած է խաչի տակ - եկեղեցի. մի այլ տեղ կանգ է առած - եկեղեցի, մի խոսքով դիպված չկա Հիսուսի կյանքի մեջ, որ օգտագործված չլինի մի եկեղեցի շինելու համար: Սքանչելի է Չիթենյաց սարը, ուր մեծք նույնպես կալվածներ ունենք. այնտեղ է և Ռուսաց մեծածավալ վանքը ամենաբարձր զանգակատնով - շատ անշուք վիճակում. նրանց եկեղեցին շինելու ժամանակ գտնվել են հայկական մոզայիկներ, որ պահում են խնաքով, պետք է կարծել շինված է 551 թ. առաջ, որովհետև միայն ամսաթիվ ունի, իսկ թվական չկա. մեսրոպյան գրերով կարդում ենք, «Այս դիր է Շուշան, այ մատ արտավանայ, հոռի ժԸ»: քաղաքի մեջ ևս մի տուն շինելու ժամանակ գտնված է հայկական մոզայիկ. ծանքը իսկույն գնել է այդ տունը. Հայաստանի թռչուններ են և խաղողի ողկույզներ, և հին տառերով վերտառություն ունի «Վասն ազատութեան և փրկութեան ամենայն հայոց զորոց զանուանս տէր գիտէ»: Շատ հուզվեցի կարդալով այս գրությունը, մարդը ահագին ծախս է արել և իր անունն իսկ չի գրել և մինչև իսկ իր մերձավորների համար չէ, որ շինել է տվել մոզայիկը, «այլ վասն ամենայն հայոց, որոց անուն տէր գիտէ», ինչ խոնարհություն և այլասիրություն: Պիտի ասեմ, սակայն, թե ես էլ կնախընտրեի ամեն ինչ պարզության մեջ տեսնել: Ավետարան կարդալիս մարդ ավելի պայծառ պատկերացում ունի, քան Ս. երկիրը տեսնելիս. Գողգոթան չի երևում. ոսկե մի աստղի մեջ մի ծով է բացված, կարող ես ծեռք մեջը տանել և ժայռը շոշափել. վրան մի շքեղ սեղան է մի տաճարի մեջ. գերեզմանը ծածկված է մարմար քարով և սեղանի ձև ունի, ամեն գիշեր երեք պատարագ են անում վրան հույն, լատին, հայ, գիշերվա ժամը 1-3, մինչդեռ կուզեի քարափի մեջ փորած գերեզմանը տեսնել. ծննդյան այրը կորած է կանթեղների, թրգեղների, աշտանակների մեջ և վրան հոյակապ հին եկեղեցի, մինչդեռ կուզեի պարզ այրը տեսնել, Չիթենյաց սարը և Գեթսեմանի այգին լիքն են շենքերով: Չկա պարզությունը: - Պահո, տեղ չմնաց գրելու. սրտագին բարևներս սիրելի Մարտինին և Պիոնին, բարևներս բոլոր տեսնողներին և ճանաչողներին. շատ հոգնել են, շատ կարոտել են մեր աշխարհին, մարդկանց, սիրով հիշում են Թավրիզը, որ մեր երկրի շունչն ուներ և հուսով են, թե ինձ չեք մոռացել: Ողջույն Սիոնի լեռից.

Չեր Նիկոլ

Գ. Անանյանի արխիվ

Սիրելի Սիմոն,

Լրագիրներից իմացա, որ Հայաստանի կ. խաչի ներկայացուցիչները Փարիզ են հասել. աղջիկս ինձ գրում է, թե նրանցից մեկի միջոցով ինձ համար ուղարկել է թաշկինակի <...>, որ իր առաջին ձեռագործն է: Ես չգիտեմ նրանք պիտի կարենա՞ն անցնել Եգիպտոս, թե ոչ, ուստի կխնդրեմ.

Այն մարդուց, որի ով լինելը չգիտեմ և բերում է աղջկանս ձեռագործը, խնդրեմ՝ մանրամասն տեղեկանաս մերոնց դրության մասին՝ ապրուստ, հագուստ, առողջություն, բնակարան և այլն և գրես ինձ:

Առնես նրանից իր բերած ձեռագործը և ուղարկես ինձ, եթե նրանք Եգիպտոս գալու չեն:

Խնդրես, որ եթե կարող է երեխաներիս համար մի քանի նվերներ տանի իր հետ Երևան: Կարծում եմ շատ իրեր կտանեն իրենց հետ, ուստի դժվար չի լինի մերոնց համար էլ մի քիչ բան տանել: Եթե համաձայնեն, այն ժամանակ կխնդրեմ իմ հաշվին գնես և ուղարկես.

ա. Մի մեքանո (Շանթի երեխաներին հարցրու, գիտեն թե ինչ է, իրանք ունեցած են). Տուփ է երկաթեղեն մասերով լիքը, որ իրար կցելով՝ զանազան բաներ են շինում: Կառուցողական խաղերի մարզանք է:

բ. Մի տեսակ մուրճեր կան, որոնց կոթը մետաղի տուփ է և մեջը զանազան գործիքների գլուխներ կան (խարտոց, սղոց, բիզ և այլն), սրանցից երկու հատ, սուղ չեն և թեթև են:

Մեքանոները զանազան արժեք ունեն. մեկ կամ մեկուկես ոսկինոցը մերոնց համար շատ բավարար է:

գ. Երեք-չորս ձեռք ջութակի, վիոլոնչելի լարեր և նոտաներ՝ ջութակինը բավական վարժություն ունեցողի համար, իսկ վիոլոնչելի նոտաները մի տարվան ուսում ունեցողին համար:

դ. Ջրաներկի տուփեր, երեք հատ, մեծ ու փոքր վրձիններ և թուղթ, ներկերը լավ տեսակի լինեն, իսկ վրձինները երկու-երեք ձեռք:

ե. Album a colorer – թե պարզ և թե ավելի բարդ տեսակի.

զ. Կնոջս համար գուլպաներ և ինչ որ կինդ հարմար տեսնի, բայց անպատճառ որևէ բան կուղարկես:

Ես շատ բան էի առած և մոտս են, հույս ունեի, թե կարող է վստահելի մարդ պատահել և կուղարկեն, երեք տարի՝ առիթ չունեցա ուղարկելու: Ես դրան չեմ ուղարկում, որովհետև չգիտեմ պիտի հանձնառու լինե՞ն որևէ բան տանելու մերոնց. եթե համաձայն են՝ դու մի կերպ դրամ

գտիր ու գնիր, ծախքն ուղարկիր ինձ, ես անմիջապես կփոխադրեմ քեզ:

Հուսով եմ թե կհասկանաս վիճակս և ամեն ջանք կթափես հաջողացնելու նրանց համաձայնությունը և հիշածս իրերն առնելով՝ կուղարկես նրանց: Բացի իմ հիշածները, ինչ որ կարողանաս և հարմար տեսնես ուղարկել երեխաներիս ու կնոջս՝ գնիր և ուղարկիր:

Կնոջդ և ընկերներին սիրալիք բարևներ. բարևում են Շանթը և Սաշա Մարգարյան, որ նույնպես մեր վարժարանում պաշտոն ունի:

Սպասում եմ նամակիս պատասխանին և այս ձեռնարկության բարի լուրին:

Քո Նիկոլ

Գուցե իմ գնածներից մի երկու բան կարողանամ ուղարկել քո հասցեով: Արտանկարելու շատ լավ տետրակներ կան, կարող ես նրանցից ևս ընտրել և ուղարկել. Հասցե Paris, 18 Rue de vaim. Lefrance et. C:

ՀՀԿՄՄ, և. Աղթալայանի ֆոնդ

1926. 16 / II

Սիրելի Կուկու, Աչիկ, Մամչուկ

Մեքսո Ալեքսանդրիայի արևմտյան ծայրն է, երևցողները վերջին տներն են: Սիմաֆորը նույնն է նավերի համար, ինչ որ սիգնալը երկաթուղիների համար: Աֆրիկայի ծովափը տափարակի դաշտ է, ծովի վրա եղած նավերը ցամաք տեսնելու համար շատ պետք է մոտենան, իսկ ավիին զուգահեռ ընդծովյա ժայռեր կան: Այդ սիմաֆորը դրած են, որ նավերը դեռ հեռվից, երբ ցամաք չեն տեսնում, նկատեն սիմաֆորը և իմանան, թե ուր է քաղաքը: Պիշերը սիմաֆորի վրա լույս են վառում, որ մեքեմարար լույս է տալիս և հանգչում, կարծես թե աչքով է ամուռ նավերին, որ զուր չթափառեն դեռ ու դեն, այլ ուղիղ գան դեպի սիմաֆորը: Մեքսի մեջ է և Ալեքսանդրիայի հին պարիսպների մնացորդը և բարձր դուռը:

Ձեր հայրիկ

Ռոբեն որդու անձնական արխիվ

12 դեկտ. 1926
Ալեքսանդրիա

Սիրելի Հրարիկ
Վերջին նամակդ ես ստացա և իմացա, որ երեխաները լավ են, վարժարանը փոխած են, հիմա ցերեկն են գնում: Իմացա նաև, որ ըստ

երևույթին ձեր գալը չի հաջողվելու: Գուցե լավն այդ է առայժմ: Այնպիսի սոսկալի փոթորիկներ կան բոլոր ծովերի վրա, որ այս քանի օրը նավեր դուրս չեկան նավահանգստից. մի երկուսը փորձեցին դուրս գալ, փոթորիկը դուրս մղեց և զարկելով նավահանգստի քարափին՝ վնասեց: Ես ինքս մնացի անորոշ կացության մեջ, զրկված ամեն հարմարությունից, մի անպիտան փոշոտ սենյակի մեջ, սպասելով, թե ուր որ է կգաք: Քո բաց նամակը, որ ստացա ժամանակին, ինձ տրտմեցրեց: Անմիջապես <դիմեցի> ուր պետք է, և հարկ եղած հրահանգներն ուղարկել տվի Մոսկվա, բրիտանական հյուպատոսին, որ ձեր անձնագիրը վիզե անեն: Այս մասին հեռագրած են քեզ մի օր հետո:

Այս մասին այլևս կասկած չունիմ, քանի որ հեռագրի փողը 12 ռ. 50 կ եկան ստացան 21/XII ամիս:

Պետք էր ստուգել, թե հեռագրած են իսկապես: Գործի ծանոթ մարդիկ ասին, ստուգելն ավելորդ է. իհարկե հեռագրած են. ես էլ այդ հիման վրա հեռագիր ուղարկեցի քեզ. մի 7-8 օրից հետո ինձ կանչեցին. պարզվեց, որ չեն հեռագրել դեռևս: Նորից խոստացան հեռագրել Մոսկվա, այս անգամ ես ստուգել տվի և պարզվեց, որ իրոք հեռագրել են: Շատ էի վախենում, որ դու իմ հեռագրի հիման վրա կդիմես Մոսկվա և քեզ նորից կպատասխանեն, թե հրահանգ չունեն: Հուսով եմ, սակայն, որ թե քո դիմումը և թե այստեղի հեռագիրը միաժամանակ կհասնեն Մոսկվա և այս անգամ կստանաս վերջին վիզեն և հունաց դեսպանին ցույց տալով՝ նրա վիզեն ևս կապահովես: Դրամի մասին էիր գրել. ես արդեն մտադիր էի ուղարկել, բայց մինչև օրս դրամ չեմ ստացել: Հոկտեմբեր ամսվա ստացածով ապրել մինչև այսօր և պարտք վճարել: Նոյեմբերը դեռ չեմ ստացել, որոշել եմ՝ ստանամ թե չէ՝ անմիջապես ուղարկել քեզ: Ես քեզ պարտք եմ սեպտ. հոկտ. նոյեմբ. և դեկտեմբ.- առաջին երկու ամսվանը կուղարկեմ հենց որ ստանամ: Խոստացաք գալ, ես էլ նամակ չգրեցի, որ դրամն իբր ուղարկեմ՝ հետո նամակ գրեմ, բայց չկատարվեց, դրամական մեծ նեղություն կա երկրի մեջ և մեր գործերում: Այսօր շտապում եմ նամակս գրել, որ եթե վաղը նույնպես դրամ ուղարկել չկարողանամ, գոնե նամակս ուղարկեմ, որ իմանաս, թե դրամ գալու է: Միայն ի սեր աստծո նեղ ապրեք և խնայողությամբ ծախսեք, քանված եմ արդեն, սնունդս պակասեցրել եմ, որ կարողանամ թե քեզ ուղարկել, թե ապրել մի կերպ և թե պարտք տալ: Այսօր արդեն 40 ոսկի պարտք ունեմ: 30-ը ամռան ծախս է և 8-10-ը վարժարանին եմ պարտք: Եղած չեղածը ճամփու ծախսի համար ուղարկեցի, այն էլ այսպես եղավ: Մի կողմից պետք է պարտք տալ, մյուս կողմից մտածել գալիք ծախսերի մասին: Կարող

ես երևակայել իմ վիճակը, որ ես պարտք չեմ սիրում: Տրամադրությունս շատ վատ էր ամառը, վատ մնաց և աշնանը, ոչ մեկ հարմարություն ունեմ, իբր սենյակ վարձած մարդ չի էլ կարելի պահանջել. ողորմելի սենյակ է մի անպիտան փողոցի մեջ, մի անմաքուր ընտանիքում, որին վճարում եմ 16 ռուբլի ոսկով, դուռը չի գոցվում, սենյակս չեն մաքրում ինչպես պետք է: Գրասեղանիս և գրքերիս վրա փոշի է մատում, ստիպված եմ թեյս ինքս եփել (այդ միշտ արել եմ), այլև ամանները լվալ, որ բավական ժամանակ է խլում, իսկ ես ժամանակ չունեմ, գրում եմ հայոց գրականության պատմություն. շատ ընդարձակ ծավալով, արդեն մոտ 350 էջ գրած եմ և դեռ հեթանոսական շրջանի երգերի մասին է խոսքս. լեզվագիտական հետազոտություններ եմ անում, որ ինձ այնպես են կլանել՝ շատ անգամ մոռանում եմ գլխարկս դնել կամ փողկապս կապել: Այս կատաղի զբաղմունքը որ չլինի, խելքս կթոցնեմ. երբեք ինձ այնպես լքված ու անամոք չեմ զգացել, ինչպես այս տարի: Ինչևէ: Դրամ նորեմ կուղարեմ, հենց որ ստանամ: Դուք էլ սպասեք և գարունքին եկեք: Ես կամեցա, որ երեխաներն ամառը չնեղվեն և արդյունքը ահա թե ինչ եղավ: Թեև մեզանից անկախ եղավ ինչ որ պատահեց: Միրելի Կուկուին, Մանչուկին և Աչիկին շատ բարև ու համբույր... Թագուհուն և Մամին, Հրածնենց նույնպես.

Քո Նիկոլ
21/XII

Այս նամակը, որ երկու շաբաթ առաջ պիտի ուղարկեի, չուղարկեցի. հուսալով դրամ ստանամ, բայց ահա այսօր դեկտ. 21-ն է և ես դրամ չեմ ստացած: Բայց դու վստահ եղիր, որ ամսականս ստանալուն պես՝ կուղարկեմ 20 անգլ., իսկ մնացած 5-ով էլ մի կերպ քարշ կգամ: Կխնդրեմ սիրելիս անպատճառ ինձ համար ձեռք բերես ռուսերեն լեզվով մի վրացերենի քերականություն և մի վրաց-ռուսերեն բառարան: Կա մի մեծը ԳյժճՊՅՈՅ-ի, բայց հազիվ թե գտնես. դեռ սրանից 15 տարի առաջ հազվագյուտ էր: Բայց եթե կարողանաս գտնել՝ ամենամեծ բարիքն արած կլինես և մեծագույն ընծան Նոր տարվա առիթով: Իսկ եթե Չուբինովի բառարանը չկա - հավանական է, որ ավելի փոքր բառարան լինի, դրանից առ: Գալով քերականության՝ կարծում եմ հիմա կունենան հրատարակած. չմոռանաս ռուսերեն լեզվով վրացերեն քերականություն: Պրոֆ. Մառը մի բարակ, բայց նշանավոր տետրակ ունի հրատարակած վրացերեն բայերի խոնարհման մասին: Աշխատիր գտնել այդ ևս և ուղարկել ինձ: Եթե այս գրքերը շուտ գտնես, մի սպասիր քո գալուն՝ այլ ուղարկիր փոստով, ինձ շատ պետք են, շատ: Ես անցյալ տարի «Մար-

տակոչին» մի նամակ գրեցի և հայտնելով, թե երևի ինձ ճանաչողներ կլինեն խմբագրության մեջ՝ խնդրեցի այդ գրքերն ուղարկել ինձ և փոխարենը խոստացա կամ դրամ ուղարկել կամ գրքեր ինչ լեզվով որ ուզեն և ինչ գիրք ուզեն, բայց պատասխան չստացա, երևի նամակս կորավ ճամփին: Դու կարող ես Թիֆլիս որևէ ծանոթ մարդու գրել, որ գիր ու գրականության հետ գործ ունի. թող որոնեն, գտնեն, գինը քեզ հայտնեն: Գերմաներեն կա մի փոքրիկ քերականություն, բայց հեղինակը հմուտ չէ վրացերենին և Մառը իր մի գրվածքում այդ տեսակներին բավական ծաղրում է: Ես այնքան սերտ կապ եմ գտած վրացերենի և հայերենի միջև, որ պիտի զարմանան ամենքը, երբ աշխատությունս լույս տեսնի, դրա համար իմ իմացած բառերը քիչ են. մի 100-200, որքան կհիշեն: Պետք է բառարան, որ բառ բառի դեմ բռնեն: Այդ նմանությունը գտնելու համար ես նոր տեսակետ մշակեցի մեր հնչյունների մասին, որ հաստատվում է հազարավոր փաստերով. երբ այսպես լուծում են հայոց բառերը՝ նրանք մի կողմից մոտենում են վրացերենին, մյուս կողմից հին ուրարտական բառերին, որով հայերը ոչ թե ծուլված են և հայ դարձած, այլ մեր լեզուն հենց ուրարտերեն է որ կա՝ միայն խիստ ձևափոխված: Եվ այդ ուրարտերենն էլ հնդիկ-եվրոպական լեզու է: Վերջապես՝ գլուխդ ինչ ցավացնում: Այդ բառարանն ու քերականությունն ուղարկիր կամ բեր **ամպատճառ**. լավ հայր եմ և լավ ամուսին: Խոսք չկա. փոխանակ դրամ ու նվեր ուղարկելու՝ լեզվաբանությամբ գլուխ եմ լցնում: Երկուսն էլ թող իմ պարտքը լինի:

Համբույր՝ քո Նիկոլ

ԳԱԹ, Ն. Աղբալյանի ֆոնդ, Գ. 3839-19

1927 հունվ. 25

Ալեքսանդրիա

Սիրելի Արտաշես

Դու ինձ կալմեջ ես արել, ամեն կողմից ասում եմ՝ գրի, հա գրի, և քո դրդումով եմ ասում: Ես էլ ուզում եմ, որ մի բան գրեմ, բայց ի՞նչ:

Միտքս զբաղված է լեզվական խնդիրներով:

Անցյալ օրը Շանթի հետ խոսեցի ուղարկածս հողվածի մասին, որ պատրաստում էի «Սիոն»-ի համար: Ասավ. Ինչո՞ւ «Սիոն»-ին և ոչ «Հայրենիք»-ին: Ասում եմ, բայց մի՞թե այս կարգի նյութերը կտպագրեն «Հայրենիք»-ի մեջ: Ասում է՝ ինչո՞ւ չէ: Բավական սիրտ տվեց. ես էլ աշխատեցի հետաքրքրական ձևով գրեմ, որքան նյութը թույլ կտա: Չասես, թե չեմ մտածում «Հայրենիք»-ի մասին:

Երկու տարի է հայոց գրականության պատմություն եմ գրում, որի առաջին ավելի քան 400 էջ կլինի և հազիվ հասնում է մինչև Գրերի Գյուտը: Բայց պետք է լավ մշակել. պետք են գրքեր, գրադարան: Ո՞րտեղից գտնեն: Իսկ իմանալ թե բանն ինչպե՞ս կանեն, և չանել այնպես, ինչպես պետք է անել, շատ դժվար է ինձ պես մարդու համար: Ահա թե ինչու գրածս դեռ մնում է սևագրական վիճակում: Բայց այդ գործը մտածել եմ «Հայրենիք»-ին ուղարկել և նրա համար պատրաստել:

Գալով իմ լեզվական որոնումներին, պետք է ասեմ, որ հղացել եմ բոլորովին նոր տեսություն մեր լեզվի հնչյունաբանության մասին: Հազարավոր դիտողություններ ունեմ, որ հավանորեն շուտով կարգի կբերեմ: Գիտես, որ ժամանակս ծախված է. իմ միսն ուտելով եմ աշխատում: Գործը դժվար է: Ամեն բառ մի գիրք է, որ պետք է կարդալ իմանալ:

Ես գտել եմ կարդալու գաղտնիքը, բայց ուրիշներին հայտնելուց առաջ պետք է ստուգեմ հայոց լեզվի բովանդակ տարածության վրա, այսինքն՝ հայ բառամթերքի, որ ավելի քան 200.000 է (գավառականով միասին) և հայ քերականության, որ գրաբար է, աշխարհաբար և բարբառական:

Ես ինքս շտապում եմ օր առաջ հրապարակել տեսություններս: Գրած եմ գործիս առաջաբանը 50 էջ և դեռ անցյալ գարնան ուղարկած եմ «Հանդես Ամսօրյա»-ին, բայց տարեկան 6 համարով նա հազիվ կարողանա իր գրածները լույս ընծայել: Շանթն ասում էր «Հայրենիք»-ին ուղարկիր, նրա հազարավոր ընթերցողների մեջ միայն կարող ես գտնել համակիր ու հետևող և ոչ մասնագետների: Չգիտեմ ի՞նչ մտածեմ:

Երբեմն ինձ թվում է, որ իմ աշխատանքներին հատկացված էջերը կորած կարող են համարվել, և հետո այն եմ մտածում, թե կլինի՞ առաջաբանը մի տեղ ուղարկել, իսկ բուն գիրքը՝ ուրիշ տեղ:

Դու չես կարող երևակայել, թե ի՞նչ հորիզոններ են բացվում իմ գյուտերի շնորհիվ հայերենի հետազոտության բնագավառում: Իմ գտած օրենքները քիմիական ռեակցիաներ են, որ կաթեցնում ես բառերի վրա թե չէ, իսկույն լուծվում են և իրենց բաղադրիչ տարրերը երևան բերում:

Ինչևէ: Սկսանք գրել, հուսով եմ՝ հոսեմ, թեև սակավաջուր, բայց հարատև: Գուցե լեզվից անցնեն գրքերին և վերստանամ հին պաշտոնս գրականության մեջ, որ իմ ցանկությունն է և սիրելի «իմոց ախորժակաց» ինչպես կասեր Խորենացին:

Մի բան էլ ասեմ, կխնդրեմ, եթե հողվածս հարմար չտեսնես բնավ խղճահարություն չունենաս չտպագրելու, միայն հետ ուղարկիր ինձ, որ ազատես նորից գրելու աշխատանքից: Ես ինքս գիտեմ, որ այս կարգի գրությունները շատ հաճույքով չեն կարդում, ունքը շինելու տեղ, աչքն էլ

չհանենք, կաննալով օգտակար լինել «Չայրենիք»-ին՝ չտանք, չվնասենք նրա տարածման: Ուրեմն, մի կարծեր, որ սրտիս ցավ կլինի, եթե ուղարկածս չտպագրվի, բնավ: Կգարմանամ, որ տպագրվի: Չիմա դու գիտես:

Ուզում էի գրածիս մի քանի տող առաջաբան կցեմ, թե, ով ընթերցող, եթե համ չառնես իմ գրածից, մեղավորը ընկեր Դարբինյանն է, որ ինձ ստիպում է գրեմ, բայց հետո թողի:

Կնոջդ ու ընկերներին շատ բարևներ, քեզ առողջություն և հաջողություն:

Քո՝ Նիկոլ

ԳԱԹ, Ն. Աղբալյանի ֆոնդ, Գ. 3839-21

1938, մարտ 29
Բեյրութ

Սիրելի Չամաստեղ,

Ստացա նամակդ և սիրով կարդացի: Լսած էի ամուսնությունդ և եթե չեմ սխալու՞մ - գրած էի, թե չեմ գրած՝ ահա գրում եմ հայտնելու համար, որ ուրախ եմ աշխարհի մտնելուդ առիթով: Մեր ժողովուրդը ամուսնանալուն «աշխարհի մտնել» է ասում, համարելով թե ամուսին դուրս է աշխարհից, այսինքն համայնքից և նրա գործերից: Բարևիր մեր անծանոթ հարսին և հայտնիր իմ մաղթանքները ձեր մի բարձի ծերանալու մասին: Եթե իրար հասկանաք և իրար օգնեք՝ վստահ եղեք, որ կյանքը կանցնի առանց մեծ դառնության. եթե իրար հասկանաք և իրար չխանգարեք՝ նորից կարելի է ապրել հաշտ ու համերաշխ: Իսկ եթե ամեն մարդ իր էջը քշի - այն ժամանակ զուր էր ճամփի ընկեր դառնալը: Մեր անհատապաշտ դարում հաճախ է պատահում, որ մարդիկ ընկերանում են՝ առանց մտածելու - թե ընկերությունը փոխադարձ զիջում է, որ կամ պետք է սիրով կատարել կամ արդարությամբ. լավ է, անշուշտ, որ սիրով կատարվի, այն ժամանակ հաշիվ չի պահվի, ինչպես մայրն իր երեխայի հանդեպ, բայց գոնե արդարությամբ պետք է զիջեն կողմերը, որ կարենան հաշտ ընթանալ: Ջուր չէ, որ լուծ են ասել ամուսնության մասին. կամովին առած լուծ՝ կյանքի ակոսը վարելու: Բարդ է նոր մարդու հոգին և շատ զգայուն. սերն անշուշտ ամենագետ է և կարող է ամեն սուր անկյուն մաշել մեղմորեն, բայց սերն այնքան նույնացած է հիմա սեռի հետ, որ «մարդն» անտեսվում է և «կինն» է մարդու աչքին երևում, որ կարող է կորցնել իր թարմությունը: «Մարդուն» սիրելով պետք է «կինն» առնել և ոչ կին սիրելով մարդ որոնել նրա մեջ: Երբ մարդը սիր-

վի կնոջ մեջ՝ նա վախ չունի տարիքից, որին օգնել չեն կարող ոչ հագուստի նոր ձևը և ոչ շպարը: Սա թող լինի իմ բարեմաղթությունը ձեզ: Երկար ապրելու չեք. ամենաշատը հարյուր տարի. ուրիշ անգամ աշխարհի գալու չեք.- Այս է որ կա. հետո գալու է հավերժական խավար և հանգիստ: Պետք է խաղաղ ու սիրով անցնել կարճ ճամփան. հաշտ ու համերաշխ: Եթե մարդիկ սովորություն դարձնեն վշտի, բարկության, սրտնեղության և սրանց մեծ պահերին անդրադառնալ, որ առջևները մահ կա՝ ամեն ինչ կոյուրանա և անսահման ներողամտությամբ կհամակվին և թեթև կապրեն այս աշխարհում: Ոմանք սաղսափում են մահից, իմ աչքում նա մի մեծ բարիք է, որ անհունորեն բարձրացնում է ամեն մի վայելքի և հաճույքի արժեքը: Եթե մտածենք, որ այսօր անցնում է և վերադարձ չունի՝ պիտի զղջանք, որ այդ անցնող օրը դառնություն բերեց մեր պատճառով սրան կամ նրան, բայց մանավանդ մեր սիրածին: Ինչ պիտի տար սրտնեղությունը, վիրավորանքը, անուշադրությունը, արհամարհանքը, մռայլ կնճիռը, զայրացկոտ խոսքը, հարգանքի պակասը, հնարավորի մերժումը և սրանց մեծ աննշան բաները, որ խանգարում են սիրած մարդոց ներդաշնակությունը. հավիտյան ապրելու՞ն ենք. միշտ երիտասարդ պիտի մնանք. դյուրի՞ն է լավ կին ու բարեկամ գտնելը. տիեզերական ուժեր վարում են մեզ դեպի մահ. ինչո՞ւ իրար սիրտ կոտրենք այդ խուճապի մեջ, ինչո՞ւ իրար չօգնենք, իրար վրա չգուրգուրանք, իրար չսիրենք.- խեթ-խեթ իրար նայելով, իրար զարկելով, իրար սիրտ կոտրելով ավելի դանդա՞ղ պիտի վարե տիեզերքը մեզ դեպի մահ. նա, որ չգիտե իսկ, թե մարդիկ սիրել ու ապրել գիտեն... Ահա քեզ մի տեսություն «Փիլիսոփայական ամուսնության», որ եթե որդեգրել կարենաք՝ սիրով կանցնեք այս աշխարհից, լայն սրտով և մեծ համբերությամբ, ներողամիտ իրար հանդեպ և համայն մարդկության:

Կարդացի գրածիդ սկիզբը. ինքնատիպ է հղացումը, չգիտեմ թե ուր է գնալու քո մաքին և իր տնկած ագին. կարող եմ ասել, որ ժողովրդական լեզուն և բարեմիտ հեզմանքը գրվածքի աղն են առայժմ. սպասենք վերջին: Իր ինքնատիպությունը գրավական է ինքնին. ընթացքը հասում է, անսայթաք. այս նույնպես մի արժեք է և լավ նշան: Տեսնենք ուր է հասնելու այդ լեռնային վտակը, որ հոսում է վճիտ և մտերիմ գլզլոցով և հիշեցնում մեր աշխարհն ու գյուղը: Լավ է իրար գրելով հիշելը, բայց չգրելը- մոռացում չէ. սիրով եմ հիշում և սիրով սպասում ձեզանից գոհության լուրեր, քեզանից գրական լավ գործեր:

Սիրով՝ Նիկոլ

ԳԱԹ, Չամաստեղի ֆոնդ, 58-3

Ծանոթագրություններ

Աղբայանը գրական գործունեությունն սկսել է 1896-ի կեսերից: Առաջին տպագիր ելույթը Ա. Շիրվանզադեի «Կրակ» պատմվածքի մասին էր («Մուրճ», 1896, № 9, էջ 1172-1174), «Գրախոսություն» բաժնում, Ն. Աղբայան ստորագրությամբ):

Ամսագրի ավանդույթներից մեկը հայերեն գրքերի մասին (ինքնուրույն, թե թարգմանական, գեղարվեստական, թե գիտական) գրախոսականներ տպագրելն էր: «... Հայկական գրքերի ... մասին հաշիվ տալը մեր այդ բաժնի («Գրախոսություն» բաժնի. - Գ. Ա.) առաջին նպատակն է», - հավաստում էր Արասխանյանը («Մուրճ», 1889, № 10, էջ 1657): Այս խնդրի իրականացման համար ևս նա անընդհատ որոնում և ամսագրի հետ կապում էր երիտասարդ, շնորհալի ուժեր: Աղբայանը նրանցից էր: Խմբագիրը իրավունք ուներ գրեթե մեկ տասնամյակ հետո գրելու. չի կարելի ուրանալ այն մեծ նշանակությունը, որ «ամեն գրականության մեջ ունի մի զուտ գրական, գերծ ամեն անմաքուր միտումներից գրախոսությունը այնպես, ինչպես «Մուրճն» է հասկացել ... վարվելով այդ գործում ամենայն շրջանկատությամբ, որպեսզի միգուցե անմաքուր ծեռքերով չգան ու անծնական հաշիվներ չնաքրեն այլևայլ ապիկար գրչակներ, քննադատությունը չդարձնեն բարեկամների խաթրի և չարակամների վրիժառության ասպարեզ: Մենք պնդում ենք, որ «Մուրճից» առաջ չկար այսպես հասկացված քննադատական մի բաժին մեր պարբերական հայ մամուլի մեջ. պնդում ենք, որ «Մուրճի» այդ բաժինը, շնորհիվ իր սիստեմականության և անշեղ ուղղության, արդեն իսկ յուր բարերար ազդեցությունը արել է հայ գրականության վրա» ... («Մուրճ», 1896, № 10, էջ 1422):

Համընդհանուր ճանաչում ստացած այս գնահատականը Արասխանյանի մահվան կապակցությամբ գրած հոդվածներում հաստատում է Աղբայանը ևս: Այս մթնոլորտում դաստիարակված քննադատը որդեգրեց ավանդույթ՝ հավատարմորեն կիրառելով այն ոչ միայն ամսագրին աշխատակցելիս և «Հորիզոն» ու «Նոր հուսանքը» խմբագրելիս, այլև ամբողջ կյանքում:

Չորս տարվա ընթացքում (1896-1899) «Մուրճում» հրատարակեց շուրջ հինգ տասնյակ գրախոսություն ու հոդված:

ՀԱՄԱՋԱՐԱՆ (էջ 5)

Աղբայանի շատ գրություններ բաժանել են իրենց հեղինակի դժվարին ճակատագիրը: Այս «Հառաջաբանը» գրել է 1920-ին հրատարակվելիք «Գրադատականների» (սա Աղբայանի առաջարկած վերնագիրն է) առաջին հատորի համար: Հատորը չհրատարակվեց, իսկ «Հառաջաբանի» ձեռագիրը 73 տարի լռեց արխիվներում:

«Գուցե մի կամ երկու էջ հառաջաբան ուղարկեն», - հայտնում է հրատարակիչ Մ. Էփրիկյանին 1920-ի փետրվարի 11-ին հղած նամակում (տես՝ Ն. Աղբայան, «Նամակներ, պաշտոնական գրություններ», կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները հեղինակեց Գառնիկ Անանյանը, Երևան, 2002, էջ 79-81):

Իսկ արդեն նույն թվականի ապրիլի 20-ի նամակում կարդում ենք. «Լսեցի, որ Չատուկից հետո մտադիր եք իմ հավաքածուն տպագրության տալու, կուզեիք օր առաջ ունենալ նախաբան: Ջրաղված լինելով՝ այսօր միայն կարողացա ժամանակ գտնելու և ահա ներփակ ուղարկում եմ»:

«Ներփակ» ուղարկածը տետրակի կես էջից էլ պակաս չորս թերթիկների վրա աղբայանական ընթերցման ձեռագրով մի գրություն է, խոստացված «Հառաջաբանը»: Թուղթը դեղնավուն է, 1-ին թերթը անտող, մյուս երեքը՝ քառակուսի տողված: Սրանցից մեկի՝ 2-րդ էջի հակառակ երեսին կարդում ենք՝ Գ. Հ. Մինիստր հանրային կրթության: Կարելի է ենթադրել, որ պաշտոնական ինչ-ինչ գրություններից պոկած պատահիկների վրա է գրված «Հառաջաբանը»: Թեև այն գրականության վերաբերող հոդվածների համար էր նախատեսված, նպատակահարմար գտանք դարձնել «Ընտրանիի» առաջաբան:

Առաջին անգամ տպագրվել է Բեյրութի «Ազդակ» (1993, № 104) օրաթերթում (տես՝ Գ. Անանյանի հրատարակումը՝ «Չհրատարակված գրքի «Հառաջաբանը»):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (էջ 7)

Հայոց գրականության «մի գիտական և հմտալից» պատմություն «հորինելը» Ն. Աղբայանի կյանքի նպատակներից էր: Տարիներ հետո, սակայն, ավելի ու ավելի հասու է դարձել մեկ մարդու ուժերով այդ խնդրի իրականացման և այլ բնույթի դժվարություններին:

Հառաջացած տարիքում, բարեկամների համառ հորդորներին ունկնդիր՝ ձեռնարկելով այն, իրեն հատուկ շիտակությամբ խոստովանել է. «Գիտեմ, թե ինչ պետք է և ինչպես, բայց բավական չէ պայծառ գաղափար ունենալ գրականության լավ և հմտալից պատմության մասին, պետք է այդ գաղափարն իրացնել կարենալ գործնապես»:

Եվ բավական չէ իրացնելու կարողություն ունենալ, պետք է նաև հնար ու միջոց» (Ամբողջական երկեր, հ. IV, էջ 80: Առաջին հերթին պակասում էր վերջինը՝ «հնար ու միջոցը»:

Նյութականից բացի կային ավելի լուրջ դժվարություններ, որոնց մասին կրկին ցավով ինքն է գրում. «Չունինք մեր գրական պատմական մասնակի հետազոտություններ, չունինք բնագիրների գիտական հրատարակություն ... Հին գրականության հետազոտությունը դեռ չէ դուրս եկած բանասիրական բովից ... Նույն վիճակի մեջ է գրական գործերի գրապատմական հետազոտությունը. աղբյուրների և ազդեցությանց խնդիրների քննությունը հազիվ սկսված է: Կան գրական ընդարձակ դաշտեր, որ դեռ խոփի չեն համդիպած» (նույն տեղում)...

«Գիտական և հմտալից» պատմության միայն «Ներածությունը» հասցրեց ավարտել, որ հրատարակվեց 1947-ին Բեյրութում՝ «Պատմություն հայոց գրականության. ներածություն» վերնագրով: «Գրականության պատմությունը» այս «Ներածության» բաժիններից է:

**Ղազար Փարպեցի
(էջ 15)**

1951-ին, կրկին Բեյրութում Համազգայինը հրատարակեց «Դասախոսություններ հայ մատենագրության մասին», որը, արդեն, նախատեսված էր լայն ընթերցողի համար (համառոտելով և հարմարեցնելով նոր պատմության պահանջներին), «Ներածությունը» զետեղում է այստեղ:

«Ղազար Փարպեցին» «Դասախոսությունների» հատված է: Երկու գիրքն էլ հետագայում մեկտեղվեցին «Ամբողջական երկերի» IV հատորում (Բեյրութ, 1970):

«Դասախոսություններում» պատմության ընթացքը հասցնում է մինչև VII դար, ավարտվում է Սովսես Կաղանկատվացիով: Համազգային հայ կրթական և մշակութային միության Բեյրութի արխիվի Աղբալյանի ֆոնդում պահվում է Փալանճյան ճեմարանում հայ գրականության պատմության դասախոսությունների՝ ուսանողի գրառած մի ստվար տետր, որի էջերին Աղբալյանը մատիտով ուղղումներ է կատարել: Ըստ երևույթին պատրաստում էր հրատարակության: Ընդգրկում է VIII – XIV դարերը: Եթե նկատի ունենանք «Սայաթ – Նովայի հետ» (Ամբողջական երկեր», հ. II) եզակիորեն ինքնատիպ հետազոտությունը, Սայաթ – Նովային և այլ հեղինակների նվիրած հոդվածները, գրախոսականները, «ռեպլիկներ»-ն ու «մանրուք»-ները (իր արտահայտություններն են), հայ գրականության պատմության պարբերացման համակարգը, բազում սևագիր մշումները կարելի է պնդել, որ պատմության ամբողջ ընթացքը հստակ համակարգի էր ենթարկված:

Ավաղ, արեց այն, ինչ հնարավոր էր, հնարավորություն չունենալով անելու այն, ինչ կարող էր:

**ՍԱՅԱԹ - ՆՈՎԱՅԻ ՀԵՏ
(էջ 25)**

Հանիրավի մոռացության է տրվել Աղբալյանի վաստակը սայաթ – նովագիտության մեջ ևս: Հովհ. Թումանյանի հետ միասին Հայ գրողների ընկերության կազմակերպած երեկոներով նպաստեց հանճարեղ աշուղի հայտնությանն ու մասսայականացմանը: Հանդես էր գալիս զեկուցումներով, գրում էր հոդվածներ, հրաշալի կատարում էր Սայաթ – Նովայի երգերը: «Սայաթ – Նովայի հետ» անավարտ ուսումնասիրությունը, որտեղից առնված են այս հատվածները, ոչ միայն գիտական խորությամբ, այլև ուսումնասիրության մեթոդով ու ընդգրկմամբ եզակի երևույթ է հայ բանասիրության մեջ: Այստեղ հաճելի ներդաշնակությամբ միահյուսվել են գրականագետն ու պատմաբանը, ազգագրագետն ու բանասերը:

**ՆՈՐ ԵՐՁԱՆԻ ԳՐՎԱՆՈՒԹՅՈՒՆ
(էջ 47)**

Աղբալյանը այս շրջանի գրականության մեջ էր և այն ստեղծողներից էր: Միջնադարից տարանջատելու հստակ գիտակցումը վաղուց կար, սակայն: Այս շրջանի սկիզբը տեղադրում էր XVII – XVIII դարերի սահմանագծում՝ ներառելով

Մխիթարյանների գրական ժառանգությունը ևս, մասնավորաբար Ղ. Ալիշանի հայրենասիրական երգերը, որոնք «մեծ ազդեցություն են ունեցել ռուսահայ գրականության վրա»: Այնուամենայնիվ նոր գրականության հիմնադիր դիտում է. Խ. Աբովյանին: Առանձին հոդված չի նվիրել նրան, բայց տարբեր առիթներով գնահատել է: Աբովյանն իսկական հայտնություն էր, «հայ համճարի ծնունդ», որի «իրական բովանդակությամբ և ազգային ուղղությամբ» վեպը «հիմնական ուղին զծեց հայ գրականության»: Այնուհետև բացում է «իրապաշտ բովանդակության» իմաստը. իրական կյանքից առնված պատկերներ ու հերոսներ, ժողովրդական վարք ու բարք: «Նոր գրականության հայր» Աբովյանը «սիրով ու պատվով հետ կանչեց գյուղացուն իր տրեխով ու մորթե փափախով, իր ցնցոտիներով ու խոնջացած մարմնով և գրականության մեջ առաջնակարգ ու պատվավոր տեղը հատկացրեց նրան: Այս մի շատ կարևոր և երջանիկ հանգամանք է, որ մեր գրականությունը հենց սկզբից այդպիսի առողջ հողում է տնկվել, այդպիսի առողջ հիմքերի վրա է դրվել: Գյուղացին մտավ գրականության մեջ, միայն նրա մի ճյուղի՝ վիպագրության մեջ»: (Մուրճ, 1897, № 7-8, էջ 1060):

«Հորիզոնի» և «Նոր հոսանքի» հոդվածներում, զերազանցապես հայ դասականներին նվիրած խմբագրականներում ու առաջնորդողներում, դիմանկարներում, գրախոսականներում հանդիպում են բնութագրումներ, գնահատականներ, տեսական ընդհանրացումներ, որոնք հայտնաբերում են մի ճշմարիտ հայացք նոր գրականության անցած ուղու, զարգացման գլխավոր օրինաչափությունների, նրա իսկական մեծությունների գրաված տեղի ու նրանց վաստակի գնահատման վերաբերյալ:

Տարեգրի համբերությամբ անդրադարձել է գրական համապատկերը թեկուզ ինչ-ինչ նրբագծերով հարստացրած հեղինակներին, չխուսափելով անողորմ բննադատության ենթարկել բոլոր նրանց, ում Մուսայի փոխարեն «Ժպտացել է» «հուշկապարիկը»: Սա էլ գրական քննադատի պարտականություններից էր համարում:

Նշելով, որ մեր գրականությունը զարգացել է հայրենիքի սահմաններից դուրս նույնպես՝ «ԺԱ դարուն, Կիլիկիա, ԺԶ դարուն՝ Պոլիս, Եվրոպա, ԺԸ դարուն՝ Մխիթարյան վանք», հատուկ ընդգծում է արդի զարգացման արգասավոր ընթացքը՝ «Ի դարուն է վերջապես, որ մենք այսօր Հայաստանի մեջ ունինք հայոց գրականության ամբիոն մը, ուր կրնանք մեր գրականությունը ուսումնասիրել մեր հողին վրա» («Ամբողջական երկեր», հ. IV, էջ 246): «Մեր հողին վրա» լինելու հանգամանքը գրականության զարգացումը տանում է «դեպի հայրենացում և ազգայնացում» ...

Աղբալյան քննադատի մեծագույն ծառայություններից էր այն, որ նա քննադատությունը ազատեց խմբային – կուսակցական մոտեցումներից՝ հայտարարելով, թե իսկական արվեստագետի «հայացքը լայն է և չի ճանաչում կուսակցություն»: «Լայնազդեցիկ են» այն ստեղծագործությունները, որոնք «խոսում են լայն բազմության մտքին ու սրտին», իսկ «խմբական շահեր, գաղափարներ» արտահայտող երկերը կարճատև կյանք ունեն և գեղարվեստական չեն: Այս սկզբունքի ամենահետևողական կիրառողը ինքը եղավ:

Առանձին մտքեր, ձևակերպումներ կարելի է վիճարկել, սակայն գրական իրողություններին և նշանավոր ներկայացուցիչներին տված բնութագրումները գիտական նշանակությունը պահպանում են այսօր ևս:

ԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԲՐՔՐՈՒԹՅՈՒՆ
(էջ 47)

Հայ գրողների ընկերության կազմակերպած գրական երեկոները լայն արձագանք գտան հանրության շրջանում: Աղբյւրանը պարբերաբար հանդես էր գալիս դրանց լուսարանմամբ, ընկերության գործունեությունը պաշտպանում էր հարձակումներից, երբեմն էլ «հանպատրաստից» փոխարինում էր հիվանդության կամ ինչ-ինչ պատճառներով բացակայող զեկուցողներին (Հայ գրական ընկերության առաջին երեկույթը, Հորիզոն, 1912, № 278, Գրական ընկերություն, 1913, № 69, Հայ գրողների ընկերությունը, № 124, Հայ գրականության ապագան, 1914, № 64, Հայոց գրականության ընդհանուր տեսությունը, զեկ. Ն. Աղբյւրյան, 1914, № 99 և այլն): Գործուն մասնակցությունը Հովհ. Թումանյանի Վերնատան և Հայ գրողների ընկերության աշխատանքներին նպաստեցին Հայաստանի գրողների ընկերությունը, հետագայում՝ Համազգային հայ կրթական և մշակութային միության աշխատանքները կազմակերպելուն:

Գ. Սունդուկյանի «Կտակը»
(էջ 49)

«Հորիզոնի» նույն համարի «Գ. Սունդուկյան» անստորագիր հոդվածը նույնպես Աղբյւրյանի գրչին է պատկանում: «Գ. Սունդուկյանի գործը» (№ 60, 62) դարձյալ ինքն է գրել:

ՐԱՖՖԻ
(էջ 51)

Րաֆֆուն հաճախ է անդրադարձել, ոչ միայն գրական հոդվածներում (տես՝ «Րաֆֆի», «Տաճկահայք», Հորիզոն, №№ 115-116, 118) Րաֆֆին քվերով (№ 134):

Հ. Թումանյանի «Քաջ Նազարը»
(էջ 59)

Ժողովրդական բանահյուսությունը գրական մշակման ենթարկելու սկզբունքների առումով ուշագրավ են նաև Հովհ. Թումանյանի «Աղավնու վանքը» (Հորիզոն, 1913, № 53), Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուի մասին «Երգ ու վերք» հոդվածը (Մուրճ, 1898, № 6, էջ 839-855):

Լևոն Շանթ
(էջ 70)

Լ. Շանթն ու Ն. Աղբյւրյանը ընկերներ էին: Շանթի մասին շատ է գրել, մանավանդ՝ արտասահմանում (տես՝ Մուրճ, 1896, № 12, էջ 1605-1618, «Շանթ», «Երգ օրեր», «Շանթի երգերը», Հորիզոն, 1913, № 27, Ամբողջական երկեր, հ. I, Բեյրութ, 1959, էջ 18-77 և այլն):

Ավետիք Իսահակյան
(էջ 75)

Աղբյւրյանն առաջիններից էր, որ Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուն գնահատեց իբրև նոր երևույթ մեր պոեզիայում: Այնուհետև անընդհատ անդրադարձել է նրա ստեղծագործությանը (Բանբեր գրականության ու արվեստի, Բ գիրք, 1904, Ս. Պետերբուրգ, էջ 189-198):

Հայ տառապանքի երգիչը
(էջ 85)

Արևմտահայ գրականության երևելի դեմքերին (Ս. Խրիմյան, Գ. Սրվանձտյան, Գ. Ջոհրապ, Դ. Վարուժան) անդրադարձել է թեև հպանցիկ, բայց նրանց իրական մեծության ընկալումով:

ԻՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎ, «ԱՐՉԱԿ ԲԱՆԱՍԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
(էջ 125)

Լայն գիտելիքներ ունեն այլ ժողովուրդների գրականություններից ևս: Երբեմն այնքան մանրամասն, որ զարմանք են հարուցում: Գրախոսելով, օրինակ, Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունների»՝ Ալ. Ճատուրյանի թարգմանությունը, ամփոփ պատկերացում է տալիս ռուս գրականության ազգային բնույթի ձևավորման, Տուրգենևի անցած ճանապարհի մասին: Աղբյւրյանին հայտնի է ոչ միայն այն իրողությունը, որ արձակագիրը գրական գործունեությունը սկսել է պոեզիայով, այլև այն, որ 1843 թվին տպագրած «Параши» պոեմը արժանացել է Վ. Բելինսկու բարձր գնահատականին՝ «Բելինսկին հոտառությամբ, որ այնքան հատուկ էր նրան, զգաց հեղինակի «անսովոր տաղանդը»: Խոսքը Բելինսկու՝ «Պարաշա», չափածո պատմվածք, Ս. Լ.» գրախոսականի մասին է, ուր կա այսպիսի նախադասություն. «Стих обнаруживает необыкновенный поэтический талант» (В. Г. Белинский, „ Полное собрание сочинений, т. VII, Москва, 1955, стр. 78):

Ի դեպ՝ գրական առաջին քայլերի մեջ ապագա մեծ գրողին ճանաչելու «հոտառությամբ» օժտված էր ինքը՝ Աղբյւրյանը ևս: Այդպես նա մեծ ապագա գուշակեց Լ. Շանթի, Ավ. Իսահակյանի, Սիամանթոյի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Ստ. Ջորյանի համար:

Այդ գրախոսականին լավ ծանոթ լինելը երևում է նաև հետևյալ մտքից. «... Բելինսկու համար ոչ այնքան թանկ էր պոեման, որքան հեղինակի տեսակետը», - գրում է Աղբյւրյանը, հավանաբար ակնարկելով ռուս քննադատի հետևյալ միտքը... «Все это показывает в авторе, кроме дара творчества, сына нашего времени, носящего в груди своей все скорби и вопросы его,» (նույն տեղում):

Նույն խորությամբ լավատեղյակ էր մյուս ժողովուրդների գրականություններին:

Օավալի պատճառով հատուրյակից դուրս մնացին «Վ. Գ. Բելինսկի» (Մուրճ, № 6, էջ 801-812, № 7-8, էջ 1073-1093, № 9, էջ 1228-1238), «Ա. Պ. Չեխով» (Մուրճ, 1904, № 7, էջ 127-134), «Ֆիրդուսի և իր երգիծագիրը» (Յուսաբեր, Կահիրե, № 8) և այլ ուսումնասիրություններ: Հորեյանների և թարգմանություններ:

րի առիթներով գրել է հողվածներ, գրախոսականներ, կատարել թարգմանություններ (տես՝ «Թարգմանություններ» բաժինը), զնահատանքի խոսք ասել Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ջ. Սվիֆտի, Անդերսենի, Չ. Դիկկենսի, Կոնան - Դոյլի, Վ. Գարշինի, պատմվածքների, Լ. Անդրեևի, Ա. Կուպրինի, Ֆ. Մուլզոլբի, Էդ. դե Ամիչիսի և շատ ուրիշների մասին:

Լ. Ն. Տոլստոյ
(էջ 128)

Գրել է Լ. Ն. Տոլստոյի ծննդյան 80-ամյակի առթիվ: Մինչ այդ «Չանգակ»-ում գրախոսել էր նույն առիթով լույս տեսած մեծ գրողի պատմվածքների («Ժողովրդական պատմվածքներ») երկու հատորները (№№ 14, 34):

Դիկկենս Չ., «Դավիթ Կոպպերֆիլդ»
(էջ 136)

Մինչ այս հողվածը «Մուրճ»-ում գրախոսել էր Չ. Դիկկենսի երկու պատմվածքի թարգմանությունները («Վերադարձած հանցավորը», 1897, № 1, էջ 136-138, «ժլատ սկրուջը», № 5, էջ 675-678):

Ե. Անիչկով, «Գրական երևույթներ» (փոխառումները գրականության մեջ)
(էջ 155)

Քչերին է հայտնի, որ Աղբալյանը թարգմանություններ ևս կատարել է: Ռուսերենից թարգմանել է Ա. Չեխովի «Փորձանք» պատմվածքը, տպագրել է Քիլոմ կեղծանվամբ (Հորիզոն, 1912, №№ 270, 276), Սերվանտեսի մահվան 300-ամյակի կապակցությամբ «Դոն Քիշոտից» մի հատված (Հորիզոն, 1916, № 87), գրականագիտական - իմաստասիրական հողվածներ («Հնդիկ իմաստասիրության թանգարանից», Հորիզոն, 1914, № 75, «Վ. Շեքսպիր» (Մահվան 300-ամյակի առիթով), Հորիզոն, 1916, № 89-91, «Ռուս մտքի աշխարհից», Հորիզոն, 1913, № 98): Որոշ թարգմանություններ էլ չեն պահպանվել:

Հայ ընթերցողին նաև այս կերպ էր մասնակից դարձնում արտասահմանյան գրականության ճանաչմանը:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ
(էջ 161)

Իր հողվածներում մտածումներ արտահայտությունը շատ է օգտագործում Աղբալյանը: «Ամբողջական երկերի» III հատորը կազմողները իրավացիորեն այս բառով են վերնագրել իրապարակախոսական ելույթները: Հետևեցինք ավանդույթին:

Բաժնում տեղ են գտել մշակույթի այլևայլ բնագավառների վերաբերյալ հողվածներ ևս:

Ս. Նազարյան
(էջ 161)

Մասնակցել է Ստ. Նազարյանի «Երկերի ժողովածուի» Ա հատորի կազմման աշխատանքներին (Թիֆլիս, 1913), գրել ընդարձակ առաջաբան (էջ ԺԱ - ԾԱ):

Թեև համեստորեն «Կենսագրական ակնարկ» է անվանել այն, իրականում անվանի իրապարակախոսի կյանքի ու գործունեության առաջին գիտական ուսումնասիրությունն է: Տես նաև՝ Հորիզոն, 1912, № 290, Ս. Նազարյանի մասին, 1913, № 228, Մի կետ Ս. Նազարյանի կենսագրությունից, 1913, № 244, Կրկին Ս. Նազարյանի մասին):

Գր. Արծրունի
(էջ 162)

՝Տես նաև՝ Հորիզոնի նույն համարի «Գրիգոր Արծրունի» հողվածը:

Ա. Արասխանյան
(էջ 164)

Տես նաև՝ Հորիզոն, 1913, № 268, Ա. Արասխանյան, № 272, Ա. Արասխանյան (արի մարդու հիշատակին):

<Անգլիական կապիտանը չգիտե ...>
(էջ 235)

1920-ին հայկական բանակը երեք օրվա ընթացքում վրացական զորամասերին Լոռուց, որտեղ նրանք հայտնվել էին խաղաղապահ ուժերի դերով, քշեցին մինչև Վրաստանի սահման: Հայտնի չէ՝ ինչով կավարտվեց «միջադեպը», եթե Անգլիայի կառավարության միջամտությամբ մեր բանակը հարկադրված չլիներ դադարեցնել ռազմական գործողությունները: Այս մասին պառլամենտում կառավարության նախագահի հաղորդումից հետո ելույթ է ունեցել նաև Ն. Աղբալյանը:

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(էջ 252)

Ընթերցողի համար հաճելի անակնկալ կլինի Աղբալյան - լեզվաբանի հայտնությունը: Հատկապես 20-30-ական թվականներին, ինչպես պարզվում է նամակներից, լրջորեն տարված էր հայոց լեզվի մասին «գյուտերով»:

Համեմատական լեզվաբանությունը առաջին քայլերն էր կատարում, և Աղբալյանը առաջինների մեջ էր: Մեծադիր հատոր կազմող նյութերից ընտրել ենք փոքրիկ մի մաս՝ կերպարը ամբողջացնելու և մասնագետների հետաքրքրությունը շարժելու միտով: Վերջիններիս գործը հեշտացնելու նպատակով հիշենք, որ լեզվաբանական աշխատությունները տպագրվել են հիմնականում «Հայրենիք» (Բոստոն, 1928 թ., գրեթե բոլոր համարներում), «Սիոն» (1927, № 12, 1928, № 1, 2, 1930, № 11), «Հանդես ամսօրյա» (1930, 5-6, 7-8, 9-10, 11-12, 1931, № 6, 8-9, 1932, № 5-6, 7-9) ամսագրերում: 1937-38 թթ. Բեյրութում իրատարակվեց «Բանասերի հուշագիրը» մատենաշար (12 պրակ):

Սա բոլորովին էլ ամբողջական ցանկ չէ:

Աղբալյանի ստուգաբանություններից մի քանիսը Հր. Աճառյանն օգտագործել է իր նշանավոր բառարանում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
(էջ 299)

Աշխատանքային գործունեությունն սկսեց իբրև ուսուցիչ, ամբողջ կյանքում զբաղվեց ուսուցչությամբ: Վերջին տարիներին Բեյրութի Փալանճյան ճեմարանում

նի հայ գրականության պատմության և գրաբարի դասախոս էր: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Կրթության գործը գաղութներու մեջ» ծավալուն հոդվածը, ուր սփյուռքյան իրականությանը համարժեք կրթության կազմակերպման լուծումներ է առաջարկում:

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ Թ. Գ. Գ. Շ. ՄԱՍԻՆ
(էջ 318)

Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության մասին այս հոդվածը, որ պահպանվել է Նիկոլ Աղբալյանի կրտսեր որդու՝ Ռուբենի փրկած թղթերում, ինչպես կնկատի ընթերցողը, ոչ այնքան հրատարակչական ընկերության մասին է, որքան աղջիկների կրթության և ինքնագարգացման միջոցների մասին: Երկծալ թղթերից մեկի վերևի եզրերը քայքայված են, որի պատճառով՝ առաջին նախադասությունները գրեթե անընթեռնելի: Մի խոսքով՝ հոդվածը թերի է, նաև անավարտ, տեղ-տեղ՝ անընթեռնելի: Բայց նկատի առնելով քննարկվող հարցերի հետաքրքրությունն ու կարևորությունը, որոնք պատկերացում են տալիս երիտասարդ մանկավարժի մտահոգությունների մասին, նպատակահարմար գտանք զետեղել «Ընտրանի»-ում:

Այս բաժնի պաշտոնական գրությունների մեքենագիր օրինակները գտնվում են ՀՀ ազգային արխիվի համապատասխան ֆոնդերում՝ 199 և 207:

ՆԱՄԱԿՆԵՐ

Սիրելի մայրիկ!
(էջ 325)

Սոր (Բարբառե Քալանթարյան - Աղբալյանց) և հոր (Պողոս Աղբալյանց) մասին հուշագրական համառոտ նշում է արել «Սայաթ-Նովայի հետ» աշխատությունում: Տես՝ «Ընտրանի», էջ 26 և 28:

Առաջին անգամ տպագրվել է Ն. Աղբալյան, «Նամակներ ...» ժողովածուում, էջ 21:

Հարգելի պ. Ավետիք
(էջ 326)

«Մուրճի» խմբագիր Ավետիք Արասխանյանն է:

Ուսումը շարունակելու նպատակով Աղբալյանը թողեց ամսագրի խմբագրությունը, բայց փոխադարձ համակրությունն ու բարեկամությունը պահպանել են մշտապես (տես՝ ՉԱԹ, Ն. Աղբալյանի ֆոնդ, գ. 68: Աղբալյանի հոդվածները Արասխանյանի մահվան կապակցությամբ, Հորիզոն, 1912, №№ 267, 268, 272):

Առաջին անգամ տպագրվել է Ն. Աղբալյան, «Նամակներ ...» ժողովածուում, էջ 23-24:

Սիրելի Օհաննես
(էջ 326)

Մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանն է:

Աղբալյանը Վերնատան անդամ էր, Թումանյանի գլխավորած Կովկասի հայ

գրողների ընկերության անփոփոխ փոխնախագահը:

Առաջին տպագրությունը՝ «Պատմա - բանասիրական հանդես», 1989, № 4, երկրորդը՝ «Թումանյան» (ուսումնասիրություններ և հրապարակումներ), հ. 5, Երևան, 1998, էջ 362-365, երրորդը՝ «Նամակներ ...», էջ 24-28:

Ավո քան
(էջ 329)

Ավետիք Իսահակյանն է: Առաջին տպագրությունը տես՝ Բանբեր Երևանի համալսարանի, 1989, № 2, էջ 58-59, երկրորդը՝ «Նամակներ ...», էջ 29-31:

Ով սիրելի Ֆիլիպ Բարի
(էջ 331)

Փիլիպոս (Ֆիլիպ) Հակոբի Վարդապարյանն է (1878- 1935), գրական - մշակութային գործիչ:

Առաջին տպագրությունը տես՝ Բանբեր Հայաստանի արխիվների, 1989, № 2, էջ 86-87, երկրորդը՝ «Նամակներ ...», էջ 72-74:

Հարգելի քարեկամ
(էջ 332)

Միսակ Էփրիկյանն է (1892-1938), հրատարակիչ, խմբագիր «Պատանի» (Թիֆլիս, 1910-1915) ամսանախի: Տես՝ «Նամակներ ...», էջ 82:

Սիրելի Սիմոն
(էջ 333)

Նշանավոր քաղաքական, պետական գործիչ, ՀՀԳ կուսակցության անդամ Սիմոն Վրացյան (Գրուզինյան) է (1882-1969):

Առաջին անգամ տպագրվել է՝ Նոր Դար, Երևան, 1996, № 12, երկրորդ անգամ՝ «Նամակներ ...», էջ 83-84:

Սիրելի Արտաշես
(էջ 334)

Արտաշես Մանուկի Աբեղյանն է:

Առաջին տպագրությունը տես՝ Հայրենիք, Բոստոն, 1963, № 1, էջ 4-6, երկրորդը՝ «Նամակներ ...», էջ 92-94:

Սիրելի Աշիկ
(էջ 336)

Այս և հաջորդ, ինչպես նաև էջ 341-ի: Սիրելի կուկու, Աշիկ և Մանջուկ նամակը մեզ է տրամադրել Աղբալյանի Ռուբեն (Մանջուկ) կրտսեր որդին: Այս և այլ, երկու տասնյակից ավելի նամակներ, գրված են «բացքարի» վրա: Եգիպտոսի, ավելի շատ Կահիրեի և Ալեքսանդրիայի գունավոր տեսարաններով բացիկներ են՝ հորդորներով, բացատրություններով, կարտի գեղումներով ...

**Սրբազան հայր
(էջ 337)**

Նամակի մեքենագիր օրինակը մեզ է տրամադրել թեհրանաբնակ (այժմ՝ հայրենաբնակ), «Ալիք» թերթի խմբագրության անդամ Տիգրան Դավթյանը: Առաջին էջի վերևում գլխատառերով գրված է՝ «Նիկոլ Աղբալյանի նամակը Ներսես արք. Մելիք - Թանգյանին»:

Առաջին տպագրությունը տես՝ «Նամակներ ...», էջ 106-108:

**Սիրելի Հրարփիկ
(էջ 341)**

Աղբալյանի կինն է: Ամուսնացել են 1912-ին, ունեին երեք զավակ՝ երկու տղա և աղջիկ:

**Սիրելի Համաստեղ
(էջ 347)**

Կելենյան Համբարձում Օհանեսի (1895-1966):
Առաջին տպագրությունը տես՝ «Ավանգարդ», 1989, 19-ը ապրիլի, երկրորդը՝ «Նամակներ ...», էջ 174-175:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
Հառաջաբան	5

Հայ գրականության պատմություն

Գրականության պատմություն	7
Ղազար Փարպեցի	15
Սայաթ-Նովայի հետ	25
Ը. Տաղ	30
Գրիգոր Նարեկացի և Կորյուն	38
Հովհաննես Թումանյանի «Նաղաշ Հովնաթան և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը»	40
Մանուկ Աբեղյան	42

Նոր շրջանի գրականություն

Գրական հետաքրքրություն	47
Գ. Սունդուկյանի «Կտակը»	49
Րաֆֆի	51
Ղ. Աղայան	54
Հ. Շիշմանյան - Ծերենց	55
Հ. Հովհաննիսյան	56
Հ. Թումանյանի «Քաջ Նազարը»	59
Ալ. Ծատուրյան	67
Լևոն Շանթ	70
Ավետիք Իսահակյան	75
Հայ տառապանքի երգիչը	85
Ի. Իսահակյան, «Հեքիաթ արևի տակ»	90
Ստ. Ջորյան	97
Հառաջաբան	106
Երկու երգ	109
<Մանկական գրականության մասին>	112
Ն. Աղբալյանի դասախոսությունը	120

Արտասահմանյան գրականություն

Ս. Գրքի թարգմանության մասին	123
Իվան Տուրգենև, «Արծակ բանաստեղծություններ»	125
Լ. Ն. Տոլստոյ	128
Վլ. Կորոլենկո, «Գետնափորի երեխաները», «Ակամա մարդասպան»	132
Դիկկենս Զ., «Դավիթ Կոպպերֆիլդ»	136
Անատոլ Ֆրանս, «Երեք դար ու կես հետո» (ծննդյան տոնի ֆանտազիա)	143
Կոպպե Ֆրանսուա, «Հանրիետ»	146
Միլտոն (Շենոյան 300-ամյակի առթիվ)	153
Ե. Անիչկով, Գրական երևույթներ (փոխառումները գրականության մեջ)	155

Մտածումներ

Ս. Նազարյան	161
Գր. Արծրունի	162
Ա. Արասխանյան	164
Եվրոպան և կացությունը Բալկանում	166
Բալկանյան թերակղզում	168
Թյուրքիան և հայերը	169
Քաղաքական նոր հեռանկար	177
Պատերազմի դաշտում	181
Տաճկական անիշխանության հնարավորությունը և հայ ժողովուրդը	183
Ռուսաստանը և թյուրքահայերը	190
Քաղաքացիության պարտականությունը	193
Անել կացություն	195
Թյուրքահայերը և Ռուսաստանը	196
Բալկանյան պատերազմի մոտավոր հետևանքները	198
1913	200
Թյուրքահայության պահանջը	201
Հայոց հարցի ներկա վիճակը	204
Վրաց մտավորականությունը և թյուրքահայերը	206
Առույզ ժողովուրդ	207
Արտագաղթը դեպի Ամերիկա	210
Գերմանիան և հայոց հարցը	213
Քրդերն ու հայերը	216
Քաղաքական հնարավորություններ	219
Միջազգային համերաշխության տոնը	223

Դասակարգային կռվի՞, թե քաղաքական հեռանկար	226
Վտանգը	227
Ռամկավարություն և իշխանություն	229
Ռուսաստանի վերագրավումը	231
Իշխանության տրագիզիա	233
< Անգլիական կապիտանը չգիտե... >	235
Քեռին (Հուդարկավորության առթիվ)	238
ՀՀ Դաշնակցության մասին	241
Ուղերձ Բարսեղ Կանաչյանին	242
Մտածումներ ազգի և դավանանքի մասին	245

Լեզվաբանություն

Դիտողություններ հայոց լեզվի մասին	252
Նորից շեշտի մասին	262
Տեսություն ծույլ բաղաձայների	278
Ձիւն ձմեռն	290

Կրթություն

Հայ վարժապետը	299
Հայաստանի համալսարանի բացումը	300
Մինիստրների խորհրդին	301
Հայ նկարիչների ընկերության	303
Մինիստրների խորհրդին	304
Մինիստրների խորհրդին	305
Օրինագիծ	306
Կրթության գործը գաղութներում մեջ	307
Մի խումբ ուսուցիչներ, «Մեր դպրոցը», Ա. տարի	314
Մի քանի խոսք Թ. Հ. Հ. Ը. մասին	318

Նամակներ	325
----------	-----

Ծանոթագրություններ	348
--------------------	-----

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼՅԱՆ

Ը Ն Տ Ր Ա Ն Ի

Ն. Աղբալյանի նկարը՝
Կազմի ձևավորումը՝
Հրատ. խմբագիր՝
Էջադրումը՝

Հ. Մեծ-Պետրոսյանի
Մ. Անանյանի
Դ. Պետրոսյան
Ա. Գոյունյան

Ստորագրված է տպագրության՝ 16.11.05:
Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպագր. 22.62 մամուլ:
Տպաքանակ՝ 500:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արուստյան 52